

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ԼՐԱԲԵՐ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ВЕСТНИК
ОБЩЕСТВЕННЫХ
НАУК

HERALD
OF SOCIAL SCIENCES

1(661)
ՀՈՒՆՎԱՐ-ԱՊՐԻԼ
ЯНВАРЬ-АПРЕЛЬ
JANUARY-APRIL

**ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՄԵՆՈՒՄ 1940 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
ЖУРНАЛ ВЫХОДИТ 3 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С НОЯБРЯ 1940 ГОДА
JOURNAL IS PUBLISHED 3 TIMES IN A YEAR, SINCE NOVEMBER 1940**

Գլխավոր խմբագիր՝ **ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
Խմբագրի տեղակալ՝ **ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ**
Պատասխանատու քարտուղար՝ **ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Խմբագրական խորհուրդ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ, ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՎԱՐԴԱՆ
ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ՌՈՒԲԵՆ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՎԱՉԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ,
ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ, ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ,
ԳԵՎՈՐԳ ՊՐՈՍՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Главный редактор – **ПАВЕЛ АВЕТИСЯН**
Заместитель редактора – **АРСЕН БОБОХЯН**
Ответственный секретарь – **ГАЯНЭ АРУТЮНЯН**

Редакционная коллегия

ԱՐՇՐԱՆ ԱՅԱԿՅԱՆ, ԱՐԱՐԱՏ ԱԳԱՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ԱՐՄԵՆՅԱՆ, ԳԱՄԼԵՏ
ԴԵՎՐԻԿՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԳԱԳԻԿ ԿԱԶԻՆՅԱՆ, ՐԱՍԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ
ԿԱՏՎԱԼՅԱՆ, ԱՇՈՏ ՄԵԼԿՈՆՅԱՆ, ՎԱՉԵ ՕՎԱԿԻՄՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՕԳԱՆԵՅԱՆ,
ԴԵՎՐԻԿ ՍՈՎԱՅԱՆ, ՐԱՍԵՆ ՍԱՖՐԱՏՅԱՆ, ՅՐԻԻ ՏՍՎԱՐՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՐԱՏՅԱՆ

Editor-in-chief **PAVEL AVETISYAN**
Vice-editor **ARSEN BOBOKHYAN**
Responsible secretary **GAYANE HARUTYUNYAN**

Editorial Board

ԱՐԱՐԱՏ ԱԳԱՅԱՆ, ԱՐՏՐԱՆ ԱՎԱԳՅԱՆ, ԳԱՄԼԵՏ ԴԵՎՐԻԿՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ,
ԱԼԲԵՐՏ ԽԱՐԱՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ՐԱՍԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ
ԽԱՐԱՏՅԱՆ, ՎԱՉԵ ՕՎԱԿԻՄՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՕՎԱՆՆԻՍՅԱՆ, ԳԱԳԻԿ ԿԱԶԻՆՅԱՆ,
ԱՇՈՏ ՄԵԼԿՈՆՅԱՆ, ԴԵՎՐԻԿ ՍՈՎԱՅԱՆ, ՐԱՍԵՆ ՍԱՖՐԱՏՅԱՆ, ՅՐԻԻ ՏՍՎԱՐՅԱՆ

©Լրագրեր հասարակական գիտությունների
©Вестник общественных наук
©Herald of Social Sciences

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Երվանդ Գրեկյան – Վերին Անձավի «երկլեզու» արձանագրությունը և ուրարտական կշռային համակարգի որոշ հարցեր.....	12
Գրիգորի Այվազյան – Ժամանակակից Ադրբեջանի տարածքում XX դարի սկզբին ուղի ժողովրդի կոտորածների հարցի շուրջ.....	28
Կարինե Խոջայան – Ցեղասպանությունների կանխարգելումը միջազգային գործընթացների օրակարգում.....	40
Աստղիկ Հայրապետյան – «Ահաբեկչության դեմ պատերազմը»՝ որպես Մերձավոր Արևելքում ամերիկյան ազդեցության հաստատման միջոց Ջորջ Բուշ կրտսերի օրոք	52

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

Ռուբեն Կարապետյան, Սոնա Ներսիսյան, Ստեփան Զախարկևիչ, Արտյոմ Նազարենկո – Հայաստանի և Բելառուսի քաղաքների համեմատական ուսումնասիրություն (միջազգային նախագծի ծրագրի հիման վրա).....	71
--	----

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Միքայել Միքայելյան – ՀՀ տնտեսության կարգավորման հակակշիռների մեխանիզմի ձևավորման հարցի մասին.....	84
Գայանե Հարությունյան – ՀՀ ռազմարդյունաբերության փուլային զարգացման մոդելը.....	100
Արսեն Օհանջանով – Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների համակարգի մակրոտնտեսական բնութագիրը և ինստիտուցիոնալ վերլուծությունը.....	120

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Սվետլանա Արզումանյան – Երեք հայեցակարգ համաշխարհային գրականության հիմնական սյուժեների հարցի մասին.....	135
---	-----

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ռուզաննա Խոստիկյան – Հականիշության դերը և կարևորությունը գործարար անգլերենում.....	150
---	-----

Հռիփսիմե Զաքարյան – Կոլեկտիվ անգիտակցականի արքետիպական պատկերները Հենրիկ Էդոյանի պոետական աշխարհում.....	158
---	-----

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աննա Ասատրյան – Երաժշտագիտության հարցերը «Լրաբերի» էջերում. ակադեմիական սպենդիարյանագիտության ձևավորումն ու զարգացումը.....	171
Ավետ Ավետիսյան – Վասպուրականի մանրանկարչության ոճապատկերազրական առանձնահատկությունները.....	187
Աստղիկ Մարտիրոսյան – Հայոց Ութձայն համակարգի երրորդ ձայն-եղանակի (ԳՁ) որոշ դրսևորումներ հայ հոգևոր երգարվեստի Երուսաղեմյան երգվածքում.....	206
Սաթենիկ Վարդանյան, Օվսաննա Քարամյան – Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու որմնանկարները.....	222

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գարեգին Թումանյան – Հայկական լեռնաշխարհի կիմերական և սկյութական դամբարանների բաշխվածության հարցի շուրջ.....	235
Սմբատ Դավթյան – Արփայի ստորին հոսանքում գտնվող մի շարք վայրերի տեղադրության հարցի շուրջ.....	246

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժիրայր Թութունջյան (Կանադա, Տորոնտո) – Մականունների տարածվածությունը հայկական Երուսաղեմում (1940-60-ականների կես).....	260
---	-----

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Անուշավան Զաքարյան – Վանի ինքնապաշտպանությունը ականատեսների աչքերով («Պաշարման երեսուն օր» հոդվածը).....	281
---	-----

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արմեն Կարապետյան – Հովհաննես Թումանյան, Նորահայտ փաստաթղթեր.....	287
---	-----

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Տորք Դալայան, Նվարդ Վարդանյան – Բանագիտության պատմություն-
նից դեպի բանահավաքչություն. Սվետլանա Վարդանյան (1940-2020). 291

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

Ռադիկ Մարտիրոսյան, Յուրի Սուվարյան – Բազմալաստակ
սոցիոլոգը և գիտության կազմակերպիչը..... 305

Կարեն Խաչատրյան, Հակոբ Մուրադյան, Համո Սուքիասյան – Աշոտ
Մելքոնյան. կյանքը գիտության մեջ (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսի ծննդյան
60-ամյակի առթիվ)..... 318

Պավել Ավետիսյան, Արսեն Բոբոխյան – Սեդա Դեվեջյանի ներդրումը
հայ հնագիտության մեջ..... 328

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

Ռոբերտ Բաղդասարյան – Իլյա Էրենբուրգը և Հայաստանը (ծննդյան
130-ամյակին)..... 336

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ И ПОЛИТОЛОГИЯ

Ерванд Грекян – «Двуязычная» надпись Верхнего Андзава и ряд вопросов урартской весовой системы.....	12
Григорий Айвазян – К вопросу о погромах удин в начале XX века на территории современного Азербайджана.....	28
Карине Ходжаян – Предотвращение геноцидов в повестке дня международных процессов.....	40
Астхик Айрапетян – «Война против терроризма» как способ установления американского влияния на Ближнем Востоке во время президентства Д. Буша-младшего.....	52

СОЦИОЛОГИЯ

Рубен Карапетян, Сона Нерсисян, Степан Захаркевич, Артем Назаренко – Сравнительное этнокультурное исследование городов Армении и Беларуси (на основе программы международного проекта).....	71
--	----

ЭКОНОМИКА

Микаел Микаелян – О вопросе формирования механизма противовесов регулирования экономики РА.....	84
Гаяне Арутюнян – Модель поэтапного развития оборонной промышленности РА.....	100
Арсен Оганджанов – Макроэкономическая характеристика и институциональный анализ системы национальных счетов Республики Армения....	120

ФИЛОСОФИЯ И ПРАВО

Светлана Арзуманян – Три концепции по вопросу о базовых сюжетах в мировой литературе.....	135
--	-----

ФИЛОЛОГИЯ

Рузанна Хостилян – Роль и значимость антонимии в деловом английском... 150	150
Рипсима Закарян – Архетипические образы коллективного бессознательного в поэтическом мире Генриха Эдояна.....	158

КУЛЬТУРА И ИСКУССТВОВЕДЕНИЕ

Анна Асатрян – Вопросы музыковедения на страницах журнала «Вестник»: формирование и развитие академического спендиаряноведения.....	171
Авет Аветисян – Иконографические и стилистические особенности миниатюры Вазпуракана.....	187
Астхик Мартиросян – Отражение третьего гласа армянской системы восьмигласия в Иерусалимском распеве армянского духовного песнетворчества.....	206
Сатеник Варданян, Овсання Карамян – Фрески церкви Св. Месропа Маштоца в Ошакане.....	222

АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

Гарегин Туманян – К вопросу о распределении киммерийских и скифских погребений Армянского нагорья.....	235
Смбат Давтян – К вопросу о локализации ряда местностей в нижнем течении реки Арпа.....	246

ЖУРНАЛИСТИКА

Жирайр Тутунджян (Канада, Торонто) – Распространенность прозвищ в армянском Иерусалиме (1940-е – середина 60-х годов).....	260
---	-----

ПУБЛИКАЦИИ

Анушаван Закарян – Самооборона Вана глазами очевидцев (статья «Тридцать дней осады»).....	281
--	-----

РЕЦЕНЗИИ

Армен Карапетян – Ованес Туманян, Нововыявленные документы.....	287
--	-----

НАУЧНАЯ ХРОНИКА

Торк Далалян, Нвард Варданян – От истории фольклористики к собирательству фольклора: Светлана Варданян (1940-2020).....	291
--	-----

НАШИ ЮБИЛЯРЫ

Радик Мартиросян, Юрий Суварян – Заслуженный социолог и организатор науки.....	305
---	-----

Карен Хачатрян, Акоп Мурадян, Амо Сукиасян – Ашот Мелконян: жизнь в науке (к 60-летию со дня рождения академика НАН РА).....	318
Павел Аветисян, Арсен Бобохян – Вклад Седы Деведжян в армянскую археологию.....	328

ПАМЯТНЫЕ ДАТЫ

Роберт Багдасарян – Илья Эренбург и Армения (к 130-летию со дня рождения).....	336
--	-----

CONTENT

HISTORY AND POLITICAL SCIENCE

Yervand Grekyan – The "Bilingual" Inscription of Upper Anzaf and some Issues of the Urartian Weight System.....	12
Grigori Ayvazyan – On the Issue of Massacre of Udis at the Beginning of the XXth Century on the Territory of Modern Azerbaijan.....	28
Karine Khojayan – Genocide Prevention on the Agenda of International Processes.....	40
Astghik Hayrapetyan – "War on Terror" as a Way to Establish American Influence in the Middle East during the Presidency of George W. Bush.....	52

SOCIOLOGY

Ruben Karapetyan, Sona Nersisyan, Stepan Zagharkevich, Artyom Nazarenko – Comparative Ethnocultural Study of the Cities of Armenia and Belarus (On the Basis of a Program of the International Project).....	71
---	----

ECONOMICS

Mikayel Mikayelyan – On the Question of Formation of Mechanism for Regulation of Counterbalance in RA Economy.....	84
Gayane Harutyunyan – Step-by-Step Development Model of Defense Industry of the RA.....	100
Arsen Ohanjanov – Macroeconomic Characteristic and Institutional Analysis of the System of National Accounts of the Republic of Armenia.....	120

PHILOSOPHY AND LAW

Svetlana Arzumanyan – Three Concepts on the Question of Basic Plots in World Literature.....	135
---	-----

PHILOLOGY

Ruzanna Khostikyan – The Role and Significance of Antonyms in Business English.....	150
Hripsime Zakaryan – The Archetypal Images of the Collective Unconscious in Henrik Edoyan's Poetic World.....	158

CULTURE AND ART HISTORY

Anna Asatryan – Issues of Musicology on the Pages of the "Herald": Formation and Development of Academic Spondiarian Studies.....	171
Avet Avetisyan – The Iconographic and Stylistic Features of the Miniature Art of Vaspurakan.....	187
Astghik Martirosyan – Some Expressions of the Third Mode of Eight-Mode System in the Jerusalem Singing Tradition of the Armenian Sacred Chant....	206
Satenik Vardanyan, Ovsanna Karamyan – The Frescoes of the St. Mesrop Mashtots Church of Oshakan.....	222

ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Garegin Tumanyan – On the Question of Distribution of Cimmerian and Scythian Sepulchres of the Armenian Highland.....	235
Smbat Davtyan – On the Issue of Localization of a Number of Sites Along the Lower Course of the Arpa River.....	246

JOURNALISM

Jirair Tutunjian (Canada, Toronto) – The Flowering of Nicknames in Armenian Jerusalem (1940s to the mid-‘60s).....	260
---	-----

PUBLICATIONS

Anushavan Zakaryan – Defence of Van through the Eyes of Witnesses (The Article "Thirty Days of Siege").....	281
--	-----

LITERARY REVIEWS

Armen Karapetyan – Hovhannes Tumanyan, Newfound Documents.....	287
---	-----

SCIENTIFIC CHRONICLE

Tork Dalalyan, Nvard Vardanyan – From the History of Folklore Studies towards Its Gathering: Svetlana Vardanyan (1940-2020).....	291
---	-----

OUR JUBILEES

Radik Martirosyan, Yuri Suvaryan – Earned Sociologist and Organizer of Science.....	305
--	-----

Karen Khachatryan, Hakob Muradyan, Hamo Sukiasyan – Ashot Melkonyan: Life in Science (on the Occasion of the 60th Birthday of the Academician of the NAS of the RA).....	318
Pavel Avetisyan, Arsen Bobokhyan – Contribution of Seda Devedjyan to Armenian Archaeology.....	328

MEMORIAL DATES

Robert Baghdasaryan – Ilya Erenburg and Armenia (In Commemoration of the 130th Anniversary).....	336
---	-----

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԻՆ ԱՆՁԱՎԻ «ԵՐԿԼԵԶՈՒ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԿՇՈՒՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Երվանդ Գրեկյան

Պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ ervandgr@yahoo.com
Հոդվածը ներկայացվել է 07.09.2021, գրախոսվել է 15.09.2021, ընդունվել է
տպագրության 01.03.2021

Ներածություն

Վան քաղաքի մերձավորությամբ՝ Տուշպայի անառիկ միջնաբերդից մոտ 10 կմ հեռավորությամբ է գտնվում Վանի թագավորության (Բիայնիլի-Ուրարտու) կարևոր վարչաքաղաքական կենտրոններից Վերին Անձավի բերդ-ամրոցը (ուրարտական անվանումը հայտնի չէ): Այն թագավորության առաջին քաղաքներից էր, որի հիմնադիրը, տեղի «սուսի»-տաճարի արձանագրություններից դատելով, Մենուան էր (Ք.ա. մոտ 810-790 թթ.)՝ ուրարտական արքա Իշպուինիի (Ք.ա. մոտ 830-810 թթ.) որդին¹: Ամրոցում հնագիտական հետազոտություններն իրականացվել են 1991-2007 թթ.² ի հայտ բերելով նաև գրավոր և հնագիտական աղբյուրների հարուստ նյութ:

Վերին Անձավի «երկլեզու» արձանագրությունը

2007 թ. պեղումների ժամանակ Վերին Անձավի ուրարտական ամրոցից հայտնաբերվել է բրոնզե արձանագիր կշռաքար (նկ. 1)²:

Կշռաքարը գտնվել է բերդ-ամրոցի՝ այսպես կոչված «ընդունելությունների մեծ դահլիճից»՝ սրահի հարավային երկու սյունախարիսխների մոտ, փայտե եռոտանու կամ սեղանի ածխացած մնացորդների մեջ: Այն ունի 28.5×21.5×23 սմ չափեր, արտաքուստ հիշեցնում է միջագետքյան՝ լայն տարածում ստացած «բադ»-կշռաքարերը (նկ. 7) և, ինչպես նշվեց,

¹ Арутюнян 2001, 107-108 (88-89) 153 (172 В), Salvini 2008 (1), 230-233 (A 5-42A-C, 5-43).

² Belli 2009a, 757-758, գծ. 3, նկ. 6-8, Belli 2009b, 469-470, նկ. 8-13.

արձանագիր է³: Ուշագրավ է, որ այն կրում է միանգամից երկու՝ ուրարտական սեպագիր (նկ. 2-4) և հիերոգլիֆային (մեհենագիր) գրություններ (նկ. 5): Միևնույն առարկայի վրա միաժամանակ թե՛ սեպագիր և թե՛ հիերոգլիֆային գիր ունեցող գտածոներ հայտնի են նաև Վանի թագավորության այլ հուշարձաններից, ինչպես, օրինակ, Կարմիր բլուրից (նկ. 6)⁴: Սակայն դրանք կաղապարային, շատ ավելի փոքրածավալ գրություններ են և սովորաբար նշում են արքայի անունը կամ արձանագրում դրա նվիրատվական բնույթը⁵:

Սեպագիր տեքստն արձանագրվել է բռնակին և ընթերցվում է հստակ՝ 50 MA.NA KUR *al-ga-nu-si-e'* մատնանշելով դրա կշիռը՝ «50 մինա» (տե՛ս ստորև): Իսկ կշռաքարի կողային մակերեսին առկա է 8 նշանից բաղկացած հիերոգլիֆային կարճ տեքստ⁶:

Հիերոգլիֆներն արձանագրված են երեք շարքով՝ իրար տակ, և պատկերում են հինգ «վարդյակ», աշտարակ, ինչ-որ կենդանու գլուխ (⁂) և շրջանակ (նկ. 5): «Վարդյակներից» յուրաքանչյուրը բաժանված է տասը հատվածի, և ակնհայտ է, որ կողք կողքի փորագրված հինգ նման հիերոգլիֆները ներկայացրել են «50» թվանշանը (5×10): Հիերոգլիֆային արձանագրությունների վերծանության խնդրին անմնացորդ նվիրված Արտակ Մովսիսյանը իրավացիորեն ենթադրում էր, որ «տասը» թվանշանի համար պետք է կիրառվեր որևէ շրջանաձև նշան: Այդպիսին նա դիտարկում էր «ակարկի» չափման միավորը ցույց տվող շրջանաձև, կենտրոնում՝ կետ ունեցող հիերոգլիֆը⁷: Այն թեև տարբերվում է մեր օրինակից (շրջանակները բաժանված չեն համապատասխան հատվածների), սակայն, գործնականում չի բացառվում, որ թվային տվյալ արժեքն արտահայտեին հիերոգլիֆային մի քանի նշաններ: Այստեղ հետաքրքիր է այն փաստը, որ «վարդյակների» բաժանումը տասը հատվածի անվերապահորեն վկայում

³ Այժմ պահվում է Վանի թանգարանում, ինվ. համարը՝ A 3121-07: Մեր շնորհակալությունն ենք հայտնում Ջուլիան Ռիդին (Կոպենհագենի համալսարան) և Արսեն Բոբոյանին (<< ԳԱԱ ՀԱԻ»)՝ օգտակար խորհրդատվության համար, ինչպես նաև Քենան Ըշքբին, որը պատրաստակամորեն մեզ տրամադրեց բրոնզե կշռաքարի լուսանկարների իր փաթեթը:

⁴ Пиотровский 1952, 56-63, рис. 27-33.

⁵ Մովսիսյան 1998, 37-41, Մովսիսյան 2003ա, 103-104:

⁶ Salvini 2012, 73 (B 18-8).

⁷ Մովսիսյան 1998, 24, Մովսիսյան 2003ա, 77-78, աղ. 6, Մովսիսյան 2003բ, 32-33, աղ. 5: Հմմտ. նաև Burney 1966, 88, նկ. 17:

է Վանի թագավորության մեջ հաշվարկման տասական համակարգի կիրառության օգտին, որը հանդիպում է նաև ուրարտական սեպագրում՝ ի տարբերություն Միջագետքում լայնորեն կիրառված վաթսունական համակարգի⁸:

«Վարդյակներին» հաջորդող հիերոգլիֆային նշանը աշտարակաձև կառույց է պատկերում: Տրամաբանական է մտածել, որ այս հիերոգլիֆը համապատասխանել է սեպագիր տեքստում նշված KUR շումերագրին, եթե վերջինս կիրառվել է իբրև գաղափարագիր, կամ ^{KUR} *alḡanusie* բառին, եթե այն որոշիչ էր: Բիայնական մեհենագրերի՝ Արտակ Մովսիսյանի կազմած նշանացանկում ևս հանդիպում են աշտարակաձև հիերոգլիֆի պատկերներ, որոնք, ըստ հեղինակի, ունեցել են «տաճար» և «(խալդյան) տաճար» նշանակությունը, եթե պատկերը պսակվել է նիզակ կամ հասկ հիշեցնող նշանով կամ պարզապես նշանակել է «մեծ տուն, շինություն»՝ դրանց բացակայության դեպքում⁹: Կռաքարի վրա արված աշտարակի պատկերը միանգամայն համադրելի է վերը նշված օրինակներից երկրորդին, իսկ միակ նկատելի տարբերությունն աշտարակի հարկայնության ընդգծումն է՝ ի դեմս իրար տակ պատկերված երկու պատուհանների: Որքանով դա կարող է խոչընդոտ հանդիսանալ տվյալ հիերոգլիֆը իմաստավորելու համար, դժվար է ասել:

Յոթերորդ հիերոգլիֆը պարզ շրջանակ է ներկայացնում: Բիայնական մեհենագրերի նշանացանկում շրջան պատկերող հիերոգլիֆը բոլոր դեպքերում պատկերվում է կենտրոնում կետով, որն այստեղ բացակայում է, և հնարավոր է՝ գործ ունենք մի նոր պատկերանշանի հետ:

Ինչ վերաբերում է վերջին հիերոգլիֆին, ապա հրատարակիչը այն համարում է ինչ-որ կենդանու, թերևս՝ ձիու գլուխ (նկ. 5)¹⁰: Պատկերը, ցավոք, հստակ չէ և միայն հեռավոր կերպով է հիշեցնում բիայնական մեհենագրության մեջ վկայված, ձիու գլուխ պատկերող նշանը:

Հիերոգլիֆային նշանները, ամենայն հավանականությամբ, գրվել են վերից վար հաջորդականությամբ, եթե ենթադրենք, որ տեքստը, ինչպես սեպագիր տարբերակը, սկսվել է կշիռը ցույց տվող «թվանշանով»: Գրության նման ուղղությունը տիպական է Վանի թագավորության մեհենագրու-

⁸ Մովսիսյան 2003բ, 84 և ծնթ. 20:

⁹ Մովսիսյան 1998, 45, աղ. II, Մովսիսյան 2003ա, 101-102, 116, աղ. 8, Մովսիսյան 2003բ, 39, աղ. 7:

¹⁰ Հմմտ. Belli 2009a, 758.

թյանը ուղղահայաց գրության դեպքում¹¹: Բուն տեքստը, ըստ էության, կարելի է ընթերցել մասամբ. առաջին հինգ նույնական հիերոգլիֆների նշանակությունը պարզ է, իսկ բազմահարկ աշտարակ պատկերող հիերոգլիֆը կարող էր արտահայտել այն նշանակությունը, ինչը որ ունեցել է սեպագիր տեքստի KUR *alganusie*/^{KUR}*alganusie*-ն: Վերջինիս իմաստը, ցավոք, հստակ չէ (տե՛ս ստորև) և թույլ չի տալիս վերջնականորեն ճշտել նաև քննարկվող հիերոգլիֆի նշանակությունը՝ «տաճար», «պալատ», «մեծ տուն, շինություն», թե մեկ այլ բան: Մնում է ենթադրել, որ վերջին երկու՝ յոթերորդ և ութերորդ հիերոգլիֆներն արտահայտել են «մինա» բառը, քանի որ դժվար է մտածել, որ հիերոգլիֆային տեքստում չի նշվել կշռի միավորը: Տրամաբանական կլինի մտածել նաև, որ դրանցից առաջինն ունեցել է «mV» (ենթադրենք՝ ma, mi կամ մեկ այլ), իսկ երկրորդը՝ «nV», (na, ni և այլն) հնչյունական արժեքները, հմմտ. աքք. *manû(m)* բառը՝ «մինա», իսկ ուրարտական սեպագրում այն հանդիպում է միայն գաղափարագիր՝ MA.NA: Այստեղ, սակայն, անորոշությունը մեծ է, քանի որ չենք կարող միանշանակ պնդել, որ արձանագրությունն ընթերցվում է վերից վար, կամ որ այդ երկու՝ սեպագիր և հիերոգլիֆային տեքստերն ամբողջապես նույնն են¹²:

Սեպագիր տեքստը վկայում է, որ տվյալ կշռաքարի կշիռը, այն է՝ 50 մինան, տրված է ինչ-որ կշռային համակարգի համաձայն, իսկ մինայի արժեքը, նկատենք, տարբեր երկրներում կամ կշռային համակարգերում կարող էր էապես տարբերվել: Մեզ հայտնի նման առաջին զուգահեռը նորասորեստանյան կշռաքարերին սեպագրով կամ արամեերեն արված արձանագրումներն են, որոնք ցույց են տալիս դրանց կշիռն ըստ «երկրի մինա»-ի (սեպ. MA.NA šá KUR, արամ. *b zy 'rq*)¹³: KUR՝ «երկիր» շումերագիրը հուշում է, որ ուրարտական տեքստը ևս ունենալու էր նման իմաստ՝ հավանաբար, ցույց տալով թագավորության մեջ գործող պետական կշռային համակարգ: Հետաքրքիր է «երկիր» շումերագրին տրված *alganusie* բնորոշումը:

Այս եզրույթը հայտնի է դեռևս «Մհերի դռան» դիցացանկից, որտեղ ցլի և երկու ոչխարի զոհաբերություն է սահմանված անանուն աստվածությունների մի խմբի համար՝ «ալգանինների աստվածներին» (...DINGIR^{MES}

¹¹ Մովսիսյան 1998, 23, Մովսիսյան 2003ա, 75-76:

¹² Այս հարցադրման վերաբերյալ հմմտ. նաև Մովսիսյան 1998, 22-23, Մովսիսյան 2003ա, 74-75, 103-104:

¹³ Fales 1996, 16-17.

^{KUR}*alğaninawe*): Այս խումբը հիշատակվում է «երկրների աստծուն» (^{KUR}*ebaninawe* DINGIR) և «ծովերի/ջրերի աստծուն» (^D*šuininawe* DINGIR) տրվող զոհաբերությունների միջև¹⁴: Առայժմ դժվար է ասել, թե ինչ է նշանակել «ալգանի» բառը: Դրա հիշատակումը հավաքական/ընդհանրական նշանակություն ունեցող հասկացությունների հետ՝ առանց մատնանշելու կոնկրետ երկիր կամ լիճ, կարող է հուշել, որ այս եզրույթը նույնպես ունեցել է հավաքական/ընդհանրական իմաստ և հակառակը՝ քիչ հավանական է դարձնում կոնկրետ երկրանուն (իմա՝ «Ալգանիլի երկիր») տեսնելու հնարավորությունը¹⁵: Այս եզրույթի համար մասնագիտական գրականության մեջ առաջարկված առավել հավանական նշանակությունները երկուսն են՝ «սահման» կամ «հովիտ»¹⁶: Հետևաբար, զոհաբերությունները նախատեսված էին «սահմանների» կամ «հովիտների» աստվածների համար: Ըստ այդմ, պետք է մտածել, որ կշռաբարը պատրաստվել է «սահմանի մինա»-ի կամ «հարթավայրի մինա»-ի ինչ-որ ստանդարտի համաձայն, որը կիրառվել է նաև Վանի թագավորության կողմից:

Ինչ խոսք, սա միայն տեսակետ է, և այլ հնարավորություններ չի կարելի բացառել: Օրինակ, եթե KUR շումերագիրը կիրառվել է «լեռ» նշանակությամբ, ապա այստեղ հետաքրքիր զուգահեռ կարող է ծառայել նորասորեստանյան տեքստերում հազվադեպ հանդիպող և սովորաբար պղնձի (բրոնզի) առևտրին վերաբերող գործարքների ժամանակ կիրառված կշռի մեկ այլ համակարգ՝ այսպես կոչված «լեռան մինա»-ն (*ina* MA. NA-*e ša* KUR-*e*)¹⁷:

Այստեղ նկատենք նաև, որ KUR շումերագիրը թե՛ նորասորեստանյան և թե՛ ուրարտական տեքստերում երբեմն կիրառվում է նաև «պալատ» նշանակությամբ¹⁸ և այդ նշանակությամբ հանդիպում է նորասորեստանյան շրջանի արքայական «առյուծ»-կշռաբարերի վրա¹⁹: Քննարկվող արձանագրության դեպքում այդ նշանակությունը ևս չի բացառվում, և հիերոգլիֆային տեքստի բազմահարկ աշտարակ պատկերող նշանը կարող է

¹⁴ Арутюнян 2001, 38 (текст I₁₈₋₁₉, II₃₂₋₃₃), Salvini 2008 (1), 125-129 (A 3-1₁₈₋₁₉, 63-64).

¹⁵ Գրության *alğaninawe* (հոգն. տր.) ձևը հուշում է, որ դրա հոգն. ուղղ. ձևը եղել է *alğanili*-ն: Հմմտ. Salvini 2012, 73 (B 18-8):

¹⁶ Հմմտ., օրինակ, Дьяконов 1963, 77, 87, Арутюнян 2001, 432, Salvini 2008(2), 330: Հմմտ. նաև König 1957, 170:

¹⁷ Հմմտ. Radner 1999, 131-132, Fales 1996, 15, n. 9, Fales 2016, 485, ծնթ. 11:

¹⁸ Հմմտ. Grekian 2016, 55 և ծնթ. 10:

¹⁹ Fales 2016, 485, ծնթ. 14, աղ. 1 (թիվ 9-10):

լուրջ կռվան դառնալ նման ենթադրության համար²⁰: Այդ դեպքում կարող ենք նշել, որ գործ ունենք Վանի թագավորության մեջ գործող պետական կշռային համակարգի հետ, եթե իրոք խոսքը վերաբերում է «պալատի մինա»-ին:

Ցավոք, խնդրո առարկա կշռաքարը մեզ հասած միակ օրինակն է, և դրա արձանագրությունների՝ նամանավանդ հիերոգլիֆային տեքստի ընթերցման համար այլ հնարավորություններ առայժմ տեսանելի չեն: Այստեղ արդեն այլ քննարկման հարց է կշռաքարի կշիռը:

Ուրարտական կշռային համակարգը. նախնական դիտարկումներ

Ինչպես վերը նշվեց, կշռաքարը պատրաստված է բրոնզից, որը հուշում է, որ նման կշռաքարեր պատրաստվել են մեծ քանակությամբ և հստակ ստանդարտների համապատասխան²¹: «Մինայի» կիրառումն իբրև կշռի միավոր նույնպես անսպասելի չէ: Այդ միավորն արդեն իսկ վկայված է Վանի թագավորության արքաներ Արգիշթիի՝ Մենուայի որդու (Ք.ա. 791/90-771 թթ.) և Սարդուրիի՝ Արգիշթիի որդու (Ք.ա. 771-735 թթ.) տարեգրություններում՝ որպես տուրք և տարեկան հարկ ստացված մեծ քանակությամբ «մաքուր» ոսկու, արծաթի և բրոնզի քանակությունները նշելիս (տե՛ս ստորև): Անսպասելին այստեղ կշռաքարի կշիռն է՝ 35 կգ, այսինքն՝ մեկ մինայի արժեքը կազմում է ուղիղ 700 գ:

Մինայի այս արժեքը տարբերվում է սիրիա-միջագետքյան և մասնավորապես՝ նորասորեստանյան տերության մեջ կիրառվող «ստանդարտ» միջագետքյան (բաբելոնյան) մինայի (505 գ) և այսպես կոչված «կարգամիսյան մինա»-ի (*manê ša Gargamiš*) արժեքներից (564 գ)²²: Հատկապես վերջինս լայնորեն կիրառվում էր Ասորեստանում Ք.ա. VIII դ. կեսերից սկսած²³:

Քանի որ մեկ «ստանդարտ» տաղանդը հավասար է 60 մինայի կամ 3600 սիկլի (60×60)²⁴, ուստի Միրիո Սալվինին ուրարտական սեպագիր տեքստերի իր ժողովածուում, հղելով հինարևելյան կշռային համակարգե-

²⁰ Մովսիսյան 2003ա, 80, Մովսիսյան 2003բ, 35, նկ. 20:

²¹ Reade 2018, 150.

²² Հմմտ. Reade 2018, 150:

²³ Zaccagnini 1999-2001, 42, Zaccagnini 2018, 53-55, Zaccagnini 2019, 66, Fales 1996, 16-17, Vargyas 1996, 9-14, Radner 1999, 130-131. Հմմտ., սակայն, Reade 2018, 172-174.

²⁴ Powell 1987-1990, 514.

րի խոշոր մասնագետ Նիկոլա Պարիսին, գտնում է, որ կշռաքարը ներկայացրել է ուրարտական տաղանդի 5/6-րդ մասը, և որ մեկ ուրարտական տաղանդը կշռել է 42 կգ (60×700 գ)²⁵: Նկատենք, որ այս կարծիքը հիմնվում է հաշվարկման միմիայն վաթսուներկան համակարգի վրա՝ չդիտարկելով մյուս տարբերակները, առավել ևս, երբ տաղանդի առաջարկված 42 կգ արժեքը հինարևելյան բոլոր ստանդարտներից դուրս է: Օրինակ, կարելի է մտածել, որ ուրարտական տաղանդը հիմնված էր լինելու մինայի և տաղանդի՝ 40:1 հարաբերակցության վրա, ըստ այդմ՝ նրա արժեքը լինելու էր 28 կգ (40×700 գ): Սա հետաքրքիր է թվում, քանի որ շատ մոտ է, այսպես կոչված, «արևմտյան» տաղանդի արժեքին՝ 28.2 կգ²⁶: Այս դեպքում կարելի է մտածել, որ խնդրո առարկա կշռաքարն ունեցել է 1 տաղանդ 10 մինա արժեքը:

Մյուս կողմից, համամասնության սկզբունքով առաջնորդվելով, կարելի է մտածել, որ 50 ուրարտական մինան, որ միգուցե կազմել է մեկ տաղանդ (հմմտ., սակայն, ստորև), հավասար էր լինելու 2500 սիկդի (50×50): Այս դեպքում սիկդի արժեքը կկազմի 14 գ, որը ևս դուրս է տարածաշրջանի կշռային համակարգերում վկայված սիկդի բոլոր արժեքներից: Միևնույն ժամանակ կարելի է մտածել, որ ուրարտական տաղանդը հավասար էր լինելու 3000 սիկդի, եթե ընդունենք մինայի և սիկդի 60:1 հարաբերակցությունը: Այդ դեպքում, ուրարտական մեկ սիկդը հավասար էր լինելու 11.7 գ, որն արդեն վկայված է փոքրասիական – սիրիականության երկրներում Բ.ա. 2-րդ հազարամյակում և համապատասխանում է, այսպես կոչված, «խեթական սիկդին»՝ 11.7 գ²⁷: Ավելին, այստեղ կարելի է ընդգծել, որ այս գոտու երկրներում, ինչպես, օրինակ, Ուգարիթում և Ալալախում, մեկ տաղանդը նույնպես հավասար էր 3000 սիկդի (տե՛ս աղյուսակը)²⁸:

Ուրարտական սիկդի նման արժեքը հետաքրքիր է այն համատեքստում, որ Ասորեստանի հետ երկարատև՝ շուրջ մեկ դար տևած հակամարտությունն էապես սահմանափակում էր երկու երկրների միջև պաշտոնական առևտրական հարաբերությունները, և ապրանքների առևտուրը, ամենայն հավանականությամբ, իրականացվում էր միջնորդների միջո-

²⁵ Հմմտ. Salvini 2012, 73:

²⁶ Հմմտ., օրինակ, Zaccagnini 1999-2001, 41:

²⁷ Zaccagnini 1986, 22, Zaccagnini 1999-2001, 39.

²⁸ Zaccagnini 1978, 69, Zaccagnini 1979, 472-473, Mederos, Lamberg-Karlovsky 2004, 208-210, աղ. 1:


ցով: Այդ դերը կարող էին կատարել Փոքր Ասիայի և հյուսիսային Սիրիայի լուվիական թագավորությունները: Հնարավոր է՝ ուրարտական արքունիքը պետական կշռային համակարգը համապատասխանեցրել էր, այսպես կոչված, «արևմտյան» համակարգերի հետ կամ, առնվազն, պետական ստանդարտների թվում կիրառում էր նման համակարգ: Ճիշտ է, սիկդի՝ 11.7 գ արժեքի վրա հիմնված Ք.ա. 2-րդ հազ. փոքրասիական/խեթական կշռային համակարգի կիրառության վկայությունները Ք.ա. 1-ին հազ. համար սուղ են, բայց, այնուամենայնիվ, այդպիսիք կան²⁹: Մյուս կողմից, հայտնի է, որ ուշբրոնզեդարյան կարգամիսյան կշռային համակարգը շարունակել է գործել Ք.ա. 1-ին հազարամյակում և լայնորեն կիրառվում էր, ինչպես վերը նշվեց, նաև Ասորեստանում Ք.ա. VIII դ. կեսերից սկսած³⁰: Կարգամիսյան «արևմտյան» մինայի համակարգերից մեկը հիմնվում էր մինայի 470 գ արժեքի վրա, որը կիրառվում էր նաև լուվիական երկրներում, ինչպես, օրինակ, Թաբալում և Գուրգումում: Հնարավոր է, այդ երկրներում շարունակում էր կիրառվել սիկդի և մինայի՝ Ք.ա. 2-րդ հազարամյակի համար վկայված 40:1 հարաբերակցությունը: Դա նշանակում է, որ սիկդի արժեքը մնացել էր նույնը՝ 11.7 գ: Համենայն դեպս, մինայի 470 գ արժեքի վրա հիմնված կարգամիսյան համակարգը հնագիտորեն վկայված է նաև Սամ'ալում և հարավարևելյան փոքրասիական – հյուսիսսիրիական երկաթեդարյան այլ հնավայրերում³¹:

Հինարևելյան կշռային համակարգեր	Սիկդ	Մինա		Տաղանդ	
Միջագետքյան «ստանդարտ» կշռային համակարգ	մոտ 8.4 գ	505 գ	60 սիկդ	30.3 կգ	60 մինա կամ 3600 սիկդ
«Արևմտյան» (կարգամիսյան) կշռային համակարգ	մոտ 7.83 գ	470 գ	60 սիկդ	28.2 կգ	60 մինա կամ 3600 սիկդ
«Արևմտյան» (լևանտյան) կշռային համակարգ	9.4 գ	470 գ	50 սիկդ	28.2 կգ	60 մինա կամ 3000 սիկդ
«Արևմտյան» (խեթական) կշռային համակարգ	11.75 գ	470 գ	40 սիկդ	28.2 կգ	60 մինա կամ 2400 սիկդ
Կարգամիսի 564 գ. կշռային համակարգ	9.4 գ	564 գ	60 սիկդ	մոտ 33.8 կգ	60 մինա կամ 3600 սիկդ
Ասորեստանյան «ծանր» մինա	մոտ 8.9 գ×2	1070 գ	60 սիկդ	մոտ 64 կգ	60 «ծանր» մինա կամ 3600 սիկդ
Ասորեստանյան «երկրի մինա» / «արքայական մինա»	մոտ 8.4 գ×2	1010 գ	60 սիկդ	մոտ 60 կգ	60 «ծանր» մինա կամ 3600 սիկդ
Ուրարտական կշռային համակարգ	մոտ 11.7 գ	700 գ	60 սիկդ	35 կգ	50 մինա կամ 3000 սիկդ

²⁹ Zaccagnini 1999-2001, 42-43, ծնթ. 27:

³⁰ Fales 1996, 16, ծնթ. 11, Fales 2016, 487, Zaccagnini 2019, 65:

³¹ Zaccagnini 2019, 41-42.



Նկ. 1. Վերին Անձավի ուրարտական ամրոցից գտնված բրոնզե կշռաքարը (Վանի թանգարան), **2-4.** Կշռաքարի բռնակին արված ուրարտական սեպագիր արձանագրությունը, **5.** Կշռաքարի կողային մակերեսին գրված հիերոգլիֆային տեքստը, **6.** Կարմիր բլուրից գտնված բրոնզե թասերից մեկը՝ սեպագիր և հիերոգլիֆային արձանագրություններով (ՀՊԹ N 2010-32/19՝ Գրիգորյան 2018, էջ 180-181), **7.** Նորասրբեստանյան «բար»-կշռաքար Կալախ/Նիմրուդից (Բրիտանական թանգարան, BM 91442, @ The Trustees of the British Museum)

Այստեղ չենք կարող շրջանցել նաև ուրարտական տարողության միավորների վրա խեթական նկատելի ազդեցությունը: Դրա օրինակ է սորուն մարմինների չափման համար կիրառվող ուրարտ. *kapi*-ն³², որը կարող էր փոխառություն լինել խեթերենից³³. հմմտ. խեթ. ^{DUG}*kappi*-ն՝ նույն նշանակությամբ³⁴: Այդ նույնը վերաբերում է ուրարտ. *šuw*- «լցնել, պահեստավորել» բառին, հմմտ. սեպագիր լուվ. *šawa*-ն և հիերոգլիֆային լուվ. *suwa*-ն՝ նույն նշանակությամբ³⁵: Այս առումով չպետք է մոռանալ նաև խեթական հիերոգլիֆային գրի կիրառումը Վանի թագավորության արևմտյան գավառներում³⁶:

Կայսրությունների և կայուն թագավորությունների ձևավորմանը զուգընթաց՝ արքայական իշխանությունը փորձել է սահմանել չափի, կշռի և ծավալի միասնական համակարգեր: Օրինակ, Աքքադի թագավորության արքա Նարամ-Սինին (Ք.ա. մոտ 2236-2200 թթ.) ներդրեց այսպես կոչված «արքայի *gur*»-ը (LU₂.GAL GUR/*šarru kurru*)՝ ծավալի ստանդարտացված միավորը³⁷: Այդ նույն երևույթը նկատվում է Միջագետքում Ուրի 3-րդ հարստության շրջանում (Ք.ա. 2112-2004 թթ.)³⁸: Նորասորեստանյան դարաշրջանում, մասնավորապես՝ Թիգլաթ-պալասար III-ից սկսած (Ք.ա. 744-727 թթ.) շրջանառության մեջ դրվեցին մինայի ստանդարտացված միավորներ՝ «արքայի մինա»-ն (MA.NA *šá* MAN/LUGAL/*manê ša šarri*) և «երկրի մինա»-ն (MA.NA *šá* KUR/*manê ša māti*)³⁹: Կշռի արքայական ստանդարտացված միավորների ներդրումը բնորոշ էր հինարևելյան մեկ այլ կայսրության՝ Աքեմենյան տերությանը: Այստեղ աքեմենյան արքայից արքա Դարեհ I-ը (Ք.ա. 522-486 թթ.) ներդրեց «արքայական/արքայի կշռաքարը» (*b'by mlk'/bmtqlt mlk'*)⁴⁰: Չափ ու կշռի տարբեր միավորների ստանդարտացումն արքայական իշխանության կողմից ենթադրում էր

³² Арутюнян 2001, 451.

³³ Хачикян 1985, 53.

³⁴ Tischler 2001, 69.

³⁵ Kosyan 1997, 29-30.

³⁶ Salvini 2012, 247-250 (CP Alt-1-8).

³⁷ Powell 1995, 1955.

³⁸ Biga 2006, 342-343.

³⁹ Powell 1987-1990, 515-517, Fales 1996, 12-17, Radner 1999, 130-131.

⁴⁰ Folmer 1995, 632 և ծնթ. 176. Աքեմենյան շրջանի կշռային համակարգերի և կշռաքարերի վերաբերյալ հմմտ. նաև Briant 2002, 408-409, 414-415, 934-936, Curtis, Tallis 2005, 193-174 (298-304) և այլն:

կշռաքարերի և այլ առարկաների մեծաքանակ արտադրություն, ինչպիսին է նաև Վերին Անձավի՝ խնդրո առարկա բրոնզե արձանագիր կշռաքարը⁴¹:

Եզրակացություններ

Նախքան Վանի թագավորության կազմավորումը, Հայկական լեռնաշխարհից հայտնի կշռի միավորների համակարգերի մասին մեր ունեցած վկայությունները նույնպես սուղ են: Հիմքեր կան նշելու, որ Հայկական լեռնաշխարհում գործել են միջագետքյան կշիռները: Դրանց վկայությունն են Շենգավիթից և Հայաստանի վաղբրոնզեդարյան այլ հուշարձաններից հայտնի քարե կաղապարները: Դրանցում հալեցված մետաղի ծուլակտորները կշռել են 8.06 և 16.13 գ, որոնք համապատասխանում են միջագետքյան մեկ և կրկնակի սիկլի կշռին՝ մոտ 8.4 և 16.8 գ⁴²: Ջրահովտի և Կառնուտի պեղումներից հայտնաբերված վաղբրոնզեդարյան այլ կաղապարներ նախատեսված են եղել պղնձի 500 գ կշռող ծուլակտորներ ծուլելու համար, որը համապատասխանում է միջագետքյան մեկ «ստանդարտ» մինայի կշռին (մոտ 505 գ)⁴³: Մեծամորից հայտնաբերված և Բաբելոնիայի կասսիտական հարստության արքա Ուլամ-Բուրիաշի (Ք.ա. XV դ. առաջին քառորդ)՝ Բուրնա-Բուրիաշ I-ի որդու արձանագրությունը կրող ագաթե փոքր գորտ-կշռաքարը նույնպես ներկայացնում է միջագետքյան «ստանդարտ» կշռային համակարգը՝ 8.64 գ, այն է՝ բաբելոնյան մեկ սիկլ⁴⁴:

Մյուս կողմից, Հայկական լեռնաշխարհի ուշբրոնզեդարյան հուշարձաններից ձեռք բերված որոշ վկայություններ ցույց են տալիս, որ, ի տարբերություն Վաղ բրոնզի դարի, այս շրջանում լեռնաշխարհի առևտուրն ունեցել է հիմնականում արևմտյան ուղղվածություն՝ դեպի այնպիսի կենտրոններ, ինչպիսին էր, օրինակ, Ուգարիթը հյուսիսային Սիրիայում⁴⁵: Ինչպես երևում է, Վանի թագավորության արտաքին տնտեսական կապերի «արևմտյան» ուղղությունը պատահական չէր և գուցեև շարունակում էր լեռնաշխարհի Ուշ բրոնզի դարի ավանդույթները:

⁴¹ Powell 1987-1990, 462.

⁴² Simonyan et al. 2019, 37-40. Կովկասյան կշռաքարերի համար մանրամասն տե՛ս Bobokhyan 2010, 179-203:

⁴³ Bobokhyan, Badalyan 2012, 206, Simonyan et al. 2019, 37.

⁴⁴ Ханзаян и др. 1983, 113-122, նկ. 1-3.

⁴⁵ Bobokhyan, Badalyan 2012, 208-210.

Վերջին միտքը, որը կցանկանայինք շոշափել այս հոդվածում, վերաբերում է տաղանդի՝ իբրև կշռի միավորի գործածությանը Ուրարտուում, ավելի շուտ՝ դրա կիրառության բացակայության հետաքրքիր երևույթին: Բանն այն է, որ խնդրո առարկա կշռաքարի վրա արձանագրված է «50 մինա» և ոչ թե «1 տաղանդ»: Հպատակ երկրներից Վանի թագավորության արքաների ստացած մեծաքանակ տուրքն ու տարեկան հարկերը նույնպես տաղանդի փոխարեն հաշվարկվել են մինայով, ինչպես, օրինակ, [x] 𐎠𐎢𐎽𐎢𐎠 MA.NA URUDU^{MES} «x×10000 մինա պղինձ (բրոնզ)», 10 LIM MA.NA URUDU^{MES} «10000 մինա պղինձ (բրոնզ)» կամ 8 ME MA.NA-e KÙ. BABBAR «800 մինա արծաթ»⁴⁶: Սա բնորոշ է փոքրասիական/խեթական աշխարհին⁴⁷, և Վանի թագավորության մեջ նույն պրակտիկայի կիրառումը կարող է լրացուցիչ կռվան հանդիսանալ պնդելու թագավորության կշռային համակարգի վրա արևմտյան ազդեցության մասին:

Գրականություն

- Գրիգորյան Ա. 2018 (խմբ.), Ուրարտու. Վանի թագավորություն: Գտածոներ Հայաստանի ուրարտական հնավայրերից (Ք.ա. 860-585 թթ.), Երևան, Հայաստանի պատմության թանգարան, 288 էջ:
- Մովսիսյան Ա.Ե. 1998, Վանի թագավորության (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) մեհենագրությունը, Երևան, «Գիտություն», 107 էջ, 35 աղ.
- Մովսիսյան Ա.Ե. 2003ա, Հայկական մեհենագրություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 272 էջ:
- Մովսիսյան Ա.Ե. 2003բ, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 398 էջ:
- Арутюнян Н.В. 2001, Корпус урартских клинообразных надписей, Ереван, «Гитутюн», с. 542+рис. 183.
- Дьяконов И.М. 1963а, Урартские письма и документы, М.-Л., изд. Академии наук СССР, 142 с.
- Пиотровский Б.Б. 1952, Кармир-Блур II: результаты раскопок 1949-1950 гг., Ереван, изд. Академии наук Армянской ССР, 89 с.+24 табл.
- Ханзадян Э.В., Саргсян Г.Х., Дьяконов И.М. 1983, Вавилонская гиря XVI в. до н.э. с клинописной надписью из раскопок Мецамора, Древний Восток, т. 4, Ереван, 113-122, 295-296.

⁴⁶ Հմմտ., համապատասխանաբար, Арутюнян 2001, 186 (174 B1₂₁, 24), 241 (241E₅₅), Salvini 2008 (1), 331 (A 8-2 Vo₂₁, 24), 425 (A 9-3 IV₅₄).

⁴⁷ Իբրև կշռի միավոր «տաղանդ»-ը վկայված չէ այսպես կոչված «արևմտյան» միքանի կշռային համակարգերում (կարգամիսյան, խեթական): Հմմտ. նաև Michel 2017, 96.

- Хачикян М.Л. 1985, Хурритский и урартский языки, «Хурриты и урарты» 2, Ереван, изд. Академии наук Армянской ССР, 195 с.
- Belli O. 2009a, Yukari Anzaf Urartu Kalesi'nde Bulunan Resim ve Çivi Yazılı Bronz Ağırlik, Sağlamtimur H., Abay E., Derin Z., Erdem A.Ü., Batmaz A., Dedeoğlu F., Erdalkiran M., Baştürk M.B., Konakçı E. 2009 (eds.), Altan Çilingiroğlu'na Armağan: Yukari Denizin Kiyisinda Urartu Krallığı'na Adanmış Bir Hayat/Studies in Honour of Altan Çilingiroğlu. A Life Dedicated to Urartu on the Shores of the Upper Sea, İstanbul, Arkeoloji ve Sanat Yayinlari, p. 753-767.
- Belli O. 2009b, 2007 Yili Yukari Anzaf Urartu Kalesi Kazisi, Kazi Sonuçlari Toplantisi, vol. 30/1, Ankara, p. 449-470.
- Biga M.G. 2006, Some Thoughts on Fairs, Temples and Weights, Alberti M.E., Ascalone E., Peyronel L. (eds.), Weights in Context. Bronze Age Weighting Systems of Eastern Mediterranean: Chronology, Typology, Material and Archaeological Contexts, Proceedings of the International Colloquium, Rome 22nd-24th November 2004, Roma, Istituto Italiano di Numismatica, p. 341-345.
- Bobokhyan A. 2010, "Sicle caucasien": Zur Frage der bronzzeitlichen Gewichtssysteme im Kulturgebiet zwischen Kaukasus und Taurus, Hensen S., Hauptmann A., Motzenbacher I., Pernicka E. (Hrsg.), Von Maikop bis Trialeti. Gewinnung und Verbreitung von Metallen und Obsidian in Kaukasien im 4-2. Jt. v. Chr., Bonn, Dr. Rudolf Habelt GmbH, p. 179-203.
- Bobokhyan A., Badalyan R. 2012, Late Bronze Age Balance Weights from Gegharot (Armenia), Mehnert A., Mehnert G., Reinhold S. (eds.), Austausch und Kulturkontakt im Südkaukasus und seinen angrenzenden Regionen in der Spätbronze-/Früheisenzeit (Schriften des Zentrums für Archäologie und Kulturgeschichte des Schwarzmeerraumes 22). Langenweißbach, Beier & Beran, p. 195-221.
- Briant P. 2002, From Cyrus to Alexander. A History of the Persian Empire, Winona Lake, Indiana: Eisenbrauns, xx+1196 p.
- Burney Ch.A. 1966, A First Season of Excavations at the Urartian Citadel of Kayalidere, Anatolian Studies, London, vol. 16, p. 55-111.
- Curtis J., Tallis N. 2005, Forgotten Empire. The World of Ancient Persia, London, The British Museum Press, 272 p.
- Fales F.M. 1996, Prices in Neo-Assyrian Sources, State Archives of Assyria Bulletin, vol. 10/1, Helsinki, p. 11-35.
- Fales F.M. 2016, The Assyrian Lion-Weights, Corò P., de Zorzi N., Devecchi E., Maiocchi M. (eds.), Libiamo ne' lieti calici. Ancient Near Eastern Studies Presented to Lucio Milano on the Occasion of His 65th Birthday by Pupils, Colleagues and Friends (Alter Orient und Altes Testament 436), Münster, Ugarit Verlag, p. 483-510.
- Folmer M.L. 1995, The Aramaic Language in the Achaemenid Period. A Study in Linguistic Variation (Orientalia Lovaniensia Analecta, vol. 68), Leuven, Peeters Publishers, 850 p.
- Grekyan Y.H. 2016, A Note on the Toprakkale Tablet, Nouvelles Assyriologiques Brèves et Utilitaires, 2016/1 (mars), Paris – Rouen, p. 54-56.

- König F.W. 1957, *Handbuch der chaldischen Inschriften* (AfO Beiheft 8), Teil II. Graz, Selbstverlag des Herausgebers/Horn, Ferdinand Berger, p. 81-276, Taf. 106/107-128.
- Kosyan A. 1997, On Anatolian-Urartian Linguistic Contacts, *Journal of Indo-European Studies*, vol. 25/1&2, Hattiesburg, p. 27-34.
- Mederos, A., Lamberg-Karlovsky C.C. 2004, *Weight Systems and Trade Network in the Old World (2500-1000 BC)*, Hudson M., Wunsch C. (eds.), *Creating Economic Order. Record-Keeping, Standardization, and the Development of Accounting in the Ancient Near East*, vol. IV. Bethesda, Maryland, CDL Press, p. 199-214.
- Michel C. 2017, *Economy, Society, and Daily Life in the Old Assyrian Period*, Frahm E. (ed.), *A Companion to Assyria*, Hoboken, NJ, Wiley Blackwell, p. 80-107.
- Powell M.A. 1987-1990, *Masse und Gewichte*, *Reallexikon der Assyriologie und Vorderasiatischer Archäologie*, Berlin – Leipzig – New York, vol. 7, p. 457-530.
- Powell M.A. 1995, *Metrology and Mathematics in Ancient Mesopotamia*, Sasson J.M. (Ed.-in-Chief), *Civilizations of the Ancient Near East*, vol. 3, New York, Scribner, p. 1941-1957.
- Radner K. 1999, *Money in the Neo-Assyrian Empire*, Dercksen J.G. (ed.), *Trade and Finance in Ancient Mesopotamia. Proceedings of the First MOS Symposium (Leiden 1997)*, "MOS Studies 1". Leiden – Istanbul, Nederlands Instituut voor het Nabije Oosten, p. 127-157.
- Reade J.I. 2018, *Assyrian Weights and Money*, *State Archives of Assyria Bulletin*, vol. 24, Helsinki, p. 125-193.
- Salvini M. 2008 (1-3), *Corpus dei testi urartei*, vol. I. Le iscrizioni su pietra e roccia: I Testi; vol. II, Le iscrizioni su pietra e roccia. Thesaurus; vol. III, Tavole (Documenta Asiana, vol. VIII/1-3), Roma, CNR Istituto di studi sulle civiltà dell'Egeo e del Vicino Oriente, P. 653+503+390.
- Salvini M. 2012, *Corpus dei testi urartei*, vol. IV. Iscrizioni su bronzi, argilla e altri supporti, nuove iscrizioni su pietra, paleografia generale (Documenta Asiana, vol. VIII/IV), Roma, CNR Istituto di studi sulle civiltà dell'Egeo e del Vicino Oriente, p. 323.
- Simonyan H., Gevorgyan A. and Bobokhyan A. 2019, *Cognitive Links between Mountains and Lowlands: Balance Weights from the Early Bronze Age site of Shengavit (Armenia) in Context*, *Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies*, vol. 13/2, Oxford, p. 34-52.
- Tischler J. 2001, *Hethitisches Handwörterbuch* (Innsbrucker Beiträge zur Sprachwissenschaft 102), Innsbruck, Innsbruck Institut für Sprachen und Literaturen der Universität Innsbruck, 298 p.
- Vargyas P. 1996, *The Mina of Karkemiš in the Neo-Assyrian Sources*, *State Archives of Assyria Bulletin*, vol. 10/2, Helsinki, p. 9-14.
- Zaccagnini C. 1978, *A Note on the Talent of Alalah (AT 401)*, *Iraq*, vol. 40/1, London, p. 67-69.
- Zaccagnini C. 1979, *Notes on the Weight System at Alalah*, *Orientalia*, NS, vol. 48/4, Roma, p. 472-475.
- Zaccagnini C. 1986, *The Dilmun Standard and Its Relationship with Indus and Near Eastern Weight Systems*, *Iraq*, vol. 48, London, p. 19-23.
- Zaccagnini C. 1999-2001, *The Mina of Karkemiš and Other Minas*, *State Archives of Assyria Bulletin*, vol. 13, Helsinki, p. 39-56.

- Zaccagnini C. 2018, Capital Investment, Weight Standards and Overland Trade at Emar, Zeitschrift für Assyriologie und Vorderasiatischer Archäologie, vol. 108/1, Berlin – New York, p. 43-62.
- Zaccagnini C. 2019, Duck Weights from Karkemish: a Historical Analysis, Orientalia, NS, vol. 88/1, Roma, p. 37-77.

ՎԵՐԻՆ ԱՆՁԱՎԻ «ԵՐԿԼԵԶՈՒ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԿԵՌԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Երվանդ Գրեկյան

Ամփոփում

Հինարևելյան կայսրությունների ձևավորմանը զուգընթաց՝ արքայական իշխանությունը փորձել է ներդնել չափ ու կշռի միասնական համակարգեր: Ստանդարտացումը ենթադրում էր այդ համակարգերի միավորները ցույց տվող առարկաների, օրինակ, կշռաքարերի մեծաքանակ արտադրություն (Նորասորեստանյան կայսրություն, Աքեմենյան կայսրություն և այլն): Նման երևույթ վկայված է նաև Վանի թագավորության մեջ (Բիայնիլի-Ուրարտու):

Հենվելով Վերին Անձալի ուրարտական ամրոցից հայտնաբերված բրոնզե արձանագիր (գրված ուրարտական սեպագրով և հիերոգլիֆային գրով) կշռաքարի կշռի վրա՝ ցույց է տրվում, որ թագավորության կշռային համակարգի հիմքում ընկած էր այսպես կոչված «խեթական» սիկլը (11.7 գ), իսկ համակարգն ուղղված էր դեպի արևմտյան՝ սիրիա-փոքրասիական – լևանտյան աշխարհ:

Բանալի բառեր՝ Բիայնիլի-Ուրարտու, Վերին Անձալ, կշռաքար, կշռային համակարգ, «խեթական» սիկլ, սիրիա-փոքրասիական – լևանտյան աշխարհ, արտաքին առևտուր:

«ДВУЯЗЫЧНАЯ» НАДПИСЬ ВЕРХНЕГО АНДЗАВА И РЯД ВОПРОСОВ УРАРТСКОЙ ВЕСОВОЙ СИСТЕМЫ

Ерванд Грекян

Резюме

С образованием древневосточных империй царская власть пыталась ввести единые метрологические системы. Стандартизация включала массовое производство предметов, представляющих единицы этих систем, в

том числе и весовых (Новоассирийская держава, Ахеменидская империя и т.д.). Подобное явление наблюдается и в Ванском царстве (Биайнили-Урарту).

Бронзовая гиря с урартской клинописью и иероглифическим письмом из урартской крепости Верхний Андзав явствует о том, что основой весовой системы Урарту, ориентированной на запад, на сирийско-малоазиатский и левантийский культурный мир, являлся так называемый «хеттский» шекель (11.7 г).

Ключевые слова – Биайнили-Урарту, Верхний Андзав, гиря, весовая система, «хеттский» шекель, сирийско-малоазиатский и левантийский культурный мир, внешняя торговля.

THE "BILINGUAL" INSCRIPTION OF UPPER ANZAF AND SOME ISSUES OF THE URARTIAN WEIGHT SYSTEM

Yervand Grekyan

Abstract

Along with the formation of the ancient empires, the royal power tried to introduce unified metrological systems. Standardization involved the mass production of items representing the units of these systems, such as weights (Neo-Assyrian Empire, Achaemenid Empire, etc.). Similar phenomenon is evidenced also in the kingdom of Van (Biainili-Urartu).

Based on the bronze weight found in the Urartian fortress of Upper Anzaf with inscription written in Urartian cuneiform and hieroglyphic writing, it is shown that the so-called "Hittite" shekel (11.7 g) was the basis of the kingdom's weight system, which was oriented to the West, to the Syrian-Asia Minor and Levantine cultural world.

Key words – Biainili-Urartu, Upper Anzaf, balance weight, weight system, "Hittite" shekel, Syrian-Asia Minor and Levantine cultural world, international trade.

К ВОПРОСУ О ПОГРОМАХ УДИН В НАЧАЛЕ XX ВЕКА НА ТЕРРИТОРИИ СОВРЕМЕННОГО АЗЕРБАЙДЖАНА

Григорий Айвазян

Кандидат исторических наук

Научный сотрудник Института археологии и этнографии НАН РА

РА, Ереван, Чаренца 15

Эл. адрес: grigoriayvazyan@gmail.com

Статья представлена 11.12.2019, рецензирована 21.01.2021, принята к

публикации 01.03.2021

Вступление

Ярким примером азербайджанской «толерантности» и «мультикультурализма» в действии, наряду с исторической судьбой армян Азербайджана, может послужить судьба удинского народа. Удинский народ – это действительно братский армянам народ, который во многом разделил их печальную судьбу. В этой связи предметом нашего исследования стал именно вопрос о удинских погромах на территории современного Азербайджана в начале двадцатого века.

Прежде чем перейти к сути затронутого нами вопроса, следует сделать краткий экскурс в его предысторию.

Удины были народом-доминантом периода Албанского царства с центром в Кабале и Шаки¹. Под левобережной Албанией и албанцами-христианами к IX-X векам уже подразумевалась «Страна утийцев», а этноним «уди» стал самоназванием (эндоэтнонимом) албанцев-христиан левобережья Куры².

¹ В 1990-х гг. экспедицией АН Грузии во главе с кавказоведом З. Алексидзе в монастыре Св. Екатерины на Синае был обнаружен грузинско-албанский палимпсест. После его дешифровки в исторической науке окончательно утвердилось мнение о том, что удины были народом-доминантом периода Албанского царства с центром в Кабале и Шаки. Эта важная находка показывает, что процесс удинской этноконсолидации в среде лезгиноязычных албанцев-христиан успешно завершился к IX-X вв. The Caucasian Albanian Palimpsests of Mount Sinai 2008.

² Самоназвание – «уди»: на наш взгляд, обоснованным кажется предположение о том, что в восточнокавказских языках слово ути-уди означало определенное понятие-термин, к примеру, «жители равнин» (Вагапов 1980, 79).

Так например, еще армянский автор начала X в., католикос (898-924/929 гг.) Иованнес Драсханакертци в своей работе «История Армении», перечисляя соседние с Багратидской Арменией народы, прямо называет удинами-утийцами («утэацик») христианское население страны Алуанк' (царства Шаки)³. Интересен факт, что в XV в. в селе Ч'алет', в трех километрах от Вардашена, находился (или временно был перенесен туда) албанский антихалкедонитский (и антипрестольный) католикосат. Это явление могло быть связано с тенденцией этнического «самовыражения» христианского удинского этноса⁴. Даже спустя столетия на кладбище в селе Ч'алет' было замечено надгробие, на котором было написано: «Епископ Даниел – предстоятель епархии прихода Ч'алет'а и Утийцев»⁵.

У армянского автора XVII в. Закария Канакерци мы можем прочесть следующее: «Человек из племени алван, которых ныне зовут удинами»⁶. Параллель между терминами албанцы и удины проводит и католикос Симеон Ереванци (1763-1780)⁷.

Разумеется, удинские погромы на территории современного Азербайджана начались не в 1918-1920 гг., этот длительный процесс имел свою печальную предысторию, изложение которой выходит за рамки наших задач. И для того, чтобы лучше представить себе ситуацию, следует привести хотя бы несколько ярких эпизодов, ставших прологом к великой трагедии, общей для азербайджанских армян и удинского народа в XX веке.

Итак, напомним, что в 20-х гг. XVIII в. в зоне Закаталы – Шаки – Кабала, как указывают на то источники, политика относительной веротерпимости сменяется политикой насильственного обращения христиан в мусульманство⁸. Вторая волна массовой насильственной исла-

³ Драсханакертци 1986, гл. XLIV, 161, гл. LIII, 186.

⁴ Балаян 2015, 252-259.

⁵ Карапетян 1997, 91, 131.

⁶ Канакерци 1969.

⁷ Диван истории Армении 1894, 417.

⁸ Так, в письме от 20 марта 1724 г., известном под названием «Челобитная утийцев к Петру I», сказано, что «неверные сожгли наши церкви, причинили нам много зла из –

мизации прокатилась по региону Закаталы – Шеки – Кабала в середине XVIII в.⁹. Насильственная исламизация удинских и армянских селений в зоне Закаталы – Шеки – Кабала продолжалась также в конце XVIII – начале XIX вв. К. Овсепян указывает, что число насильственно обращенных в магометанство в XVIII в. удин и армян достигло 100.000 человек. Тот же автор приводит также перечень тюркизированных в ту пору удинских и армянских селений¹⁰. Упоминание частично этнически удинских населенных пунктов есть и у других авторов, в частности, у М. Бархударяна¹¹. Некоторые исследователи отмечают, что число сохранившихся на рубеже XVIII-XIX вв. удинских селений составляло 43, а численность их населения – 50.000 человек¹². Мы же считаем, что подобных населенных пунктов могло быть более 50, а их население могло составлять до 100.000 человек¹³. Вышеотмеченное крайне важно с точки зрения определения числа этнических удин в регионе в пред-

за нашей веры... священников убили... женщин с детьми увели в плен... Соборы обезлюдели, ...а мы – оставшиеся, ни живы, ни мертвы. Мы албанцы, по нации утийцы... тайно нашу веру хранили, но нас заставляют быть турками...». В другом письме, написанном 5 февраля 1725 г. архимандритом Мартиросом к грузинскому царю Вахтангу VI, сообщается: «37 деревень Кабалы разрушили... Отуречили также сёла страны Шаки». Христиане-удины зоны Шаки – Кабала 28 октября 1725 г. еще раз обращаются к Петру I, письмо это зарегистрировано как «Послание Армянских старшин шести деревень Петру I о скорейшей присылке войск». В нем в частности, сказано: «...все наши деревни и Шекинскую страну отуречили насильственно. Наши письмена и церкви сожгли, наших священников перебили. Многие ради веры своей погибли. Теперь днем мы турки, ночью – армяне». Письмо это подписано старшинами шести деревень, а именно Барсегом и Аствацатуром из деревни Нидж, Минасом и Пайрамом из деревни Бум, Насипом из деревни Мехлуговах, Алавердием из деревни Джоурлу, Торосом из деревни Сеид-Тала, Варданом из деревни Тосик (Армяно-русские отношения в XVIII в. 1967, 90-91, 231, 263-264).

⁹ Тогда усилиями хана Шеки Гаджи Челеби (возможно, он был этническим удином, Петрушевский 1949, 137) насильственно были обращены в мусульманство более 15 тысяч семей в 37 деревнях Шекинского ханства. Жители этих селений, удины и армяне, позже утратили свои родные языки и перешли на лезгинский и тюркский – Армяно-русские отношения в XVIII веке 1967, 95.

¹⁰ Յոժսէփեան 1904, 64-65:

¹¹ Բարխուդարեանց 1902, 16-17, Արցախ, Բարք, «Արօր» 1895, 33-34, 53-54, 59: Ср. Бархударян 2011, 43-44.

¹² Харатян 2015, 37, 75.

¹³ Айвазян 2018, 17-30.

дверии интересующих нас событий. Исходя из сказанного, даже на рубеже XVIII-XIX вв. удинский народ (этнические удины) всё еще составлял значительный сегмент населения на своей исторической родине.

Таким было реальное положение дел накануне XX века, когда в истории удинского, равно как и армянского народа современного Азербайджана разыгралась трагедия невиданных масштабов.

Итак, обращаясь к историческому контексту данного вопроса, следует отметить тот факт, что Первая мировая война и революция в Российской империи для тюрков и армян региона Южного Кавказа, образно выражаясь, «стала водоразделом», тюркам Кавказа представился шанс очистить край от «неверных» (от христианского населения) и, в первую очередь, от армян и удин. В изменившейся политической ситуации положение армян и этнических удин – «армян по вере» – в Елизаветпольской губернии вообще и, в частности, в Нухинском и Арешском уездах стало критическим. Тюрки региона с декабря 1917 г. стали прибегать к актам массового насилия по отношению к армянам и удинам. Имеющиеся по данной теме источники дают отчетливое представление о событиях того времени¹⁴. Так, например, по интересующему нас вопросу есть интересные сведения в документе под названием **«Обращение центрального Совета армянских земляческих союзов к представителям союзных государств на Кавказе»**, из которого хотим привести выдержку: «Армянское население Нухинского и Арешского уездов, в числе 60 тыс., окружено морем мусульманского населения. Под руководством турецких офицеров в этих уездах оно подверглось ужасам резни и дикого разгула соседей. Временно уцелели лишь селения **Бююк Согютлу, Бала Согютлу, Тосик, Джалут, Вардашен, Нидж, Мирза Бейли**. Эти якобы уцелевшие селения были обезоружены турецким командованием. Все их имущество было отобрано

¹⁴ Для освещения данной темы особенно ценны материалы и документы, введенные в широкий научный оборот в сборнике «Погромы армян в Бакинской и Елизаветпольской губерниях в 1918-1920 гг.» 2003. Сборник документов и материалов 2003, а также в работах армянского этнолога Г. Харатян: см. Харатян 2015. По данной теме имеются интересные материалы также и в работах Г. Степаняна: Степанян 2010, Степанян 2002, 23-32.

турко-татарами, не успевшие бежать мужчины старше 12 лет вырезаны поголовно, а дети и женщины уведены в Агдаш, более красивые из них отданы в дар разным бекам и влиятельным лицам из мусульман... Председатель Центрального Совета Армянских Земляческих Союзов: Ованес Туманян, Секретарь Амазасп Амбарцумян, 19 декабря 1918 г. Тифлис. N 83¹⁵». 2 февраля 1919 г. к Армянскому национальному совету обращается представитель нухи-арешских беженцев в Елизаветполе с просьбой: «о спасении находящихся в плену беженцев и возможности переселения их в более безопасные селения, такие как удинские села **Нидж и Большой Согютлу, а нухинцев – в Чалет и Вардашен**¹⁶». Посещение региона капитаном Друитта, представителя Уполномоченного по вопросам беженцев майора А. Гиббона, показало, что: «Из числа 60 тыс. армян Нухинского и Арешского уезда в селениях **Нидже, Варташене и Джалете осталось всего до 10.000** человек, остальные – за исключением беженцев – истреблены и погибли, в районе Нухи свирепствовал тиф всех видов ...население лишено возможности передвижения и не чувствует себя обеспеченным»¹⁷.

Между тем, родные сёла армянских и удинских беженцев к этому времени уже заселялись тюрками и не только ими. Так, например, в удинском селе **Султан Нухи** поселились лезгины¹⁸.

По интересующему нас вопросу о сложившейся ситуации есть интересные сведения также в следующем сообщении, содержащемся в документе «**Докладная записка председателя крестьянского союза Нухинского и Арешского уездов о положении беженцев-армян в Нухинском и Арешском уездах**» от 30 апреля 1919 г. И вот что, в частности, там сказано: «После событий, начавшихся в мае

¹⁵ Պատմաքաղաքագիտական հանդես 2013, N 1 (192), 179-185.

¹⁶ НАА, ф. 223, оп. 1, д. 75, л. 9, оригинал, рукопись; Погромы армян в Бакинской и Елизаветпольской губерниях в 1918-1920 гг. 2003, 207-209. Ср. Харатян 2015, 83-135.

¹⁷ НАА, ф. 200, оп. 1, д. 79, л. 136-137. Копия. Машинопись; Погромы армян в Бакинской и Елизаветпольской губерниях в 1918-1920 гг. 2003, 245-246. Ср. Харатян 2015, 83-135.

¹⁸ НАА, ф. 223, оп. 1, д. 80, л. 79. Подлинник. Рукопись; Погромы армян в Бакинской и Елизаветпольской губерниях в 1918-1920 гг. 2003, 277. Ср. Харатян 2015, 83-135.

месяце 1918 года, из армянских сел Нухинского и Арешского уездов уцелели частью только три селения **Нидж, Варташен и Джалет**: жители вырезаны и все состояние разграблено... Жителей селения **Орабан** насильно заставили принять магометанство. Красивых женщин и девочек увели. Много женщин и девочек находятся в селениях Дайна, Самуг, в гор. Агдаше и пр. В последнем, по слухам, открыт даже публичный дом из жен и девочек... Налог «Ушура», установленный турками, не собирается ни от кого, но почему-то армянское **селение Нидж (удинское)** составляет исключение, где до сих пор собирается этот налог... Председатель Крестьянского союза Нухинского и Арешского уездов Б. Балаянц¹⁹».

Весьма содержательные данные об интересующем нас вопросе можно почерпнуть из документа: «**Доклад о положении армян в Нухинском и Арешском уездах**²⁰...»: «Сел. Варташен: жители успели скрыться в соседних горных лесах и провели там наиболее тревожное время в июле и августе 1918 г. Все же было убито несколько десятков мужчин. Все дома как в Варташене, так и в примыкающем к нему Кишляге были начисто ограблены. Особенно пострадал Кишляг. В Варташене 600 домов удин-армян (григориан), около 300 домов удин-«враци» (православных)... Каждый из домов пострадал в среднем тысяч на 80.000-100.000. Домашняя утварь и обстановка, сельскохозяйственный инвентарь и скот – всё захвачено татарами соседних деревень... Сел. Нидж. Раньше было 900 арм. домов (около 7000 чел, в основном этнические удины – Г.А.). Теперь осталось 747 домов. Остальные вымерли или выселились. Имеется 82 татар. дома. С июля по октябрь 1918 г. не прекращались убийства армян гл. обр. лучшей сельской молодежи. Убито таким образом около 300 (речь идет об этнических удилах – Г.А.)...

¹⁹ НАА, ф. 223, оп. 1, д. 80, л. 138 об. Подлинник. Машинопись; Погромы армян в Бакинской и Елизаветпольской губерниях в 1918-1920 гг. 2003, 289-290. Ср. Харатян 2015, 83-135.

²⁰ Результат поездки с мистером Гринлиф от Американского Комитета помощи на Ближнем Востоке для обследования положения беженцев с 14 по 18 мая 1919 года.

Наиболее острым является вопрос об участии находящихся в татарских деревнях. Большое количество, особенно женщин и детей, было пленено еще в прошлом году во время резни и массовых нападений. Многие из них обращены насильственно в мусульманство. Мальчики обрезаны. Женщины в унижении... В Агдаше открыт публичный дом из пленных.

Возвращение беженцев в свои деревни не разрешается. В селе **Согютли** (подверглось резне 6 сентября 1918 г., после того, как признало власть турок, и было обезоружено. До сих пор сохранились груды непохороненных костей и черепов), Ягуплы, Хошкашен, Каябаши, **Цирик, Тосик**, Чаркеанд, Ахплакеанд и др. Где только находятся охотники из мусульман, они наделяются полями, садами и домами местных. Вся деревня Каябаши (оказавшая туркам сопротивление и сражавшаяся в течение 2 недель) сдана татарам. **Варташен, Джалет и Нидж ограблены.** Жители села **Оробан** (удины) **приняли в прошлом году мусульманство под угрозой резни.** Другая половина этого селения **приняла мусульманство еще в конце 18-го века.** Бывали частичные случаи перехода в мусульманство и в др. деревнях в прошлом году. **Такое же предложение делалось и ниджцам**, но те отказались. Год владычества Азербайджана в этой области уже дал картину всеобщего упадка»²¹...

29 августа Нухи-Арешское землячество в Тифлисе обращается к Комиссару Армении и Закавказья полковнику Хаскелю, и вот что сказано в этом обращении: «население Нухинского и Арешского уездов «Азербайджана» переживает поистине трагическое положение...

²¹ Во все области к северу от Куры, начиная от Евлаха, бросается в глаза определенно не татарский тип местных мусульман, вполне **тождественный с типом местных (удин).** **Все население было тут, по-видимому, когда-то (2-3 столетия назад) удинским** и признавало своим духовным главой Эчмиадзинского Католикоса (до 1815 г. – Гандзасарского Католикоса). Воспоминание об этом еще не умерло у местных мусульман, что не мешает им, однако, быть крайне фанатичными и нетерпимыми. С. **Варданлу (удинское)** приняло магометанство в 1754 г., с. **Хач-Маз (удинское)**, по преданию, – в 1808 г. Во многих мусульманских селениях имеются развалины армянских церквей и многие носят армянские названия. Не будучи письменным языком, удинский язык легко уступил здесь место татарскому.

Положение спасшихся от резни беженцев и сирот таково: большая часть их живет в трех уцелевших (**по ошибке принятых турками за грузинские**) селениях **Нидж, Варташен и Джалут**, и в самом городе **Нухе**. ...нет беженской семьи, у которой родной или близкий не находился в плену. ...**В уцелевших селениях: Нидж, Варташен и Джалут** домашняя утварь, обстановка, сельскохозяйственный инвентарь и скот – всё захвачено татарами с соседних деревень. Грабежи и вымогательства, сопровождаемые убийствами, продолжаются и поныне...»²².

Интересующие нас данные есть также в следующем документе: **«Письмо правления Нухи-Арешского землячества верховному комиссару Закавказья полковнику Хаскелю о продолжающихся погромах армянского и удинского населения в указанных уездах и о необходимости выявления виновных и ускорения переселения»**²³: «Как известно, летом 1918 года при наступлении турок на Баку последние вместе с азербайджанскими войсками уничтожили в Нухинском и Арешском уездах 48 селений, вырезав свыше 35 тысяч мирного населения. **Избегнуть этой участи тогда удалось лишь трем утинским (удинским) селениям: Варташен, Нидж и Джалут** благодаря той причине, что турками по ошибке названные селения были приняты за грузинские – ввиду общности языка утинцев – грузин и утинцев – армян (удин диофизитов и миафизитов), населявших эти селения (утинцы составляют особую ветвь армян)... Нуха-Арешское Землячество в Тифлисе неоднократно обращало внимание союзных миссий на трагическое положение остатков армянского населения в городе Нухе и [на]уцелевшие... от резни 1918 года упомянутые выше три селения. Оно в предвещании **могущей быть новой резни и в целях предотвращения таковой просило своевременно** командировать в означенный район хотя бы одного представителя великих

²² НАА, ф. 278, оп. 1, д. 8, л. 64 об., л. 62-64. Заверенная копия. Машинопись; Погромы армян в Бакинской и Елизаветпольской губерниях 2003, 393-396. Ср. Харатян 2015, 83-135.

²³ Копии письма посланы: министерствам иностранных, внутренних дел и председателю правительства Грузии: НАА, ф. 245, оп. 1, д. 15, л. 75 (прим. сост.), 8 апреля 1920 г. Тифлис. Ср. Харатян 2015, 83-135.

союзников, который мог бы предупредить настигшее бедствие и своевременно и безболезненно совершить эвакуацию этих армян в Армению²⁴».

Следует отметить, что даже после установления советской власти в Азербайджане проблемы чудом выживших во время кровавой бойни местных армян и удин так и не закончились. Это четко видно из **«Доклада специального уполномоченного советской власти Азербайджана, жителя села Куткашен Ясина Молла Мамед оглы Народному комиссару внутренних дел Азербайджана «О положении армян Нухинского и Арешского уездов от 20 мая 1920 г.»**²⁵. **«Зло не искоренилось и после объявления Советской власти в Азербайджане**, так как во власти остались старые кровопийцы-чиновники. Старшины, которые сожгли живыми около 700 душ женщин и детей в помещениях, и сейчас продолжают свою службу народу именем Советской власти. Во всех селах власть старая, и они продолжают свою старую политику... Мне Агдашским Ревкомом дан был мандат для освобождения и водворения на свои места армян, но я ничего не мог сделать в пользу несчастных крестьян армян, т.к. все мусульманское население вооружено с ног до головы и пока не различает своих друзей и врагов; я был бессилён»²⁶.

Заключение

Таким образом, по сути, покинутые всеми, волею судьбы выжившие во время геноцида армян на территории современного Азербайджана в 1918-1920 гг. удины, точнее сохранившаяся их часть, были вынуждены вернуться в свой разоренный и оскверненный край и практически на пустом месте попытаться устроить свою жизнь заново.

²⁴ НАА, ф. 245, оп. 1, д. 15, л. 75-77 и об. Подлинник. Рукопись; Погромы армян в Бакинской и Елизаветпольской губерниях 2003, 454-455. Ср. Харатян 2015, 83-135.

²⁵ Копия доклада послана дипломатическому представителю Армении в Грузии (См. НАА, ф. 278, оп. 1, д. 41, л. 17 (прим. сост.)). Ср. Харатян 2015, 83-135.

²⁶ НАА, ф. 200, оп. 1, д. 250, л. 12. Заверенная копия. Машинопись; Погромы армян в Бакинской и Елизаветпольской губерниях 2003, 472-473. Ср. Харатян 2015, 83-135.

Это продолжалось до тех пор, пока история начала XX века не повторилась в зеркальных событиях его конца, ставших ее логическим продолжением.

Литература

- Բարխուդարեանց Մ. 1902, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 224 էջ:
- Յովսէփեան Ղ. 1904, Ուտիացի եւ մահմեդական հայերի մասին, Թիֆլիզ, «Հերմէս», 102 էջ:
- Պատմաքանասիրական հանդես 2013, N 1 (192), Երևան, էջ 179-185.
- Айвазян Г. 2018, К вопросу о дезинтеграции и деэтнизации удинского народа. Армения и Восточнохристианская Цивилизация – III, Республиканская конференция, посвященная 70-летию со дня рождения известного арменоведа-кавказоведа Павла Чобаняна (1948-2017 гг.), 17-18 мая, Ереван, «Гитутюн», с. 17-30.
- Армяно-русские отношения в XVIII в. 1967, сб. документов, т. II, ч. II, Ереван, изд. АН АрмССР, 520 с.
- Балаян М. 2015, Албанский католикосат в Чалет'е (XV в.) – «Albania Caucasica», Сб. статей, вып. I, предисловие, подгот. А.К. Аликберов, М.С. Гаджиев, Москва, «Ивран», с. 252-259.
- Драсханакертци Иованнес 1986, История Армении, пер. с древнеармянского, вступительная статья и комментарий М.О. Дарбинян-Меликян, Ереван, «Советакан грох», 400 с.
- Диван истории Армении 1894, т. III. Памятники Католикоса Симеона, Тифлис, «Нерсисян», с. 417.
- Закарий Канакерци 1969, Хроника. Перевод с армянского. Предисловие и комментарии М.О. Дарбинян-Меликян, Москва, «Наука», с. 186.
- Карапетян С. 1997, Армянские лапидарные надписи Собственно-Алуанка, Ереван, «Гитутюн», с. 132.
- НАА, ф. 223, оп. 1, д. 75, л. 9; ф. 200, оп. 1, д. 79, л. 136-137; ф. 223, оп. 1, д. 80, л. 79; ф. 223, оп. 1, д. 80, л. 138 об.; ф. 278, оп. 1, д. 8, л. 64 об., л. 62-64; ф. 245, оп. 1, д. 15, л. 75; ф. 245, оп. 1, д. 15, л. 75-77и об.; ф. 278, оп. 1, д. 41, л. 17; ф. 200, оп. 1, д. 250, л. 12
- Погромы армян в Бакинской и Елизаветпольской губерниях в 1918-1920 гг. 2003, Сборник документов и материалов (сост. Мирзоян С., Казинян А., Исторический архив РА), Ереван, изд. Национальный архив Армении, 525 с.
- Харатян Г. 2015, Официальные этно-демографические показатели в Азербайджане в контексте поиска и кризиса идентичности азербайджанцев. Удины: крах всех усилий самосохранения, Москва, «Центриздат», 135 с.
- The Caucasian Albanian Palimpsests of Mount Sinai 2008, vol. I-II. Edited by J. Gippert, W. Schulze, Z. Aleksidze, J.-P. Mahé, Turnhout, Brepols Publishers, 530 p.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՊՐԵՋԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ ՈՒԴԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Գրիգորի Այվազյան

Ամփոփում

Ադրբեջանական «հանդուրժողականության» և «բազմամշակութայնության» վառ օրինակ կարող են ծառայել ինչպես ադրբեջանահայերի պատմական ճակատագիրը, այնպես էլ Ուդի ժողովրդի ճակատագիրը: Ուդիները հայերի համար իսկապես եղբայրական ժողովուրդ են և հաճախ են նրանց տխուր բախտին արժանացել: Եթե XVIII-XIX դդ. սահմանագծին էթնիկ ուդիների թիվն իրենց պատմական Հայրենիքում կարող էր կազմել մոտ 100.000 (ավելի քան 50 բնակավայրերում), ապա արդեն XX դ. սկզբին՝ 1918-1920 թթ. հայտնի իրադարձություններից ոչ շատ առաջ, մնացել է գրեթե 10.000, իսկ 1926 թ.՝ ընդամենը 2.445 մարդ:

Բանալի բառեր՝ ուդիներ, ալբանացիներ, Կովկասյան Ալբանիա, աղվանից եկեղեցի, լեզգիախոս ժողովուրդներ, էթնոհամախմբում, էնդոէթնոնիմ:

К ВОПРОСУ О ПОГРОМАХ УДИН В НАЧАЛЕ XX ВЕКА НА ТЕРРИТОРИИ СОВРЕМЕННОГО АЗЕРБАЙДЖАНА

Григорий Айвазян

Резюме

Ярким примером азербайджанской «толерантности» и «мультикультурализма» в действии, наряду с исторической судьбой армян Азербайджана, может послужить судьба удинского народа. Удинский народ – это действительно братский армянам народ, который во многом разделил их печальную судьбу.

Если на рубеже XVIII-XIX вв. этнических удин на своей исторической родине могло быть около 100.000 человек в более чем 50 селениях, то уже в начале XX века, незадолго до известных событий 1918-1920 гг., удин оставалось около 10.000 человек, а к 1926 г. их было всего 2.445 чел.

Ключевые слова – удины, албанцы, Кавказская Албания, албанская церковь, лезгиноязычные народы, этноконсолидация, эндоэтноним.

ON THE ISSUE OF MASSACRE OF UDIS AT THE BEGINNING OF THE XXTH CENTURY ON THE TERRITORY OF MODERN AZERBAIJAN

Grigori Ayvazyan

Abstract

A striking example of the praised Azerbaijani "tolerance" and "multiculturalism" in action, along with the historical fate of Azerbaijani Armenians, can serve the fate of the Udi people. The Udis are truly a fraternal people for the Armenians, in many ways sharing their sad fate. That is why the issue of the Udi episode of the Armenian Genocide on the territory of modern Azerbaijan at the beginning of the 20th century, became the subject of our study.

Key words – Udins, Albanians, Caucasian Albania, Albanian church, lezgian speaking peoples, ethnic-consolidation, endo-ethnonym.

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Կարինե Խոջայան

Քաղաքական գիտությունների թեկնածու

Երևանի պետական համալսարան

ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1

Էլ. հասցե՝ karine.khojayan@ysu.am

Հոդվածը ներկայացվել է 10.10.2020, գրախոսվել է 05.11.2021, ընդունվել է
տպագրության 01.03.2021

Ներածություն

XX դարում իրականացված մի շարք ցեղասպանություններ, այդ թվում՝ Նամիբիայում 1904-1908 թթ. հերերո և նամա ցեղախմբերի հանդեպ իրականացված գործողությունները, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Հոլոքոստը, ահազանգ էին միջազգային հանրությանը ցեղասպանության՝ որպես մարդկայնության հանդեպ իրականացված հանցագործության ճանաչման, կանխարգելման, դատապարտման և վերջինիս հետևանքների վերացմանը նպաստելու համար: Այս ճանապարհին կարևոր հանգրվան էին երկար և բարդ քննարկումներից հետո 1948 թ. դեկտեմբերի 9-ի Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կողմից Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի մշակումն ու ընդունումը¹, որը, ցավոք, չկարողացավ ստեղծել գործուն մեխանիզմներ՝ կանխելու XX դարի երկրորդ կեսին և ավարտին տեղի ունեցած ցեղասպանությունները Կամբոջայում, Նախսկին Հարավսլավիայի Հանրապետությունում (Սրբերենիցա), Ռուանդայում, զանգվածային ջարդերը Դարֆուրում, Ադրբեջանում (Մարաղա, Սումգայիթ, Բաքու, Գանձակ) և այլն:

Առկա աշխարհաքաղաքական գործընթացների հորձանուտում, երբ պատերազմները, զանգվածային բռնությունները, ազգերի և պետությունների միջև աճող անհավասարությունները, սպառազինությունների աճը զուգորդվում են տարատեսակ քաղաքական նկրտումներով և չհանգուցալուծված ու ժամանակ առ ժամանակ բռնկվող հակամարտություններով, ապա զանգվածային բռնությունների, ցեղասպանությունների վտանգը

¹ Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, 9 December 1948.

շարունակվում է մնալ առկախ՝ վերածելով այս երևույթների դեմ պայքարը օրակարգային խնդրի: Այս նպատակով և այս ուղղությամբ միջազգային մի շարք կառույցների, առաջին հերթին՝ ՄԱԿ-ի շրջանակներում ձեռնարկվում են որոշ քայլեր՝ ուղղված ցեղասպանության կանխարգելման նորմատիվ իրավական բազայի ամրապնդմանը, որոնցից անմաս չի մնում նաև Հայաստանի Հանրապետությունը:

Ցեղասպանության կանխարգելումը ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի օրակարգում

2019 թ. հունիսի 22-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 43-րդ նստաշրջանում ընդունվեց Հայաստանի Հանրապետության նախաձեռնած և մի շարք պետությունների համահեղինակած «Ցեղասպանության կանխարգելում» բանաձևը: Դա, ըստ էության, հիմնված է 1948 թ. դեկտեմբերի 9-ի՝ Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի տրամաբանության վրա և վերահաստատում է վերջինիս մի շարք դրույթներ՝ միջազգային հանրության ուշադրությունը հրավիրելով ժամանակակից աշխարհում ցեղասպանությունների վտանգի և այս հանցագործության կրկնությունը բացառելու գաղափարի վրա: Ավելին, բանաձևը ուղիղ տեքստով վերահաստատում է, որ անպատժելիությունը, նմանօրինակ հանցագործությունների արդարացումը, ժխտումը և ոչ օբյեկտիվ գնահատականը նպաստում են ցեղասպանության, պատերազմական հանցագործությունների և մարդկայնության դեմ ուղղված այլ հանցագործությունների կրկնությանը: Հատկանշական է, որ բանաձևն անդրադառնում է նաև ազգային փոքրամասնություններին պատկանող մշակութային ժառանգությունը կանխամտածված ոչնչացումից պաշտպանելու անհրաժեշտությանը՝ որպես ինքնության պահպանության կարևորագույն գործոնի և այդ ինքնության հետքերը հետևողական ջնջելու «ջանքերին»²: Բանաձևը կոչ է անում նաև բոլոր պետություններին ցեղասպանության կանխարգելման համատեքստում «*ապահովել մշակութային իրավունքների լիարժեք իրականացումը, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ կանխելու պատմական հուշարձանների, հուշահամալիրների*

² UN General Assembly, Human Rights Council, 43rd Session, Resolution 43/29 on Prevention of Genocide, 22 June, 2020.

ոչնչացումը, այդ թվում նաև այն վայրերում, որտեղ տեղի են ունեցել հանցագործություններ կամ վայրագություններ»³:

Բանաձևում ներառված են նաև մի շարք դրույթներ ցեղասպանությունների վաղ ազդակների վերաբերյալ. դրանք են մարդու իրավունքների համակարգված խախտումները, խտրականության դրսևորումները, ատելության խոսքի տարածումն ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբերին պատկանող անձանց նկատմամբ⁴: Հատկանշական է, որ բանաձևի այս հոդվածներն առավել քան արդիական են այսօր Արցախի Հանրապետության Ադրբեջանի վերահսկողությանն անցած տարածքներում հայկական մշակության ժառանգության ոչնչացման և տարիներ շարունակ իրականացվող և սիստեմատիկ հայատյացության, ատելության խոսքի տարածման համատեքստում:

Հայաստանն առաջին անգամ չէ, որ նախաձեռնել է ցեղասպանության կանխարգելմանն ուղղված բանաձևեր: 1998 թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովում Հայաստանի Հանրապետությունը ներկայացրեց առաջին բանաձևը, որն այնուհետև ընդունվեց Գլխավոր վեհաժողովի 53-րդ նստաշրջանում⁵: Մեր պետությունը նմանօրինակ բանաձևեր նախաձեռնեց նաև 1999 թ., 2001 թ., 2003 թ., 2005 թ.: Ընդունված բանաձևերը կարևորում էին պետությունների կողմից Միջազգային քրեական դատարանի՝ 1998 թ. ստորագրված Հռոմի կանոնադրությանը միանալը, որը ցեղասպանությունը դասում է միջազգային առավել ծանր հանցագործությունների շարքին⁶: Այս բանաձևերից շատերը հղում էին անում Պատերազմական հանցագործությունների և մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին 1968 թ. ՄԱԿ-ի կոնվենցիային⁷: Հետագայում՝ որոշակի կառուցվածքային վերափոխումներից հետո, Հայաստանը շարունակեց գործուն քայլեր ձեռնարկել 2008 թ., 2013 թ., 2015 թ., 2018 թ. արդեն ՄԱԿ-ի Մար-

³ UN General Assembly, Human Rights Council, 43rd Session, Resolution 43/29 on Prevention of Genocide, 22 June, 2020.

⁴ UN General Assembly, Human Rights Council, 43rd Session, Resolution 43/29 on Prevention of Genocide, 22 June, 2020.

⁵ UN General Assembly, Fifty-Third Session, Resolution 53/43, 22 January 1999.

⁶ Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, Commission on Human Rights resolution 1999/67.

⁷ Convention on the Non-Applicability of Statutory Limitations to War Crimes and Crimes Against Humanity, 26 November 1968.

դու իրավունքների խորհրդի շրջանակներում ընդունված բանաձևերի ժամանակ, որոնք անդրադառնում էին ցեղասպանության կանխարգելմանն ուղղված մի շարք քայլեր նախաձեռնելու անհրաժեշտությանը: 2015 թ. ՀՀ-ի նախաձեռնած թիվ 28/34 բանաձևն առաջարկում է Գլխավոր վեհաժողովին դեկտեմբերի 9-ը սահմանել Ցեղասպանության հանցագործության զոհերի հիշատակի ու արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օր⁸: Դա ընդունեց ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովը 2015 թ. սեպտեմբերի 11-ին⁹: Ավելին, այս բանաձևերում բարձրացվում է պետության պատասխանատվության հարցը՝ ուղղված «ցեղասպանության, մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների, պարերազմական հանցագործությունների կամ մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի զանգվածային և պարբերաբար իրականացվող այլ խախտումների համար՝ դրանց կրկնությունից խուսափելու նպատակով»¹⁰:

Հարկ է նշել, որ թեև այս բոլոր բանաձևերը չունեն հրամայական բնույթ, այնուամենայնիվ, դրանց նշանակությունը միջազգային գործընթացների վրա նշանակալի է: Հատկանշական է նաև ՀՀ-ի հետագա ակտիվ մասնակցությունը մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող տարատեսակ ձևաչափերում, որը կարող է ծառայել որպես հարթակ՝ բարձրաձայնելու մարդու իրավունքների զանգվածային և պարբերաբար կրկնվող խախտումների, պատերազմական հանցագործությունների, ատելության քարոզչության վերաբերյալ այն բազմաթիվ ապացույցների մասին, որոնց շարունակում ենք ականատես լինել, և որոնց մասին են վկայում են նաև Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի պատրաստած և հրապարակած մի շարք հատուկ զեկույցներ և հաղորդումներ¹¹:

⁸ UN Human Rights Council, Twenty-Eighth Session, Resolution 28/34 on Prevention of Genocide, art. 23, 7 April 2015.

⁹ UN General Assembly Resolution 69/323 on International Day of Commemoration and Dignity of the Victims of the Crime of Genocide and of the Prevention of this Crime, 11 September, 2015.

¹⁰ UN Human Rights Council, Thirty-Seventh Session, Resolution 37/26, Prevention of Genocide, 23 March 2018.

¹¹ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, իրավական փաստաթղթեր, <https://www.ombuds.am/am/site/SpecialReports>

Ցեղասպանության կանխարգելման մեխանիզմները ցեղասպանության կանխարգելման հարցերով զբաղվող Հատուկ խորհրդականի իրավասությունների շրջանակներում

2001 թ. օգոստոսի 30-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց թիվ 1366 բանաձևը: Բանաձևն անդրադառնում է ռազմական հակամարտություններին և դրանց ազդեցությանը միջազգային անվտանգության ապահովման համատեքստում՝ հղում կատարելով Ռուանդայում և Սրեբրենիցայում տեղի ունեցած ցեղասպանություններին, որոնք հնարավոր չէրավ կանխելու: Բանաձևը հորդորում է նաև համապատասխան տեղեկություններ և վերլուծություններ տրամադրել Անվտանգության խորհրդին միջազգային իրավունքի լրջագույն խախտումների, այդ թվում՝ միջազգային հումանիտար իրավունքի, մարդու իրավունքների, էթնիկ, կրոնական, տարածքային, անհավասարաչափ զարգացման հետևանքով առաջացած հակամարտությունների վերաբերյալ: Այս տեղեկությունները Անվտանգության խորհուրդը պարտավորվում է ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել՝ պարզելու համար, թե արդյո՞ք այդ հակամարտությունները սպառնալիք են միջազգային անվտանգությանն ու խաղաղությանը¹²: Ընդունված բանաձևի շրջանակներում ՄԱԿ-ի համակարգում ստեղծվում է Ցեղասպանությունների կանխարգելման և պաշտպանության պատասխանատվության գրասենյակ՝ երկու համապատասխան Հատուկ խորհրդականների գլխավորությամբ, որոնք զեկուցում են ուղիղ Գլխավոր քարտուղարին: 2004 թ. Ռուանդայի ցեղասպանության 10-րդ տարելիցին Գլխավոր քարտուղարը հրապարակում է Ցեղասպանությունների կանխարգելման գործողությունների ծրագիրը և Անվտանգության խորհրդի պահանջով նշանակում ցեղասպանության կանխարգելման հարցերով առաջին Հատուկ խորհրդականին: Ցեղասպանությունների կանխարգելմանն ուղղված գործողությունների ծրագիրն առաջարկում է կանխարգելիչ 5 քայլերի ձեռնարկում¹³.

1. Ռազմական հակամարտությունների կանխարգելում, քանի որ ցեղասպանությունները, որպես կանոն, տեղի են ունենում ռազմական հակամարտությունների ժամանակ, հետևաբար, հակամարտությունների պատճառների վերացումը կնպաստի ցեղասպանությունների կանխարգելմանը:

¹² United Nations Security Council, Resolution 1366 (2001), art. 10.

¹³ Press Release// SG/SM/9197 AFR/893, HR/CN/1077.

2. Հակամարտությունների ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանություն: Եթե անգամ չի հաջողվում կանխել հակամարտությունների բռնկումը, ապա քաղաքացիական բնակչության պաշտպանությունը պետք է լինի առաջնահերթություն:

3. Անպատժելիության վերացումը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային արդար դատական համակարգի կառուցման միջոցով:

4. Վաղաժամ և հստակ նախազգուշացման մեխանիզմների ներդնում, որ հնարավոր լինի ժամանակին կանխել ցեղասպանությունները:

5. Անհապաղ և վճռական գործողությունների իրականացում, եթե, ամեն դեպքում, տեղի է ունենում ցեղասպանություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ցեղասպանությունը մարդկայնության դեմ իրականացվող հանցագործություն է, ապա ողջ մարդկությունն է պարտավոր քայլեր ձեռնարկել իր իսկ պաշտպանության համար: Այս իմաստով, որպես գործիք պետք է ծառայի ՄԱԿ-ը, մասնավորապես Անվտանգության խորհուրդը:

2004 թ. ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը հրապարակեց «Ցեղասպանությունների կանխարգելման գործողությունների ծրագիրը», որտեղ նշվում է նաև Ցեղասպանությունների կանխարգելման հարցերով Հատուկ խորհրդականի նշանակման մասին, և սահմանվում են նրա գործառույթները՝ մարդու իրավունքների զանգվածային խախտումների, էթնիկ և ռասայական հիմքով միջազգային մարդասիրական իրավունքի ոտնահարումների մասին տեղեկությունների հավաքում, Գլխավոր քարտուղարին և նրա միջոցով Անվտանգության խորհրդին ցեղասպանությունների վաղ կանխազգուշացման մասին տեղեկությունների տրամադրում, ցեղասպանության կանխարգելման կամ կասեցման գործողությունների վերաբերյալ համապատասխան առաջարկությունների ներկայացում և այլն¹⁴:

ՄԱԿ-ի Ցեղասպանության կանխարգելման և պաշտպանելու պատասխանատվության խնդիրներով զբաղվող գրասենյակը 2014 թ. ներկայացրեց «Վայրագությունների վերլուծության շրջանակը»¹⁵, որը մշակվել էր ցեղասպանության ռիսկերի վերլուծության և գնահատման նպատակով: Գրասենյակը հորդորում է պետություններին, տարատեսակ կազմակերպություններին կանխարգելմանն ուղղված իրենց աշխատանքներում այս փաստաթուղթն ընդունել և գործածել որպես ուղեցույց: «Վայրա-

¹⁴ Office on Genocide Prevention and Responsibility to Protect//Special Advisor on the Prevention of Genocide, <https://www.un.org/en/genocideprevention/office-mandate.shtml#sapg>.

¹⁵ Framework of Analysis for Atrocity Crimes. A Tool for Prevention, United Nations 2014.

գությունների վերլուծության շրջանակը» վերահաստատում է նաև այն մոտեցումը, որ էթնիկ զտումների և մարդկայնության դեմ այլ հանցագործությունների կանխարգելման հիմնական պատասխանատվությունը նախևառաջ կրում են պետությունները¹⁶։ Վերլուծությունն առանձնացնում է 14 ռիսկային գործոններ՝ համապատասխան ցուցիչներով, որոնք կարող են հանգեցնել մարդկության դեմ իրականացվող առավել ծանր հանցագործությունների, իսկ այս գործոնների ժամանակին վերհանումը, գնահատումը և վերլուծությունը կարող են նպաստել նման հանցագործությունների կանխարգելմանը։ Ուշագրավ է, որ նման ռիսկային գործոնների և ցուցիչների շարքին են դասվում, մասնավորապես, թիրախավորված հոե-տորաբանությունը, ատելության խոսքը՝ ուղղված բնակչության որոշ խմբերի և անհատների (7.14, 8.7), բռնության կիրառումը հատկապես միջազգային իրավունքով արգելված զինատեսակների գործածմամբ (10.6), ռազմական հակամարտությունների ժամանակ մշակութային, սոցիալական կամ կրոնական ինքնությունը բնորոշող քաղաքացիական օբյեկտներին կամ գույքին դիտավորությամբ վնաս հասցնելը, եթե վերջիններս չեն օգտագործվում ռազմական նպատակներով (13.16) և այլն։ Այս և նման այլ գործոնների առկայությունը հատկապես ռազմական հակամարտությունների ժամանակ կարող են վտանգ ներկայացնել և հիմք դառնալ ցեղասպանությունների, ռազմական և այլ առավել ծանր հանցագործությունների իրագործման համար։ Հետևաբար, վերջիններիս վերհանումը և Ցեղասպանության կանխարգելման հարցերով Հատուկ խորհրդականի ուշադրությանը ներկայացնելն ունեն առանցքային նշանակություն առավել դաժան հանցագործությունների կանխարգելման տեսանկյունից։

Եզրակացություններ

Ժամանակակից աշխարհում, հատկապես վերջին տասնամյակների ընթացքում ավելացել է միջպետական հակամարտությունների, քաղաքացիական պատերազմների թիվը՝ հղի բազմաթիվ անկանխատեսելի հետևանքներով։ Աֆրիկայում և եվրոպական մայրցամաքում XX դարի վերջին տեղի ունեցած աղետալի դեպքերը, որոնք, ըստ էության, միջազգային հանրությունը չկարողացավ կասեցնել, ազդակ հանդիսացան մշակելու

¹⁶ St'u Framework of Analysis for Atrocity Crimes. A Tool for Prevention, United Nations 2014, 4:

մեխանիզմներ, որոնք հնարավորություն կստեղծեն կանխարգելելու ինչպես ցեղասպանությունները, այնպես էլ մարդայնության դեմ ուղղված այլ ծանր հանցագործությունները: Արդեն իսկ մշակված նորմատիվ իրավական բազան հարստացավ նոր բանաձևերով, որոշումներով, ստեղծվեցին նոր կառույցներ, մշակվեցին և լրամշակվեցին իրավական փաստաթղթեր և նորմեր, թեև ցեղասպանությունների և այլ ծանր հանցագործությունների կանխարգելման հարցում այս բոլոր մեխանիզմների արդյունավետության և վերջնական հաջողության մասին խոսելը դեռևս վաղ է: Արգելված զինատեսակների կիրառումը, քաղաքացիական բնակչության և օբյեկտների թիրախավորումը, մշակութային ժառանգության ոչնչացումը կամ դրա փորձերը, որոնք, համաձայն ՄԱԿ-ի Ցեղասպանության կանխարգելման և պաշտպանելու պատասխանատվության հարցերով զբաղվող գրասենյակի մշակած «Վայրագությունների վերլուծության շրջանակի», ցեղասպանությունների և պատերազմական հանցագործությունների իրականացման պոտենցիալ հիմք են՝ շարունակելով մնալ անպատասխան ու անպատիժ: Այս իմաստով պետությունների՝ որպես նման հանցագործությունների կանխարգելման հիմնական սուբյեկտների պարտավորությունն է համապատասխան կառույցների ուշադրությունը հրավիրել նման երևույթների և դեպքերի վրա, որն էլ կնպաստի նմանատիպ հանցագործությունների կանխարգելմանը և կրկնման բացառմանը:

Ժամանակակից միջազգային հարաբերություններում ցեղասպանության դեմ պայքարը պահանջում է միասնական մոտեցում, և ակնհայտ է, որ միայն պետությունների, միջազգային, տարածաշրջանային կազմակերպությունների, հասարակական կառույցների համատեղ ջանքերի շնորհիվ է հնարավոր գործուն արդյունքներ գրանցել:

Հայաստանի Հանրապետությունը, որպես ցեղասպանություն վերապրած ժողովուրդ ներկայացնող պետություն, ակտիվ և գործուն պայքար է մղում միջազգային հարթակներում: Ընտրվելով 2020-2022 թթ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի անդամ՝ իր գերակայությունների շարքին է դասում ցեղասպանության և այլ զանգվածային վայրագությունների կանխարգելմանն ուղղված միջազգային ջանքերին նպաստելուն

միտված գործողությունները՝ ազգային և միջազգային մեխանիզմների ամրապնդման միջոցով¹⁷:

Այսօր հատկապես գլոբալ և տարածաշրջանային գործընթացների համատեքստում, առավել քան երբևէ, Հայաստանը պետք է ավելի ակտիվ համագործակցի այս հարցերով զբաղվող միջազգային բոլոր կառույցների, մասնավորապես Ցեղասպանության կանխարգելման հատուկ խորհրդականի գրասենյակի հետ և քայլեր ձեռնարկի նաև վերջին տասնամյակներում իրականացված և դեռևս չճանաչված ցեղասպանությունները և պատերազմական հանցագործությունները, միջազգային հումանիտար իրավունքի մի շարք կոպտագույն խախտումները, պատերազմական հանցագործությունները բացահայտելու և այն իրականացրած պետություններին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Այս ամենը միաձանակ կնպաստի նմանատիպ հանցագործությունների կրկնման բացառմանը և միջազգային անվտանգության և խաղաղության ապահովմանը:

Գրականություն

- ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, իրավական փաստաթղթեր, <https://www.ombuds.am/am/site/SpecialReports> (23.02.2021):
- Մարուքյան Ա. 2014, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 332 էջ:
- Convention on the Non-Applicability of Statutory Limitations to War Crimes and Crimes Against Humanity, 26 November 1968.
- Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, 9 December 1948.
- Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, Commission on Human Rights resolution 1999/67, 28 April 1999.
- Framework of analysis for atrocity crimes. A tool for prevention, United Nations 2014, 43 p.
- Office on Genocide Prevention and Responsibility to Protect//Special Advisor on the Prevention of Genocide, <https://www.un.org/en/genocideprevention/office-mandate.shtml#sapg> (28.02.2021).
- Press Release// SG/SM/9197 AFR/893, HR/CN/1077.
- UN General Assembly, Fifty-third session, resolution 53/43, 22 January 1999.

¹⁷ UN General Assembly, Seventy-Fourth Session, Note Verbale from the Permanent Mission of Armenia to the United Nations addressed to the President of the General Assembly, 10 May 2019, art. 31 (q).

Ցեղասպանությունների կանխարգելումը միջազգային գործընթացներում 49

UN General Assembly resolution 69/323 on International Day of Commemoration and Dignity of the Victims of the Crime of Genocide and of the Prevention of This Crime, 11 September, 2015.

UN Human Rights Council, Twenty-eighth session, resolution 28/34 on Prevention of Genocide, 7 April 2015.

UN Human Rights Council, Thirty-seventh session, resolution 37/26, Prevention of Genocide, 23 March 2018.

UN General Assembly, Seventy-fourth session, Note verbale from the Permanent Mission of Armenia to the United Nations addressed to the President of the General Assembly, 10 May 2019.

UN General Assembly, Human Rights Council, 43rd session, Resolution 43/29 on Prevention of Genocide, 22 June, 2020.

UN Security Council, Resolution 1366, 30 August 2001.

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Կարինե Խոջայան

Ամփոփում

Արդի միջազգային գործընթացների համատեքստում ցեղասպանությունների, պատերազմական հանցագործությունների և այլ ոճրագործությունների դեմ պայքարը շարունակվում է մնալ օրակարգային խնդիր: Առ այսօր մշակվել են մի շարք մեխանիզմներ, հիմնականում նորմատիվ իրավական դաշտում, որոնցից շատերն ուղղված են ցեղասպանությունների և այլ ծանր հանցագործությունների կանխարգելմանը: Միևնույն ժամանակ, առկա աշխարհաքաղաքական գործընթացների հորձանուտում ցեղասպանությունների և այլ ոճրագործությունների հավանականությունը շարունակվում է մնալ առկալված:

Հայաստանի Հանրապետությունը գործուն քայլեր է ձեռնարկել ցեղասպանությունների կանխարգելմանն ուղղված գործընթացներում: Սակայն այսօր արդեն ակնհայտ է, որ նման հանցագործությունների կանխարգելումն առավել արդյունավետ կլինի, եթե միջազգային հանրությունն ակտիվացնի ջանքերն միջազգային իրավունքի կոպտագույն խախտումները, պատերազմական հանցագործությունները բացահայտելու և այն իրագործած պետություններին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Այս տեսանկյունից Հայաստանը ևս ունի բազմաթիվ անելիքներ:

Բանալի բռնե՜ր՝ ցեղասպանություն, պատերազմական հանցագործություններ, մարդու իրավունքներ, զանգվածային խախտումներ, ատելության խոսք, կանխարգելում, միջազգային անվտանգություն:

ПРЕДОТВРАЩЕНИЕ ГЕНОЦИДОВ В ПОВЕСТКЕ ДНЯ МЕЖДУНАРОДНЫХ ПРОЦЕССОВ

Карине Ходжаян

Резюме

Борьба с геноцидом, военными и другими преступлениями против человечества продолжает оставаться в повестке дня международных процессов. Хотя и в правовой сфере был разработан ряд механизмов, направленных на предотвращение геноцида и других серьезных преступлений, в водовороте происходящих геополитических процессов нельзя исключать вероятность повторения подобных явлений.

Республика Армения предпринимает активные шаги по предотвращению геноцида. Однако очевидно, что предотвращение подобных преступлений будет более эффективным, если международное сообщество активизирует также свои усилия по выявлению грубых нарушений международного права, привлечению к ответственности стран, совершивших военные и другие особо тяжкие преступления. Армения также должна активизировать свои усилия в этом направлении.

Ключевые слова – геноцид, военные преступления, права человека, массовые нарушения, язык вражды, предотвращение, международная безопасность.

GENOCIDE PREVENTION ON THE AGENDA OF INTERNATIONAL PROCESSES

Karine Khojayan

Abstract

The fight against genocide, atrocities and other crimes against humanity continues to be one of the priorities of international affairs. A number of legal

mechanisms has been developed mainly towards the prevention of genocide and other crimes, meanwhile in the maelstrom of ongoing geopolitical processes, the likelihood of a repetition of such crime cannot be ruled out.

The Republic of Armenia has made certain efforts towards contribution of genocide prevention. However, the prevention of such crimes will be more efficient if the international community intensifies its efforts to expose mass violations of international law, war crimes and to institute criminal proceedings against the perpetrators. Armenia has still a lot to do in this direction.

Key words – genocide, war crimes, human rights, mass violations, hate speech, prevention, international security.

«ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԸ»՝ ՈՐՊԵՍ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԱՄԵՐԻԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ ԶՈՐՋ ԲՈՒՇ ԿՐՏՍԵՐԻ ՕՐՈՔ

Աստղիկ Հայրապետյան

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, ասպիրանտ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4

Էլ. հասցե՝ astghhayrapetyan@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 11.06.2020, գրախոսվել է 23.06.2020, ընդունվել է
տպագրության 01.03.2021

Ներածություն

2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո ԱՄՆ-ն նախա-
ծեռնեց ահաբեկչության դեմ համաշխարհային արշավ, որին բնորոշ էր
ամերիկյան ռազմական ուժի ցուցադրմամբ իր սահմաններից դուրս հա-
սարակաշինությունը, ինչպես նաև տարածաշրջանային կարգի վերաձևա-
կերպման փորձը՝ ըստ ամերիկյան բացառիկության հայեցակարգի:

Ահաբեկչությունից օրեր անց ԱՄՆ նախագահ Զորջ Բուշը Կոնգրեսի
երկու պալատների համատեղ 107-րդ նիստի իր ելույթում պաշտոնապես
պատերազմ հայտարարեց ահաբեկչությանը, որը սկսվելու էր ալ-Քաիդա-
յից՝ շարունակվելով այնքան, քանի դեռ աշխարհի բոլոր ահաբեկչական
խմբավորումները չէին ոչնչացվել¹: ԱՄՆ-ն աջակցելու էր ահաբեկչության
դեմ պայքարող ազգերին և պատասխանատվության էր ենթարկելու դրա
աջակիցներին²: Անվտանգության և կայունության ապահովման միջոց
ընտրվեց ԱՄՆ-ի ուղղակի ռազմական ներգրավվածությունը³ Աֆղանս-
տանում և ապա Իրաքի՝ որպես «ահաբեկչության համաշխարհային հո-
վանավորի»⁴ տարածքում:

¹ Selected Speeches of President George W. Bush (2001-2008) 2009, Address to the joint ses-
sion of the 107th Congress, 68.

² The National Security Strategy of the United States of America 2002, p. i-ii, 4.

³ The National Security Strategy of the United States of America 2002, p. i-ii, 6.

⁴ The National Security Strategy of the United States of America 2002, p. i-ii, 14.

«Ահաբեկչության դեմ պատերազմի» համատեքստում Իրաքյան կամպանիայի նախապատրաստական փուլը

Ահաբեկչության դեմ պատերազմի նախապատրաստական փուլում դեռևս 2002 թ. հոկտեմբերին, Զ. Բուշի վարչակազմը փորձեր արեց ապացուցել պաշտոնական Բաղդադի և միջազգային ահաբեկչության միջև կապը՝ նշելով, որ երկար տարիներ, ապաստան տալով և ֆինանսավորելով ահաբեկիչներին, Իրաքը խաթարել է խաղաղությունը Մերձավոր Արևելքում⁵։ Այս քաղաքական գիծը ԱՄՆ-ն ներկայացնում էր բոլոր հնարավոր ամբիոններից։ Վառ ապացույց էր 2003 թ. փետրվարի 5-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում (այսուհետև՝ ԱԽ) ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելի ելույթը։ Իրաքի և ահաբեկչության «համատեղ երկարամյա պատմությունը» ներկայացնելիս նա մեղադրեց Սադամ Հուսեյնին և վերջինիս անձնական հետախուզությանը 1990-ականներին քաղաքական սպանությունների և ահաբեկչական գործողությունների կազմակերպման, ինչպես նաև Իրաքում Ուսամա բեն Լադենի կողմնակից Աբու Մ. Ալ-Ջարքաուիի գլխավորությամբ ահաբեկչական ցանցին ապաստան տրամադրելու մեջ⁶։ Ք. Փաուելը ԱԽ-ին ներկայացրեց Իրաքի՝ Կոնգրեսին ահաբեկելու նպատակով կիրառած իբրև թե սիբիրյան խոցի «գործակալի» (ակտիվ նյութ, որն իր հստակ դերն է կատարում այլ նյութերի հետ քիմիական խառնուրդներում կամ կենսաբանական օրգանիզմներում) պարունակությամբ չոր փոշու սրվակ, որի քանակությունն ունակ էր սպանելու հազարների⁷։ Ուշագրավ է, որ շատ չանցած միջազգային մամուլում շրջանառվեցին «Մենինգի»⁸ արձանագրությունից» հատվածներ, որտեղ ներկայացվում է Ք. Փաուելի այս ելույթից 5 օր առաջ կայացած Զ. Բուշի և Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլեյրի հանդիպումը, որի ժամանակ Զ. Բուշը նշում է, որ նույնիսկ ՄԱԿ-ի ԱԽ-ում բանաձևի տապալումը և միջազգային տեսուչների կողմից զանգվածային ոչնչացման գեների չհայտնաբերումը ԱՄՆ-ին հետ չեն կանգնեցնի Իրաք ներխուժելուց։ Հանդիպման ժամանակ Զ. Բուշը նշում է, որ անհրաժեշտ է մեկը, որ հանրային հարթակից կներկայացնի Սադամ Հուսեյնի՝ ՋՈՁ-ի տիրապետման փաստը⁹։

⁵ President Bush Outlines Iraqi Threat 2002.

⁶ U.S. Secretary of State Colin Powell Addresses the U.N. Security Council 2003.

⁷ Колин Пауэл и пробирка с белым порошком 2003.

⁸ Donvan 2006.

⁹ Donvan 2006, Baker, Hamilton 2006.

Հետախուզության գծով ներկայացուցիչների պալատի մշտական հանձնաժողովը 2006 թ. հայտարարեց, որ 2003-ից ի վեր հայտնաբերվել է քիմիական զենքի 500 պահեստ: Իրավական տեսանկյունից «c asus belli»-ն որոշակիորեն հիմնավորվեց, սակայն 2014 թ. «Նյու Յորք Թայմսի» հետաքննությունը պարզեց, որ Մուտանայի պետական հաստատությունը, որտեղ գտնվում էին իրան-իրաքյան պատերազմի ընթացքում ձեռք բերված մոտ 4990 քիմիական մարտագլխիկները և տեխնիկական սարքավորումների մնացորդները, որ Ծոցի ճգնաժամից հետո վերցվել էին ՄԱԿ-ի տեսուչների վերահսկողության տակ, 2003 թ. կոալիցիոն ուժերի ռազմական գործողությունների պատճառով լքվել էին, ինչի արդյունքում առաջացել էր ՁՈՁ-ի տարածման վտանգ՝ ընդորոշում ոչ իրաքյան իշխանությունների մեղքով¹⁰: Հետաքննությունը պարզում է, որ այս քիմիական զենքերը իրաքյան իշխանությունները ժամանակին միայնակ չեն ստեղծել, և որ նախկինում տվյալների չիրապարակման պատճառներից մեկն էլ եղել է այն, որ սրանք մշակվել են ԱՄՆ-ում, ապա թողարկվել Եվրոպայում և «գործակալներով» հարստացվել արևմտյան ընկերությունների կողմից¹¹:

Ջ. Բուշի վարչակազմի կողմից Բաղդադի և իսլամական ահաբեկչության միջև կապի ապացուցման փորձերը

Փաստորեն, Իրաքի և իսլամիստ ծայրահեղական ահաբեկիչների կապերն ապացուցող ուղղակի փաստեր չկային: Սեպտեմբերյան ահաբեկչական գործողությունները չորակելով իբրև ուղղակիորեն Իրաքի կողմից կազմակերպված՝ Բուշ կրտսերը, այնուամենայնիվ, հայտարարում էր, որ իրաքյան հետախուզության սպաները 1996 թ. Սուդանում հանդիպել են բեն Լադենի հետ: Միևնույն ժամանակ որպես ահաբեկչության հետ ունեցած կապի ապացույց մեջ էին բերվում «Patterns of Global Terrorism 2001» զեկույցում տեղ գտած տվյալներն առ այն, որ Իրաքը իր տարածքում ապաստան է տվել ահաբեկչական խմբերի, որոնք են Մոջահիդդինե-խալքը, Քրդստանի աշխատավորական կուսակցությունը, ինչպես նաև ընդունել է պաղեստինցի ահաբեկիչ Աբու Նիդալին՝ Իսլամական ջիհադի ներկայացուցիչների հետ¹²: Որպես ոչ ուղղակի, սակայն հիմնավոր ապացույց, ԱՄՆ-ն համարում էր Իրաքի փոխնախագահի և փոխվարչապետի

¹⁰ Chivers 2014.

¹¹ Chivers 2014.

¹² Patterns of Global Terrorism 2001, 2002.

հանդիպումները Պաղեստինի ազատագրման ժողովրդական ճակատի գլխավոր քարտուղար Հաբբաշի և ճակատի պատվիրակության հետ, որի ժամանակ իրաքյան կողմը իր աջակցությունն էր հայտնել ինթիֆադային¹³:

Իրաքում ռազմական գործողությունների ծավալմանը նախորդած ներքին և արտաքին քաղաքական բանավեճերը

Ուղղակի փաստերի բացակայությամբ պայմանավորված՝ Իրաք զինված ուժեր մտցնելու որոշման կայացմանը նախորդեցին ամերիկյան ներքին և արտաքին քաղաքական կյանքում տեղի ունեցած բուռն քննարկումները: ԱՄՆ-ի ռազմաքաղաքական շրջանակներում կային մարդիկ, որ սթափ էին գնահատում իրականությունը¹⁴: Մասնավորապես, ԱՄՆ-ի զինված ուժերի շտաբների պետերի միացյալ կոմիտեն (Joint Chiefs of Staff) դեմ էր Իրաք ներխուժմանը՝ գտնելով, որ զսպման քաղաքականությունն առավել իրատեսական է և արդյունավետ: Իրաք ներխուժմանը դեմ էր նախկին նախագահ Զ. Բուշ ավագի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Բրենտ Սքուքրոֆթը. ըստ նրա՝ Իրաքի դեմ ռազմական գործողությունները, այնտեղ իսլամիստ ահաբեկիչներ ու զանգվածային ոչնչացման զենք փնտրելը իրականում ԱՄՆ-ին կշեղեին միջազգային ահաբեկչության դեմ կազմակերպված պայքարից՝ խոչընդոտելով իսրայելա-պաղեստինյան խաղաղության գործընթացը: Խորհրդականի համոզմամբ՝ Ս. Հուսեյնը հայտնի էր Պարսից ծոցում և տարածաշրջանում ամրապնդվելու ավանդական նպատակներով, և եթե նրան անհրաժեշտ լիներ ձեռք բերել ԶՈՁ, ապա դա կարվեր միայն իրաքյան ներքին և տարածաշրջանային գործերին ԱՄՆ-ի միջամտությանը հակազդելու նպատակով¹⁵:

Կոնգրեսը հակված էր հարցի դիվանագիտական ճանապարհով լուծմանը, սակայն անհաջողության դեպքում դեմ չէր նաև ռազմական միջամտության գաղափարին: Կոնգրեսի պալատները 2002 թ. հոկտեմբերին ձայների մեծամասնությամբ ընդունեցին բանաձև, որն իրավունք էր տալիս նախագահին, Կոնգրեսին 48 ժամում տեղեկացնելու պայմանով, ըստ անհրաժեշտության օգտագործել ԱՄՆ-ի զինված ուժերը Իրաքում՝ ելնելով վերջինիս կողմից «շարունակական սպառնալիքից» և պարտա-

¹³ Levitt 2002, 33-34.

¹⁴ Ricks 2002.

¹⁵ Scowcroft 2002.

դրել կատարելու ՄԱԿ ԱԽ-ի՝ իր մասով ընդունած բոլոր բանաձևերը¹⁶։ Այս կոնգրեսական բանաձևը պակաս ընդարձակ էր, քան թե Սպիտակ տան ներկայացրած նախագիծը, որը ենթադրում էր ԱՄՆ-ի ռազմական ուժի առավել բացահայտ ցուցադրում ամբողջ Մերձավոր Արևելքում։ Բանաձևում զիջում էր արված դեմոկրատներին, որոնք դեմ էին տարածաշրջանում ԱՄՆ-ի միակողմանի քաղաքականությանը և գտնում էին, որ ԱՄՆ-ն նախքան գործողություններ սկսելը պետք է քննարկեր դրանք ՄԱԿ-ում¹⁷։ Այնուամենայնիվ, նախագիծն անցկացնելով Կոնգրեսում, Ջ. Բուշը, առանց պաշտոնապես պատերազմ հայտարարելու, Կոնգրեսի քվեի հիման վրա Իրաքում կարող էր սկսել ռազմական գործողություն՝ ՄԱԿ-ին դա ներկայացնելով որպես ամերիկյան ընտրազանգվածի մեծամասնության արտահայտած դիրքորոշում¹⁸։

Կոնգրեսական դեմոկրատներից շատերը համաձայն էին, որ Սադամ Հուսեյնը վտանգավոր բռնակալ է, սակայն հարվածելով Իրաքին առաջինը՝ ԱՄՆ-ն կկորցնե՛ր միջազգային հարաբերություններում իր բարոյական նկարագիրը՝ մանավանդ առանց ԱՄՆ-ի և համաշխարհային հանրության անվտանգության համար Իրաքի անվերապահ սպառնալիք լինելու փաստի հաստատման¹⁹։ Ներկայացուցիչների պալատից Ջոն Սփրաթն էլ կարծում էր, որ ԱՄՆ պետք է իր քայլերը քննարկի ՄԱԿ-ում և Իրաքի դեմ ռազմական գործողություններ ծավալելու մասին նախագիծը երկրորդ անգամ ներկայացնի Կոնգրես քվեարկությանը, քանի որ դաշնակից պետությունների հետ չհամաձայնեցնելու դեպքում Իրաքի դեմ ռազմական գործողությունները վերջին հաշվով կորակվեն որպես ԱՄՆ-ի

¹⁶ Mitchell 2002.

¹⁷ Mitchell 2002.

¹⁸ Glueck, Kaplan 2020. Սենատի արտաքին հարցերով հանձնաժողովի նախագահ սենատոր Ջո Բայդենը փորձում էր անցկացնել Իրաքում ԱՄՆ գործողությունների իրականացման ներկուսակցական մի բանաձև, որը կօժտեր Ջ. Բուշին Իրաքի դեմ ռազմական ուժ կիրառելու իրավասությամբ, սակայն կպարունակեր ուժի կիրառման հարցում սահմանափակող գործիքակազմ։ Ջ. Բայդենը փորձում էր ստեղծել իրաքյան քաղաքականության ոսկե միջին՝ ընդունելի թե՛ ռազմական միջամտության կողմնակիցների և թե՛ ընդդիմադիրների համար։ Սակայն, Բայդենի նախագիծը չընդունվեց, և նա էլ այլ դեմոկրատների հետ կողմ քվեարկեց իրաքյան բանաձևին՝ ստանալով Ջ. Բուշի վարչակազմից վստահեցում ճգնաժամը նախևառաջ դիվանագիտական ճանապարհով (diplomacy first) լուծելու վերաբերյալ։

¹⁹ Mitchell 2002.

և արաբական աշխարհի միջև ռազմական գործողություններ, որոնք էլ կհանգեցնի ԱՄՆ-ի և մուսուլմանական աշխարհի միջև առճակատման²⁰:

Զ. Բուշը փորձում էր լեգիտիմացնել ներխուժումը Իրաք, չնայած նրան, որ 9/11-ը իրականացվել էր սաուդյի և եգիպտացի ահաբեկիչների, այլ ոչ թե իրաքցիների կողմից, իսկ իրաքյան աշխարհիկ վարչակարգը թշնամի էր իսլամիստ ծայրահեղական ալ-Քաիդային²¹:

Հղում անելով Աֆղանստանի վերաբերյալ ԱԽ-ի 1373-րդ և 1441-րդ բանաձևերին և ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածին՝ Զ. Բուշի վարչակազմը միջազգային հարաբերությունների ասպարեզում Իրաքում գործողություններն արդարացնելու նպատակով առաջ քաշեց երկու փաստարկ՝ ինքնապաշտպանություն ընդդեմ ահաբեկչության և Իրաքում ՁՈՁ-ի վերացում: Սակայն չնայած ԱՄՆ-ի 2002 թ. սեպտեմբերից մինչև 2003 թ. մարտ գործադրված ջանքերին՝ թե՛ բազմակողմ դիվանագիտության հարթակ ԱԽ-ում և թե՛ վերջինիս շրջանակներից դուրս ընթացող քննարկումներին ու բանավեճերին, ԱՄՆ-ն հաջողություն չունեցավ²², թեև շարունակեց միջազգային հանրությանը ներկայացնել հարցի վերաբերյալ իր անփոփոխ տեսակետը²³:

ԱՄՆ-ն չկարողացավ լեգիտիմացնել Իրաք ներխուժումը՝ չստանալով ոչ միայն ՄԱԿ ԱԽ-ի²⁴, այլև ՆԱՏՕ-ի անդամների աջակցությունը²⁵: Ուստի ձևավորեց միջազգային համագործակցության նոր ձևաչափ՝ «Կամավոր-

²⁰ Mitchell 2002.

²¹ Троицк 2008, 114.

²² Ferry 2013.

²³ Jonhstone 2008, 828. Լավագույն ապացույցն էր ԱՄՆ-ի ներկայացուցչի նամակը՝ ուղղված ԱԽ-ի նախագահին (2003 թ. մարտի 20), որտեղ խոսք անգամ չկար ահաբեկչության կամ ինքնապաշտպանության մասին: Իրաքի առնչությամբ այստեղ հղում էր կատարվում ԱԽ-ի ընդունած բանաձևերին՝ առ այն, որ Իրաքը «շեղվել է» իր պարտավորությունների կատարումից:

²⁴ Троицк 2008, 118. Հետագայում՝ 2003-2004 թթ., ՄԱԿ ԱԽ-ն ընդունեց 1511-րդ և 1546-րդ բանաձևերը, որոնց համաձայն՝ Իրաքում ԱՄՆ-ի գլխավորությամբ ստեղծվում էր ՄԱԿ-ի բազմազգ կոնտինգենտ, իսկ իշխանությունը իրաքցիներին հանձնելու համար այն վերահսկելու էր նոր սահմանադրության ստեղծման, օրենսդիր և գործադիր իշխանությունների ընտրությունների և պետական հաստատությունների ձևավորման աշխատանքները:

²⁵ Троицк 2008, 118. 2003 թ. փետրվարին Ֆրանսիան, Գերմանիան և Բելգիան արգելափակեցին ԱՄՆ-ի նախաձեռնությունը, որը նախատեսում էր ՆԱՏՕ-ի ներգրավվածությունը Իրաքում ռազմական գործողությունների ծավալման դեպքում: Գերմանիան և Ֆրանսիան դեմ էին ՆԱՏՕ-ի գործունեության չափից դուրս համաշխարհայնացմանը, որը ԱՄՆ-ի իրաքյան քաղաքականության պարագայում հակասում էր Բուշի՝ դաշինքի գործընկերության խորացման և գործողությունների ընդլայնման գաղափարին:

ների կոալիցիա»։ Առանց միջազգային հանրության լայնածավալ աջակցության՝ ռազմական գերակայության ցուցադրմամբ միակողմանի գործողությունները Մերձավոր Արևելքում ոչ այլ ինչ էին, եթե ոչ Ջ. Բուշի դոկտրինի գործնական կիրառում։

«Ահաբեկչության դեմ պատերազմի» ռազմավարությունը

Սեպտեմբերյան ահաբեկչությունից հետո Ջ. Բուշի վարչակազմի համար ստեղծվեց լավագույն հնարավորությունը՝ կյանքի կոչելու «Project for the New American Century» նորպահպանողական վերլուծական կենտրոնի առաջ քաշած տարածաշրջանային քաղաքականության տեսլականը²⁶։ Ահաբեկչությունը դարձավ ազգային անվտանգության խնդիր, որի դեմ պայքարի համար ԱՄՆ-ն որդեգրեց պրոակտիվ պաշտպանությամբ "4-D" (defeat, deny, diminish, defend) (պարտության մատնել, մերժել, վերացնել, պաշտպանել) ռազմավարությունը²⁷։

Ըստ Դեյվիդ Հասթինգս Դաննի՝ այս նպատակով մշակվել էին ռազմավարական երեք ծրագրեր.

ա. նեղ իմաստով պայքար ընդդեմ ահաբեկիչների՝ «Afghanistan-first» ռազմավարությամբ՝ ալ-Բաիդային աջակցող թալիբների դեմ։ Այն ներառում էր հակաահաբեկչական պայքարի ամբողջ տեխնիկան և ուներ միջազգային հանրության աջակցությունը.

բ. կանխարգելման և գերակայության ռազմավարություն, որը դրսևորվեց Իրաքում և առաջինի շարունակությունն էր²⁸։ Ըստ Բոբ Վուդվորդի՝ քլինթոնյան թույլ պատասխաններից և ռեֆլեկտիվ նահանջից անցում էր կատարվում հարձակողական ռազմավարության՝ ԱՄՆ-ի համար ահաբեկչության սպառնալիքը նվազագույնի հասցնելու համար²⁹.

²⁶ Project for the New American Century 1998. Դեռևս 1998 թ. հունվարի 28-ին PNAC-ն հատուկ նամակ էր հղել նախագահ Բիլ Քլինթոնին՝ հորդորելով Սադամին իշխանությունից հեռացնելը դարձնել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության առաջնահերթություն, այլապես Կրկնակի զսպման դոկտրինան կհամարվեր ձախողված։ Տեքստի ներքևում դրված էին Դ. Ռամսֆելդի, Ռ. Արմիթեջի, Ջ. Բոլթոնի, Ռ. Փերլի, Է. Աբրամսի, Ռ. Ուոլսիի և այլոց ստորագրությունները, որոնք հետագայում ընդգրկվեցին Բուշի վարչակազմում։

²⁷ Thrall, Goepner 2017, 3.

²⁸ Dunn 2005, 10.

²⁹ Thrall, Goepner 2017, 3.

գ. տարածաշրջանի ժողովրդավարացում. ահաբեկիչներին ոչնչացնելուց հետո պետք է վեր հանվեին ահաբեկչության բուն պատճառները, և տրվեին լուծումներ³⁰:

ԱՄՆ-ի հակաահաբեկչական ռազմական գործողությունների համատեքստում Իրաք ներխուժելու հիմնական գործոնները

Հաշվի առնելով տարածաշրջանի աշխարհաքաղաքական նշանակությունը, նորպահպանողականների ազդեցությունը և քաղաքական էլիտայի գործարար շահերը՝ Իրաք ներխուժելու պատճառները կարելի է սահմանել հետևյալ կերպ՝ ածխաջրային պաշարների նկատմամբ վերահսկողության և համաշխարհային գերակայության հաստատում՝ ռազմական ուժի ցուցադրմամբ:

Ծոցի առաջին ճգնաժամի ավարտից հետո տարածաշրջանում հաստատված ամերիկյան Pax-ը մոտ մեկ տասնամյակ իր գոյությունը պահպանում էր խաղաղության գործընթացում ներգրավվածության, Սաուդյան Արաբիայի հետ ռազմավարական գործընկերության և «կրկնակի զսպման և ներգրավման» քաղաքականության շնորհիվ: Պաղեստինցիների տարածքներում իսրայելական բնակավայրերի կառուցումը և ԱՄՆ-ի իսրայելամետ կողմնակալ վերաբերմունքը հանգեցրին խաղաղության գործընթացում հետընթացի, իսլամիստ-ծայրահեղականների ակտիվացման և Ծոցի պատերազմի ժամանակ ԱՄՆ-ին աջակցություն հայտնաձգող արաբական երկրների շրջանում դժգոհությունների³¹: Չնայած Սաուդյան Արաբիան ապահովում էր ԱՄՆ-ին արաբական նավթով՝ մեղմացնելով նավթի գները, ԱՄՆ-ն ձգտում էր թուլացնել իր կախվածությունը սաուդական նավթից: Վերջինս էլ, տեսնելով Զ. Բուշի իսրայելամետ դիրքորոշումը, փորձում էր երկխոսության եզրեր գտնել Իրանի և Իրաքի հետ³²:

³⁰ Dunn 2005, 12.

³¹ Hinnebusch 2007, 13.

³² Hinnebusch 2007. Ինչ վերաբերում էր ռազմական ուժի ցուցադրմանը, ապա իրան-իրաքյան պատերազմից ու Ծոցի ճգնաժամից հետո պատժամիջոցներից թուլացած և հեղինակազրկված իրաքյան իշխանություններն ի դեմս Ս. Հուսեյնի, թերևս, լավագույն թիրախն էին՝ աշխարհին ներկայացնելու ամերիկյան ռազմական գերակայությունը, ինչպես նաև ստեղծել նախադեպ՝ հետագայում լեգիտիմացնելու համար ԱՄՆ կողմից զինված ուժի ընտրողաբար կիրառումը: Ամրանալով Իրաքում ԱՄՆ-ը հետագայում կկարողանար վերահսկողություն սահմանել հարևան «վտարանդի պետությունների» (rogue states) նկատմամբ:

Զ. Բուշ կրտսերի օրոք տեղի ունեցավ զենքի վաճառքի ու նավթային շրջանակների ներկայացուցիչների և ռազմական ճանապարհով ԱՄՆ-ի համաշխարհային գերակայության հաստատման կողմնակիցների աննախադեպ համագործակցություն: Բանն այն էր, որ տարածաշրջանային քաղաքականության իրականացման հարցում ամերիկյան զենքի վաճառքի և նավթային շահերը ներկայացնող շրջանակների համար (Դ. Ռամսֆելդ, Ռ. Չեյնի) կարևոր էր սերտ համագործակցությունը Սաուդյան Արաբիայի և արաբական աշխարհի հետ, մինչդեռ լիքուդամետ և սիոնիստական հայացքների հարող նորպահպանողականները գտնում էին, որ Իսրայելի անվտանգությունը չպետք է ստորադասվեր արաբական աշխարհի հետ բարիդրացիական հարաբերություններին: Այս առումով իրաքյան կամպանիան եղավ ռազմական գերակայությունը, տարածաշրջանային շահերը և դաշնակից Իսրայելի անվտանգությունն ապահովելու լավագույն լուծումը, որովհետև հնարավորություն էր տալիս ԱՄՆ-ին՝ ապահովելու արաբական նավթին հասանելիությունը, առանց արաբական երկրների հետ լրացուցիչ համաձայնություններ կնքելու կամ նրանց համաձայնությունը ստանալու³³: Ռազմական գործողությունները հնարավորություն կտային շրջանցելու OPEC-ի սահմանափակումները և վերահսկողություն հաստատելու իրաքյան նավթի նկատմամբ: Ասել է թե՛ միջազգային շուկայում նպաստել նավթի գնի բարձրացմանը, որը բխում էր ամերիկյան նավթային ընկերությունների շահերից³⁴:

Բեյքեր-Համիլթոնի հանձնաժողովի եզրակացությունները և հետագա ճակատագիրը

Կոալիցիոն ուժերի ներգրավվածությունը միայն խորացրեց Իրաքում անկայունությունը: Իրաքի օկուպացիայի ընթացքում (2003-2004 թթ.) այդ ուժերը առճակատվեցին սունիական պարտիզանական շարժմանը, Իրա-

³³ Трибрат 2008, 126. Իրաքը Սաուդյան Արաբիայից հետո իր նավթի պաշարներով գրադեցնում էր 2-րդ տեղը՝ մոտ 112 մլրդ բարրել նավթային պաշարով:

³⁴ Raymond 2007, 15. Զ. Բուշի ընտանիքը տեխասյան նավթային շրջանակի ներկայացուցիչ էր, իսկ Զ. Բուշը հայտնի էր «oilman» անվանմամբ: Իրաք ներխուժելու և վերջինիս վերակառուցման հարցում շահագրգռված էին այնպիսի ընկերություններ, ինչպիսին էր վերազգային կորպորացիա համարվող նավթարդյունաբերության ոլորտում տարբեր ծառայություններ առաջարկող Հալիբլորթը, որն ուղղակիորեն կապված էր ԱՄՆ-ի իշխող էլիտայի ներկայացուցիչների՝ մասնավորապես Դիք Չեյնիի հետ, որը 1995 թվականին ընտրվել էր տնօրենների խորհրդի նախագահ:

քում սունիական «ալ-Քաիդա» ահաբեկչական խմբավորման և շիաների ընդդիմությանը: 2005 թ. խորհրդարանական ընտրությունները ավելի վատթարացրին իրավիճակը Իրաքում, քանի որ հաղթանակ տարան բնակչության մեծամասնությունը կազմող շիաները: Կրոնական փոքրամասնությունը սունիները, որ ավանդաբար կազմել են իրաքյան քաղաքական էլիտայի հիմնական մասը, կարծում էին, որ քաղաքական որոշումների կայացման լծակները և ազդեցությունը շիաների ու քրդերի ձեռքն անցնելուց հետո իրենք ինքնավարություն կհռչակեն իրենց բնակության շրջաններում, իսկ այդ դեպքում երկիրը կգրկվի նավթահանքերից: 2006 թ. կոալիցիոն ուժերի դեմ սունիների և շիաների պայքարը մղվեց երկրորդ պլան, և Իրաքում սկսվեց քաղաքացիական պատերազմ սունիների և շիաների միջև: Ազգային և կրոնական խայտաբղետ կազմ ունեցող Իրաքը՝ որպես Մերձավոր Արևելքի մանրակերտ, հայտնվեց բալկանացման³⁵ խնդրի առջև:

Քաղաքացիական պատերազմի ընթացքում շիաների ալ-Ասկարիա սրբավայրի ռմբակոծումից հետո³⁶ իրավիճակը «սթափ գնահատելու» համար 2006 թ. մարտին նախկին պետքարտուղար Ջեյմս Բեյքերի և դեմոկրատ կոնգրեսական Լի Համիլթոնի ղեկավարությամբ ձևավորվեց Իրաքի ուսումնասիրության խումբը՝ հայտնի Բեյքեր-Համիլթոնի հանձնաժողով անվամբ³⁷:

Արձանագրելով պետական կառավարման և անվտանգության հարցերում առկա խոր տարանջատումը, սոցիալ-տնտեսական ճգնաժամը՝ հանձնաժողովը եկավ այն եզրակացության, որ պետք է վերջ տալ զինված ուժերում կրոնական և էթնիկ պատկանելությամբ պայմանավորված՝ ծագման վայրից դուրս ծառայությունից հրաժարվելու պրակտիկային և օր առաջ ստեղծել իրաքյան պաշտպանական ազգային բանակ, որը ֆինանսական ծախսերի տեսանկյունից ձեռնտու էր ԱՄՆ-ին³⁸: Ենթադրվում էր ամերիկյան և կոալիցիոն ուժերը դուրս բերել Իրաքից՝ սկսած 2008 թ. առա-

³⁵ Encyclopedia Britannica, www.britannica.com, Պետության տրոհումն առավել փոքր, էթնիկ տեսանկյունից միատարր և սովորաբար հակամարտող սուբյեկտների: Եզրույթն օգտագործվում է նաև նկարագրելու բազմազգ պետության ներսում էթնիկ բախումները:

³⁶ Ռմբակոծման պատասխանատվությունը չստանձնեց կողմերից և ոչ մեկը, ուստի ԱՄՆ իշխանություններն այն համարեցին ալ-Քաիդայի ձեռքի գործը:

³⁷ Beehner 2006.

³⁸ Baker, Hamilton 2006, 12. Միայն 2006 թ. ֆինանսական տարում Իրաքի պաշտպանական ուժերի համար նախատեսված հատկացումը (3 միլիարդ ԱՄՆ դոլար) ավելի քիչ էր, քան Իրաքում ԱՄՆ-ի երկաթաբաշա ծախսը (2 միլիարդ ԱՄՆ դոլար):

ջին եռամսյակից: Դիվանագիտական կարգավորումները ենթադրում էին համագործակցություն տարածաշրջանային դերակատարների³⁹, այդ թվում՝ ԱՄՆ-ի իշխանությունների և հանձնաժողովի կողմից տարածաշրջանը ապակայունացնող ուժեր համարվող Իրանի ու Սիրիայի հետ Իրաքի տարածքային ամբողջականության, ահաբեկչության դեմ պայքարի, հաշտեցման, միջազգային ճանաչման կետերում, իսկ տնտեսական առումով առաջ էր քաշվում Էներգետիկայի ոլորտի մասնավորեցման հարցը՝ պետականության մասնակցության և սուբսիդավորման տոկոսային նվազեցմամբ⁴⁰:

Հանձնաժողովի հաշվետվությունը միջազգային հանրությունը միանշանակ չընդունեց: Այն ողջունեցին դեմոկրատ կոնգրեսականները, որոնք կարծում էին, որ փաստաթուղթը ցույց է տալիս ԱՄՆ-ի իշխանությունների ձախողումը և նախանշում տարածաշրջանային քաղաքականության փոփոխման անհրաժեշտությունը⁴¹: Ինչ վերաբերում էր նորպահպանողականներին, ապա վերջիններիս գաղափարախոս Բիլլ Քրիստոլը փաստաթուղթը համարեց անլուրջ, իսկ կոշտ գծի հետևորդ հանրապետական սենատոր Ջոն Մաքքեյնն էլ մտահոգություն հայտնեց Իրանի ու Սիրիայի փոխգործակցության ձևաչափի, նրանց հետապնդած շահերի և ամերիկյան զինված ուժերի՝ Իրաքից դուրս գալու ժամկետների վերաբերյալ⁴²:

Իսրայելի դիրքորոշումը բացասական էր, քանի որ փաստաթղթում առկա «պաղեստինյան խնդրի կարգավորում» ձևակերպումը ենթադրում էր զիջումներ Իսրայելի կողմից: Վերջինիս անհանգստացնում էր արաբական երկրներին հակաահաբեկչական պայքարում ԱՄՆ-ի երկակի ստանդարտների սիրաշահելու քաղաքականությունը, որը կարող էր իրականացվել Իսրայելի անվտանգության հաշվին՝ դարձնելով այն, ըստ Արիել Շարոնի, «երկրորդ Չեխոսլովակիա»⁴³:

³⁹ Baker, Hamilton 2006, 49. Սաուդյան Արաբիան, Ծոցի երկրները, Եգիպտոսը և Հորդանանը կարող էին դիվանագիտական կապուղիներով նպաստել Իրաքում շիաների և սունիների հաշտեցմանը՝ իսլամական կրոնական առաջնորդների հանդիպումները հարթակ ծառայեցնելով և հաշտության համաձայնության ձևաչափեր մշակելով: Սաուդյան Արաբիան կարող էր աջակցել նաև Իրաքի արտաքին պարտքի թեթևացմանը:

⁴⁰ Baker, Hamilton 2006, 56.

⁴¹ Sweet 2007.

⁴² Sweet 2007.

⁴³ Ханин 2006. Ուստի Իսրայելի արտաքին գործերի նախարար Տիպի Լիվնին ԱՄՆ-ից պահանջեց Մերձավոր և Միջին Արևելքի բոլոր խնդիրների լուծումը չկապել Իսրայելա-պաղեստինյան հարցի հետ, իսկ վարչապետ Էհուդ Օլմերտը խորհուրդ տվեց քայլեր ձեռնարկել

Փաստաթուղթը բացասաբար ընդունեց նաև Իրաքը: Տեղի էթնիկ-կրոնական հատվածները կարծում էին, որ այն չէր առաջարկում քաղաքացիական պատերազմը ավարտելու ուղիներ, և որ զեկույցում կային Իրաքին ուղղակիորեն չառնչվող կետեր՝ պայմանավորված բացառապես ԱՄՆ-ի տարածաշրջանային շահի ապահովմամբ: Ըստ Իրաքի փոխվարչապետ Բահրամ Սալեհի՝ չնայած այս հաշվետվությունը համապատասխանում է իրաքյան իշխանությունների պաշտոնական օրակարգին, միևնույն է այն իրականացնելու համար մեծ ջանքեր են անհրաժեշտ⁴⁴: Իրաքի նախագահ Զալալ Թալաբանիին էլ փաստաթուղթը համարեց սպառնալիք հետսադամյան Իրաքի ինքնիշխանությանն ու սահմանադրական կարգին⁴⁵: Սունիներն ընդհանրապես դեմ էին ցանկացած առաջարկի, որը կնպաստեր Իրանի ու շիաների քաղաքական ազդեցությամբ նոր Իրաքի կայացմանը: Չնայած ներքին պառակտվածությանը՝ սունիները շարունակում էին իրենց դրսևորել որպես «Staatsvolk»⁴⁶ (պետականաստեղծ ժողովուրդ): Ըստ Փ. Գալբրայթի՝ փաստաթղթում սունիները տեսնում էին իրենց ներկայացուցիչների օրոք ձևավորված պետության հիմքերի կազմալուծում և քրդական ու շիիթական նեղ շահերի բավարարում⁴⁷: Քրդերին մոտ և ապակենտրոնացված Իրաքի կողմնակից Բադր կազմակերպության⁴⁸ և կենտրոնացված կառավարմանը կողմնակից ալ-Սադրի ու Մահդիի բանակի ազդեցության տակ գտնվող շիաները⁴⁹ պահանջում էին կռալիցիոն ուժերի դուրսբերում և դեմ էին Բաաս կուսակցության տարրերի վերակենդանացմանը պետական համակարգում⁵⁰ և սահմանադրությամբ սունիներին առավել ընդարձակ իրավունքների տրամադրմանը: Իրաքյան քրդերն էլ Մասուդ Բարզանիի գլխավորությամբ դեմ էին կենտրոնացված

Իրանի միջուկային ծրագրի դադարեցման ուղղությամբ, որն ուղղակի սպառնալիք էր Իսրայելի գոյությանը:

⁴⁴ Top Democrats: Iraq report rebukes Bush policy, US policy in the middle east after Baker-Hamilton commission recommendations in 2006-2009 December 7, 2006.

⁴⁵ Iraq president rejects Baker-Hamilton report 2006.

⁴⁶ O'Leary 2007, 51.

⁴⁷ Galbraith 2007, 234.

⁴⁸ Galbraith 2007, 235.

⁴⁹ Мы не выигрываем и не проигрываем 2006.

⁵⁰ O'Leary 2007, 51.

կառավարությանը, քանի որ այդ դեպքում նավթի վերահսկումը կտրվեր Բաղդադին⁵¹:

Վերոնշյալը հիմք հանդիսացավ Ջ. Բուշի համար՝ մերժելու հանձնաժողովի առաջարկությունները: 2007 թ. հունվարին նա հանդես եկավ նոր ռազմավարությամբ («Նոր ուղի դեպի առաջ» («The New Way Forward» կամ «Surge»)⁵²: Հաշվի առնելով Կոնգրեսի խիստ դիրքորոշումը և 2008 թ. կայանալիք նախագահական ընտրությունները՝ Ջ. Բուշը դե ֆակտո ստիպված եղավ հաշվի առնել հանձնաժողովի եզրահանգումները⁵³: 2008 թ. իրաքյան իշխանությունների հետ ստորագրված համաձայնագրով որոշվեց ՄԱԿ-ի մանդատի ներքո գտնվող միջազգային և ԱՄՆ-ի զինուժը դուրս բերել ամենաուշը մինչև 2011 թ. վերջը: 2011 թ. ԱՄՆ-ն պաշտոնապես հայտարարեց Իրաքում իր զինված ուժերի առաքելության ավարտի մասին:

Սակայն ԱՄՆ-ի զինված ուժերի դուրսբերումից հետո՝ «Արաբական գարնան» ալիքով և սունի-շիիթական հակասությունների սրման արդյունքում երևան եկած ԻԼԻՊ ահաբեկչական կազմակերպության դեմ պայքարի նպատակով ԱՄՆ-ի նախագահ Բարակ Օբաման երեք տարի անց՝ 2014 թ., նոր զինված ուժեր ուղարկեց Իրաք⁵⁴: Իսկ 2020 թ. հունվարին արդեն ամերիկա-իրանյան հակասությունների սրման հետևանքով Բաղդադում իրանցի զեներալ Ղասեմ Սուլեյմանիի սպանությունից հետո Իրաքից ԱՄՆ-ի և կոալիցիոն ուժերի դուրսբերման բանաձևին ի պատասխան՝ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարեց, որ Իրաքի նկատմամբ կկիրառի աննախադեպ պատժամիջոցներ, որոնց կողքին նույնիսկ իրանական պատժամիջոցները չնչին կթվան, և որ ԱՄՆ-ն չի լքի Իրաքը, մինչև այն իրեն չվճարի միլիարդներ ամերիկյան ռազմական ենթակառուցվածք համարվող Ալ-Բալադ օդային բազայի համար⁵⁵: Սա ապացուցում է, որ ամերիկյան ներգրավվածությունը Իրաքում ամենևին էլ պայմանավորված

⁵¹ Galbraith 2007, 230-232.

⁵² By 246 votes to 182, Congress sends rebuke to Bush over Iraq troop surge 2007, առաջարկեց Իրաք ուղարկել հավելյալ 21000 ամերիկյան զինվոր, սակայն Կոնգրեսը մերժեց:

⁵³ Тримпат 2008, 121.

⁵⁴ Berger 2020. Իրաքում շարունակելու էր մնալ ԱՄՆ-ի զինված ուժերի 700 ներկայացուցիչ՝ իրաքյան պաշտպանական բանակին և իրավապահ մարմիններին վերապատրաստելու նպատակով՝ չհաշված ԱՄՆ-ի դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների անվտանգությունն ապահովող 4000-5000 պայմանագրային զինվորներին: 2019 թ. դեկտեմբերին Իրաքում ԱՄՆ-ի զինուժի թիվը, չհաշված պայմանագրայիններին, մոտ 5200 էր:

⁵⁵ Peterson 2020.

չէ և չի էլ եղել ահաբեկչության դեմ պայքարով և կայունության հաստատման անհրաժեշտությամբ: Այն հետապնդում է աշխարհաքաղաքական հստակ շահեր՝ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունն իմաստավորող թիրախի ընտրության պլանավորմամբ: Սա, որպես կանոն, իր արտահայտությունն է ստանում ԱՄՆ-ի ազգային ռազմավարական փաստաթղթերում, որտեղ թիրախները տարբերակվում են «վտարանդի պետություններ» պիտակավորմամբ:

Եզրակացություններ

Ամփոփելով խնդրո առարկայի քննությունը՝ նշենք հետևյալը. սեպտեմբերյան ահաբեկչությունից հետո ԱՄՆ-ի նախագահ Զ. Բուշի վարչակազմը սանձազերծեց պատերազմ ընդդեմ ահաբեկչության, որը, առարկայանալով Աֆղանստանում, ամերիկյան երկակի ստանդարտների քաղաքականությունը և Զ. Բուշի դոկտրինայի էությունը լավագույնս բացահայտեց Իրաքում: Իրաքյան կամպանիայի հետնաբեմում ընթացած քննարկումների վրա լույս սփռող «Մենինգի արձանագրությունը» և ՄԱԿ-ի ԱԽ-ում դրան հաջորդած Ք. Փաուելի ելույթը՝ ենթադրյալ սիբիրյան խոցով լի սրվակի ցուցադրմամբ, լավագույնս արտահայտեցին Մերձավոր Արևելքում հակաահաբեկչական պայքարի համատեքստում Իրաք ներխուժելու հարցում «նպատակն արդարացնում է միջոցները» սկզբունքի կիրառումը: Աֆղանստանից հետո Իրաք ներխուժումը հանգեցրեց ոչ թե ԱՄՆ-ի, այլ ալ-Քաիդայի և իսլամական ջիհադի աշխարհագրության ընդլայնմանը, իսկ հետսադամյան Իրաքի վերակառուցման ձախողումը այն վերածեց ահաբեկչության օջախի: Նոր Իրաքի քրդական և շիիթական պատկանելությունը ստիպեց սունիներին չզնալ երկխոսության, իսկ նրանցից շատերը համալրեցին ահաբեկիչների շարքերը:

Ահաբեկչության դեմ պայքարի՝ որպես տարածաշրջանային քաղաքականության իրականացման գործիքի կիրառումը բացահայտեց ԱՄՆ-ում համաշխարհային և արտաքին քաղաքական առաջնահերթությունների վերաբերյալ Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր ընդհանուր օրակարգ մշակելու հարցում ներքաղաքական համախմբման ձախողումը: Դեմոկրատները չներառվեցին արտաքին ռազմավարության մշակման գործընթացում, այլ ներառվեցին արդեն իսկ քաղաքացիական պատերազմում գտնվող Իրաքի ուսումնասիրությամբ զբաղվող հանձնաժողովի աշ-

խատանքներում, որի քաղաքական առաջարկները, սակայն, կոշտ գծի կողմնակիցների ազդեցությամբ մերժեց Ջ. Բուշը:

Եթե հիմք ընդունենք Բեյքեր-Համիլթոնի հանձնաժողովի եզրակացությունները, ապա կստացվի, որ ԱՄՆ-ն և դաշնակիցները Իրաքում պայքարում էին նախևառաջ ոչ թե ալ-Քաիդայի, այլ իրավիճակից դժգոհ սունիների դեմ, իսկ եթե հետևենք ԱՄՆ-ի պաշտոնատար անձանց հայտարարություններին, ապա կնկատենք ռազմական գործողությունների թիրախի շեշտադրումների պարբերական փոփոխություններ (ահաբեկիչներ, սունիներ, ահաբեկչությանը աջակից պետություններ, ապա նորից ահաբեկիչներ): Ուստի կարելի է եզրակացնել, որ ահաբեկչության դեմ պայքարի ձախողման հիմնական պատճառը նեղ թիրախավորման ձախողումն էր և արդեն իսկ ընտրված թիրախին տրված ուռճացված գնահատականը: Եթե դիտարկենք ալ-Քաիդայի գաղափարախոսությունը կամ նույնիսկ նրան շարունակող ԻԼԻՊ-ի գործողությունները, ապա կտեսնենք, որ դրանք հիմնականում ունեին տարածաշրջանային ընդգրկում, այսինքն՝ իրականում իսլամական ահաբեկիչների պայքարն ուղղված էր տարածաշրջանում գերիշխանության հաստատմանը, որին խոչընդոտ էին տեղական արաբ աշխարհիկ կառավարությունները, ինչպես նաև Իսրայել պետությունը և հեռավոր թշնամի հորջորջվող ԱՄՆ-ն:

Ահաբեկչության դեմ պատերազմի շրջանակներում իրաքյան կամ-պանիայի ձախողման հետևանքները Ջ. Բուշը ժառանգեց Բ. Օբամային, որը թեև փորձում էր հեռու մնալ Ջ. Բուշի վարած քաղաքականությունից՝ հրապարակ բերելով տարածաշրջանային «կրճատման ռազմավարությունը» և «ասիական շրջադարձը», այնուամենայնիվ, մերձավորարևելյան ռազմավարության մշակման գործում զերծ չմնաց իր նախորդի դոկտրինի կիրառումից: Իսկ Դ. Թրամփը, որ չնայած Բուշի օրոք Իրաք ներխուժումը համարում էր ԱՄՆ-ի ամբողջ պատմության ընթացքում մեծագույն սխալը, շարունակեց Իրաքում ռազմական ներգրավվածության արդեն ավանդական դարձած քաղաքական գիծը:

Գրականություն

- Трибрат В.В. 2008, Проблематика терроризма во внешней политике администрации Дж. Буша-младшего: диссертация... кандидата политических наук, Москва, 215 с.
 Колин Пауэл и пробка с белым порошком 2003, <https://www.youtube.com>.
 Мы не выигрываем и не проигрываем 2006, <https://polit.ru>, 20 декабря.

- Ханин В. 2006, Израиль: внешний фронт внутренней политики, Институт Ближнего Востока, <http://www.iimes.ru/?p=5261>, 16 декабря.
- Baker J.A., Hamilton L.H. 2006, The Iraq Study Group Report, www.bakerinstitute.org, 5 December, 84 p.
- Beehner L. 2006, The Baker-Hamilton Commission (aka Iraq Study Group), The Council on Foreign Relations, <https://www.cfr.org>, 6 December, 2 p.
- Berger M. 2020, Invaders, Allies, Occupiers, Guests: A Brief History of U.S. Military Involvement in Iraq, The Washington Post, www.washingtonpost.com, 11 January, 12 p.
- By 246 votes to 182, Congress Sends Rebuke to Bush over Iraq Troop Surge 2007, <https://www.theguardian.com>, 17 February, 4 p.
- Chivers C.J. 2014, The Secret Casualties of Iraq's Abandoned Chemical Weapons, New York Times, www.nytimes.com, 14 October, 52 p.
- Encyclopedia Britannica 2018, www.britannica.com, 09 April.
- Ferry T. 2013, Pax Americana and Middle East Regional Order, King's College London, E-International Relations, www.e-ir.info, 13 April, 12 p.
- Galbraith P.W. 2007, The End of Iraq: How American Incompetence Created a War Without End, 271 p.
- Glueck K., Kaplan T. 2020, Joe Biden's Vote for War, The New York Times, <https://www.nytimes.com>, 12 January, 6 p.
- Hastings Dunn D. 2005, Bush, 11 September and the Conflicting Strategies of the 'War on Terrorism', Irish Studies in International Affairs, vol. 16, <https://www.jstor.org>, 22 p.
- Hunter S.T. 2010, Iran's Foreign Policy in the Post-Soviet Era: Resisting the New International Order, Santa Barbara, California, 299 p.
- Iraq president rejects Baker-Hamilton report 2006, <http://edition.cnn.com/>, 1 p.
- Jonhstone I. 2008, US-UN Relations after Iraq: The End of the World (order) as We Know It? European Journal of International Law, vol. 15, No. 4, www.ejil.org, 25 p.
- Levitt M. 2002, Targeting Terror, U.S. Policy toward Middle Eastern State Sponsors and Terrorist Organizations, Post-September 11, The Washington Institute for Near East Policy, www.washingtoninstitute.org, 1 October, 4 p.
- Mitchell A. 2002, Threats and Responses: the Vote; Congress authorizes Bush to use Force against Iraq, Creating a Broad Mandate, www.nytimes.com, 11 October, 1 p.
- Natta D.Jr. 2006, Bush Was Set on Path to War, BritishMemoSay, <https://www.nytimes.com>, 27 March, 6 p.
- O'Leary B. 2007, Iraq's Future 101: The Failings of the Baker-Hamilton Report, Naval Postgraduate School (U.S.), Center for Contemporary Conflict, Strategic Insights (March 2007), v. 6 no. 2, <https://www.hsdl.org/?view&did=471349>, Spring, 16 p.
- Patterns of Global Terrorism 2001/2002, 2002, United States Department of States, <https://www.hsdl.org/?view&did=1012>, May, 204 p.
- Peterson S. 2020, US Troops out of Iraq? What that Would Mean for both Countries, The Christian Science Monitor, <https://www.csmonitor.com>, 7 January.
- President Bush Outlines Iraqi Threat 2002, <https://georgewbush-whitehouse.archives.gov>, 7 October, 6 p.
- Project for the New American Century, Letter to President Clinton on Iraq 1998, <https://web.archive.org>, 26 January, 2 p.
- Raymond H. 2007, American Invasion of Iraq: causes and consequences', Perceptions, vol. 12, no. 1, <http://hdl.handle.net/10023/3251>, January 18 p.

- Ricks T.E. 2002, Some Top Military Brass Favor Status Quo in Iraq, www.washingtonpost.com, 28 July, 4 p.
- Scowcroft B. 2002, Don't Attack Saddam, The Wall Street Journal, www.wsj.com, 15 August, 4 p.
- Selected Speeches of President George Bush 2009 (2001-2008), www.georgewbush-whitehouse.archives.gov, 15 January, 618 p.
- Sweet L. 2007, Iraq Study Group Report Online. React from Durbin, Boehner, Pelosi, Reid, Schakowsky, Bayh, McCain et al., <https://web.archive.org>, 8 February, 6 p.
- The National Security Strategy of the United States of America 2002, www.globalsecurity.org, 17 September, 35 p.
- Thrall T.A., Goepner E. 2017, Step Back: Lessons for U.S. Foreign Policy from the Failed War on Terror, CATO Institute, www.cato.org, 26 June, 27 p.
- Top Democrats: Iraq Report Rebukes Bush Policy, US Policy in the Middle East after Baker-Hamilton Commission Recommendations in 2006, 2009, <https://web.archive.org>, 15 June, 2 p.
- U.S. Secretary of State Colin Powell Addresses the U.N. Security Council 2003, <https://georgewbush-whitehouse.archives.gov>, February 5, 19 p.

**«ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԸ»՝ ՈՐՊԵՍ ՄԵՐՁԱՎՈՐ
ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԱՄԵՐԻԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ
ՋՈՐՋ ԲՈՒՇ ԿՐՏՆԵՐԻ ՕՐՈՔ**

Աստղիկ Հայրապետյան

Ամփոփում

ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը 2001 թ. պատերազմ հայտարարեց ահաբեկչությանը, որի թիրախը արաբական Մերձավոր Արևելքում դարձավ Իրաքը: Այս «պատերազմի» համատեքստում արդարացնելու համար իրաքյան կամպանիան ԱՄՆ-ն փորձեց ներկայացնել Սադամ Հուսեյնի և իսլամիստ ծայրահեղական ահաբեկիչների կապը ռազմական գործողություններին նախորդած ներքաղաքական բանավեճերում և միջազգային ամբիոններից: Այնուամենայնիվ, տարածաշրջանային շահի հետապնդող ռազմական գործողությունները չհանգեցրին Իրաքում կայունության, այլ, խորացնելով ազգային-կրոնական հակասությունները, երկիրը կանգնեցրին բալկանացման առաջ, որն էլ արձանագրեց Իրաքի ուսումնասիրության հանձնաժողովը: Դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ, չնայած Զ. Բուշին ուղղված հաջորդ նախագահների քննադատություններին, նրանք ևս շարունակեցին ԱՄՆ-ի ռազմական ներգրավվածությունը տարածաշրջանում՝ Բուշի դոկտրինի գործիքակազմի փաստացի կիրառմամբ:

Բանալի բառեր՝ ԱՄՆ, Իրաք, ահաբեկչություն, Ջորջ Բուշ, նախագահ, իրաքյան կամպանիա, հանձնաժողով:

**«ВОЙНА ПРОТИВ ТЕРРОРИЗМА» КАК СПОСОБ УСТАНОВЛЕНИЯ
АМЕРИКАНСКОГО ВЛИЯНИЯ НА БЛИЖНЕМ ВОСТОКЕ ВО ВРЕМЯ
ПРЕЗИДЕНТСТВА Д. БУША-МЛАДШЕГО**

Астхик Айрапетян

Резюме

В 2001 году президент США Джордж Буш объявил войну терроризму, мишенью которого на Ближнем Востоке стал Ирак. С целью оправдания антииракской кампании Дж. Буш пытался доказать, что Саддам Хусейн связан с радикальными исламистами.

Военные действия, обусловленные региональными интересами США, не способствовали стабильности в Ираке, а наоборот, углубив национально-религиозные противоречия, проложили путь к балканизации страны, что было установлено исследовательской комиссией по Ираку.

Несмотря на то, что следовавшие за Бушем президенты выступили с критикой его политической линии, военное присутствие США в регионе основывалось на фактическом использовании инструментария доктрины Дж. Буша.

Ключевые слова – США, Ирак, терроризм, Джордж Буш, президент, иракская кампания, комиссия.

**"WAR ON TERROR" AS A WAY TO ESTABLISH AMERICAN INFLUENCE IN
THE MIDDLE EAST DURING THE PRESIDENCY OF GEORGE W. BUSH**

Astghik Hayrapetyan

Abstract

In 2001 the US president George W. Bush declared a "war on terror", targeting Iraq in the Arab Middle East. To justify the Iraqi campaign in the context of this "war", the US president's administration, during the internal political debates and international meetings before the hostilities, tried to link Saddam Hussein with

the Islamic extremist terrorists. However, military actions in pursuit of regional interests did not lead to stability in Iraq, but rather deepened ethnic-religious differences, putting the country on the brink of balkanization, as recorded by the Iraqi Study Group. The further course of events showed that despite the criticisms from George W. Bush's successors, they, too, continued the US military involvement in the region with the actual use of the Bush Doctrine.

Key words – USA, Iraq, terror, George W. Bush, president, Iraqi campaign, Commission.

**СРАВНИТЕЛЬНОЕ ЭТНОКУЛЬТУРНОЕ ИССЛЕДОВАНИЕ
ГОРОДОВ АРМЕНИИ И БЕЛАРУСИ
(на основе программы международного проекта)**

Рубен Карапетян

Доктор исторических наук, ведущий научный сотрудник, зав. отделом исследований
диаспор, ИАЭ НАН РА
РА, Ереван, ул. Чаренца 15
Эл. адрес: karapetyan.ruben.s@gmail.com

Сона Нерсисян

Кандидат исторических наук, научный сотрудник отдела исследований диаспор
ИАЭ НАН РА
РА, Ереван, ул. Чаренца 15
Эл. адрес: nesona@bk.ru

Степан Захаркевич

Кандидат исторических наук, доцент Белорусского государственного университета
220030 Минск, пр-т Независимости, 4
Эл. адрес: stepanzakch@gmail.com

Артем Назаренко

Преподаватель Белорусского государственного университета
220030 Минск, пр-т Независимости 4
Эл. адрес: nazaranka@bsu.by
Статья представлена 12.06.2020, рецензирована 20.06.2020, принята к публикации
01.03.2021

Вступление

Урбанизация, получившая большой размах в XX и XXI столетиях, повлекла за собой множество коллизий, порожденных совокупностью исторических, политических, экономических, социальных, культурных факторов. Системой этих факторов и был обусловлен процесс становления этнокультурных особенностей городской жизни постсоветских стран. Вместе с тем, характер взаимодействия каждого из этих факторов, как и целой их группы, во многом зависел от региона, цивилизационного окружения, исходных рубежей и других менее значимых ус-

ловий каждой страны. В любом случае все указанные факторы в комплексе порождали определенные условия этнокультурных трансформаций среди населения, которые в свою очередь могли воздействовать на экономическую, социальную и культурную политику новых государств, и, в конечном счете, определяли направленность их социально-экономических и этнокультурных изменений. Сложный характер взаимодействия этнокультурных особенностей с указанными выше факторами вносит некоторую неопределенность в познание прошлого, в оценку настоящего и в определение будущего.

Этим можно объяснить повышенный интерес к этнокультурным аспектам жизнедеятельности городского населения со стороны общественно-политических и научных кругов различных стран. Особенно это важно в современных условиях, когда каждая постсоветская республика переживает свой опыт становления и, как независимое государство, сталкивается со множеством коллизий, порожденных как прошлыми событиями и процессами, так и современными вызовами. Сказанное обусловлено еще и тем, что в этом опыте проявляется не только социально-экономическое, но и этнокультурное содержание происходящих процессов, которые требуют получения и систематизации конкретных эмпирических знаний в этой области, серьезных методологических разработок, определяющих проблематику, объект исследования, его цели, задачи и выбор инструментария.

В контексте вышесказанного особое значение приобретает опыт Армении и Беларуси, в городах которых в XX-XXI вв. развернулись уникальные по своему характеру этнокультурные процессы, в ходе которых миграция, экономическое, социальное и культурное развитие и политическое строительство происходили одновременно и были взаимобусловлены. Их опыт весьма полезен в познании закономерностей подобных процессов, которые, как показывают мировые тенденции, имеют серьезную перспективу. В контексте вышесказанного весьма важно формирование научно обоснованных представлений о доминантах этнокультурного облика городского населения, необходимо нахождение во всем этнокультурном многообразии типологически сходных и специ-

фических черт. Последнее обусловлено тем, что исследование характера взаимодействия факторов, определяющих процесс формирования и развития городского населения в конкретном историческом и этнокультурном контексте, позволяет по-новому осмыслить пути становления современных этносоциальных общностей и их перспективы.

Этим следует объяснить необходимость специального сравнительного этнологического исследования динамики становления современного этнокультурного облика городского населения Армении и Беларуси.

Основные исследовательские подходы

Сопоставительное и сравнительное исследование населения городов двух, различающихся по характеру постсоветского периода развития, стран предполагает выявление и систематизацию факторов, определяющих направление и содержание социальных и культурных изменений в конкретных политических и экономических контекстах. Необходим также поиск логической последовательности взаимодействия указанных процессов. В этом плане очень важно осмысление советского и постсоветского опыта социокультурных процессов, происходивших в городах Армении и Беларуси на разных этапах их развития, что возможно только при условии сопоставительного эмпирического исследования этих процессов. Поиск и систематизация таких данных вокруг единой исследовательской цели может стать основой разработки комплексного подхода к этнокультурной проблематике урбанизационного процесса на постсоветском пространстве в целом. Но вполне понятно, что в разных постсоветских странах с отличающимися условиями жизни и различным этническим составом, особенностями исторического прошлого, мировоззрения, традиционной культуры и прочими параметрами, масштабы и направления развития, формы проявления и, соответственно, пути решения должны отличаться. Однако вопросы сопоставительного и сравнительного исследования этнокультурных процессов во взаимосвязи с экономическими, политическими и социальными изменениями, происходящими в различных этносоциальных сре-

дах, далеко не всегда рассматриваются в контексте общей городской тематики.

Опыт исследований

На сегодняшний день белорусскими и армянскими исследователями в области разработки городской проблематики накоплен немалый научный опыт. Немаловажное значение имеют прежде всего исторические работы белорусских ученых, осмысливающие процессы модернизации общества в XIX–XX вв., а также ускоренную урбанизацию XX в. Сложилось целое направление таких исследований, в котором можно было выделить как изучение отдельных городов Беларуси, так и анализ процессов трансформации белорусского общества в целом, в рамках которого внимание обращалось и на стремительное развитие города, его населения, на его роль в экономическом развитии региона. В настоящее время в белорусской исторической науке активно формируется историческая урбанистика, направленная на переосмысление накопленного опыта. Со второй половины XX в. начались активные этнологические и этносоциальные исследования городов Беларуси. Это было обусловлено резким повышением темпа урбанизации белорусских городов, который стал одним из самых высоких в Центрально-восточной Европе, что привело к резким изменениям культуры населения Беларуси, к смене образа жизни, социальной и культурной динамики, что не могло не привлечь внимание этнологов. В настоящее время этнологию/антропологию города в Беларуси все больше начинает интересовать становление и развитие городского образа жизни, влияние политических трансформаций на городскую идентичность¹.

В Армении опыт подобных исследований городского населения был накоплен благодаря масштабным этносоциологическим исследованиям 12 городов в 1976, 1980, 1995, 2005, 2010 и 2018 гг. Исследования Р.С. Карапетяна, С.А. Нерсисян и Л.А. Танаджян внесли серьезный

¹ Аноп 1992, Васілючак 1991, Kachanouski 2015, 45–57, Калачова 2009, Касперович 1985, Крень 1988, Максимчик 2019, 300–309, Махоўская 2009, Чепко 1981, Шыбека 2009, Ракова 1990, Грамадскі быт і культура гарадскога насельніцтва Беларусі 1989.

вклад в разработку этносоциальной и этнокультурной проблематики в изучении процессов, происходящих среди населения как столицы, так и малых и средних городов Армении².

Объемный массив публикаций в виде монографий, сборников статей, материалов конференций по городской тематике имеется и за рубежом, где все больше прослеживается тенденция исследования данной проблемы в этническом ракурсе. Так, работы Макса Вебера, Талкотта Парсонса, Карла Бюхера и Георга Зиммеля создали предпосылки формирования городской проблематики в целом³. Фундаментальные исследования под руководством Ю.В. Арутюняна открыли новые горизонты в изучении городской проблематики, где особое место занимает выявление этносоциальных особенностей происходящих в городах социальных и культурных процессов⁴. Заметно расширилась и география исследований, когда объектом изучения становится городское население сразу нескольких стран. Можно сказать, что на сегодняшний день на фоне значительного количества работ по городской проблематике все еще до конца не заполнен пробел, касающийся исследований этнокультурных процессов в этнорегиональной проекции.

Основные положения программы

Авторы международного совместного армяно-беларусского исследования, программа которого представлена в данной статье, видят свою основную задачу в исследовании социально-демографических и этнокультурных процессов в городах двух стран в этнорегиональном разрезе. При этом особое внимание предусматривается уделить изучению общих и особенных проявлений этнокультурных изменений в советский и постсоветский периоды.

² Население Еревана. Этносоциологические исследования 1986, Կարապետյան 2014, 35-43, Միրիախյանը Հայաստանում. ինտեգրման ուղիները 2015, Կարապետյան 2019, 170-181, Карапетян 2014, 118-134, Карапетян 2014, Karapetyan 2013, 288.

³ Бюхер 1923, Вебер 1923, Зиммель 2014, Парсонс 2001.

⁴ Эти исследования проводились начиная с 1967 года по программе ОСУ. См. Арутюнян 1972, 7-15.

Следует особо подчеркнуть, что межгосударственные отношения между Арменией и Беларусью (оба государства входят в ОДКБ, ЕАЭС, наряду с другими участниками этих организаций), строятся на основе единых межгосударственных союзов. Вместе с тем Армения и Беларусь в рамках этих союзов наиболее дружественные по отношению друг к другу страны. Общность исторического прошлого, участие Армении в интеграционных процессах, активные миграционные связи делают обе страны своеобразным опытным полем, на котором могли бы тестироваться методы работы по укреплению дружественных связей между странами. Это создает ситуацию открытости и, как результат, подверженности населения республик влиянию тех социальных и культурных ориентаций, которые преобладают как на постсоветском пространстве, так и в большинстве регионов мира. Нельзя не отметить и то, что Армения прошла все процессы так называемого переустройства общества не только более высокими темпами по сравнению с другими постсоветскими странами (она первая провела земельную реформу, приватизацию, политическое переустройство), но и более болезненно преодолевала последствия землетрясения, энергетического кризиса, войны. В свою очередь, Беларусь прошла свой особый уникальный путь постсоветского периода развития, сохранив наследие прошлого как в политическом, так и в экономическом отношениях.

Очевидно, что рассмотрение проблемы в этнорегиональном ракурсе представляется достаточно перспективным, т.к. сравнение материалов исследования в разных регионах с разным этническим составом, различным уровнем и путями социально-экономического развития, демографическими и культурными традициями населения не только позволит показать условия и факторы, влияющие на процессы этнокультурных изменений и трансформаций, но и повысит значимость полученных результатов и выводов, сделать их более универсальными, распространить на другие государства постсоветского пространства. В этой связи особое значение приобретает сравнительное и сопоставительное исследование этнокультурных процессов, происходивших на протяжении XX-XXI вв. в городах двух бывших советских республик –

Республики Армения и Республики Беларусь. С одной стороны, обе республики, находясь в составе общего государства и одновременно выйдя из его состава, в значительной мере пережили общие закономерности развития. Так, обе республики были наиболее урбанизированными и индустриально развитыми, в обеих происходили почти одинаковые исторические события и процессы. Вместе с тем их различали специфика исторических судеб, цивилизационные особенности региона расположения, к чему следует добавить и этнические особенности их населения. Последнее обстоятельство на фоне сходных политических, экономических и социальных процессов и определяет особенности этнокультурного свойства, в которых проявляется совокупность общих и специфических черт городской среды.

Методология сравнительных исследований

В решении поставленной проблематики важное место занимают лонгитюдные этнологические исследования этнокультурной составляющей урбанизации и становления городов Армении и Беларуси. Они не перестают быть местом аккумуляции разнородных групп каждого титульного этноса, социальная и культурная интеграция которых является проблемой государственного уровня, чем и обуславливается актуальность ее изучения. Систематизация знаний о пройденном пути, научное осмысление исторических перипетий становления населения городов обеих стран позволит сориентироваться в решении ее современных проблем.

Главной задачей программы исследования является следующее: на основе сравнительного анализа этнокультурных процессов в городах Беларуси и Армении выявить культурно-бытовые особенности населения малых и средних городов, дать комплексное историко-культурное описание городской среды Беларуси и Армении. Постановка подобной исследовательской задачи основывается на предположении, что в указанный исторический период в Армении и Беларуси сложилась уникальная этнокультурная городская среда.

За указанный период в процессе урбанизации белорусский этнос из сельского превратился преимущественно в городской. Этот процесс был обусловлен изменениями в этнической структуре городского населения Беларуси, что было связано со своеобразными этнокультурными процессами. Исходя из этого, в проект заложены следующие исследовательские задачи:

1. Выделить и охарактеризовать весь комплекс факторов, оказавших влияние на процесс урбанизации и изменения этнической структуры городского населения Беларуси и Армении: определить общее и особенное в этнокультурных процессах в городской среде Беларуси и Армении в прошлом и нынешнем столетиях.

2. Исследовать демографические, социальные, культурные аспекты становления городского населения Армении и Беларуси, проследить взаимосвязи социальных и культурных процессов с миграцией.

3. Осмыслить армянский и белорусский «опыт» социокультурных процессов, происходивших в городах на разных этапах их развития, и сформировать научно обоснованные представления о доминантах этнического облика во всем многообразии армянской и белорусской этничности в типологически сходных и специфических чертах.

Разработка теоретических и обобщающих положений на основании собранного и введенного в научный оборот и образовательные практики материала (в том числе – полученного во время полевых этнографических исследований) позволит определить культурные особенности жизнедеятельности населения малых и средних городов в Беларуси и Армении. При сопоставлении динамики становления современных этнокультурных характеристик городского населения Армении и Беларуси предполагается комплексное описание процессов изменения городской среды двух стран с выделением общих закономерностей и связанных с этнической спецификой особенностей развития. Предполагается использование результатов НИР в разработке практических рекомендаций для государственных органов, отвечающих за выработку и реализацию политики в отношении дальнейшего развития городов, а

также подготовка научной основы для развития двустороннего научного и экспертного сотрудничества Беларуси и Армении.

Исследование будет проводиться в малых городах Армении и Беларуси. Их выбор был обусловлен, прежде всего, тем, что именно в этом типе города более явственно прослеживаются происходящие этносоциальные и этнокультурные изменения, в них четче видно сочетание старого и нового, изменение традиционного уклада и внедрение урбанизированных компонентов культуры и ее интернационализации. Важно учесть и то, что население малых городов менее дифференцировано как в социально-экономическом, так и культурном отношении.

Изучение проблемы предполагает множественный подход. Население малых городов, являющихся объектом нашего исследования, будет рассматриваться в трех ипостасях – субкультурном (поселенческом), региональном, демографическом и социальном, в качестве представителей трех поколений, той или иной этнографической (скорее региональной) общности. Социально-демографические и этнокультурные изменения в этих городах будут анализироваться как на уровне сознания, так и на уровне поведения. В качестве основного метода сбора материалов предполагается применить опрос, экспертное интервью, работу с информаторами и наблюдения. По окончании проекта предполагается получить данные об особенностях взглядов, интересов, ориентаций и установок современных городских жителей Армении и Беларуси в социально-демографической и этнокультурной областях. Будет предложен анализ сведений о социальных планах, жизненных ценностях, языковых ориентациях, об уровне этнического самосознания, структуре ее идентичности и т.п.

Заключение

Итогом исследования должна стать возможность реального использования полученных результатов при решении различных социокультурных проблем малых городов и урегулировании разного рода правовых, экономических, демографических и социально-культурных задач. Выдвигаемые в работе положения и выводы могут дополнить

разрабатываемую исследователями обеих стран теорию развития малых городов в части определения и конкретизации этнической и региональной специфики. Данное исследование должно помочь привлечению внимания общества и политических деятелей к вопросу о повышении уровня развития малых городов и, в этом контексте, активизации роли различных групп их населения в решении экономических, этносоциальных и этнокультурных проблем.

Литература

- Чарապետյան Ռ. 2014, XX դարում հայերի տեղաբաշխման դինամիկան. Հայ էթնիկությունը սեփական և այլազգի միջավայրում. Հետազոտական փորձ, խնդիրներ և հեռանկարներ, Երևան, «Գիտություն», էջ 35-43:
- Чарապետյան Ռ. 2019, Բելառուսի հայերը Հայաստան-Բելառուս էթնոմշակութային կապերի միգրացիոն համատեքստում. էթնիկական ավանդույթներ և ժամանակակից իրողություն, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, N 1 (653), էջ 170-181:
- Սիրիահայերը Հայաստանում. Ինտեգրման ուղիները 2015, Երևան, «Գիտություն», 182 էջ:
- Арутюнян Ю.В. 1972, Социально-культурные аспекты развития и сближения наций в СССР (Программа, методика и перспективы исследования), Советская этнография, N 3, Москва, с. 7-15.
- Бюхер К. 1923, Возникновение народного хозяйства: публичные лекции и очерки, ред. и пер. И.М. Кулишер – 5-е изд. испр. и доп., пер. по 16-му нем. изд. 1922 г., Петроград, «Akademia», 256 с.
- Вебер М. 1923, Город, пер. с нем. Б.Н. Попова, Петроград, «Наука и школа», 309 с.
- Зиммель Г. 2014, Рим. Флоренция. Венеция, Москва, «Грюндриссе», 96 с.
- Калачова І.І. 2009, Этнакультурныя працэсы ў гарадской сям’і беларусаў у апошняй трэці XX – пачатку XXI ст./І.І. Калачова, Мінск: Беларус. Навука, 266 с.
- Карапетян Р. 2014, Этнокультурный контекст генетической структуры населения городов Армении, Историко-филологический журнал, N 3, Ереван, с. 118-134.
- Карапетян Р. 2014, Формирование населения городов Армении. Этносоциологическое исследование, Ереван, «Гитутюн», 410 с.
- Касперович Г.И. 1985, Миграция населения в города и этнические процессы: на материалах исследования городского населения БССР, Г.И. Касперович, Минск, «Наука и техника», 147 с.
- Крень И.П. 1988, Гродно: историко-экономический очерк, И.П. Крень, Я.Н. Мараш, И.И. Ковкель, Минск, «Полымя», 240 с.
- Максимчик А.Н. 2019, Армяне в урбанизационных процессах в БССР/А.Н. Максимчик, Беларусь у эпоху геапалітычных і сацыяльных зрухаў Новага і Навейшага часу. Да 25-годдзя кафедры гісторыі Беларусі новага і навейшага

- часу гістарычнага факультэта Беларускага дзяржаўнага ўніверсітэта: матэрыялы міжнар. навук.-практ. канф., Мінск, 22 лістап, Беларус. дзярж. ун-т; рэдкал.: А.Г. Каханоўскі (старш.) [і інш.], Мінск, с. 300-309.
- Население Еревана. Этносоциологические исследования 1986, Ереван, изд. АН АрмССР, 250 с.
- Парсонс Т. 2001, О социальных системах, Москва, «Академический проект», 832 с.
- Ракова Л.В. 1990, Быт и культура городской молодежи, Л.В. Ракова– Мінск: Наука и техника, 127 с. Грамадскі быт і культура гарадскога насельніцтва Беларусі 1989, В.К. Бандарчык [і інш.]; пад рэд. В.К. Бандарчыка, Мінск, «Навука і тэхніка», 248 с.
- Чепко В.В. 1981, Города Белоруссии в первой половине XIX века: экономическое развитие, В.В. Чепко, Минск, «БГУ», 144 с.
- Шыбека З.В. 2009, Гарадская цывілізацыя: Беларусь і свет. Курс лекцый, Захар Шыбека. Вільня, «ЕГУ», 372 с.
- Аноп Л.П. 1992, Жлобін: гісторыка-эканамічны нарыс, Мінск, Л.П. Аноп, 142 с.
- Васілючак, М.В. 1991, Іўе:гісторыка-эканамічны нарыс, М.В. Васілючак, І.П. Крэнь, Мінск:Беларусь, 126 с.
- Kachanouski A.G. 2015, Emancypacja etniczno-kulturowa Białorusinów na skrzyżowaniu epok i kultur (druga połowa XIX–początek XX wieku), A. Kachanouski, Krakowskie pismo kresowe, Rocznik 7, S. 45-57.
- Karapetyan R.S. 2013, Migration in cities of Armenia. Ethnosociological Survey, Yerevan, "Gitutyn", 288 p.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԷԹՆՈՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (միջազգային նախագծի ծրագրի հիման վրա)

Ռուբեն Կարապետյան, Սոնա Ներսիսյան, Ստեփան Զախարկևիչ, Արտյոմ
Նազարենկո

Ամփոփում

Միջազգային գիտական նախագծի ծրագիրը միտված է Բելառուսի և Հայաստանի քաղաքներում ընթացող սոցիալ-ժողովրդագրական և էթնոմշակութային գործընթացների համեմատական հետազոտությանը: Սույն նախագիծը սկզբունքորեն կարևոր, էթնոտարածաշրջանային համեմատաբար նոր մոտեցում է առաջարկում վերոնշյալ խնդրի դիտարկման համար: Հետազոտության օբյեկտը Բելառուսի և Հայաստանի փոքր քաղաքների բնակչությունն է: Հատուկ ուշադրություն է դարձվում նախագծի հիմնախնդրի, նպատակների ու հարցադրումների դրվածքի, հետազոտության մեթոդաբանության, ինչպես

նաև հայ և արտասահմանյան գիտնականների կողմից թեմայի մշակման աստիճանի վրա:

Բանալի բառեր՝ միջազգային նախագիծ, Բելառուս, Հայաստան, քաղաք, էթնոտարածաշրջանային գործընթացներ, էթնոմշակութային հետազոտություն, սոցիալ-ժողովրդագրական գործընթացներ:

СРАВНИТЕЛЬНОЕ ЭТНОКУЛЬТУРНОЕ ИССЛЕДОВАНИЕ ГОРОДОВ АРМЕНИИ И БЕЛАРУСИ

(на основе программы международного проекта)

Рубен Карапетян, Сона Нерсисян, Степан Захаркевич, Артем Назаренко

Резюме

Программа международного научного проекта предусматривает сравнительное исследование социально-демографических и этнокультурных процессов в городах Беларуси и Армении. Данный проект предлагает принципиально важный и сравнительно новый этнорегиональный подход в рассмотрении вышеозначенных проблем. Объектом исследования выступает население малых городов Беларуси и Армении. При этом особое внимание уделяется постановке проблемы, целям и задачам проекта, методологии исследования, а также анализу степени разработанности темы отечественными и зарубежными учеными.

Ключевые слова – интернациональный проект, Беларусь, Армения, город, этнорегиональные процессы, этнокультурное исследования, социально-демографические процессы.

COMPARATIVE ETHNOCULTURAL STUDY OF THE CITIES OF ARMENIA AND BELARUS

(on the Basis of a Program of the International Project)

Ruben Karapetyan, Sona Nersisyan, Stepan Zagharkevich, Artyom Nazarenko

Abstract

The program of an international scientific project aimed at studying the socio-demographic and ethno-cultural processes in the cities of Belarus and Armenia.

This project offers a fundamentally important and relatively new ethno-regional approach to addressing the above-mentioned problems. The object of the study is population of small towns of Belarus and Armenia. Particular attention is paid in the article to the statement of the problem, the goals and objectives of the project, the methodology of the study, as well as to the analysis of the degree of development of the topic by domestic and international scientists.

Key words – international project, Belarus, Armenia, city, ethno-regional processes, ethno-cultural study, social-demographic processes.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱԿԱԿՇԻՈՒՆԵՐԻ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Միքայել Միքայելյան

Տնտեսագիտության դոկտոր
ԵՊՀ ԻՄ ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժ.պ.
ՀՀ, Իջևան, Ուսանողական 3
Էլ. հասցե՝ miqayel.miqayelyan@ysu.am
Հոդվածը ներկայացվել է 22.06.2020, գրախոսվել է 05.07.2020, ընդունվել է
տպագրության 01.03.2021

Ներածություն

Անկախության հռչակագրի ընդունումից հետո անցած երեք տասնամյակների ընթացքում երկիրը դիմակայել է աշխարհաքաղաքական, տնտեսական, սոցիալական մի շարք մարտահրավերների, և առաջիկայում էլ դրանց պակասը չի լինի: Փորձը ցույց է տալիս, որ մենք օգտագործել ենք մարդկային կապիտալի ներուժի փոքր մասը: Դրա հիմնական պատճառը պետական կառավարման համակարգի անարդյունավետ գործունեությունն է:

ՀՀ պետական մեքենայի որակի և պետական կառավարման համակարգի գործունեության արդյունավետության վերաբերյալ առկա են սահմանափակ թվով գիտական հետազոտություններ: Ամենաընդգրկուն ուսումնասիրությունը կատարել է Մերուժան Վ. Միքայելյանը, որը հանգամանորեն վերլուծել է պետությունների տարբեր խմբերի գործունեությունների արդյունքները՝ դրանք կապելով այդ երկրների կառավարման որակի հետ: Հայաստանի պարագայում պետական մեքենայի կառավարման որակը դիտարկելով անարդյունավետ՝ նա առաջարկել է ձևավորել Հայաստանի նախագահի և վարչապետի խորհրդատուների ինստիտուտներ և ստեղծել դրանց գործառնության կայուն մեխանիզմներ¹:

Միքայել Միքայելյանն առաջարկել է ստեղծել պետական մեքենայի, մասնավորապես՝ տնտեսական մրցակցության պաշտպանության բարելավման նպատակով կարգավորող մարմնի ձևավորման **անկախ և թա-**

¹ Տե՛ս Միքայելյան 2011, 156-205:

փանցիկ կադրային բանկ²: Հետագայում անկախ և թափանցիկ կադրային բանկ ստեղծելու անհրաժեշտության մասին նա անդրադարձել է տարբեր վերլուծություններում: Մասնավորապես, ՀՀ սահմանադրության փոփոխության լույսի ներքո որոշակի ճշգրտումներ է կատարել՝ ներկայացնելով ինքնավար պետական մարմինների անկախ կադրային բանկի ձևավորման բանաձև³: Սակայն անցած 30 տարիների ընթացքում թե՛ պատասխանատու պետական մարմինները, թե՛ գիտական շրջանակները չմշակեցին դրա ձևավորման ու կիրառման մեխանիզմներ⁴:

Նոր տնտեսական հարաբերությունների ձևավորման համաշխարհային փորձը

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ անկախություն ձեռք բերած այն երկրները, որոնք ճիշտ են օգտագործել ընձեռված հնարավորությունները, կարողացել են արագ հարմարվել շուկայական տնտեսությանը բնորոշ «խարդավանքներին», նախապես պատրաստվել և մեծ առաջընթաց են ապահովել՝ չկորցնելով նախկին ձեռքբերումները: Ավելին, քաղաքական ու տնտեսական հասունությամբ, հեռատեսությամբ և հնարամտությամբ աչքի ընկած քաղաքական ու իշխանական վերնախավ ունեցող ազգերն ու երկրները ի վիճակի եղան հեղափոխական ու անցումային այդ ժամանակահատվածը ծառայեցնել իրենց երկրների զարգացմանը, արագ կողմնորոշվել և օգուտներ քաղել իրավիճակից:

Դեռևս ԽՍՀՄ-ի օրոք մերձբալթյան հանրապետությունները նախորդ դարի 80-ական թվականների վերջերից նախապատրաստվել են քաղաքական անկախությանը (Էստոնիան 1988 թ. նոյեմբերի 16-ին ընդունեց անկախության հռչակագիր, Լատվիայի ԽՍՀ Գերագույն խորհուրդը 1989 թ. հուլիսի 27-ին՝ Տնտեսական ինքնուրույնության մասին օրենք, Լիտվայի ԽՍՀ-ի Գերագույն խորհուրդը 1989 թ. հունվարի 25-ին ընդունեց Պետական լեզվի մասին հրամանագիրը)⁵: Անկախության ջատագովները ոչ միայն ժողովրդական շարժման ներկայացուցիչներն էին (Ժո-

² Միքայելյան 2006, 335-343:

³ Միքայելյան 2019, 69-75:

⁴ Նման բանկի անհրաժեշտության մասին խոսվել է անկախացման առաջին տարիներին, սակայն այն առարկայական, առավել ևս գիտական քննարկման թեմա չի դարձել: Համահայկական կադրային բանկի ստեղծման անհրաժեշտության մասին խոսեց և կարևորեց մերօրյա իշխանությունը:

⁵ Розенфельд 1996.

ղովրդական ճակատը՝ Էստոնիայում, Սայուդիսը՝ Լիտվայում), այլև կուսակցական և պետական առաջնորդները⁶, հանգամանք, որը թույլ տվեց տնտեսական վերափոխումներին պետական մակարդակով նախապատրաստվել: Այն ժամանակ (1990 թ. գարնանը), երբ ԱՄՆ-ի 1 դոլարը փոխանակվում էր խորհրդային 15-16 ռուբլով, Էստոնիան ինտենսիվորեն ձեռք էր բերում 45-50 ռուբլով և արժույթային պաշար էր ձևավորում:

Ուշադրության է արժանի նաև Սլովենիայի փորձը: Սլովենիան Հարավսլավիայի Դաշնային Սոցիալիստական Հանրապետություններից (այսուհետև՝ ՀԴՍՀ) առաջինն էր, որն այդ դաշնությունից դուրս գալու հարց էր բարձրացրել: Ի տարբերություն մեզ, հենց սկզբից ազգային անկախության համար պայքարող իշխող քաղաքական ուժն էր՝ Սլովենիայի կոմունիստական միությունը, որի հանդուրժողականությունը քաղաքական բազմակարծության հանդեպ կուսակցական և պետական ղեկավար կադրերին հնարավորություն տվեց անկախ Սլովենիայի կենտրոնական և տեղական իշխանությունների վերին օղակներում հայտնվելու (Կոմունիստների միության նախկին առաջնորդը դարձավ Սլովենիայի առաջին նախագահը, իսկ նախկին ՀԴՍՀ-ի նախագահության նախագահը՝ կոալիցիոն կառավարության ղեկավարը): Օգտագործվեցին նախկին իշխանությունների փորձն ու հմտությունները, որոնք հնարավորություն ընձեռեցին շատ կարճատև տնտեսական անկումից հետո (1991-1992 թթ.) արձանագրելու մակրոտնտեսական վիճակի կայունացում և տնտեսության արագ զարգացում: Միայն 1993-1995 թթ. արտաքին առևտրաշրջանառության ծավալները տարեկան աճել են միջին հաշվով 60%-ով, արտահանման ծավալները՝ 72%-ով⁷: XXI դ. շեմին ամսական միջին աշխատավարձը գերազանցում էր 1000 դոլարը, իսկ մեկ շնչին ընկնող ազգային եկամտի մեծությամբ Սլովենիան հավասարվել էր Հունաստանին և Պորտուգալիային (10 հազ. դոլար)⁸:

Համաշխարհային տնտեսական համաժողովում, 2019 թ. Համաշխարհային մրցունակության զեկույցի համաձայն, վերջին տարիներին 2.1 մլն բնակչություն ունեցող Սլովենիայում տնտեսության զարգացման տեմպերը կտրուկ նվազել են: ՀՆԱ-ն 2008-2018 թթ. տարեկան միջին հաշվով աճել է 1.6%-ով, 2013-2018 թթ.՝ 1%-ով, 1 շնչի հաշվով 2018 թ. ՀՆԱ-ն կազմել

⁶ Самонис 1995, 7.

⁷ Князев 2000, 50.

⁸ Князев 2000, 51.

է 26234 դոլար⁹: Նույն ժամանակահատվածում Հստոնիայում այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 3.2 ու 3.7% և 22990 դոլար¹⁰:

Առավել ուսանելի է Չինաստանի փորձը: Դեռևս 1979 թ., ՉԺՀ կոմկուսի կենտկոմի քարտուղար Դեն Սյաոպինի նախաձեռնությամբ, երկիրը, գործող տնտեսական համակարգին զուգահեռ, ձեռնամուխ եղավ շուկայական տնտեսակարգի ձևավորմանը: Հապես փոխվեց տնտեսական քաղաքականության ռազմավարությունը¹¹: Համաշխարհային բանկի գլխավոր տնտեսագետ և ավագ փոխնախագահ Ջաստին Իֆու Լինի կարծիքով, Չինաստանն ընտրել էր պրագմատիկ, աստիճանական և երկակի մոտեցում: Մի կողմից, կառավարությունը խրախուսում էր գյուղատնտեսության կոլեկտիվների և պետական ձեռնարկությունների աշխատողների աշխատանքի արտադրողականության բարձրացումը՝ ֆիքսված գներ սահմանել պետական քվոտաներով ապրանքի իրացման նկատմամբ և դրանցից ավելի լինելու դեպքում թույլատրել ապրանքներն իրացնել շուկայական գներով: Միաժամանակ, հովանավորում էր գերակա ոլորտների ոչ կենսունակ մասնավոր ու համատեղ ձեռնարկություններին՝ թուլացնելով սահմանափակումները, ինչպես նաև տնտեսության աշխատատար ճյուղերում խթանելով օտարերկրյա ուղղակի ներդրումները: Այդ ռազմավարության շնորհիվ գերակա ճյուղերում կայունություն է ստեղծել, մյուս կողմից, արդյունաբերության նորացման շնորհիվ՝ տնտեսության արագ աճ է ապահովվել¹²:

Չինաստանը ռազմավարական նպատակ էր դրել 1980-1990 թթ. երկրի ՀՆԱ-ն քառապատկել¹³: Մեր կարծիքով, Չինաստանի տնտեսական հրաշքում ոչ պակաս կարևոր դերակատարում ունեին փորձառու տնտեսական կադրերը՝ բարձրաստիճան կուսակցական նոմենկլատուրայի գլխավորությամբ:

⁹ http://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2019.pdf

¹⁰ http://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2019.pdf

¹¹ Դեն Սյաոպինը այդ ժամանակ Համաշինական ժողովրդական քաղաքական խորհրդատվական խորհրդի 5-րդ գումարման նախագահն էր: Դա ոչ քաղաքական, ոչ էլ պետական մարմին էր: Այն խորհրդատվական միավորում էր, իր բնույթով՝ վերլուծական կենտրոն, որում Չինաստանի հասարակության բոլոր շերտերն ընդգրկող 2000-ից ավել ներկայացուցիչներ էին հավաքվել (դեմոկրատական կուսակցություններ, կրոնական և էթնիկական փոքրամասնություններ, բիզնեսի, գիտության, սպորտի և նյութիսկ՝ զվարճանքի), <https://russian.cgtn.com/news/3d517a5833497a4d78457a6333566d54/p.html>

¹² Раскрывая тайну китайской экономики <https://www.hse.ru/news/50580194.html>

¹³ Карлусов 2009, 126.

Մինչդեռ Հայաստանում ձևավորված իշխանություններին, որոնք մասամբ հետևում էին Եզոր Գայդարի խորհուրդներին, չհաջողվեց իրականացնել հեռատես տնտեսական քաղաքականություն, չնայած անկախացման սկզբում առկա մեզ համար նպաստավոր միջազգային հանրության դրական տրամադրվածությանը:

Հայաստանյան իրողություններ և իրավիճակից դուրս գալու ելքեր՝ պետական մարմիններում հակակշիռների մեխանիզմների ստեղծման միջոցով

Ի տարբերություն բալթյան հանրապետությունների, Սլովենիայի և Չինաստանի՝ Հայաստանը չունեցավ տնտեսական քաղաքականություն իրականացնելու հիմնավոր ծրագիր կամ հայեցակարգ: Չկարողացանք օգտվել 3%-անոց փոխառության տոմսերի փոխանակման, Հայնեարտքանկում ի պահ տրված 45 մլն ԱՄՆ դոլարի օգտագործման և ներդրումներ ներգրավելու այլ հնարավորություններից: Այսօրվա չափանիշներով, թվում է՝ դրանք փոքր գումարներ են, սակայն պետության կայացման և շուկայական տնտեսության զարգացման մեկնարկային միջոցներ էին, որոնք մասնագիտական գիտելիքների և կառավարման փորձի պակասի պատճառով այդ օրվա մեր իշխանությունները ձեռքից բաց թողեցին: Պատրաստ չլինելով անկախությանը՝ մերոնք չօգտվեցին նաև ստեղծված այլ հնարավորություններից: Մասնավորապես, հայկական դրամական միավորը շատ ուշացումով շրջանառության մեջ դրվեց: Նույնիսկ միջինասիական հանրապետություններից խորհրդային ռուբլիները մասնավոր անձինք պարկերով բերեցին և Հայաստանում փոխանակեցին: Պատահական չէ, որ 1990-1994 թթ. հանրապետությունում արձանագրվել է ՀՆԱ-ի արտադրության կտրուկ անկում (53%)¹⁴: Մինչդեռ կարելի էր այդ գործընթացը պետական մակարդակով կազմակերպել և դրսից արտարժույթ և ապրանքանյութական արժեքներ ձեռք բերել՝ նվազագույնի հասցնելով ազգային տնտեսության կորուստները և բնակչության կենսամակարդակի վրա հիպերինֆլացիայի բացասական ազդեցությունը: Հիմնական պատճառը տնտեսության տարբեր ոլորտների կառավարման բազմափորձ կադրերի «խաղից դուրս» մնալն էր, իսկ նրանց փոխարինողները մասնագիտական գիտելիքների և փորձի առումով չէին համապատասխանում իրենց

¹⁴ https://www.armstat.am/file/article/tntbar_91_98a_1.pdf

վստահված ոլորտների կառավարման անհրաժեշտ որակներին և տնտեսության վերակառուցման ու կարգավորման անելիքների վերաբերյալ լիարժեք պատկերացում չունեն¹⁵:

Վերջին երկու տարիների զարգացման տեմպերը օբյեկտիվորեն չեն գոհացնում ազգաբնակչության սպասումները: Առավել ևս, որ այդ սպասումները անցած մոտ 30 տարիների ընթացքում ձնագնդի պես մեծացել են: Հայաստանի իշխանությունները կամ չեն հասցրել, կամ չեն կարողացել, կամ, լավագույն դեպքում՝ «օրվա խնդիր են լուծել»: Չի կարևորվել ռազմավարական նշանակության՝ 50 և ավել տարիների համար (էլ չենք խոսում՝ 100 տարվա մասին) հայեցակարգերի և ծրագրերի մշակումը: Չունենք պետական մակարդակով հաստատված ազգային գերնպատակ, որի շուրջ պետք է ձևավորվի ազգային գաղափարախոսությունը, որից էլ ուղղորդվի երկրի զարգացումը¹⁶: Պատճառները շատ են¹⁷: Անդրադառնանք պետական մեքենայի անարդյունավետ կառավարմանը: Հայաստանում հայեցակարգերն ու ծրագրերը, որպես կանոն, պատրաստվել են նախարարությունների աշխատակազմերի ուժերով: Բայց օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների հետևանքով պատասխանատու մարմինները զբաղված են եղել ոչ թե իրենց գործառնություններով պայմանավորված արդյունավետ գործունեությամբ, այլ վերադասի հանձնարարությունները անխոս կատարելու պատրաստակամությամբ¹⁸: Ե՛վ ժամանակի, և՛ պրոֆեսիոնալիզմի առումով նրանք ի գորու չէին որակյալ վերլուծություններ կատարել ու հիմնախնդիրների լուծումների համար ստեղծագործ գաղափարներ մշակել և դրանց վերաբերյալ որակյալ փաստաթղթեր ստեղծել: Փորձը ցույց է տալիս, որ թույլ աշխատակազմերի պատճառով անգամ առանձին դեպքերում մասնագիտացված խորհրդատվական կազմակերպությունների կողմից մշակված ծրագրերի հետագա կառավարումը չինովնիկների համար ուժից վեր գործ է եղել¹⁹: Դեռ ավելին, նույնիսկ առանձին պետական մարմինների մշակած կարճատև և միջնաժամկետ ծրագրերը լուրջ

¹⁵ Իհարկե, նրանց մի մասը հետագայում դարձավ հմուտ մասնագետ, բայց արդեն եղած հնարավորությունները բաց էին թողնվել:

¹⁶ Միքայելյան 2011, 184, Պողոսյան 2017, <http://www.tert.am/am/news/2017/05/29/tevanpoghosyan/2386969>.

¹⁷ Նկատի ունենալով, որ առաջիկայում դրանց վերլուծությանը առանձին հետազոտություն է նվիրվելու, կսահմանափակվենք սույն հոդվածում դիտարկվող քննարկումով:

¹⁸ Առավել հանգամանալից տե՛ս Միքայելյան 2011:

¹⁹ Միքայելյան 2011, 166:

փորձաքննություն չեն անցնում շահագրգիռ պետական այլ մարմիններում: Նման իրավիճակին նպաստել են նաև ՀՀ նախագահի հրամանագրերով հաստատված՝ կառավարության գործունեության կարգերը²⁰: Կառավարության նիստերը, որպես կանոն, հրավիրվում են շաբաթը մեկ անգամ, իսկ նշված կարգերի (համապատասխանաբար՝ կետ 40 և կետ 78) համաձայն, կառավարության նիստերին կառավարության անդամներից բացի, խորհրդակցական ծայնի իրավունքով մասնակցում են հրավիրյալներ: Նիստերի օրակարգերին և դրանցում քննարկվող հարցերի փաստաթղթերին մասնակիցները ծանոթանում են այդ նիստերից առնվազն երեք օր առաջ: Բնականաբար, նման կարճ ժամանակահատվածում երկրի տնտեսության զարգացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալը (պետական բյուջեի, միջնաժամկետ ծախսային ծրագրերի, հեռանկարային զարգացման ծրագրերի, ամբողջ երկրի և տնտեսության առանձին ոլորտների ու հատվածների զարգացման հայեցակարգերի ու ծրագրերի նախագծերի), դրանք վերլուծելը և դրանց վերաբերյալ հիմնավորված կարծիք ներկայացնելն անհնար են:

Պետական կառավարման համակարգի արդյունավետ գործունեությանը գրեթե չի նպաստում նաև դեռևս նախորդ իշխանության օրոք ընդունված՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքը (30.03.2018, ՀՕ-253-Ն ՀՀ օրենք): Ճիշտ է, այս օրենքի ընդունումով զգալիորեն ավելացել է ՀՀ կառավարության նիստերում քննարկվող հարցերին առնչվող փաստաթղթերին ծանոթանալու ժամանակահատվածը (Օրենքի 12-րդ հոդվածի ուժով կառավարության հաստատած աշխատակարգը նման հնարավորություն տալիս է): Բայց դրանով հանդերձ, օրենքի ընդունումից հետո՝ անցած երկու տարվա ընթացքում, տնտեսության զարգացմանը նպաստող որևէ լուրջ փաստաթուղթ չըջանառության մեջ չի դրվել: Դեռ ավելին, առանձին որոշումներում առկա են աղաղակող սխալներ: Այսպես, օրինակ, «լուրջ փորձաքննություն անցած» 2020 թ. պետական բյուջեում նախատեսվում է եկամուտների աճ 13%-ով, իսկ ծախսե-

²⁰ Հայաստանի Հանրապետության նախագահի 16 մարտի 2002 թ. ՆՀ-1064 հրամանագրով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության կարգը, Հայաստանի Հանրապետության նախագահի 2007 թ. հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը:

րի՝ 14.1%-ով: Այն դեպքում, երբ ՀՆԱ-ի աճը նախատեսվել է 4.9%: Պատասխանատու մարմինները դրսևորել և դրսևորում են կա՛մ անտարբերություն, կա՛մ անիմացություն: Պատճառներից մեկը կատարող մարմինն հակակշիռ մյուս պետական մարմինների պատասխանատվության բացակայությունն է, նաև հարաբերությունները «չփչացնելու» վարքագիծը («Ես քեզ չեմ խանգարի, դու էլ ինձ չխանգարես»): «ԿԲ-ն տնտեսության, բիզնեսի, հանրության և կառավարության շահերի անտեսման հաշվին աշխատում է ինքնաբավարարման և ինքնաապահովագրման ամենախիստ ռեժիմով, որից տպավորություն է ստեղծվում, թե ամբողջ երկրի կոչումը ԿԲ-ի գլխավորած բանկային համակարգին բոլոր տեսակի ռիսկերից պատնեշելն ու նրա գերշահույթների ապահովումն է»²¹: Այս խոսքերի ճշմարտության մասին վերջերս «Պրեսսինգ» հաղորդաշարում հարցազրույցի ժամանակ փաստեց նաև ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բազրադյանը²²: Մասամբ դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով, Հայաստանի տնտեսությունը 2009 թ. ավելի քան 14% անկում ապրեց, բայց բանկային համակարգը օգուտով աշխատեց:

Պատահական չէ, որ տնտեսության զարգացման պետական պատասխանատու երեք հիմնական մարմինները՝ էկոնոմիկայի և ֆինանսների նախարարությունները և Կենտրոնական բանկը, անկախության տարիների ընթացքում իրենց վարքագծով հիշեցրել են Կռիլովի հայտնի առակի հերոսներին: Գուցե այս և կառավարության գործունեության այլ բացեր նկատի ունենալով՝ Սահմանադրության 161-րդ հոդվածով նախատեսվել է ստեղծել կառավարության խորհրդակցական մարմին՝ Հանրային խորհուրդ: Սակայն Օրենքով նախատեսված՝ դրա ձևավորման և գործունեության կարգը, գործառույթները խիստ սահմանափակում են խորհրդի արհեստավարժ հնարավորությունները, անաչառությունը և անկախությունը²³:

Տնտեսական հարաբերությունները կարգավորող օրենսդրական բացերի և տնտեսական քաղաքականության սխալների պատճառներից մեկն էլ պետական մարմիններում պրոֆեսիոնալիզմի ցածր մակարդակն

²¹ Միքայելյան 2011, 171:

²² <https://blog.168.am/blog/264461.html>

²³ Տե՛ս «Հանրային խորհրդի մասին» ՀՀ օրենք, <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=6226&lang=arm>

է: Այն Հայաստանի բոլոր իշխանությունների օրոք էլ եղել է կադրային քաղաքականության «աքիլլեսյան գարշապարը»²⁴:

Զարգացած պետական ապարատ ունեցող երկրների համար կենսական նշանակություն ունեցող ռազմավարությունների, ծրագրերի, քաղաքականությունների, օրենսդրական կարգավորման մեխանիզմների մշակման կամ գնահատման առումով մեծ դերակատարումներ են ունեցել և ունեն պետական խորհրդատուների ինստիտուտները²⁵: Այդպիսի ինստիտուտները ստեղծվել են կա՛մ ժամանակավոր՝ տնտեսության մեջ առաջացած որոշակի խնդիրներ, կա՛մ երկրի առջև ծառացած ընթացիկ և հեռանկարային հարցեր լուծելու նպատակով: Այսպես, դեռևս 1956 թ. ԱՄՆ-ի նախագահ Էյզենհաուերը նախագահին կից ստեղծել էր արտաքին հետախուզության գծով խորհրդատվական մարմին: Դրա նմանությամբ, 2008 թ. տնտեսական ճգնաժամը հաղթահարելու համար նախագահ Բարաք Օբաման երկու տարի ժամկետով (անհրաժեշտության դեպքում երկարաձգելու հնարավորությամբ) 2009 թ. փետրվարի 6-ի հրամանագրով նախագահին կից ստեղծեց խորհրդատվական մարմին՝ Տնտեսության վերականգնման խորհրդատվական մարմին²⁶: Դրանում ընդգրկվեցին ոչ պետական բիզնեսի, արհմիութենական կազմակերպությունների և ակադեմիական միջավայրի ներկայացուցիչներ (Ֆեդերալ ռեզերվային համակարգի նախկին նախագահը՝ որպես խորհրդի նախագահ, խոշոր բիզնեսի 9 ներկայացուցիչ, որոնցից մեկը Ֆեդերալ պահուստային համակարգի նախկին փոխնախագահը, Արժեթղթերի առևտրի հանձնաժողովի նախագահը, Արհմիությունների միության նախագահը, Արհմիությունների ամերիկյան դաշնության քարտուղար-գանձապահը, բուհական համակարգի երեք ներկայացուցիչ, որոնցից մեկը՝ Տնտեսական հետազոտությունների բյուրոյի նախկին նախագահը):

ԱՊՀ երկրներից Նախագահին առընթեր խորհրդատվական մարմին ստեղծելու փորձ կատարեց Տաջիկստանը: Երկրի Նախագահի՝ 2007 թ. դեկտեմբերի 19-ի թիվ 354 հրամանագրով ստեղծվեց Նախագահին առըն-

²⁴ Դրան մենք տարբեր աղիթներով անդրադարձել, հիմնախնդիրները լուծելու առաջարկություններ ենք մշակել: Մասնավորապես, առաջարկել ենք կադրային անկախ և թափանցիկ բանկ ձևավորելու և պետական համակարգը ղեկավար կադրերով ապահովելու մեխանիզմ (Տե՛ս Միքայելյան 2019):

²⁵ Միքայելյան 2011, 188-190:

²⁶ [https://ru.wikipedia.org/wiki/консультативный совет по экономическому восстановлению](https://ru.wikipedia.org/wiki/консультативный_совет_по_экономическому_восстановлению)

թեր ներդրումային միջավայրի բարելավման խորհրդատվական մարմին, և հաստատվեց դրա կանոնադրությունը (խմբագրված՝ նախագահի 15.07.2019 թ., թիվ 1281 հրամանագրով), համաձայն որի՝ այդ պետական կառույցը բաղկացած է նախագահից (հանձին երկրի նախագահի), 21 անդամից (որոնցից 4-ը՝ մշտական): Նպատակը պետության և բիզնեսի ներկայացուցիչների միջև երկխոսություն սկսելն էր և ձեռներեցության զարգացման ու ներդրումային միջավայրի բարելավմանն աջակցելը²⁷:

Տնտեսական խորհրդատվական մարմին գործել է նաև Ռուսաստանի Դաշնության նախագահին առընթեր (16.07.2012 թ. ՌԴ նախագահի թիվ 1001 հրամանագրով): Խորհրդի նպատակն էր տնտեսության կայուն զարգացումը և տեխնոլոգիաների նորացումն ապահովող՝ դրա իրացման ռազմավարության ու մարտավարության մեխանիզմների որոշումը, ՌԴ սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունների առաջարկությունների նախապատրաստումը: Խորհրդի կազմում ՌԴ նախագահի գլխավորությամբ ընդգրկվեցին պետական կառավարման համակարգի պաշտոնատար անձինք (նախագահի աշխատակազմի պատասխանատու աշխատողներ, կառավարության ղեկավարի երեք տեղակալ, երեք նախարար, ԿԲ-ի նախագահը, ՌԴ նախագահի խորհրդականը և երկու օգնական), բուհերի ղեկավարներ, գիտահետազոտական կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների ղեկավարներ, բիզնեսի գլխավոր տնօրեններ և ուրիշներ²⁸:

Ինչպես ցույց է տալիս վերոհիշյալ երեք երկրների խորհրդատվական մարմինների կազմավորման իրողությունը, դրանք ստեղծվել են նախագահներին առընթեր կարգավիճակով: Դրանց կազմի ձևավորման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում ներառված են բիզնեսի ներկայացուցիչներ, նախկին և գործող բարձրաստիճան պաշտոնյաներ, ակադեմիական միջավայրի աշխատողներ: ԱՄՆ-ի խորհրդատվական մարմնում ներառված են նաև արհմիութենական կազմակերպությունների միության ներկայացուցիչներ: Ի տարբերություն ԱՄՆ-ի, ՌԴ-ի և Տաջիկստանի Հանրապետության՝ խորհրդատվական մարմինների նախագահները միաժամանակ նաև այդ երկրների նախագահներն են: Մեր կարծիքով, արդարացված չէ երկրի նախագահի և խորհրդատվական մարմնի

²⁷ <http://www.adlia.tj/showdoc.fwx?rgn=12019>

²⁸ <http://pravo.gov.ru/proxy/ips/?docbody=&firstDoc=1&lastDoc=1&nd=102158191>

նախագահի պաշտոնների համատեղումը: Խորհրդատվական մարմինը արդյունավետ կգործի, եթե դրա ձևավորման և գործունեության հիմքում դրված լինի հակակշիռների մեխանիզմը:

Հակադրությունը՝ ահա թե ինչն է իրականում առաջ մղում աշխարհը²⁹: Հակակշիռների, հակադիր գաղափարների ու կարծիքների առկայությունը ամեն մի երևույթի մեջ դրա զարգացման համար անհրաժեշտ նախադրյալ է: Դիալեկտիկայի վերաբերյալ հեգելյան այս ճշմարտությունն ընկած է բնական և հասարակական երևույթների զարգացման հիմքում: Եթե գոյություն ունեցող ինչ-որ բան ի վիճակի չէ իր մեջ պահել հակասությունը, ապա այն կենդանի միասնություն չէ³⁰:

Դրանով պայմանավորված՝ նման մարմինների ձևավորման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ներքոհիշյալ պահանջները.

- 1) Խորհրդի անդամների միջև ենթակայության բացակայություն,
- 2) տնտեսական հիմնական բնագավառները համակարգող գործող պաշտոնյաների առկայություն (այսուհետև՝ ի պաշտոնե անդամներ),
- 3) տնտեսագիտական խոր գիտելիքներ և գործնական աշխատանքի հարուստ փորձառություն ունեցող անձինք (այդ թվում՝ պետական կառավարման համակարգում), գիտության և (կամ) բարձրագույն կրթության բնագավառի տնտեսագետ գիտնականներ (այսուհետև՝ գիտնական կառավարիչներ),
- 4) կառավարման ղեկավար աշխատանքի երկարատև փորձ ունեցող կառավարիչներ (այսուհետև՝ բազմափորձ կառավարիչներ),
- 5) խոշոր բիզնեսի, ինչպես նաև սպառողների ու գործարարների շահերի պաշտպանության, ձեռնարկատիրության զարգացման ու աջակցության հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (այսուհետև՝ հրավիրվող անդամներ):


Վերոհիշյալ նկատառումներից ելնելով, կարծում ենք, անհրաժեշտություն է ՀՀ կառավարությանը (կամ ՀՀ վարչապետին) առընթեր նման խորհրդատվական մարմին ստեղծելը: Նման մարմնի ձևավորման ու գործունեության մի տարբերակ ներկայացրել ենք սույն հետազոտության մեջ (տե՛ս գծ.):

²⁹ Гегель 1929, 206.

³⁰ Гегель 1971, 66.

Գծապատկեր

Վարչապետին (կառավարությանը) առընթեր խորհրդատվական մարմնի ձևավորման սխեմայի տարբերակ



Այդ մարմինը պետք է բաղկացած լինի մշտական և հրավիրվող անդամներից: Մշտական անդամների թիվը յոթն է (նվազագույնը): Հրավիրյալ անդամների թիվը՝ ըստ անհրաժեշտության: Մշտական անդամներից երեքը՝ ի պաշտոնե (ՀՀ ԿԲ նախագահ, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարներ), երկուսը՝ գիտնական կառավարիչներ և երկուսը՝ բազմափորձ կառավարիչներ: Ի պաշտոնե անդամները Խորհրդի կազմում ներառվում են պաշտոնն ստանձնելուն պես: Ոչ ի պաշտոնե անդամները, ՀՀ վարչապետի որոշմամբ, կադրային բանկից նշանակվում են 12 տարի պաշտոնավարման ժամկետով (առաջին կազմի անդամները նշանակվում են երեք, վեց, ինը և տասներկու տարի պաշտոնավարման ժամկետներով): Ժամկետից շուտ անդամությունը դադարեցնող Խորհրդի անդամի փոխարեն նշանակվող անձի պաշտոնավարման ժամկետը նշանակվում է դուրս եկած անդամի պաշտոնավարման մնացած ժամանակահատվածով: Մեկ տարուց պակաս պաշտոնավարման ժամկետ մնալու դեպքում նոր անդամի պաշտոնավարման ժամկետը նշանակվում է 12 տարի և մնացած ամիսները: Ինը տարի և ավել պաշտոնավարման ժամկետ ունեցող անձը չի կարող երկրորդ անգամ անընդմեջ նշանակվել

նույն պաշտոնում: Նոր նշանակվող անդամը պետք է բավարարի դուրս եկող անդամին ներկայացվող պահանջները (գիտնական կառավարչի կամ բազմափորձ կառավարչի): Խորհրդատվական մարմնի տնօրենը նշանակվում է ռոտացիայի սկզբունքով՝ ոչ ի պաշտոնե նշանակված այդ մարմնի անդամներից: Այն անդամը, որի պաշտոնավարման ժամկետը լրանում է առաջինը, տնօրեն է նշանակվում մինչև պաշտոնավարման ժամկետի ավարտը:

Խորհրդատվական մարմնի եզրակացությունը հաստատվում է անդամների ձայների առնվազն երկու երրորդի կողմ քվեարկելու դեպքում: Հաստատված եզրակացությունը խորհրդատվական բնույթ է կրում, և կառավարության նիստի օրակարգում ընդգրկված հարցի քննարկման ժամանակ ներկայացնում է խորհրդատվական մարմնի տնօրենը: Եզրակացությունը հասանելի է հանրությանը (տեղադրվում է կառավարության կայքէջում):

Եզրակացություններ

Անկախացման տարիների ընթացքում պետական կառավարման մեքենայի գործունեությունը երբևիցե չի փայլել արդյունավետությամբ: Պատճառներից մեկը՝ պետական մարմինները, որպես կանոն, «օրվա խնդիր են լուծել»: Այդ մեքենայի գործունեության հիմքում չի եղել հակադրությունների միասնություն: Դրանով է պայմանավորված տնտեսության բոլոր ոլորտներում արհեստավարժության պակասը:

Հիմնախնդրի լուծմանը էապես կարող է նպաստել արհեստավարժության հիմքով և գործունեության թափանցիկությամբ Վարչապետին առընթեր անկախ խորհրդատվական մարմնի ստեղծումը:

Գրականություն

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքը (30.03.2018, ՀՕ-253-Ն ՀՀ օրենք):

Հայաստանի Հանրապետության նախագահի 16 մարտի 2002 թ. ՆՀ-1064 հրամանագրով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության կարգը:

Հայաստանի Հանրապետության նախագահի 2007 թ. հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և

- նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը:
- 2020 թ. պետական բյուջեի մասին ՀՀ օրենք: <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=6851&lang=arm> (02.07.2020):
- Միքայելյան Մ.Վ. 2011, Հայաստանն արդիականացման մարտահրավերի առջև. Պետական մեքենայի և տնտեսության բարեփոխման հիմնախնդիրները, ՎԷՄ համահայկական հանդես, N 3 (35), Երևան, էջ 156-205:
- Միքայելյան Մ. 2006, Մենաշնորհները Հայաստանում. Տնտեսության զարգացման խթան, թե՞ խոչընդոտ, Սոցիալիստական մոտեցումներ Հայաստանի մարտահրավերներին. Գլոբալ հեռանկարներ-տեղական իրողություններ թեմայով խորհրդաժողովի նյութեր, Երևան, էջ 335-343:
- Միքայելյան Մ. 2019, ՀՀ պետական ինքնավար մարմինների գործունեության անկախության ապահովման հրամայականը, Էկոնոմիկա գիտական, N 1, Երևան, էջ 69-75:
- Պողոսյան Թ. 2017, <http://www.tert.am/am/news/2017/05/29/tevanpoghosyan/2386969>.
- Карлусов В. 2009, Китай: антикризисный потенциал экономики и меры борьбы с мировым кризисом, Вопросы экономики, N 6, с. 125-136.
- Князев Ю. 2000, Экономический феномен Словении, Вопросы экономики, N 6, с. 48-54.
- Раскрывая тайну китайской экономики <https://www.hse.ru/news/50580194.html> (02.07.2020).
- Розенфельд И., Политическое развитие Эстонии в 1991-1996 гг. <https://kripta.ee/rosenfeld/1996/07/31/politicheskoe-razvitiie-estonii-v-1991-1996-gg/> (02.07.2020).
- Самонис В. 1995, Трансформация литовской экономики: от Москвы к Вильнюсу и от плана к рынку, перевод с английского Алексея Рогинко, Варшава, сентябрь, 35 с. [https://ru.wikipedia.org/wiki/консультативный совет по экономическому восстановлению](https://ru.wikipedia.org/wiki/консультативный_совет_по_экономическому_восстановлению) (29.06.2020).

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱԿԱԿՇԻՐՆԵՐԻ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Միքայել Միքայելյան

Ամփոփում

Հայաստանի Երրորդ հանրապետության տնտեսության կառավարման հիմնական խոչընդոտը հակակշիռների մեխանիզմների բացակայությունն է: Կադրերի ընտրության հարցում, որպես կանոն, տնտեսության բոլոր օղակներում իշխանությունները չեն առաջնորդվել արհեստավարժության հատկանիշներով, որը բացասաբար է անդրադարձել տնտեսության զարգացման վրա:

Առաջարկվում է հանրության համար տնտեսության կարգավորման հակակշիռների թափանցիկ մեխանիզմ կիրառել՝ կառավարությանը կամ վարչապետին կից ստեղծելով տնտեսական-խորհրդատվական մարմին՝ դրանում ընդգրկելով էկոնոմիկայի ու ֆինանսների նախարարներին, ԿԲ

նախագահին, կայուն ժամկետով՝ կառավարման բազմափորձ, առնվազն երկուական տնտեսագետ գիտնականների և մասնագետների, ինչպես նաև թիզնեսի ներկայացուցիչներից և (կամ) հասարակական կազմակերպություններից հրավիրյալ անդամների (ըստ անհրաժեշտության):

Բանալի բառեր՝ հակակշիռների մեխանիզմ, խորհրդատվական մարմին, վարչապետ, գիտնական կառավարիչներ, բազմափորձ կառավարիչներ, մշտական անդամներ, հրավիրվող անդամներ:

О ВОПРОСЕ ФОРМИРОВАНИЯ МЕХАНИЗМА ПРОТИВОВЕСОВ РЕГУЛИРОВАНИЯ ЭКОНОМИКИ РА

Микаел Микаелян

Резюме

Основным препятствием в управлении экономикой Третьей Республики Армения является отсутствие механизмов противовесов. Во всех сферах экономики при отборе кадров властями, как правило, не учитывается профессионализм, что негативно сказывается на экономическом развитии.

В свете сказанного предлагается использовать механизм экономических противовесов – путем создания консультативно-экономического органа при правительстве или премьер-министре, в состав которого должны войти министры экономики и финансов, председатель Центрального банка, учёные-экономисты с многолетним опытом работы и специалисты по управлению экономикой, а также представители бизнеса и (либо) приглашаемые члены общественных организаций (исходя из необходимости).

Ключевые слова – механизм противовесов, консультативный орган, премьер-министр, ученые-менеджеры, мультиопытные менеджеры, постоянные члены, приглашаемые члены.

ON THE QUESTION OF FORMATION OF MECHANISM FOR REGULATION OF COUNTERBALANCE IN RA ECONOMY

Mikayel Mikayelyan

Abstract

The main obstacle to managing the economy of the Third Republic of Armenia is the lack of counterbalance mechanisms. In the selection of personnel, as a rule, in all spheres of economy, authorities are guided by non professional approaches, which have a negative impact on economic development.

It is proposed to apply a mechanism of economic balances transparent to society - by creating an advisory and economic body under the government or the prime minister, which includes the ministers of Economics and Finance, the chairman of the Central Bank, scientists-economists and specialists with great practical experience, as well as invited members from business and (or) public organizations (if necessary).

Key words – balance mechanism, advisory body, Prime Minister, academic managers, multi-experienced managers, permanent members, invited members.

ՀՀ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄՈՂԵԼԸ¹

Գայանե Հարությունյան

Տնտեսագիտության թեկնածու

ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարան

ՀՀ, Երևան, Կարապետ Ուլենցու փող. 56/6

Էլ. հասցե՝ gharutyunyan@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 22.06.2020, գրախոսվել է 30.06.2020, ընդունվել է
տպագրության 01.03.2021

Ներածություն. գիտական խնդրադրում

Սառը պատերազմից հետո շրջանառության մեջ դրվեց «խաղաղության դիվիդենտ» հասկացությունը, որը նկարագրում է տնտեսության հնարավոր օգուտները ռազմական ծախսերի կրճատումից՝ որպես այլ ոլորտներում պետական ծախսերի առավել արդյունավետ վերաբաշխման հետևանք: Հետագայում այն հաստատվեց արևմտյան զարգացած պետությունների, ինչպես նաև Իսրայելի օրինակով: Իսրայելում մասնավորապես ռազմական բյուջեն սկսեց կրճատվել այն պահից սկսած, երբ տնտեսությունն անցում կատարեց անշրջելի տնտեսական աճի փուլ: «Խաղաղության դիվիդենտի» տեսությունը, իհարկե, որոշակի հիմք տալիս է հավատալու, որ գոյություն ունի *ինչ-որ* կախվածություն կրճատվող ռազմական ծախսերի և աճող տնտեսության միջև: Սակայն ռազմական ծախսերի և տնտեսական աճի միջև փոխկախվածության մասին դատողությունները երբեք էլ ապոդիկտիկ ճշմարտություններ չեն եղել՝ գիտնականների համար մշտապես պարարտ հող ապահովելով բովանդակային բանավեճերի համար: Օրինակ, ռազմական ծախսերի ու տնտեսական աճի միջև փոխկախվածության իմ երկու հետազոտություններից մեկը ցույց է տալիս, որ Հայաստանում ռազմական ծախսերը չեն ազդել տնտեսական աճի վրա, այլ հակառակը՝ մեկ տարի ժամանակային լագով պայմանավորվել են ՀՆԱ-ի ցուցանիշով², իսկ ըստ երկրորդի՝ այն պետություններում, որոնք ունեն հայրենական քիչ թե շատ զարգացած ռազմարդյունաբերություն, ռազմա-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ **19T-5B12** ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

² Harutyunyan 2018, 5.

կան ծախսերի աճը խթանում է տնտեսական զարգացումը³: Հակասական ոչինչ չկա: Պարզապես առաջին հետազոտությունում տեղական ռազմարդյունաբերության առկայության գործոնը հաշվի չէր առնվել, մինչդեռ ռազմական ծախս-տնտեսական աճ փոխանցման շղթայում այն առանցքային նշանակություն ունի: Նմանապես, իմ կարծիքով, միակողմանի են մեկնաբանվում «խաղաղության դիվիդենտի» փաստերը: Նույն Իսրայելի դեպքում անհերքելի է, որ տնտեսական աճի շարժիչ ուժը 1950-ականների վերջից ռազմարդյունաբերությունն էր, որն աստիճանաբար ամբողջ տնտեսությանը հաղորդեց գիտահետազոտության կողմնորոշում:

Հայտնի է, որ երկար ժամանակ ռազմարդյունաբերությունը գիտատեխնիկական փոփոխությունների առանցքն է եղել, որտեղից նոր տեխնոլոգիաները փոխանցվել են քաղաքացիական ոլորտ: Սակայն արդյո՞ք հիմա, երբ տեղի է ունենում հակառակ գործընթացը, և նորարարական տեխնոլոգիաները քաղաքացիական ոլորտից են տեղափոխվում ռազմական ոլորտ⁴, խաղաղությունից «դիվիդենտների» ստացման նույն շղթան կարող է գործել այն պետությունների համար, որոնք որոշել են զարգացնել տնտեսությունը՝ կրճատելով ռազմական ծախսերը: Հարցադրումն արդիական է Հայաստանի համար, որտեղ նոր տնտեսական քաղաքականության շրջանակներում նպատակ է դրված ռազմական ծախսերի բեռը վերածել նոր տնտեսական հնարավորությունների:

Մյուս կողմից ակնհայտ է, որ Հայաստանը «անվտանգություն, թե տնտեսություն» երկընտրանքում գոնե հիմա պետք է ընտրի անվտանգությունը: Սակայն կա ևս մի խնդիր. արդյո՞ք տեսանելի ապագայում հնարավոր է արտադրել այնպիսի սպառազինություններ, որոնք անվտանգային իրական երաշխիքների գործառույթ կունենան: Քանզի եթե երկիրը դրանք չարտադրի, ապա պետք է ներմուծի, իսկ ներմուծման դիմաց վճարելու համար պետք է ունենա կենսունակ տնտեսություն: Հնարավորությունների սահմանափակության և առաջադրվող խնդիրների անհամարժեքության փակ շրջան է ստեղծվում, որից ելքը կարող է լինել «պատերազմին պատրաստվելու» մեջ, իսկ դա նշանակում է տնտեսությունն աստիճանաբար բերել այնպիսի կառուցվածքի, որ կարողանա ճկուն արձագանքել հնարավոր պատերազմական իրավիճակին՝ շարունակելով ապա-

³ Հարությունյան 2019, 9-28:

⁴ Congressional research service 2019, R45178.

հովել տնտեսական զարգացման տեմպեր: Դրան կարելի է հասնել զարգացած ռազմարդյունաբերություն ունենալով: Սակայն ինչպե՞ս *վերափոխել* տնտեսության կառուցվածքը և զարգացնել ռազմական արդյունաբերությունը: Փորձենք այս հարցադրումները քննարկել ժամանակակից մարտահրավերների, առկա հնարավորությունների և խոչընդոտների համատեքստում:

Ռազմարդյունաբերության ոլորտի առանձնահատկությունները

Երբեք հստակ չի եղել, թե որ արտադրական ոլորտներն են ներառվում ռազմարդյունաբերության մեջ: Եթե խոսքը վերաբերում է ռազմական նշանակության արտադրանքի թողարկմանը, ապա այդպիսիք կարելի է համարել մեքենաշինության ռադիոէլեկտրոնային, օպտիկամեխանիկական, սարքաշինական և այլ ենթաճյուղերը, քիմիական և թեթև արդյունաբերության որոշ ենթաճյուղեր, ՏՏ ոլորտում ծրագրային ապահովման ճյուղը, երկակի նշանակության արտադրանք թողարկող ոլորտները և այլն: Այնուամենայնիվ, տնտեսական քաղաքականության մշակման տեսանկյունից կարելի է հատկորոշել ռազմարդյունաբերության՝ որպես տնտեսական ոլորտի որոշ առանձնահատկություններ.

Պետության էական մասնակցությունը: Բազմաթիվ պետություններում տեղական ռազմարդյունաբերության զարգացման հիմքում կառավարության սուբսիդիաներն են և արտոնյալ գնումները⁵: Պետությունը, լինելով ռազմական նշանակության արտադրանքի, աշխատանքների ու ծառայությունների միակ գնորդը՝ մոնոպսոնիստը, կարող է մեծապես պայմանավորել տեղական ռազմարդյունաբերության կառուցվածքը, շահութաբերության մակարդակը, արտադրվող սպառազինության գները:

Արտադրական ծախքերի բարձր մակարդակը և միջոցները: Ռազմական արտադրությունը սովորաբար ենթադրում է բարձր արտադրական ծախքեր, ընդ որում, ժամանակի ընթացքում այդ ծախքերն աճելու միտում են դրսևորել: Օրինակ, 1945 թ. ի վեր ռազմական ինքնաթիռների արտադրության իրական միջին ծախքերն աճել են տարեկան մոտ 11,5%-ով, որի հետևանքով ընդամենը մեկ տասնամյակում տակտիկական ռազմական ինքնաթիռների իրական գներն աճել են մոտ 2,5 անգամ: Նման միտումները, իհարկե, արտացոլում են Երկրորդ համաշխարհային պատերազմից

⁵ Hartley 2000, 106-108.

հետո ընկած ժամանակահատվածում սպառազինությունների տեխնոլոգիական մրցավազքը, թեև դրանք պահպանվել են նաև հիմա:

Տեխնոլոգիական առաջընթացի մեծ ազդեցությունը: Պատահական չէ, որ ոլորտը համարվում է բարձրտեխնոլոգիական. այն մեծապես կրում է տեխնոլոգիական առաջընթացի ազդեցությունը՝ իր հերթին խթան հանդիսանալով գիտատեխնոլոգիական ոլորտի զարգացման համար: Սակայն եթե Սառը պատերազմից հետո ռազմական ոլորտն էր համարվում տեխնոլոգիական առաջընթացի շարժիչ ուժը, ապա արդեն XXI դարի սկզբից քաղաքացիական արտադրական ոլորտում (հատկապես SS ոլորտում) մասնավոր ընկերությունների իրականացրած հետազոտություններն ու մշակումներն են ավելի արդյունավետ, և ռազմական ոլորտն ավելի հաճախ է սկսել կիրառել դրանք: Այդպես է, օրինակ, արհեստական բանականության ռազմական նշանակությամբ կիրառման պարագայում⁶:

Բարձրորակ աշխատուժի մեծ պահանջարկ: Ոլորտի գիտատարությունն ու տեխնոլոգիատարությունը ենթադրում են, որ աշխատուժի որակի նկատմամբ պահանջները շատ բարձր են: Որպես արդյունք, զարգացած մարդկային կապիտալ ունեցող պետությունները սովորաբար ունեն նաև զարգացած ռազմական արդյունաբերություն: Կարևոր է հատկապես ինժեներատեխնիկական մասնագիտությամբ որակյալ և փորձառու մասնագետների առկայությունը:

Արտադրական ծախքերի տնտեսման սահմանափակ հնարավորությունը: Ինչպես գիտենք, արտադրողները ձգտում են ընդլայնել արտադրության ծավալները, որպեսզի կարողանան տնտեսել միավորի հաշվով արտադրական ծախքերը: Սակայն ռազմարդյունաբերության ոլորտում ծախքերի տնտեսման այս մեխանիզմի կիրառումն այնքան էլ հեշտ չէ, քանի որ ՍՌՏ-ի միջազգային առևտուրը, որը հիմնականում իրականացվում է միջպետական պայմանագրերով, դժվար է ենթարկվում գնագոյացման ընդհանուր սկզբունքներին: Փոքր երկրները, որոնք ձգտում են ռազմարդյունաբերություն զարգացնել սեփական կարիքների բավարարման նպատակով, կարող են բախվել մասշտաբից դրական էֆեկտի անհնարինության խնդրին և գնային առումով անմրցունակ գտնվել ներմուծված համանման արտադրատեսակների համեմատությամբ:

⁶ Congressional Research Service 2019, R45178.

Թվարկված առանձնահատկությունները պայմանավորել են սպառազինությունների համաշխարհային շուկայում մենաշնորհացման բարձր աստիճանը, որը բարդացնում է ռազմարդյունաբերության զարգացման տեսլականի իրագործումը հատկապես փոքր երկրների համար: Բազմաթիվ երկրներ կարողացել են հաղթահարել այս դժվարությունը՝ փորձելով համաշխարհային շուկա մուտք գործել այլ պետությունների հետ համագործակցության միջոցով (օրինակ՝ Իսրայելը, Թուրքիան, Հարավային Կորեան, Սինգապուրը): Ռազմարդյունաբերության ոլորտում միջազգային համագործակցությունը կարող է հնարավորություն տալ ոչ միայն հաղթահարելու մասշտաբի էֆեկտի հասնելու խոչընդոտները, այլև նվազեցնելու տեխնոլոգիական խզումը՝ երկրների միջև ԳՀՓԿԱ-ների ծախսերի որոշակի վերաբաշխման շնորհիվ: Որպես կարևոր եզրակացություն՝ արձանագրենք, որ առնվազն ներկայում Հայաստանի ռազմարդյունաբերության զարգացման համար նույնպես միջազգային համագործակցությունն առանցքային նշանակություն ունեցող գործոն է: Ակնհայտ է նաև, որ ռազմարդյունաբերության զարգացման նպատակադրումը չի կարող հիմնավորվել միայն ներմուծման փոխարինման անհրաժեշտությամբ: Չնայած իր էքզիստենցիալ կարևորությանը՝ ներմուծման փոխարինմանը միտված զարգացման տեսլականը այս ոլորտի համար դատապարտված է ձախողման: Խնդիրը ռազմարդյունաբերությունը մասնագիտացման ուղղության վերածելու մեջ է, որին անդրադառնալու ենք սույն հետազոտության հաջորդ բաժնում:

Ռազմարդյունաբերության ոլորտում մասնագիտացման Կրաուզեի աստիճանակարգը

Ռազմարդյունաբերության ոլորտում մասնագիտացման դրդապատճառները հիմնականում երեքն են՝ «հարստություն», «հզորություն», «պատերազմ»⁷: Այսինքն՝ սա այն ոլորտն է, որտեղ մասնագիտացման հիմքում չեն դրվում համեմատական կամ մրցակցային առավելություններ: Պատմությանը քիչ դեպքեր են հայտնի, երբ երկրներն այս ոլորտում մասնագիտացել են՝ հիմք ընդունելով արտադրական ծախսերի արդյունավետությունը, ենթակառուցվածքների, հարակից արտադրությունների կամ ռեսուրսային հարուստ բազայի առկայությունը: Զարգացած ռազմարդյու-

⁷ Krause 1992, 1.

նաբերություն ունեցող պետություններից այդպիսին կարելի է համարել, թերևս, միայն Շվեդիան: Գրեթե բոլոր մյուս պետությունների դեպքում մասնագիտացումը պայմանավորված է եղել կա՛մ հզորանալու ձգտմամբ, կա՛մ էլ որպես դրա մասնավոր դեպք՝ պատերազմում հաղթելու կամ գոնե չպարտվելու ցանկությամբ: Մասնագիտացման հիմքում նշված գործոնների առկայությունը պայմանավորել է ՍՌՏ միջազգային առևտրի կառուցվածքը, դրա տեխնոլոգիատարությունը և մասնակից պետությունների խմբերը.

- ❖ առաջին (ամենաբարձր) մակարդակի արտադրողներ, որոնք արտադրում և մատակարարում են նորարարական և բարձր տեխնոլոգիական արտադրանք,

- ❖ երկրորդ մակարդակի արտադրողներ, որոնք հիմնականում արտադրում են տեխնոլոգիատար սպառազինություններ (իրենց փոխանցված տեխնոլոգիաների շնորհիվ)՝ հարմարեցնելով դրանք կոնկրետ շուկաների պահանջներին,

- ❖ երրորդ մակարդակի արտադրողները հիմնականում վերարտադրում են գոյություն ունեցող տեխնոլոգիաները (իրենց փոխանցված *մշակումների* հիման վրա), սակայն այդպես էլ չեն կարողանում ինքնուրույն նորարարություններ իրականացնել կամ ադապտացնել տեխնոլոգիական ձեռքբերումները,

- ❖ ուժեղ սպառողներ, որոնք կարողանում են ձեռք բերել և օգտագործել ժամանակակից սպառազինություններ,

- ❖ թույլ սպառողներ, որոնք կա՛մ չեն կարողանում ձեռք բերել արդիական ՍՌՏ, կա՛մ էլ կարողանում են ձեռք բերել, բայց չեն կարողանում օգտագործել դրանք⁸:

ՍՌՏ-ի միջազգային առևտուրը նշված հինգ խմբերի միջև գրեթե միշտ կառուցվում է հետևյալ տրամաբանությամբ: Առաջին մակարդակի արտադրողներն ունեն մեծ ներքին շուկա և հնարավորություն ներդրումներ կատարելու ռազմական ԳՀՓԿԱ-ներում: Սրանք հիմնականում սեփական կարիքների համար գերարդիական ՍՌՏ արտադրող պետություններն են, և նրանց ռազմարդյունաբերության զարգացվածությունը կախված չէ արտահանման հնարավորություններից, թեև այս երկրներն ամենամեծ բաժինն ունեն համաշխարհային արտահանման մեջ: Երկրորդ մա-

⁸ Krause 1992, 31-32.

կարդակի արտադրողները չունեն ներքին բավականաչափ մեծ շուկա, որ կարողանան ԳՀՓԿԱ-ների իրականացման համար նույնքան մեծ ծախսեր կատարել, հետևաբար այստեղ ռազմարդյունաբերությունը զարգանում է հիմնականում արտահանման հաշվին, ընդ որում, հաճախ արտահանվում է առաջին մակարդակի արտադրողներից ստացված լիցենզիաներով կամ համատեղ արտադրվող արտադրանքը: Երրորդ մակարդակում արտադրող պետությունները, որպես կանոն, ավելի մեծ կախում ունեն արտահանումից և իրենց համեմատական առավելությունները կարող են իրացնել միայն ավելի ցածր արժեք ունեցող ՍՌՏ-ի մրցակցային շուկայում, որը չի պահանջում մեծ ծախսեր ռազմական ԳՀՓԿԱ-ների վրա: Ավելին, այս մակարդակում արտադրողները սովորաբար մեծ սուբսիդիաներ են ստանում, որը հիմնավորվում է ներքին պահանջարկը տեղական արտադրությամբ բավարարելու անհրաժեշտությամբ:

Ըստ Նեյմանի՝ ՍՌՏ-ի ներմուծումը տեղական ռազմարդյունաբերության զարգացման էվոլյուցիայի մեկնարկն է, այսինքն՝ ՍՌՏ ներմուծումը և դրանց տեղական արտադրությունը զարգացման միևնույն գործընթացի բաղադրիչներ են⁹: Նա գտնում է՝ ռազմական տեխնիկայի անմիջապես առաջին պատվերների ժամանման հետ «գործի է դրվում զարգացման շարժասանդուղքը (escalator of development)», որի առաջին աստիճանը ներմուծված տեխնիկայի սպասարկումն է, իսկ վերջին աստիճանը՝ առանձին բաղադրիչների, իսկ երբեմն էլ՝ ամբողջական սպառազինության տեղական արտադրությունը: Ավելի ուշ, Կրաուզեն ներմուծող երկրից տեղական ռազմարդյունաբերություն ունեցող պետության վերածվելու գործընթացը նկարագրեց որպես օբյեկտիվ պատճառներով պայմանավորված դինամիկ գործընթաց, որի շարժիչ ուժը քաղաքական իշխանության կողմից մատակարարման աղբյուրներից անկախանալու հաստատուն ձգտումն է: Այդ էվոլյուցիոն գործընթացը ներառում է մի շարք փուլեր¹⁰.

1. պարզ սպասարկման ծառայություններ իրականացնելու հնարավորություն,

2. կապիտալ վերանորոգման, վերականգնման և տարրական (ռուդիմենտար) ձևափոխությունների հնարավորություն,

⁹ Neuman 1981, 131-150.

¹⁰ Krause 1992, 171.

3. ներմուծված բաղադրիչների հավաքում, պարզ լիցենզավորված արտադրություն,

4. բաղադրիչների կամ հումքի տեղական արտադրություն,

5. տեխնոլոգիական տեսանկյունից ոչ բարդ ՍՌՏ-ի (less sophisticated) վերջնական հավաքում, որոշ բաղադրիչների տեղական արտադրություն,

6. ոչ բարդ ՍՌՏ-ի համատեղ արտադրություն կամ լրիվ լիցենզավորված արտադրություն,

7. տեղական լիցենզավորված արտադրանքի սահմանափակ կատարելագործման համար հետազոտությունների և մշակումների հնարավորություն,

8. ոչ բարդ ՍՌՏ-ի տեղական անկախ արտադրություն, առավել առաջադեմ սպառազինությունների (advanced arms) սահմանափակ արտադրություն,

9. ոչ բարդ ՍՌՏ-ի անկախ մշակում և նախագծում, արտադրություն,

10. արտասահմանյան բաղադրիչներով առավել առաջադիմական ՍՌՏ-ի անկախ հետազոտական և նախագծային աշխատանքներ,

11. լրիվ անկախ հետազոտական և նախագծային աշխատանքների, ՍՌՏ-ի ինքնուրույն արտադրություն:

Գիտական շրջանառությունում այս աստիճանակարգը հայտնի է որպես Կրաուզեի աղյուսակ, որը ծառայում է որպես կողմնորոշիչ տարբեր երկրներում ռազմարդյունաբերության փուլային զարգացման ուղղությունների հստակեցման համար: Սակայն հետազոտողներն այն զերծ չեն համարում թերություններից: Մասնավորապես, Բրաուերը գտնում է, որ պարտադիր չէ, որ երկրները սկսեն առաջին փուլից և հասնեն վերջին փուլին, ռազմարդյունաբերության զարգացումը կարելի է սկսել ցանկացած փուլից, կախված երկրի զարգացման աստիճանից և երկրի առջև ծառացած խնդիրներից¹¹: Նա կարծում է նաև, որ այն չի արտացոլում մասնագիտացման բոլոր հնարավորությունները, օրինակ, երկիրը կարող է արտադրել ՍՌՏ-ի համար հարթակներ (օրինակ՝ ռազմանավեր), սակայն ներկրել այն սպառազինությունները, որոնք տեղակայվելու են դրանց վրա, կամ երկիրը կարող է չարտադրել սպառազինություններ, սակայն մասնագիտանալ կառավարման ավտոմատացված համակարգերի արտադրությունում: Նշված թերություններով հանդերձ՝ Կրաուզեի աղյուսակը նաև լավ գործիք

¹¹ Brauer 2002, 101-127.

է այս ոլորտում մասնագիտացման հնարավորությունների գնահատման համար, և մենք այն օգտագործելու ենք Հայաստանի համար համապատասխան վերլուծություններ իրականացնելու համար:

Հայկական ռազմարդյունաբերության փուլային զարգացման մոդելը

Հայաստանի համար վերլուծություններ կատարելիս պիտի արձանագրենք որոշ հարակարծություն, քանի որ երկիրն ունի նկատելի գիտական ներուժ՝ հանդես գալու անգամ որպես առաջին մակարդակում արտադրող, սակայն չունի դրա համար բավարար ֆինանսական ռեսուրսներ և ներդրումային աղբյուրներ: Հայաստանին չենք կարող դասել նաև ո՛չ «ուժեղ» և ո՛չ «թույլ» սպառողների շարքին: Հայաստանին հաջողվել է իր զինանոցը համալրել պաշտպանողական բնույթի ռազմական դոկտրինին համապատասխան ժամանակակից սպառազինությամբ, հստակեցվել են պաշտպանական-անվտանգային խնդիրները, և ռազմական ծախսերն ուղղվել են այդ խնդիրների արդյունավետ լուծմանը: Սակայն հաշվի չի առնվել այն, որ երկիրն ունի ռազմարդյունաբերության ոլորտում մասնագիտացման մեծ ներուժ: Դրա պատճառները վերլուծված են նաև պաշտոնական աղբյուրներում: Մասնավորապես, դեռ 2011 թ. դեկտեմբերի 29-ի ՀՀ նախագահի ՆԿ-231-Ն «Հայաստանի Հանրապետության ռազմական արդյունաբերության համակարգի բարեփոխումների և զարգացման հայեցակարգը հաստատելու մասին կարգադրության» համաձայն՝

❖ ռազմարդյունաբերության զարգացումն ընթացել է առանց հեռավետ քաղաքականության և ռազմավարական մոտեցումների,

❖ ռազմատեխնիկական համագործակցությունն այլ պետությունների հետ հիմնականում իրականացվել է միաբևեռ սկզբունքով,

❖ բավարար ծավալով և պահանջված ուղղություններով չեն իրականացվել հիմնարար գիտահետազոտական աշխատանքներ,

❖ չեն իրականացվել ՍՌՏ-ի նոր նմուշների ստեղծման համար կարևոր մարտավարատեխնիկական առաջադրանքների և ելակետային տվյալների մշակում, դրանց տեխնիկատնտեսական ցուցանիշների վերլուծություն:

Ներկայումս առավել բարդացել է իրավիճակը գիտական ներուժի վերարտադրության և ֆինանսական աղբյուրների հետ կապված: Տարածաշրջանում փոխվել է ուժի և հզորության հաշվեկշիռը, և Հայաստանում ներդրումներ կատարելը դարձել է ավելի ռիսկային, քանի որ պատերազմի

վերսկսումը դարձել է ավելի հավանական, իսկ կոնֆլիկտի հանգուցալուծման կանխատեսումներն ավելի վատատեսական են Հայաստանի համար: Դրան զուգահեռ՝ ռազմարդյունաբերության զարգացումը պարզապես նպատակից վերածվել է գոյատևման գերխնդրի. ակնհայտ է դարձել, որ առանց դրա արդեն անհնար կլինի դիմակայել ժամանակակից մարտահրավերներին թե՛ տնտեսական և թե՛ ռազմական ոլորտներում:

Գոյություն ունեն մի շարք հանգամանքներ, որոնք կարող են խոչընդոտել «ներմուծողից արտահանողի վերածվելու» գործընթացը: Որպես կանոն՝ միջինից բարձր մակարդակի ՍՌՏ-ի արտադրությունը շատ ավելի մեծ ծախսեր է պահանջելու, հետևաբար դրանք շատ ավելի թանկ են լինելու, քան դրանցից ավելի բարձր որակի նմանօրինակների ներմուծումը: Բարձր գինը կարելի է չհամարել մեծ խոչընդոտ, եթե խոսքը լրիվ ինքնուրույն արտադրության մասին է, սակայն ինչպես Կրաուզերի աղյուսակն է ցույց տալիս, առավել հաճախ ռազմարդյունաբերության փուլային զարգացման առաջին հնարավորություններից մեկը ներմուծված բաղադրիչների հավաքումն է, որի հետևանքով կարող է մեծանալ պետական պարտքը և ավելի մեծ ճնշում ունենալ արժույթային փոխարժեքի վրա, քան հնարավոր էր պատրաստի ՍՌՏ-ի ներմուծման ժամանակ: Բացի այդ, հովանավորչական քաղաքականությունը սովորաբար ենթադրում է մեծածավալ պետական սուբսիդիաներ, որը դարձյալ ճնշում է պետական բյուջեի վրա: Հաջորդ հանգամանքն այն է, որ ոլորտը, ըստ էության, կապիտալատար է, իսկ աշխատուժի ավելցուկ ունեցող երկրում կապիտալատար արտադրության զարգացումը չի կարող համարվել արդյունավետ (օրինակ, ըստ Հեքշեր-Օհլինի տեսության), ուստի կարևոր է զարգացնել ռազմարդյունաբերության այն ճյուղերը, որոնք կապիտալատար չեն, կամ դրանց «կապիտալատարության» մեջ գերակշռում է մարդկային կապիտալը (օրինակ՝ արհեստական բանականության կիրառմամբ ՍՌՏ-ի արտադրության դեպքում): Եվ վերջին հանգամանքը. պետական և մասնավոր ներդրումները մեկնարկային փուլում (Կրաուզերի աղյուսակում՝ առաջին չորս աստիճանները) չեն կարող ապահովել կապիտալի այնպիսի կրիտիկական զանգված, որը հետագայում կհանգեցնի նորարարությունների գեներացիայի և մեծածավալ ներդրումների հոսքի ինքնաշխատ շղթայական ռեակցիայի: Այս հանգամանքը հատկապես առանցքային է դարձնում միջազգային բազմավեկտոր համագործակցության հնարավոր-

րությունների դերը ռազմարդյունաբերության զարգացման ցանկացած տեսլականում:

Հաշվի առնելով նշված հանգամանքները՝ փորձենք ուրվագծել Հայաստանում ռազմարդյունաբերության փուլային զարգացման մոդելը՝ կոնկրետ օրինակով: Դեռ 2017 թ. շրջանառվում էին հայ-ռուսական համատեղ ռազմարդյունաբերական համալիրի ստեղծման մասին լուրեր: ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը ռուսական «Известия» թերթում հեղինակած հոդվածում¹² նշել էր, որ 2013 թ. Վ.Պուտինի հետ քննարկվել են Գյումրիում հայ-ռուսական համատեղ ռազմարդյունաբերական համալիրի ստեղծման հարցեր: Որոշարկվել էին համալիրի ստեղծման նպատակները. այն լինելու էր բազմապրոֆիլ, և 102-րդ ռազմաբազայի արդիականացումից բացի, ենթադրում էր նաև նոր հարթակի ձևավորում Ռուսաստանի և Հայաստանին սահմանակից այլ երկրների (*թերևս, Իրանի* - Հ.Գ.) միջև ռազմատեխնիկական համագործակցության հաստատման ու խորացման համար, ՌԴ-ի սպառազինության արտահանման ավանդական շուկաներ դուրս գալու հեռանկարով: Նախատեսվում էր նաև Գյումրու ավիաբազայի արդիականացումն ու վերազինումն իրականացնել ավիավերանորոգման զորամասի միջոցով՝ «Ռուսաստանի ուղղաթիռներ» ընկերության հետ միասին¹³: Գործարանի մասին հայտնի է, որ նախկինում այն իրականացրել է ՀՀ ԶՈՒ ավիացիայի տեխնիկական սպասարկման, վերանորոգման և մասնակի արդիականացման ծառայություններ, մասնավորապես տեղակայվում էին ժամանակակից նավիգացիոն սարքավորումներ, օպտիկա-էլեկտրոնային համակարգեր, վերանորոգվում էին շարժիչները, հավաքում էին նաև ուղղաթիռներ՝ ներկրված բաղադրիչների հիման վրա: Ձեռնարկության ներկա գործունեության վերաբերյալ ընդհանուր հասանելի աղբյուրներում տեղեկատվություն չկա, սակայն, ըստ «Ինտերֆաքս» տեղեկատվական գործակալության, Գյումրու ավիաբազայում տեղակայված ռազմավիացիոն տեխնիկայի կապիտալ վերանորոգումը ներկայում իրականացվում է ոչ թե Հայաստանում, այլ Ռուսաստանում՝ Կրասնոդարի երկրամասում: Մեր առաջարկած փուլային զարգացման մոդելը ենթադրում է Գյումրու ավիացիոն վերանորոգման գործարանի հիմքով կառուցել հայ-ռուսական համատեղ ձեռնարկություն, որը ոչ միայն հնարավորություն կունենա

¹² Саргсян 2017, <https://iz.ru/news/670520>

¹³ Աղբյուրը՝ Новости-Армения լրատվական կայք, 27 июня 2013:

սպասարկելու, վերանորոգելու և արդիականացնելու հայկական ավիաբազաները, այլև իրականացնելու արտասահմանյան պատվերներ, իսկ հեռանկարում աստիճանաբար անցում կատարելու դետալների, պահեստամասերի, ուղղաթիռների և ինքնաթիռների տեղական արտադրության:

Բերվող օրինակը նպատակ ունի ցույց տալ, թե ինչպես կարելի է փուլային մոդելով (որի հիմքում Կրաուզեի աղյուսակն է) հասնել ռազմարդյունաբերական կոնկրետ ձեռնարկության, ապա նաև՝ ենթաճյուղի ու ոլորտի զարգացմանը: Բնականաբար, առկա են նաև որոշ վերապահումներ, որոնք հիմնականում առնչվում են հարցի դիվանագիտական կողմին: Օրինակ՝ համագործակցող կողմի համաձայնությանը հասնելը ռազմական դիվանագիտության խնդիրն է, քանի որ գործարարության արդյունավետության տեսանկյունից համագործակցությունը շահավետ չէ Հայաստանի պարագայում՝ պայմանավորված տեղական փոքր շուկայով, աշխարհաքաղաքական դիսկերով, տնտեսական և տրանսպորտային շրջափակմամբ: Սպառման շուկաների որոնումը դարձյալ պետք է իրականացվի պետական ռազմաքաղաքական համագործակցության միջոցով:

Մոդելը ներկայացրել ենք աղյուսակի տեսքով (տե՛ս աղ. 1): Այս մոդելով են զարգացել Հնդկաստանի “Hindustan Aeronautics Limited” (խոշորագույն ռազմարդյունաբերական ձեռնարկությունների ցանկում 38-րդն է), Իսրայելի “Israel Aerospace Industries” (40-րդը), Թուրքիայի “Turkish Aerospace Industries” (71-րդը), Հարավային Կորեայի նավաշինական DSME (86-րդը), Բրազիլիայի ավիաշինական «Էմբրաէր» (85-րդը) հայտնի ընկերությունները: Թեպետ 1992 թ. դրությամբ, երբ լույս տեսավ Կրաուզեի հետազոտությունը, որտեղ առաջարկվում էր հիշատակված աստիճանակարգը, դիտարկում կար, որ նշված պետությունները լավագույն դեպքում հաղթահարել են միայն յոթերորդ մակարդակը: Իհարկե, այս երկրների աշխարհաքաղաքական դիրքը, քաղաքական պայմանները, հնարավորություններն ու հարստությունները, քաղաքական ու ռազմական դաշնակիցներն ու այլ բազմաթիվ պարագաներ տարբեր են Հայաստանի համար ստեղծված իրողություններից:

Ըստ ներկայացված մոդելի՝ ճյուղի զարգացման առաջին նկատելի արդյունքները կարող են ի հայտ գալ 10 տարուց ոչ շուտ, իսկ համաշխարհային շուկայում մրցունակ ինքնուրույն ու լրիվ անկախ արտադրանք հնարավոր կլինի թողարկել լավագույն դեպքում քսան տարվա հեռանկարում: Բայց եթե զարգացման այս տրամաբանությունը դրված լիներ հայկական

ռազմարդյունաբերության զարգացման հիմքում հազարամյակի սկզբում (ի դեպ, այդ ժամանակահատվածն է սովորաբար համարվում հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների սկզբնավորման ժամանակաշրջանը), ապա այսօր Հայաստանը կկարողանար վայելել «խաղաղության դիվիդենտներ», և խնդիրը ոչ թե ռազմարդյունաբերության՝ որպես տնտեսության ճյուղի ձևավորումը կլիներ, այլ ռազմական նշանակության համաշխարհային շուկայում մեր դիրքի ամրապնդումը: Սակայն լավ է ուշ, քան երբեք: Տեխնոլոգիական փոփոխությունների սրընթացությունը, սկզբունքորեն նոր պատերազմների ու դրանց համապատասխան սպառազինությունների (արհեստական բանականության հիմքով) պահանջարկը նկատելիորեն փոխել են նոր ՄՈՏ-ի տեխնոլոգիական կենսափուլը՝ հնարավորություն տալով փոքր, բայց մարդկային կապիտալի մեծ ներուժով պետություններին ավելի հեշտությամբ ինտեգրվելու սպառազինությունների համաշխարհային շուկային: Հայաստանն այլևս հապաղելու իրավունք չունի:

Աղյուսակ 1. Գյումրու ավիավերանորոգման գործարանի զարգացումը՝ Կրաուզեի աստիճանակարգին համապատասխան			
Փուլի նկարագրություն	Խոչընդոտներ	Հնարավորություններ	Ժամանակ
1. Պարզագույն սպասարկման ծառայությունների իրականացում			
1-6-րդ փուլերն ավիացիոն ռազմարդյունաբերության ձևավորման փուլերն են: Տարբեր ժամանակներում Հայաստանում այս մակարդակներում տնտեսական գործունեություն ծավալվել է: Ներկայում ռազմական ավիացիայի տեխնիկական սպասարկումն իրականացվում է հիմնականում զինծառայողների ուժերով: Սակայն պետք է նպատակադրվի մասնագիտացված ծառայությունների մատուցումը թե՛ ռազմական և թե՛ քաղաքացիական ավիացիոն տեխնիկայի համար, այդ թվում նաև՝ օտարերկրյա օդանավերի տեխնիկական սպասարկման կազմակերպումը Հայաստանի օդանավակայաններում: Այս փուլում կարևոր է նաև մասնագետների վերապատրաստումը:	Գործընկերությունը ծավալվում է միջպետական պայմանագրերով, և մասնագետների վերապատրաստման համար նույնպես նման պայմանագրեր են պետք, որոնք առևտրային հիմքով չեն և կարող են արդյունավետ չլինել:	Բարձրորակ և համեմատաբար էժան աշխատուժի առկայությունը (Խամփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանի շրջանավարտները) երաշխավորում է, որ այս փուլի կայացման հետ կապված ձեռնարկությունը խնդիրներ չի ունենա:	1 տարի
2. Կապիտալ վերանորոգում, վերականգնում և տարրական (ռուդիմենտար) ձևափոխություններ			
Ավիացիայի տեխնիկական սպասարկում իրականացնող ընկերությունները հազվադեպ է, որ չեն կատարում նաև վերանորոգման ու վերականգնման աշխատանքներ:	Ռազմական տեխնիկայի վերանորոգման իրականացվում է միջպետական պայմանագրերով,	Նշված ծառայությունները երկակի նշանակություն ունեն, որը գործունեության սկզբնական շրջանում կարող է ապահովել	

Ուստի, որպես նախորդի տրամաբանական շարունակություն, այս փուլում գործարանը կարող է կապիտալ վերանորոգման կամ որոշ ձևափոխությունների աշխատանքներ կատարել նաև այլ պետությունների համար: Փուլի առանձնահատկություններից է այն, որ անհրաժեշտ կլինի ավելի շատ դետալներ, պահեստամասեր և բաղադրիչներ ներմուծել:	որը լրացուցիչ դիվանագիտական ջանքեր է պահանջում:	կայուն պատվերներ՝ թե՛ պետական և թե՛ մասնավոր ավիաընկերությունների պատվերների հաշվին:	1 տարի
3. Ներմուծված բաղադրիչների հավաքում, պարզ լիցենզավորված արտադրություն			
Ավիացիոն տեխնիկայի կապիտալ վերանորոգման և դրանց ձևափոխությունների փուլի արդյունավետությունը կարող է մղել համագործակցող կողմերին ինչ-որ պահից սկսած անցնել որոշ բաղադրիչների տեղական լիցենզավորված արտադրության՝ ավելի էժան աշխատուժի, տրանսպորտային ծախսերի նվազեցման, արտաքին առևտրի կանոնակարգման մոտեցումների հաշվին վաճառքի գնի էական նվազեցման նպատակով: Սկզբնական շրջանում թողարկվող բաղադրիչների իրացման շուկան կարող է լինել թե՛ տեղական շուկան, որտեղ պահանջարկն առաջիկա տարիներին շարունակելու է մեծ լինել՝ գնահատված հակառակորդի համեմատությամբ ռազմաավիացիոն տեխնիկայի համարժեքության մակարդակը պահպանելու տեսանկյունից¹⁴, և թե՛ համագործակցող պետության շուկան, որտեղ կարող ենք ունենալ գնային առավելություն:	Ավիացիոն բազայի մաշվածության աստիճանը կարող է ծախսային տեսանկյունից ոչ նպատակահարմար դարձնել դրանց վերանորոգումը և վերականգնումը, ուստի նաև նվազեցնել բաղադրիչների ու համալրող սարքավորումների պահանջարկը:	Նախորդ երկու փուլերի համեմատ՝ այս փուլում ավելի շատ ավելացված արժեք կստեղծվի, որը պարարտ հող կնախապատրաստի հաջորդ փուլի համար: Այս փուլում հնարավորություն կստեղծվի լիարժեքորեն օգտագործելու Գյումրու օդանավակայանի հնարավորությունները:	1.5 տարի
4. Բաղադրիչների կամ հումքի տեղական արտադրություն			
Տրանսպորտային սահմանափակումները, հայ-ռուսական ռազմատեխնիկական համագործակցության խորացմամբ ոչ շահագրգիռ տարանջնիկ պետության առկայությունը, ինչպես նաև ծախսային արդյունավետության հասնելու մղումները օբյեկտիվ պահանջ պիտի ձևավորեն տեղում բաղադրիչներն արտադրելու կամ դրանք տեղական այլ ընկերություններին պատվիրելու համար: Նույնը վերաբերում է հումքի	Հայկական ընկերությունների ֆինանսական կայունության մասին խոսելիս անպայման պետք է հաշվի առնել քաղաքական և հնարավոր պատերազմի վերսկսման ռիսկը, որը ահռելի խոչընդոտ է ներդրումների ներգրավման համար:	Հայտնի է, որ հայ գիտնականները էական նվաճումներ ունեն նյութագիտության՝ նոր նյութերի ստացման ոլորտում:	2 տարի

¹⁴ Հարությունյան 2018, 149:

տեղական արտադրությանը: Այս փուլում նույնպես պետական աջակցությունը տեղական արտադրողներին զգալի կլինի, ընդ որում, ոչ միայն դիտարկվող ձեռնարկությանը, այլև այն հարակից ճյուղերին, որոնք կարող են մատակարարել բաղադրիչներ, վերամշակել տեղական հումքը՝ ՌԱՀ-ին մատակարարելու համար:			
5. Տեխնոլոգիական տեսանկյունից ոչ բարդ ՍՌՏ-ի վերջնական հավաքում, որոշ բաղադրիչների տեղական արտադրություն			
Մոտ մեկ տասնամյակ առաջ շրջանառվում էին նաև ներմուծված բաղադրիչների հիման վրա Հայաստանում ավիացիոն տեխնիկայի հավաքման մասին լուրեր ¹⁵ : Այս փուլում Հայաստանը հենց նման հնարավորություն կունենա՝ թողարկելու ներմուծված և տեղում արտադրված բաղադրիչների վերջնական հավաքման շնորհիվ ամբողջական սպառազինություններ կամ դրանց համակարգեր: Սակայն հարկ է նշել, որ տեխնոլոգիական նորարարության և անկախության մակարդակը բավական ցածր կլինի:	Տեղական սահմանափակ շուկան կխոչընդոտի հասնելու մաշտաբի էֆեկտի:	Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի հետ համագործակցությունը կարող է իր նպաստը բերել սպառման շուկաների որոնման, նոր բիզնես-մոդելների մշակման առումներով:	1 տարի
6. Ոչ բարդ սպառազինությունների համատեղ արտադրություն կամ լրիվ լիցենզավորված արտադրություն			
Գործնականում այս փուլում է սկսվում համատեղ գործընկերությունը: Այս փուլին անցումը հնարավոր է միայն նախորդ փուլերում որակական բարձր ցուցանիշներ արձանագրելու դեպքում, որը հիմք կհանդիսանա համագործակցող ընկերության համար՝ թույլ տալու իր տեխնոլոգիայով և ֆիրմային անվան ներքո արտադրել ավիացիոն տեխնիկա: Միաժամանակ սա նաև բացառիկ հնարավորություն է դուրս գալու գործընկեր ընկերության ավանդական շուկաներ: Տեղի է ունենում տեխնոլոգիաների փոխանցում, կառավարչական մշակույթի, գիտահետազոտական աշխատանքների համար հիմքերի ներդրում:	Սովորաբար լրիվ լիցենզավորված արտադրության հնարավորություն տրվում է տեխնոլոգիական ցիկլի վերջին փուլերում:	Առանց ԳՀՓԿԱ-ների վրա էական ծախսերի՝ ձեռնարկությունը հնարավորություն է ստանում թողարկելու տեխնոլոգիա տար արտադրանք և աստիճանաբար թափանցելու տեխնոլոգիական արտադրանքի միջազգային շուկա:	1.5 տարի
7. Տեղական լիցենզավորված արտադրանքի կատարելագործման համար հետազոտությունների և մշակումների հնարավորություն			
7-11-րդ փուլերը տեղական ավիացիոն ռազմարդյունաբերության	Հետազոտությունների ու մշակումների	Սովորաբար տեխնոլոգիական կենսացիկլի այս	

¹⁵ Աղբյուրը՝ Армянские особенности «шопинга» вооружений. <https://razm.info/ru/310>

յան զարգացման փուլերն են: Արտասահմանյան տեխնոլոգիաներով արտադրված տեխնիկայի արդիականացման համար անհրաժեշտ կլինի զուգահեռաբար զարգացնել գիտատեխնիկական ոլորտը, բարձրացնել ինժեներատեխնիկական կադրերի որակը: Դրա համար միայն ձեռնարկության ֆինանսական ռեսուրսները բավարար չեն: Պետությունը պետք է տարբեր մեթոդներով օժանդակի ԳՏԱ-ին: Սա տեխնոլոգիական խզման հաղթահարման սկիզբն է, այդ թվում՝ գործընկեր ձեռնարկության տեխնոլոգիական մակարդակի նկատմամբ, թեև կախվածությունը կշարունակի էական մնալ:	Ֆինանսավորումը շարունակելու է իրականացվել գերազանցապես պետական բյուջեի միջոցների հաշվին:	փուլում տեխնոլոգիա փոխանցող պետությունը թույլ է տալիս ռեցիպիենտ երկրին արդիականացված արտադրանքն իրացնել իր ավանդական սպառման շուկաներում:	2 տարի
8. Ոչ բարդ ՄՌՏ-ի տեղական անկախ արտադրություն, առավել առաջադեմ սպառազինությունների սահմանափակ արտադրություն			
ԳՀՓԿԱ-ների ինքնուրույն իրականացումը, դրա համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորումը հնարավորություն կտա անցնելու տեխնոլոգիական ոչ բարդ ՄՌՏ-ի անկախ արտադրության՝ համատեղ գործընկերության շրջանակներում: Այսինքն՝ որոշ ոչ բարդ սպառազինությունների գործարանը կարող է նաև թողարկել ու իրացնել իր սեփական ֆիրմային անվանման ներքո, միաժամանակ շարունակելով ակտիվ համագործակցել առավել առաջադեմ ՄՌՏ-ի համատեղ մշակման ու նախագծման ոլորտում: Այս փուլում ներմուծող երկիրը վերաձվում է արտահանող երկրի:	Համաշխարհային շուկայի մենաշնորհացման մակարդակը կարող է խոչընդոտել հայկական արտադրանքի արտահանումը:	Հարակից և սպասարկող արտադրական ճյուղերի անխուսափելի զարգացում, ինչպես նաև գիտատեխնիկական առաջընթաց, որոնք ոլորտի զարգացման լրացուցիչ սիներգետիկ էֆեկտի կհանգեցնեն:	2 տարի
9. Ոչ բարդ ՄՌՏ-ի անկախ մշակում և նախագծում, արտադրություն			
Ավիացիոն ռազմական տեխնիկան դժվարությամբ է տեղավորվում «ոչ բարդ սպառազինություն» հասկացության շրջանակներում: Դեռ 1985 թ. դրությամբ միայն ավտոմատ կռուավարման և ինքնցիալ-նավիգացիոն համակարգերի նախագծման ոլորտում աշխարհում գրանցված էր ավելի քան 30 հազ. պատենտ¹⁶: Այստեղ ավելի շատ նկատի է առնվում տեխնոլոգիական զարգացվածության մակարդակը:	Սա, ըստ էության, ենթադրում է համատեղ գործընկերությունից դուրս ինքնուրույն գործունեության ծավալում, որը կարող է իրացման ընդհանուր շուկայի մի որոշակի հատվածի կորուստ:	Ավիացիոն տեխնիկայի վերջնական արտադրանքի թողարկման համար ընդհանրական արտադրական փուլի ներդրում: Այս փուլում առաջընթացի բավական մեծ հնարավորություն կարող է ապահովել Սփյուռքի ներուժը թե՛ ուղղակի ներդրումների ներգրավման և թե՛ արտասահմանյան շուկա-	3 տարի

¹⁶ Кониов 1985, 22.

Ամեն դեպքում տեխնոլոգիական առումով ոչ բարդ ՄՌՏ-ի ինքնուրույն մշակումը, նախագծումը և արտադրությունը հնարավոր են այն դեպքում, երբ երկիրն արդեն ունի կայուն իրացման շուկա: Մենաշնորհացման բարձր մակարդակով շուկաներ մուտք գործելու համար անհրաժեշտ է արտադրանքի բացառիկ որակական հատկանիշներ և ցածր գին: Այս երկուսը միմյանց փոխկապված են. ցածր գնի հնարավոր է հասնել մասշտաբի էֆեկտի միջոցով: Մեր կարծիքով, այս փուլի հաղթահարումը մասնավորապես ավիացիոն տեխնիկայի ճյուղի համար բավական դժվար կլինի:		ներ դուրս գալու առումներով:	
10. Արտասահմանյան բաղադրիչներով առավել առաջադիմական ՄՌՏ-ի անկախ ԳՀՓԿԱ-ներ			
Կայացած ռազմարդյունաբերության փուլն է, երբ ձեռնարկությունն արդեն ունի մրցակցային առավելություններ արտադրանքի իրացման որոշ հատվածներում և կարող է հավասարի իրավունքներով համագործակցել այլ առաջադեմ արտասահմանյան ձեռնարկությունների հետ՝ ավելի կատարյալ ՄՌՏ-ի արտադրության համար: Այս փուլում արդեն ճյուղում բավականաչափ կապիտալ կուտակված կլինի՝ այն առաջադեմ ԳՀՓԿԱ-ներին ուղղորդելու համար:	Արտաքին տրանսպորտային ենթակառուցվածքները մշտապես բարդացնելու են Հայաստանից ցանկացած արտահանում:	Տրանսպորտային խնդիրները հնարավոր է հաղթահարել չինական «Ուլի և գոտի» նախաձեռնության շրջանակներում ակտիվ համագործակցության շնորհիվ:	2 տարի
11. Լրիվ անկախ հետազոտական և նախագծային աշխատանքների, ՄՌՏ-ի ինքնուրույն արտադրություն			
Սա տեխնոլոգիական զարգացման գագաթնակետն է, և շատ երկրներ, որոնք չեն կարողանում մեծածավալ ֆինանսական միջոցներ ուղղորդել ԳՀՓԿԱ-ներին, այդպես էլ չեն կարողանում հասնել այս մակարդակին: Սակայն ասվածը չի նշանակում, որ պետք է հրաժարվել այս մակարդակին հասնելու գաղափարից: Գերարդիական ՄՌՏ-ն այսօր հազվադեպ է նյութատար ու ծավալային, ավելի շատ շեշտադրվում են փոքր չափերը, ճկունությունը և բանականության տարրերով հնարավորինս հագեցվածությունը: Այս իմաստով, Հայաստանը բոլոր հնարավորություններն ունի հայտնվելու աշխարհի գերիզուր պետությունների կողքին:	Տեղական փոքր շուկան, պետական պատվերի փոքր ծավալները, անկատար մրցակցության բարդ մեխանիզմները համաշխարհային շուկայում, մեծ տերությունների քաղաքական կամքը:	Բարձրտեխնոլոգիական ոլորտում շատ հեղինակավոր ընկերությունների հաջող գործունեությունը Հայաստանում վկայում է, որ աշխարհի տեխնոլոգիական առաջատարները երկիրը դիտարկում են որպես մեծ ներուժ ունեցող երկիր:	3 տարի

Գրականություն

- Հարությունյան Գ. 2018, Ռազմարդյունաբերություն. գերակայություններ, հնարավորություններ, հեռանկարներ (մենագրություն), Երևան, «Լիմուշ», 234 էջ:
- Հարությունյան Գ. 2019, «Ռազմարդյունաբերություն. Հայաստանի նոր տնտեսական հարացույց» (մենագրություն), Երևան, «Լիմուշ», 223 էջ:
- Армянские особенности «шопинга» вооружений. <https://razm.info/ru/310> (23.03.2020).
- В Армении началось всесезонное обслуживание вооружения, военной и авиационной техники ЮВО для подготовки к летним условиям эксплуатации, 01.05. 2019, <https://tvzvezda.ru/news/forces/content/201905010733-mil-ru-l8z7n.html> (15.03.2020).
- Коников С.Е. 1985, 60 лет со дня начала летных испытаний первого советского цельнометаллического самолета АНТ-2 (1924). Из истории авиации и космонавтики, вып. 51. Советское национальное объединение историков естествознания и техники, Москва, АН СССР, с. 20-25.
- На российскую авиабазу в Армении перебросили четыре МиГ-29, 20 февраля, 2016 г., <https://www.interfax.ru/world/495540> (19.03.2020).
- Российская военная база и авиабаза в Армении будут модернизированы и перевооружены. 27 июня 2013, <https://newsarmenia.am/news/politics/defence-20130627-42897603/> (18.03.2020).
- Саргсян С. 2017, Безопасность и устойчивое демократическое развитие, 14 марта, Известия, <https://iz.ru/news/670520> (09.02.2020).
- Artificial Intelligence and National Security, Congressional research service, November 21, 2019, R45178. <https://crsreports.congress.gov> (09.03.2020).
- Brauer J. 2002, The Arms Industry in Developing Nations: History and Post-Cold War Assessment. Arming the South, p. 101-127, DOI: 10.1057/9780230501256.
- Hartley K. 2006, Defence Economics and the Industrial Base. Dimensions of Peace and Security: A Reader (Ed. by Gustaf Geeraerts, Natalie Pauwels, Eric Remacle), Chapter 5, p. 99-120.
- Harutyunyan G. 2018, The Theoretical Approaches to Assessing Effects of Military Expenditure on Growth. Russian Journal of Management, N 3, pp 1-6. DOI:10.29039/article_5c76b0e5c1db78.32516834 (26.03.2020).
- Knight M. Loayza N. and Villanueva D. 1996, The Peace Dividend: Military Spending Cuts and Economic Growth. Staff Papers - International Monetary Fund, vol. 43, No. 1, p. 1-37.
- Krause K. 1992, Arms and the State: Patterns of Military Production and Trade, Cambridge: Cambridge University Press, 299 p.
- Neuman S. 1981, Arms transfers, Indigenous Defence Production and Dependency: the Case of Iran, in The Security of the Persian Gulf (London: Croom Helm, 1981) (edited by Hossein Amirsadeghi), p. 131-150.

ՀՀ ՈԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԼԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՈԴԵԼԸ

Գայանե Հարությունյան

Ամփոփում

Հայաստանի ամենաարդիական խնդիրներից մեկը ռազմարդյունաբերության զարգացումն է: Դիտարկելով այն փաստը, որ աշխարհաքաղաքական ստեղծված իրավիճակում Հայաստանը «անվտանգություն, թե տնտեսություն» երկընտրանքում ընտրելու է անվտանգությունը, պետք է ոչ թե հրաժարվել անվտանգությունը երաշխավորող սպառազինությունների ներմուծումից, այլ այդ ներմուծումը վերածել ռազմարդյունաբերության զարգացման յուրօրինակ մեկնակետի: Զարգացման առաջարկվող մոդելի հիմքում Կրաուզեի աղյուսակն է, որը սպառազինություններ ներմուծող երկրից արտահանող երկրի վերածվելու էվոլյուցիոն գործընթացում նախատեսում է տասնմեկ փուլից բաղկացած աստիճանակարգ: Մոդելն առաջարկվում է՝ հաշվի առնելով ռազմարդյունաբերության ոլորտի առանձնահատկությունները, ինչպես նաև Հայաստանի ներուժային հնարավորություններն ու հավանական խոչընդոտները:

Բանալի բառեր՝ ռազմարդյունաբերություն, խաղաղության դիվիդենտ, ռազմական ծախս, սպառազինություն, ռազմական տեխնիկա, տնտեսական աճ, տեխնոլոգիական առաջընթաց:

МОДЕЛЬ ПОЭТАПНОГО РАЗВИТИЯ ОБОРОННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РА

Гаяне Арутюнян

Резюме

Одной из актуальных проблем для Армении является развитие оборонной промышленности. В силу сложившейся геополитической ситуации Армения должна выбрать безопасность в дилемме «безопасность или экономика». Это вовсе не предполагает отказ от импорта вооружений и военной техники, гарантирующего безопасность страны, а подразумевает превращение этого импорта в уникальную исходную платформу для раз-

вития оборонной промышленности. Предлагаемая модель развития базируется на таблице Краузе, которая предусматривает одиннадцатиступенчатую иерархию эволюционного процесса превращения страны, импортирующей вооружение, в страну-экспортера вооружений. Модель предложена с учетом особенностей оборонной промышленности, а также потенциальных возможностей Армении и вероятных препятствий.

Ключевые слова – оборонная промышленность, мирные дивиденды, военные расходы, вооружение, военная техника, экономический рост, технологический прогресс.

STEP-BY-STEP DEVELOPMENT MODEL OF DEFENSE INDUSTRY OF THE RA

Gayane Harutyunyan

Abstract

The article discusses one of the most actual problems in Armenia-the development of the defense industry. Considering the comprehensible fact that in the current geopolitical situation, Armenia should choose the security in the dilemma of "security or economy", the author puts forward a point of view - do not refuse to import weapons and military equipment that guarantees the country's security, but to turn these imports into a unique platform for defense industry development. The author sets the Krause table at the basis of the proposed development model, which provides for an eleven-stage hierarchy of the evolutionary process of transforming a country importing weapons into a weapon exporting country. The model is proposed taking into account the characteristics of the defense industry, as well as the potential capabilities of Armenia and possible obstacles.

Key words – defense industry, peace dividend, military spending, weapons, military equipment, economic growth, technological progress.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Արսեն Օհանջանով

Երևանի պետական համալսարանի հայցորդ

ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան փ. 1

Էլ. հասցե՝ ohanjanovarsen@yandex.ru

Հոդվածը ներկայացվել է 11.06.2020, գրախոսվել է 21.06.2020, ընդունվել է
տպագրության 01.03.2021

Ներածություն

Ազգային հաշիվների համակարգը (ԱՀՀ)¹ իր հիմնական և փոխկապակցված ցուցանիշներով, երկրում ընթացող սոցիալ-տնտեսական կարևորագույն գործընթացների վերլուծության հիմնական տեղեկատվական բազան է: Մակրոտնտեսական ցուցանիշների ուսումնասիրությունն ու վերլուծությունը, հիմնված ազգային հաշիվների համակարգի մեթոդների և գործիքների կիրառման և փոխառնչության վրա, մակրոտնտեսական քաղաքականության արդյունավետության գնահատման էմպիրիկ հիմքեր են նախատեսում:

ՀՀ ԱՀՀ-ի կառուցման նպատակը մակրոտնտեսական միջավայրի բազմակողմանի բնութագրումն է, որն էլ հաջորդաբար ստացված տեղեկատվական հոսքերի անընդհատությամբ տնտեսական իրավիճակի վերլուծության և գնահատման կարևոր պայման է: Այն նյութական բարիքների արտադրության, եկամուտների ձևավորման, բաշխման, վերաբաշխման, օգտագործման արգասիք է, որն էլ միջազգային տնտեսական գործակցության ու համեմատությունների իրականացման նախադրյալներ է ստեղծում:

Ազգային հաշիվների համակարգն ընդգրկում է հետևյալ հիմնական հաշիվները¹.

- ապրանքների և ծառայությունների հաշիվ,
- արտադրության հաշիվ,
- սկզբնական եկամուտների ձևավորման հաշիվ,
- սկզբնական եկամուտների բաշխման հաշիվ,

¹ Система Национальных Счетов 2008 2012, 3-4.

- եկամուտների երկրորդային բաշխման հաշիվ,
- եկամուտների օգտագործման հաշիվ,
- կապիտալի հետ գործառնությունների հաշիվ,
- ֆինանսական հաշիվ:

Ազգային հաշիվների համակարգը՝ որպես մակրոտնտեսական վերլուծության գործիք

Վերլուծենք Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների օգտագործման ուղղությունները և դրանց ագրեգատները առանձին-առանձին:

Աղյուսակ 1

Ապրանքների և ծառայությունների հաշիվ (մլրդ դրամ)²

	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.
Միջանկյալ սպառում	2 181.6	2 331.6	2 471.7	2 561.3	2 590.4	2 790.4	3 013.6
Վերջնական սպառմանն ուղղված ծախսեր	4 129.5	4 497.5	4 714.3	4 591.1	4 548.3	5 138.7	5 492.8
Համախառն կուտակում	1 053.0	1 009.2	1 027.7	1 045.6	912.9	1 025.1	1 347.8
Ապրանքների և ծառայությունների արտահանում	1 175.9	1 291.7	1 379.1	1 499.2	1 709.9	2 126.5	2 370.3
Վիճակագրական շեղում	-27.0	-1.3	-12.5	23.9	41.4	-	-
Ընդամենը օգտագործում	8 513.0	9 128.7	9 580.3	9 721.1	9 802.9	11 080.8	12 224.4

Տնտեսական իրավիճակի՝ թողարկման և սպառման գործընթացների ամփոփ բնութագիրը ներկայացված է ապրանքների և ծառայությունների հաշվում: Այդ հաշիվն արտացոլում է ապրանքների և ծառայությունների ընդհանուր ռեսուրսները և դրանց օգտագործման ուղղությունները:

2018 թ. հանրապետությունում ապրանքների և ծառայությունների ռեսուրսների ծավալները 2012 թ. համեմատ աճել են 43.6%-ով և կազմել 12 224.4 մլրդ դրամ (աղ. 1):

Բերված աղյուսակում օգտագործված ընդհանուր ռեսուրսներում մեծ տեսակարար կշիռ ունեն վերջնական սպառմանն ուղղված ծախսերը: 2012-2018 թթ. ժամանակահատվածում վերջնական սպառմանը և համախառն կուտակմանն ուղղված ծախսերն ավելացել են համապատասխան-

² Վիճակագրական բոլոր աղյուսակները կազմված են ՀՀ վիճակագրական կոմիտեի տեղեկատվության հիման վրա. https://www.armstat.am/file/article/hah_20_3.pdf.

նաբար 33% և 28%-ով (1 363.3 և 294.8 մլրդ դրամով): Ընդ որում, 2018 թվականին ամբողջ տնտեսության համախառն կուտակման 72%-ը բաժին է ընկել ոչ ֆինանսական հատվածին:

Նշանակալի աճ առկա է նաև ապրանքների և ծառայությունների արտահանման կառուցվածքում. վերոգրյալ ժամանակահատվածում աճել է մոտ երկու անգամ՝ 2018 թ. կազմելով 2 370.3 մլրդ դրամ:

Սույն հաշվի միջոցով կարելի է ստանալ համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) հետևյալ բանաձևով³.

$$\text{ՀՆԱ} = \text{ՎՄԾ} + \text{ՀԿ} + (\text{Ա} - \text{Ն})$$

որտեղ՝

ՎՄԾ - վերջնական սպառման ծախսեր

ՀԿ - համախառն կուտակում

Ա - ապրանքների և ծառայությունների արտահանում

Ն - ապրանքների և ծառայությունների ներմուծում

Աղյուսակ 2

Արտադրության հաշիվ (մլրդ դրամ)

	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.
Թողարկում հիմնական գներով	5 989.9	6 380.8	6 754.0	7 069.1	7 148.9	7 782.9	8 391.4
Արտադրանքի հարկեր	462.1	511.6	552.3	544.1	518.5	576.2	644.6
Արտադրանքի սուբսիդիաներ (-)	3.9	5.2	6.0	8.3	9.7	4.1	5.4
Ընդամենը ռեսուրսներ	6 448.1	6 887.2	7 300.3	7 604.9	7 657.7	8 354.9	9 030.6
Միջանկյալ սպառում	2 181.6	2 331.6	2 471.7	2 561.3	2 590.4	2 790.4	3 013.6
Ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով) կամ համախառն ավելացված արժեք	4 266.5	4 555.6	4 828.6	5 043.6	5 067.3	5 564.5	6 017.0
Ընդամենը օգտագործում	6 448.1	6 887.2	7 300.3	7 604.9	7 657.7	8 354.9	9 030.6

Հանրապետությունում ռեսուրսների ստեղծման գլխավոր աղբյուրն ապրանքների և ծառայությունների համախառն թողարկումն է: 2018 թ. թողարկման ծավալը հիմնական գներով կազմել է 8 391.4 մլրդ դրամ, որը

³ Аблеева 2012, 21.

2012 թ. համեմատ բացարձակ թվով աճել է 40%-ով՝ 2 401.5 մլրդ դրամով (աղ. 2):

Արտադրության հաշվի միջոցով կարելի է ստանալ տնտեսության կարևորագույն ցուցանիշի՝ ՀՆԱ-ի հաշվարկման համար հիմք հանդիսացող ավելացված արժեքը, որը համախառն թողարկման և միջանկյալ սպառման տարբերությունն է:

Ուստի, ՀՆԱ-ն շուկայական գներով կարելի է ստանալ հետևյալ բանաձևով⁴

$$\text{ՀՆԱ} = \text{ՀՀԹ} - \text{ՏՄՍ} + \text{ՏԱՀ} - \text{ՏԱՍ}$$

որտեղ՝

ՀԹ - համախառն թողարկում

ՄՍ - միջանկյալ սպառում

ԱՀ - արտադրության հարկեր

ԱՍ - արտադրության սուբսիդիաներ:

ՀՆԱ-ի միջին տարեկան աճի տեմպը 2012-2018 թթ. կազմել է 104.3%: Ընդ որում, վերը նշված ժամանակահատվածում համախառն ավելացված արժեքի կամ ՀՆԱ-ի կառուցվածքում գերակա ճյուղեր են եղել ըստ ՏԳՏԴ-ի 2-րդ խմբ. «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն», «Մշակող արդյունաբերություն», «Մեծածախ և մանրածախ առևտուր. ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում», «Անշարժ գույքի հետ կապված գործունեություն» և «Շինարարություն» տնտեսական գործունեության տեսակները, որոնց տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ վերը նշված ժամանակահատվածում մոտ 59.3%-ից նվազել է 51%, ընդ որում՝ հիմնականում «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն» գործունեության նվազման պատճառով:

ԱՀՀ-ի կարևորագույն հաշիվներից է եկամուտների ձևավորման հաշիվը, որը հնարավորություն է տալիս բնորոշելու ՀՆԱ-ն սկզբնական եկամուտների ստացման տեսանկյունից, այսինքն՝ ըստ եկամուտների աղբյուրների:

Ըստ որի՝ ՀՆԱ-ն շուկայական գներով ըստ եկամուտների ձևավորման ունի հետևյալ տեսքը⁵.

$$\text{ՀՆԱ} = \text{ՎԱԱՎ} + \text{ԱՆՀ} + \text{ԱՆՍ} + \text{ՏՀՇՀԽԵ}$$

որտեղ՝

⁴ Система Национальных Счетов 2008 2012, 106-109.

⁵ Аблеева 2012, 22.

ՎԱԱՎ - վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն

ԱՆՀ - արտադրության և ներմուծման հարկեր

ԱՆՍ - արտադրության և ներմուծման սուբսիդիաներ (-)

ՏՀՀՀԽԵ - տնտեսության համախառն շահույթ և համախառն խառը եկամուտներ:

ՀՆԱ-ի կառուցվածքը սկզբնական եկամուտների ձևավորման տեսանկյունից դիտարկելիս անհրաժեշտ է նշել, որ 2018 թ. ՀՆԱ-ի 33.8%-ը կազմել է վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունը, 12%-ը՝ արտադրության և ներմուծման հարկերը և 54.3%-ը՝ ձեռնարկությունների ու կազմակերպությունների, տնային տնտեսությունների համախառն շահույթը (համախառն խառը եկամուտները): 2012-2018 թթ. վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունը և համախառն շահույթը (համախառն խառը եկամուտներ) աճել են համապատասխանաբար 38.4%՝ կազմելով 2 035.6 մլրդ դրամ և 43.2%՝ կազմելով 3 264.5 մլրդ դրամ (աղ. 3):

Աղյուսակ 3

Եկամուտների ձևավորման հաշիվ (մլրդ դրամ)

	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.
Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն	1 471.4	1 547.0	1 629.6	1 734.2	1 763.1	1 922.1	2 035.6
Արտադրության և ներմուծման հարկեր	518.6	572.1	620.5	607.7	578.7	646.4	722.4
այդ թվում՝							
արտադրանքի հարկեր	462.1	511.6	552.3	544.1	518.5	576.2	644.6
արտադրության այլ հարկեր	56.5	60.5	68.2	63.7	60.2	70.2	77.7
Արտադրության և ներմուծման սուբսիդիաներ(-)	3.9	5.2	6.0	8.3	9.7	4.1	5.4
այդ թվում՝							
արտադրանքի սուբսիդիաներ	3.9	5.2	6.0	8.3	9.7	4.1	5.4
արտադրության այլ սուբսիդիաներ	-	-	-	-	-	-	-
Տնտեսության համախառն շահույթ և համախառն խառը եկամուտներ	2 280.4	2 441.7	2 584.5	2 710.0	2 735.2	3 000.1	3 264.5
այդ թվում՝							
հիմնական կապիտալի սպառում	539.2	580.5	614.0	697.2	704.9	748.5	784.6
տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ	1 741.2	1 861.2	1 970.6	2 012.8	2 030.3	2 251.5	2 479.9
Ընդամենը օգտագործում	4 266.5	4 555.6	4 828.6	5 043.6	5 067.3	5 564.5	6 017.0

2018 թ. վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության կառուցվածքում երեք գերակա ճյուղերն են եղել ըստ ՏԳՏԴ-ի 2-րդ խմբ. «Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովագրություն», «Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում» և «Մշակող արդյունաբերություն»՝ կազմելով համապատասխանաբար 251.3 մլրդ, 268.5 մլրդ և 251.5 մլրդ դրամ, ընդ որում՝ այս երեք ճյուղերը վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության կառուցվածքում կազմել են 38%: Իսկ տնտեսության համախառն շահույթ և համախառն եկամուտներ կառուցվածքում արձանագրվել են հետևյալ գերակա ճյուղերը՝ «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն», «Անշարժ գույքի հետ կապված գործունեություն», «Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում» և «Մշակող արդյունաբերություն», որոնք կազմել են 60% վերջինիս կառուցվածքում:

Հաջորդ հաշիվը սկզբնական եկամուտների բաշխումն է, որն ունի հետևյալ կառուցվածքը («օգտագործում» հատվածում):

Աղյուսակ 4

Սկզբնական եկամուտների բաշխման հաշիվ (մլրդ դրամ)

	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.
Սկզբնական եկամուտներ փոխանցված «արտերկիր»	278.1	236.2	287.3	218.7	289.0	294.5	334.0
այդ թվում՝							
վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն	62.7	72.6	80.5	86.3	84.8	84.7	79.9
սեփականությունից եկամուտներ	215.4	163.6	206.8	132.3	204.2	209.8	254.0
Սկզբնական եկամուտների սալո (համախառն ազգային եկամուտ)	4 436.4	4 835.2	5 045.8	5 248.4	5 185.1	5 761.1	6 122.6
Ընդամենը օգտագործում	4 714.5	5 071.4	5 333.1	5 467.0	5 474.1	6 055.6	6 456.6

Այն բնութագրում է արտադրական գործունեությունից և սեփականությունից ստացված սկզբնական եկամուտների բաշխումը: Բերված տվյալներում պետք է նշել, որ համախառն ազգային եկամուտները (սկզբնական եկամուտների սալո) 2012-2018 թթ. ավելացել են 38%-ով՝ կազմելով 6 122.6 մլրդ դրամ: Սկզբնական եկամուտներ փոխանցված «արտերկիր»

վերը նշված ժամանակահատվածում աճել են 20%-ով, որից վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունը աճել է 27.4%-ով, իսկ սեփականությունից եկամուտները՝ 18%-ով (աղ. 4):

Եկամուտների երկրորդային բաշխման հաշիվը սկզբունքորեն ընդգրկում է միայն դրամական ձևով տրանսֆերտների միջոցով եկամուտների վերաբաշխումը, որը հնարավորություն է տալիս վերաբաշխման գործընթացներում սահմանազատելու երկու փուլ՝ դրամական ձևով տրանսֆերտներ և բնեղեն ձևով տրանսֆերտներ: Այդպիսի տարբերակում տվյալ դեպքում կիրառվում է մի կողմից՝ տնային տնտեսությունների և մյուս կողմից՝ պետական կառավարման մարմինների և տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների (ՏՏՈԱԿ) միջև հարաբերություններում⁶:

Աղյուսակ 5

Եկամուտների երկրորդային բաշխման հաշիվ (մլրդ. դրամ)

	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.
«Արտերկրին» փոխանցված ընթացիկ տրանսֆերտներ	103.5	120.2	129.9	161.4	158.3	179.2	179.4
Համախառն տնօրինվող եկամուտ	4 730.9	5 173.4	5 355.6	5 520.7	5 451.0	6 079.8	6 423.8
Ընդամենը օգրագործում	4 834.5	5 293.6	5 485.5	5 682.1	5 609.3	6 259.0	6 603.3

2018 թ. համախառն տնօրինվող եկամուտը տնտեսության մակարդակով կազմել է 6 423.8 մլրդ. դրամ և 2012 թ. համեմատ աճել է 35.8%-ով: Իսկ «Արտերկրին» փոխանցված ընթացիկ տրանսֆերտները 2018 թ. կազմել են 179.4 մլրդ. դրամ, և աճը 2012 թ. նկատմամբ կազմել է 73.3% (աղ. 5): Պետք է նշել, որ 2018 թ. «արտերկրից» ստացված ընթացիկ տրանսֆերտները 2.7 անգամ գերազանցել են «արտերկրին» փոխանցված ընթացիկ տրանսֆերտներին:

Ինչ վերաբերում է համախառն տնօրինվող եկամտին, ապա այն (ՀՏԵ) կարելի է ստանալ հետևյալ բանաձևով⁷.

$$\text{ՀՏԵ} = \text{ՀԱԵ} + \text{ԱՍԼՏ} - \text{ԱՓԸՏ}$$

որտեղ՝

ՀԱԵ - համախառն ազգային եկամուտ

⁶ Система национальных счетов 2008 2012, 27.

⁷ Ենգիբարյան 2012, 145:

ԱՍԸՏ - «արտերկրից» ստացված ընթացիկ տրանսֆերտներ

ԱՓԸՏ - «արտերկրին» փոխանցված ընթացիկ տրանսֆերտներ:

Աղյուսակ 6

Տնօրինվող եկամտի օգտագործման հաշիվ (մլրդ դրամ)

	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.
Վերջնական սպառման ծախսեր	4 129.5	4 497.5	4 714.3	4 591.1	4 548.3	5 138.7	5 492.8
այդ թվում՝							
տնային տնտեսությունների	3 645.6	3 933.8	4 110.2	3 907.7	3 842.4	4 415.2	4 765.2
պետական հիմնարկների	465.5	543.7	583.6	661.3	681.8	685.5	691.2
տնային տնտեսությունների՝ սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների	18.4	20.0	20.5	22.1	24.1	38.1	36.4
Համախառն խնայողություն	601.4	675.9	641.3	929.6	902.7	941.1	931.0
Զուտ խնայողություն	62.2	95.4	27.3	232.3	197.8	192.6	146.4
Ընդամենը օգտագործում	4 730.9	5 173.4	5 355.6	5 520.7	5 451.0	6 079.8	6 423.8

ԱՀՀ-ի վեցերորդ հիմնական հաշիվը կարելի է համարել եկամուտների օգտագործման հաշիվը, որտեղ արտացոլվում են ստեղծված համախառն տնօրինվող եկամտի օգտագործման հիմնական ուղղությունները: Համախառն տնօրինվող եկամտի օգտագործման կառուցվածքը հնարավորություն է տալիս պարզելու, թե տնտեսությունում, ընդհանուր առմամբ, ինչպես նաև դրա առանձին հատվածներում, ձևավորված տնօրինվող եկամտի որ մասն է օգտագործվում ընթացիկ վերջնական սպառման և որ մասը՝ կապիտալի կուտակման նպատակով⁸:

ՀՏԵ-ն կարելի է ստանալ նաև հետևյալ բանաձևով.

$$\text{ՀՏԵ} = \text{ՎՄԾ} + \text{ՀԽ}$$

որտեղ՝

ՎՄԾ - վերջնական սպառման ծախսեր

ՀԽ - համախառն խնայողություն

2012-2018 թթ. տվյալների շարքի դիտարկումը ցույց է տալիս, որ վերջնական սպառման ծախսերն ավելացել են 1 363.3 մլրդ դրամով կամ մոտ 33%-ով, որից տնային տնտեսությունների հատվածը՝ 1 119.6 մլրդ դրամով, պետական հիմնարկների հատվածը՝ 225.7 մլրդ դրամով, տնային

⁸ Ենգիբարյան 2012, 149-150:

տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների հատվածը՝ 18 մլրդ դրամով:


2018 թ. վերջնական սպառման ծախսերը կազմել են 5 492.8 մլրդ դրամ, որից տնային տնտեսությունների սպառումը կազմել է 4 765.2 մլրդ դրամ կամ 74.2%, որի հիմնական նպատակը ապրանքների և ծառայությունները ձեռք բերելն է եղել:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի իրականացրած տնային տնտեսությունների հետազոտության տվյալների՝ 2018 թ.-ին տնային տնտեսությունների սպառման միջին ամսական ծախսերի կառուցվածքում մեկ տնային տնտեսության հաշվով ծախսերի 40.4%-ը կազմել է սննդամթերքը, ծառայությունները կազմել են 36.4%, որից 15.2%-ը՝ բնակարանային կոմունալ ծառայությունները, ոչ պարենային ապրանքները՝ 18.9% և ակտիվային խմիչքը և ծխախոտը՝ 4.4%⁹:

2012-2018 թթ. ժամանակահատվածում սննդամթերքի վրա կատարվող տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքում նկատում ենք ծախսերի նվազման միտում. այսպես, 2012-ին 48.7%-ից նվազել է 40.4%-ի դրա փոխարեն աճի միտում ենք տեսնում ծառայությունների վրա կատարվող ծախսերում՝ 29.5%-ից աճելով 36.4%-ի, և ոչ պարենային ապրանքների ծախսերում՝ 17.7%-ից աճելով 18.9%-ի (տե՛ս գծ.):

Գծապատկեր

2018 թ. տնային տնտեսությունների ամսական սպառողական ծախսերի կառուցվածքը (տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական)



⁹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական-վերլուծական զեկույց-2020, 70, https://www.armstat.am/file/article/poverty_2020_a__3.pdf

ՀՀ տնային տնտեսությունների կատարած սպառողական ծախսերի՝ սննդամթերքի վրա կենտրոնացման հիմնական պատճառը բնակչության եկամուտների ցածր մակարդակն է: Իրավիճակի շտկման ամենաարդյունավետ ուղին բնակչության բարեկեցության բարձրացումն է, ընդ որում, պակաս կարևոր գործոն չէ նաև ներքին շուկայում գնաճի զսպումը:

Հանրապետության ներքին պահանջարկն ապահովվել է հիմնականում ներմուծման հաշվին: 2012-2018 թթ. հանրապետություն են ներմուծվել 16 767.4 մլրդ դրամի ապրանքներ և ծառայություններ, որից 19%-ը՝ միայն 2018-ին: Ապրանքների և ծառայությունների ներմուծման ծավալը 2018 թ. կազմել է ՀՆԱ-ի 53%-ը, 2015 թ.՝ 42%-ը և 2012 թ.՝ 48.4%-ը:

2012-2018 թթ. հանրապետություն ներմուծվող ապրանքների և ծառայությունների ծավալը զգալիորեն գերազանցել է դրանց արտահանման մեծությունը, և վերջին տարիներին տեսանելի է դրա նվազման միտումը: Եթե 2012 թ. ներմուծման մակարդակը գերազանցել է արտահանումը (ընթացիկ գներով) 75.6%-ով, 2015 թ.՝ 41.1%-ով, ապա 2018-ին այդ ցուցանիշը կազմել է 34.7%: Դրա հետևանքով ձևավորվել է կայուն բացասական արտաքին առևտրային սալդո, որը չի կարող դրական երևույթ համարվել և վկայում է հանրապետության՝ արտաքին աշխարհից որոշակի կախվածության մասին:

Ինչ վերաբերում է համախառն խնայողությանը, որը հավասար է համախառն տնօրինվող եկամտի և վերջնական սպառման տարբերությանը, նշված ժամանակահատվածում աճել է մոտ 55%-ով՝ կազմելով 931 մլրդ դրամ: Ընդ որում՝ զուտ խնայողությունը, որը համախառն խնայողության և հիմնական կապիտալի սպառման տարբերությունն է, նույն ժամանակահատվածում աճել է 2.5 անգամ:

Կապիտալի հետ գործառնությունների հաշվում ձևավորվում է տնտեսության ֆինանսավարկային վիճակը բնորոշող կարևորագույն ցուցանիշը՝ «զուտ վարկավորումը» կամ «զուտ փոխառությունը», որն ամբողջ տնտեսության մակարդակով ցույց է տալիս ռեսուրսների այն քանակը, որը տվյալ պետությունը ներկայացնում է «արտերկրին», կամ որը «արտերկրը» հատկացնում է տվյալ պետությանը:

Տվյալների շարքը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունը համարվում է զուտ փոխառու երկիր. 2018 թ. կազմել է -384.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով մոտ վեց անգամ: Զուտ վար-

կավորում (+) կամ զրուտ փոխառություն (-) (ԶՎ/ԶՓ) կարելի է ստանալ հետևյալ բանաձևով¹⁰.

$$\text{ԶՎ/ԶՓ} = \text{ՀԽ} + \text{ՍԿՏ} - \text{ՓԿՏ} - \text{ՀԿՀՍ} - \text{ՆՇՄՊՓ}$$

որտեղ՝

ՀԽ - համախառն խնայողություն

ՍԿՏ - ստացված կապիտալ տրանսֆերտներ

ՓԿՏ - փոխանցված կապիտալ տրանսֆերտներ (-)

ՀԿՀՍ - հիմնական կապիտալի համախառն կուտակում

ՆՇՄՊՓ - նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխություն:

Աղյուսակ 7

Կապիտալի հետ գործառնությունների հաշիվ (մլրդ դրամ)

	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.
Համախառն խնայողություն	601.4	675.9	641.3	929.6	902.7	941.1	931.0
«Արտերկրից» ստացված կապիտալ տրանսֆերտներ	51.9	42.2	35.7	37.4	22.0	26.0	37.4
«Արտերկրից» փոխանցված կապիտալ տրանսֆերտներ (-)	8.4	7.7	6.4	6.2	5.3	3.7	4.7
Ընդամենը ռեսուրսներ	645.0	710.5	670.6	960.8	919.5	963.5	963.7
Հիմնական կապիտալի համախառն կուտակում	1 006.8	966.4	965.5	1 039.6	879.6	982.0	1 007.3
Նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխություն	46.2	42.8	62.2	5.9	33.3	43.0	340.5
Զուտ վարկավորում (+) կամ զրուտ փոխառություն (-)	-408.0	-298.7	-357.1	-84.8	6.6	-61.6	-384.1
Ընդամենը օգտագործում	645.0	710.5	670.6	960.8	919.5	963.5	963.7

Արտերկրից ստացված տրանսֆերտների տվյալների շարքը ցույց է տալիս, որ առկա է նվազման միտում: 2012-2018 թթ. հանրապետությանը այլ երկրներից հատկացվել է 252.7 մլրդ դրամի կապիտալ տրանսֆերտ

¹⁰ Система национальных счетов 2008 2012, 227.

մեքենասարքավորումների, գույքի և այլնի ձևով, իսկ ՀՀ-ից փոխանցված տրանսֆերտները կազմել են 42.3 մլրդ դրամ (աղ. 7): Ինչ վերաբերում է հիմնական կապիտալի համախառն կուտակմանը, ապա այստեղ առկա է ոչ կայուն միտում՝ աճ-նվազում, նվազում-աճ: 2018 թ. հիմնական կապիտալի համախառն կուտակումը կազմել է 1 007.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 2.6%-ով, ընդ որում, ըստ տնտեսության հատվածների՝ հիմնական կապիտալի համախառն կուտակման գերակշիռ բաժինն ընկել ոչ ֆինանսական հատվածին:

Ինչ վերաբերում է ֆինանսական հաշվին, որը բնութագրում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հետ ինստիտուցիոնալ միավորների գործառնությունները, ապա պետք է նշել, որ դեռևս չի հրապարակվում, սակայն ՀՀ վիճակագրական կոմիտեն աշխատանքներ է տանում ֆինանսական հաշվի ներդրման ուղղությամբ: Ընդ որում, ֆինանսական հաշվի ներդրումը թույլ կտա ամբողջացնել ազգային հաշիվների համակարգը և ներկայացնել հաշիվները՝ ըստ ինստիտուցիոնալ հատվածների: Այլ խոսքով, ֆինանսական հաշիվը թույլ կտա կապել ապրանքների և ծառայությունների արտադրությանը, եկամուտների ձևավորմանը, եկամուտների բաշխմանը, վերաբաշխմանը և օգտագործմանը, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեությանը վերաբերող տնտեսության գործունեության արդյունքները ֆինանսական արդյունքների հետ:

Հատկապես կարևորելով ու համադրելով ԱՀՀ-ի հետևյալ ցուցանիշները՝ համախառն ավելացած արժեքը, համախառն տնօրինվող եկամուտը, համախառն խնայողությունը, վերջնական սպառման ծախսերը, զուտ վարկավորումը կամ զուտ փոխառությունը, նկատենք՝ ՀՀ-ն երկար տարիներ եղել և մնում է զուտ փոխառու երկիր, այսինքն՝ ավելի շատ միջոցներ են ներգրավվել, քան դուրս բերել: Ընդ որում, այդ հանգամանքը կարելի է բացատրել հիմնականում տնային տնտեսությունների և պետական կազմակերպությունների հատվածներում վարկային պարտքերի ձևավորումով: 2018 թ. տնային տնտեսություններ հատվածի զուտ փոխառությունը կազմել է 950 մլրդ դրամ, իսկ ոչ ֆինանսական և ֆինանսական հատվածներում, ընդհանրապես, ազատվել են զգալի միջոցներ (հանդես են եկել որպես զուտ վարկատու տնտեսության հատվածներ)՝ համապատասխանաբար՝ 204.2 և 309.3 մլրդ դրամ, որոնք կարող են դառնալ ինչպես տվյալ, այնպես էլ մյուս հատվածների համար արտադրության, շինարարության,

հիմնական միջոցների ձեռքբերման, ֆինանսավորման, ներքին ներդրումների հիմնական աղբյուրներ:

Եզրակացություններ

Ազգային հաշիվների համակարգի 2012-2018 թթ. տվյալների շարքի հիման վրա կատարված աշխատանքում դիտարկվել են առանձին հաշիվների ծավալները, կառուցվածքն ու շարժընթացը, ինչպես ամբողջ տնտեսության, այնպես էլ դրա առանձին հատվածների և ճյուղերի կտրվածքով: Այսպիսով, ազգային հաշիվների համակարգի տվյալների համապարփակ վերլուծությամբ՝ մակրոտնտեսական գործընթացների մոդելավորմամբ, հնարավոր է դառնում գիտականորեն հիմնավորել կամ մերժել կառավարչական որոշումների ընդունումը, տնտեսության ցանկացած մակարդակի վերաբերող լուծումները:

Գրականություն

- Ազգային հաշիվների համակարգ 2012, Ուսումնական ձեռնարկ, Ն. Ենգիբարյան, Երևան, հրատ. նշված չէ, 360 էջ:
- Ազգային վիճակագրական ծառայություն 2001, Մարդկային զարգացման կենտրոն «Ազգային հաշիվները բոլորի համար» ձեռնարկ, Երևան, «ՌԵՄ» 103 էջ:
- Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2018, վիճակագրական-վերլուծական զեկույց, Երևան, հրատ. նշված չէ, 262 էջ:
- Аблеева А.М. 2012, Система национальных счетов и экономические балансы: учебное пособие, Уфа, изд. не указано, 158 с.
- Башкатов Б.И., Назарова О.В., Степанян Е.Н. 2002, Система национальных счетов: теоретические задачи и основы, Москва, изд. не указано, 151 с.
- Образцова О.И., Копейкина О.В. 2008, Система национальных счетов, Москва, изд. Высшая школа экономики, 460 с.
- Система национальных счетов 2008, 2012, в 2-х т., пер. с англ. Еврокомиссия-Евростат, МВФ, ОЭСР, ООН, Всемирный банк, Нью-Йорк, 764 с.
- European System of Accounts 2010, 2013, European Commission, Luxembourg, p. 652.
https://www.armstat.am/file/article/hah_20_3.pdf (22.01.2021).
- https://www.armstat.am/file/article/poverty_2020_a__3.pdf (22.01.2021).

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Արսեն Օհանջանով

Ամփոփում

Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների համակարգի կառուցման նպատակը մակրոտնտեսական միջավայրի բազմակողմանի բնութագրումն է, որն էլ հաջորդաբար ստացված տեղեկատվական հոսքերի անընդհատությամբ տնտեսական իրավիճակի վերլուծության և գնահատման կարևոր պայման է: Այն նյութական բարիքների արտադրության, եկամուտների ձևավորման, բաշխման, վերաբաշխման, օգտագործման և կուտակման արգասիք է, որն էլ միջազգային տնտեսական գործակցության ու համեմատությունների իրականացման նախադրյալներ է ստեղծում:

Բանալի բառեր՝ ազգային հաշիվներ, համախառն խնայողություն, վերջնական սպառում, միջանկյալ սպառում, համախառն կուտակում, զուտ վարկավորում, զուտ փոխառություն:

**МАКРОЭКОНОМИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА И
ИНСТИТУЦИОНАЛЬНЫЙ АНАЛИЗ СИСТЕМЫ НАЦИОНАЛЬНЫХ СЧЕТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

Арсен Оганджанов

Резюме

Основной целью построения системы национальных счетов Республики Армения является всестороннее описание макроэкономической среды, которая служит необходимым условием для анализа и оценки экономической ситуации при непрерывном потоке информации. Это результат производства материальных благ, образования, распределения, перераспределения, использования доходов и накопления, который создает предпосылки для международного экономического сотрудничества и сравнений.

Ключевые слова – национальные счета, валовые сбережения, конечное потребление, промежуточное потребление, валовое накопление, чистое кредитование, чистое заимствование.

MACROECONOMIC CHARACTERISTIC AND INSTITUTIONAL ANALYSIS OF THE SYSTEM OF NATIONAL ACCOUNTS OF THE REPUBLIC OF ARMENIA

Arsen Ohanjanov

Abstract

The purpose of compiling the System of National Accounts of the Republic of Armenia is a comprehensive description of the macroeconomic environment, which serves as a prerequisite for analyzing and assessing the economic situation with a continuous flow of information. It is the result of the production of material goods, generation, distribution, redistribution, use of income and accumulation, which creates the preconditions for international economic cooperation and comparisons.

Key words – national accounts, gross savings, final consumption, intermediate consumption, gross capital formation, net lending, net borrowing.

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

ԵՐԵՔ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍՅՈՒԺԵՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Սվետլանա Արզումանյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ
ՀՀ, Երևան, Արամի 44
Էլ. հասցե՝ s.arzumanyan@inbox.ru
Հոդվածը ներկայացվել է 04.09.2020, գրախոսվել է 14.09.2020, ընդունվել է
տպագրության 01.03.2021

Ներածություն

Իր մշակութային զարգացման ընթացքում մարդկությունը ստեղծել է հազարավոր գրական գործեր, որոնց մեջ արտացոլել է իր պատկերացումներն այն ամենի մասին, ինչն իրեն հետաքրքրել է, մտահոգել, ոգևորել, հիասթափեցրել, հուզել և այլն: Այդ ամենի գեղարվեստական իմաստավորման շնորհիվ ձևավորվեցին սյուժեներ, որոնք զարմանալի կայունությամբ տեղափոխվում էին մի դարաշրջանից մյուսը: Եվ չնայած այն հանգամանքին, որ այդ պատմությունների բնույթը փոխվում էր որոշակի ժամանակաշրջանի և առկա սոցիալական իրավիճակի ազդեցության ներքո, դրանց ընդհանուր հիմքերի բացահայտման հարցը գրականագիտության մեջ պահպանում էր իր արդիականությունը դարեր շարունակ: Հիշենք դեռևս XIX դ. ձևավորված թափառող սյուժեների տեսությունը, որի համատեքստում դիտարկվել են այնպիսի կերպարներ, ինչպիսիք են Մոխրոտը, Դոն Ժուանը, Դոկտոր Ֆաուստուսը և այլք, որոնք այսօր էլ շարունակում են գրավել ստեղծագործողների և ընկալողների ուշադրությունը: Այսինքն՝ արդիական է մնում այն հարցը, թե մեր ժամանակի գրողները, թատերագիրները, սցենարիստները և այլք, որքանով են կարևորում արդեն հայտնի սյուժեների դերը, և որքանով է պատմվածքի ճանաչված լինելը խանգարում կամ նպաստում ստեղծագործելու գործընթացին:

Հայտնի է, որ համաշխարհային գրականության մեջ կուտակված հարուստ նյութի համակարգայնացման առաջին փորձն արվել է դեռևս IX դ.: Այն կատարել է բյուզանդացի գրող, Կոստանդնուպոլսի պատրիարք Ֆո-

տին «Միրիոբլիոն»¹ աշխատության մեջ, որում ներկայացրել է մ.թ.ա. V-մ.թ. IX դդ. ապրող հույն և բյուզանդացի 158 եկեղեցական և 122 աշխարհիկ հեղինակների երկերի կրճատ բովանդակությունը: Ի մասնավորի՝ գրքում կան տեղեկություններ փիլիսոփաների, քերականների, հռետորների, պատմաբանների, աստվածաբանների, բնագետների և բժիշկների երկերի, ինչպես նաև գեղարվեստական, դիցաբանական, վարքագրական ստեղծագործությունների մասին²: Պարզ է, որ նման մեծ ծավալի նյութի համակարգումը չափազանց կարևոր աշխատանք էր, հատկապես եթե հաշվի առնենք, որ որոշ երկերի վերաբերյալ տեղեկությունները պահպանվել են միայն Ֆոտիի գրառման շնորհիվ: Ինչ վերաբերում է մեզ հետաքրքրող զուտ գեղարվեստական գրականության սյուժեների դասակարգման փորձերին, ապա դրանք հիմնականում կատարվել են XVIII դ. սկսած՝ մինչ օրս հիմք դառնալով բազմաթիվ վեճերի և տարբեր վարկածների առաջացման համար, որոնք կապված են սյուժեների տիպաբանությունը բացահայտելու և դրանց քանակը հստակեցնելու հարցերի հետ:

Այս խնդրի նկատմամբ հետաքրքրությունը աճում է հատկապես այն պարագայում, երբ պարզվում է, որ դրան անդրադարձել են այնպիսի հանճարներ, ինչպիսիք են Կ. Գոցցին, Յ. Շիլլերը և Յ. Գյոթեն, այդ հարցը հուզել է նաև XX դ. հայտնի գրողներ Խ.Լ. Բորխեսին և Կ. Վոնեգուտին, ինչպես նաև բազմաթիվ այլ գիտնականների, որոնց շարքում են Վ. Պրոպպը, Ռ. Տոբիասը, Բ. Բուքերը և այլք:

Խորխե Լուիս Բորխեսի չորս պատմվածքները

Սյուժեների ընդհանուր հիմքերի, դրանց տիպաբանությանը վերաբերող հարցի մասին հետաքրքիր տեսակետներից մեկն արտահայտել է XX դ. արգենտինացի հայտնի գրող Խորխե Լուիս Բորխեսը, որի «Չորս ցիկլ» պատմվածքից տեղեկանում ենք, որ համաշխարհային գրականությունը հիմնված է ընդամենը չորս պատմությունների վրա, որոնց մեջ գործողություն են ծավալում չորս հերոսներ: Ճիշտ է, այս պատմվածքում գեղարվեստականության ոգին գերիշխում է գիտականի նկատմամբ, այսինքն՝ մեծ գրողը, ըստ էության, չի փորձում գիտականորեն հիմնավորել իր տե-

¹ Μυριοβλίων - հուն. «Հազար գիրք»: Աշխատության մեկ այլ անվանումն է «Գրադարան» (Βιβλιοθήκη):

² Иванов 2012, 192-197.

սակետը, սակայն դա պատճառ չի դառնում, որ հետաքրքրությունը նվազի նրա կարծիքի նկատմամբ:

Այսպես՝ այդ պատմություններից հնագույնը *պաշարված քաղաքի մասին* է, որում գործում են հերոսները: Քաղաքի պաշտպանները գիտեն, որ դիմադրությունն անօգուտ է, բայց շարունակում են պայքարը³: Երկրորդ պատմությունը *վերադարձի մասին* է՝ իր Ուլիս (Ոդիսևս) հայտնի հերոսով: Երրորդը *որոնման մասին* է, օրինակ՝ ոսկե գեղմի՝ Յասոնի որոնումը կամ երեսուն պարսկական թռչունների պատմությունը, որոնք փնտրում են իրենց Սիմուրգ աստծուն: Նախկինում տարածված այս սյուժեն, ըստ Բորխեսի, հիմնականում ունեցել է բարեհաջող ավարտ, սակայն այսօր որոնումները հաջողությամբ չեն պսակվում, որի վառ ապացույցն են պարտությանը դատապարտված՝ Զ. Զոյսի և Ֆ. Կաֆկայի հերոսները: Վերջին՝ չորրորդ պատմությունը վերաբերում է *աստծո ինքնասպանությանը*: Ատիսը ինքնասպան է լինում, Օդինը զոհաբերում է ինքն իրեն, Քրիստոսը խաչվում է: Ոչ մի այլ պատմության մասին Բորխեսը չի խոսում՝ համոզված լինելով, որ մարդկությունը դարեր շարունակ պատմում և կրկին ու կրկին վերապատմում է ընդամենը այս չորսը⁴:

Խ.Լ. Բորխեսի դրույթների վերաբերյալ հետաքրքիր լրացումներ է արել Մ. Ակիմովը, ըստ որի, առաջին պատմվածքում ներկայացված հերոսն իր բնույթով իրականությանը մարտահրավեր նետող ապստամբ է (Զիգֆրիդ, Հերակլես, Սիգուրդ): Երկրորդի հերոսը՝ Ոդիսևսը, մերժված է հասարակության կողմից և սեփական անձի փնտրտուքների մեջ է (Դոն Կիխոտ, Բեռկովսկի): Երրորդ պատմության հերոսը չի հակադրվում հասարակությանը և մերժված չէ նրա կողմից: Իսկ չորրորդի հերոսն իր հավատը կորցնող կամ ձեռք բերող մարդ է: Նա գտնվում է հավատի որոնումների մեջ (Բուլգակովի Վարպետը, Տոլստոյի Բոլկոնսկին)⁵:

Կուրտ Վոննեգուտի գծանկարները

Չորս հիմնական պատմությունների մասին է խոսում նաև ամերիկացի անվանի գրող Կուրտ Վոննեգուտը, որը դրանց ընդհանուր դրսևո-


³ Հմմտ. Բօրքես 1992: Հետաքրքիր է, որ, ըստ Բորխեսի, Հոմերոսն առաջինը չէր, որ վերապատմեց այս պատմությունը, որը դարերի ընթացքում հարստացավ նաև կախարդական, մոգական տարրերով:

⁴ Բոլոր չորս պատմությունների մասին տե՛ս Բօրքես 1992, 425-427:



⁵ Հմմտ. Աкимов 2011.

րումների բացահայտման համար կիրառում է շատ անսովոր տարբերակ. նա փորձում է դրանք ներկայացնել գծանկարների միջոցով, որոնք կազմված են երկու առանցքային գծերից՝ ուղղահայաց և հորիզոնական: Սկզբում պատկերվում է ճակատագրի առանցքը՝ երջանիկ ճակատագիր (good fortune) - դժբախտ ճակատագիր (ill fortune), գիծը տարվում է վերևից ներքև՝ ուղղահայաց: Այն խորհրդանշում է բարիքը և չարիքը, որոնց միջով իր կյանքի ընթացքում անցնում է յուրաքանչյուր մարդ: Պարզ է, որ մահը, հիվանդությունը, աղքատությունը գտնվում են ներքևում՝ խորհրդանշելով վատ ճակատագիրը, իսկ բարգավաճումը և առողջությունը՝ վերևում՝ արտահայտելով երջանիկ ճակատագիրը:

Ճակատագրի ուղղահայաց գիծը հատվում է մեկ այլ՝ հորիզոնական գծով, որով նշանակվում է պատմվածքի ժամանակը, այսինքն՝ գործողության սկիզբը (beginning) և ավարտը (end): Ըստ Վոննեգուտի՝ գրքեր գնող և կինոթատրոն հաճախող համեմատաբար հաջողակ մարդիկ չեն սիրում պատմվածքներ հիվանդների և աղքատների մասին: Ուստի նրանց պատմությունը պետք է սկսվի երջանիկ ճակատագրի առանցքի վերին հատվածից և անպայման հասնի երջանկության: Քանի որ նման տիպի պատմությունը (գրողը այն անվանել է «Մարդը փոսի մեջ» - "Man in hole") դուր է գալիս մարդկանց, հաճախ է կրկնվում: Բանն այն է, որ հայտնվելով բարդ իրավիճակում՝ մարդը, այնուամենայնիվ, գտնում է դրանից դուրս գալու ճանապարհը: Այդ գործընթացը նա ներկայացնում է կոր գծի միջոցով, որն ավարտվում է ավելի բարձր կետում, քան սկսվել է, և դա ոգևորում է ընթերցողին:




Հաջորդ՝ «Երիտասարդը հանդիպում է աղջկան» (Boy meets girl), պատմության էությունն այն է, որ մի ինչ-որ սովորական օր մարդը բախվում է որոշակի ֆանտաստիկ իրավիճակի: Այս տիպի ամենահայտնի սյուժեներից է *Մոխրոտի* պատմությունը, որը սկսվում է տխուր վիճակից, հետո կախարդանքի շնորհիվ դառնում ուրախալի և կրկին վերադառնում նախնական դրության: Սակայն ակնհայտ է իրավիճակի կտրուկ փոփոխությունը: Չէ՞ որ արքայազնը սիրահարված է, իսկ կոշիկը՝ ճիշտ աղջկա հագով, որը խորհրդանշում է շատ լավ ավարտ: Գիծն ուղղվում է դեպի վեր և ավարտվում հավերժության նշանով:



Բոլորովին այլ է Ֆրանց Կաֆկայի տխուր պատմությունը երիտասարդի մասին, որը ո՛չ տգեղ է, ո՛չ էլ գեղեցիկ, որի աշխատանքը նրան որևէ հեռանկար չի խոստանում, իսկ վաստակած գումարը չի բավականացնում բնականոն կյանք վարելու համար: Եվ ահա, մի առավոտ, արթնա-


նալուն պես, նա հասկանում է, որ վերածվել է զգվելի միջատի (գիծն իջնում է ներքև մինչև անվերջության նշանը):



Նշանակում է՝ ոչ սովորական հանգամանքների դրսևորման հետևանքով մարդը կարող է հասնել և՛ անսահման երջանկության, և՛ մեծ դժբախտության: Իսկ եթե հաշվի առնենք նաև այդ ճանապարհի ընթացքում ի հայտ եկող բազմաթիվ միջանկյալ վիճակները, ապա ակնհայտ կդառնա պատմություն գրելու՝ դրանց ընձեռած հնարավորությունների անվերջությունը: Սակայն այս չորս հետաքրքիր մոդելները ներկայացնելուց հետո Վոննեգուտը առաջ է քաշում, մեր կարծիքով, ավելի բարդ խնդիր: Նա փորձում է հասկանալ, թե հնարավո՞ր է արդյոք իր գծագրերի միջոցով բացահայտել ստեղծագործությունների բնույթը և արժևորել դրանք, կարո՞ղ ենք արդյոք տեղավորել որևէ գլոբալ գործոց, օրինակ՝ «Համլետ» պիեսը նրա սխեմաներից մեկի մեջ և վերլուծել այն:

Ուշագրավ է, որ գրողը նմանություններ է տեսնում Համլետի և Մոխրոտի իրավիճակների միջև: Իրոք, երկուսն էլ կորցրել են իրենց ծնողներից մեկին և պատմության սկզբում գտնվում են ճնշված հոգեվիճակում: Ճիշտ է, տարբեր են և՛ հերոսների, և՛ մահացած ծնողների սեռերը: Համլետի դեպքում ճնշվածության պատճառը հոր մահն է և մոր ամուսնությունը հորեղբոր հետ: Իր սպանության մասին պատմող հոր ուրվականի հայտնվելուց հետո պարզ է դառնում, որ Համլետը պետք է վրեժխնդիր լինի: Սակայն Վոննեգուտը դժվարանում է հստակ գնահատել կատարվածն իբրև «լավ» կամ «վատ», այսինքն՝ համապատասխան սխեմայի մեջ նշել այն կետը, որից պետք է սկսել պատմությունը, և որով

ավարտել, ինչպես արել էր Մոխրոտի պատմության դեպքում: Հետագա իրադարձությունները էլ՝ ավելի են բարդացնում իրավիճակը, որովհետև Համլետը սխալմամբ սպանում է Պոլոնիուսին: Եվ կրկին չկա որևէ որոշակիություն, ո՛չ լավ, ո՛չ էլ վատ: Համլետին չեն պատժում, որովհետև նա արքայազն է, սակայն, ի վերջո, նա մենամարտի ժամանակ մահանում է: Որտե՞ղ կհայտնվի Համլետը՝ դրախտո՞ւմ, թե՞ դժոխքում: Վոննեգուտը չի կարող պատասխանել այս հարցին: Դա պարզ արտացոլված է գծանկարի մեջ, որում հերոսի ճակատագիրը որևէ կերպ չի որոշակիանում⁶:



«Համլետ» ողբերգությունը գլուխգործոց համարելու գաղտնիքը, ըստ Վոննեգուտի, պետք է որոնել դրանում առկա ճշմարտության մեջ, որովհետև, իբրև պատմություն պատմող, Շեքսպիրը արապախո ցեղի պատմիչից ավելի լավը չէ⁷: Ուղղակի նա կարողացել է ներկայացնել ճշմարտությունը, ինչը մարդիկ հազվադեպ են անում, քանի որ տարված են իրենց վերելքներով և անկումներով: Իսկ Ճշմարտությունն այն է, որ մենք այնքան քիչ բան գիտենք կյանքի մասին, որ նույնիսկ ի վիճակի չենք որոշելու, թե ինչն է մեզ համար լավ, իսկ ինչը՝ վատ:

⁶ Воннегут 2007. Այս գրքում են ներկայացված Կ. Վոննեգուտի բոլոր գծանկարները:

⁷ Հմտ.՝ Воннегут 2007: Շեքսպիրի «պատմածի» համեմատությունը նախնադարյան վիճակում գտնվող բնիկ ամերիկյան արապախո ցեղի պատմվածքների հետ պատահական չէ: Բանն այն է, որ Վոննեգուտը, ուսումնասիրելով աշխարհի տարբեր ծայրերից հավաքված վայրի ցեղերի պատմությունները, բացահայտել է, որ նրանք չեն զարգանում «երջանիկ ճակատագիր» - «դժբախտ ճակատագիր» առանցքի համաձայն, և դրանց սյուժեն լիովին համընկնում է միայն «սկիզբ-ավարտ» առանցքի հետ:

Կարևորելով Վոննեգուտի այս դրույթը՝ Ա. Կարպովը եզրակացնում է, որ «այն գծանկարը, որը մենք կարող ենք նկարել, մեծ հաշվով, ոչ թե ստեղծագործության սյուժեի օբյեկտիվ սխեման է, այլ միայն մեր մեկնաբանությունն է, մեր սպասումների և պատկերացումների նախագծումը»⁸, այսինքն՝ այն բացարձակապես սուբյեկտիվ է: Սուբյեկտիվությունից հեռանալու ճանապարհը փորձեցին ցույց տալ Վերմոնտի համալսարանի գիտնականները, որոնք, 2016 թ. համակարգչային մշակման ենթարկելով 1700 ստեղծագործությունների հուզական ֆոնը, ստացան վեց տիպային գծագրեր⁹: Սակայն օբյեկտիվության բացահայտման այս փորձը ևս չլուծեց հարցը, քանի որ, ըստ Ա. Կարպովի, այն ոչինչ չէր ասում որոշակի հույզեր առաջացնող իրավիճակի մասին, ուստի վերլուծությունը չէր դարձնում ավելի հասկանալի:

Ժորժ Պոլտիի երեսունվեց դրամատիկական իրավիճակները

Քննարկելով սյուժեների տիպաբանության հարցը՝ հետազոտողները հաճախ անդրադառնում են նաև ֆրանսիացի թատերագիր և թատերագետ Ժորժ Պոլտիի տեսակետին, համաձայն որի՝ դրամատիկական բոլոր ստեղծագործությունների բովանդակությունը սահմանափակվում է զուտ երեսունվեց իրավիճակներով: Իր «Երեսունվեց դրամատիկական իրավիճակներ» գրքում ներկայացված տիպաբանությունը Պոլտին համարում էր իրատեսական և օբյեկտիվ, քանի որ այն հիմնվում էր այնպիսի հեղինակությունների կարծիքների վրա, ինչպիսիք են Կ. Գոցցին, Յ. Շիլլերը և Յ. Գյոթեն¹⁰: Իհարկե, նա ափսոսանք էր հայտնում, որ ասվածը չէր ուղղորդվում այդ մեծ գրողներից որևէ մեկի պահպանված բացատրություններով, որը բարդացնում էր խնդիրը, այն թողնում չլուծված: Իր վրա վերցնելով այդ խնդրի մանրակրկիտ վերլուծությունը՝ նա տպավորված և անչափ զարմացած էր, որ սյուժեների սահմանափակ քանակի մասին խոսողը «Տուրանդոտ» և «Արքա-եղջերուն» պիեսների հեղինակ, ֆանտաս-

⁸ Карпов 2019, <https://www.twirpx.com/file/2909444/>

⁹ Հմմտ. Карпов 2019:

¹⁰ Polti 1924, 9. Հմմտ. նաև Эккерман 1981, 345, 584: Պոլտին հիշեցնում է, որ Յ. Էկերմանի հետ իր զրույցներում Գյոթեն նշել է, թե, ըստ Գոցցիի, գոյություն ունեն միայն երեսունվեց դրամատիկական իրավիճակներ, և Շիլլերը ջանքեր թափեց ավելի շատ իրավիճակներ գտնելու համար, բայց ձախողեց:

տիկ երևակայությամբ օժտված Կ. Գոցցին էր, որի ազդեցությունը կրել են Էռնստ Հոֆմանը, Ժան Պոլ Ռիխտերը և Էդգար Ալլան Պոն¹¹:

Ուշադրություն գրավեց նաև գրքի նախաբանում Պոլտիի՝ ամենայն լրջությամբ արված հանդուգն առաջարկը, ըստ որի, նա կարող է պիեսների հեղինակներին և թատրոնի մենեջերներին տրամադրել տպավորիչ կերպարներով մոտ 10 000 սցենար՝ բացարձակապես տարբերվող նրանցից, որոնք կրկնվում են բեմում արդեն 50 տարի շարունակ: Նա պատրաստ է պայմանագիր ստորագրել ութ օրում հազար սցենար առաքելու համար: Մեծ սցենարի համար կպահանջվի 24 ժամ: «Գները նշանակվում են մեկ տասնյակից: Գրեք կամ զանգահարեք...: Իրավիճակները մանրամասն կմշակվեն քայլ առ քայլ, ցանկության դեպքում՝ տեսարան առ տեսարան»¹², - հավելում է Պոլտին:

Անշուշտ, պետք է կարևորել այն հսկայական աշխատանքը, որը կատարել է գրքի հեղինակը՝ իբրև օրինակ վերցնելով 1200 երկեր, որոնցից 1000-ը պիեսներ են, իսկ 200-ը՝ այլ ժանրերի գործեր (վեպ, էպոս, պատմություն)¹³: Նա հաշվի է առել Հին Հնդկաստանի, Հին Չինաստանի, Հին Հունաստանի, միջնադարի, Վերածննդի, կլասիցիզմի, ռոմանտիզմի, ինչպես նաև իր ժամանակի իտալացի, գերմանացի, ֆրանսիացի, իսպանացի հեղինակների ստեղծած պիեսները: Սակայն այս ամենի հետ մեկտեղ դժվար է գերազնահատել հատկապես այն հանգամանքը, որ հեղինակը չի սահմանափակվել միայն ավարտուն տեսքով մեզ հասած երեսուներկու դասական ողբերգություններով, այլ իր հետազոտության մեջ ընդգրկել է նաև այն ստեղծագործությունները, որոնք, ցավոք, պահպանվել են հատվածաբար և այդ պատճառով մնացել անհայտ կամ ուղղակի մերժվել, բայց որոնց հիմքի վրա, ըստ նրա, կարելի է ստեղծել հարյուրավոր գլուխգործոցներ, որոնց մեջ կդրսևորվի մերժված գեղեցկության թարմությունը:

«Կրկին վերաբացելով» Գոցցիի երեսունվեց սյուժեները՝ Պոլտին ցուցաբերեց իսկական գիտական մոտեցում, առավելապես հետաքրքրվելով այն հարցերով, թե ո՞ր դրամատիկական իրավիճակներն են անտեսվում, իսկ որո՞նց է նախապատվություն տրվում որոշակի դարաշրջաններում, ժանրերում, դպրոցներում, փորձեց հասկանալ այդ գործընթացների

¹¹ Polti 1924, 9. Ինչպես հայտնի է, այդ պիեսներից առաջինում ներկայանում է հանելուկի, իսկ երկրորդում՝ փոխակերպումների հեքիաթային իրավիճակը:

¹² Polti 1924, 124.

¹³ Polti 1924, 10-11.

պատճառները: Պարզ է, որ նման վերլուծությունը պահանջում էր մեծ համբերատարություն, քանի որ նախ անհրաժեշտ էր բացահայտել անտեսված իրավիճակների, դրանց դասերի և ենթադասերի ցուցակը, իսկ այնուհետև՝ դրանց միացման ու կիրառման հնարավորությունը: Պոլտին համոզված էր, որ այդ գործընթացի շնորհիվ ամեն մի իրավիճակի մեջ կբացահայտվի թաքնված բացառիկ դեպք՝ իբրև վառ ոգեշնչման արդյունք, որը կտարբերվի մյուս երեսունհինգից: Այսպիսով՝ կստեղծվեն երեսունհինգ բոլորովին նոր իրավիճակներ, որոնք, մշակվելով այս կամ այն դպրոցի ճաշակին համապատասխան, կտան «ինքնատիպ նմանակումների» շարք, չնախատեսված բնույթի երեսունհինգ նոր սցենարներ¹⁴:

Զարմանալի չէ, որ ներկայացված տեսակետի դեմ հնչեցին քննադատական կարծիքներ: Մասնավորապես, խորհրդային պետական գործիչ, գրող և արվեստի քննադատ Ա. Լունաչարսկին Պոլտիի «մեկնաբանությունը չափազանց մոտավոր և չափազանց ընդհանրական» համարեց¹⁵: Գրեթե նույն կարծիքին է նաև Մ. Ակիմովը, իսկ Ա. Կարպովը որպես Պոլտիի մոտեցման հիմնական թերություն նշեց «ստեղծագործությունների ամբողջականության անտեսումը: Նրա դրամատիկական իրավիճակները խորանարդներ են, որոնք կարող են կազմվել ցանկացած կարգով: Նման գործիքները հնարավորություն են տալիս նկարագրելու պատմությունը, այն բաժանելու տարրերի, որը, սակայն, չի օգնի ո՛չ ընկալել, ո՛չ էլ հասկանալ: Պատմությունը «չի խոսի»: Վերլուծությունը չի հանգեցնի համադրության»¹⁶:

Չնայած քննադատությանը՝ Պոլտիի տեսակետը, անշուշտ, չի կարող կորցնել իր նշանակությունը, որովհետև, *առաջին*՝ ձևավորվել է հսկայական քանակի գրական ստեղծագործությունների մանրակրկիտ վերլուծության շնորհիվ: *Երկրորդ*, քանի որ մարդկանց հարաբերությունների և դրանցից բխող վերապրումների մեջ տեսնելով նմանություններ՝ նա փորձել է հստակեցնել նաև գործող կերպարների՝ պահանջվող նվազագույն քանակը և դրանց միջև առաջացող հարաբերությունների և վերապրումների բնույթը: Եվ *երրորդ*, որոշակիացնելով այդ իրավիճակների ընտրության խնդիրը՝ Պոլտին այն կապում էր կյանքում ի հայտ եկող հույզեր-զգացմունքների հետ, որոնք, ըստ նրա, ճիշտ երեսունվեցն էին: Հենց

¹⁴ Polti 1924, 12.

¹⁵ Луначарский 1958, 113-117.

¹⁶ Акимов 2011, Карпов 2019.

դրանց շրջանակում էլ ընթանում է մարդու կյանքը՝ իբրև անդադար վերելքների և անկումների գործընթաց¹⁷։ Նա պնդում է, որ այդպես է եղել անցյալում, այդպես է այսօր և կլինի ապագայում։ Ուստի զարմանալի չէ, որ, նայելով բեմին, որտեղ ընթանում են այդ հույզերի անընդհատ բախումն ու միախառնումը՝ մարդը հասնում է յուրահատուկ ինքնագիտակցության։

Նշենք, որ աշխատության մեջ ներկայացված յուրաքանչյուր իրավիճակ մանրամասնորեն վերլուծված է¹⁸, ուստի, հեղինակը պատրաստ էր դիմակայելու ցանկացած քննադատությանը, բայց նրան զայրացնում էին հատկապես այն, թե իր մոտեցումով ինքը փորձում է սպանել երևակայությունը, ինքը «ֆանտազիայի թշնամին է», «հրաշքներ քանդող», «տաղանդը սպանող», ստեղծագործական գործընթացն արգելակող։ Գրքի վերջաբանում նա նշում է, որ «նման պիտակներն ամոթի զգացում չեն առաջացնում, չեն ստիպում նրան կարմրել», և որ «իսկական պատմությունը հենց «Երևակայության» պատմությունն է»¹⁹։

Ընթերցողի ուշադրությունը հրավիրելով Պոլտիի աշխատության և համացանցում տեղադրված բազմաթիվ նյութերի վրա²⁰, մենք չենք փորձի քննարկել երեսունվեց իրավիճակների բնույթը, սակայն վստահորեն պնդում ենք, որ դրանցից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը օգտակար կլինի արվեստագետի համար, քանի որ դրանք բաց են տարաբնույթ փոխակերպումների և զարգացումների համար։ Իսկ թե որքանո՞վ է կարևոր և անհրաժեշտ նման գործընթացը, յուրաքանչյուր ստեղծագործող թող որոշի ինքն իր համար։ Նշենք՝ Պոլտին համոզված էր, որ XX դ. արվեստում ստեղծված ոչ բարենպաստ իրավիճակի պատճառն այն է, որ որևէ մեկը չի փորձել ուսումնասիրել Գոցգի առաջարկած արվեստի ստեղծման կերպը, «քանի որ դարաշրջանը վախենում է արվեստի մասին ցանկացած լուրջ մտորումից»²¹։

Նման խիստ դիտարկումը ստիպում է սթափվել, անկախ նրանից, ընդունո՞ւմ ես այն, թե՞ ոչ։ Իսկ լրջորեն մտորել, ըստ Պոլտիի, նշանակում

¹⁷ Polti 1924, 9, 121: Այս հարցը դեռևս լրջորեն չի քննարկվել ո՛չ արվեստաբանության, ո՛չ էլ հոգեբանության մեջ։

¹⁸ Polti 1924, 13-118.

¹⁹ Polti 1924, 121.

²⁰ Հմմտ., օրինակ՝ Kinoversus 2017, Щегулин 2018:

²¹ Polti 1924, 9.

Է՝ ուսումնասիրել նյութը, այն ենթարկել խոր վերլուծության, քանի որ դա է այն միակ ճանապարհը, որը տանում է դեպի նոր, հետաքրքիր իրավիճակների և գեղեցիկ անհայտ երանգների բացահայտումը: Անսահման բազմազանությամբ առանձնացող իր ժամանակի նորագույն գրականության մեջ Պոլտին տեսնում է շրջադարձ դեպի տրամաբանությունը: Այդ ուղղությամբ, ըստ նրա, գնում են Ֆլոբերը, Զոլան, Իբսենը, Ստրինդբերգը, Վերլենը, Մետերլինկը, Մալլարմեն, Մորեասը, նույնիսկ ֆուտուրիստները, ֆովիստները և կուբիստները: Նրանք ձգտում են նույն նպատակին՝ բացարձակ հեղինակության վերջնական վերացմանը և տրամաբանության պարզ բեկորների վրա նոր արվեստի ստեղծմանը, որն ունակ է բացահայտելու ներդաշնակության անհայտ համակարգը²²: Ուստի զարմանալի չէ, որ Պոլտիի տեսակետի կարևորությունը հետազոտողները տեսնում են ոչ այնքան ներկայացված սխեմայի, «որքան այն սկզբունքային մոտեցման մեջ, որ տրամաբանությունը և մշակութային օրինակները կազմում են ոգեշնչման հիմքը, և այդ հիմքի տեսական իմաստավորումը շատ օգտակար է արվեստի համար»²³: Այս խնդիրը կապվում է ստեղծագործական գործընթացի առեղծվածային բնույթի հետ, որի պարզաբանման փորձը, ծնելով տարբեր մեկնաբանություններ, մնում է կարևոր ու արդիական նաև մեր ժամանակներում:

Եզրակացություններ

Սյուժետային հիմքերի բացահայտման խնդիրն այն հարցերի շարքում է, որոնք միշտ այս կամ այն չափով հայտնվում են յուրաքանչյուր արվեստագետի ուշադրության կենտրոնում: Ընդ որում, գիտակցական մակարդակում նա կարող է մերժել նման մոտեցման անհրաժեշտությունը, սակայն ենթագիտակցորեն ընդունել այն: Բոլոր դեպքերում դա ստեղծողից պահանջում է մշակութային արժեքները վերլուծելու կարողություն:

Ներկայացված երեք հայեցակարգերը, մեծ հետաքրքրություն առաջացնելուց բացի, վկայում են այն մասին, որ պատմությունների սակավ քանակը չի կարող արգելք դառնալ ստեղծագործության համար: Ասվածի ապացույցն է Հին Հունաստանի արվեստը, որը սահմանափակվում է շատ քիչ լեգենդներով (Էդիպոս, Ագամեմնոն, Այաքս և այլն), բայց մինչև այսօր

²² Polti 1924, 130.

²³ Adams 2007, 48-49.

ընկալվում է իբրև անգերազանցելի գլուխգործոցների գանձարան: Հակվելով դեպի մշակութային արժեքների բազմակողմանի ուսումնասիրությունը՝ վերլուծական մոտեցումը, մեր կարծիքով, չի կարող ուղղակի խոչընդոտել ստեղծագործական երևակայության ազատ խաղի դրսևորմանը: Ընդհակառակը, լրացուցիչ հնարավորություն է տալիս խթանելու այն՝ նոր հեռանկարներ բացելով արվեստում գեղեցիկի և ներդաշնակության դրսևորման համար:

Գրականություն

- Акимов М. 2011, Список сюжетов мировой литературы, <https://maxim-akimov.livejournal.com/268560.html> (11.06.2020).
- Борхес Х.Л. 1992, Четыре цикла. Перевод: В. Кулагина-Ярцева, изд. Х.Л. Борхес, «Коллекция», СПб., «Северо-Запад», Вычитка, верстка, Серанн, 2002, 640 с.
- Воннегут К. 2007, Человек без страны или Америка разбушевала, Москва, «Харвест. Ультра. Культура». Электронная библиотека, 240 с., royallib.com (15.08.2020).
- Иванов И.А. 2012, «Мириобиблион» Фотия как источник по истории философии. Вестник ИНЖЭКОНА. Серия: гуманитарные науки. Научный журнал, вып. 4 (55), СПб., ГИЭУ (19.02.2020).
- Карпов А. 2019, Структуры художественного вымысла, Москва, «Культуролог», www.litres.ru. <https://www.twirpx.com/file/2909444/> (30.08.2020).
- Луначарский А.В. 1958, Тридцать шесть сюжетов, Луначарский А.В. О театре и драматургии, в двух томах, т. 2, Москва, «Искусство», 707 с.
- Щегулин А. 2018, 36 драматических ситуаций Польти, части 1, 2, 3, 4 <https://www.golosagorodov.info/kultura/kino/36-dramaticheskikh-situatsiy-politi-chast-pervaya.html> (20.07.2020).
- Эккерман И.П. 1981, Разговоры с Гете в последние годы его жизни. Перевод с нем. Ман Н., Москва, «Художественная литература», 687 с.
- Adams J. 2007, Interference patterns: Literary study, scientific knowledge and disciplinary autonomy - Bucknell University Press, 268 p.
- Kinoversus 2017, 36 Դրամատիկ իրավիճակներն ըստ Պոլտիի, <https://www.kinoversus.com/2017/10/politi-dramatik-iravichakner.html> (08.07.2020).
- Polti G. 1924, The thirty-six dramatic situations (Translated into English by Lucile Ray - Franklin (Ohio), James Knapp Reeve, 183 p.

ԵՐԵՔ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍՅՈՒԺԵՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Սվետլանա Արզումանյան

Ամփոփում

Համաշխարհային գրականության և դրամատուրգիայի հիմքում ընկած հիմնական սյուժեների առկայության խնդիրը քննելով՝ ուշագրավ հայեցա-

կարգեր են ներկայացրել Խ.Լ. Բորխեսը, Կ. Վոննեգուտը և Ժ. Պոլտին: Նրանց մոտեցումները, մեծ հետաքրքրություն առաջացնելով, հաճախ ընկալվում են թերահավատորեն, իբրև այնպիսի մեթոդներ, որոնք սահմանափակում են նոր տեքստ գրողի ստեղծագործական ներուժը: Հենց այսպես են վերաբերվում ուղղակիորեն կամ անուղղակիորեն արտահայտված պահանջին՝ հետազոտել և մանրակրկիտ վերլուծել արդեն իսկ ստեղծված գեղարվեստական արժեքները: Սակայն պետք չէ անտեսել այն փաստը, որ այդ արժեքների ուսումնասիրության գործընթացում, ընդհակառակը, հնարավոր է, որ գեղարվեստական նոր մտահղացման ձևավորման ու իրականացման, ստեղծագործողի վառ երևակայության և երազանքների մարմնավորման համար հեռանկարներ բացվեն: Ամեն ինչ կախված է ստեղծագործող մարդու տաղանդից և գոյություն ունեցող մշակութային արժեքների հանդեպ նրա վերաբերմունքից, որոնց համեմատությունն ու հակադրությունը, իրոք, կարող են դրանց մեջ ի հայտ բերել նոր հետաքրքիր կողմեր:

Բանալի բառեր՝ հիմնական սյուժեներ, գրականություն, թատերագրություն, Բորխես, Վոննեգուտ, Պոլտի, ստեղծագործություն:

ТРИ КОНЦЕПЦИИ ПО ВОПРОСУ О БАЗОВЫХ СЮЖЕТАХ В МИРОВОЙ ЛИТЕРАТУРЕ

Светлана Арзуманян

Резюме

Рассматривая вопрос наличия базовых сюжетов, лежащих в основе мировой литературы и драматургии, следует выделить концепции Х.Л. Борхеса, К. Воннегута и Ж. Польти, которые, вызывая большой интерес, нередко воспринимаются скептически, поскольку они предлагают метод, ограничивающий проявления творческого потенциала создателя нового текста. Именно так некоторые относятся к прямо или опосредованно высказанному требованию—творить, изучая и досконально анализируя уже созданные художественные ценности. Однако не следует упускать из виду, что в процессе исследования этих ценностей, напротив, могут открыться перспективы для формирования нового творческого замысла и его реализации, воплощения богатой фантазии и грёз творца. Всё зависит от особых характеристик творческой личности и отношения к культурным цен-

ностям, сопоставление и противопоставление которых, действительно, может высветить в них новые интересные грани.

Ключевые слова – базовые сюжеты, литература, драматургия, Борхес, Воннегут, Польша, творчество.

THREE CONCEPTS ON THE QUESTION OF BASIC PLOTS IN WORLD LITERATURE

Svetlana Arzumanyan

Abstract

The article considers the question of the presence of the basic plots underlying the world literature and dramaturgy. The concepts of J.L. Borges, K. Vonnegut and G. Polti are stressed, which causing great interest, are often perceived skeptically as offering a method that limits the manifestations of the creative potential of the creator of a new text. This is exactly how some of them relate to the directly or indirectly expressed requirement – to create, studying and thoroughly analyzing already created artistic values. However, one should not lose sight of the fact that in the process of research of these values, on the contrary, prospects may open up for the formation of a new creative concept and its implementation, for the embodiment of rich imagination and dreams of the creator. It all depends on the special characteristics of the creative person and his attitude to cultural values, the comparison and contrast of which, indeed, can highlight new interesting facets in them.

Key words – basic plots, literature, dramaturgy, Borges, Vonnegut, Polti, creativity.

THE ROLE AND SIGNIFICANCE OF ANTONYMY IN BUSINESS ENGLISH

Ruzanna Khostikyan

ASUE, Chair of Languages
Associate Professor
128 Nalbandyan Street
Email: ruzanworld@gmail.com

The article has been delivered on 25.01.2020, reviewed on 10.02.2021, accepted for publication on 01.03.2021

Introduction

The given article aims at revealing the phenomenon of antonymy in General and Business English and interpreting the opposition of meanings between them. The perception of the opposite meanings will contribute to the formation of more profound knowledge of the language in the aspects mentioned and will enable the learner avoid using ambiguous or confusing terms. As a result, the interaction between the language and the special subject will strengthen and the learner will acquire the needed and desirable knowledge of the language and special subject.

The Purpose of Learning Antonyms for Business Students

The idea to study the role of antonyms occurred after one of my recent articles devoted to synonymy as the opposite linguistic phenomenon. The purpose of making the knowledge of antonyms and synonyms the focus of discussion is obvious as the awareness of this part of linguistics plays a significant role in enhancing the vocabulary of the language learned.

Therefore, I am deeply convinced that this aspect deserves more attention and the analysis of it should be presented on a comprehensive rather than fragmentary basis.

As we know synonymy studies words similar in meaning or sense while antonymy shows a relationship between words which are opposite in meaning.

We strongly believe that the process of learning more about synonymy and antonymy should find practical application by surfing synonymy and then antonymy pairs paying special attention on terminology of the material studied,

then further introducing them in different contextual formats, finding new ones from related sources and finally strengthening all of them by exercising.

Business students are perceived to be especially interested in this kind of work because the work with synonyms and antonyms, in special terms, in particular, is considered to be the basis for professional language development, therefore, the learner will acquire not only higher level of terminology knowledge, but will strengthen the connection between language and scientific discipline and, as a result, the learner will benefit from the acquired knowledge of both subjects.

Revealing opposite terms is, indeed, conceived meaningful since not primitive words like “day and night”, or “black and white” are opposed but economic notions and concepts overall are considered in real time.

It is worth mentioning that a large amount of synonyms and antonyms in English language is due to the polysemantic nature of words which means that words can have multiple meanings.

Antonyms, in general, fall into **three types**, namely, **gradable, complementary and relational**, but also can be recognized by structure and origin.

Antonyms which are classified by degrees of opposition are called **gradable antonyms**; examples are “*wide and narrow*”, “*old and young*”, “*beautiful and ugly*”, “*tall and short*”, “*hot and cold*”. In each of these pairs the opposition is **not absolute**. There are degrees of beauty, width, age and height. To say that “*the water is not hot*” doesn’t mean that “*it is cold*”, it can be warm, cool, etc. To say that “*the road is not wide*” doesn’t mean “*it is narrow*” and “*she is not beautiful*”, does not mean “*she is ugly*” and vice versa.

Also, the definition of wide, old and tall varies according to the **referent**.¹ For instance, a “*tall man*” is shorter than a “*tall building*” or a “*wide street* is” narrower than a “*wide canal*”.

Gradable antonyms normally have one item that can be more widely used². We can say that someone is 3 years “old” or 60 years “old”, without meaning that they are “old”, but we can refer to them as “young”, if they are really young or considered to be so. In this case, “young” is less frequently used than “old”.

¹ Finch 2005, 144.

² Finch 2005, 144.

Examples of gradable antonyms are often found not only in General English. Business English is characterised by an abundance of synonymy and antonymy pairs in terminology units which have precise meanings much like phraseological units or idioms. Consider some of them:

Inflation and deflation are antonymy pairs which are absolute in meaning. As economic phenomena there is inflation or not, there can be deflation or cannot. The concepts of *privatization* and *nationalization* are also not gradable, for example, the phenomenon of privatization may exist or not, the object cannot be privatized to a certain degree, or depending on economic system and government policy, the objects or major infrastructure can be either nationalized or not. Another example refers to the notions of *macroeconomics* and *microeconomics*. These notions also have an opposing meaning, and the **opposition is again absolute**, there is no in-between position; each of them studies a particular field of economy; macroeconomics studies a big picture of economy, microeconomics focuses on smaller, separate units of economy.

Another important idea in economics is the idea of *goods*. Goods are largely divided into *tangible and intangible* ones. They are directly opposed, or **absolute** because tangible goods necessarily have material substance, and intangible ones are not material.

Although the notion of a good is broad, it is divided into 2 major classes: *consumer goods and producer goods* depending on the purpose, i.e. whether used only by final consumers or used in industry for the production of consumer goods. Within the category of consumer goods we can still see other opposing notions: white and brown goods, hard and soft goods³. All of them are in direct opposition since there is no degree of being white or brown, hard or soft.

In the BCG (Boston Consulting Group) matrix all products are divided into 4 types relating to 4 stages of PLC (product life cycle). *Stars and dogs*⁴ have opposing meanings as stars refer to high market growth, high market share goods and dogs are products with low market share and low market growth. Still, we consider them to be gradable as there are other types of goods or services in between: *cash cows* with a high relative market share but little market growth, and *problem children* not yet established or slow-growing

³ Cambridge 2009, 32.

⁴ Cambridge 2009, 34.

businesses. So, we see that the products vary at different stages of their life-cycle, therefore, are gradable according to BCG matrix.

Costs are among the most frequently used terms in business and economics. Students frequently come across *fixed and variable costs*, *direct and indirect costs*. Both meanings of these terms are absolute. Fixed and variable costs exist side by side having precise meanings which are directly opposite. Thus, fixed costs never change while variable costs do change depending on the volume of production.

Speaking of direct and indirect costs it is clear to understand that direct costs are directly connected with the production costs. In case of indirect costs no direct connection with the production process exists.

In accounting, among the most widely used terms that students come across are *assets and liabilities*. They are also **absolute** in meaning as assets stand for everything the company owns and liabilities are all that the company owes.

Let's look at an example from international trade. Countries usually have an active (favorable) or passive (unfavorable) balance of trade, depending on whether exports exceed imports or vice versa. Since there is no other interim meaning between them they are again absolute.

In fact, the examples are numerous and it is not possible to consider all of them. In this stage let's limit the interpretation of antonyms and simply display some more pairs of business glossary: gross (profit) – net (profit), lend (money) – borrow (money), public (company) – private (company), authentic (jewellery, document) – fake, false, forged, fabricated (jewellery, document), perpetual (inventory method) – periodic (inventory method)⁵, buzz marketing – word-of-mouth marketing, wholesaler – retailer, boom – recession, etc.

All the above mentioned examples are **absolute** antonyms and all of them are **root antonyms** which means they originated from different roots of the word.

There is a large group of antonyms which have the same root but different **affixes** and are called **derivative antonyms**. Examples are patient – **im**patient, possible – **im**possible, proper – **im**proper, reasonable – **un**reasonable, flexible – **in**flexible, and such business and economic terms as *comparative*

⁵ Eisen 2013, 140.

advantage – comparative **disadvantage**, favourable balance of trade – **unfavourable balance of trade**, **outflow** – **inflow**, centralization – **decentralization**, marketing – **demarketing**, progression – **digression**, nationalization – **denationalization**, direct marketing – **indirect marketing**, capitalization – **decapitalization**, balance-sheet accounting – **off-balance-sheet accounting**⁶, realized gains – **unrealized gains**, national market – **international market**, sufficient resources – **insufficient resources**, appreciation of value – **depreciation of value**, branded product – **unbranded product**, **indoor** advertising – **outdoor** advertising, **in-home** training – **out-of-home** training, leading figures – **misleading figures**, interpretation (of terms) – **misinterpretation**, realistic goals – **unrealistic goals**, profit-making – **non-profit making** (organization), manage (a company, economy) – **mismanage** an (economy, company), balance the economy – **unbalance the economy**, tangible assets – **intangible assets**, monopolise – **demonopolise**, appear – **disappear**, statement – **misstatement**, commercial – **noncommercial**...etc.

Although the list of derivative antonyms may be endlessly prolonged, it has to be limited by the above-mentioned ones since we are convinced that they evidence of derivative antonyms to be the largest group of antonyms in Business English in comparison with other types.

Considering the structural classification in addition to root and derivative antonyms it is reasonable to include those which are simple and compound by structure. Here are some of the examples of simple antonyms:

good and bad, clever and stupid, boring – exciting, clean – dirty, loose – tight, fiancé – fiancée, produce – consume, goods – services, public – private, buy – sell, relative – absolute, profit – loss, debit – credit, rise – fall, flexible – rigid, etc.

Saying *compound*, we mean antonyms which are made up of two roots or words. They are, indeed, not many in number in Business English but sometimes we can come across them.

Introvert – extrovert, interdependent – independent, *in-home training* – *out-of-home training*, *gilt-edged* stocks – junk stocks, short-sighted marketing strategy (marketing myopia) – long (far) – sighted (marketing strategy), adversely-related (demand) – directly-related (demand), monolingual – multilingual, multilateral treaty – unilateral treaty, moneylender – moneyborrower, peace-

⁶ Frendo 2016, 11.

maker – warmaker, polygamy – monogamy, wartime – peacetime, tailor-made marketing – mass marketing, multicolor design – monicolor design, open-end questions – closed-end questions, point-of- sale, point-of-purchase, profit-seeking company – nonprofit-seeking company, down payment – full payment etc.

Complementary antonyms⁷ are different from gradable in that the opposition between the terms is absolute. Unlike gradable items there are no degrees in between. In such examples as *Alive and dead*, *married and single*, *male and female*, *switch on and switch off*, *online – offline*, *trainer – trainee*, *asleep – awake*, *inclusive – exclusive*, *single ticket – double ticket*, *perpetual (inventory control) – periodic (inventory control)*, *positive (auditor's report) – negative (auditor's report)*, *indoor (advertising) – outdoor (advertising)*, *out-of-date (technologies) – up-to-date (technologies)*, we see that all of them have either/or relationship. To say someone is not alive means he/she is dead, or to say that the ticket is not single means it is double and vice versa. It is not rare to find colloquial examples of grading, for enstance, *he is very much alive*, or *she is quite sick*.

Relational antonyms are also different from gradable ones in that they are not influenced by degrees of opposition. However, unlike complementary antonyms they are not either/or in character; we could say, for example, that the husband is opposite to wife, but to be a wife does not mean that you are her husband. Similar pairs are *son and daughter*, *brother and sister*, *bride and bridegroom*, *fiance – fiancée*, *above and below*, *front and back*, *hello and goodbye*, *lend and borrow*, *student – teacher*, *aunt and uncle*. Relational antonyms exhibit reversability. This is a logical relationship, and these antonyms cannot exist without the other, which allows to say that if you are my *bride* then I am your *bridegroom*, and if I am *above* you then you are *below* me. Similarly, in Business English we can come across the following examples; if this *media* is not *positive* then it is *adverse*, or if the company is not *customer-oriented* it must be *business-oriented*. If you say *how you dare say so, it's not me who is a debtor*, it is logically assumed that *you are not a debtor, but a creditor etc...*, or if we say *today's education is more student-centered in contrast to the 1990-2000s*, it becomes obvious that the education at the end of the 20th century was more *teacher-centered*. Other examples, such as *buy and sell*, *profit*

⁷ Finch 2005, 144.

and loss, debit and credit, work – relax, precede – follow, export and import are also logically connected to each other.

The examples prove that all the antonyms of the last paragraph are mutually dependent and the existence of one presupposes the other.

In conclusion, the students learning synonyms and antonyms in Business terms will significantly enhance the the language wordstock which is the major achievement to mastering it. In addition, the analysis done on the basis of the interpreted terms clearly shows that the overwhelming majority of all antonyms in Business vocabulary, being precise in nature, belong to the absolute form of antonyms and in terms of origin the prevailing antonymy pairs are derivative ones.

Literature

- Бизнес 1990, Оксфордский толковый словарь: англо-русский, Москва, «Прогресс Академия», 747 с.
- Eisen P.J. 2013, Barron's Educational Series, New York, "Accounting", 446 p.
- Farrall C. 2009, Marianne Lindsey "Professional English in Use Marketing", "Cambridge University Press", 144 p.
- Finch G. 2005, Key Concepts in Language and Linguistics, London, "Palgrave Macmillan", second edition, 249 p.
- Frendo E. 2016, Sean Mahoney "English for Accounting", "Oxford University Press", 64 p.
- Harutyunyan L.A. 2019, Business English, Yerevan, "Tntesaget", 256 p.
- Hornby A.S. 1998, Oxford Advanced Learner's Dictionary of Current English, "Oxford University Press", Fifth Edition, 1426 p.

ՀԱՎԱՆԻՇՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՎ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԱՐ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Ռուզաննա Խոստիկյան

Ամփոփում

Անգլերենում, մասնավորապես գործարար լեզվում հաճախ հանդիպող հականիշ եզրույթների առկայության միջոցով մեկնաբանվում է հակադիր իմաստների տրամաբանությունը: Այսպիսի իմաստների ընկալումը նպաստում է ուսումնառողի ավելի խոր գիտելիքների ձևավորմանը հատկապես գործարար անգլերենում, ինչպես նաև թույլ է տալիս խուսափել շփոթեցնող եզրույթների օգտագործումից: Այդ կերպ ամրապնդվում է լեզվի և մասնագիտական առարկայի փոխգործակցությունը, և ուսանողը ձեռք է բերում լեզվական և

մասնագիտական հարուստ գիտելիքներ, որի շնորհիվ էլ ընդլայնվում է ուսումնառողի աշխարհընկալումը:

Բանալի բառեր՝ հականիշություն, աստիճանական հականիշներ, փոխլրացնող հականիշներ, ազգակից հականիշներ, արմատական հականիշներ, ածանցյալ հականիշներ, բաղադրյալ հականիշներ:

РОЛЬ И ЗНАЧИМОСТЬ АНТОНИМИИ В ДЕЛОВОМ АНГЛИЙСКОМ

Рузанна Хостилян

Резюме

Антонимия в общем и деловом английском поясняет логику противоположных значений, способствуя формированию более глубоких знаний в английском языке. В то же время антонимы дают возможность избежать употребления двусмысленных и искажающих смысл высказывания слов.

Использование антонимичных пар способствует лучшему усвоению специальной дисциплины, языковых реалий и расширению кругозора в целом.

Ключевые слова – антонимия, разноуровневые антонимы, взаимодополняющие антонимы, (реляционные) родственные антонимы, корневые антонимы, деривативные антонимы, сложные антонимы.

THE ROLE AND SIGNIFICANCE OF ANTONYMY IN BUSINESS ENGLISH

Ruzanna Khostikyan

Abstract

Antonymy in both General and Business English interprets the logic of items having opposite meanings and assists in the formation of more profound knowledge of the language enabling to escape ambiguous and misleading words. As a result, students benefit from the interaction of the language and the special subject which strengthens the acquisition of both disciplines and contributes to the enhancement of the learner's general worldview.

Key words – antonymy, gradable antonyms, complementary antonyms, relational antonyms, root antonyms, derivative antonyms, compound antonyms.

ԿՈՆԵԿՏԻՎ ԱՆԳԻՏԱԿՑԱԿԱՆԻ ԱՐՔԵՏԻՊԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՀԵՆՐԻԿ ԷՊՅԱՆԻ ՊՈՆՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Հռիփսիմե Զաքարյան

Երևանի պետական համալսարանի հայցորդ

ՀՀ, Երևան, Ալ. Մանուկյան 1

Էլ. հասցե՝ zaqaryan_hripsime@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 07.06.2020, գրախոսվել է 10.07.2020, ընդունվել է
տպագրության 01.03.2021

Ներածություն

Արքեոտիպերի հոգեբանական տեսությունը մշակել էր շվեյցարացի հոգեբույժ Կարլ Գուստավ Յունգը, թեև այն հայտնի էր դեռևս Պլատոնի և Օգոստինոս Երանելիի ժամանակներում: Ըստ Կ. Յունգի՝ նախապատկերի (արքեոտիպերի) բովանդակային էությունն ի հայտ է գալիս երազներում, տեսիլքներում, ֆանտազիաներում, իսկ առավելապես՝ գեղարվեստական ստեղծագործություններում: Հոգեբույժը մարդու գիտակցականում առանձնացնում է անհատական անգիտակցականն ու կոլեկտիվ անգիտակցականը:

«Էդոյանի պոեզիայում սերտորեն միահյուսվում են գիտակցականն ու անգիտակցականը, բանականն ու զգայականը, որոնք միասին ամփոփելու դեպքում կարելի է ասել, որ նրա ստեղծագործական անհատականությունը սերտորեն միահյուսվում է անձնական կյանքին, սակայն նաև նկատելիորեն վեր է բարձրանում այդ միահյուսումից»¹:

Կոլեկտիվ անգիտակցականի արքեոտիպերի վերաիմաստավորումը Հ. Էդոյանի պոեզիայում

Համաձայն Կարլ Յունգի՝ կոլեկտիվ անգիտակցականը ժառանգական ոչ պայմանական ռեակցիաների ամբողջություն է, որոնք, անկախ մարդու (սուբյեկտի) գիտակցությունից ու կամքից, գոյություն ունեն նրա հոգեկանի խորքային «տարածությունում»: «Մեր հոգիները, ինչպես մարմինները, բաղկացած են նույն տարրերից, որոնցից կազմված էին մեր նախնիների մարմիններն ու հոգիները», - գրել է Կարլ Յունգը².

¹ Զաքարյան 2019, 70:

² Юнг 1991, 45.

Լռությունը նույնն է, տարբեր են խոսքերը,
 նույնն է գիշերը, բայց երազները
 նման չեն իրար:
 Նույն դեմքն է մարդու,
 բայց տարբեր են նրա արտացոլումները...
 ...ոչ ստվերային իրականություն-
 ուր ծուլված են իրար
 պատկերն ու շրջանակը, ինչպես մի անգամ
 Դանտեն է տեսել այն
 իր մի հավերժական ակնթարթի մեջ:
 («Լռությունը նույնն է, տարբեր են խոսքերը»)³

Կարելի է ասել, որ բանաստեղծության ողջ իմաստը խտացված-ծածկազրկված է հետևյալ հաստատում՝ «...շուրջս ծավալվող արձագանքներից// չի լսվում այն ձայնը, որ ինձ պիտի հասներ նրանից այն կողմ, -/ոչ ստվերային իրականություն-// ուր ծուլված են իրար/պատկերն ու շրջանակը...»: Բանաստեղծությունում, ըստ էության, արտացոլված են կյանքի երկու իրականություններ՝ իրականն ու մտացածինը՝ գիտակցական ու անգիտակցական աշխարհները: Բանաստեղծության սկզբում պատկերվում է իրական աշխարհը՝ մարդու իրական աշխարհիկ դեմքը՝ «տարբեր արտացոլանքներով», այնուհետև զգայական, ինստինկտային աշխարհից անցնում «ոչ ստվերային իրականություն»՝ ոգեղեն աշխարհ: Կ. Յունգը ստվերի արքետիպը սահմանել էր որպես անգիտակցականի թաքնված կողմ: *Ստվերի արքետիպը*, ըստ Կ. Յունգի, անգիտակցականի «մութ», անհատական բնագոյային կողմն է, այլ կողմը, որը մարդը փորձում է թաքցնել անգամ ինքն իրենից: Կ. Յունգը շատ դեպքերում ստվերը նույնացնում է սատանայի հետ. «Սատանան Ստվերի արքետիպի տեսակն է, այսինքն՝ մարդու չգիտակցված մութ կողմի վտանգավոր ասպեկտը»⁴: Բանաստեղծությունը քնարական «ես»-ի ստվերային՝ բնագոյային իրականությունից ոգեղեն իրականություն անցնման ճանապարհն է, և այն անցնելու համար «գիշեր ու ցերեկ սպասում է մի հյուրի», նրան, ով պիտի ուղեկցեր իրեն դեպի «այն կողմ՝ ոչ ստվերային իրականություն», որտեղ «մի անգամ Դանտեն է եղել իր մի հավերժական ակնթարթի մեջ». սպասված հյուրը, որ նրան պետք է զգայական ոլորտից ուղեկցեր ոգեղեն աշխարհ, Բանականությունն է՝

³ Էդոյան 2016, 675:

⁴ Юнг 2015, 244.

Վերգիլիուը՝ «մարդկային բանականության կամ գիտության»⁵ խորհրդանշական արքետիպը:

4. Յունգը եզրակացնում է, որ մարդը չգիտակցված կարող է անդրադառնալ անգիտակցականի արքետիպերին, որոնք խորքային անգիտակցականից խորհրդանիշների տեսքով կարող են անցնել անձնական անգիտակցականին, այնուհետև գիտակցականին և խորհրդանիշների տեսքով դրսևորվել գեղարվեստական ստեղծագործությունում. «Արքետիպերը եղել և մնում են հոգևոր կենսական ներուժ, որոնք ցանկանում են, որ իրենց լրջամտորեն ընկալեն, և որն անսովոր կերպով սպասում է, որ դրսևորի ինքն իրեն»⁶: Նա հատկապես առանձնացնում է մանկան արքետիպը, որը «կոլեկտիվ հոգու մանկության նախագիտակցական ասպեկտն է»,⁷ և որն առավել հաճախ է գործածվում տարաբնույթ գեղարվեստական ստեղծագործություններում.

....Կյանք առանց լռության,
լռություն առանց ուժի,
կինոֆիլմ կադրից դուրս,
պտտվող մի պյուժե-
դեպի ետ, դեպի սկիզբ,
ուր մի երեխա
փնտրում է ճանապարհը
դեպի Սուրբ Քաղաք:
(«Օր առանց հանդերձանքի»)⁸

⁵ «Բեատրիչեն հասնելու համար նրան (Դանտեն) (ընդգծումը հեղինակինն է - Հ.Զ.) առաջնորդում է Վերգիլիուը (բանականության խորհրդանիշը),- գրում է Հ. Էդոյանը,- բայց մարդկային բանականությունը կամ գիտությունը նրան կարող է հասցնել մինչև փրկության դռների առջև (Քավարանի վերջին հարկը՝ Եդեմը կամ Երկրային Դրախտը), այսինքն՝ կարող է սոսկ նախապատրաստել նրան փրկության, բայց փրկությունը գալիս է ավելի վերին ոլորտներից՝ Բեատրիչե-Սիրուց, որի մեջ մարմնավորված են սերը և աստվածային գիտությունը (աստվածաբանությունը որպես գիտություն բարձրագույնի մասին): Վերգիլիուսի առաքելությունն ավարտվում է Եդեմում, որից հետո նա ետ է վերադառնում, իսկ Եդեմից նրան Երկրային Դրախտ է առաջնորդում Բեատրիչեն: Առանց Սիրո փրկության դռները փակ են մարդու առաջ» (Էդոյան 2009, 51-52):

⁶ Юнг 1997, 352.

⁷ Юнг 1997, 357.

⁸ Էդոյան 2016, 675:

Բանաստեղծության իմաստը ձևավորվում է բանաստեղծական պատկերների հիերարխիկ կառուցվածքի շնորհիվ: Բանաստեղծն այստեղ գործածում է նույն ուղեծրով անվերջ ընթացող աշխարհի հավերժապտոյսի պատկերը, որի հետևանքով կյանքն ընկալվում է որպես հավերժորեն կրկնվող «սյուժե»: «Հոգևոր իմաստի ներկայությունը մարդու մեջ այն միակ արահետն է, որով նա կապվում է «բարձր ոլորտի» հետ և թույլ չի տալիս նրան վերջնականապես սուզվելու Աշխարհի ամենախոր շերտերը, որից այն կողմ բացվում են Դանտեի Դժոխքի դռները, - գրում է Հ. Էդոյանը,- որքան էլ նա հեռանում է այդ «իմաստից», միևնույն է, գիտակցորեն կամ ենթագիտակցորեն (որ երբեմն սխալմամբ շփոթում են բնագդի հետ) նա փնտրում է այդ արահետը և ձգտում «վերադառնալ ետ»: ...Մարդը, մոլորվելով աշխարհի վտանգավոր ճանապարհներում, նայում է դեպի «ետ» (կամ դեպի վեր), փնտրելով իր ճիշտ ուղին»⁹: «Եթե չդառնաք ու չլինեք մանուկների պես, երկնքի արքայություն չեք մտնի» (Մատթ. ԺԸ:3),- Քրիստոսի այս պատգամն այն է, որ մաքրագործվելու միակ ճանապարհը վերադառնալն է դեպի սեփական «սկիզբների սկիզբ»՝ այն վիճակը, որում կայինք, երբ աշխարհ եկանք: Բանաստեղծական այս պատկերը տեսանելի պատկերն է մարդու հոգևոր տարածությունում ճանապարհի բացելու ու ճանապարհվելու երկրային կյանքում դեպի երկրային Երուսաղեմ, որը հոգևորի խորհրդանիշն է՝ այս աշխարհային կյանքում, հոգևոր ոլորտում դեպի Երկնային Երուսաղեմ¹⁰ ճանապարհի հարթելու:

Այսպիսով, ճանապարհի արքետիպական պատկերը մի կողմից տանում է դեպի Աստված, մյուս կողմից դեպի սեփական անհատականություն, սեփական բարձրագույն «ես»-ը:

Համաձայն Միրջա Էլիադեի՝ բազմաթիվ հնագույն կրոնական համակարգերում հանդիպում են «երկնային արքետիպեր» հասկացությանը, համաձայն որի՝ երկրային իրականությունում գոյություն ունեցող ամեն երևույթ՝ աներևույթ կամ երևութական, ունի իր երկնային կրկնօրինակը: Գոյություն ունի տեսանելի երկիր ու անտեսանելի երկիր, և ամեն ինչ կառուցված է տիեզերական արքետիպական մոդելին համապատասխան:

⁹ Էդոյան 2009, 61:

¹⁰ Սաղմոսներում Երուսաղեմը համարվում է աթոռակալ քաղաք (Սաղմ. ՃԻԱ), Տիրոջ օրհնաբանելու սրբավայր (Սաղմ. ՃԸ) և այլն: Աստվածաշնչյան մեկ այլ վկայության համաձայն՝ Փրկչի Երկրորդ գալուստյան ժամանակ արարվելու է Նոր (Երկնային) Երուսաղեմ (Յայտ. ԻԱ:1-4, Գաղ. Դ:26, Եբր. ԺԱ: 22), հմմտ. Աստուածաշունչ 1929:

Այն, ինչ կատարվում է երկրի վրա, նախապես տեղի էր ունեցել երկրային իրականությունում: Երկրային իրականությունում կատարվող ամեն ինչ երկնային իրականության պարզ կրկնօրինակն է, ամեն ինչ ունի իր երկնային արքետիպը¹¹.

Երկու կղզիներ
 ներքևում վերևում
 կամ իրար կողքի
 կուզեի այնքան
 աննկատ անցնել
 մի կղզուց մյուսը,
 որ նույնիսկ մի ալիք
 ջրի վրա չշարժվեր:
 («Երկու կղզիներ»)¹²

«Կղզին «տեղակայված» ալիքների վրա, աշխարհակառույցի ակնառու պատկերն է»¹³, - գրում է Մ. Էլիադեն: *Ջուրը նաև մահվան ու վերածննդի խորհրդանշն է*: Նախնական քառսը ջրային տարածություն էր, որից արարվել էր աշխարհը: Մարդը մահանալով՝ կրկին վերադառնում է իր նախաստեղծ վիճակին, մերվում քառսին՝ ջրային տարերքին, նորից արարվում, վերածնվում¹⁴: Առասպելաբանական պատկերացումներում կղզին նույնանում է դրախտին: Կղզու սահմանավորությունը եզրագծում առանձնացնում է մի տարածքը մյուսից, հետևաբար առանձնանում, տարբերակվում է նաև նրանց իրականությունը. այդ «սահմանները կարող են պահպանվել-հսկվել ինչպես անմիջականորեն, այնպես էլ ոչ անմիջականորեն, այն վստահված էր աստվածներին»¹⁵, - կարդում ենք Առնոլդ վան Գեննեպի հնագույն անցումային ծեսերին նվիրված աշխատությունում: Մյուս տարածությունը մնում է օտար ու անհասանելի, և որպեսզի անցում կատարվի մի կղզուց մյուսը՝ մի իրականությունից մեկ այլ իրականություն, պահանջվում էր հատուկ ծիսակարգ: Եթե ջուրը մահվան արքետիպական խորհրդանշն է, կղզիները՝ այսաշխարհին ու այնկողմյան աշխարհներին

¹¹ Элиаде 1987, 34.

¹² Էրոյան 2016, 674:

¹³ Элиаде 2000, 228.

¹⁴ Элиаде 2000, 229.

¹⁵ Геннеп 1999, 20.

են, իսկ քնարական հերոսը «ցանկանում է» «այնպես աննկատ անցնել մի կղզուց մյուսը», «որ նույնիսկ մի ալիք//ջրի վրա չչարժվեր», նշանակում է՝ չի ցանկանում մերվել ջրերին՝ քառսին, այլ ցանկանում է ֆիզիկապես օնտոլոգիական իրականության սահմաններից դուրս գալ և անցնել տրանս-ցենդենտալ իրականություն: Այս կերպ, քնարական «ես»-ի ցանկությունը տանում է դեպի Ահեղ Դատաստանի՝ համընդհանուր հարության աստվածաշնչյան արքեոտիպական պատկերը, որում ավետվում է, որ Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ ընտրյալները հարություն կառնեն և նույն մարմնով կհամբարձվեն երկինք ու Երկնային Երուսաղեմում հավերժորեն բնակություն կհաստատեն, որը, սակայն, այնպես է միաձուլված բանաստեղծական տեքստին («սիմուլյակր»), որ դժվար է տարբերակվում: Եթե ամփոփ ձևակերպելու լինենք քնարական «ես»-ի մտայնությունը՝ ձգտումը, ապա կասենք, որ այն տիեզերական ճշմարտություն փնտրելու ու իմաստությամբ առաջնորդվելու ձգտում է, ձգտում՝ անցնելու մյուս կղզի՝ Երկնային Երուսաղեմ, միաժամանակ իմաստային առումով կապվելով նաև «Օր առանց հանդերձանքի» բանաստեղծության գաղափարական էությանը: Այսպիսով, աստվածաշնչյան տեքստն ու բանաստեղծական տեքստը ինտերտեքստուալ կապ են ստեղծում, որտեղ աստվածաշնչյան համընդհանուր հարության պատկերը դառնում է պրոտոտեքստ, որը, սակայն, համասեռվելով հիմնական տեքստին, մնում է չտարրորոշված, այլ կերպ ասած՝ դառնում է սիմուլյակր¹⁶.

Ես հիշում եմ, հիշում եմ, հիշում,
 հիշում եմ մի դեմք ապակու դեմ կանգնած,
 հիշում եմ երկու ձեռքեր գրպանների մեջ,
 հիշում եմ մի փողոց երկար, երկար
 և հետո հիշում եմ,
 իմ անունն եմ հիշում,
 որը հագել եմ չմրսելու համար:

¹⁶ Սիմուլյակրը հետմոդեռնիստական փիլիսոփայության հիմնական հասկացություններից է: Եզրույթն առաջին անգամ գործածել է ֆրանսիացի փիլիսոփա Ժորժ Բատայը (Батай 1997), սակայն առավել լայն տարածում է ստացել շնորհիվ ֆրանսիացի սոցիոլոգ, մշակութաբան, հետմոդեռնիզմի փիլիսոփա Ժան Բոդրիյարի (Бодрийяр 1996): Չնայած եզրույթն արդիական է համարվում, նրա իմաստն ավելի հին ժամանակներում է ձևավորվել և դրա հեղինակը, ըստ էության, կարելի է համարել Պլատոնին: Երևույթը Պլատոնը կոչում էր «պատճենների պատճեններ» (այս մասին մանրամասն տե՛ս Делез 2011, 382, տե՛ս նաև Можейко 2001, 727):

(«Ես հիշում եմ»)¹⁷

Բանաստեղծությունն ընկալվում է որպես ներքին շարժում, խորքային հիշողությունում պահված սեփական հեռավոր իրականությունը դեպի «Ես»-ը («Ես»-ի ներկան) վերադարձնելու միտում, որը ենթադրում է գիտակցության «անցում» «հորիզոնից այն կողմ»՝ դեպի նախամիտք:

Բանաստեղծությունում առանցքային դեր է կատարում *ապակու՝* հայելու և *ճանապարհի սիմվոլիկան* («...հիշում եմ մի դեմք *ապակու* դեմ կանգնած...//...հիշում եմ մի *փողոց* երկար, երկար...»):

Հայելին մի կողմից ինքնաճանաչման խորհուրդն է կրում (օրինակ՝ ճապոնական մշակույթում). հիշենք Նարցիսի առասպելը. Նարցիսի մահը վրա հասավ այն ժամանակ, երբ ջրերի հայելիներում տեսավ սեփական արտացոլանքը, ճանաչեց սեփական «Ես»-ը, մյուս կողմից՝ դիցաբանական պատկերացումներում այն այլաշխարհի հետ կապ հաստատող միջոց է (օրինակ՝ եգիպտական դիցաբանությունում): Այստեղից կարելի է ենթադրել, որ քնարական «Ես»-ը «հիշում է մի դեմք *ապակու* դեմ կանգնած», այսինքն՝ սեփական «Ես»-ի տիրույթներում խորասուզվելով՝ գալիս է ինքնաճանաչման:

Ինչպես ցույց է տալիս Օ. Ֆրեյդենբերգը, հաճախ մահվան առասպելաբանական արքետիպական պատկերը նույնանում է ճանապարհի մոտիվին. մահ ասելով հասկացվում է յուրօրինակ շրջագայություն. «...պետք է «անցնել» մահվան երկրով, «թափառաշրջել» նրա միջով, «շրջագայել». հանգուցյալը ճամփորդ է, ուխտավոր, մահը՝ «հյուրանոց», որի դռները լայնորեն բաց են տարաշխարհիկ հյուրերի առջև (ընդգծումը հեղինակինն է - Հ.Զ.)»¹⁸:

Բանաստեղծությունը բանաստեղծական «Ես»-ի գեղարվեստական գիտակցության մետաֆիզիկական մակարդակում նախորդ կյանքում սեփական «Ես»-ի զարգացման փուլերի վերհիշումն է, քանզի յուրաքանչյուր ծնունդ, ըստ արևելյան պատկերացումների, վերածնունդ է զարգացման նոր շրջափուլում: Սա այն է, որը գիտական լեզվով կոչվում է դեժավյուի (déjà vu) ֆենոմեն.

Ամառը, աշունը... Ուրիշ են վայրերը, ուրիշ են օրերը,

¹⁷ Էդոյան 2016, 31:

¹⁸ Фрейденберг 1997, 227.

մեր նավերը կորել են հեռու ջրերում,
դեմքերն անծանոթ են, ասես մի օտար
պատկերասրահում կախված նկարներ:

Նույն աշխարհն է սա, որ մենք մի անգամ
մեր ձեռքով շոշափել ենք, տեսել ենք, ապրել,
ո՞ր են մեր նավակները, որ բաց ենք թողել
ջրերի մեջ քարացած և անշարժ գետի:

Մենք այնտեղ մնացել ենք, մենք այնտեղ մեր վերջին
երազն ենք տեսել, մեզ այնտեղ աստվածները
անուն են տվել, մեզ նրանք
պահել են իրենց քնի մեջ

կենդանի և արթուն, ապրելու իրար հետ
ջրերի մեջ քարացած և անշարժ գետի:
Սիրելիս, մենք եղել ենք, եղել:
(«Սիրելիս, մենք եղել ենք»)¹⁹

«Օր առանց հանդերձանքի», «Երկու կղզիներ», «Ես հիշում եմ» և
«Սիրելիս, մենք եղել ենք» բանաստեղծությունների մետաբանաստեղծա-
կան կառուցվածքի բանաստեղծական խորհրդանշական պատկերները ոչ
միայն զուգորդվում են, այլև ձևավորում են իմաստային համընդհանրա-
կան շղթա: «Սիրելիս, մենք եղել ենք» բանաստեղծությունում դրախտի
պատկերն է:

Հանդերձյալ աշխարհի ու դրախտի մասին պատկերացումները տի-
րապետող են պատմական յուրաքանչյուր դարաշրջանում, և չնայած տար-
բեր քաղաքակրթություններում, տարբեր կրոնական, դիցաբանական պատ-
կերացումներում տարբեր կերպ է այն պատկերվում, այնուամենայնիվ,
էությունը նույնն է: Եթե «Օր առանց հանդերձանքի», «Լռությունը նույնն է,
տարբեր են խոսքերը» բանաստեղծությունների բանաստեղծական պատ-
կերները մոտենում են դանթեական դրախտային պատկերին, այլ կերպ
ասած՝ եթե վերոնշյալ բանաստեղծությունների պրոտոտեքստը Դանթեի
«Աստվածային կատակերգության» դրախտային պատկերն է, ապա այս
անգամ պատմությանը ավանդված գենետիկ հիշողությունը բանաստեղ-

¹⁹ Էդոյան 2016, 481:

ծին տանում է դեպի սեփական արմատները. «Սիրելիս, մենք եղել ենք» բանաստեղծության դրախտի արքետիպական պատկերը մոտենում է Առաքել Սյունեցու «Դրախտագրքին»²⁰, չնայած նրան, որ դրախտի պատկերը բանաստեղծությունում «անտեսանելի» է, իսկ ավելի կոնկրետ՝ սիմուլյակր է: Բանաստեղծական սյուժեն կառուցված է այնպես, որ նրանում ձևավորվում է եռակի զուգահեռականություն (բանաստեղծական տեքստ - «Աստվածային կատակերգություն: Դրախտ»- «Դրախտագիրք»): Եթե դանթեական դրախտը երկրային իրականության այլատեսակ «պատճենն» է՝ պատմական իրողություններով, մարդկային դեմքերով ու որակներով, ապա Առաքել Սյունեցու դրախտը այսաշխարհից տարբերվող, չսահմանավորված, չտարաբաժանված անսահմանություն է՝ «չանձնավորված» ոգեղեն էակներով. նույն պատկերն է նաև բանաստեղծությունում՝ «...դեմքերն անձանոթ են, ասես մի օտար//պատկերասրահում կախված նկարներ...»: Սակայն «...մեզ այնտեղ աստվածները//անուն են տվել...» պատկերը, այնուամենայնիվ, բանաստեղծության դրախտային տեսարանը մոտենցնում է նաև Դանթեի պատկերած դրախտին, որի բնակիչներն անանուն էակներ չեն, այլ պատմական, դիցաբանական, աստվածաշնչյան անհատականություններ, որ պահպանել են տեսակի նույնականությունը:

Կրկնվող «նավ» բառապատկերը («...մեր նավերը կորել են հեռու ջրերում...», «...ո՞ր են մեր նավակները, որ բաց ենք թողել//ջրերի մեջ քարացած և անշարժ գետի...») սահմանում է դիցաբանական-վախճանաբանական մոտիվների մի ամբողջ համալիր՝ բնութագրելով մարդու ճակատագիրը համընդհանուր կատեգորիաներում (գոյություն-չգոյություն-այլագոյություն):

Հնագույն քաղաքակրթություններից շատերի (հունական (Քարոն), հնդկական (Սաթյավիտի), շումերաաքադական (Ուրշանաբի), հին եգիպտական և այլն) դիցաբանական պատկերացումներում, մահվան ջրերի վրայով լողալով, նավը երկիր է գալիս և հանդերձյալ աշխարհ «փոխադրում» մահացածների ոգիներին, ինչպես նաև նույն նավով հանդերձյալ աշխարհից վերածնվող ոգիներին վերադարձնում երկրային իրականություն²¹: «Հեռու ջրերում կորած նավերի» «փնտրտուքը» կապված է քնա-

²⁰ Առաքել Սյունեցի 1956:

²¹ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Мифы народов мира 2003, 33, 461-463: Նավը քրիստոնեության խորհրդանիշն է: Հիպպոլիտոսն այն նույնացնում է քրիստո-

րական «ես»-ի ու նրա հետ, որի հետ «մի անգամ ապրել» ու «ծեռքով շոշափել է աշխարհը», նորից վերածնվելու գաղափարի հետ:

Եզրակացություններ

Այսպիսով՝ բանաստեղծությունում գործածված արքետիպերի գիտական-տեսական վերլուծությունը թույլ է տալիս ներթափանցել ստեղծագործության իմաստային-փիլիսոփայական խորքային շերտերը, պատկերային ու իմաստային մակարդակներում փնտրել բանաստեղծությունում գործածված գեղարվեստական նախապատկերի ներիմաստը, իրերի և երևույթների համընդհանրական նախասկիզբը, էզոթերիկական ենթատեքստերն ու դիցաբանական սկզբնաղբյուրները:

Կարելի է ասել, որ «Վերլուծական հոգեբանության և բանաստեղծական-գեղարվեստական ստեղծագործության կապի մասին» հոդվածում և այլ աշխատություններում անալիտիկ հոգեբանության հիմնադրի առաջ քաշած տեսության ճշմարտացիության լավագույն հաստատումը կարելի է համարել Հ. Էդոյանի «Օր առանց հանդերձանքի», «Երկու կղզիներ», «Ես հիշում եմ», «Սիրելիս, մենք եղել ենք» բանաստեղծությունները:

Գրականություն

- Աստուածաշունչ (Հին եւ Նոր կտակարանաց) 1929, Երրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած, Վիէննա, ամերիկեան Աստուածաշունչի ընկերութիւն:
- Առաքել Սյունեցի 1956, Դրախտագիրք, հրատարակեց՝ Ներսես Վարդապետ Տեր Ներսեսյան, Վենետիկ, Ս. Ղազարի հրատ., 205 էջ:
- Զաքարյան Հ. 2019, Կենսագրական և վերապրումի հիշողության հարաբերակցության խնդիրները (Հ. Էդոյանի պոեզիայի օրինակով), Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, N 2 (29), էջ 69-80:
- Էդոյան Հ. 2009, Շարժում դեպի հավասարակշռություն: Հոդվածներ, էսսեներ, Երևան, «Փրինտինֆո», 501 էջ:
- Էդոյան Հ. 2016, Ընտրանի, Երևան, «Հայագիտակ», 794 էջ:
- Батай Ж. 1997, Внутренний опыт, Санкт-Петербург, «Аxioma», 336 с.
- Бодрийяр Ж. 1996, Симулякры и симуляция. Философия эпохи постмодерна, Минск, «Красико-Принт», 360 с.
- Геннеп А. ван 1999, Обряды перехода. Систематическое изучение обрядов, пер. с франц. Ю.В. Иванова, Л.В. Покровская, Москва, «Восточная литература» РАН, 198 с.

Նեական եկեղեցու հետ. եկեղեցին՝ ավերված ալիքների վրա, որը երբեք չի խորտակվում (Южин <https://books.google.am/books>):

«Երկու կղզի» («կղզու» արքետիպ), աստվածաշնչյան արքետիպական խորհրդանիշներ ու պատկերներ (ջրի սիմվոլիկա, դրախտի, Սուրբ Քաղաքի արքետիպեր և այլն):

Հ. Էդոյանի կողմից արքետիպական, դիցաբանական խորհրդանիշների և պատկերների վերաիմաստավորումը դրսևորվում է ինչպես գիտակցական, այնպես էլ անգիտակցական մակարդակում գործածումով:

Բանալի բառեր՝ կոլեկտիվ անգիտակցական, արքետիպ, խորհրդանիշ, բանաստեղծություն, միֆ, քնարական «ես», հիշողություն:

АРХЕТИПИЧЕСКИЕ ОБРАЗЫ КОЛЛЕКТИВНОГО БЕССОЗНАТЕЛЬНОГО В ПОЭТИЧЕСКОМ МИРЕ ГЕНРИХА ЭДОЯНА

Рипсиме Закарян

Резюме

В современную науку термин «архетип» был введен основателем аналитической психологии, автором теории коллективного бессознательного К.Г. Юнгом в XX веке. Согласно К. Юнгу, архетип является базирующимся на человеческом опыте праобразом, который передается из поколения в поколение.

Количество архетипов в коллективном бессознательном не имеет ограничений. Но особое внимание в теории К. Юнга уделяется архетипу персоны, анимы и анимуса, тени и самости, которые в виде символов нашли отражение в живописи, литературе, религии.

В поэзии Г. Эдояна есть разные архетипические образы и символы: «Все та же тишина, слова разные» (архетип «тени»), «День без наряда» (архетип «ребенка»), «Два острова» (архетип «острова»), библейские архетипические символы и образы (символика воды в нескольких стихотворениях, архетип рая, Святого Города и т.д.).

Ключевые слова – коллективное бессознательное, архетип, символ, стих, миф, лирическое «я», память.

THE ARCHETYPAL IMAGES OF THE COLLECTIVE UNCONSCIOUS IN HENRIK EDOYAN'S POETIC WORLD

Hripsime Zakaryan

Abstract

In contemporary science, the term "archetype" was first proposed by the founder of 20th century analytical psychology, author of the theory of collective unconscious K. G. Jung. According to him, the archetype is a prototype based on human experience that has been passed down from generation to generation.

The number of archetypes in the collective unconscious is unlimited. However, in K. G. Jung's theory are mostly emphasized the archetypes of persona, anima, animus, shadow, and the self, which are displayed in the form of symbols in art, literature, and religion.

Various archetypes and symbols are visible in H. Edoyan's poetic world. Archetypal images and symbols are observed in H. Edoyan's "Silence is the same, words are different" ("shadow" archetype), "Day without clothes" ("child" archetype), "Two islands" ("island" archetype), biblical archetypal symbols and images (water symbolism, in several poems), the archetypes of paradise, the Holy City, etc.).

Rethinking of archetypal, mythical symbols and images by H. Edoyan is displayed through their use both at conscious and unconscious levels.

Key words – collective unconscious, archetype, symbol, poetry, myth, lyric "I", memory.

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ «ԼՐԱԲԵՐԻ» ԷԶԵՐՈՒՄ. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Աննա Ասատրյան

Արվեստագիտության դոկտոր
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդամյան պողոտա 24/4
Էլ. հասցե՝ annaasatryan2013@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 24.09.2020, գրախոսվել է 12.10.2020, ընդունվել է
տպագրության 01.03.2021

Ներածություն

2021 թ. լրանում է հայ ականավոր կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 150-ամյա հոբելյանը: Մեր նպատակն է լուսաբանել ականդեմիական սպենդիարյանագիտության կայացման ու առաջընթացի գործում «Լրաբեր հասարակական գիտությունների» գիտական պարբերականի (մինչև 1966 թվականը՝ «ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների») ներդրումը:

Ակադեմիական սպենդիարյանագիտության ակունքներում

Ալ. Սպենդիարյանի ստեղծագործության ուսումնասիրման գործում նշանակալի և արժեքավոր է ականդեմիական սպենդիարյանագիտության ներդրումը: 1951 թ. նոյեմբերի 5-ին ՀՍՍՌ ԳԱ արվեստների պատմության ու տեսության սեկտորը կազմակերպել էր գիտական նստաշրջան՝ նվիրված Սպենդիարյանի ծննդյան 80-ամյակին, իսկ 1952-ին լույս էր տեսել սեկտորի աշխատակից Քնարիկ Գրիգորյանի «Ալեքսանդր Սպենդիարով (կյանքը և ստեղծագործությունը)» մենագրությունը: Սեկտորի ջանքերով մեկնարկել էր կոմպոզիտորի Երկերի լիակատար ժողովածուի ականդեմիական հրատարակության գործը, և լույս էին տեսել երկրորդ (1955), երրորդ (1951) և չորրորդ (1953) հատորները:

«ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների» գիտական պարբերականի 1954 թ. 10-րդ համարում տպագրվում է Մաթևոս Մուրադյանի «Հայ-ուկրաինական երաժշտական կապերի պատմություն-

նից» հոդվածը: Հեղինակն էջեր է հատկացրել ուկրաինական Կախովկա քաղաքում ծնված Ա. Սպենդիարյանին¹, որը մանկության տարիներից մշտապես շփվել է ուկրաինացիների հետ և մշակել ուկրաինական ժողովրդական երգեր՝ 7 մեներգ, 5 զուգերգ ու երկու խմբերգ: Մ. Մուրադյանը քննության է առնում Սպենդիարյանի խմբերգային մշակումները՝ «Як умиє» («Երբ մեռնեմ») a cappella խմբերգը և «Ուկրաինական սյուիտը», ինչպես նաև անդրադառնում Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 10-րդ տարեդարձին նվիրված «Ալմաստի» բեմադրությանն Օդեսայում (1930 թ. դեկտեմբերի 26-ին), որը «վերածվեց երկու ժողովուրդների միջև եղբայրական կապերի ամրապնդման հուզիչ ցույցի»²:

«ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների» գիտական պարբերականի առաջին ծավալուն անդրադարձը կոմպոզիտորի ժառանգության ուսումնասիրությանը նշանավորվեց 1955 թ. 7-րդ համարում տպագրված Ա. Տեր-Ղևոնդյանի «Ա.Ա. Սպենդիարովի օրկեստրավորումը» հոդվածով³: Նկատենք, որ թեև հոդվածի հեղինակի մասին ոչ մի ուրիշ տեղեկություն չկա, բացի «Ա. Տեր-Ղևոնդյան» նշումից, սակայն, մեր համոզմամբ, հոդվածի հեղինակը հայ կոմպոզիտոր և մանկավարժ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Անուշավան Գրիգորի Տեր-Ղևոնդյանն է:

Ա. Տեր-Ղևոնդյանը Սպենդիարյանի նվագախմբային ստեղծագործությունը բաժանում է երեք շրջանի՝ քննության առնելով դրանցից յուրաքանչյուրը և բացահայտելով կոմպոզիտորի նվագախմբային գրելաոճի առանձնահատկությունները: Այսպես, մանրախույզ ուսումնասիրելով Ա. Սպենդիարյանի նվագախմբային ստեղծագործության առաջին շրջանին պատկանող երկերը, հեղինակը նկատում է, որ «Սպենդիարովն իր ստեղծագործության առաջին շրջանում գտնվել է ինչպես ռուսական, այնպես էլ արևմտաեվրոպական կոմպոզիտորների ազդեցության տակ և հանդես է բերել օրկեստրավորման այն պրիոմները, որոնք սովորական էին դարձել համաշխարհային օրկեստրային գրականության լավագույն նմուշների երևան գալու ժամանակից»⁴:

Անդրադառնալով Սպենդիարյանի նվագախմբային ստեղծագործության երկրորդ շրջանին, երբ ստեղծվեցին նրա հասուն և առավել աչքի

¹ Տե՛ս Մուրադյան 1954, 52-56:

² Մուրադյան 1954, 56:

³ Տեր-Ղևոնդյան 1955, 39-47:

⁴ Տեր-Ղևոնդյան 1955, 39:

ընկնող գործերը՝ հեղինակը նկատում է, որ «այդ շրջանում (մինչև Հայաստան տեղափոխվելը – Ա.Ա.) արդեն Ալ. Սպենդիարովը բոլորովին հասունացած գործիքավորող է: Նա հանդես է գալիս գիտելիքներով կատարելապես զինված որպես օրկեստրավորման հմուտ երաժիշտ, բայց միաժամանակ որպես այն ժամանակվա առաջավոր օրկեստրային մտածողության արտահայտիչ: Տվյալ ժամանակաշրջանի մի քանի պարտիտուրներ, որոնք գրված են եռակի կազմ ունեցող օրկեստրի համար, հարստանում են նոր գործիքներով»⁵:

Պարտիտուրներում առաջին անգամ՝ «Ղրիմի էսքիզների» երկրորդ սերիայից «Հարսնացուի ողբում», «Պեշրաֆում», «Բաղլամա պարում» և «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերում, կոմպոզիտորը կիրառում է կոնտրֆագոտը: Ա. Տեր-Ղևոնդյանը նկատում է, որ կոմպոզիտորը պարտիտուրներում գործիքներն ընդգրկում է ոչ թե հետևելով ավանդույթներին ու ընդունված շաբլոններին, այլ՝ ըստ անհրաժեշտության: Օրինակ՝ ««Ղրիմի էսքիզների» նույն սերիայից «Սիրո երգը», որտեղ մենք տեսնում ենք փայտափողային գործիքների միապատիկ կազմի կիրառումը, կամ «Օրորոցայինը» («Ղրիմի էսքիզներից»), որտեղ լարային խմբի ֆոնի վրա հնչում է միայն մեկ հորթը»⁶:

Հոդվածագիրն անդրադառնում է կոմպոզիտորի՝ լարային խմբի տեմբրային գույների մասնակի փոփոխությանն ուղղված հնարքների կիրառմանը: «Օրկեստրի մի մասը նվագում է, օգտագործելով սուրդինաներ (con sordini), իսկ միաժամանակ մյուս մասը նվագում է առանց սուրդինաների (non sordini): Լարային խմբերում օգտագործվում են և ուրիշ պրիոմներ, ինչպես, օրինակ՝ ֆլաժոլետներ, պիցիկատո: Լարային խմբի առանձնահատկությանն է պատկանում և մելոդիկ ծայնի կրկնապատկվելը ունիսոն կամ օկտավա, որի ժամանակ կիրառվում են ֆիգուրաներ կարճ նոտաներով»⁷:

Ա. Տեր-Ղևոնդյանը մանրամասն բացահայտում է «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերի գործիքավորման առանձնահատկությունները. Սպենդիարյանը խմբերի հերթագայության և նվագախմբի հնչողության մեջ տեղի ունեցող հաջորդական դինամիկ փոփոխությունների միջոցով դրսևորում է բացառիկ վարպետություն: Ա. Տեր-Ղևոնդյանն ընդգծում է,

⁵ Տեր-Ղևոնդյան 1955, 40:

⁶ Տեր-Ղևոնդյան 1955, 40:

⁷ Տեր-Ղևոնդյան 1955, 40:

որ «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերի գործիքավորման մեջ կոմպոզիտորն օգտագործել է դինամիկ և տեմբրային հնարքների բոլոր տեսակները, իսկ լարային գործիքները կիրառում են ամեն տեսակ շտրիխներ:

Ա. Տեր-Ղևոնդյանը, քննության է առնում այն հնարքները, որոնք կիրառել է կոմպոզիտորը քարավանի մոտենալու և հեռանալու պատկերն ստեղծելիս: «Կարավանի մոտենալու ժամանակ մի շարք գործիքներ մուտք են գործում իրար հաջորդելով, իսկ կարավանի հեռանալու ժամանակ նույն գործիքները դադարեցնում են նվազը հակառակ կարգով»⁸:

Այնուհետև հոդվածի հեղինակը բացահայտում է «Ղրիմի էսքիզների» նվագախմբային լեզվի առանձնահատկությունները: «Սպենդիարովի օրկեստրը, - նկատում է Ա. Տեր-Ղևոնդյանը, - բացառիկ հնչման է հասնում «Հարսնացուի լացը» էսքիզում: Օրկեստրավորումը համապատասխանում է մոայլ կոլորիտին և կառուցված է հնչման ստորին և միջին ռեգիստրների (ծայնախմբերի) վրա: Անգլիական փող կիրառելը նրա մելամաղձոտ տեմբրով, և կլառնետ կիրառելը միջին ու ստորին ռեգիստրում, նրա դրամատիկական տեմբրերով հաղորդում է լաց լինող հարսնացուի ողբերգությունը»⁹:

Սպենդիարյանի տեմբրային հնարամտության վկայություններից է «Մկնիկի մասին» կատակերգի գործիքավորումը: «Գույների առատությունը ձեռք է բերվում բազմատեսակ շտրիխներով, որոնք կիրառվում են գործիքների նույն խմբի սահմաններում և միևնույն ժամանակ: Բացի դրանից, մի շարք այնպիսի էֆեկտներ կիրառելը, ինչպիսիք են, օրինակ՝ ֆլաժոլետներով հանդես եկող ջութակների *tamburo coperto*-ն լարային գործիքների շտրիխների արագ հերթափոխությունը, *corni con sordini* և այլն, որոնք օժանդակում են օրկեստրավորման գունեղությանը: «Ղրիմի էսքիզներ»-ի օրկեստրավորումը (2-րդ սերիան) բարձր մակարդակի վրա է կանգնած, և օրկեստրը Սպենդիարովի կողմից օգտագործվում է որպես խոշոր չափով արտահայտիչ գործիք: Որպես արևելքի զավակ՝ Սպենդիարովը մեծ զգայունությամբ է ականջ դնում և ընկալում իր ժողովրդի ամենաբարդ պարային դիթամբը, որով և մեծ չափով կիրառում է գլխավորապես մանր հարվածային գործիքները ամենաբազմազան ու բարդ դիթամբով»¹⁰:

⁸ Տեր-Ղևոնդյան 1955, 42:

⁹ Տեր-Ղևոնդյան 1955, 43:

¹⁰ Տեր-Ղևոնդյան 1955, 43:

Հոգվածի երկրորդ բաժնում Ա. Տեր-Ղևոնդյանը քննության է առնում Սպենդիարյանի նվագախմբային ստեղծագործության երրորդ շրջանում, այն է՝ Հայաստանում գրված ստեղծագործությունների՝ «Երևանյան էտյուդների», «Ղարիբ բլբուլի»՝ ծայնի և նվագախմբի համար, և «Ալմաստ» օպերայի պարտիտուրները:

Բացահայտելով «Երևանյան էտյուդների» առաջին պիեսի՝ «Էնգելիի» գործիքավորման առանձնահատկությունները, Ա. Տեր-Ղևոնդյանը նկատում է, որ կոմպոզիտորն աշխատել է ընդհուպ մոտենալ ժողովրդական ոճին: «Այս երկի մեջ Սպենդիարովը, - գրում է Ա. Տեր-Ղևոնդյանը, - աչքի ընկնող հետևանքների է հասնում արևելքի ժողովրդական գործիքների իմիտացիայի իմաստով: Անգլիական փողը, ֆագոտները, առաջին ջութակը և 33-րդ տակտում ֆլեյտայի solo-ն մյուս լարային գործիքների ֆոնի վրա հնչման տեմբրով տալիս են ժողովրդական գործիքների արևելյան օրկեստրի հնչեղության իմիտացիա: «Էնգելիի» ամբողջ ներածական մասը՝ *Largetto*-ն, օրկեստրավորված է այն հաշվով, որ տրվի արևելյան ժողովրդական գործիքների տեմբրային հնչունությունը»¹¹:

Սպենդիարյանի սիմֆոնիկ ստեղծագործությունների պարտիտուրների ուսումնասիրությունը Ա. Տեր-Ղևոնդյանը եզրափակում է «Ալմաստ» օպերայի՝ «Սպենդիարովի ստեղծագործության գագաթնակետի...»¹², գործիքավորման քննությամբ: Օպերայի գործիքավորումը մեծ մասամբ, մասնավորապես 1-ին և 2-րդ գործողությունների ընթացքում՝ բացառությամբ «Պարսկական քայլերգի» և «Թաթուլի վերադարձի», տրվում է «փսիսոցով, նուրբ կերպով կերպարանափոխվող, առանձին և երբեմն էլ միաձուլվող տեմբրերով: Անպայման, այդպիսի օրկեստրավորման մեջ լարային խումբը ինչպես իր քանակությամբ, այնպես էլ իր որակով պիտի հանդես գա առավելագույն չափով, նամանավանդ, որ մի շարք էֆեկտների հասնելու համար այդ օրկեստրավորումը ստորաբաժանվում է տարբեր պարտիաների վրա, ըստ պուլտերի, սուրդինավոր և անսուրդին խմբերի վրա, ֆլաժոլետներով նվագողների և "pizzicato" sul ponticello խմբերի վրա»¹³:

Ա. Տեր-Ղևոնդյանը բացահայտում է, որ Սպենդիարյանն իր պարտիտուրներում յուրահատուկ տեղ է տվել հորոյին. «հորոյն իր տեմբրով մեր դուդուկին է հիշեցնում կամ հեռվից լսվող զուռնային, և դրա համար էլ

¹¹ Տեր-Ղևոնդյան 1955, 44:

¹² Տեր-Ղևոնդյան 1955, 45:

¹³ Տեր-Ղևոնդյան 1955, 45:

Սպենդիարովը շատ հաճախ է օգտվում հորոյից: Սպենդիարովը լավ է հիշում իր ուսուցչի ավանդները. նա խորհուրդ էր տալիս խնամքով գործածել օրկեստրային գույները, որովհետև լսողությամբ և էսթետիկական զգացմունքով միատեսակ և երկար ժամանակով և առանց հոգնածության կարող են յուրացվել-հասկանալի լինել ոչ բոլոր գործիքները: Որևէ խմբի կամ գործիքի երկարատև լռությունն «առանձնապես թարմացնող է դարձնում նրա մուտքը»: Ահա թե ինչու Սպենդիարովի մոտ այնպես թարմ է հնչում կլառնետի solo-ն երրորդ ակտում՝ կանանց պարերում»¹⁴:

Ինչ վերաբերում է անգլիական փողին, ապա կոմպոզիտորն այն «գործադրության մեջ է դնում վերահաս դրամայի կամ տրագեդիայի մոմենտին: Բավական է հենց հիշել «Ալմաստ» օպերայի երրորդ գործողությունը, երբ Թաթուլի զինվորները, ուխտադրժորեն թունավորված թշնամու տված գինով, աստիճանաբար քնում են, և նրանց կոտորած է սպառնում Նադիր շահի զորքերի կողմից: Այստեղ անգլիական փողը իր ֆրագով լարային գործիքների ֆոնի վրա ունկնդիրներին ստիպում է ցնցվել. այրող կսկիծ է առաջացնում հենց միայն այն միտքը, որ այս բոպեին տեղի կունենա սոսկալի դրաման՝ իրենց հայրենիքը սիրող, նրան նվիրված զավակների՝ Թաթուլի և նրա քաջ զինվորների կոտորածը»¹⁵:

Սպենդիարյանը փայտյափողայիններից բաս կլառնետը, առանձնապես ստորին ռեգիստրում իր մոայլ ու անորոշ հնչողությամբ, «կիրառում է այնտեղ, որտեղ անհրաժեշտ է երանգավորել դրամատիկ մոմենտը: Այդ մոմենտը դեռ չի հասել, բայց շողոքորթ օձի պես գալարվելով մոտենում է, որ վնաս հասցնի: Սպենդիարովը տաղանդավոր կերպով կիրառում է այդ գործիքը, տալով նրան ինչ-որ սարսափելի բան գուշակողի դերը: Լսելով կանանց հիանալի երգը բաս կլառնետի չարագուշակ հնչյունների ուղեկցությամբ, արդեն զգում ես, որ ինչ-որ չարիք կլինի»¹⁶:

Կոմպոզիտորն «Ալմաստ» օպերայում պղնձյա-փողային գործիքները հաճախ է օգտագործում սուրդինաներով: «Երբեմն նա հանձնարարում է կայուն նոտաներ piano, իսկ երբեմն էլ այդ նոտաները փայլատակում և լռում են: Այնտեղ, որտեղ «Ալմաստ» օպերայի երաժշտությունը անվեհեր և հերոսական է, ինչպես, օրինակ, առաջին գործողության Պարսկական քայլերթում կամ երկրորդ գործողության վերջին՝ Թաթուլի վերադառնալու

¹⁴ Տեր-Ղևոնդյան 1955, 45-46:

¹⁵ Տեր-Ղևոնդյան 1955, 46:

¹⁶ Տեր-Ղևոնդյան 1955, 46:

պահին, կամ երրորդ գործողության վերջին՝ ճակատամարտը և Նադիր շահի մուտքը Թմկաբերդ, Սպենդիարովը պղնձե գործիքների օգնությամբ հզոր հնչողության է հասնում: «Ալմաստ» օպերայի երրորդ գործողության ֆինալը տեմբրային գույների իր առատությամբ, իր փայլուն հնչողությամբ, էֆեկտի հոյակապությամբ և շարժման վեհությամբ Սպենդիարովի օրկեստրավորման ամենաբարձր կետն է: Այստեղ փայլուն օրկեստրավորումից բացի, անհրաժեշտ է եղել մեծ դիապազոնի՝ ավելի պայծառ ու մասսիվ հնչողություն, և Սպենդիարովը դրան հասնում է իր տաղանդի շնորհիվ»¹⁷:

Միևնույն ժամանակ՝ ստեղծելով ազգային բնույթի երաժշտություն, սիմֆոնիկ նվագախմբի միջոցով Սպենդիարյանը փորձում էր փոխանցել ժողովրդական գործիքների կատարմամբ իր լսած ինտոնացիաները: «Այս տեսակետից, - նկատում է Ա. Տեր-Ղևոնդյանը, - առավել բնորոշ են Սպենդիարովի վերջին երկու երկերը՝ «Երևանյան էտյուդներ»-ը և «Ալմաստ» օպերան: Այս երկերի մեջ մենք տեսնում ենք հայկական պայծառ կոլորիտ, որ ձեռք է բերվում կոմպոզիտորի գեղարվեստական նրբազգացումով, նրա հնարամտությամբ: Սուրդինավոր վալտորնայի կայուն նոտայի կիրառումը մոտեցնում է վալտորնայի հնչունությունը դուդուկի հնչունությանը: Քիչ խլացրած փողբիկ թմբուկի հնչունությունը նաղարայի (տիմպլիպիտոյի) հնչունությանը: Այս երկու օրինակները մենք տեսնում ենք «Երևանյան էտյուդներ»-ում: «Ալմաստ» օպերայում աշուղի արիայում ջութակի սոլոն նմանվում է քյամանչա ժողովրդական գործիքին: Հորոյների և կլառնետների անցումը կվարտաններով, ֆլեյտայի, լարային գործիքների ֆոնի վրա, որոնց մի մասը նվագում է pizzicato, իսկ մյուս մասն էլ աղեղով arco (օպերա «Ալմաստ», Պարսկական քայլերգ, միջին մաս): Այդ բոլորը մեզ հիշեցնում է թառի և քյամանչայի համատեղ նվագը: Օրկեստրավորման հենց նույն պրիոմն էլ մենք տեսնում ենք «Ալմաստ» օպերայի կանանց պարի մեջ: Երեք հորոյների կիրառումը ստորին ռեգիստրում ունիստն Ալմաստի պարի սկզբում համանուն օպերայից իր հնչունությամբ հիշեցնում է մեր զուռնան և դուդուկը»¹⁸:

Եզրափակելով կոմպոզիտորի տեմբրային դրամատուրգիայի առանձնահատկությունների բացահայտմանը նվիրված իր հետազոտությունը՝ Ա. Տեր-Ղևոնդյանը նկատում է, որ «Սպենդիարովը առաջին օրկեստրային

¹⁷ Տեր-Ղևոնդյան 1955, 46:

¹⁸ Տեր-Ղևոնդյան 1955, 47:

կոմպոզիտորն է, որ երգել է արևելքը նրա ժողովուրդների իսկական երաժշտական լեզվով, երաժշտական գրության համաշխարհային տեխնիկայի օգնությամբ»¹⁹:

Այսօր պետք է արձանագրենք, որ հայ երաժշտության մեջ սիմֆոնիկ առաջին օpus-ները դեռևս XIX դարում ստեղծել էր Տիգրան Չուխաճյանը, որը նույնպես սիմֆոնիկ գրելաոճի մեծ վարպետ էր՝ իր Արևելք-Արևմուտք սինթեզն իրականացրած հայ առաջին կոմպոզիտորը:

Տեղեկագրի 1958 թ. 10-րդ համարի «Հաղորդումներ» բաժնում տպագրվում է Քնարիկ Գրիգորյանի «Ա. Սպենդիարյանի նորահայտ նամակները» հոդվածը:

Այդ տարիներին գրականության և արվեստի թանգարանում պահվող Սպենդիարյանի արխիվում կար մոտ 2000 նամակ, որոնցից տպագրվել էին 25-30-ը: Ք. Գրիգորյանն այս ֆոնդից առանձնացնում է և մանրամասն ներկայացնում կոմպոզիտորի՝ օպերային և համերգային երգչուհի, ռեժիսոր և մանկավարժ Վարվառա Ապոլոնովնա Էբերլեին²⁰ հասցեագրած նամակները:

1892-ին, երբ Սպենդիարյանն ապրում էր Մոսկվայում, «Եղբայրասիրական ընկերության» տանը, Մելգունովների բնակարանում²¹, սենյակներից մեկը զբաղեցնում էր «վորոնեժցի կալվածատեր Էբերլեի դուստրը, որը Մոսկվա էր եկել երգել սովորելու նպատակով: Նրա անունն էր Վարվառա Ապոլոնովնա»²²: Վարվառան բարձրահասակ, վայելչակազմ աղջիկ էր, կանաչ աչքերով, մայրամուտի շողերով լուսավորված շագանակենու

¹⁹ Տեր-Ղևոնդյան 1955, 47:

²⁰ 1892-93 թթ. թատերաշրջանում Վարվառա Էբերլեն հանդես է եկել Մեծ թատրոնում՝ կատարելով մի շարք գլխավոր դերերգեր: Առանձնապես աչքի են ընկել նրա կերտած Տառնան՝ Չայկովսկու «Եվգենի Օնեգինում» և Նատաշան՝ Դարգոմիժսկու «Ջրահարսում»: 1894-ին ծայնը կատարելագործելու նպատակով նա մեկնել է Փարիզ և միաժամանակ հանդես եկել ռուսական երգերի կատարմամբ և բալալայկայի նվագով: 1897-1898 թթ. թատերաշրջանում Մամոնտովի մասնավոր թատրոնում Ռիմսկի-Կորսակովի «Պսկովուիին» օպերայում երգչուհին հանդես է եկել Շայապինի հետ. Շայապինը կատարել է Իվան Ալեքի, իսկ Էբերլեն՝ նրա դստեր՝ Օլգայի դերերգերը: Երգչուհին բարեկամական հարաբերություններ է ունեցել ինչպես Սպենդիարյանի, այնպես էլ Շայապինի, Վրուբելի, Լևիտանի, Փոքր և Գեղարվեստական թատրոնների մի շարք դերասանների հետ:

²¹ Տե՛ս Սպենդիարովա 1966, 46:

²² Սպենդիարովա 1966, 46:

գույնի մուգ շիկավուն մազերով²³:

Երիտասարդ կոմպոզիտորի համար երգչուհին դարձավ ներշնչանքի աղբյուր՝ նրա համար է գրել ու նրան նվիրել իր ռոմանսներից մի քանիսը, այդ թվում՝ «Էլ վաղուց ոչ մի հարց» (խոսք՝ Վ. Սոլովյովի) և «Ես դեռ չեմ սիրում» (խոսք՝ Ս. Մինսկու) լիրիկական ռոմանսները, «Փոքրիկս, մի՛ լար» (խոսք՝ Պ. Կոզլովի) և «Կալանանք» զուգերգը (խոսք՝ Ն. Յագիկովի):

Ուշագրավ է Սպենդիարյանի՝ երգչուհուն հասցեագրած նամակների ճակատագիրը: Ինչպես պատմել է Վարվառա Ապոլոնովայի քույրը՝ 1944-ին նամակները Սպենդիարյանի դուստր Մարինա Սպենդիարովային հանձնելիս, «մեկ տարի ձգվող հիվանդության ընթացքում Վառվառան այդ նամակները պահում էր բարձի տակ»²⁴:

Ք. Գրիգորյանը Սպենդիարյանի նամականուց ընտրում է հատկապես էբերլեյան էջը, քանի որ մի կողմից՝ իրենց հետաքրքրականությամբ հանդերձ, դրանք անծանոթ էին երաժշտական հասարակայնությանը, իսկ մյուս կողմից՝ «լույս են սփռում Սպենդիարյանի կյանքի մի շրջանի վրա, որի վերաբերյալ քիչ տվյալներ և փաստաթղթեր են պահպանվել»²⁵: Այդ նամակները յոթն են. դրանք Ք. Գրիգորյանը հայտնաբերել է Մոսկվայում, ՍՍՀՄ երաժշտական կուլտուրայի կենտրոնական թանգարանում²⁶: Նամակներն ընդգրկում են 1893 և 1894 թվականները:

1893 թ. հունիսի 4-ի նամակում Սպենդիարյանը գրում է. «Ձեզ հետ ինձ նույնքան լավ էի զգում, որքան այստեղ իմ քույրերի և մորս հետ: Լինում էր և ավելի լավ. Դուք իմ մեջ ոչ միայն անկեղծ ընկերության զգացմունքներ առաջացրիք, այլև ինձ մղեցիք դեպի նոր ստեղծագործությունների կերտում»²⁷:

Սպենդիարյանի՝ այդ շրջանում ստեղծված շատ ռոմանսներ առաջին անգամ կատարել է հենց էբերլեն՝ օգտվելով հեղինակի անմիջական ցուցումներից: «Ինձ համար, - գրել է կոմպոզիտորը 1893 թ. օգոստոսի 19-ի նամակում, - շատ հաճելի է, որ իմ ռոմանսները բոլորին դուր են գալիս, և որ Դուք այդ ռոմանսները երգում եք հաջողությամբ»²⁸: Թերթելով նամակ-

²³ Տե՛ս Սպենդիարովա 1966, 46:

²⁴ Սպենդիարովա 1966, 49:

²⁵ Գրիգորյան 1958, 103:

²⁶ Հետագայում՝ 1962 թ. այս նամակների բնագրերը հրատարակվեցին կոմպոզիտորի Նամականիում, որը կազմեց Ք. Գրիգորյանը:

²⁷ Գրիգորյան 1958, 104:

²⁸ Գրիգորյան 1958, 104:

ները՝ Ք. Գրիգորյանն արձանագրում է, որ «Սպենդիարյանի վերաբերմունքը դեպի Էբերլեն մի էպիգոդիկ հափշտակություն է եղել: Մյուս նամակները հաստատում են, թե ինչպիսի անկեղծ ու անմիջական հիշողություններով ու զգացմունքներով կապված է եղել Սպենդիարյանը երգչուհու հետ: Այս բարեկամությունը անձնական մտերմության խնդիր չէր միայն, այլև ստեղծագործական հոգեհարազատության, ճաշակի ընդհանրության հետևանք, որ ամրապնդում էր նրանց մտերմությունը»²⁹:

Այսպես՝ 1893 թ. հունիսի 4-ին նա գրում է. «Նոր էի եկել Սիմֆերոպոլ, երբ նոր ոգեշնչման հորդումն զգացի և հորինեցի մի ռոմանս Կոզլովի հիանալի խոսքերով: Այս ռոմանսը ես ձոնում եմ Ձեզ, եթե միայն նրանք չեն ձանձրացրել Ձեզ: Սակայն ի՞նչ արած, նորից նվիրում եմ «նրան, ով ոգեշնչել է ինձ»: Մոտ օրերս ես Ձեզ կուղարկեմ այդ ռոմանսը, խնդրում եմ ներողամիտ լինեք և երգեք այն, եթե Ձեզ դուր գա: Ես աշխատել եմ հարմարվել Ձեր ծայնին, Ձեր տեմպերամենտին, մտովի պատկերացրել եմ, թե Ձեր կատարմամբ ինչպես պետք է հնչի իմ ռոմանսի յուրաքանչյուր հնչյունը, և եկել եմ այն համոզմունքին, որ այդ ռոմանսը Դուք կերգեք հրաշալի»³⁰:

Թերթելով նամականու էջերը, Գրիգորյանը եզրակացնում է, որ Սպենդիարյանը կարիք ուներ լսելու, թե ինչպես են ընկալում ուրիշներն իր գրածը, և այստեղ նրան հետաքրքրել է երգչուհու կարծիքը. որպես վոկալիստ՝ նա կարող էր ավելի շատ և ավելի ճիշտ զգալ ռոմանսների թե՛ դրական և թե՛ բացասական կողմերը: Հետևաբար՝ նա բարձր էր գնահատում երգչուհու կարծիքն իր ռոմանսների վերաբերյալ:

1893 թ. հունիսի 17-ի նամակում նա գրում է. «Երբ աչքի կանցկացնեք իմ նոր ռոմանսը, խնդրում եմ հաղորդեք Ձեր կարծիքը, որն ինձ համար շատ թանկ է»³¹: Կամ՝ «...ստանալով Ձեր պատասխանը, ես անհպաղ Ձեզ երկրորդ նամակը գրեցի և ուղարկեցի երկու ռոմանս: Իհարկե, ինձ անչափ հետաքրքրում է այս ռոմանսների ճակատագիրը. արդյոք նրանք կհասնե՞ն Ձեզ, և Դուք ինչպե՞ս կվերաբերվեք իմ նոր ստեղծագործություններին»³²:

²⁹ Գրիգորյան 1958, 104:

³⁰ Գրիգորյան 1958, 104:

³¹ Գրիգորյան 1958, 105:

³² Գրիգորյան 1958, 105:

Այս նամակագրությունը վկայում է երիտասարդ երաժշտի հետաքրքրությունների բազմակողմանիության մասին: Չսահմանափակվելով երաժշտության ոլորտով՝ նա շոշափում է թատրոնի և գրականության հետ կապված հարցեր ևս: Իսկ 1894 թ. ապրիլի 12-ի նամակում արտահայտվել են Սպենդիարյանի որոշ գեղագիտական հայացքներ:

«Լրաբերը» և Ալ. Սպենդիարյանի ծննդյան 100-ամյա հոբելյանը

1971 թ. ողջ Խորհրդային Միությունում մեծ հանդիսավորությամբ նշվեց Ալ. Սպենդիարյանի ծննդյան 100-ամյա հոբելյանը: ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը հրատարակեց կոմպոզիտորի Երկերի լիակատար ժողովածուի տասներորդ հատորը՝ Գևորգ Բուդաղյանի խմբագրությամբ, ուր տեղ էր գտել «Ալմաստ» օպերայի կլավիրը:

«Լրաբերի» 1971 թ. 12-րդ համարը բացվում է այդ հոբելյանին նվիրված երկու հրապարակումներով՝ Մաթևոս Մուրադյանի «Հայկական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիրը» և Քնարիկ Գրիգորյանի «Սպենդիարյանը և ռուսական մշակույթը» արժեքավոր հոդվածներով:

«Հայկական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիրը» հոդվածում Մ. Մուրադյանը համառոտ ներկայացնում է կոմպոզիտորի կյանքի ուղին և բնութագրում նրա ստեղծագործությունը: Նա, մասնավորապես, անդրադառնում է հայ և ռուս մտավորականության նշանավոր ներկայացուցիչների հետ կոմպոզիտորի շփումներին, որոնց արդյունքում ծնունդ առան նրա ստեղծագործություններից շատերը՝ հետագայում մեծ տարածում գտնելով, բարձր գնահատականի ու տարբեր հեղինակավոր մրցանակների արժանանալով Ռուսաստանում և Եվրոպայում: Ի դեպ՝ նա «առաջինն էր ոչ միայն հայ իրականության մեջ, այլև ամբողջ Ռուսաստանում, որ դիմեց ռուսական հեղափոխության մրրկահավի՝ Մ. Գորկու բանաստեղծական խոսքին՝ կերտելով երաժշտական ստեղծագործություններ: Դեռևս 1902 թ., Ղրիմում, ծանոթանալով Գորկու հետ, նա ստեղծեց «Ձկնորսն ու փերին» հիանալի բալլադը բասի և սիմֆոնիկ նվագախմբի համար, մի բալլադ, որն արժանացել է բանաստեղծի և հռչակավոր երգիչ Ֆ. Շալյապինի բարձր գնահատականին»³³: Մյուս կողմից՝ Մ. Մուրադյանը ներկայացնում է կոմպոզիտորի սերտ կապերը հայ իրականության հետ, անդրադառնում Թիֆլիսում 1916-ին կազմակերպված նրա հեղինակային

³³ Մուրադյան 1971, 5-6:

համերգին և հանդիպմանը Հովհ. Թումանյանի հետ, որի արդյունքում ծնվեց «Ալմաստ» օպերան, ինչպես նաև Ալ. Ծատուրյանի խոսքերով «Այվարդ» ռոմանսի ստեղծման պատմությանը: «Նա հանդիսացավ հայկական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիրը, - եզրափակում է իր հետազոտությունը Մ. Մուրադյանը,- իր ստեղծագործությամբ հարստացրեց հայկական երաժշտության ժանրերը, թեմատիկ և կերպարային բովանդակությունը, օգտագործեց նոր ու հետաքրքիր արտահայտչական միջոցներ, և որպես սիմֆոնիկ մտածողության, ժողովրդայնության ու ռեալիզմի սկզբունքների վարպետ կիրառող, պատվավոր տեղ գրավեց հայ դասական երաժշտության մեջ»³⁴:

«Սպենդիարյանը և ռուսական մշակույթը» հոդվածում Ք. Գրիգորյանը ներկայացնում է էջեր Սպենդիարյանի և Ռիմսկի-Կորսակովի անձնական և ստեղծագործական շփումներից, որոնք սկիզբ առան 1896-ին: Ականավոր կոմպոզիտորի դրական կարծիքը բախտորոշ եղավ երիտասարդ Սպենդիարյանի կյանքում. նա թողեց իրավաբանի իր ապագան և վերջնականապես ընտրեց երաժշտությունը՝ դառնալով ռուս կոմպոզիտորի «սակավաթիվ աշակերտներից մեկը»³⁵: Այդ մեծ ու հազվադեպ բարեկամությունն ընդհատվեց 1908-ին՝ Ռիմսկի-Կորսակովի մահով: Հոդվածում ներկայացված են նաև Սպենդիարյան-Գլազունով, Սպենդիարյան-Արենսկի, Սպենդիարյան-Չերեպին, Սպենդիարյան-Կյուի, Սպենդիարյան-Գորկի ստեղծագործական ու մարդկային շփումները: Ընդգծելով այն հանգամանքը, որ ռուս բանաստեղծների պոեզիան հաճախ է ներշնչանքի աղբյուր դարձել հայ կոմպոզիտորի համար, Ք. Գրիգորյանը միևնույն ժամանակ նշում է, որ Սպենդիարյանի միջոցով ռուս երաժիշտները ծանոթանում էին հայ մշակույթին: «Սպենդիարովն ինձ խոր մտերմություն ներշնչեց այն ժամանակ դեռ ինձ անծանոթ այդ երկրի, նրա լրջմիտ, աշխատասեր ժողովրդի նկատմամբ, որի հնագույն և վեհ պատմությունը երկարատև համբերության և կյանքի տոկունության պատմություն է, - գրել է Բորիս Ասաֆևը,- Սպենդիարովը ինձ պատմեց հայկական եկեղեցական հնագույն մեղեդիների, ժողովրդական սիրային և օրորոցային երգերի գեղեցկության, սիրո և գեղեցկությամբ հմայվելու պաշտամունքի մասին...»³⁶:

³⁴ Մուրադյան 1971, 10:

³⁵ Գրիգորյան 1971, 15:

³⁶ Գրիգորյան 1971, 17:

Հետագայում «Լրաբերը» Սպենդիարյանին նվիրված առանձին հոդվածներ չի տպագրել, թեև կոմպոզիտորի ստեղծագործությանն անդրադարձեր եղել են Անահիտ Գրիգորյանի «XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ երաժշտության կամերային-վոկալ ոճի հարցերից»³⁷ և Արմեն Անանյանի «Тематизм и принципы тематического развития в армянской симфонической музыке раннего периода»³⁸ հետազոտություններում:

Եզրակացություններ

«Լրաբեր հասարակական գիտությունների» գիտական պարբերականը (մինչև 1966 թվականը՝ «ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների») կարևոր ներդրում ունի ակադեմիական երաժշտագիտության՝ մասնավորապես սպենդիարյանագիտության ծնավորման, կայացման ու զարգացման գործում: «Տեղեկագիրը», սերտ համագործակցելով երաժշտագիտության գլխավոր կենտրոնի՝ ՀՍՍՀ ԳԱ արվեստների պատմության ու տեսության սեկտորի հետ, կանգնեց ակադեմիական սպենդիարյանագիտության ակունքներում: «Լրաբերը», Սպենդիարյանի ժառանգության ուսումնասիրության արդյունքների հրապարակմանը զուգընթաց, բացահայտել է նրա դերը մի կողմից՝ որպես հայ-ուկրաինական, մյուս կողմից՝ որպես հայ-ռուսական երաժշտական առնչությունների խորհրդանիշ: «Լրաբերի» «սպենդիարյանականը», գիտականից զատ, ունեցել է գործնական կարևոր նշանակություն: Գիտական պարբերականն իր էջերում առաջին անգամ հրապարակել և գիտական շրջանառության մեջ է դրել անտիպ էջեր Սպենդիարյանի նամականուց: «Լրաբերն» ամբիոն է տրամադրել մի շարք հայ անվանի երաժշտագետների՝ Մաթևոս Մուրադյանին, Քնարիկ Գրիգորյանին, Անահիտ Գրիգորյանին, Արմեն Անանյանին, ինչպես նաև կոմպոզիտոր Անուշավան Տեր-Ղևոնդյանին:

Գրականություն

Գրիգորյան Ա. 1968, XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ երաժշտության կամերային-վոկալ ոճի հարցերից, Լրաբեր հասարակական գիտությունների, N10, Երևան, էջ 102-111:

Գրիգորյան Ք. 1958, Ա. Սպենդիարյանի նորահայտ նամակները, ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների, N 10, Երևան, էջ 103-106:

³⁷ Գրիգորյան 1968, 111:

³⁸ Ананян 1978, 26-31.

- Գրիգորյան Ք. 1971, Սպենդիարյանը և ռուսական մշակույթը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 12, Երևան, էջ 12-19:
- Մուրադյան Մ. 1971, Հայկական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիրը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 12, Երևան, էջ 3-11:
- Մուրադյան Մ. 1954, Հայ-ուկրաինական երաժշտական կապերի պատմությունից, ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների, N 10, Երևան, էջ 49-66:
- Սպենդիարովա Մ. 1966, Սպենդիարով, Երևան, «Հայաստան», 232 էջ:
- Տեր-Ղևոնդյան Ա. 1955, Ա.Ա. Սպենդիարովի օրկեստրավորումը, ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների, N 7, Երևան, էջ 39-47:
- Ананян А. 1978, Тематизм и принципы тематического развития в армянской симфонической музыке раннего периода, Вестник общественных наук, N 11, Ереван, с. 26-40.

ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ «ԼՐԱԲԵՐԻ» ԷՋԵՐՈՒՄ. ԱՎԱԴԵՄԻԱԿԱՆ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Աննա Ասատրյան

Ամփոփում

«Լրաբեր հասարակական գիտությունների» գիտական պարբերականը (մինչև 1966-ը՝ «ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների») կարևոր ներդրում ունի ակադեմիական երաժշտագիտության՝ մասնավորապես սպենդիարյանագիտության ձևավորման, կայացման ու զարգացման գործում: «Տեղեկագիրը», սերտ համագործակցելով երաժշտագիտության գլխավոր կենտրոնի՝ ՀՍՍՀ ԳԱ արվեստների պատմության ու տեսության սեկտորի հետ՝ կանգնեց ակադեմիական սպենդիարյանագիտության ակունքներում: «Լրաբերի» էջերում հրապարակվել են Սպենդիարյանի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրության արդյունքները: «Լրաբերի» «սպենդիարյանականը», գիտականից զատ, ունեցել է գործնական կարևոր նշանակություն: «Լրաբերն» իր էջերում առաջին անգամ հրապարակել և գիտական շրջանառության մեջ է դրել անտիպ էջեր Սպենդիարյանի նամականուց: «Լրաբերն» ամբիոն է տրամադրել հայ անվանի երաժշտագետների՝ Մաթևոս Մուրադյանին, Քնարիկ Գրիգորյանին, Անահիտ Գրիգորյանին, Արմեն Անանյանին, ինչպես նաև կոմպոզիտոր Անուշավան Տեր-Ղևոնդյանին:

Բանալի բառեր՝ «Լրաբեր հասարակական գիտությունների», «ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների», ակադեմիական սպեն-

դիպրյանագիտություն, Ալեքսանդր Սպենդիարյան, Մաթևոս Մուրադյան, Անուշավան Տեր-Ղևոնդյան, Քնարիկ Գրիգորյան:

**ВОПРОСЫ МУЗЫКОВЕДЕНИЯ НА СТРАНИЦАХ ЖУРНАЛА «ВЕСТНИК»:
ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ АКАДЕМИЧЕСКОГО
СПЕНДИАРЯНОВЕДЕНИЯ**

Анна Асатрян

Резюме

Журнал «Вестник общественных наук НАН РА» (до 1966 года – «Известия общественных наук АН Арм. ССР»), в тесном сотрудничестве с главным центром музыковедения – с Сектором истории и теории искусств АН Арм. ССР, стоял у истоков академического спендиаряноведения. На страницах «Вестника» были опубликованы результаты исследований творческого наследия Спендиаряна. «Спендиаряниана» «Вестника» имеет не только научное, но и важное практическое значение. Журнал впервые издал на своих страницах и ввел в научный оборот ранее не издававшиеся страницы эпистолярного наследия Спендиаряна. «Вестник» предоставил трибуну таким известным армянским музыковедам, как Матевос Мурадян, Кнарик Григорян, Анаит Григорян, Армен Ананян, а также композитору Анушавану Тер-Гевондян.

Ключевые слова – «Вестник общественных наук», «Известия общественных наук АН Арм. ССР», академическое спендиаряноведение, Александр Спендиарян, Матевос Мурадян, Анушаван Тер-Гевондян, Кнарик Григорян.

**ISSUES OF MUSICOLOGY ON THE PAGES OF THE "HERALD":
FORMATION AND DEVELOPMENT OF ACADEMIC SPENDIARIAN STUDIES**

Anna Asatryan

Abstract

The academic periodical "Herald of Social Sciences" (until 1966 – "Proceedings of the Academy of Sciences of the Armenian SSR: Social Sciences") has

made a noticeable contribution to academic musicology, the emergence, formation and development of Spendiarian Studies in particular. The "Herald of Social Sciences" journal has published the results of the study of Spendiarian's legacy. "Spendiaryaniana" of the Journal is not only of scholarly, but also of essential practical significance. The journal has issued and introduced to academic circles previously unpublished pages from Spendiarian's epistolary legacy. "Herald of Social Sciences" provided a platform to such renowned Armenian musicologists as Matevos Muradyan, Knarik Grigoryan, Anahit Grigoryan, Armen Ananyan, and the composer Anushavan Ter-Ghevondyan.

Key words – "Herald of Social Sciences", "Proceedings of the Academy of Sciences of the Armenian SSR: Social Sciences", Academic Spendiarian Studies, Alexander Spendiarian, Matevos Muradyan, Anushavan Ter-Ghevondyan, Knarik Grigoryan.

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ ՈՃԱՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ավետ Ավետիսյան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ. Մատենադարան, գիտաշխատող
ՀՀ, Երևան, Մաշտոցի պող. 53

Էլ. հասցե՝ avetavetisyan1959@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 09.11.2020, գրախոսվել է 11.11.2020, ընդունվել է
տպագրության 01.03.2021

Ներածություն

Հայ միջնադարյան կերպարվեստի ինքնատիպ ուղղություն է ներկայացնում Վասպուրականի մանրանկարչությունը¹, որի XIII-XVIII դդ. պատկերաստեղծական սկզբունքների, ձեռագրի թերթի գեղարվեստական ձևավորման, պատկերագրական կազմի տարբերակների և ոճական բազմազանությունը յուրահատուկ տեղ ունի հայկական միջնադարյան կերպարվեստում: Վասպուրականի մանրանկարիչների անկրկնելի ստեղծագործություններն իրենց ոճով և աստվածաշնչական պատումների պատկերաբանական վերարտադրման յուրօրինակությամբ էապես տարբերվում են միջնադարյան Հայաստանի մյուս աշխարհների գրչակենտրոնների պատկերազարդ ձեռագրերից:

Դարերի ընթացքում ձևավորված վասպուրականյան մանրանկարչության ինքնատիպ ոճի առանձնահատկություններն են ֆիգուրների ու հորինվածքների ներկայացման գծապատկերայնությունը, նկարազարդվող թերթի ֆիգուրատիվ ձևավորումը, պատկերի մաքուր խորքը, որը մանրանկարչին հնարավորություն էր տալիս խուսափելու գեղարվեստական ու աստվածաբանական ասելիքը մանրամասնելուց, պատկերի խորհրդաբանությունը, կերպարների մշակման կերպը և այլն²:

Վասպուրականի նկարազարդ ձեռագրերում, հնավանդ կանոնի համաձայն, մանրանկարները տեղադրվում են մատյանի սկզբում: Տերունական մանրանկարներին հաջորդում են խորանները: Նկարի հիմնական նյութը թուղթն է (մագաղաթյա մատյաններ գրեթե չեն հանդիպում):

Վասպուրականի մանրանկարներում տիրապետողը պատկերաստեղ-

¹ Հակոբյան 1978, Հակոբյան 1982:

² Հակոբյան 1997, 48-96:

ծական երկու հիմնական սկզբունքներն են՝ **նշանակային** և **պատմողական**: Այսինքն՝ պատկերագրական միևնույն տեսարանը ներկայացվում է հույժ համառոտ, գրեթե խորհրդանշանի վերածված տարբերակով կամ խիստ պատմողական, ավելի հանգամանալից: Հանդիպում են ձեռագրեր, որտեղ այս սկզբունքները համադրվում են:

Յուրօրինակ է ձեռագրի թերթի՝ նկարադաշտի օգտագործումը մանրանկարչի կողմից: Նա կարող է ստեղծագործական տարածքը լրացնել ընդամենը մի քանի ֆիգուրով կամ զարդով, բայց դրանց ճիշտ տեղաբաշխման շնորհիվ ստանալ կուռ ու ամբողջական հորինվածք: Կարող է օգտագործել թերթի ողջ մակերեսը վերից վար (չթողնելով որևէ լուսանցք) և ստանալ ակնահաճո ու կայուն հորինվածք կամ էլ պատկերը տեղադրել թերթի կենտրոնական հատվածում, շրջանակել այն (բարակ գծով կամ տպավորիչ երիզով) ու ստանալ լուսանցքներ, որոնք նպաստում են պատկերը ավելի ամբողջական ընկալելուն, քանի որ դառնում են պատկերի երկրորդ ու հիմնական շրջանակը:

Վասպուրականի մանրանկարների կերպարները ներկայացվում են հարթային ձևով՝ գրեթե ծուլված թերթի մակերեսին, գծապատկերային՝ երբ հստակ ուրվագծվում է կերպարաստեղծ կամ կերպարը թերթից տարանջատող գիծը, ծավալային՝ երբ կերպարի հագուստի ծալքերը ձևավորող գիծը կատարում է նաև նրա մարմնի կառույցը նախանշողի գործառույթ: Նմանօրինակ (խորհրդաբանականից զատ) գործառույթ ունի նաև կերպարի գունավորումը, որի հագեցվածությունն ու զանազան երանգների համադրությունը նույնպես կարող են ընդգծել մարմնի ծավալը:

Վասպուրականցի մանրանկարիչների համար շատ կարևոր է գրավոր խոսքի կիրառությունը: Դարեր շարունակ նրանք կիրառել են գրքարվեստի այդ սկզբունքը: Այդ հակիրճ գրությունները մանրանկարի անքակտելի մաս են և հիմնականում գտնվում են դրա ստորին կամ վերին հատվածում կամ բուն հորինվածքի մեջ, պատկերագրվող կերպարին մոտ: Այդ յուրօրինակ բացատրագրերը անմիջականորեն կապված են պատկերագրական տեսարանի և դրանում առկա կերպարների մեկնաբանության հետ: Բացատրագրերի միջոցով ձեռագրի ընթերցողը երբեմն ստանում է նաև հավելյալ՝ աստվածաբանական-ծիսական գիտելիք՝ կապված պատկերագրական տեսարանի կամ կերպարի հետ: Լինում են դեպքեր, երբ մանրանկարիչը կամ գրիչը այդ գրությունների փոխարեն թողնում է փոքրիկ հիշատակարան կամ մեղքերի թողություն հայցող երկտող:

Կերպարների գլխավերևում կամ գլխի մոտ գտնվող գրությունները, որոնք հիմնականում նրանց անուններն են, կրում են նաև աստվածաբանական-ծիսական իմաստ, ինչպես որ դա կիրառվում է սրբապատկերներում:

Վասպուրականի մանրանկարիչներն ունեն նախընտրելի պատկերագրական կազմ-տարբերակներ, որոնք լինում են համառոտ կամ ընդարձակ: Համառոտները հիմնականում ներկայացնում են տերունական մանրանկարների շարքը: Երբեմն այդ շարքը սկսվում է Հին Կտակարանի որևէ պատկերով (մեկ կամ երկու): Ընդարձակ տարբերակը, բացի Տերունական շարքից, ներառում է Հիսուսի հրաշագործությունները, դրվագներ չարչարանքներից, առաքյալների հետ կապված իրադարձություններ և այլն:

Վասպուրականցի մանրանկարիչների նախասիրած պատկերագրական թեմաները հաճախ են հանդիպում նրանց նկարազարդած ձեռագրերում, ինչպես, օրինակ՝ «Չորեքկերպյան աթոռ», «Հիսուսին գերեզման դնելը», «Երկրորդ գալուստ», «Վերջին դատաստան» և այլն: Հին Կտակարանի նրանց նախընտրելի թեմաներից է «Իսահակի զոհաբերությունը» տեսարանը (որի պատկերաքանդակն առկա է Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում (921 թ.): Նրանց ստեղծագործություններում հանդիպում են նաև ինքնանկարներ և պատվիրատուների պատկերներ, որոնք, մեծ հետաքրքրություն ներկայացնելով, միաժամանակ կարևոր են նաև ժամանակի տարազի ուսումնասիրության տեսանկյունից: Պատվիրատուները երբեմն պատկերվում են Երկրորդ գալստյան տեսարանի խաչի ստորին մասում, մեծ մասամբ՝ ծնրադիր:

Վասպուրականի մանրանկարներում պատկերագրական ու ոճական ընդգծված տարբերություններ կան Վանի և նրա մշակութային տարածություն գտնվող գրչակենտրոնների և Խիզանի մանրանկարչության միջև: Մասնավորապես, Խիզանի մանրանկարչական ոճին հատուկ են կերպարների գլուխների կլորիկությունը, մոտ տեղադրված աչքերը, զարմացած, դեպի երկինք ուղղված հայացքները, հոնքերի կամարաձևությունը, կարմրավուն այտերը, մանրանկարի մաքուր խորքը և այլն:

Սակայն վերոնշյալը Վասպուրականի մանրանկարչության ոճապատկերային ու պատկերագրական պատկերաստեղծական սկզբունքների խիստ ընդհանուր բնորոշումն է: Այն շատ ավելի բազմաշերտ ու բազմազան իրողություն է հայ միջնադարյան կերպարվեստում՝ իր մանրանկարչական դրսևորումներով և կարոտ է համակողմանի ուսումնասիրության: Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ դարերի ընթացքում

փոխվել են Վասպուրականի մանրանկարչության պատկերակազմերը, ժամանակին համընթաց կատարվել են գեղարվեստական նորամուծություններ, շրջանառվել, նաև ստեղծվել են նոր գաղափար-օրինակներ, որոնք թելադրել են գեղարվեստական նոր մոտեցումներ, ինչը ծաղկողներին հաճախ ստիպել է հեռանալ արդեն սովորական դարձած մանրանկարչությունից:

Վասպուրականցի երևելի մանրանկարիչներից են Հովհաննես Խիզանցին (ծննդ. թ. անհայտ - 1417 թ.), Զաքարիա Ավանցին (ծննդ. թ. Անհայտ - 1617 թ.) և Մեսրոպ Խիզանցին (ծննդ. թ. անհայտ - 1652 թ.): Նրանցից առաջինն ապրել և ստեղծագործել է հայրենի Խիզանում, երկրորդը ստեղծագործել է Վանին մերձակա Ավանց բնակավայրում, հետո բռնագաղթել է Պարսկաստան ու շարունակել է նկարել օտարության մեջ, իսկ երրորդի գրեթե բոլոր հայտնի ձեռագրերը ստեղծվել են Պարսկաստանում:

Օրինակներ Հովհաննես Խիզանցու 1392 թ. Ավետարանի նկարազարդումից

Հովհաննես Խիզանցու ձեռագրում (ՄՄ. ձեռ. հմր. 3717, նկարազարդվել է 1394 թ.) արդեն իսկ նախանշված են եղել թերթի այն հատվածները, որտեղ պիտի լինեին պատկերները, ինչը նրան ստիպել է բավական հեռանալ իր արվեստին հարազատ պատկերաստեղծական սկզբունքներից, որի հետևանքով ստեղծվել է նոր ու մանրանկարչական այլ շեշտադրումներով հարուստ պատկերաշար:

Նա սովորաբար Ավետարանների նկարազարդումները սկսում է ձեռագրի առաջին թերթերից՝ տերունական մանրանկարների շարքով: Դա Վասպուրականի մանրանկարչության յուրահատկությունն է: Այնուհետև պատկերում է խորանները, սակայն այս մի ձեռագրում Եվսեբիոսի թուղթը՝ ուղղված Կարպիանոսին, և համեմատության տախտակների տեքստերը նախապես գրված են եղել, և մանրանկարիչը ստիպված խախտել է ընդունված կարգը: Դա պարզորոշ երևում է մանրանկարներից և հաստատվում ձեռագրի սկզբնաթերթում ու խորանների ստորին հատվածներում նրա թողած գրություններով: Ահավասիկ. «Եղբարք՝ այս Աւետարանիս գրողն նախ զհամաբարբառս էր գրել յառաջս տետրին եւ (ա)պա զտնօրինա(կ)անացն տեղ թողել որպ(էս) եւ այժմէ եւ այլ չկարացաք ի կապելն փո(խ)ել. ինձ անմեղադիր լերուք աղաչեմ» (1բ), «Լաւ թէ չէր գրած մինչ ծաղկել էի զի տեղն ասեր էր թողած, ով եղբայր» (3ա, խորանի տակ),

«Վա՛ր գէս միջի սինս որ ճղտորած էր» (5բ, խորանի տակ): Այդ պատճառով Հովհաննես Խիզանցին խորաններն ու թեմատիկ մանրանկարները վրձնել է անազատորեն՝ դրանք հարմարեցնելով գրչի և ձեռագրի թերթերը կոկողի թողած նկարադաշտի տարածքին: Նշենք, որ Հովհաննես Խիզանցին Եվսեբիոսի՝ Կարպիանոսին հղած թուղթը նկարում է հանդիպակաց թերթերի վրա, սակայն այս ձեռագրում ստիպված է եղել դրանք պատկերել միևնույն էջի ա և բ թերթերին: Այդուհանդերձ, ամենից ուշագրավը նրա պատկերած խորաններն են, որոնք ունեն հազվադեպ հանդիպող պատկերագրություն:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում խորանների խորհրդանշական գրությունները: Երկրորդ խորանի (2բ) գլխազարդի կամարի վրա, դեղնավուն խորքով քառակուսու (Սեղանի) մեջ Հովհաննես Խիզանցին գրել է «ՍԲ» («Ս(ուր)բ»): Նույնը նա կրկնում է երրորդ խորանում (3ա), այն տարբերությամբ, որ Սեղանը տեղադրել է խորանի գլխազարդի վրա՝ «ՍԲ» («Ս(ուր)բ»): Հաջորդ խորանում (3բ) Սեղանները երկուսն են և պատկերված են խորանի գլխազարդի մեջ, կամարակապ բացվածքներում, հրե լեզվակներով շրջապատված՝ «ՍԲ» («Ս(ուր)բ») և «ՏԲ» («Տ(ե)ր»): 4ա խորանի գլխազարդում, կամարի մեջ, որ պսակված է Հաղորդության սկիհով, գրված է՝ «ՈԻԹՅ» («[Զօր]ութեան[ց]»): 4բ թերթում՝ վեցերորդ խորանում՝ գլխազարդի գրեթե նույն հորինվածքում (այստեղ այն պսակում են երկու թռչուններ՝ կանգնած լայնաբերան սկիհի երկու կողմերում), գրված է՝ «Սեղան քո Տր գօրու» («Սեղան քո Տ(ե)ր Զօրութեան[ց]»): 5ա թերթի խորանը գրություն չունի: 5բ խորանում դեղին խորքով Սեղանը կրկին տեղադրված է խորանի գլխազարդին, մեջը կարմիր խաչ է, նրա վերնամասի կողային հատվածներից վեր են խոյանում երկու եղջյուր: 6ա խորանի գլխազարդի կամարի մեջ Հովհաննես Խիզանցին գրել է. «թէց³ հաւատով կանգնեցաւ ի» (թէ[ան]ց հաւատով կանգնեցաւ ի): 6բ խորանում «Սեղան Սրբութեւ ԱՅ» (Սեղան Սրբութե(ան) Ա(ստուծո))): Այստեղ խաչապսակ Սեղանը գլխազարդի կամարի վրա է, որի ներսում կրկին հրե լեզվակներն են: Ստացվում է. «Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր Զօրութեանց⁴: Սեղան քո Տէր Զօրութեանց հաւատով կանգնեցաւ ի Սեղան Սրբութեան Աստուծոյ» (նկ. 1):

³ Այս «թէց»-ը 4բ-ի «թէանց»-ն է:

⁴ Աստուածաշունչ Մատեան 1895, Եսայի, 2 3-4:



Նկ. 1. Հովհաննես Խիզանցի, Խորան, 1394 թ.

Սեղանի պատկերումն ու հիշատակումը ինքնանպատակ չեն: Հովհաննես Խիզանցին խորաններում, որոնք պատկերագրում են Հին և Նոր ուխտերի կապն ու արարածի փրկագործության աստիճանական հանգրվանները, ավելի առարկայական է դարձնում զոհաբերության Սեղանի առանցքային դերն այդ ճանապարհին: Նոյի, Աբրահամի, Մովսեսի և այլոց կանգնեցրած Սեղանը, որի վրա կատարվում էին կենդանական բազում զոհաբերություններ քավության ու մաքրագործության համար, նախանշում է այն գալիք Սեղանը, որի վրա պիտի պատարագվի Աստծո Որդին՝ Հիսուս Քրիստոսը: Առաջին յոթ խորաններում պատկերված Սեղանը Հին ուխտում ստվերակերպ, ծածուկ հայտնյալ, միայն հավատով հասանելի փրկության խորհրդանիշն է, որը վերջին խորանում (Եկեղեցու խորան (6ր)

վերաճում է բանավոր, անարյուն ու մեկընդմիջտ մատուցվող Պատարագի խորհրդանիշի: Խորհրդաբանական այդ շեշտադրմամբ էլ Հովհաննես Խիզանցին անցում է կատարում դեպի տերունական շարքի մանրանկարները:

Օրինակներ Զաքարիա Ավանցու 1600 թ. Ավետարանի նկարազարդումից

Զաքարիա Ավանցին իր գրեթե բոլոր ձեռագրերում կիրառում է նույն պատկերագրական շարքը, որ կազմված է Հին և Նոր Կտակարանների՝ Ծննդոց ու ավետարանական պատկերներից, ստեղծել է արարչագործության օրերի հերթականությունը ներկայացնող մի շարք, որը եզակի է հայկական մանրանկարչության մեջ, իսկ տերունական պատկերաշարում հետևում է Մինաս ծաղկողի պատկերագրական ավանդներին: Թերևս նաև իր ապրած չափազանց դժվարին ժամանակով պայմանավորված՝ Զաքարիայի մանրանկարչության մեջ առանձնակի շեշտված է փրկագործության թեման: Այս միտումները լավագույնս արտահայտվում են 1600 թ. ձեռագրում (ՄՄ. ձեռ. հմր. 2804):

Այս Ավետարանում զետեղված Ծննդոց պատկերաշարում Զաքարիա Ավանցին ոչ միայն ինքնատիպ է իր ստեղծագործությամբ, այլև եզակի ու անկրկնելի՝ մանրանկարների պատկերագրությամբ: Զաքարիա Ավանցու արվեստում Ավետարանի նկարազարդման համակարգ է բերված ամբողջական ու կոտ մի շարք, որը, նշանակալի պատկերի սկզբունքին զուգահեռ, ավելացնում է մի նոր սկզբունք՝ խորհրդանշական-պատմողականը:

Շարքի հորինվածքային ընդհանուր սկզբունքը հետևյալն է. արարչագործության յոթ օրերի մանրանկարները Զաքարիան պատկերել է խորանատիպ ու խիստ ոճավորված մանրանկարչական կառույցների մեջ, որոնց տարբեր ուղղություններով միահյուս զարդագոտիները պատկերները սահմանազատում են նկարազարդվող թերթի ընդհանուր մակերեսից և ստեղծում մանրանկարների ոչ միայն արտաքին, այլև ներքին շրջանակը: Արժանահիշատակ է, որ այդ մանրանկարների թե՛ ընդհանուր հորինվածքը, թե՛ զարդագոտիների գեղարվեստական հարդարանքը ոչ մի ձեռագրում նույնությամբ չեն կրկնվում: Զաքարիայի վրձնած այդ յուրօրինակ խորանները վերից վար ունեն երկմաս, երբեմն էլ՝ եռամաս բաժանում: Դրանց վերնամասը աստվածության ոլորտն է, իսկ ստորինը՝ բուն արարչագործության: Արտաքինից այդ խորանները վերնամասում երիզվում և ավարտվում են գմբեթակիր խոյականման ելուստներով, խաչերով,

երկրաչափական զարդագոտիներով և զանազանակերպ այլ զարդապատկերներով: Խորանների հարդարման այս ձևից առանձնանում է միայն արարչագործության 5-րդ օրը ներկայացնող պատկերը, որտեղ հորինվածքի վերնամասը, յուրատեսակ կամար կազմելով, զբաղեցնում է հրեշտակների դասը:

Բոլոր մանրանկարներում կենտրոնականը Աստծո պատկերն է, որին Զաքարիան ներկայացնում է Հիսուս Քրիստոսի կերպարանքով: Այս շարքի գրեթե բոլոր մանրանկարներում Զաքարիան Տիրոջը պատկերել է անմորուք պատանու տեսքով (Քրիստոս Էմմանուել), բացառությամբ Աստծո հանգստի օրվա և Եվայի ստեղծման պատկերների: Զաքարիան Քրիստոսին ներկայացնում է քիտոնով, թիկնոցով, երկար մագերով և խաչազարդ, ոսկե լուսապսակով⁵: Հիսուսը պատկերված է ծալապատիկ նստած կամ կիսանդրի ձևով: Նա ձեռքի տիրական շարժումով օրհնում է իր ստեղծագործությունը:

Արարչագործության հինգերորդ օրվա մանրանկարում («Զրային կենդանիներն ու թռչունները») փրկաբանության թեման ներկայացված է շատ ակնառու կերպով (նկ. 2): Սակայն մանրանկարի ծածուկ իմաստը բացահայտվում է Զաքարիա Ավանցու թողած բացատրագրի շնորհիվ: Մանրանկարի ստորին հատվածում նա պատկերել է մի մեծ ձուկ և մի մեծ թևատարած թռչուն: Առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, որ նկարիչը պատկերազարդել է ըստ Աստվածաշնչի՝ ձեռքի տակ ունենալով «Ծննդոց» գրքի համապատասխան տեքստը. «Աստուած ասաց. «Թող ջրերն արտադրեն կենդանութեան շունչ ունեցող զեռուններ, եւ երկրի վրայ ու երկնքի տարածութեան մէջ թող թեւաւոր թռչուններ լինեն»: Եւ եղաւ այդպէս: Աստուած ստեղծեց խոշոր կէտեր, կենդանութեան շունչ ունեցող ամէն տեսակ զեռուններ, որ արտադրեցին ջրերն ըստ տեսակների, եւ ամէն տեսակ թեւաւոր թռչուններ՝ ըստ տեսակների: Աստուած տեսաւ, որ լաւ է: Աստուած օրհնեց դրանց ու ասաց. «Աճեցէ՛ք, բազմացէ՛ք եւ լցրէ՛ք ծովերի ջրերը, իսկ թռչունները թող բազմանան երկրի վրայ»: Եվ եղաւ

⁵ Փաստորեն, Զաքարիա Ավանցին Հայր Աստծուն՝ Արարչին, նույնացնում է Հիսուսի՝ Աստված-Որդու հետ: Մանրանկարիչը այդպիսով հետևում է հնադարյան մի կանոնի: Աստծո նմանատիպ պատկերումը ընդունված և կանոնացված պատկերագրական ձև էր միջնադարյան արվեստում: Դա բացատրվում է նրանով, որ Հայր Աստված աննկարագրելի է իր էությամբ, և միջնադարյան արվեստագետները Նրան պատկերում էին կա՛մ Հիսուսի՝ մարդացյալ Աստծո նմանողությամբ, կա՛մ էլ զուտ խորհրդանշորեն:

երեկոյ, եւ եղաւ առաւօտ՝ օր հինգերորդ»⁶։ Սակայն բացատրագիրը այլ բան է ասում. «Հոչուն (թռչուն - Ա.Ա.) թւօրք (թեւաւօրք - Ա.Ա.) և ձուկն Լեհաթան, և հոն (հաւն - Ա.Ա.) կայտառ որ ասի Արմաւ։ Եւ Հայրն Ա (ստորա)ծն ի վ(ե)ր(ա) անպատում աթոռոյ, և հր(ե)շտ(ակ)ք գոյանային ի լուսոյ և փառս տային Ա(ստուծոյ)»⁷։ Ինչպես տեսնում ենք բացատրագրում, թե՛ ձուկը և թե՛ թռչունը անվանված են։ Սակայն աստվածաշնչյան «Ծննդոց» գրքի արարչագործությանը վերաբերող տեքստում խոսք չկա ո՛չ Լեհաթանի, ո՛չ էլ Արմավի մասին։ Հետևաբար, Զաքարիայի մանրանկարի ասելիքը շատ ավելի խորն է, քան աստվածաշնչյան այդ դրվագի պարզ պատկերագրումը։

Աստվածաշնչում Լեհաթանի մասին հիշատակվում է մասնավորապես Հոբի գրքում⁸, Դավթի սաղմոսներում⁹ և այլ տեղերում։ Լեհաթանը (եբրայերենից թարգմանված՝ նշանակում է ահռելի վիշապ, գալարվող կենդանի), ըստ սուրբգրային տեքստերի, Աստծո արարածն է, սակայն առանձնահատուկ ու տարբեր է բոլոր մնացածներից։ Նա ահռելի ու սարսափազդու է, անխոցելի է զենքերից, ջրային տարերքը նրա բնակատեղին է։ Լեհաթանը ծովերի թագավորն է։

Լեհաթան ձկան խորհրդավոր ու առասպելական կերպարը դարեր շարունակ եղել է աստվածաբանների ու արվեստագետների ուշադրության կենտրոնում այն աստիճան, որ դրան նույնիսկ դարձրել են գրական ստեղծագործությունների հերոս։ Լեհաթանի կերպարը ներթափանցել է նաև Հայոց ավանդապատումների մեջ։

Քրիստոնեական ավանդությունում այս աներևակայելի արարածի էությունը հասկանալուն օգնում է մեկնողական գրականությունը։ Ս. Գրիգոր Տաթևացին այս հրեշին ներկայացնում է որպես օրինակ իմանալի վի-

⁶ Աստուածաշունչ մատեան 1994, Գիրք ծննդոց (Ա 20-23)։

⁷ Այս մանրանկարը խիստ հետաքրքրական է ևս մեկ աստվածաբանական ու պատկերագրական հանգամանքով։ Զաքարիան կարծում է, որ հրեշտակները ստեղծվել են արարչագործության հինգերորդ օրը։ Սա վկայում է, որ Զաքարիան օգտվել է ինչ-որ պարականոն երկից, քանի որ ուղղափառ աստվածաբանության մեջ ընդունված է այն կարծիքը, ըստ որի, հրեշտակները արարվել են աստվածային ստեղծագործության առաջին օրը։ Ըստ հրեական Թալմուդի՝ հրեշտակները արարվում են երկրորդ օրը, իսկ ըստ «Հոբեյանների գրքի»՝ առաջին։ Իսկ սուրբ Իերոնիմուսը (IV-V դդ.) կարծում է, որ հրեշտակները ստեղծվել են աշխարհի արարումից շատ առաջ։ Հմմտ. Мифы народов мира 1980, 77-78։

⁸ Յոբ, Խ 20-28։

⁹ Սաղմոս, ՀԳ 14, ՃԳ 27։

շապի, այսինքն՝ սատանայի:

Սակայն որտե՞ղ է մեր պատկերում Հիսուս Քրիստոսը: Նրան խորհրդանշում է Արմավ-թռչունը: Արմավ-Փյունիկի¹⁰ մեռնող ու հարություն առնող թռչնի պատմությունը հայտնի է մարդկությանը անհիշելի ժամանակներից, և բնական է, որ քրիստոնեական ժամանակներում արվեստում և գրականության մեջ այն պետք է դառնար Քրիստոսի խորհրդանշանօրինակը: Եթե մինչ քրիստոնեական արվեստում Փյունիկը հավիտենության խորհրդանիշն էր, ապա քրիստոնեականում դարձավ նշանակը հարության¹¹:

Փյունիկը քրիստոնեական արվեստում պատկերվում է առավելապես արծվի տեսքով: Նրա երանգներն էին ոսկեգույնն ու կրակագույնը: Այդպիսին է նաև Զաքարիա Ավանցու Փյունիկը: Նա թևատարած դիմավորում է Լևիաթան-վիշապին ու պաշտպանում արարածին: Ի դեպ, արարչագործության հինգերորդ օրվա մանրանկարում Զաքարիա Ավանցին շատ նուրբ կերպով անդրադարձել է նաև չորս տարրեր-տարրերքների խնդրին՝ պատկերելով Լևիաթանին (ջուր), Փյունիկին (օդ և հուր), ցամաքային թռչուններին՝ սիրամարգերին (հող):

Զաքարիայի մանրանկարների ամբողջական շարքը գեղարվեստական արտահայտչականության ու աստվածաբանական ենթատեքստի մեկնաբանման միաձույլ համակարգ է, որում միաբանված աստվածաշնչյան կերպարներն ու թեմաները միավորված են մեկ առանցքի շուրջ, որը Հիսուս Քրիստոսն է՝ Փրկիչը, և նրա փրկագործությունը, որն արտահայտված է ոչ միայն ընդհանուր պատկերագրության, այլև հորինվածքների մանրամասների, առանձին խորհրդապատկերների միջոցով: Զաքարիա Ավանցու «Արարչագործություն» շարքը եզակի է իր ժամանակի համար, քանի որ նման ամբողջական պատկերաշար մինչ Զաքարիան հայտնի չէ հայկական մանրանկարչության մեջ:

Օրինակներ Մեսրոպ Խիզանցու 1619 թ. Ավետարանի նկարազարդումից

Մեսրոպ Խիզանցու նկարազարդած Ավետարանի (ՄՄ. ձեռ. հմր. 11203) մանրանկարներն ունեն շատ հետաքրքիր ու սակավ հանդիպող պատկերագրական, ոճական առանձնահատկություններ և կերպարային

¹⁰ Արմավի գրաբարյան նշանակություններից մեկը Փյունիկ թռչունն է: Հմմտ. Նոր քառգիրք հայկագեան լեզուի 1836, 369:

¹¹ Ст'я Очерки памятниковъ христіанскаго искусства и иконографіи 1910, 18.

մեկնաբանություններ, որոնց վրա ազդել է նաև պարականոն գրականությունը: Գաղափար-օրինակը, որն օգտագործել է Մեսրոպ Խիզանցին, նույնպես թողել է իր ազդեցությունը մանրանկարների ոճական կողմի վրա:

Մեսրոպ դպիրն իր պատկերազարդած Ավետարաններում սովորաբար կիրառում է Տերունական պատկերաշարի երկու հիմնական պատկերագրական տարբերակ՝ ընդարձակ և համառոտ: Մանրանկարների սկզբնապատկերները որոշ Ավետարաններում սկսվում են Հին Կտակարանի որևէ տեսարանով: Օրինակ, Մատենադարանի հմր. 294 ձեռագրում դա «Եզեկիելի տեսիլքն» է (1բ): Այստեղ՝ «Սուրբ Ծաղիկ Ավետարանում», Մեսրոպը պատկերագրական անդրադարձ չի կատարել Հին ուխտին: Այս սկզբունքը և մանրանկարների կազմն ու հաջորդականությունը գալիս են այն գաղափար-օրինակից, որը մանրանկարիչն օգտագործել է ձեռագիրը նկարազարդելիս:

Ավետարանի բոլոր թեմատիկ մանրանկարները ամփոփված են երկշերտ շրջանակի մեջ: Դրանք զարդարված են առավելապես երկրաչափական նախշերով և գույների ընտրությամբ ներդաշնակվում են պատկերների ընդհանուր գունային համակարգին: Այդ թանձր գունավորված շրջանակները հստակեցնում ու ձևավորում են Մեսրոպ դպրի մանրանկարների նկարադաշտը: Նույնատիպ շրջանակների կիրառությունը, սակայն, զերծ է միօրինակությունից, քանի որ մանրանկարիչը մերթ ընդ մերթ ռիթմիկ հաջորդականությամբ «կոտրում» է շրջանակի վերին երիզը բուն պատկերից դուրս եկող որևէ դետալով: Դրանք հիմնականում սոխուկակերպ, խաչակիր փոքրիկ գմբեթներ են:

Նրա ստեղծած նկարադաշտերի ներքին տարածքներն ունեն յուրօրինակ բաժանումներ՝ ուղղահայաց, հորիզոնական կամ ալիքաձև երիզներ, որոնք ոչ միայն լուծում են սահմանափակ տարածքում կերպարները ճիշտ տեղադրելու խնդիրը, այլև շեշտադրում են հորինվածքի բաղկացուցիչ որևէ էական դետալը, արժևորում են կերպարներն ըստ իրենց դերակատարության կամ նրանց ներկայացնում են ըստ խորհրդանշական խմբերի: Այդ կերպ «Մատնություն» մանրանկարում ներկայացված է գիշերը: Վարպետը Հիսուսի գլխամասում վրձնել է փոքրիկ խորան, որի մեջ երկնագույն խորքի վրա պատկերել է աստղազարդ երկինքը, իսկ «Ղազարոսի հարությունը» մանրանկարում, փոքր ուղղանկյունու մեջ ներկայացված է հրաշքին ականատես ժողովրդի խումբը: Մանրանկարիչը պատկերել է միայն նրանց գլուխները:

Մեսրոպ Խիզանցին հորինվածքների մեջ երբեմն պատկերում է ուղղահայաց, դեպի վեր ձգվող խորանատիպ կառույցներ: Դրանցում խորանները պսակվում են սրագագաթ, կլորավուն, հարթ և այլատիպ վերնամասերով: Այդ կառույցներում Մեսրոպ Խիզանցին տեղադրում է ներկայացվող պատկերագրական տեսարանի գործող առանձին անձանց կամ խմբերի: Որոշ մանրանկարներում նա հորինվածքը երկատում է հորիզոնական եզրաշերտով*՝ գլխավոր կերպարներին ու առանցքային իրադարձությունը պատկերելով վերին, ավելի մեծ հատվածում: Այդպես է, օրինակ, «Պայծառակերպություն» (3բ), «Հարություն» (7ա), «Հոգեգալուստ» (7բ) տեսարաններում: Մեսրոպ Խիզանցին օգտագործում է նաև ալիքաձև բաժանարարներ, որոնց սահմանագատող գործառույթը և՛ խորհրդաբանական է, և՛ հորինվածքային: Մասնավորապես, «Ծնունդ» մանրանկարում նման ձևով զատված է Հովսեփը, «Մուտք Երուսաղեմ» պատկերում Հիսուսն ու աշակերտների խումբը տարանջատված են դիմավորողներից, «Դժոխքի ավերումը» տեսարանում՝ Երկինքն ու դժոխքը:

Մանրանկարների հորինվածքային այս ընդհանուր սկզբունքն էլ թույլ է տալիս դիտողին հրավիրել մի խորհրդավոր տարածք, որում երկնայինի ու երկրայինի մեկտեղումը կրկնվում է իրար հաջորդող բոլոր պատկերներում՝ առավել ընդգծելով Հիսուս Քրիստոսի փրկագործական տնօրինությունների ժամանակային և վերժամանակային ընթացքն ու խորհուրդը:

Մեսրոպ Խիզանցու նկարազարդած այս ձեռագրում ուշագրավ են նրա ստեղծած կերպարներն ու այն մանրանկարները, որոնց պատկերագրության հիմքում ընկած են պարականոն գրքերից վերցված մանրամասները: Մասնավորապես, «Ավետում» Մանրանկարի վերնամասում իմանալի Երկնքի եռաշերտ հատվածն է, որի բացվածքից դեպի Մարիամի աջ ականջն է սլանում աղավանակերպ Սուրբ Հոգին¹²:

* Ուղղահայաց և հորիզոնական բաժանարարների մանրանկարչական ձևավորումը հար և նման է պատկերի շրջանակի գեղարվեստական մշակմանը:

¹² Համարվում է, որ Սուրբ Հոգին Մարիամի մեջ է բնակվել՝ մտնելով ականջից. «...**Բանն Աստուած եմուտ ընդ ունկն լսելեացն** (Մարիամի - Ա.Ա.) **ի ներքս...**»: Տե՛ս Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց 1898, 19:



Նկ. 2. Զաքարիա Ավանցի, Արարչագործության 5-րդ օրը, 1600 թ.



Նկ. 3. Մեսրոպ Խիզանցի, Հիսուսի մատնությունը, 1619 թ.

Զարմանալի վարպետությամբ է Մեսրոպ Խիզանցին տալիս Գաբրիելի ու Մարիամի դեմքերին արտացոլված ներքին հոգեվիճակն ու ապրումները: Հրեշտակը նայում է ուղիղ Մարիամի դեմքին և խոսուն հայացքով հաղորդում աստվածային հրամանը: Մարիամը, հակառակը, փոքր-ինչ իջեցրել է աչքերը և համակ ուշադրությամբ ունկնդրում է: Նա բարձրացրել է ձախ ձեռքը, որը նշանակն է երկյուղի ու շփոթմունքի՝ հետևանքը հրեշտակի անսպասելի հայտնության: Մեսրոպ Խիզանցու «Ավետում» մանրանկարի պատկերագրական հիմքը «Գիրք տղայութեան Քրիստոսի» պարականոնն է: Դրա վկայությունն են նաև Սուրբ Կույսի աջ ձեռքի իլիկը և Երուսաղեմի տաճարի նշանակի եռաստիճան պատվանդանը¹³:

«Տյառնընդառաջ» տեսարանում, ըստ ավետարանական բնագրի¹⁴, Սիմեոնի կողքին պատկերում են Աննա մարգարետիուն, սակայն մեր մանրանկարում Մեսրոպ Խիզանցին օգտվել է հազվադեպ մի պատկերագրական օրինակից, որի հիմքում կրկին «Գիրք տղայութեան Քրիստոսի» պարականոնն է: Տյառնընդառաջի պատմության այս տարբերակում Երուսաղեմում քառասուն օրական Հիսուսին դիմավորում են տաճարի քահանաները, որոնցից մեկը Սիմեոն ծերունին է¹⁵: Վերջինս պատկերված է ավանդական տիպաբանությամբ՝ երկար մազերով ու մորուքով: Սակայն, ցանկանալով կարևորել այս կերպարը, Մեսրոպ Խիզանցին հատուկ շեշտադրել է նրա դեմքն ու դիմագիծը: Այդ ընդգծված խոշոր դեմքին մանրանկարիչը պատկերել է է՛լ ավելի ընդգծված աչքեր, որոնց միջոցով արտահայտված են Սիմեոնի երկարատև սպասումը¹⁶ և այդ սպասման հանգուցալուծումը՝ Մանուկ Հիսուսին ընդառաջ գնալը: Սիմեոնը կապող օղակ է Հնի և Նորի միջև: Նրա անասելի երկար ծերությունը խորհրդանշում է Հին ուխտը՝ անկատար Օրենքը, որն ի զորու չէ փրկելու: Սիմեոնը,

¹³ Երեքամյա Մարիամին ծնողները նվիրաբերում են Երուսաղեմի տաճարին. «Եւ տարեալ նստուցին զնա **ի յերրորդ աստիճան խորանին**, և տայր նմա Տէր Աստուած շնորիք և իմաստութիւն»: Հմմտ. Թանգարան հայկական հին և նոր դպրությանց 1898, Գիրք տղայութեան Քրիստոսի, 6: Նա այլ կույսերի հետ ապրում է տաճարում տասներկու տարի, և երբ լրանում է նրա տասնհինգամյակը, տաճարի նոր վարագույրի համար նրան վիճակ է ընկնում **մանել կարմիր թելը**, տե՛ս Գիրք տղայութեան Քրիստոսի, 14:

¹⁴ Աստուածաշունչ մատեն 1994, Ղուկ. Բ 21-40:

¹⁵ «...և եկեալ մտեալ ի քաղաքն յերուսաղէմ, և տարեալ զմանուկն Յիսուս առաջի **քահանայիցն...**»: Տե՛ս Գիրք տղայութեան Քրիստոսի, 54: Սիմեոնը այն աստվածավախ և Իսրայելի փրկությունը ակնկալող մարդն էր, որին. «Սուրբ Հոգուց հրամայումաւ էր... մահ չտեսնել, մինչեւ որ տեսնէր Տիրոջ Օծեալին» (Ղուկ. Բ 26):

¹⁶ Ըստ Եկեղեցու ավանդության, Սիմեոնը Փրկչի գալստյանն է սպասել 344 տարի:

Օրենքի պատվիրանների տակ կքա՞ծ, գալիս է Տիրոջն ընդառաջ, և որպես հավատով սրբագործված սպասումի պարզև, իր գրկում ունի Փրկչին՝ որը տալու է Նոր Օրենք՝ շնորհական, կատարյալ ու փրկագործող:

Ինչ վերաբերում է կերպարային-գեղարվեստական լուծումներին, պետք է առանձնացնենք Հուդայի կերպարը «Մատնություն» տեսարանում, որն իրոք զարմանալի է (նկ. 3): Մատնիչի նմանօրինակ ներկայացում հազվադեպ է հանդիպում: Նորություն չէ, որ Մեսրոպ Խիզանցին նրան պատկերել է Հիսուսի գոտկատեղին հավասար: Միջնադարյան արվեստում Հուդային փոքրահասակ պատկերելով՝ ցույց են տալիս նրա փոքրոգությունն ու դավաճանության ողջ զագրելիությունը: Նրան պատկերում են կիսադեմ, տգեղ, երբեմն գրոտեսկի հասնող աղավաղված դիմագծերով: Այդպիսի պատկերագրական տարբերակներում Հիսուսի այտը համբուրելիս նա լիովին, անզեղ է և ստորաբար գիտակցում է, թե ինչ է անում:

Մեսրոպ Խիզանցու պատկերագրած Հուդան դուրս է ներկայացման ընդունված կանոններից: Նա ծախ ձեռքով բռնել է Հիսուսի ծախ ձեռքը, աջ ձեռքով՝ Հիսուսի աջը և հպվելով դեմքին՝ համբուրում է: Հուդայի հայացքը պատկերից դուրս է: Նա կարծես երկյուղում է Հիսուսի դեմքին նայելուց: Նման է մի մոլորված մանկան, որ չգիտի, թե ինչ է անում: Մանրանկարիչը ներկայացնում է ոչ թե դավաճան, այլ զոջացող Հուդային:

Հիսուսի կերպարը համահունչ է մատնիչի ակնկալիքին: «Հայր, ների՛ր դրանց, որովհետեւ չգիտեն, թե ինչ են անում¹⁷», - ասելու է Նա խաչի վրա:

Եզրակացություններ

Հովհաննես Խիզանցու նկարագարված (հմր. 3717) ձեռագրի պատկերաստեղծական համակարգը էականորեն տարբերվում է նրա այլ ձեռագրերի նկարագարված սկզբունքներից: Այս դեպքում նա հեռացել է մանրանկարների տեղաբաշխման իր համար նախընտրելի տարբերակից, որն է՝ պատկերը կառուցել՝ օգտագործելով ձեռագրի ամբողջական թերթը: Նրա վրձնած խորաններն ունեն հազվադեպ հանդիպող պատկերագրական մանրամասներ: Զաքարիա Ավանցու (հմր. 2804) ձեռագրում հինկտակարանյան շարքի մանրանկարները ուշադրություն են հրավիրում սուրբգրային առավել կարևոր ու վճռորոշ իրադարձությունների վրա: Արարչագործության մանրանկարների ամբողջական շարքը գեղարվեստական

¹⁷ Ղուկ. ԻԳ 34:

արտահայտչականության ու աստվածաբանական ենթատեքստի մեկնաբանության միաժույլ և կուռ համակարգ է, որտեղ աստվածաշնչյան կերպարներն ու թեմաները միավորված են փրկագործության գաղափարի շուրջ: Մեսրոպ Խիզանցու նկարազարդումը (հմր. 11203) XVII դ. հայկական մանրանկարչության լավագույն ու բացառիկ ստեղծագործություններից է՝ իր եզակի պատկերագրական ու խորհրդաբանական լուծումներով և բարձրարվեստ կատարմամբ: Ձեռագրի որոշ մանրանկարների պատկերագրության վրա իր ազդեցությունն են թողել պարսկանոն գրքերը:

Գրականություն

Հակոբյան Հ. 1978, Վասպուրականի մանրանկարչությունը, գիրք Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 164 էջ:

Թանգարան հայկական հին և նոր դարյութեանց 1898, Գիրք տղայութեան Քրիստոսի, հ. Բ, Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, ի տպարանի սրբոյն Ղազարու, Վենետիկ, 491 էջ:

Հակոբյան Հ. 1982, Վասպուրականի մանրանկարչությունը, գիրք Բ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 178 էջ:

Հակոբյան Հ. 1997, Ձեռագիր մատյանների պատկերազարդման արվեստը Վասպուրականում, Երեւան, «Գիտություն», 159 էջ:

Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր կտակարանաց 1895, Կ. Պոլիս, 986+280 էջ:

Աստուածաշունչ մատեան հին եւ նոր կտակարանների 1994, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1345+352 էջ:

Նոր Բառգիրք հայկազեան լեզուի 1836, ի տպարանի սրբոյն Ղազարու, հ. Ա, Վենետիկ, 1140 էջ:

Мифы народов мира 1980, т. 1, Москва, «Советская энциклопедия», 671 с.

Очерки памятниковъ христіанскаго искусства и иконографіи 1910, СПб., изд. Н.В. Покровскій, 450 с.

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՈՃԱՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ավետ Ավետիսյան

Ամփոփում

Հայ միջնադարյան կերպարվեստի ինքնատիպ ուղղություն է ներկայացնում Վասպուրականի XIII-XVIII դդ. մանրանկարչությունը, որի պատկերաստեղծական սկզբունքները, ձեռագրի թերթի գեղարվեստական ձևավոր-

ման կերպերը, պատկերագրական կազմի տարբերակների և ոճական բազմազանությունը բավական ուսումնասիրված են արվեստաբանական գրականության մեջ: Սակայն դրանք խիստ ընդհանուր կերպով են բնորոշում Վասպուրականի մանրանկարչության ոճապատկերային ու պատկերագրական-պատկերաստեղծական սկզբունքները: Իրականում այն շատ ավելի բազմաշերտ ու խոր երևույթ է հայ միջնադարյան կերպարվեստում իր մանրանկարչական դրսևորումներով և կարոտ է համակողմանի ուսումնասիրության: Դարերի ընթացքում փոխվել են Վասպուրականի մանրանկարչության պատկերակազմերը, ժամանակին համընթաց կատարվել են գեղարվեստական նորամուծություններ, շրջանառվել, նաև ստեղծվել են նոր գաղափար-օրինակներ, որոնք թելադրել են գեղարվեստական նոր մոտեցումներ, ինչը ծաղկողներին հաճախ ստիպել է հեռանալ արդեն սովորական դարձած մանրանկարչությունից:

Վասպուրականի մանրանկարչության նշանավոր վարպետների՝ Հովհաննես Խիզանցու (ծննդ. թ. անհայտ – 1417 թ.), Զաքարիա Ավանցու (ծննդ. թ. անհայտ – 1617 թ.) և Մեսրոպ Խիզանցու (ծննդ. թ. անհայտ – 1652 թ.) նկարազարդ ձեռագրերի ուսումնասիրությամբ բացահայտվում են Վասպուրականի մանրանկարչության մի շարք ոճապատկերագրական առանձնահատկություններ, այս վարպետների արվեստում ի հայտ եկող նոր միտումները և դրանց փոփոխությունները ժամանակի թելադրանքով, ինչպես նաև նրանց հանդես բերած նորարարությունը:

Բանալի բառեր՝ Վասպուրական, հայկական արվեստ, միջնադարյան արվեստ, մանրանկար, Հովհաննես Խիզանցի, Զաքարիա Ավանցի, Մեսրոպ Խիզանցի:

ИКОНОГРАФИЧЕСКИЕ И СТИЛИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮРЫ ВАСПУРАКАНА

Авет Аветисян

Резюме

Искусство миниатюры Васпуракана представляет собой оригинальное направление средневекового армянского искусства XIII-XVIII вв. Искусство миниатюры Васпуракана, её иконографические принципы, стилистические и художественные особенности, формирование искусства рукописной книги были исследованы многими учеными. Однако поскольку

это многослойное и разнообразное явление в армянском средневековом искусстве с его оригинальными вариациями, то оно требует более всестороннего изучения. Миниатюра Васпуракана менялась на протяжении веков.

Предметом нашего исследования является искусство миниатюры трех мастеров васпураканской школы – Ованеса Хизанци (дата рождения неизвестна – умер в 1417 г.), Захария Аватнци (дата рождения неизвестна – умер в 1617 г.) и Месропа Хизанци (дата рождения неизвестна – умер в 1652 г.).

Изучение рукописей этих трех мастеров выявило ряд присущих им стилистических и иконографических особенностей, а также новые тенденции в их искусстве.

Ключевые слова – Васпуракан, армянское искусство, средневековое искусство, миниатюра, Ованес Хизанци, Захария Аватнци, Месроп Хизанци.

THE ICONOGRAPHIC AND STYLISTIC FEATURES OF THE MINIATURE ART OF VASPURAKAN

Avet Avetisyan

Abstract

The miniature art of Vaspurakan represents an original direction of medieval Armenian art, the main period of which is the XIII-XVIII centuries. Although the iconographic principles, stylistic features and the formation of illumination of parchment or paper sheets of Vaspurakan's manuscript art have been studied by many scientists, nevertheless, in the literature, the above features were briefly considered. In fact, it is a much more multi-layered and diverse phenomenon in the Armenian medieval art with its original variations, which requires a comprehensive study. It should be noted that the miniature painting of Vaspurakan has changed over the centuries. Artistic innovations were created and disseminated, new ideas were born, suggesting new artistic approaches, which often forced the miniaturists to abandon the traditional miniature features.

The article examines the miniature art of three skilled masters of the Vaspurakan school using the example of one selected manuscript of each miniaturist, and also analyzes the stylistic and iconographic features of miniatures (Matenadaran, MS 3717, 2804, 11203). These miniaturists are: Hovhannes of Khizan (date of

birth is unknown – died in 1417), Zachariah of Avatns (date of birth is unknown – died in 1617) and Mesrop of Khizan (date of birth is unknown – died in 1652). The study of three manuscripts reveals a number of stylistic and iconographic features of the Vaspurakan miniature art, new trends emerging in the art of these masters, their changes over time, as well as their artistic innovations.

Key words – Vaspurakan, Armenian art, medieval art, miniature, Hovhannes of Khizan, Zachariah of Avants, Mesrop of Khizan.

**ՀԱՅՈՑ ՈՒԹՁԱՅՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՐՐՈՐԴ ՁԱՅՆԵՂԱՆԱԿԻ
(ԳՁ) ՈՐՈՇ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԱՐՎԵՍՏԻ
ԵՐՈՒՍԱՂԵՄՅԱՆ ԵՐԳՎԱԾՔՈՒՄ**

Աստղիկ Մարտիրոսյան

Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, ասպիրանտ

ՀՀ, Երևան, Մարկ Գրիգորյան 2

Կոմիտասի թանգարան-ինստիտուտ

ՀՀ, Երևան, Արշակունյաց 28

Էլ. հասցե՝ astghik1martirosyan@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 11.06.2020, գրախոսվել է 26.09.2020, ընդունվել է
տպագրության 01.03.2021

Ներածություն

Հայ հոգևոր երգարվեստի Երուսաղեմյան երգվածքին¹ վերաբերող մեր նախորդ հոդվածներում անդրադարձել ենք երգվածքի ձևավորմանն ու հետագա ընթացքին, այս երգվածքի առաջին գրառող Լևոն Չիլինկիրյանի կատարած գործունեությանը², ինչպես նաև, որպես տեսական վերլուծական աշխատանք, ներկայացրել ենք հայոց Ութձայն համակարգի ԱՁ ձայնեղանակի դրսևորումները՝ ըստ չիլինկիրյանական ձայնագրությունների³:

Սույն հոդվածում մեր կատարած նախորդ հոդվածի օրինակով ներկայացնում ենք Ութձայն համակարգի երրորդ ձայնեղանակի՝ ԳՁ-ի դրսևորումները Երուսաղեմյան երգվածքում:

Ինչպես արդեն նշել ենք մեր նախորդ հոդվածներում, Ութձայն համակարգի ուսումնասիրումը ներառում է մեր հոգևոր երգային միավորների ձայնեղանակների ձայնակարգային կառուցվածքները, դրանց գործառութային աստիճանները և մեղեդիական բնորոշ դարձվածքներն ընդգրկող տեսական, վերլուծական աշխատանք:

¹ XVIII-XIX դարերի սահմանագծին հայ հոգևոր երգարվեստի, այդ թվում և հայ շարականերգության ճյուղավորման արդյունքում առաջ եկան ուշ միջնադարի ընթացքում կազմավորված հինգ երգվածքներ՝ Էջմիածնի (հիմնական երգվածք), Կոստանդնուպոլսի, Նոր Զուղայի (կամ՝ Հնդկահայոց), Երուսաղեմի և Վենետիկի: Այս մասին տե՛ս Թահմիզյան 1977, 102, Եկմալյան 1981, 65-66:

² Տե՛ս Մարտիրոսյան 2017, 232-248:

³ Տե՛ս Մարտիրոսյան 2018, 204-232:

Համաձայն մեր մշակած մեթոդաբանության՝ հողվածում ներկայացվում են Երուսաղեմյան երգվածքի մեր ունեցած միավորներից ԳՁ-ի (երրորդ ծայնեղանակ) ծայնակարգային բնութագրերը՝ ըստ դիտարկված տարրերի: Չիլինկիրյանական ծայնագրություններից առայժմ մեզ հասանելի ԳՁ տասը շարականները ենթարկել ենք համեմատական վերլուծության Նիկողայոս Թաշճյանի ծայնագրած նույնանուն շարականների ծայնեղանակային-ծայնակարգային կառուցվածքների և մեղեդիական բնորոշ դարձվածքների հետ, վեր հանել Երուսաղեմյան երգվածքին բնորոշ Ութնամյա համակարգի որոշ նկարագրեր:

Անդրադառնալով բուն ծայնեղանակային միավորներին՝ նշենք, որ Ութնամյա բնորոշ հատկանիշներն արտացոլող կարևորագույն հիմներգական ժանրերից մեկը համարում ենք շարականը, ուստի որևէ երգվածք ուսումնասիրելիս նախ և առաջ դիտարկում ենք տվյալ երգվածքին պատկանող շարականային զանգվածը:

Նյութի սակավության պատճառով անդրադարձել ենք միայն ԳՁ մայր (հիմնական) ծայնեղանակին՝ բաց թողնելով ԳՁ դարձվածք ծայնեղանակը⁴:

Ինչպես նախորդ՝ ԱՁ ծայնեղանակին վերաբերող հողվածում, այնպես էլ այս և հետագա մյուս ծայնեղանակներում, Երուսաղեմյան երգվածքի որոշ դրսևորումներ դուրս բերելու համար մեր ունեցած նյութը համեմատում ենք Նիկողայոս Թաշճյանի գրառած, հիմնական համարվող Էջմիածնական երգվածքը ներկայացնող Շարակնոցի⁵ համանուն ծայնագրությունների հետ՝ ըստ ծայնակարգային կառուցվածքների և սկսող ու վերջավորող մեղեդիական դարձվածքների⁶:

⁴ Մեր աղբյուրներն են՝ Լ. Չիլինկիրյան, Շարական (ծեռագիր գրքույկ, եվրոպական նոտագրությամբ), Լևոն Չիլինկիրյանի ընտանեկան արխիվ: Լ. Չիլինկիրյան, Շարական (ծեռագիր, կրկնօրինակ, կինոժապավենային նյութ, եվրոպական նոտագրությամբ), Լևոն Չիլինկիրյանի ընտանեկան արխիվ: Այս նյութերում ԳՁ դարձվածք տիպի ծայնեղանակի շարականների քանակը սահմանափակվում է ընդամենը մի քանի միավորով և դրանց դիտարկումը հագիվ թե հանգեցնի որոշ եզրակացությունների: Լիախույս ենք, որ մեր հետագա աշխատանքի ընթացքում ձեռք կբերենք անհրաժեշտ պակասող շարականային միավորները և ընդհանրական կերպով ներկայացվող աշխատանքում կընդգրկենք նաև դարձվածք տիպի ծայնեղանակները:

⁵ Տե՛ս Ձայնագրեալ Շարական հոգետր երգոց 1875:

⁶ Ն. Թաշճյանի կատարած ծայնագրությունների բնութագրերը ներկայացնում ենք ըստ հետևյալ աշխատությունների. Թաշճեանց 1874, 22-35, Բրտեանց 1890, 21-79, Աթա-յան 1959, 163-163, Тагмизян 1977, 160-186:

Ընդհանուր առմամբ, մեր ունեցած չիլինկիրյանական ծայնագրությունների հիման վրա կատարել ենք Ութձայն համակարգի ծայնակարգային հստակեցումներ՝ առանձնացնելով առավել կայուն հնչյունաշարերը և մեղեդիական տիպական դարձվածքները:

Մեր ունեցած շարականային միավորների սակավության պատճառով առայժմ առաջնորդվել ենք ոչ թե Ութձայն համակարգի ամբողջական նկարագիրը ներկայացնող որևէ լիարժեք կարգի դիտարկմամբ⁷, այլ մեր ձեռքի տակ եղած գրեթե բոլոր շարականների ուսումնասիրմամբ:

Քանի որ չիլինկիրյանական ծայնագրությունները գրառված են եվրոպական նոտագրությամբ, ուստի դրանք ուսումնասիրելիս առանձնակի դիտարկման չենք կարող ենթարկել ծայնեղանակներում առկա միկրոինտերվալային տարրերը՝ հայ երաժշտությանը բնորոշ բարձր և ցածր հնչյունները: Չիլինկիրյանի գրառած շարականները նաև չափանշված են և տակտավորված, որը հայ հոգևոր երգարվեստին բնորոշ չէ: Սրա հետևանքով շարականի ներսում հաճախ յուրաքանչյուր տակտ կարող է ունենալ նոր չափ: Այսինքն՝ շարականների տակտավորումը «հարմարեցված է» գրեթե անընդհատ փոփոխվող չափի տրամաբանությանը:

Ըստ Երուսաղեմյան երգվածքի ավանդույթի՝ Լ. Չիլինկիրյանի եվրոպական ծայնագրություններում «ռե»-ն հավասարեցված է հայկական նոտագրության «փուշ»-ին: Դրանք համեմատելով Ն. Թաշճյանի ծայնագրած Շարակնոցի հետ, որտեղ, ըստ ավանդույթի, «փուշ»-ը հավասարեցվում է «դո»-ի, զուգակցել ենք միևնույն շարականի ոչ թե ծայնաբարձրությունները, այլ համապատասխան աստիճանները: Ձայնեղանակներն ուսումնասիրելիս կդիտարկենք դրանց ծայնակարգի հնչյունաշարը և գործառությանը աստիճանները՝ կիրառելով հայ եկեղեցական երաժշտության տեսությանը հատուկ տերմինաբանությունը⁸: Դրանք են *սկզբնավորող ձայն* (շարականի առաջին հնչյունի աստիճանը⁹), *դիմող*

⁷ Այդպիսի ամբողջական կարգերից են Մեծ Պահոց շրջանի հարցնակարգերը, Հարության հարցնակարգերը, Հարության Ավագ օրհնությունները և այլն, սակայն ամբողջական տեսքով այս շարքերից որևէ մեկը դեռևս չունենք:

⁸ Վերը նշված գրեթե բոլոր տերմինների մասին տե՛ս Թաշճեանց 1874, Բրտեանց 1890:

⁹ Ըստ Կոմիտասի ձևակերպման՝ *սկզբնական հնչյունը*: Սա կարևոր է հատկապես սկսող մեղեդիական դարձվածքների ուսումնասիրման դեպքում: Տե՛ս Կոմիտաս Վարդապետ 2007, 27:

ձայն (ձայնակարգում գերակշռող հնչյունը կամ օժանդակ հենակետը, որին մեղեդին հաճախակի վերադառնում է¹⁰), *հանգչող ձայն* (ձայնակարգի այն աստիճանը, որը հիմնականում համընկնում է կիսակադանսի հնչյունի հետ¹¹), *հարաբերական ավարտի հնչյուն* (շարականի վերջին տանը նախորդող տները եզրափակող աստիճանը¹²), *վերջավորող ձայն* (շարականն ավարտող վերջին հնչյունը, որը հաճախ կարող է համընկնել շարականի բոլոր տները եզրափակող հնչյունի հետ¹³), *վերջին վերջավորող ձայն* (վերջավորող ձայնից հետո երբեմն մեղեդիական լրացուցիչ ընթացքով հանդես եկող և շարականի վերջին տունը եզրափակող հնչյունը, որը կարող է և տարբերվել վերջավորող ձայնից¹⁴) և *գործածվող ձայն* (բնական հնչյունաշարի ալտերացված աստիճանը) տերմինները: Այս պարամետրերին կարող են հավելվել նաև բնորոշ (ինտոնացիոն) թռիչքները, որոնք առայժմ չենք դիտարկում: Դուրս կբերենք նաև յուրաքանչյուր շարականի մեղեդիական ոճը: Սկսող և ավարտող մեղեդիական դարձվածքների միջոցով կփորձենք տալ շարականների ընդհանրական նկարագրերը:

Հարկ ենք համարում նշել, որ մեր այս դիտարկումները համարում ենք սոսկ նախնական, քանի որ աշխատանքի ընթացքում ամբողջական Շարակնոցի նյութ չենք ունեցել և աշխատել ենք Լ. Չիլինկիրյանի ձեռագրերի միայն մի փոքրիկ մասի կրկնօրինակների հետ, որոնցում բացակայում էին Ութձայն համակարգի ամբողջական նկարագիրը ներկայացնող լիարժեք շարքերը (Մեծ Պահոց շրջանի հարցնակարգեր, Հարության հարցնակարգեր, Հարության ավագ օրինություններ...):

¹⁰ Տե՛ս Կոմիտաս Վարդապետ 2007, 27, Բրտեանց 1890, 22, Աթայան 1959, 161:

¹¹ Ըստ Ռ. Աթայանի՝ *կիսակադանսի հնչյուն*: Տե՛ս Աթայան 1959, 161:

¹² Տերմինի սույն ձևակերպումը Միեր Նավոյանինն է: Որպես տերմին՝ առաջին անգամ կիրառվել է Գայանե Ամիրադյանի թեկնածուական ատենախոսության մեջ: Տե՛ս Ամիրադյան 2012, 10:

¹³ *Վերջավորող ձայն* է կոչվում ամբողջ շարականը եզրափակող տան ավարտին հանդես եկող հնչյունը: Տե՛ս Բրտեանց 1890, 23, Тагмизян 1977, 179: Կոմիտասն այն անվանում է *առաջին վերջավորող ձայն*: Տե՛ս Կոմիտաս Վարդապետ 2007, 28: Ա. Արևշատյանը վերջավորող ձայն համարում է «շարականների տների ավարտական հնչյունը»: Տե՛ս Արևշատյան 2013, 29:

¹⁴ Ըստ Կոմիտասի՝ *եզրափակիչ վերջավորող ձայն*: Տե՛ս Կոմիտաս Վարդապետ 2007, 28: Ըստ Ռ. Աթայանի՝ *վերջնական կադանսի հնչյուն*: Տե՛ս Աթայան 1959, 163: Ըստ Ն. Թահմիզյանի՝ *վերջին վերջավորող ձայնը* հիմնականում համընկնում է վերջավորող ձայնի հետ: Տե՛ս Тагмизян 1977, 179:

ԳՁ. Երրորդ ծայնեղանակ

Լևոն Չիլինկիրյանի՝ մեր ունեցած ծայնագրություններում ԳՁ՝ երրորդ ծայնեղանակը ներկայացված է տասը անուն շարականներով: Դրանք Աստվածահայտնության առաջին օրվա, Ապաշխարության, Ավագ Ուրբաթի, Ավագ շաբաթի, Աշխարհամատրան կիրակիի, Շողակաթի, Շաբաթ օրվա, Սուրբ թարգմանիչների և Բոլոր մարտիրոսների կարգերից են: Շարականի կարգի մասերից առկա են երեք Օրհնություն, մեկ Հարց իր Գործքով, չորս Տէր Յերկնից և երկու Մանկունք:

Օրհնության միավորները ներկայանում են հետևյալ շարականներով.

Կանոն չորրորդ կիրակեի աղուհացից, «Որ արարեր զօրութեամբ»,

Կանոն Շողակաթին, «Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի»,

Կանոն շաբաթի աուրն, «Որ ծագեցեր մեզ Լոյս մեծ»:

Հարցի շարականն է.

Կանոն Մեծի ուրբաթուն, «Իջեր երկնից անսկիզբն»:

Չորս Տէր Յերկնիցներն են.

Կանոն Աստվածահայտնութեան առաջին աուրն, «Ճառագայթ եւ կերպարան»,

Կանոն Մեծի Ուրբաթուն, «Ով ըսքանչելի եւ տեսիլ»,

Կանոն Մեծի Շաբաթուն թաղման Տեսուն, «Յօվսէփ ճշմարիտ»,

Կանոն Աշխարհամատրան կիրակեի, «Այսօր յարութին Քրիստոսի»:

Երկու Մանկունք շարականներն են.

Կանոն Սրբոց թարգմանչաց, «Նմանեալ Մովսէսի»,


Կանոն համօրէն մարտիրոսաց, «Այսօր յիշատակ սրբոց»¹⁵:

Ըստ նշված շարականների, չիլինկիրյանական ծայնագրություններում ԳՁ-ի ծայնակարգի առավել կայուն հնչյունաշարն ընդգրկում է փոքր սեպտիմա՝ a^1-g^2 ծայնածավալը: Որպես բացառություններ՝ հանդիպում են նաև օկտավա (a^1-a^2 , g^1-g^2), ինչպես նաև փոքր և մեծ սեքստա (a^1-f^2 , d^2-h^2) ծայնածավալները: Վերը նշված հիմնական ծայնածավալում ԳՁ այս շարականներն աչքի են ընկնում ծայնակարգի չորրորդ աստիճանի ամուր հենակետով, այսինքն՝ նշված գրեթե բոլոր շարականներում չորրորդ աստիճանը՝ d^2 -ը, հանդես է գալիս միաժամանակ սկսող, դիմող, հանգչող, հարաբերական ավարտի և վերջավորող ծայներում:

¹⁵ Տե՛ս աղյուսակ 1:

Ձայնեղանակում հարաբերական ավարտի և վերջավորող ձայնը չորրորդ աստիճանն է: Վերջին վերջավորող ձայնը հանդիպում է չորս շարականներում՝ առաջին աստիճանի վրա (a^1), որը երբեմն համընկնում է նաև սկսող, դիմող և հանգչող ձայներին: Ձայնեղանակում հիմնական գործածվող ձայնն իջեցված երկրորդ աստիճանն է՝ b^1 -ը, սակայն հանդիպում են նաև բարձրացված երկրորդ (his^1), բարձրացված հինգերորդ (eis^2) կամ բնական վեցերորդ (f^2) աստիճանների ավտերացիաներ:

ԳՁ-ի առավել կայուն հնչյունաշարի (a^1 - g^2) վերջավորող ձայնի (d^2) վերին ոլորտում իոնական տետրախորդ է, որը գործածվող ձայնի արդյունքում փոխակերպվում է դորիական տետրախորդի, իսկ հիպո-ոլորտն արտահայտված է հարմոնիկ տետրախորդով¹⁶:



ԳՁ-ի սկսող և ավարտող առավել տիպական մեղեդիական դարձվածքներն են.



¹⁶ Չիլինկիրյանական տարբերակներում ԳՁ-ի դիտարկված շարականների գործառնության աստիճանների և մեղեդիական ոճերի վերլուծական աղյուսակը տե՛ս աղ. 1-ում: Միննոյն՝ չիլինկիրյանական ձայնագրությունների սկսող և վերջավորող մեղեդիական դարձվածքները տե՛ս աղյուսակ 2-ում:

Այս ԳՁ շարականներն առավելապես ծավալվում են խառը՝ վանկային-ներվանկային, ներվանկային՝ վանկայինի տարրերով և զարդուղորուն՝ ներվանկայինի տարրերով մեղեդիական ոճերում:

Այսպիսով, չիլինկիրյանական նշված ձայնագրություններում ԳՁ ձայնեղանակն արտահայտվում է ձայնակարգի չորրորդ աստիճանի բազմաբնույթ գործառութային հատկանիշներով: Երբեմն փոփոխության են ենթարկվում դիմող, հանգչող և գործածվող ձայները:

Էջմիածնական երգվածքի հետ համեմատական վերլուծություն

Էջմիածնական երգվածքի ԳՁ եղանակին բնորոշ են c^2 դիմող և վերջավորող, c^2 և g^1 հանգչող, as^1 , h^1 և es^2 գործածվող, ինչպես նաև g^1 վերջին վերջավորող հնչյուններին համապատասխանող ձայնակարգային աստիճանները:

Դիտարկված տասը ԳՁ շարականները նշված բնորոշումներին համապատասխանում են: Մեր ունեցած շարականների ԳՁ-ի էջմիածնական երգվածքում ձայնեղանակի ձայնակարգի հնչյունաշարը ամենից հաճախ ընդգրկում է փոքր սեպտիմա ինտերվալով g^1-f^2 ձայնածավալը: Հանդիպում են նաև օկտավա՝ g^1-g^2 , f^1-f^2 , փոքր սեպտիմա՝ a^1-g^2 և փոքր սեքստա՝ g^1-es^2 , a^1-f^2 ձայնածավալները: Ինչպես արդեն նշվեց, դիմող ձայնը c^2 -ն է՝ բերված շարականների վերը նշված առավել կայուն հնչյունաշարի չորրորդ աստիճանը, որը համընկնում է հարաբերական ավարտի հնչյունին, վերջավորող և վերջին վերջավորող ձայներին, մասամբ՝ նաև հանգչող ձայնին: Այս առումով, ինչպես այս շարականների չիլինկիրյանական, այնպես էլ թաշճյանական տարբերակներում չորրորդ աստիճանը նշված հիմնական հնչյունաշարերում ծառայում է որպես ամուր հենակետ՝ միաժամանակ իր վրա կրելով մի-քանի գործառույթ: Որպես հանգչող ձայն՝ հանդես է գալիս նաև հնչյունաշարի առաջին աստիճանը (g^1), որն էլ երբեմն համընկնում է սկզբնավորող ձայնի հետ: Գործածվող ձայները հնչյունաշարի իջեցված երկրորդ (as^1), բարձրացված երրորդ (h^1) և իջեցված վեցերորդ (es^2) աստիճաններն են:

Ինչպես չիլինկիրյանական, այնպես էլ թաշճյանական ԳՁ շարականների հիմնական հնչյունաշարի վերջավորող ձայնի վերին հատվածում իոնական տետրախորդ է, որը գործածվող ձայնի պարագայում երբեմն հանդես է գալիս նաև դորիական երանգավորմամբ, իսկ հիպո-ուլորտն արտահայտված է հարմոնիկ տետրախորդով:

ԳՁ-Ն.Թ.



Ինչպես տեսնում ենք, բերված հիմնական ծայնակարգերի թե՛ չիլին-կիրյանական, թե՛ թաշճյանական օրինակներում համընկնում են ո՛չ միայն ծայնածավալները, այլև ծայնեղանակի ծայնակարգի հնչյունաշարերում նշված գործառնության աստիճանները: Այդուհանդերձ, երկու երգվածքներում մեր դիտարկած շարականների հաճախ հանդիպող սկսող և ավարտող մեղեդիական դարձվածքները միմյանցից որոշակիորեն տարբերվում են¹⁷:

Սկսող դարձվածք, Ն.Թ.



Վերջավորող դարձվածք, Ն.Թ.



Վերջին վերջավորող դարձվածք, Ն.Թ.



Չնչին փոփոխություններով համընկնում են այս երկու երգվածքների համապատասխան շարականների մեղեդիական ոճերն իրենց խառը՝ վանկային – ներվանկային, ներվանկային՝ վանկայինի տարրերով, զարդուրուն (կարող է լինել ներվանկայինի տարրերով), ինչպես նաև ներվանկային՝ վանկայինի և զարդուրունի տարրեր ընդգրկող տարբերակներով:

¹⁷ Ստորև բերված առավել հաճախ հանդիպող դարձվածքների չիլինկիրյանական տարբերակները տե՛ս աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 1

ԳՁ շարականների ծայնեղանակների ծայնակարգային հիմքի գործառույթային աստիճանների և մեղեդիական ոճերի վերլուծական տախտակներ՝ չիլինկիրյանական և թաշճյանական տարբերակներով

Լ. Չիլինկիրյան

N	Կարգը, շարականի տիպը և անվանումը	Ձայնա- ծավալ	Մեղեդիական ոճ	Ա.	Դ.	Հ.	ՀԱ.	Վ.	ՎՎ	Գ.
1.	Կանոն Աստուա- ծահայտնու- թեան առաջի- նատուն, Տ., «Ճառագայթ եւ կերպարան	a ¹ -g ²	Ներվանկային՝ վանկայինի տարրերով	a ¹	d ²	a ¹	d ²	d ²	-	b ¹ , f ²
2.	Կանոն չորրորդ կիրակէի աղու- հացից, Ահ., «Որ արարեր գորու- թեամբ»	a ¹ -g ²	զարդոլորուն՝ ներվանկայինի տարրերով	d ²	a ¹	a ¹	d ²	d ²	-	b, f ²ⁱ
3.	Կանոն Մեծի Ուրբաթուն, Հգ., «Իջեր յերկնից անսկիզբն» Գ., «Ըգտէր օրինե- ցէք» (սկսվածք) «Եւ զինատուն»	a ¹ -g ² a ¹ -g ² a ¹ -g ²	զարդոլորուն՝ ներվանկայինի տարրերով	d ² d ² d ²	d ² d ² d ²	a ¹ a ¹ a ¹	d ² - d ²	d ² d ² d ²	- - -	b ¹ , f ² b ¹ , f ² b ¹ , f ²
4.	Կանոն Մեծի Ուրբաթուն, Տ., «Ով ըսքանչելի եւ տեսիլ»	g ¹ -g ²	զարդոլորուն	d ²	d ²	d ²	d ²	d ²	a ¹	b ¹ , f ²
5.	Կանոն Մեծի Շաբաթուն թաղ- ման Տեառն, Տ., «Յովսէփ ճշմա- րիտ»	a ¹ -g ²	խառը՝ վանկա- յին-ներվանկա- յին	d ²	d ²	a ¹	d ²	d ²	a ¹	b, f ²ⁱ
6.	Կանոն Աշխար- համատրան կիրակէի, Տ., «Այսօր յարու- թին Քրիս- տոսի»	a ¹ -f ²	Ներվանկային՝ վանկայինի տարրերով	a ¹	d ²	a ¹	d ²	d ²	-	b ¹
7.	Կանոն Շողա- կաթին, Ահ., «Որախ լեր սուրբ եկեղեցի»	a ¹ -g ²	Ներվանկային՝ վանկայինի տարրերով	a ¹	d ²	d ²	d ²	d ²	a ¹	b ¹ , f ²
8.	Կանոն շաբաթի աւուրն, Ահ., «Որ ծագեցեր մեզ Լոյս մեծ»	a ¹ - a ²	խառը՝ վանկա- յին-ներվանկա- յին	d ²	d ²	d ²	d ²	d ²	-	b ¹ , eis ²
9.	Կանոն Սրբոց թարգմանչաց, Մնկ., «Մամա- նեալ Մովսէսի»	a ¹ - a ²	խառը՝ վանկա- յին-ներվանկա- յին	d ²	d ²	d ²	d ²	d ²	a ¹	b ¹ , eis ²
10.	Կանոն համօրէն մարտիրոսաց, Մնկ., «Այսօր յիշատակ սրբոց»	a ¹ -g ²	խառը՝ վանկա- յին-ներվանկա- յին	a ¹	d ²	d ²	d ²	d ²	-	b ¹ , f ²

Ն. Թաշճյան

N	Կարգը, շարականի տիպը և անվանումը	Ձայնա- ծավալ	Մեղեդիական ոճ	Ս	Դ.	Հ.	ՀԱ.	Վ.	ՎՎ	Գ.
1.	Կանոն Աստու- ածախայտնութեան առաջին ատուրն, Տ., «Ճառագայթ եւ կերպարան»	g^1-f^2	Ներվանկային՝ վանկայինի տարրերով	g^1	c^2	g^1	c^2	c^2	-	$as^1, h^1,$ es^2
2.	Կանոն չորրորդ կիրակեի աղու- հացից, Ահ., «Որ արարեր զօրութեամբ»	a^1-g^2	զարդություն՝ ներվանկայինի տարրերով	c^2	c^2	g^1	c^2	c^2	-	$as^1, h^1,$ es^2
3.	Կանոն Մեծի Ուրբաթուն, Հգ., «Իջեր յերկնից ան- սկիզբն» Գ., «Ըզտեր օրհնե- ցէք» (սկսվածք) «Եւ զինատրն»	g^1-f^2 a^1-g^2 a^1-g^2	զարդություն՝ ներվանկայինի տարրերով	g^1 as^1 g^1	c^2 c^2 c^2	g^1 g^1 g^1	c^2 - c^2	c^2 c^2 c^2	- - -	as^1, h^1, es^2 as^1, h^1, es^2 as^1, h^1, es^2
4.	Կանոն Մեծի Ուրբաթուն, Տ., «Ով ըսքանչելի եւ տեսիլ»	f^1-f^2	զարդություն	c^2	c^2	c^2	c^2	c^2	g^1	$as^1, h^1,$ es^2
5.	Կանոն Մեծի Շաբաթուն թաղման Տեառն, Տ., «Յովսէփ ճշմա- րիտ»	g^1-f^2	խառը՝ վանկա- յին-ներվանկա- յին	c^2	c^2	g^1	c^2	c^2	g^1	$as^1, h^1,$ es^2
6.	Կանոն Աշխար- համատրան կիրակեի, Տ., «Այսօր յարութիւն Քրիստոսի»	g^1-es^2	խառը՝ վան- կային-ներ- վանկային	g^1	c^2	g^1	c^2	c^2	-	$as^1, h^1,$ es^2
7.	Կանոն Շողա- կաթին, Ահ., «Ուրախ լեր սուրբ Եկեղեցի»	g^1-f^2	Ներվանկային՝ վանկայինի և զարդությունի տարրերով	g^1	c^2	g^1	c^2	c^2	g^1	$as^1, h^1,$ es^2
8.	Կանոն շաբաթի ատուրն, Ահ., «Որ ծագեցեր մեզ Լոյս մեծ»	g^1-g^2	խառը՝ վանկային- ներվանկային	c^2	c^2	c^2	c^2	c^2	-	$as^1, h^1,$ es^2
9.	Կանոն Սրբոց թարգմանչաց Մնկ., «Նմա- նեալ Մովսէսի»	g^1-g^2	խառը՝ վան- կային-ներ- վանկային	c^2	c^2	c^2	c^2	c^2	-	$as^1, h^1,$ es^2
10.	Կանոն հա- մօրէն մարտի- րոսաց, Մնկ., «Այսօր յիշատակ սրբոց»	g^1-es^2	վանկային՝ ներվանկայինի տարրերով	g^1	c^2	c^2	c^2	c^2	-	$as^1, h^1,$ es^2

Աղյուսակ 2

Սկսող և վերջավորող մեղեդիական դարձվածքները՝ ըստ Լ. Չիլինկիրյանի
ձայնագրությունների

Գ.Զ - Լ.Զ.

1 Սկսող դարձվածքներ

2

3

4

5

6

7

8

9

10

1 Վերջավորող դարձվածքներ

2

3


1 Վերջին վերջավորող դարձվածք

Աղյուսակ 3

Սկսող և վերջավորող մեղեդիական դարձվածքները՝ ըստ Ն. Թաշճյանի
ծայնագրությունների

ԳՁ - Ն.Թ.
Սկսող դարձվածքներ

1
2
3
4
5
6
7
8
9
10



Եզրակացություններ

Ինչպես Երուսաղեմյան երգվածքի ԱՁ¹⁸, այնպես էլ ԳՁ ծայնեղանակի շարականներն ուսումնասիրելիս նկատում ենք, որ ԳՁ-ի չիլինկիրյանական և թաշճյանական ծայնագրությունների համեմատությունը կրկին վկայում է այն մասին, որ երկու երգվածքների համապատասխան շարականներում նույնական են ծայնածավալները և ծայնակարգերի դիտարկված գործառութային աստիճանները, իսկ առկա տարբերություններն առաջնահերթ նկատելի են մեղեդիական բնորոշ դարձվածքների ներսում¹⁹:

Գրականություն

Լևոն Չիլինկիրյան, Շարական (ծեռագիր գրքույկ, եվրոպական նոտագրությամբ), Լևոն Չիլինկիրյանի ընտանեկան արխիվ, 172 էջ:

Լևոն Չիլինկիրյան, Շարական (ծեռագիր, կրկնօրինակ, կինոժապավենային նյութ, եվրոպական նոտագրությամբ), Լևոն Չիլինկիրյանի ընտանեկան արխիվ, 730 էջ:

Ձայնագրեալ Շարական հոգետր երգոց 1875, ի Վաղարշապատ, ի տպարանի Սրբոց Կաթողիկէ Էջմիածնի, 1090 էջ:

Աթայան Ռ. 1959, Հայկական խազային նոտագրությունը, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 287 էջ:

¹⁸ Տե՛ս Մարտիրոսյան 2017, 204-232:

¹⁹ Տե՛ս աղյուսակ 2 և 3:

- Ամիրաղյան Գ. 2012, Ութնամյա համակարգը հայ հոգևոր երգարվեստի Նոր Ջուղայի կամ հնդկահայոց երգվածքում, թեկնածուական ատենախոսություն, Երևան, 293 էջ:
- Արևշատյան Ա. 2013, Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում, Երևան, «Գիտություն», 336 էջ:
- Բրտեանց Ա. 1890, Դասագիրք հայկական եկեղեցական ձայնագրութեան, Վաղարշապատ, տպարան Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 124 էջ:
- Թահմիզյան Ն. 1977, Խագագրության արվեստն իր պատմական զարգացման մեջ, Բանբեր Մատենադարանի, Երևան, N 12, էջ 69-113:
- Թահմիզյան Ն. 1981, Մակար Եկմայան. կյանքն ու ստեղծագործությունը, Երևան, «Սովետական գրող», 120 էջ:
- Թաշճեանց Ն. 1874, Դասագիրք եկեղեցական ձայնագրութեան հայոց, Վաղարշապատ, տպարան Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 54 էջ:
- Կոմիտաս Վարդապետ 2007, Ուսումնասիրություններ եւ յօդուածներ, աշխատասիրութեամբ Գ. Գասպարեանի եւ Մ. Մուշեղեանի, Գիրք Բ, Երեւան, «Սարգիս Խաչենց-Փրինթինգ», 576 էջ:
- Կոմիտասը և ավանդական երաժշտական մշակույթը 2017, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տարեգիրք (պատասխանատու խմբագիր՝ Տաթևիկ Շախկույան), հ. Բ, Երևան, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատ., 272 էջ:
- Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տարեգիրք 2017, պատասխանատու խմբագիր՝ Տաթևիկ Շախկույան, հ. Գ, Երևան, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատ., 312 էջ:
- Тагмизян Н. 1977, Теория музыки в Древней Армении, Ереван, изд. АН Армянской ССР, 320 с.

**ՀԱՅՈՑ ՈՒԹՁԱՅՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՐՐՈՐԴ ՁԱՅՆԵՂԱՆԱԿԻ (ԳԶ)
ՈՐՈՇ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԱՐՎԵՍՏԻ
ԵՐՈՒՍԱՂԵՄՅԱՆ ԵՐԳՎԱԾՔՈՒՄ**

Աստղիկ Մարտիրոսյան

Ամփոփում

Հայ հոգևոր երգարվեստի լիարժեք լուսաբանման ճանապարհին կարևոր նշանակություն ունի Ութնամյա համակարգի ուսումնասիրությունը ժամանակի հետ ձևավորված (XVIII դարի վերջ, XIX դարասկիզբ) բոլոր երգվածքներում: Ութնամյա համակարգի ուսումնասիրումը ներառում է հայ հոգևոր երգերի ձայնեղանակների ձայնակարգային կառուցվածքները, դրանց գործառութային աստիճանները և մեղեդիական բնորոշ դարձվածքներն ընդգրկող տեսական, վերլուծական աշխատանքը:

Լ. Չիլինկիրյանի գրառած շարականային ամբողջ զանգվածը հանդիսանում է Երուսաղեմյան երգվածքի սկզբնաղբյուր, ուստի և կարևոր նշանակություն ունի Ութայն համակարգի ուսումնասիրության համար: Չիլինկիրյանի գրառած տասը ԳՁ շարական ենթարկել ենք համեմատական վերլուծության Ն. Թաշճյանի ծայնագրած նույնանուն շարականների հետ՝ ծայնեղանակային-ծայնակարգային կառուցվածքների և մեղեդիական բնորոշ դարձվածքների տեսանկյունից, վեր հանել Երուսաղեմյան երգվածքին բնորոշ Ութայն համակարգի նկարագրեր:

Եզրակացության համաձայն՝ երկու երգվածքների համապատասխան շարականներում նույնական են ծայնածավալները և ծայնակարգերի դիտարկված գործառության լատինականները, իսկ առկա տարբերություններն առաջնահերթ նկատելի են մեղեդիական բնորոշ դարձվածքների ներսում:

Բանալի բառեր՝ հայ հոգևոր երգարվեստ, Ութայն համակարգ, ԳՁ եղանակ, շարական, Երուսաղեմյան երգվածք, Լևոն Չիլինկիրյան, Նիկողայոս Թաշճյան:

ОТРАЖЕНИЕ ТРЕТЬЕГО ГЛАСА АРМЯНСКОЙ СИСТЕМЫ ВОСЬМИГЛАСИЯ В ИЕРУСАЛИМСКОМ РАСПЕВЕ АРМЯНСКОГО ДУХОВНОГО ПЕСНОТВОРЧЕСТВА

Астхик Мартиросян

Резюме

Изучение системы восьмигласия предполагает анализ ладовой структуры, функциональных ступеней и характерных мелодических оборотов гласов армянских духовных песнопений.

Шараканы, записанные Левоном Чилинкиряном, являются для нас источником Иерусалимского распева, поэтому они имеют важное значение для изучения системы восьмигласия. Записанные Чилинкиряном десять шараканов третьего гласа были подвергнуты нами сравнительному анализу с ладовыми структурами и характерными мелодическими оборотами одноименных шараканов, записанных Никогайосом Ташчяном. В результате анализа были выявлены характеристики системы восьмигласия, присущие Иерусалимскому распеву.

Ключевые слова – армянское духовное песнетворчество, система восьмигласия, третий глас, шаракан, Иерусалимский распев, Левон Чилинкирян, Никогайос Ташчян.

SOME EXPRESSIONS OF THE THIRD MODE OF EIGHT-MODE SYSTEM IN THE JERUSALEM SINGING TRADITION OF THE ARMENIAN SACRED CHANT

Astghik Martirosyan

Abstract

To fully spread light on medieval studies, it is of crucial significance to study the eight-mode system in Armenian sacred chants (late 18th - early 19th centuries) in all the branches of medieval Armenian chant. The study of the system proposes theoretical and practical analysis, which includes the structures of the modes, clarification of their functional tones and their typical melodic patterns.

Levon Chilinkiryan's recordings of hymns (Arm. *šarakans*) are considered to be sources of the Armenian Chant of Jerusalem, therefore they have a great significance in the research of the Armenian eight-mode (Arm. *Ut'jajn*) system. In this article, the third mode of Armenian Jerusalem Chant is observed. For the purpose of describing the features of the eight-mode in the Armenian Jerusalem Chant, the ten records by Chilinkiryan (available till now) have been analyzed in comparison with the corresponding *šarakans* recorded by Nikoghayos Tashchyan.

Key words – Armenian sacred chant, *Ut'jajn* system, third mode, *šakan*, Armenian Chant of Jerusalem, Levon Chilinkiryan, Nikoghayos Tashchyan.

ՕՇԱԿԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ

Սաթենիկ Վարդանյան

Արվեստագիտության թեկնածու
Երևանի պետական համալսարան
ՀՀ, Երևան, Աբովյան 52
Էլ. հասցե՝ sate08@rambler.ru

Օվսաննա Քարամյան

Երևանի պետական համալսարանի դասախոս
ՀՀ, Երևան, Աբովյան 52
Էլ. հասցե՝ melosya@yahoo.com
Հոդվածը ներկայացվել է 27.10.2020, գրախոսվել է 08.11.2020, ընդունվել է
տպագրության 01.03.2021

Ներածություն

Հովհաննես Մինասյանի **մոնումենտալ** արվեստն իրապես անգնահատելի ներդրում է մեր մշակույթի մեջ¹: Նկարիչը 1962 թ. ստանձնեց Օշականի եկեղեցու որմնանկարներն անելու աշխատանքը: Եկեղեցու պատկերազարդման թեման վերցնելով Հայաստանի հնագույն ժամանակներից՝ նա արտացոլում է, մի կողմից, հայ ժողովրդի պայքարը զավթիչների դեմ, մյուս կողմից՝ օրհասական դարձած գրի գյուտի և գրչության կարևորությունը:

Քաջ ծանոթ լինելով միջնադարյան եկեղեցական արվեստին՝ Հովհ. Մինասյանն աշխատանքն իրագործելու համար առաջարկեց ամբողջովին նոր հորինվածք և պատկերագրություն: Հայկական միջնադարյան եկեղեցիներում՝ Լմբատավանքում, Տաթևում, Գնդեվանքում և Քոբայրում, որմնանկարների սյուժեները լակոնիկ են և առանձնանում են գեղագիտական նուրբ ճաշակով, պատկերների վեհությամբ, որը Մինասյանը կարևորեց եկեղեցու պատերի նկարազարդման համար:

¹ Հ. Մինասյանի արվեստը արժևորել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը, որը եղել է Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու որմնանկարների պատվիրատուն:

Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու որմնանկարները

Օշականի եկեղեցին² ոչ միայն հավատքն արտահայտելու վայր է: Այնտեղ է գտնվում Հայոց այբուբենի հիմնադիր, գրերի գյուտի հեղինակ, «մտքի սյուն» Սուրբ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը³: 443 թ. այն կառուցել է իշխան Վահան Ամատունին՝ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի վրա: XVII դարում եկեղեցին արդեն խոնարհված էր: Հայ պատմագիր, եկեղեցական գործիչ Առաքել Դավրիժեցին նշում է, որ վեհաշուք, լայնանիստ, բարձրաբերձ տաճար-հանգստարանի տանիքը վաղ ժամանակներից փլված էր, և միայն Ավագ խորանն էր մնացել⁴:

1639-1645 թթ. Փիլիպոս Ա Աղբակեցի կաթողիկոսը կազմակերպում է եկեղեցու հիմնանորոգումը, բայց արդեն XIX դ. սկզբներին եկեղեցին դարձյալ անմխիթար վիճակում էր: 1850 թ. Ամենայն Հայոց Հայրապետ Ներսես Ե Աշտարակեցին կոնդակ է ուղարկում սինոդին (ուղղափառ եկեղեցու կառավարման բարձրագույն մարմին XVIII-XX դդ. սկզբներին)՝ եկեղեցին նորոգելու առաջարկով: Եկեղեցին վերջնականապես վերակառուցվել է 1873-1879 թթ.՝ նաև տեղացի ազգաբնակչության օժանդակությամբ: Հիմնովին նորոգված Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին օծվել է 1879 թ. հոկտեմբերի 21-ին: Կարելի է ասել, որ այն վերստին կառուցվել է նոր հորինվածքով: Մինչև XX դ. պահպանվել են նախկին շենքի պատերի մնացորդները՝ արտաքուստ բազմանիստ ավագ խորանով: Նոր եկեղեցին թաղածածկ դահլիճ էր, որն ուներ երեք թաղակիր կամարներ և Ավագ խորան՝ ձվաձև հատակագծով, ինչպես նաև առկա էին ուղղանկյուն ավանդատներ:

Խորհրդային շրջանում՝ XX դ. 60-ականներին, Ամենայն Հայոց Հայրապետի՝ Վազգեն Ա-ի գահակալության տարիներին, նոր թափ ու որակ ստացան վերականգնման աշխատանքները, որոնք համակարգում էր

² 1996 թ. սկսած՝ եկեղեցին հանդիսանում է Արագածոտնի թեմի առաջնորդանիստը:

³ Բեմի աջ և ձախ կողմերում առկա երկու մուտքերից աջակողմյանը տանում է դեպի Ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարան: Ներս ընկած հատվածում, տուֆապատ բարձր կամարի տակ վեր է խոյանում բազալտե խաչքար հիշեցնող մի հուշարձան, որտեղ պատկերված է մեսրոպյան երկաթագիր այբուբենը: Կոթողը խիստ տպավորիչ է: Մի քանի աստիճան ներքև երևում է դամբարանը: Կանթեղը լուսավորում է մարմարյա շիրմաքարը, որի վրա փորագրված է. «Սուրբ Մեսրոպ Մաշտոց 361-440»: Հղկված բազալտով երեսապատված պատերը միջավայրին հաղորդում են զուսպ արտահայտչականություն:

⁴ Գաբրիելյան 2018:

Մայր Աթոռը: Այս ազնիվ ու հայրենասիրական գործին աջակցեց աշխարհասփյուռ հայությունը: Երկու արժանավոր հայեր Միլանից՝ արմատներով երզնկացի Հայկ և Թորգոմ Ղազարոսյանները, ինչպես նաև հնդկահայ Պետրոս Ալեքսանը սիրով ստանձնեցին՝ առաջինները՝ դամբարանի, եկեղեցու և շրջակայքի ամբողջական վերանորոգման, իսկ երկրորդը՝ եկեղեցու որմնանկարների ծախսերը:

Երբ սկսվեցին նորոգման աշխատանքները, և բացվեցին հարթասյունների ներկված շերտերը, մի քանի պատերի ծեփերը վար թափվեցին: Շատ գեղեցիկ, մուգ մոխրագույն օխրայով հարդարված տուֆաքարե շարվածք երևաց:

Եկեղեցու նոր որմնանկարները ստեղծվեցին 1962-1965 թթ.: Աշխատանքները տևեցին 4 տարի: Մինասյանը Օշականի որմնանկարները կերտելիս կյանքի է կոչել սեփական մտահղացումները: Նրա գաղափարների իրականացմանը մասնակցեցին նաև նկարիչ Հենրիկ Մամյանը, ճարտարապետ Ռոմեո Զուլհալյանը և շաղախի վարպետ Արամայիս Հովհաննիսյանը: Նշենք, որ նրանց կերպարները, որպես միջնադարյան շինարարներ, Հովհ. Մինասյանը պատկերեց որմնանկարում: Այդպիսով, անգամ աստվածամերժման ժամանակներում, նա կարողացավ իրագործել իր առջև դրված խնդիրը: Վերականգնեց նաև որմնապատկերների ներկի պատրաստման տեխնոլոգիան. խորհրդային շրջանում եկեղեցական այդ արվեստը հայտնի պատճառներով դուրս էր մղվել: Փորձերի և տքնաջան աշխատանքի շնորհիվ Մինասյանը ստացավ պահանջվող տեխնիկան և նյութերը. թաց շաղախի վրա արագությամբ նկարվում էին պատկերները՝ ներկի հատուկ բաղադրությամբ, ձվի հումքի վրա և բնական հանքաներկերով:

Նպատակը հստակ էր՝ որմնանկարում վերաիմաստավորել մաշտոցյան այբուբենի նշանակությունը՝ 1600 տարի անց: Օգտագործելով նաև ճարտարապետական միջոցները՝ հեղինակները ստեղծեցին եռանիստ պատկեր՝ բազմադեմ կոմպոզիցիոն ռոկո: Կենտրոնական մասում այբուբենն է, որը մատուցվում է ժողովրդին և թագավորին:

Կենտրոնական՝ արևմտյան պատի (800x1200) ձախ կողմում, ամբողջ հասակով կանգնած է Սուրբ Մեսրոպ Մաշտոցը՝ հաստատական կեցվածքով, շուրջը խմբված են երեխաներ և աշակերտներ (նկ. 1): Մաշտոցը ներկայանում է միջնադարյան մոխրականաչավուն պարեգոտով, մտավորականի պարզ ու վճիտ էությամբ: Դիտարկելով Մեսրոպ Մաշտո-

ցին պատկերող XVI-XIX դդ. մի քանի մանրանկարներ, ինչպես նաև անհայտ նկարիչների կտավներ՝ ակնհայտ է դառնում, որ Մինասյանը չի փորձել կրկնօրինակել այդ կերպարները, այլ ստեղծել է իր մտապատկերի վարդապետին՝ նրան ներկայացնելով միջնադարյան միջավայրում և հավերժության մեջ սրբացված կերպարով: Նշենք, որ Մաշտոցի և Սահակ Պարթևի լուսապսակները դժգոհություն են հարուցել պետական հանձնաժողովի անդամների մեջ, սակայն հաջողվել է նրանց համոզել և իրականացնել արվեստի այդ մեծ գործը:

Կենտրոնում գտնվող պատուհանի մտահղացումը տեղին է և ստեղծում է գեղեցիկ պատկեր. վերևում Արարատի ձյունազարդ գագաթն է, իսկ արևի ճառագայթներով լուսավորված պատուհանով միմյանցից առաձնանում են որմնանկարի բովանդակային պատմությունները: Կենտրոնում գրված է. «Եղիցի՛ լոյս և եղեւ լոյս»: Աջ կողմում հատվածներ են Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատությունից⁵. «Եւ ցանկալի ողջոյնն միմեանց տուեալ, ուստի և բարբառօք ցնծութեան և երգօք հոգետօք և բարձրագոյն օրհնութեամբ ի քաղաքն դառնային, և զաւուրս տօնական ուրախութեամբ անցուցանէին»: «Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ: Որում պարգևէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստծոյ. Հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին» (ձախ կողմում)⁶:

Այբուբենի աջ կողմում պատկերված են Վռամշապուհ թագավորը, թագուհին, Ամատունի իշխանը: Առաջին շարքում նստած են Սահակ կաթողիկոսը, նախարարները, իսկ նրանց շուրջը հավաքվել են ոգևորված ժողովուրդն ու երեխաները, որոնց գլխավերևում Ս. Հռիփսիմեի տաճարն է: Սա պատկերի ամենահագեցած հատվածն է՝ կերտված ճաշակով և մեծ վարպետությամբ: Ուշագրավ են ինչպես կերպարների դասավորությունը, այնպես էլ հորինվածքը, նաև գունային շռայլ լուծումները: Դեկորատիվ լեզուն հարուստ է: Որոշ մասնագետների կարծիքով, տպավորիչ են Վահան Ամատունի հազարապետի լուսավոր ու ազնիվ հայացքը, թագուհու գթասեր ու հիացական դեմքը, ինչպես նաև մյուս կերպարների երազկոտ ու խանդավառ տեսքը՝ հավատով և հույսով լի հայացքները: Մինասյանը

⁵ Կորիւն 1981, 25:

⁶ Կորիւն 1981, 22:

իր սիրած օխրա-ծիթապտղի գույնին հաղորդել է խորություն և ազնվականություն: Սևն ու կանաչը նա երանգավորել է յասամանագույն և արծաթագույն բռնկումներով:

Որմնանկարներում առանձնահատուկ ձևով շեշտված է տաք մոխրագույն երանգը, որի միջով բավական գեղեցիկ անցում են կատարում բաց-վարդագույն, կանաչավուն և կապտավուն գունային երանգները: Այդ ամենը պատկերին տալիս է ընդգրկուն ջերմություն՝ մղելով հոգևոր ընկաման և հանգստության: Ամբողջական պատկերի աջ կողմում Ս. Հռիփսիմեի վանքն է, ձախում՝ կարմրավուն, գորշ, ժայռակերտ զանգվածները՝ հավասարակշռելով ստեղծագործության երկու հատվածները:

Որմնապատկերների մեջտեղում առկա բաժանարար պատուհանը չի ստեղծվել լոկ իբրև լույսի աղբյուր: Մինասյանն այն դարձրել է Հայոց այբուբենի հարթակ՝ «Լույս տվող տառեր» իմաստով և անվանումով: Պատուհանի ապակու վրա դրսի կողմից պայծառ լույսով ճառագում է այբուբենը՝ խորհրդանշելով հանճարի միտքը:

Հյուսիսային պատը (418x422) զարդարում է գարնան տեսարան ներկայացնող որմնանկարը՝ պատկերելով ծաղկազարդ ծառ և ուրախահեմ աղջիկներ, հայաստանյան գարուն, որը խորհրդանշում է խաղաղություն, աշխատանք և բերրիություն: Այս պատի գլխավոր կերպարներն են երեք կանայք, որոնց ձեռքերն աղոթական և ընծայական դիրքով ուղղված են դեպի կենտրոնական որմնանկարը: Աջ կողմի կինը գյուղական հանդերձանքով է, գլուխը դեպի աջ թեքած՝ ի տարբերություն մյուս երկուսի, որոնց հայացքները ուղղված են որմնանկարին: Նրանցից մեկը աստվածաշնչյան հանդերձանքներով է, իսկ մյուսը՝ տարազով, և ձեռքին ունի ճյուղ՝ վրան նուռ ու խաղող. սրանք սուրբգրային իմաստով խորհրդանշում են Ավետյաց երկիրը՝ նոր դրախտի իմաստը: Այնտեղ է Կենաց ծառը, որի պտուղները նուռ են: Նուռը քրիստոնեության մեջ ներկա և գալիք կյանքի, նաև հավատացյալ ժողովրդի միասնության մարմնավորումն է, և այդ իմաստով էլ կիրառվել է պատկերում՝ որպես Կենաց ծառի պտուղ: Ծառի ստորին հատվածում պատկերված ծաղիկներն ու փոքրիկ եղնիկը ոչ միայն ներկայացնում են բնաշխարհը, այլ նաև արտացոլում են կյանքի, հեզության և զարթոնքի իմաստները: Ապա գրված են պատմիչ Եղիշեի խոսքերը՝ «Բազում ձմերաց հալեցան սառնամանիք, եհաս գարուն, եւ եկին նորեկ ծիծեռնուք տեսին եւ խնդացին կենացղասէր մարդիկ», այնուհետև՝ «Նմանեալ Մովսէսի տէր վարդապետ բերելով զգիր օրինաց ի

Հայաստան աշխարհի որով լուսաւորեցան ազգ որդոց Թորգոմայ»⁷: Այս պատկերապատումը խոսում է բնության ու մարդու հոգևոր աշխարհի ներդաշնակության մասին:

Եկեղեցու հարավային պատին (418x422) պատկերված են կանգնած և ծնրադիր նետաձիգ զինվորներ՝ թագավորության պահապանները: Նետաձիգների գլխավերևում վրձնած է թևերը բացած արծիվ: Պատկերը բնորոշում է ուժի, անկախության, հայրենի կենսունակության և պաշտպանության գաղափարները: Որմի այս հարթության վրա նույնպես մեջբերումներ կան պատմիչ Եղիշեից. «Որպես եւ ասաց ոմն ի հնոցն, մահ ոչ իմացեալ մահ է՝ մահ իմացեալ՝ անմահութիւն է: Որ զմահ՝ ոչ երկնչի ի նմանէ: Եւ այս ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուումնութենէ: Կոյր զրկի ի ճառագայթից արեգական եւ տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց: Լալ է կոյր աջօք քան կոյր մտօք: Որպէս մեծ է հոգի քան զմարմին՝ այդպէս մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոց»⁸:

Ամբողջական առումով որմնանկարի հարթապատկերային ոճը հիշեցնում է միջնադարյան որմնանկարները, մանրանկարչությունը և հարթաքանդակները: Նկարիչը օգտագործել է հայ միջնադարյան կերպարվեստի տարբեր դպրոցներին ու հուշարձաններին, մասնավորապես, Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու բարձրաքանդակներին և որմնանկարներին բնորոշ կերպարային մոտիվներն ու կոմպոզիցիոն սկզբունքները⁹:

Արևելյան պատ (175x700): Խորանից ձախ պատկերված է Սուրբ Մեսրոպ Մաշտոցը: Ուշադրության է արժանանում Մաշտոցի ինքնատիպ նկարազարդումը, որը տարբերվում է մինչ այդ եղածներից: Դիտարկելով միջնադարյան ձեռագրերում Մեսրոպ Մաշտոցին ներկայացնող պատկերները՝ կարող ենք փաստել, որ Մինասյանը ոչ թե կրկնել է այդ օրինակները, այլ ստեղծել է հայ հանճարի իր երևակայական կերպարը: Նա պահպանել է որմնանկարչության և մանրանկարչության հարթապատկերայինության սկզբունքները, սակայն կերպարը մեկնաբանել է յուրովի:

⁷ Եղիշե 1957, 114:

⁸ Եղիշե 1957, 27:

⁹ Աղասյան 2009, 156:



Նկ. 1. «Փառք հայ գրի և դպրության» որմնանկարը



Նկ. 2. Խորանի մի մասը՝ Մարիամ Աստվածածնի պատկերով

Այբուբենի հայրը պատկերված է կանգնած, ձեռքին՝ գրիչ: Ալեհեր Մաշտոցը հայացքը հառել է հեռուն, հագուստը միջնադարյան պատմության է՝ թիկնոցով: Նրա աջ կողմում սղագիր գրչի և գրքի պատկերներն են: Սուրբ Մեսրոպի ոտքերի մոտ են երկու ծնկաչոք աշակերտները, որոնցից մեկը նայում է մյուսին, և երկուսի աջ ձեռքերը ուղղված են մի կողմ: Կարծես մեկը մյուսին ինչ-որ բան է մատնանշում: Նրանց ձախ ձեռքերում գրքեր են, իսկ ոտքերի մոտ՝ վառված կանթեղ: Պատի վրա գրված են Մովսես Խորենացու հանրահայտ տողերը. «Զի թէպէտ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փութու սահմանեալ, եւ զօրոյթամբ տկար, եւ ընդ այլով յոլով անգամ նվաճեալ թագաւորոյթամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, որ արժանի գրոյ հիշատակի»¹⁰: Ներքևի հատվածում հայոց պատմիչների անուններն են՝ Ղազար Փարպեցի, Եղիշե, Խորենացի, Կորյուն, Եզնիկ Կողբացի, Փավստոս Բուզանդ: Ամբողջ որմնապատկերը արտահայտում է դպրության, ուսման դերի գնահատումը և սերը գիտելիքի հանդեպ: Այս նկարապատման ձևն ու էությունը Մինասյանին բնորոշում են որպես ինքնուրույն մտածելակերպ և «պինդ» ձեռք ունեցող ստեղծագործողի:

Արևելյան պատի (175x700) աջ կողմում պատկերված է հրեշտակ: Նրա ծնրադիր վիճակը խոնարհություն է խորհրդանշում: Գլուխը արևագույն լուսապսակի մեջ է: Դեմքն ունի երիտասարդ տեսք և զվարթ արտահայտություն: Հրեշտակի թևերը գեղեցիկ են, երկնագույն, իսկ ծնկին բացված գիրքն է: Նրա ձեռքերում կանաչ ճյուղ է: Այս հատվածի կենտրոնական ֆիգուրի գլխավերևում պատկերված են հավերժության երկու պտտվող գնդեր: Հրեշտակի հագուստը նույնպես վրձնած է անտիկ ոճով: Սույն որմնանկարում ևս առկա են գրաբարյան հղումները, այս անգամ՝ Մաշտոցից. «Սկիզբն դպրութեանց Հայոց՝ եղև սկիզբն մեծի գիտութեան»¹¹:

Խորհրդային տարիներին կտրականապես մերժվում էին կրոնական դրսևորումները, և նկարիչ Մինասյանի այս աշխատանքը համարձակ ու օգտաշատ մի ստեղծագործություն է, որն իր ուրույն տեղն է գտել որմնանկարչական արվեստում և իր հոգևոր դաշտում: Հովհաննես Մինասյանը, ընտրելով բյուզանդական սրբապատկերային և որմնանկարչական ձևը, պատկերին հաղորդել է տիպիկ հայկական բովանդակություն, որն

¹⁰ Խորենացի 2014, 10:

¹¹ Կորյուն 1981, 19:

արտացոլվում է կերպարների դիմագծերի արտահայտչականության, նկարագրված պատմության ինքնատիպ դրսևորման մեջ: Սա համաշխարհային արվեստի մի գործ է՝ հայկական ազգային արժեհամակարգով հագեցված:

Օշականի եկեղեցու խորանի Սուրբ Աստվածածնի պատկերը (նկ. 2) (175x105) իր տեսակով պատկանում է սրբապատկերային «Օղիգիտրիա» պատկերախմբին: Հունարենից թարգմանած՝ այն նշանակում է «Ուղի ցույց տվող» և սկիզբ է առել բյուզանդական արվեստում, ի դեպ, լայն տարածում ունի նաև մեր օրերում: Թեմատիկ ամենատարածված պատկերն է Աստվածամայրը մանուկ Հիսուսի հետ: Ավանդության համաձայն՝ սրբապատկերային այս ձևը ստեղծել է Սուրբ Ղուկաս Ավետարանիչը:

Խորանի որմնապատկերը նկարված է մարմարի վրա: Գլխադասային հատվածում հավերժության նշան է պատկերված: Այն մատնանշում է աստվածային ու քրիստոնեական էության անվերջանալի ամենազորությունը: Տիրամոր և Մանկան պատկերի հետնախորքը ամբողջովին պատված է հարուստ ու մուգ կապույտ գույնով: Քրիստոնեական դավանաբանության մեջ այս գույնը խորհրդանշում է Սուրբ Կույս Մարիամ Աստվածածնին: Խորանի կապույտը իր խտությամբ հիշեցնում է երեկոյից դեպի գիշեր ընթացող օրվա երկնային կապտավուն երանգները: Մարմարային հարթությանը այդ երանգավորումը հաղորդում է հարթ, ձգված կտավի տեսք: Կապտավուն հետնապատկերի մեջ՝ ծախից, խոյանում է արևելյան տեսակի երկու ծառ՝ զարդարված մանրախիտ տերևներով: Աստվածամայրը նստած է առանց բազկակալների բազմոցին՝ բարձի վրա: Այս տարբերակը կարելի է տեսնել վաղ քրիստոնեական մանրանկարչության մեջ: Մանուկ Հիսուսը կարծես թե գտնվում է Սուրբ Տիրամոր և՛ գրկում, և՛ ծնկներին: Հիսուսն աջ ձեռքով օրհնում է մարդկանց և աշխարհը, որը Ամենակալ Քրիստոսի ձևն է, իսկ ձախ ձեռքում պահել է գլանաթուղթը: Մոր և Որդու միասնության օղիգիտրիկ տեսակը խորհրդանշում է «Երկնավոր Թագավորի և Դատավորի» աշխարհ գալը, նաև խոնարհումը Մանկան առջև: Այն հատկապես մեծ տարածում ստացավ Բյուզանդական կայսրությունում և Ռուսաստանում: Մոր և որդու հայացքները նայում են նույն ուղղությամբ: Ամենասրբուիտ և Աստվածամանկան հազուստները նույնատիպ են: Երկուսի հազուստներն էլ երկու գույնի են բաժանված: Նկարիչը նորից նախընտրում է կապույտը, որն ավելի թույլ խտություն ունի, քան հետնախորքի կապույտը և կարմրաշագանակագույնը:

Օջականի եկեղեցու որմնանկարները կարելի է համարել հայկական միջնադարյան մանրանկարչական դպրոցների և ժամանակակից մոնումենտալ արվեստի հրաշալի միաձուլում, որը հաղորդում է խոր և ամբողջական տպավորություն: Այստեղ հեղինակը երևում է իր ստեղծագործական ողջ հմայքով և ազատությամբ, ազատությամբ, որն ունի պատմական հիմքեր: Հովի. Մինասյանի որմնանկարներին բնորոշ են հայկական մանրանկարչության, աղթամարյան որմնաքանդակների ու որմնապատկերների կերպարները: Նկարիչը լուծել է ոչ միայն դեկորատիվ-կերպարային, այլ նաև ճարտարապետական և կոմպոզիցիոն խնդիրներ: Մտահղացման հիմքում հին հայկական գրքի ձևավորման սկզբունքն է, նկարի վերևի մասում՝ կամար-խորանը՝ էջի ինքնատիպ ճարտարապետական զարդաձև հորինվածքը: Նույն կերպով է ստեղծվել գլխավոր՝ արևմտյան պատի որմնանկարի կոմպոզիցիան. կամարի երևակայելի գիծը ներառում է և՛ նետաձիգ զինվորների պատկերները, և՛ Արարատի ձյունածածկ գագաթը, և՛ աղջիկներին (որոնք փառաբանում են հայ գրերը կերտող Մաշտոցին), և՛ նրա աշակերտների դիմանկարները, և՛ պատուհանը՝ իր վրա շողացող տառերով: Պատին կարող ենք կարդալ հին հայերենով մի գրվածք. «Կույրը զուրկ է արևի շողերից, տգետը զուրկ է կյանքից» (արդեն նշել ենք, որ Մինասյանը հաճախ էր ներառում տեքստեր իր կտավներում)¹²: Գրվածքների կոմպոզիցիոն ճշգրիտ տեղադրումն էլ կենդանություն է հաղորդում ստեղծագործությանը: Գերակշռող կարմիրը օժանդակում է հորինվածքին՝ դրան տալով աշխուժություն, պլաստիկ ներքին արտահայտչականություն: Դիմացը երևում է հզոր արծիվը՝ որպես սուր տեսողության, բարձր թռիչքի և ուժի մարմնավորում: Նրա կողքին հայրենապաշտպան զինվորներն են՝ ռիթմիկ-շեշտված շարժումներով: Գունային լուծումը տարբերվում է նախորդ երկու մասերից իր կապույտների, կանաչների ավելի շեշտակի և հարուստ երանգներով:

Հովհաննես Մինասյանն այսպես է բնութագրում Օջականի եկեղեցում կատարած իր աշխատանքը. «Նոր սեղանը իր ընդգրկունության մեջ՝ նյութով, ոճով և Աստվածամոր նկարով, ներդաշնակության մեջ է ամբողջ եկեղեցու ճարտարապետության հետ: Պետք է կարողանանք, իրոք, մեկընդմիջ թոթափել տուրիստական-հիացական, մոդայիկ, մակերեսային հայացքն այս բարդ հարցերի վերաբերյալ, կարողանանք կառուցել,

¹² Տե՛ս Воронова 1976, 20:

նկարել, քանդակել մեր ժողովրդի արժանապատվությանը համապատասխան, այնպես, ինչպես այդ արել են անցյալի մեր մեծերը, այնպես որ և՛ արմատները զգացվեն, և՛ նորաբջիջ ծիլերը՝ հայացք ներկայի մեջ և գալիքին հառած: Գործնականորեն սա նշանակում է հինից (թե՛ մերից, թե՛ համաշխարհայինից) մեծ դասեր առնելով, երբեք չկրկնել կամ չոճավորել, այլ ասել մեր սեփական խոսքը՝ հայերեն շեշտերով և համամարդկային բովանդակությամբ: Սա բարդ խնդիր է, բայց մենք պիտի ձգտենք լուծելու, քանզի պարտավոր ենք մեր ժողովրդի և ժամանակի հանդեպ: Եթե ձգտենք, բանաստեղծի խոսքով ասած՝ «Մեր ցորյանը ժայռին չի ընկնի...»¹³:

Եզրակացություններ

Այսպիսով, կարող եք վստահաբար ասել, որ այս մնայուն գործը գալիս է լրացնելու և շարունակելու հայ որմնանկարչության հրաշալի ավանդները: Այս ստեղծագործությունը, պահպանելով հինը, նոր՝ արդիական իմաստ է հաղորդել Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցուն:

Գրականություն

- Աղասյան Ա. 2009, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, «Ոսկան Երևանցի», 292 էջ:
- Գաբրիելյան Է. 2018, Օշականի Մեսրոպ Մաշտոց եկեղեցին, <https://emmagabrielyan.wordpress.com> (18.04.2018):
- Եղիշե 1957, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 223 էջ:
- Կորին 1981, Վարք Մաշտոցի, Երևան, ԵՊՀ հրատ., 68 էջ:
- Մինասյան Հ. 1971, Արվեստների դաշինքը, Սովետական արվեստ, N 6, էջ 10-12:
- Մովսէս Խորենացի 2014, Պատմութիւն Հայոց, Երևան, «ՎՄՎ-Պրինտ», 296 էջ:
- Воронова О. 1976, Монументальная живопись, «Творчество», N 4, Минск, с. 19-24.

¹³ Մինասյան 1971, 10:

ՕՇԱԿԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ

Սաթենիկ Վարդանյան, Օվսաննա Քարամյան

Ամփոփում

«Փառք հայ գրի և դպրության» և «Աստվածածինը Մանկան հետ» սրբապատկերներով 1962-1965 թթ. նկարիչ Հ. Մինասյանը նկարագարդել է Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու պատերը: Ճարտարապետական հորինվածքին ներդաշնակված եռապատկեր որմնանկարներից առաջինն արժևորում է Հայոց այբուբենի հզորությունը, միտքն ու իմաստությունը: Այստեղ նկարիչը գեղարվեստական նուրբ ճաշակով, չափի և ոճի զգացողությամբ օգտագործել է միջնադարյան հայ գեղանկարչության ու քանդակագործության տարբեր դպրոցներին ու հուշարձաններին, մասնավորապես Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու բարձրաքանդակներին ու որմնանկարներին բնորոշ կերպարային մոտիվները՝ հարազատ մնալով իր սեփական մտահղացմանը և կոմպոզիցիոն սկզբունքներին:

Բանալի բառեր՝ Հովհաննես Մինասյան, սրբապատկեր, որմնանկար, միջնադարյան մանրանկարչություն, Մեսրոպ Մաշտոց, եկեղեցի, ճարտարապետություն:

ФРЕСКИ ЦЕРКВИ СВ. МЕСРОПА МАШТОЦА В ОШАКАНЕ

Сатеник Варданян, Овсанна Карамян

Резюме

Иконы «Слава армянской письменности» и «Богородица с младенцем» Ошаканской церкви Св. Месропа Маштоца были созданы художником-монументалистом О. Минасяном в 1962-1965 годах. Объемная фреска, гармонирующая с архитектурной композицией, является олицетворением силы армянского алфавита. Художник использовал мотивы, характерные для различных школ средневековой армянской живописи и скульптуры, в частности, фресок церкви Святого Креста на острове Ахтамар, но при этом он остался верен собственным идеям и композиционным принципам.

Ключевые слова – Ованнес Минасян, икона, фреска, средневековая миниатюра, Месроп Маштоц, церковь, архитектура.

THE FRESCOES OF THE ST. MESROP MASHTOTS CHURCH OF OSHAKAN

Satenik Vardanyan, Ovsanna Karamyan

Abstract

The icons of "Glory to Armenian writing" and "The Virgin with the child" were created in the St. Mesrop Mashtots Church in Oshakan by H. Minasyan in 1962-1965. The three-dimensional fresco in harmony with the architectural composition represents the power, thought and wisdom of the Armenian alphabet. Here the artist, with a fine artistic understanding and a sense of size and style, has used motifs typical to the various schools and monuments of medieval Armenian painting and sculpture, particularly the sculptures and frescoes of the Saint Cross Church of the Akhtamar Island, at the same time remaining close to its own idea and compositional principles.

Key words – Hovhannes Minasyan, icon, fresco, medieval miniature, Mesrop Mashtots, church, architecture.

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԿԻՄԵՐԱԿԱՆ ԵՎ ՍՎՅՈՒԹԱԿԱՆ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Գարեգին Թումանյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ gstumanyan@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 16.01.2020, գրախոսվել է 27.05.2020, ընդունվել է
տպագրության 01.03.2021

Ներածություն

Թաղման ծեսը յուրաքանչյուր մշակույթի կարևոր բաղադրիչներից է: Որևէ թաղման մշակութային պատկանելությունը պարզելու և այն թվագրելու համար նախ հարկ է անդրադառնալ հուղարկավորության ծեսին: Ուստի այսօր էլ արդիական է ավելի քան յոթանասուն տարի առաջ արտահայտված այն գաղափարը, որ սկյութական հիմնախնդրի պարզաբանման գործում անհրաժեշտ է կարևոր դեր վերապահել թաղման ծեսին¹: Որպես այս տեսակետի կողմնակից՝ մենք ձեռնամուխ ենք եղել կիմերա-սկյութական հատկանիշներով թաղումների ձևի², դամբարանների կառուցվածքի, ննջեցյալների թաղման ծիսակարգի, տարբեր կենդանիների զոհաբերությունների, ուղեկցող գույքի համակողմանի հետազոտությանը:

Մեր կարծիքով, վերջին տասնամյակների հնագիտական հետազոտությունների շնորհիվ, ստեղծվել են լուրջ նախադրյալներ, որ Հայկական լեռնաշխարհի հուշարձանների համակարգում առանձնացվեն մի շարք դամբանային համալիրներ, որոնց, ամենայն հավանականությամբ, կարելի է անվանել կիմերական կամ սկյութական: Առայժմ ընտրել ենք 67 դամբանադաշտերի 156 դամբարաններ, որոնցից յուրաքանչյուրում առկա են

¹ Артамонов 1947, 81.

² «Թաղման ձև» ասելով՝ մենք նկատի ունենք հանգուցյալի հարաբերվածությունը այն դամբանային համալիրին, որտեղ ամփոփված է նրա դիակը: Եթե հուղարկավորման համալիրը չի կառուցվել հատկապես տվյալ ննջեցյալի կամ նրա ընտանիքի անդամների համար, ապա նման թաղումն ընդունված է անվանել ներթող կամ իջեցուկ:

կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությանը³ բնորոշ հատկանիշներ կամ իրեր: Ինչպես ասվեց, գիտական քննության ընթացքում, բացի ուղեկցող գույքից, հաշվի են առնվել նաև դամբանային համալիրների կառուցվածքային տարրերի, հուղարկավորման ծիսակարգի և զոհաբերությունների վերաբերյալ տվյալները, որոնք խնդրին առնչվող նախորդ ուսումնասիրություններում գրեթե անտեսվել են: Այս կապակցությամբ հարկ է հիշել, որ երբ խոսքը սկյութական մշակութի տարածաշրջանային հատվածաբաժանումների կամ ժամանակագրական փուլաբաժանումների վերաբերյալ է, ապա միայն «սկյութական երրորդության» քննարկմամբ սահմանափակվելը դառնում է անարդյունավետ⁴: Ավելի՛ն, «սկյութական երրորդություն» հասկացությունից դուրս են մնում, ասենք, մարդակերպ քարե արձանները, որոնք, բնականաբար, ո՛չ «կենդանական ոճի» նմուշներ են, ո՛չ էլ զենք կամ ծիսասարք: Մինչդեռ ցանկացած փակ համալիրի համար դրանք «անձնագրի» դեր կարող են ունենալ⁵: Կիմերական և սկյութական դամբանային համալիրների նույնացման գործում առաջնային են համարվում դամբանախցի պատ(եր)ի կոր լինելը⁶, որոշակի տիպի մարդակերպ մահարձանի կամ հուշակոթողի առկայությունը դամբանաթմբի վրա կամ դամբանախցում, հիմնական թաղման կմախքի մեջքի կամ կողքի վրա ձգված դիրքը՝ հաճախ գլխով դեպի արևմուտք⁷, մարդու զոհաբերության առկայությունը, այսինքն՝ բազմամարդ այնպիսի թաղումները, որոնցում կմախքներից մեկը կամ մի քանիսն առանձնանում են մյուսներից իրենց դիրքով, հանգչելատեղով կամ այլ հատկանիշներով, ինչպես նաև *եղբայրական/ընդհանուր* դամբանասրահները: Ինչ վերաբերում է իջեցուկ թաղումներին, ապա իրենց ննջեցյալներին թաղելու նման ձևի ընտրության տրամաբանական բացատրություններից մեկը, ըստ երևույթին, հուղարկավորողների մշտական բնակավայրի բացակայությունն է⁸: Մեր ուսում-

³ Այս եզրույթը գիտական շրջանառության մեջ է դրել տողերիս հեղինակը. տե՛ս Թումանյան 2018:

⁴ Sher 1988, 48.

⁵ Ильинская 1983, 56, Раевский 1985, 78, 140-142, Алексеев 2003, 44, Tsetskhladze 2011, 133.

⁶ Դժվար չէ նկատել, որ առաջին հերթին հիշյալ պայմանը բավարարում են կատակոմբները և կրկնաստառ դամբանախցերը:

⁷ Граков 1971, 64, Артамонов 1974, 102, Тереножкин 1976, 49, 98, 102, Алексеев 1992, 56.

⁸ Tumanyan 2017, 197-198.

նասիրության հիմքում դրված է նաև այն գաղափարը, որ քննարկվող դամբարաններում հաճախ հեծյալ ռազմիկներ են ամփոփվել: Ուստի կիմերական և սկյութական թաղումների համար առանձնացվել են երկու կարևոր բնութագրիչներ ևս՝ ծիու և (կամ) ձիասարքի տեղադրումը դամբարանահում, ինչպես նաև շան զոհաբերությունը: Բացի այդ, որքան հնարավոր է, ամբողջության մեջ է դիտարկվել առարկաների այն հավաքածուն, որը հատուկ էր կիմերա-սկյութական ցեղախմբերի հեծյալ ռազմիկներին (զենք, ձիասարք, աշխատանքի գործիքներ, հանդերձանք, պերճանքի առարկաներ, անձնական գործածության իրեր, խեցանոթներ⁹):

Արդյունքներ և քննարկում

Այստեղ քննարկվում են միայն Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. VIII դարի վերջ – VI դարերով թվագրվող այն դամբարանները, որոնցում ամփոփված **հիմնական** ննջեցյալները **ռազմիկներ** են¹⁰: Այլ խոսքով՝ դրանք պետք է լինեն տղամարդկանց թաղումներ (անհատական կամ խմբային), որոնք որոշ դեպքերում կատարվել են տեղական ծագում չունեցող դամբանային կառույցներում,¹¹ և որոնցում առկա են, ասենք, հուշակոթողների համապատասխան տիպեր, մարդու կամ ձիու զոհաբերություն, իսկ ուղեկցող գույքի կազմում՝ զենք (ակինակ, մարտական քլունգաձև կացին, սկյութական տիպի նետասլաք և այլն) ու զրահ (առնվազն մեկ տեսակ), ձիասարք, տղամարդու աշխատանքի գործիք (կախօղակով սրոցաքար, դանակ, տաշուրագ և այլն) կամ բնութագրող այլ հատկանիշ¹²: Առանձնացնելով կիմերա-սկյութական տիպի թաղումներին բնորոշ հատկանիշները՝ ամենևին չենք բացառում, որ դրանք կարող են սովորական լինել նաև ուրարտական, էթիունյան կամ համաժամանակյա այլ մշակութային փակ

⁹ Թեև շրջանառվում է այն կարծիքը, որ խեցեղենը չի կարելի դիտարկել որպես քոչվոր ցեղերի մշակույթների էական հատկանիշ, քանի որ նրանք մեծ մասամբ օգտվում էին հարևան նստակյաց ժողովուրդների պատրաստած ամանեղենից (Петренко 1983, 46), այնուամենայնիվ, խելամիտ չէր լինի ամբողջովին անտեսել կիմերա-սկյութական հնագիտական համալիրներին բնորոշ խեցանոթների տեսականին: Խեցեղենի բնույթը, ձևը, զարդաբանվածքը և այլ հատկանիշներ կարող են տեղեկատվության կարևոր աղբյուր հանդիսանալ:

¹⁰ Բնականաբար, դրանց մեջ են մտնում նաև զույգ թաղումները, որոնցում առկա են տարասեռ չափահաս ննջեցյալներ:


¹¹ Օրինակ, կատակոմբներում կամ ստորգետնյա նեղ ու երկար քարարկղներում:

¹² Մեր կողմից առանձնացված հատկանիշների վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս Tumanyan 2010, 189-194, Tumanyan 2016, 30-32, Туманян 2019, 27-29:

համալիրների համար: Ընդհակառակը, կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության (հարուստ) թաղումներին հատկանշական է տարբեր մշակույթներին պատկանող արտեֆակտերի խառը համախմբությունը: Դրանցում հաճախ են հանդիպում ուրարտական, էթիոնյան, ասուրական, իրանական, փոյուգական, եգիպտական մշակույթներին պատկանող առարկաներ¹³: Մեր ընտրանքի մեջ են մտնելու միայն այն դամբարանները, որոնցում համատեղ առկա է կիմերա-սկյութական թաղումներին բնորոշ առնվազն երեք հատկանիշ: Իհարկե, ավելացնելով համատեղ հանդիպող հատկանիշների քանակը, կարելի է առավել վստահելի և ճշգրիտ արդյունքներ ակնկալել: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ միասին հանդես եկող հատկանիշների թիվն անընդհատ կարելի է մեծացնել, իսկ մեր հնագիտական տեղեկատվության աղբյուրները հեռու են սպառիչ լինելուց (դրանք երբեմն պարունակում են ընդամենը մեկ-երկու կցկտուր տեղեկություն), կարծում ենք, որ փոխադարձ հանդիպող երեք հատկանիշը բավարար է օպտիմալ համարվելու համար: Այս դեպքում մենք զերծ կմնանք մի խումբ հետաքրքիր համալիրներից հրաժարվելու անհրաժեշտությունից: Թեև վիճակագրական վերլուծությունները պարզ ներկայացնելու նպատակով յուրաքանչյուր հատկանիշի տրվում է միավոր արժեք, ինքնըստինքյան հասկանալի է, որ դրանք իրականում չեն կարող հավասարաբարժեք լինել: Նույնիսկ բուն սկյութական հատկանիշները, ինչպիսիք են սկյութական մարդակերպ մահարձանները, մեջքի վրա ձգված դիրքով թաղումները, եղջերազավաթները, ակինակները, բոլորատեգերը կամ սկյութական տիպի նետասլաքները, տվյալ փակ համալիրի մշակութային պատկանելության բնորոշման հարցում հավասար «կշիռներ» չեն կարող ունենալ: Օրինակ, որոշակի աստիճաններով օժտված մարդակերպ քարե արձանի կամ մեջքի վրա ձգված դիրքով կմախքի առկայությունը խոսում վկայություն է դամբարանի մշակութային պատկանելության վերաբերյալ, մինչդեռ առանձին սկյութական նետասլաքի հայտնաբերումը դեռ չի նշանակում, որ գործ ունենք հատկապես սկյութական թաղման հետ: Էլ չենք խոսում ջլաղեղով օժտված խողովակակոթառ նիզակի մասին, որը սկյութական զինական համալիրի տարածված բաղադրատարրերից է, սակայն բնորոշիչ/մշակութակազմիչ հատկանիշ չի կարող համարվել:

¹³ Իհարկե, խոսքը վերաբերում է ոչ միայն Հայկական լեռնաշխարհի կիմերա-սկյութական դամբարաններին:

Մեզ հետաքրքրող դամբարանները կամ դամբանադաշտերն առանձնացնելու նպատակով ընտրել ենք կիմերական և սկյութական թաղման ծեսերին բնորոշ 40 հատկանիշ: Դրանց հիման վրա ստացել ենք դամբարանների բաշխվածության գրաֆիկը՝ ըստ «պարունակած» հատկանիշների քանակի:



Դամբարանների բաշխվածության գրաֆիկական պատկերը դիտարկելիս պարզվում է, որ մեկ դամբարանում առկա հատկանիշների առավելագույն քանակը 17 է: Այդքան հատկանիշ ունի միայն մեկ թաղման համալիր՝ Կարճաղբյուրի N 28 դամբարանը: Դա կազմում է քննարկվող դամբարանների ընդհանուր թվի 0,64%-ը: Մեր ընտրության համաձայն՝ նվազագույն հատկանիշների քանակը, որոնց առկայության դեպքում դամբարանը կարելի է համարել կիմերական կամ սկյութական, 3 է: Այդքան հատկանիշներ են գրանցվել 14 դամբարաններում (8,97%): Ըստ որում, հատկանիշների նվազագույն քանակ ունեցող 4 դամբարաններ են գրանցվել միայն մեկ դամբարանադաշտում (Ղրմախսևիսթավի, դամբ. N 11, 24, 38, 108), որտեղից մեր ընտրանքի մեջ է մտել ընդամենը 6 դամբարան: Երեք հատկանիշ ունեցող մնացած դամբարանները պատկանում են տարբեր դամբանադաշտերի: 21 դամբարաններ ունեն 4 հատկանիշ (13,46%), որոնցից երեքը պատկանում են միևնույն դամբանադաշտին (Գետաբեկ N 42, 62, 67), 23-ը՝ 5 հատկանիշ (14,74%), որոնց թվում են Արծվաքարի և Ծովակի երեքական դամբարաններ, 21-ը՝ 6 հատկանիշ (13,46%), որոնց շարքում՝ երկուական դամբարաններ Մուսիերիի, Սիոնի, Խաչենագետի դամբանադաշտերում: Ամենաբազմաքանակ խումբն են կազմում 7 հատ-

կանիշ ունեցող դամբարանները, որոնք 25-ն են (16,03%): Դրանց մեջ ընդգրկված են Շեյթանդաղի դամբանադաշտի ընտրված չորս դամբարաններից երեքը: 8 հատկանիշով օժտված դամբարանները 12-ն են (7,69%), այդ թվում՝ երկուական՝ Խոշտանոցի և Կարճաղբյուրի դամբանադաշտերում: 9 հատկանիշ ունեն 15 դամբարաններ (9,62%), որոնց թվում երկուական՝ Մուսիերիի և Անգեղակոթի դամբանադաշտերում: Այնուհետև գալիս են 10 հատկանիշ (9 դամբ., 5,77%. այդ թվում երկուսը՝ Լոռի բերդում), 11 հատկանիշ (4 դամբ., 2,56%. երկուսը՝ Մինգեչաուրում), 12 հատկանիշ (4 դամբ., 2,56%. երկուսը՝ Աստղաձորում), 13 հատկանիշ (2 դամբ., 1,28%) և 14 հատկանիշ (4 դամբ., 2,56%. այդ թվում երկուսը՝ Նորատուսում) ունեցող դամբարանների խմբերը: 15 հատկանիշ ունեցող դամբարան դեռևս չի գրանցվել: 16 հատկանիշ ունի մեկ դամբարան (0,64%. Կարճաղբյուր N 23): Ինչպես վերև ասվեց, մեկ դամբարան ունի 17 հատկանիշ: Առայժմ 18 կամ ավելի հատկանիշ ունեցող դամբարան չի գրանցվել:

Իրար գումարելով ըստ հատկանիշների քանակի խմբավորված դամբարանների թվի ու համապատասխան հատկանիշների թվաքանակի արտադրյալները և ստացված գումարը (=1070) բաժանելով քննարկվող դամբարանների թվի (156) վրա՝ կստանանք հատկանիշների միջին թվաքանականը՝ 6,86: Այսինքն՝ յուրաքանչյուր դամբարանում, միջին թվով, առկա է «կիմերա-սկյութական» թաղումները բնորոշող, մեր ընտրած 40 հատկանիշներից ընդամենը 6,86-ը կամ 17,15%-ը: Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի կիմերական կամ սկյութական յուրաքանչյուր դամբանային համալիր միջին հաշվով ներկայացված է մոտավորապես 7 հատկանիշով:

Հարկ է հիշել, որ հնագետը հաճախ ստիպված է հետազոտել նախկինում կողոպտված կամ տարբեր պատճառներով խաթարված հնագիտական համալիրները, իսկ երբեմն ուսումնասիրության համար մատչելի է դառնում հնագիտական հավաքածոյի մի մասը միայն կամ նույնիսկ մեկ առանձին իր: Այդպիսի պայմաններում, բնականաբար, համապատասխան հրապարակումներում չեն կարող տեղ գտնել ամբողջական տվյալներ դամբանային կառույցների, թաղման ծիսակարգի կամ զոհաբերությունների վերաբերյալ: Ամեն դեպքում, անկախ այն հանգամանքից, թե նման տեղեկատվական բացերն ունեն իրենց հիմնավորումը, թե ոչ, պեղումների վերաբերյալ որոշ գիտական հրատարակություններում մարդաբանական և կենդանաբանական բնորոշումների բացակայությունը հանգեցնում է տեղեկությունների անլիարժեքության: Հաճախ բացակայում են տվյալները

ննջեցյալի թաղման եղանակի, կմախքի դիրքի, աճյունի հանգչելատեղի և թաղման ծիսակարգի այլ կարևոր բաղադրիչների վերաբերյալ: Մինչդեռ հայտնի է, որ որևէ դամբանային համալիրի պեղումների վերաբերյալ թեկուզ փոքրածավալ հաղորդագրությունը նախ և առաջ տեղեկատվություն է դրանում ամփոփված հանգուցյալ(ներ)ի մասին¹⁴, քանի որ թաղման ծեսում ննջեցյալի աճյունը դիտարկվում է որպես դամբանային համալիրը «կազմակերպող սկիզբ», սրբազան կենտրոն, որն ամբողջականություն է հաղորդում ամբողջ համակարգին¹⁵: Երբեմն, հնագիտական հաղորդումներում տեղ է գտնում «պեղումներով հայտնաբերվել են տարբեր կենդանիների ոսկորներ» արտահայտությունը, որը պիտանի չէ ո՛չ վիճակագրության, ո՛չ հետազա վերլուծության համար:

Եզրակացություններ

Այսպիսով, ընտրված դամբարաններից 13-ի մասին հաղորդագրություններում որևէ տվյալ չկա դամբանային կառույցների, թաղման ծիսակարգի կամ զոհաբերությունների վերաբերյալ: Այսինքն՝ լիովին բացակայում են տեղեկությունները 10 հատկանիշների վերաբերյալ, որոնք ընտրված բոլոր հատկանիշների 25%-ն են: Պատկերն ավելի պարզ կդառնա, եթե հաշվի առնենք մի շարք այլ դամբարանների վերաբերյալ տեղեկատվության կցկտուր բնույթը: Ուստի մեր կազմած գրաֆիկն արտացոլում է լոկ այն պատկերը, որն ստացվում է ձեռք բերված (բազմաթիվ դեպքերում՝ թերի) տվյալների հիման վրա: Կարելի է եզրակացնել, որ դամբանային մի շարք համալիրներ իրականում ունեցել են շատ ավելի մեծ թվով հատկանիշներ, որոնց հավանական վերականգնման խնդիրը դուրս է այս հոդվածի շրջանակներից:

¹⁴ Թումանյան 2007, 138:

¹⁵ Смирнов 1997, 35.

Գրականություն

- Թումանյան Գ. 2007, Թաղման ծիսակարգերը ուշբրոնզեդարյան Հայաստանում, Պատմա-բանասիրական հանդես, N 1, Երևան, էջ 138-152:
- Թումանյան Գ. 2018, «Կիմերա-սկյութական մշակութային ընդհանրություն» եզրույթը, «Արագածի թիկունքում»: Հնագիտական հետազոտություններ նվիրված Տ. Խաչատրյանի հիշատակին (խմբ. Հ. Ավետիսյան), Երևան, «Գիտություն», էջ 214-217:
- Алексеев А.Ю. 1992, Скифская хроника (Скифы в VII-IV вв. до н.э.: историко-археологический очерк), С.-Петербург, «Петербургкомстат», 206 с.
- Алексеев А.Ю. 2003, Хронография европейской Скифии VII-IV вв. до н.э., С.-Петербург, «Государственный Эрмитаж», 416 с.
- Артамонов М.И. 1947, Вопросы истории скифов в советской науке, Вестник древней истории, N 3, Москва-Ленинград, с. 68-82.
- Артамонов М.И. 1974, Киммерийцы и скифы, Ленинград, изд. Ленинградского университета, 156 с.
- Граков Б.Н. 1971, Скифы, Москва, изд. Московского университета, 168 с.
- Ильинская В.А. 1983, Скифы и Кавказ (тезисы доклада), Археологический сборник Государственного Эрмитажа, вып. 23, Пиотровский Б.Б. (ред.), Ленинград, «Искусство», с. 55-56.
- Петренко В.Г. 1983, Скифская культура на Северном Кавказе, Археологический сборник Государственного Эрмитажа, вып. 23, Пиотровский Б.Б. (ред.), Ленинград, «Искусство», с. 43-48.
- Раевский Д.С. 1985, Модель мира скифской культуры, Москва, «Наука», 256 с.
- Смирнов Ю.А. 1997, Лабиринт: морфология преднамеренного погребения, Москва, «Восточная литература», 279 с.
- Тереножкин А.И. 1976, Киммерийцы, Киев, изд. «Наукова думка», 223 с.
- Туманян Г.С. 2019, К вопросу о датировке погребений железного века Армении, Российская археология, N 3, Москва, с. 26-39.
- Sher Y.A. 1988, On the Sources of the Scythic Animal Style, Arctic Anthropology, vol. 25, No. 2, Wisconsin, p. 47-60.
- Tsetskhladze G. 2011, The Scythians: Three essays, The Black Sea, Greece, Anatolia and Europe in the first millennium BC, Tsetskhladze G. (ed.), Leuven-Paris-Walpole, "Peeters", p. 95-139.
- Tumanyan G. 2010, The Cimmerian-Scythian Sepulchres of the Armenian Highland, Aramazd: AJNES, vol. V, No. 2, Yerevan, p. 188-200.
- Tumanyan G. 2016, Cimmerians and Scythians in the Armenian Highland (Archaeological Formulation of the Problem), Journal of Armenian Studies, N 2, Yerevan, p. 26-40.
- Tumanyan G.S. 2017, Cimmerian and Scythian Funerary Rituals in the South Caucasus, Near Eastern Archaeology, vol. 80, No. 3, Chicago, p. 196-201.

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇԽԱՐՀԻ ԿԻՄԵՐԱԿԱՆ ԵՎ ՍՎՅՈՒԹԱԿԱՆ ԴԱՄՔԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Գարեգին Թումանյան

Ամփոփում

Վերջին տասնամյակների հնագիտական ուսումնասիրությունների շնորհիվ ստեղծվել են լուրջ նախադրյալներ, որ Հայկական լեռնաշխարհի հուշարձանների համակարգում առանձնացվեն մի շարք դամբանային համալիրներ, որոնց, ամենայն հավանականությամբ, կարելի է համարել կիմերական կամ սկյութական: Առայժմ, մենք ընտրել ենք 67 դամբանադաշտերի 156 դամբարաններ, որոնցից յուրաքանչյուրում առկա են կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությանը բնորոշ հատկանիշներ կամ իրեր: Գիտական քննության ընթացքում ուղեկցող գույքի հետ հաշվի են առնվել նաև դամբանային համալիրների կառուցվածքային տարրերի, հուղարկավորման ծիսակարգի և զոհաբերությունների վերաբերյալ տվյալները:

Մեզ հետաքրքրող դամբարաններն առանձնացնելու նպատակով ընտրել ենք կիմերական և սկյութական թաղման ծեսերին բնորոշ 40 հատկանիշ: Դամբանային համալիրների համակողմանի ուսումնասիրության հիման վրա ստացել ենք դրանց բաշխվածության գրաֆիկը՝ ըստ «պարունակած» հատկանիշների քանակի: Մեր ընտրության համաձայն՝ նվազագույն հատկանիշների քանակը, որոնց առկայության դեպքում դամբարանը կարելի է համարել կիմերական կամ սկյութական, 3 է: Այդքան հատկանիշներ են գրանցվել 14 դամբարաններում: Դամբարանների բաշխվածության գրաֆիկական պատկերը դիտարկելիս պարզվում է, որ մեկ դամբարանում առկա հատկանիշների առավելագույն թվաքանակը 17 է: Այդքան հատկանիշ ունի միայն մեկ թաղման համալիր: Հայկական լեռնաշխարհի կիմերական կամ սկյութական յուրաքանչյուր դամբանային համալիր միջին հաշվով ներկայացված է մոտավորապես 7 հատկանիշով: Ընտրված դամբարաններից 13-ին վերաբերող հաղորդագրություններում տվյալներ չկան դամբանային կառույցների, թաղման ծիսակարգի կամ զոհաբերությունների մասին: Այսինքն՝ դրանցում իսպառ բացակայում են տեղեկությունները 10 հատկանիշների վերաբերյալ: Կարելի է եզրակացնել, որ դամբանային մի շարք համալիրներ իրականում ունեցել են շատ ավելի մեծ թվով հատկանիշներ:

Բանալի բառեր՝ բաշխվածություն, հատկանիշ, գրաֆիկ, դամբանադաշտ, դամբանային համալիր, հուղարկավորման ծիսակարգ, կիմերա-սկյութական մշակութային ընդհանրություն:

К ВОПРОСУ О РАСПРЕДЕЛЕНИИ КИММЕРИЙСКИХ И СКИФСКИХ ПОГРЕБЕНИЙ АРМЯНСКОГО НАГОРЬЯ

Гарегин Туманян

Резюме

Археологические исследования последних десятилетий создали серьезные предпосылки для того, чтобы в системе памятников Армянского нагорья выделить ряд погребальных комплексов, которые, по всей вероятности, можно считать киммерийскими или скифскими. На сегодняшний день нами выделены 156 погребений из 67 могильников, в каждом из которых присутствуют признаки или предметы, характерные для киммерийско-скифской культурной общности. Помимо сопровождающего инвентаря нами были учтены также данные о конструктивных элементах погребальных комплексов, погребальном ритуале и жертвоприношениях.

Для выделения интересующих нас комплексов были выбраны 40 признаков, характерных для киммерийского и скифского погребальных обрядов. На основе изучения погребальных комплексов был составлен график их распределения в соответствии с числом имеющихся у них признаков. Согласно нашему выбору, минимальное число признаков, при наличии которых погребение можно считать киммерийским или скифским, равно 3-м. Именно такое число признаков было зарегистрировано в 14-и погребениях. При рассмотрении графического изображения распределения погребений выясняется, что максимальное число признаков, наличествующих в одном погребении, равно 17-и. Столько признаков имеет лишь один погребальный комплекс. Каждый киммерийский или скифский комплекс Армянского нагорья представлен в среднем примерно 7-ю признаками. В сообщениях, касающихся 13-и выбранных нами погребений, нет данных о погребальных конструкциях, погребальном ритуале или жертвоприношениях, то есть в них отсутствуют данные о 10-и признаках. Сказан-

ное позволяет заключить, что ряд погребальных комплексов в действительности выделяется большим числом признаков.

Ключевые слова – распределение, признак, график, могильник, погребальный комплекс, погребальный ритуал, киммерийско-скифская культурная общность.

ON THE QUESTION OF DISTRIBUTION OF CIMMERIAN AND SCYTHIAN SEPULCHRES OF THE ARMENIAN HIGHLAND

Garegin Tumanyan

Abstract

As a result of archaeological investigations of recent decades, serious pre-conditions were created to sort out a number of sepulchral complexes within the system of monuments of the Armenian Highland that can be regarded as Cimmerian or Scythian with high level of probability. So far, we have selected 156 sepulchres from 67 burial grounds, each of these having features or items typical for the Cimmerian-Scythian cultural commonality. During the scientific exploration, besides the accompanying inventory, consideration was given also to the data on structural elements of the sepulchral complexes, the funerary ritual and the sacrifices.

For sorting out the complexes relevant to our interests, 40 features typical for the Cimmerian and Scythian funerary rites were selected. As a result of comprehensive exploration of burial complexes, we constructed a graph of their distribution by the number of features they possess. According to our selection, the minimal number of features that should be in place to consider the sepulchre as Cimmerian or Scythian was three. This quantity of features was observed in 14 sepulchres. The graph depicting the distribution of the sepulchres demonstrated that the maximal number of features in a single sepulchre was 17. Only one sepulchral complex had so many features. On average, each Cimmerian or Scythian sepulchral complex of the Armenian Highland was represented by around seven features. In the reports on 13 sepulchres that were selected, there were no any data on the sepulchral structure, funerary ritual or sacrifices, meaning that these reports were lacking any information about 10 features. An inference can be made that in reality, quite a few sepulchral complexes possessed significantly higher number of these features.

Key words – distribution, feature, graph, burial ground, sepulchral complex, funerary ritual, Cimmerian-Scythian cultural commonality.

ԱՐՓԱՅԻ ՍՏՈՐԻՆ ՀՈՍԱՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Սմբատ Դավթյան

Տեխնիկական գիտությունների թեկնածու
Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ
Իջևան, Ուսանողական փող. 3

Էլ. հասցե՝ srdavtyan@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 31.07.2020, գրախոսվել է 27.09.2020, ընդունվել է
տպագրության 01.03.2021

Ներածություն

Հայաստանի պատմությանը վերաբերող աշխատություններում առկա են մեծաքանակ տեղագրական տվյալներ և տեղանուններ: Այդպես էլ Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» աշխատությունում բերված հարյուրավոր մանրատեղանունների և վայրերի տեղորոշումը կարևոր պատմաաշխարհագրական և պատմամշակութային արժեք ունի: Պատմիչը եղել է ականատեսը և երբեմն էլ նվիրատու մասնակիցը Նորավանքին շարժական և անշարժ գույք նվիրաբերելու գործարքներին. այս փաստը վկայում է նրա բերած տվյալների հավաստիությունը: Ստ. Օրբելյանը տեղանքի և նվիրաբերվող հողամասերի անվանումները ներկայացնում է այնպես, ինչպես դրանք եղել են տվյալ ժամանակաշրջանում: Թուրք-պարսկական տիրապետության տարիներին բնակավայրերի և այլ աշխարհագրական օբյեկտների անվանումները աղավաղվել կամ թյուրքացվել են, և այդ առումով չաղավաղված տեղանունների բացահայտումը և տեղորոշումը նաև կարևոր պատմաքաղաքական արժեք են ձեռք բերում:

Արփայի ստորին հոսանքի մի քանի վայրերի տեղորոշումը

Փորձենք ճշգրտել Արփայի հովտի ստորին հոսանքում գտնվող մի քանի վայրերի տեղադրությունը: Հետազոտված տարածքն ընդգրկում է Արփա գետի հովտի՝ Նորավանք տանող կամրջից մինչև Արենի բնակավայրն ընկած հատվածը: Արփայի հովիտն այս հատվածում ներկայացնում է անտեցեղենտ կիրճ՝ զառիթափ լեռկ քարափային լանջերով և լավ արտահայտված ողողատով և դարավանդներով¹: Ըստ երկրաբանական

¹ Բաղդասարյան 1971, 380:

տվյալների՝ գետը տարեկան իր հունը խորացնում է 6-8 մմ-ով: Հետևաբար, անցած 700 տարիների ընթացքում գետը խորացել է 5-6 մետրով, այսինքն՝ գետի հունը XIII-XIV դարերում գտնվել է այսօրվա Երևան-Գորիս խճուղու մակարդակի վրա: Հարկ է նշել, որ այս հատվածն ունի բարենպաստ պայմաններ (ջրի առկայություն, բարեբեր հող, տաք կլիմա) խաղողագործության զարգացման համար, այդ պատճառով էլ այստեղ դարեր շարունակ զբաղվել են այգեգործությամբ:

Պատմական փաստերի վկայության համաձայն՝ Արփայի հովտի ստորին հոսանքում գտնվող Արենիի (ինչպես նաև հարակից մի քանի գյուղերի) բնակիչների մի մասին հաջողվել է խուսափել շահաբասյան գաղթից՝ պատսպարվելով գյուղի մերձակա քարանձավներում, լեռներում, կիրճերում²: Կարևորելով բնիկների՝ տեղանուններին վերաբերող տվյալները հաջորդ սերունդներին փոխանցելու անգնահատելի դերը, անվանի պատմաբան Մորուս Հասրաթյանը գրում է. «Այդ տեսակետից երջանիկ չասենք, անհամեմատ բարվոլ վիճակում են հայկական այն գավառները, որոնք քիչ են գաղթել կամ գաղթվել են, բայց բնիկներից թեկուզ և մեկ մարդ, կամ մեկ ընտանիք մնացած լինի: Այս մեկը նորեկներին կասեր ոչ միայն գյուղի, այլև գյուղի հանդերի և նրանց վրա պահպանված ավերակների, լեռների և գետերի անունները»³: Գյուղի բնակիչները սերնդեսերունդ միմյանց բանավոր փոխանցել են բազմաթիվ անվանումներ, այդ թվում՝ տեղանուններ:

Ստ. Օրբելյանը «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության մեջ գրում է, որ Մահևանյան տոհմի իշխանի թոռ Զուրջի որդի «գնէ զԱղթայ այգինոր յԱռփայ ի մեծ իշխանէն Տարսայիճէն, որ էր և նոցա գնուածք ի բուն հայրենատէրանցն, և տայ ի գինն 4.000 դրամ»⁴ և նվիրում է Նորավանքին: Ավելի վաղ վանքին էր նվիրվել «էր և ի հին ատուրց տուեալ ի վանսն զԴայեկի քարոյ այգին հոգեցատուր Ախթամարեանց և այլոց ոմանց»⁵:

Այնուհետև պատմիչը գրում է «Գնեցաք և մեք ի միջոցին գյուղով մասն ի հայրենատէրանցն ընդ 2.500 դրամի և բոլորեցաք զայգին ի բոլոր

² Կարապետյան 2012, 42:

³ Հասրաթյան 1985, 128-129:

⁴ Օրբելյան 1910, 490:

⁵ Օրբելյան 1910, 491:

Ծակուտ քարէն մինն ի վեր ի սպառնում այգւոյն որ մեծ սալն է»⁶: Օրբելյանի տվյալներից երևում է, որ երեք այգիներից երկուսը՝ Աղթա և Դայեկի քար այգիները, ընկած են միասնական զանգված կազմող այգու եզրամասերում, իսկ կենտրոնում պատմիչի գնած և Նորավանքին նվիրաբերած այգին է: Միաժամանակ հայտնի է, որ 3 մասից բաղկացած ամբողջական այգին ձգվում է Ծակուտ քարից մինչև մեծ սալը (սարը): Վերոհիշյալ իրադրությունը կարելի է ներկայացնել հետևյալ սխեմայի ձևով:

Ծակուտ քար	Մեծ սալ /սար/	
Դայեկի քարի այգի	մեջտեղի այգի	Աղթա այգի

Պատմիչի բերած տեղանունների նկարագրությունները թույլ են տալիս վերականգնելու Աղթա և Դայեկի քարի այգիների, ինչպես նաև Ծակուտ քարի և մեծ սարի(սալի) գտնվելու վայրերը:

Այժմ անդրադառնանք վերոհիշյալ տեղանուններին.

1. *Աղթա (Ախտա) այգու* մասին հիշատակվում է Նորավանքի գավթի արևմտյան պատի հարավային մասի 1291 թ. արձանագրության մեջ՝

«ԿԱՄԱԽԼԱ(ՍՏՈՒԾՈՂ)Յ, ԵՍ՝ԱՄԻՐԱՅՍ, ԹՈՌՆՋՈՒՐՋԻՆ, ԵԿԻ ՆՈՐԱՎԱՆՍԱՌԱՋԻՍ(ՈՒՐ)Բ

ՆՇԱՆԻՍՈՒՋՅԱՂԹԱԱՅԳԻՆ, ՈՐԻՊԱՐՈՆՏԱՐՍԱԽՃԷՆ

ԳՆԵՑԻ :Դ: :Ռ: (4000) ԴՐԱՄՈՒԻ

:Գ: (3) ՋՈՐԻ, ՏՎԻԻՍ(ՈՒՐ)ԲՈՒԽՏԱՍ՝Վ(Ա)Ս(Ն) ԻՄՀՈԳՈՅՍԵԻ

ԻՄՄԱԻՐՆ՝ԳՈՀԱՐԽԱԹ(ՈՒՆԻՆ). Տ(Է)ՐՍՏԵՓԱՆՈՍԿԱՐ

ԳԵՑԻՏԱՐԻՆ :Դ: (4) ԺԱՄ՝ :Բ: (2) ԻՆՁ, :Բ: (2)՝ԻՄՄԱԻՐՆ

ՀՈՒՓՍԻՄԵ(Ա)ՆՑՏԱԽԻՆ:ԱՐԴ, ԹԷԻՄԵՐՅԵՏԱՄ

ՆԱՑԱՑԿԱՄԻՊԱՐՈՆԱՑԵԻՅԱԻԱԳԱՑՀԱԿԱՌԱԿԵԼՋԱՆԱ՝Ի

Ս(ՈՒՐ)ԲԵՐՐՈՐԴՈՒԹԵ(ԱՆ)Ն

ԵԻՅԵՐԻՑՍ(ՈՒՐ)ԲԺՈՂՈՎՈՅՆՆՋՈՎԵ(Ա)ԼԵՂԻՑԻՆԵԻԲԱ-

ԺԻՆՋՅՈՒԴԱԻՆԱՌՑԷԻՄԵՐՄԵՂԱՑ

ՊԱՐՏԱԿԱՆԵՂԻՑԻՆ, ՈՒՋԻՄ :Դ: :Ռ: (4000) ԴՐԱՄՆՈՒՋ:Գ: (3)

ՋՈՐԻՆԻՆՈՐԱՎԱՆՍԴԱՐՁՆԵՆ.

ԹՎԻՍ :ՉԽ: (1291). ՀԱՍՏԱՏԷԳԻՐՍԿԱՄԱԽԼԱ(ՍՏՈՒԾՈՂ)Յ»⁷:

⁶ Օրբելյան 1910, 491:

⁷ Բարխուդարյան 1967, 220:

Նույն բովանդակությունը որոշակի փոփոխություններով Ստ. Օրբելյանը ներառել է «Պատմության նահանգին Սիսական»՝ «Յայմա աուրս էր այր մի մեծագգի Ամիրայ անուն բնակեալ հայրենեօք ի գեղն Առփայ, որդի Ջուրջին, թոռն իշխանացն Կապանեցի զոր Մահկանեանք կոչէին. գնէ զԱղթայ այգին որ յԱռփայ ի մեծ իշխանէն Տարսայիճէն, որ էր և նոցա գնուածք ի բուն հայրենատէրանցն, և տայ ի գինն 4.000 դրամ»⁸:

Արփայի աջ ափին գտնվող Աղթա այգու տեղադիրքի (գտնվելու վայրի) մասին գիտեն Արենի գյուղի բնակիչները, այգու լուսանկարը զետեղված է «Արփա-Արենին Վայոց ձորի պատմության հոլովություն» գրքում⁹: Այգու անունը կապ ունի հենց այգու դեմ դիմաց գտնվող Ախտա աղբյուրների հետ. կա՛մ այգին է իր անունը ստացել աղբյուրներից, կա՛մ տեղի է ունեցել հակառակը: Վերոհիշյալ աղբյուրները գտնվում են Արփա գետի ձախ ափին. այն կարստային ջրառատ աղբյուր է՝ բաղկացած երեք ակունքից. դրանցից մեկը անմիջապես բխում է գետի մեջ՝ առաջացնելով «ծովային ջրաղացներ» երևույթը: Բնական է, որ այդ աղբյուրները լավագույն կողմնորոշիչ կարող էին դառնալ այգիները նշելու համար. հարկ է նշել, որ աղբյուրի դիմաց գտնվող տափարակը, որ Արփա գետի դարավանդն է, լավագույն պայմաններ (մշտական ջուրը, բարենպաստ կլիմա, բերրի հող) ուներ և ունի այգի դառնալու համար: Բացի այդ, Ախտա աղբյուրի մասին հիշատակություն կա նաև վերջին տասնամյակներում լույս տեսած գրքերում և տեղեկատվությունում¹⁰:

2. *Մեջտեղի այգին*, ինչպես գրում է պատմիչը, գտնվել է Աղթա և Դայեկի քարի այգիների միջև: Ստեփանոս Օրբելյանի «Գնեցաք և մեք ի միջոցին գյուղով մասն ի հայրենատէրանցն ընդ 2.500 դրամի և բոլորեցաք զայգին ի բոլոր Ծակուտ քարէն մինչև ի վեր ի սպառուած այգայն որ մեծ սալն է» տողերը թույլ են տալիս հեշտությամբ որոշելու այդ այգու գտնվելու վայրը: Այս արտահայտությունների համադրմամբ ստացվում է, որ մեջտեղի մասը համընկնում է Արենիի այսօր գործող շուկայի հետնամասում գտնվող խաղողի այգիներին:

⁸ Օրբելյան 1910, 490:

⁹ Սիմոնյան, Վարդանյան 2008, III լուսանկար:

¹⁰ Սարգսյան 1989, 267: Վայոց ձորի մարզի աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատու 2007, 14:

Քաջբերունին 1875-1879 թթ. Վայոց ձորում կատարած իր ճամփորդական նոթերում այս այգին նշում է «Ծակուտ քարի այգի» անվանումով¹¹:

3. *Դայեկի (կամ Դայակի) քարի այգու* մասին առաջին անգամ հիշատակվում է 1260-1261 թվականով թվագրված¹² Ամաղուի Նորավանքի գավթի հյուսիսային պատի վրա.

«ԿԱՄԱԽՆ [Ա(ՍՏՈՒԾՈ)Յ] ԻՏ(Է)ՐՈՒԹԵ(ԱՆ) ԻՇԽԱՆԱՑԻՇԽԱՆ
ՆԻՆՍՄՊԱՏԱԵԻԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵ(ԱՆ) ԳՐ(Ի)ԳՈ(ՐՈ), ԵՍ՝ԱԼ-
ՓԱՍԼԱՆ [ԵԻ]

ՄԻՆԻԹԱՐՔԱՀԱՆԱՅԵԻՏՎԻԶԴԱԵԿՈ-ՔԱՐՈԱՅԳԻՆ [Ի
ՆԱԽԱՅԿԱՅՍԻԻՐ] ԳԼԽՈՎՆԵԻԳԵՏՈՎՆ. ԳՐ(Ի)Գ(ՈՐ) ԵԻ
ԱՅԼՄԻԱԲԱ(Ն)ՔՍՏՎ(ԻՆ) ՀԱՄԲԱՐՁՄԱՆԱԻՐՆՁԱՄ(ԷՆ)
ԵԿԵ(ՂԵ)ՑԻՔՍՊԱՏԱՐԱԳ :Ը: (8) ԱԻՐ՝ :Ա: (1) ԽՈՒՄԱՐԻՆ, :Ե: (5)
ԱԼՓԱՍԼԱՆԻՆ, :Բ: (2) ԴԱՄԱԻՆ. ԿԱՏԱՐԻԶՔՆԱԻՐ(ՀՆԻ)Ն
ՅԱ(ՍՏՈՒԾՈ)Յ»¹³:

Երկրորդ աղբյուրը Ստ. Օրբելյանի «Սյունիքի պատմությունն» է, որտեղ այն հիշատակվում է 2 անգամ՝

ա) «...և յընտիր տանուտերաց, որպէս Ախթամարեան զարմքն որ ի հին ժամանակաց բնակեալ էին յԱռփայ գիւղն՝ տան յիրեանց հայրենեացն զԴայեկի քարոյ այգւոյն զվերին բաժինն»¹⁴:

բ) «Էր և ի հին ատուրց տուեալ ի վանսն զԴայեկի քարոյ այգին հոգեցատուր Ախթամարեանց և այլոց ոմանց, և արձանագրով և նզովիք հաստատեալ զի մի ոք հակառակեցի»¹⁵:

Արձանագրությունից և պատմիչի ներկայացրած տվյալներից պարզ է դառնում, որ Դայեկի քարի այգին (վերին բաժինը) զբաղեցնում է Դայեկի քարի հարևանությամբ գտնվող Արփայի հովիտը՝ ներկայիս Նորավանք տանող կամրջից մինչև մեջտեղի այգի ընկած հատվածը:

Դայեկո քարի այգու և Դայեկո քարի մասին երկու անգամ հիշատակում է նաև Ղևոնդ Ալիշանը 1893 թ. Վենետիկում հրատարակված «Սիսական» աշխատության մեջ: Մեկ անգամ՝ կապված վերոհիշյալ վիմագրի հետ, երկրորդ անգամ՝ ի թիվս Սյունիքի 5 տասնյակից ավելի ամրոցների,

¹¹ Քաջբերունի 2003, 339:

¹² Բարխուդարյան 1967, 219, Մաթևոսյան 2017, 105:

¹³ Բարխուդարյան 1967, 219:

¹⁴ Օրբելյան 1910, 368:

¹⁵ Օրբելյան 1910, 491:

նշում է նաև Դայեկի քար ամրոցի¹⁶ մասին՝ հենվելով Ստ. Օրբելյանի բերված տվյալների վրա: Երկրորդ հիշատակության մեջ Ղ. Ալիշանը գրում է. «Մերձ ի խառնուրդ գետակին Ռինտայ յԱրփա, յեզեր սորա կան աւերակք շինատեղոյ և եկեղոցոյ, Ծծախաչ անուն. քանզի կաթնակարօտ ստնտու կանայք համարին օգտիլ ուխտաւորութեամբ առ խաչվէմ մի տեղոյն, և յայն սակս այնպէս կոչի: Ըստ այսմ իմաստի՝ սա թուի կամ մերձաւոր սմին քարաբլուր և քարաբերդ՝ կոչեցեալ ի հնումն Դայեկի քար, յիշեալ ի պատմութեան Սիւնեաց»¹⁷: Ալիշանի այս ենթադրությունը, ըստ որի Ծծախաչ եկեղեցին և Դայեկի քարը գտնվում են իրար մոտ, որպես ճշմարտություն ընդունել են «Արփա-Արենին Վայոց ձորի պատմության հոլովություն» գրքի հեղինակները, որոնք այդ գրքում զետեղել են 2 լուսանկար¹⁸՝ իրար կապելով այդ տեղանունները: Ըստ լուսանկարի՝ Դայեկի քարը Գնիշիկի գետաբերանի դիմացի ժայռոտ լանջերով բլուրն է, իսկ Ծծախաչ եկեղեցին Նորավանքի խաչմերուկից դեպի Աղավնաձորի խաչմերուկ տանող Մ-2 խճուղու վրա գտնվող տապանաքարերն են: Որ այդ տեղանուններն իրար հետ կապ չունեն, նշում են նաև Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի հեղինակները՝ Դայեկիքար տեղանվան տակ գրելով՝ «Ղ. Ալիշանը, այս իմաստից ելնելով, ենթադրաբար (ընդգծումը մերն է) նույնացնում է Երևանի նահանգի Շարուր-Դարալագյազի գավառի Ծծախաչ ավերակ գյուղի անվան հետ»¹⁹: Ըստ Ալիշանի նկարագրության՝ Դայեկի քարը քարաբլուր էր և ամրոց (բերդ)²⁰: Միաժամանակ, ըստ Օրբելյանի նկարագրության, Դայեկի քարի այգին գտնվում էր Ծակուտ քարի դիմաց և երեք այգիներից բաղկացած ամբողջական այգու եզրային հատվածն էր: Այսինքն՝ Դայեկի քարը պետք է լինի համանուն այգու հարևանությամբ (որից էլ ստացել է իր անվանումը)՝ Ծակուտ քարի դիմաց, ունենա ժայռոտ լանջեր և լինի ամրոց: Այդպիսի նկարագրությանը համապատասխանում է գյուղում հայտնի «Քարի տակ» բլուրը, որը հրվանդանաձև ելուն է՝ ժայռոտ լանջերով և մակերևույթով: Բլրի բարձրադիր մասում մինչև օրս պահպանվել են խոշոր և անտաշ քարաբեկորներից կառուցված երկու պարիսպների հատվածներ: Դրանցից մեկն անցնում է բլրի

¹⁶ Ալիշան 1893, 7:

¹⁷ Ալիշան 1893, 168:

¹⁸ Սիմոնյան, Վարդանյան 2008, IV լուսանկար:

¹⁹ Հակոբյան 1988, 20:

²⁰ Հակոբյան 1988, 20:

կատարային մասով և ունի արևմուտք-արևելք ուղղություն, իսկ ամենաբարձր կետով (բարձրությունը ծովի մակարդակից՝ 1094.2 մ) պարզորոշ դիտարկվում են կառույցների (հավանաբար՝ աշտարակի) հետքեր:

Պարիսպների մյուս հատվածը գտնվում է նախորդից մոտ 80-90 մ հարավ: Այս հատվածի կառուցման ժամանակ օգտագործվել են նաև բնական ժայռերի 2-3 մ բարձրությամբ ելքերը, որոնց միջև եղած տարածքներն էլ պարսպապատել են տարբեր մեծությամբ քարաբեկորներով: Տեղտեղ պահպանված պարսպի բարձրությունը կազմում է 1-1.5 մ՝ բաղկացած իրար վրա դրված երկշարք և եռաշարք քարաբեկորներից:

Հաշվի առնելով շարվածքի բնույթը՝ կարելի է ենթադրել, որ Դայեկի քար ամրոցն ունի բրոնզեդարյան հասակ, իսկ միջնադարում հավանաբար ենթարկվել է վերակառուցումների: Չենք բացառում նաև, որ Դայեկի քարը եղել է ամրոց-դիտակետ, որտեղից դիտարկվել է Արփայի հովտի այս մասի անցուղարձը (նկ. 2):

Հարկ է նշել, որ միջին դարերում պաշտպանական կառույցները (բերդեր, ամրոցներ) նշվել են «բերդ» առաջադիր արմատով կամ հետադիր (օրինակ, Բերդիկ, Բերդն, Բաղաբերդ, Ցուրաբերդ և այլն): Ըստ Թ. Հակոբյանի՝ բերդեր են եղել նաև «կերտ»-ով վերջացող տեղանունները, օրինակ, Տիգրանակերտ, Երվանդակերտ և այլն²¹: Ալիշանի աչքից չի վրիպել այն փաստը, որ ամրոցների մի մասը նշվել է նաև «քար»²² բառով (օրինակ, Բաղակայ քար, Կըկոց քար, Կաքաուց քար, Ուռաց քար և այլն): Թե ինչու են այդպիսի անվանումներ ստացել ամրոցները, Օրբելյանը գրում է. «Սիսակի սերունդներից մի մարդ՝ Բաղակ անունով, այս գավառն ստանալով ժառանգության բաժին, Բաղակի ապառաժը շինում է ամրոց, որը կոչվում է Բաղակի քար»²³: Ըստ պատմիչի ներկայացրածի՝ «քար» բառով նշված ամրոցները պետք է լինեն քարե մակերևույթ և լանջեր ունեցող (ապառաժ) լեռնազանգված, որին համապատասխանում է Դայեկի քարը:

Ինչ վերաբերում է «Արփա-Արենին Վայոց ձորի պատմության հուլովություն» գրքում հրապարակված Դայեկի քարի լուսանկարին, ապա պետք է ասել, որ այդ լեռնազանգվածը զուրկ է պաշտպանական կառույցների բնորոշ ռելիեֆային ձևերից (ձորերով կամ կիրճերով տարանջատված չէ

²¹ Հակոբյան 1966, 77:

²² Հարկ է նշել, որ «քար» բառը Հայաստանում, բացի բուն նշանակությունից, ունի նաև բազմաթիվ այլ իմաստներ՝ քարափ, ժայռ, քարանձավ, պատ:

²³ Օրբելյան 1910, 77:

հարևան տարածքներից, պարսպապատելու համար անհարմար հսկայական հարթ տարածք է), և, բացի այդ, որևէ պարսպի կամ պատի հետք անգամ չկա: Եվ ընդհանրապես, Արփա գետի աջափնյակում գտնվող բոլոր բարձրությունները, բացառությամբ Դայեկի քարի, Աղավնաձորի սարավանդի առանձին մեղմաթեք և հարթ մակերևույթ ունեցող հատվածներ են՝ զերծ որևէ պաշտպանական հատկությունից: Սարավանդը ձևավորվել է հեղեղաջրերի բերած գլաքարերի նստեցման հետևանքով: Գլաքարերի շերտի հզորությունը 6-7 մ²⁴ է:



Նկ. 1. Դայեկի քար ամրոցի տեսքը հարավ-արևելքից

4. *Ծակուտ քարը*, ըստ Օրբելյանի նկարագրության, գտնվել է Դայեկի քարի այգու դիմաց, քանի որ այգու սահմանը վերջանում է Ծակուտ քարի մոտ: Ծակուտ քարից արևելք գտնվող տարածքում բարենպաստ պայմաններ չկային այգիների մշակման համար, քանի որ քարայրի մոտով անցնող Գնիշիկ գետակը սելավաբեր էր (դրա մասին են վկայում պրոյուվիալ բերվածքների լայն տարածումը գետակի ստորին հոսանքում և գետաբերանում), անկանխատեսելի վարք ուներ և կարող էր քշել-տանել այգին: Բացի այդ, Արփան այդ հատվածից դեպի արևելք ձեռք է բերում կիրճի բնույթ (այս հատվածի Քարափաձոր անվանումով ձգվում է մոտ 4

²⁴ Բալյան 1986, 164:

կմ՝ մինչև ներկայիս Աղավնաձոր գյուղի խաչմերուկը), որտեղ բացակայում էին այգի հիմնելու համար անգամ փոքր հողատարածքները²⁵: Ինչ վերաբերում է տեղանվանը, ապա Ծակուտ բառի արմատը ծակն է, որը նշանակում է քարայր, իսկ հայերենում լայն տարածում ստացած **-ուտ** վերջածանցով նշվում են որևէ բանով առատ տեղ, վայր ցույց տվող գոյականները (օրինակ՝ եղեգնուտ, կաղնուտ, խնձորուտ): Տարածքում այդ տեղանվանը համապատասխանում է միայն ընդհանուր ժայռածածկի տակ գտնվող 3 հսկայական մուտք ունեցող Արենի-1 (Մյարոզի, Քարատակի, Վայք, Թոչունների) քարանձավը: Այս քարանձավի վերոհիշյալ անվանումներից և ոչ մեկը չունի պատմական հիմք, և ժամանակն է, որ մյուս անվանումներին հավասար օգտագործվի նաև ավելի քան 750 տարի առաջ հիշատակված Ծակուտ քար կամ Ծակուտ քարի քարանձավ անվանումը:

5. *Մեծ սարը*²⁶, ըստ Օրբելյանի, հատուկ անուն (տեղանուն) չի, սակայն պատմիչի գրածից պարզ երևում է, որ այդ սարը համապատասխանում է ներկայիս Արենի գյուղի դիմացի ժայռազանգվածին կամ էլ անմիջապես նրա ներքևում գտնվող տափարակին, որտեղ գտնվել է հին Արփա գյուղատեղին, և որտեղ էլ 1321 թ. կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին (Ստ. Օրբելյանի մահվանից 18 տարի անց):

Ամբողջացնելով տվյալների վերլուծությունը և դրանք տեղադրելով ժամանակակից տեղագրական քարտեզի հիմքի վրա՝ ստանում ենք հետևյալ պատկերը (նկ. 2):


Եզրակացություններ

Այսպիսով, Ստ. Օրբելյանի նկարագրությունները թույլ տվեցին տեղանունների օգնությամբ տեղորոշել մի շարք վայրեր: Ընդ որում, տեղանքի նկարագրություններն այնպիսի մանրամասնություններով են ներկայացված, որ անգամ այդ դեպքերից ավելի քան 700 տարի անց մեզ թվում է, թե ականատեսն ենք Դայեկի քար ամրոցում (որտեղից երևում են Արփայի հովտի խաղողի այգիները, Ծակուտ քարը և մեծ սարը) խմբված աշխար-

²⁵ Ձորի այս հատվածում բնական պայմանների հետևանքով (նեղ հովիտ, որն ամբողջությամբ զբաղեցված է եղել անկանխատեսելի վարք ունեցող Արփա գետով) անգամ մինչև 1960-ական թթ. հնարավոր չի եղել ավտոմոբիլային ճանապարհի կառուցել: Մ-2 խճուղու Քարափածորով անցնող այս հատվածը կառուցվել է 1960 թ.-ից հետո:

²⁶ Ըստ Օրբելյանի՝ «մեծ սալ», տե՛ս Օրբելյան 1910, 491:

հիկ և հոգևոր խավի ներկայությամբ մեծանուն պատմիչի՝ «մեջտեղի այգին» Նորավանքին նվիրաբերելու մասին որոշման կայացմանը:



Նկ. 2. Խաղողի այգիների տեղադրիքը

Պատմական տեղանունները մեր պատմամշակութային ժառանգության մասն են կազմում, և, կարծում ենք, որ դրանք գրանցելու համար անհրաժեշտ է կազմել Հայաստանի պատմական անվանումների ազգային գրանցամատյան: Գրանցամատյանում կներառվեն այն վայրերը (ճակատամարտերի, նշանավոր անձանց հետ կապված վայրերը, պատմական լանդշաֆտները՝ հնագույն այգիներ, դաշտեր, հանդեր և այլն), որոնց մասին հիշատակություններ կան պատմական սկզբնաղբյուրներում (պատմիչների գործեր, վիմագրություններ և այլն), սակայն դրանցում այսօր բացակայում են կառույցների կամ նախկին լանդշաֆտների հետքերը և չեն գրանցվել Հայաստանի Հանրապետության պատմության և մշակութային ժառանգության հուշարժանների պետական ցուցակներում և աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատվություն: Տեղերում դրանք կկա-

հավորվեն համապատասխան ցուցանակով (ինչպես պատմության և մշակույթի հուշարձանների դեպքում է), որի վրա կնշվեն վայրի պատմական անվանումը և առաջին անգամ հիշատակվելու տարեթիվը (դարը), իսկ դրանց անձնագրերում, բացի վերոհիշյալ տվյալներից, նաև հատվածներ դրանց հիշատակող բնագրերից: Այս խնդիրը կարևորվում է նաև նրանով, որ ներկայումս Հայաստանում կառուցվող զբոսաշրջային արահետների վրա բացակայում են պատմական տեղանուններ նշող ցուցանակները, մինչդեռ դրանց առկայությունը կբարձրացնի այդ արահետների ինֆորմատիվությունը:

Պատմական տեղանունների բացահայտումը և ճիշտ տեղորոշումը ունեն նաև կարևոր կիրառական նշանակություն: Պատմական անվանումների օգտագործումը տարբեր ոլորտներում թույլ կտա մոռացումից փրկել և երկրորդ կյանք պարգևել պատմամշակութային ժառանգության այդ շերտը: Դրանք կարող են օգտագործվել որպես ապրանքային նշան, ապրանքի անուն (օրինակ, այդ տարածքից ստացվող խաղողից արտադրվող գինու համար), կալվածքի անվանում և այլն:

Գրականություն

- Ալիշան Ղ. 1893, Սիսական: Տեղագրություն Սինեաց աշխարհի, Վենետիկ, 563 էջ:
- Բալյան Ս.Պ. և ուրիշներ 1986, Հայկական ՍՍՀ գեոմորֆոլագիան, Երևան, ԳԱ հրատ., 239 էջ:
- Բաղդասարյան Ա.Բ., Աբրահամյան Ս.Գ., Ալեքսանդրյան Գ.Ա., Ասլանյան Ա.Ա., Զոհրաբյան Լ.Ն. 1971, Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, ԳԱ հրատ., 472 էջ:
- Բարխուդարյան Ս. 1967, Դիվան հայ վիմագրության, պր. 3-րդ, Վայոց ձոր, Երևան, ԳԱ հրատ., 526 էջ:
- Կարապետյան Հ. 2012, Վայոց ձորն ու նրա հուշարձանները, Երևան, «Մուսալեռ», 192 էջ:
- Հակոբյան Թ.Խ. 1966, Սյունիքի թագավորությունը պատմաաշխարհագրական առումով, Երևան, «Միտք», 220 էջ:
- Հակոբյան Թ.Խ., Բարսեղյան Հ.Խ., Մելիք-Բաշխյան Ս.Տ. 1988, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, ԵՊՀ հրատ., 992 էջ:
- Հասրաթյան Մ. 1985, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, ԳԱ հրատ., 278 էջ:
- Մաթևոսյան Կ. 2017, Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները, Երևան, «Մուղնի», 244 էջ:

- Սարգսյան Է.Գ. 1989, Քարանձավները բացում են գաղտնիքները, Երևան, «Հայաստան», 280 էջ:
- Սիմոնյան Ա., Վարդանյան Ա. 2008, Արփա-Արենին Վայոց ձորի պատմության հոլովություն, Երևան, Իրանագիտական կովկասյան կենտրոն հրատ., 579 էջ:
- Վայոց ձորի մարզի աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատու 2007, Երևան, «Գեոքարտ կենտրոն», 94 էջ:
- Օրբելեան Ստեփանոս 1910, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, տպ. Ն. Աղանեսանի, 618 էջ:
- Քաջբերունի 2003, Ճանապարհորդական նկատողություններ, հրատ. պատրաստեցին Ա. Քալանթարյանը, Գ. Սարգսյանը, Հ. Մելքոնյանը, Երևան, «Մուլնի», 498 էջ:

ԱՐՓԱՅԻ ՍՏՈՐԻՆ ՀՈՍԱՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Սմբատ Դավթյան

Ամփոփում

XIII դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմության» և միջնադարյան մի շարք վիմագրերի քննությամբ պարզվել է Արփա գետի ստորին հոսանքում գտնվող մի քանի վայրերի տեղադրությունը: Արփայի հովտի այս հատվածը ձգվում է Նորավանք տանող կամրջից մինչև Արենի գյուղն ընկած մասը և ամբողջությամբ ծածկված է խաղողի այգիներով (թե՛ միջնադարում և թե՛ ներկայումս): Ըստ վերոհիշյալ աղբյուրների՝ խաղողի այգիները կազմել են մեկ միասնական զանգված և բաղկացած են եղել երեք մասից՝ Դայեկի քարի այգին (գրադեցրել է վերին հատվածը), մեջտեղի այգին (կենտրոնական մասը) և «Աղթա» կոչված այգին (ստորին հատվածը): Այգիների տեղորոշման համար հիմք է դարձել Աղթան, որի տեղադիրքը և անվանումը փոփոխության չեն ենթարկվել առնվազն XIII դարից: Դրա մասին են վկայում Արենի գյուղի բնակիչները, որոնք չեն ենթարկվել XVII դարի բռնագաղթին և, պատասպարվելով գյուղի մերձակա քարանձավներում ու ձորերում, կարողացել են հետագա սերունդներին փոխանցել տարբեր վայրերի անվանումները: Այդ անվանումներից է նաև Աղթան, որի մասին գիտեն ոչ միայն տեղի բնակիչները. այգին հիշատակվում է նաև վերջին տասնամյակներում հրատարակված տեղեկատուներում և գրքերում: Ուսումնասիրությունների միջոցով պարզվել է նաև Վայոց ձորի միջնադարյան ամրություններից մեկի՝ Դայեկի քարի տեղադիրքը:

Հետազոտությունները ցույց են տվել, որ հնագիտական բացառիկ գտածոներով հայտնի և համաշխարհային հռչակ վայելող Արենի-1 քարայրը առնվազն XIII-XIV դարերում անվանվել է Ծակուտ քար կամ Ծակուտի քարի քարանձավ:

Բանալի բառեր՝ Ստեփանոս Օրբելյան, Աղթա այգի, Դայեկի քար ամրոց, Ծակուտ քար քարայր, Արենի-1 քարայր, Նորավանք, Արփա գետ:

К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ РЯДА МЕСТНОСТЕЙ В НИЖНЕМ ТЕЧЕНИИ РЕКИ АРПА

Смбат Давтян

Резюме

На основе данных историографа XIII в. Степаноса Орбеляна и средневековых лапидарных надписей удалось установить локализацию ряда местностей в долине реки Арпа. Описываемый отрезок долины реки Арпа тянется от моста по дороге к монастырю Норавапк до села Арени и полностью засажен виноградниками. Согласно вышеупомянутым источникам, виноградники составляли единую, непрерывную полосу, состоящую из трех участков – «виноградника Даеки кар» (занимал верхний участок), «среднего виноградника» (занимал центральный участок) и «виноградника Ахта» (занимал нижний участок). Взаиморасположение вышеотмеченных участков определялось местоположением виноградника «Ахта», географическое положение и название которого оставались прежними по крайней мере начиная с XIII века. О винограднике «Ахта» знают не только местные жители: виноградник под тем же названием упоминается также в различных географических справочниках и книгах, изданных в последние десятилетия.

Благодаря проведенным исследованиям выявлено и уточнено расположение средневекового фортификационного сооружения «Даеки кар». Уникальная по своим археологическим находкам пещера Арени-1 еще в XIII-XIV веках была известна под названием «Цакут кар» («Дырявый камень»).

Ключевые слова – Степанос Орбелян, виноградник Ахта, крепость Даеки кар, пещера Цакут Кар, пещера Арени-1, монастырь Нораванк, р. Арпа.

ON THE ISSUE OF LOCALIZATION OF A NUMBER OF SITES ALONG THE LOWER COURSE OF THE ARPA RIVER

Smbat Davtyan

Abstract

The localization of several historical sites of the Arpa river valley was defined as a result of examination of writings of the 13th century historian Stepanos Orbelian and a number of Medieval epigraphs. This part of the Arpa valley, entirely covered by vineyards (both in the past and today), stretches from Areni village to the bridge leading to Noravank. According to the above-mentioned sources, the vineyards formed a single unified landscape and consisted of three parts: the garden of Dayeki Qar (occupied the upper part), the middle garden (occupied the central part), and the Aghta Garden (occupied the lower part). The Aghta Garden, the name and location of which have not been changed since at least the 13th century, became the bases for localization of other two gardens. This is evidenced by inhabitants of the village of Areni, who did not succumb to the forced migration of the 17th century and having taken refuge in the caves and valleys near the village, were able to pass down to future generations various local place names. One of those names is "Aghta Garden," which is known not only to the locals, but is mentioned in books and brochures published in the recent decades. The investigation also revealed the location of the Dayeki Qar stone, one of the medieval fortresses of Vayots Dzor. This research also revealed that the world-famous Areni-1 cave, known for its unique archaeological findings, at least by the 13-14th centuries was called Tsakut Qar or the cave of Tsakut Qar.

Key words – Stepanos Orbelian, Aghta garden, Dayeki Qar fortress, Tsakut Qar cave, Areni-1 cave, Noravank monastery, Arpa river.

THE FLOWERING OF NICKNAMES IN ARMENIAN JERUSALEM (1940s TO THE MID-‘60s)

Jirair Tutunjian

English editor of Keghart.org

Toronto, Ontario Canada

Email: jerry_travel@hotmail.com

The article has been delivered on 24.07.2020, reviewed on 20.08.2020,
accepted for publication on 01.03.2021

Introduction: Nicknames Galore

Nicknames have been around forever. How and where they first became part of universal popular identification is unknown. It's not just people who have nicknames. Nations, cities, mountains, rivers, and even cars have them too. Americans are Yankees, Canadians are Canucks and the English are John Bull... The Land of the Rising Sun is Japan, Down Under is Australia, and Albion is England. City of Lights is Paris, Rome is the Eternal City, and New York is The Big Apple. The Himalayas are the Sacred Mountains and the Ganges is the Eternal River as is the Nile. The Cadillac car's nickname is Caddy and BMW is the Bimmer.

The name of the first woman, Eve, started as her nickname. Eve means "living" in Hebrew. A second and third possible meaning of Eve is 'snake' and 'life' (In Arabic, Eve's name is Hewa which is close to haya meaning life and hayyeh which means snake. The episode of the snake giving the apple to Eve strengthens the Hewa and hayeh connection). Adam is also a name and nickname. In Hebrew Adam means "someone [man] from the ground". Thus, both Adam's and Eve's names/nicknames described the most essential facts about them. In Hebrew, Adam's name/nickname means "red and represents the deity, in the form of the burning bush". In Arabic 'adem means bone while dam means blood.

Many Biblical names have their origins in nicknames... Abraham (high father/patriarch) is a nickname God bestowed upon the man who was to found the Jewish nation. Moses ("found in the river" in Egyptian), Yakov ("heel" or "to be behind"), Peter ("stone") and Thomas ("twin") are nicknames too. Christ,

meaning “Anointed One” in Greek, is a nickname of Jesus. The seven names Jews give God (Adonai, Jehovah, and Hashem...) are nicknames as well.

Prominent People and their Nicknames

In ancient Greece a couple had a boy named Aristocles. Because he had wide chest and shoulders people called the boy Platon (“wide”). The nickname stuck and Aristocles became Plato, the most famous student of Socrates and a philosopher in his own right. Plato’s best student was Aristotle who was known as the “Father of Logic”. Aristotle’s best-known student was Alexander of Macedonia who later became Alexander the Great. Nine-hundred years after his death, Alexander was given, in the Koran, the nickname Two Horned supposedly because he conquered the East and the West. “Great” is the most popular nickname of rulers. There are about 100 “Greats” including Armenian Kings Dikran and Drtad III. In medieval Europe there was Universal Spider King (Louis of Aquitaine), emperors Charles Stammerer, Charles the Fat, Charles the Simple, and Charlemagne of the Holy Roman Empire. A few centuries later England had a brave but rash king (Richard I) who was nicknamed the Lionheart. His second nickname was Richart Oc-E-Nom (Richard Yes and No in Occitan, the language of southern France at the time). No one used Richard’s Plantagenet last name.

While attaching nicknames to royalty was popular across Europe, the English seem to have had a special knack in affixing nicknames to their kings. There was Ethelred the Unready, his son Edward the Confessor, and William the Bastard who became William the Conqueror when he invaded England in 1066. The Hammer of the Scots and Longshank were the nicknames of King Edward I. The Bankrupt, King of the Seas, Our Comely Kyng, the Robber, the Arranger of Merchants, and the Tanner of Tamworth was King Edward III. Rose of Rouen was the nickname of King Edward IV while Edward VI was known as The Boy King. King Henry VII had several nicknames. He was known as The Accountant and The Huckster King. There was a Hunchback king (Richard III), Old Coppernose (Henry VIII), and Farmer George (King George III). Elizabeth I was the Virgin Queen while his beautiful cousin was Bloody Mary (Queen Mary of Scotland). Queen Elizabeth II’s nickname is Lilibet. That’s how

her sister Princess Margaret pronounced her name when they were children¹. It's almost impossible to find a British or English king who didn't have a nickname.

The people in distant Central Asia were not immune to nicknaming. From the steppes of China, Mongolia, and Central Asia came Timur the Lame and Timujin the Impotent. One of the Crusader kings of Jerusalem was nicknamed Leper and an early tsar was branded Ivan the Terrible [the nickname was mistranslated from the Russian: the correct translation is "awesome"]. A Balkan ruler was nicknamed Vlad the Impaler. He nailed to city walls soldiers of the invading Ottoman Turks. An Ottoman sultan was called The Grim while another was known as "The Sot" (drunkard). A late Ottoman sultan was Abdul the Damned aka Bloody Abdul. The country he ruled bore the nickname the Sick Man of Europe, compliments of Tsar Nicholas I. In the middle Ages there was the Armenian guerilla fighter Kogh Vasil (Vasil the Thief), Catholicos Nerses Shnorhali (Graceful Nerses), and Catholicos Krikor Dgha (Boy). There were any number of European kings who were called Mad. Ludwig of Bavaria is the best-known of the mad rulers. Napoleon had several nicknames, thanks to his British foes: Little Corporal, the Corsican Ogre, and Boney were some of the more popular ones. Charles de Gaulle's nickname was the Great Asparagus because of his body shape while the long-time Soviet Foreign Minister Andrei Gromyko was Comrade Nyet during the Cold War. Che was the nickname of Argentinean-Cuban revolutionary Ernesto Guevara. In more recent times there has been an Iron Lady (Prime Minister Margaret Thatcher of the UK), and Tricky Dicky (President Richard Nixon). Presidents Ronald Reagan and Bill Clinton had the distinction of having the most nicknames of U.S. presidents (Reagan was Dutch, The Gipper, the Teflon President, and the Great Communicator while Clinton was Bubba, Slick Willie, the Comeback Kid, Big Dog, and America's First Black President. Dubya is the nickname of President George W. Bush.

The root of nickname is "eke name", meaning additional name in Middle English. By the early 17th century, the word had evolved to the current nickname. Epithet is a Greek word meaning added name². It came to mean "negative nickname" in the last century but in the last decade it has become a neu-

¹ Jones 2015.

² www.etymonline.com?word=nickname, Nickname (n.) Aug 24, 2020, 4 p.m.

tral synonym of nickname. Moniker, sobriquet, epithet, tag, handle, appellation, byname, pet name, nom de guerre, nom de plume, cognomen are all synonyms of nickname but applicable in different contexts. The study of names is called onomastics.

Why Nicknames?

Why do we need nicknames? Nicknames allow one to be informal and affectionate. They spotlight. A nickname gives us a chance to lighten the mood and show people we are ready for a laugh.

While around the world most nicknames are endearing, friendly, and affectionate, the reverse is true in the Somalia. That country has the distinction of coining nicknames which are almost always aggressively negative. The denizens of the East African nation have a grand time bestowing cruel nicknames which focus on physical defects. No Fingers is a typical nickname for someone who has lost his fingers during frequent Somali blood-letting of the past four decades. Hairlip, Baldy, Stutterer, Big Mouth, Scarface, Big Bottom, Cross-eyed, Deaf, Limpy, One-legged, and Shorty are other common nicknames in Mogadishu. The Somalis call the Chinese Small Eyes and Arabs Red Ears. Non-Muslims are Gaal (infidel). Someone who has his front teeth missing is Field Goal. In next-door Ethiopia, the erstwhile Armenian community had members nicknamed Kit Ohannes (Big Nose John), Esheg Avedis (Donkey Avedis), Kordzounim Mama (I've Got a Job, Mother); Oozoon Avedis (Straight Avedis), Snake Shaver, Blockhead, Asinine... It must be something in the air of east Africa.

Armenian Jerusalemites and their Nicknames

Another world-class-although unsung-nickname-minter was the Jerusalem Armenian community of the '40s, the '50s and the '60s. Although a community of fewer than 2,500 people at any one time, it had a "treasure trove" of more than 1,000 nicknames, many inventive, colorful and often mocking. Practically everyone and every family had a nickname. And in an unprecedented élan the community had coined nicknames which were phrases and sentences.

Our family nickname was Bedevi (Bedouin). We were "graced" by the nickname because, in the early '30s, my father had gone to a carnival ball dressed as a Bedouin. Why Bedouin? Because from the age of seven to 17 he had lived among the Bedouins of eastern Syria who had adopted him after the

Turks had slain most of his family. We considered the nickname insulting: after all, we were city folk, Christian and Armenian. Calling us “Bedevi” in our presence could result in “unpleasantness.” No member of my family heard the sobriquet although we knew it was our nickname. We had another nickname which was neutral. My siblings and I were also called Cecile’s Children. It made sense because my mother was the only woman in our community with that name. My two brothers, sister and I didn’t mind the cognomen.

In addition to the family nickname, the members of a family could also have individual nicknames. Thus, one of my brothers was known as Kevolig and Mahmud Beg. Kevolig was an endearing diminutive of his name, Kevork. The second nickname because at the age of ten he had imitated the ram-rod walk of Arab Legion soldiers and their commander Mahmud Beg. The gods of nicknames were not too harsh to my family.

While other Armenian Diaspora communities also had a tradition of nicknaming, what made the Jerusalem Armenian nicknames remarkable were their profligacy, originality, and their frequent emphasis on the derogatory. The obvious question is why were Jerusalem Armenians in a class by themselves? In the absence of scientific research there’s the temptation to speculate... an option of dubious use. Scientific research would have to find out a) Why were so many Jerusalem nicknames negative when around the world the opposite is true. b) Was the negative nickname a result of “familiarity breeds contempt”? c) Had two recent calamities-the Genocide of Armenians and the unending fighting between Arabs and Jews-infused into the community a free-floating anger, aggression, and cynicism? Was the profusion of nasty nicknames expression of their suppressed anger? d) Did the absence of Armenian newspaper result in word-of-mouth “wireless telegraph” gossip which could be enlivened by featuring characters with colorful names? Word-of-mouth meant subjectivity, bias, and invention.

While Somali nicknames’ focus is physical deformity, a great many Jerusalem nicknames extended that concept to include mental and behavioral shortcomings. Branding people with nicknames was a useful practice because it distinguished people who had the same name or profession. Some nicknames were ironic; others were abbreviations or were terms of endearment. A few were contractions of family names. Because our parents had come from Turkish-occupied Armenia, most of our last names were Turkish. Ottoman bu-

reaucrats decided the last name of most Armenians. In a typical abuse of their authority, these officials had given our great-grandparents mocking last names (Keuroghlanian is cross-eyed boy or one-eyed boy in Turkish, Topalian is lame, and Geuteboyoukian is big rear). Like most of our last names our nicknames were often Turkish. Perhaps people preferred Turkish nicknames because it was in the language of our centuries-old tormentors and thus the words sounded nastier and distant from our tongue. Turkish nicknames and curses were more cutting than Armenian nicknames and curses.

Nicknames as Distinguishing Aids

Cliff Cunningham, professor at the University of Wisconsin-Madison, was a frustrated teacher because too many of his students had identical names. “We frequently have courses with over 500 students. With these numbers, we frequently get two students with the same name. When you are working in a grade book, or in Speedgrader, there is no way to confirm which student is which... For these reasons (and those maybe others) I would like to see a ‘nickname’ option for each student³. The point is also made by the BBC which claims nicknames were invented to differentiate people who had the same name⁴.

Because there were more than 10 Mariams/Maryams each had to have a nickname: Anoushig Mariam was an ironic moniker. Bengalakh Mariam had a big mole (beng is mole). Ghargha Mariam (crow in Turkish); Temeez Mariam (clean in Turkish); Ghavas Mariam (her husband was a dragoman of the Armenian Patriarchate. Ghavas is dragoman). Ouzoon Mariam (straight in Turkish), Geyikji Mariam (??? Mariam), Shash Mariam (cross-eyed), Mariam Baji (sister), and Mariam el-Adra (Virgin Mary in Arabic because this Mariam was supposedly unapproachable) were others who bore the name of Virgin Mary. Finally, there was Gayzdzag Mariam. It was the abbreviation of her last name meaning lightning. Like Bengalakh Mariam, there was a boy who had a large mole on his neck. His nickname was Bengalakh too. The origin of the “lakh” suffix remains a mystery.

Because there were several Dikrans, each needed a nickname. Arabaji Dikran (coachman), Ekbebeji Dikran (“boyrag” maker). He was also known as

³ Wikipedia. “Epithet”, Distinguishing aids.

⁴ Brett 2009.

Lahmajounji Dikran because he sold lahmajoun. The “ji” suffix is common in India, Iran and in the Arab Middle East. It means “doer”, “related to”. Msrtsi Dikran had come from Egypt (Misr is Egypt in Arabic). Leblebeji Dikran was so called because his last name was Leblebijian (leblebu is chickpeas). Several Dikrans were called “Dikko” to differentiate them.

Arab Tradition

‘Abu’ means ‘father’ and ‘Oum’ means mother in Arabic. Thus, “Abu Ahmad” and Oum Ahmad mean ‘Father of Ahmad and Mother of Ahmad.’ The nickname is an alternate way of identifying a person.

It is often presumed that a Palestinian will name his first son after his father. So supposing Mohammad has a son, he will presume that his yet-to-be born grandson will also be named Mohammed by his son. Thus his son would be known as Abu-Mohammed. Even if Mohammed’s son didn’t have a son, he would still be called Abu-Mohammad. The custom was less than helpful because too many people were named Mohammed and its variations (Ahmed, Hamid, Mahmud, Hamdan...). Since Palestinian Arabs applied the same honorific to non-Arabs, there were a number of Armenians whom Palestinians called Abu Yaghoub (Hagop), Abu George, Oum Garabed and Oum Khacho (Khachig).

Armenians had added a twist to the Arab custom by inventing names which were not related to their children. Thus there was Abu Laban (yoghurt-seller), Abu Shanab (a man had a prominent mustache), Abu Namleh (ant), Abu Holl (Sphinx because the nickname bearer was inscrutable), Abu Karagoz (Middle East version of shadow marionettes), and Abu Shbeir (Shorty). Shbeir is Arabic for the expanse from thumb to little finger and across the palm. Abu Farash (Father of the Sweeper) was the nickname of a man who was a gossip. There was the occasional kindly exception to the tradition. A man who had four daughters but no son was bestowed the honorific “Abu Ali.”

Nasty, Insulting, and Derogatory

The derogatory nicknames were mostly about people who had physical defects, behavioral problems or had committed a faux pas. A family was known as “Abyad” because most of its members were albino (abyad is white in Arabic). “Aghcheeg Seropig” was a double-barreled insult. “Aghcheeg” means girl and Seropig is the diminutive of Serop. Akhraz (mute in Arabic) was the nick-

name of a mute shoe-polisher. Archoog (little bear) was a teenager who had a shuffling walk. Another boy was called Khozig (piglet) because there was dry snot permanently lodged below his nostrils. Atlas was a big guy who lifted weights and had a rumbling walk. Keur Sarkis was blind (keur is blind or cross-eyed or one-eyed in Turkish). Despite his handicap, he could walk anywhere without getting lost. He played banjo and 'oud and taught playing of the two instruments. Keur Ghatr was also a double-barreled nickname. It means blind mule in Turkish. Ordag means bow-legged in Turkish. There was a man who was simply called Ordag. Topal Garabed and Topal Hagop limped. A jeweler who had one leg slightly shorter than the other was called Christ's Lamé Donkey. Sagh Takal means one good wheel in Turkish Tek Dabancha means a single pistol. The latter two are equivalent to "he's one card short of a full deck".

Sherep (ladle) was a nosy, interfering woman: a busybody. Ator Dzagogh (maker of hole in chairs) was an overweight deacon whose weight had broken the chair in a shop managed by a friend. Almost no one knew that his name was Krikor Sanossian. Atrash (deaf) was the obvious nickname of someone who was hard of hearing. Aydzee Morook was a man who had a struggling beard on his chin. In Turkish, Sakhaluh means bearded. A family-including the women- was called Sakhaluh because the father of the family bore that nickname. Khor-tlakh (skeleton) was a skinny man. Ash'ar was a blond man (in Arabic). Jinjo means freckled in Turkish. To differentiate, there was a Jinjo and a Jinjo Artin. Burr-Nose had a crooked nose. Osouran/Osourouk is Turkish for someone who blows wind. Another man suffering inordinately from the same affliction was called Tss-hano and Tssig (diminutive of the Arabic tess). A Kaklan can't control his bowel. There were two men called Kaklan but when one of them lost his mind, he became Khent Garo (Mad Garo). Kaku Oodogh (feces-eater) was also a nickname. No one knew the story behind the nickname.

Animal names were also popular nicknames. Chaylam (ostrich), Ent-soughd (giraffe), Khanzeer (pig in Arabic), Jermag Khoz (white pig), Khoroz (rooster), Teghin Ots (yellow snake), Moghez (lizard), Trchnig (little bird), Teghtsanig (canary), Pattig (duckling), and Tsoog (fish). The last one was attached to a man who referred to girls as "fish"). There were Ishkhanatsoug (sturgeon in Armenian). Janj (fly) was a slim man while Khlez was supposedly a man who always exceeded his welcome.

Esheg means donkey in Turkish. There was an Esheg Tavit, Esheg Ghaf-faluh (donkey head), and Esheg Kevo (Kevo is the affectionate diminutive of Kevork). There was a Moog (mouse) and Khntsorig (Little Apple) because he had red cheeks. Ghavn (zucchini in Turkish) was so nicknamed because of the shape of his face. He was later bestowed the nickname Aghves (Fox) because he was sly. There was a Moog (mouse) and Zrdats (“she hatched”). It was the nickname of a woman who seemingly became pregnant every other year. A man was nicknamed Barkho (goat in Kurdish) because it’s the nickname the Kurds had given to him when he lived with them after the Genocide. His family members were also called Barkho.

A pale-skinned man was Mongol. There was Chopoor (poke-marked) Simon, Chopoor Yervant, and Chopoor Zaven, Dantsee Good (pear-seed because of the shape of his head), and Dzoor Khtta (crooked cucumber). Jermag Mazeroov (white hair) and Kankour Mazerov (curly) were other nicknames. Sevoulig was a skeletal man who had sallow skin. Sevoulig means black baby goat.

A boy who stuttered liked to imitate the Brilliantine-doused hair-style of the actor Tony Curtis. He was nicknamed Tony Tltees. His second nickname was James Dean because he seemed to be forever combing his hair. Judig (chick) had a long childhood story behind his nickname. Dallo was the nickname of a boy who couldn’t pronounce “g” and “r”. Since his name was Garo, he was nicknamed Dallo. When he grew up he still couldn’t enunciate his name correctly. So he was still called Dallo. Logh-Logh was a young man who, because he mispronounced khagogh (grapes) “logh-logh”. Hampartsoum’s nickname was Ampagoum. Was it a diminutive or he couldn’t pronounce his name when he was young? A little girl was called Manina because when she was a child she mispronounced her name (Mary). Likewise Harout became Atolla while Bochar was a boy who had pronounced vochkhar (sheep) as “bo-char.” A boy named Aram, who stuttered, was given the Aghambig nickname. Likewise, Amillo (Armenag) and Babayout (Harout).

Setrag el-Bunce and Bunce Kaloust were heavy-set men. “Bunce” is fat in Arabic. Why someone was called Tmmag (lard) was a mystery: he was not overweight. Cholakh Hagop was left-handed. Yahoodi Artin meant Jewish Artin (abbreviated Haroutiun). “Shash” means cross-eyed in Turkish. There was Shash Garbis, Shash Mariam, and Shash Harout. Altn Dishli had gold teeth (Turkish). Apache had tan skin and straight black hair. Pylancho was a skinny fellow. There

was a man and a woman (unrelated) who were called Ghamboor (hunchback in Turkish). Chatlakh meant deformed, Tzoog (Dwarf) because he was short but Tllooz was a mystery. So was Hanoon which means nice, modest in Arabic.

Odun (lumber) and Odunag served as a family's nicknames. Supposedly every member of the family was hard-headed and obstinate. There was also its Arabic version-Hattab applied to one man.

"Khent" means mad in Armenian. There was Khent Dikko (diminutive of Dikran), Khent Manoushag, Khent Siranoush, Khent Garo, Khent Nourig, Khent Yeghsapet, and Khent Hagop. Khent Hagop's name was Hagop Alahverdian (God given in Turkish). He was not mad-merely unsociable. There was Khentuh (the Crazy) and Garmir Khent (Crazy Red). Most of the "khents" were not insane: they suffered emotional problems. Several had been emotionally damaged as a result of the Armenian Genocide. There was a Khm-khm. We assumed it meant imbecile, probably in Turkish. Panchoonee was not bright (the nickname came from a famous character in an Armenian satirical novel by Yervant Odian). Dmbeeg is little dummy. Khyar is Arabic for cucumber. It meant ignoramus. Sab'gha Leil means Leopard of the Night (Arabic). Was it an ironic nickname for a coward? Napoleon was a boy who was small for his age. A boy was nicknamed Ninna because his grandmother called him "Oh Ninna" when she sang lullabies to him when he was a baby.

We also had Kogh Bedros, Kogh Diran, Kogh Sako, Kogh Misag, and Kogh Aroush. Kogh means thief in Armenian. They were not professional thieves. What was there to steal? They were opportunists who had stolen a shirt, a pair of used shoes, watermelon, and bouquet of flowers. But even if they had stolen once, they were labeled thieves for life.

Mikrob/Microbji was a man who had a phobia of catching contagious disease. He washed his hands with soap after shaking hands. Ironically (maybe not) his father's job was to pour disinfectant in wells which contained rain water. The family's nickname was Sawabini (Arabic for soap-maker: their grandparent had been in that business). Because their last name was Ginivizian, they were also called Giniviz. It was believed the family was descended from Genoese merchants who had plied their trade in the Holy Land several centuries earlier. Havadarim Vartan (faithful) and Havadarim Sako could have been ironic obriquets. Hodadz Havgit was rotten egg (he took infrequent baths). A man who squirreled everything was called Antikaji (antique-dealer). Mananaji was a

man who had tried to seduce a girl by offering her the super-sweet man-na-the sticky candy that according to Exodus descended from the sky upon the starving followers of Moses. Ghopoukh (dog in Turkish) Zaven was the brother of a woman of questionable character. A swarthy man was called Ghbdi (Copt), a dark-skinned young man was called Sambig (little Sambo). Toghtchoon Anna was trembling Anna. She was delicate.

There was no hesitation about coining salacious nicknames. There were two well-known prostitutes. The elder was called Poz Osanna (whore in Armenian). The younger prostitute was called Anklet because she always wore a gold anklet. Despite the community's condemnation and jeering, the younger Jezebel always donned her whore regalia: stiletto fingernails, mascara, and eyeliner, skin-tight skirts, big hair teased, blow-dried and sprayed into a large orange halo that looked like sunset.

A man was called Dzidzig (small breast). The reason for the nickname was too private to inquire. Geutuh Boyook is "big buttocks" in Turkish. Hayeli (mirror) was a plain-looking woman who rarely left home. Her male version was Hovsep Kaghetsig (Joseph the Beautiful from the Bible). He was a short man with a large bullet head and a face covered by scores of chick-pea shaped and sized warts. Another man was nicknamed Shash Billig (cross-eyed penis). Zmeli (razor) was a man who had accidentally cut a bit of his foreskin skin while shaving his crotch. Topji had three meanings: bomber; someone who emitted gas frequently, and homosexual. There was a Topji and a Topji Marie.

Several women who had distinctive regal looks or pompous walk and arrogant carriage were tagged Dalida, Parantsem Takouhi (after an Armenian queen), Srpouhi Mayrabad (saint nun) and Esmahan (a famous Egyptian singer).

Nicknames without Mockery

There was a boy whose name became his nickname. He was born during the Second World War when Joseph Stalin was flying high. His father (who was blind) had named him Stalin. In the early '50s, when the Jordanian government was pathologically anti-Soviet, the father changed the boy's name to Hovsep (Joseph) but everyone continued to call the boy Stalin. Around the time Stalin became Joseph, a boy named Messiah had his name changed. His

father, who was produce-seller, had named his son Messiah, just as Hispanics who name their sons Jesus and Domingo while Europeans use variations of Christ's name... Christopher, Christine... However, people complained that it was sacrilege to name the boy Messiah. The father changed the name to Mesrob. People continued to call the boy Messiah.

Red Dzeron wouldn't go out without including something red in his clothing. Whether it was his shirt, socks, or underwear, or comb, he had to have something red in his ensemble. The habit was especially strange because he belonged to the Tashnag Party which was fervently opposed to the "Red" Soviet Union. Dzeron didn't need the "Red" nickname since his name already made him unique. There was no other Dzeron. No one had heard of the name elsewhere. We didn't even know whether it was an Armenian name.

One day Dzeron explained that he wore red because in ancient Armenia there was a worm which produced the best red dye in the world. People thought he had made up the story: how could a worm produce red ink, they asked. But Dzeron's story was accurate. "Dyers also put a premium on Armenian red, which was made from the insect *Porphyrophora hameli*, a parasite on the roots and stems of certain grasses in Armenia... Armenian red was difficult to harvest. The insects obligingly surfaced from their underground hideout each autumn..."⁵.

Harking to Place of Birth

Messiah's father, who overpriced everything, had an oleaginous approach to customers. With an obsequious smile dripping with phony camaraderie, he called all his customers Hayrenagits. It means compatriot: a person from your hometown: in this case towns in Western Armenia. Thus, someone from Van, Zeitoun, and Moosh would call another person born in these towns "Hayrenagits". People did not appreciate the produce-seller's unsolicited appropriation of the title. His nickname became Hayrenagits. Nicknames derived from place of origin are called demonym, from the Greek *demos* (people, tribe) and *onuma* (name).

⁵ Greenfeld 2006, 48.

Some families were identified by the family head's hometowns in Armenia and Cilicia: Mshetsi (from Moush) Mayrig, Zeitountsi (Zeitoun) Garabed, Sasountsi (Sassoun) Mayrig, Urfatsi Garabed, Hayasdantsi (from Armenia), Adanatsi Hagop (from Adana in Cilicia), Sghrtsi Marie (from Sghrt) and Nseibintsi (from Nseibin). Some people were named after cities they had lived in briefly before moving to Jerusalem: Ramletsi Aroush was from Ramleh in Palestine. Aroush is short for Haroutune. "Anjartsis" were several families who had come to Jerusalem from Anjar, a town in Lebanon. Salti was born in the Jordanian town of Salt. Ammantsi was from Amman. Yafatsi was from Jaffa and Halabtsi Artin (Aleppo-born Artin. The name is short for Haroutune).

It's interesting to note that from the 15th century to the early 20th century, the majority of Jerusalem Armenian patriarchs were identified by their hometowns: Abraham Misirtsi ("Egyptian"), Abraham Periatzi (Aleppo), Hovhannes Misirtsi, Mardiros Brusatsi (Bursa) Hovhannes Telgurantsi, Hovhannes Kilitsi, Asdvadzadur Mardintis, Antreas Mardintsi, Tavut Mardintsi, Krikor V Kantsagetsi, Adsvadzadur Daronetsi, Yeghiazar Aintabtsi, Mardiros Khrimetsi, Hovhannes Bolsetsi, Kalusd Amasiatsi or Zeytountsi, Minas Amtetsi (Dikranagerd), Avedis Yevtogiatsi (Tokat), Minas Hamtetsi, Avedik Yevtogiatsi, Mardiros Yerzingatsi, Mikael Kharperetsi, Sahag Abuchekhatsi, Hovhannes Zmurnatsi, Hovhannes Kantsagetsi, Krikor Shirvantsi, Teotoros Khorenatsi, Garabed Kantsagetsi, Boghos Vanetsi, Hovagim Kanakertsi, Bedros Yevtogiatsi, Teotoros Vanetsi, Kapriel Nigomitiatsi (Izmit), Boghos Adrianabolsetsi, Zakaria Gopetsi, Hovhannes Zmurnatsi (Smyrna), Yesayi Talasti, Haroutiun Yekibdatsi (Egyptian) and Giragos Mnatsaganian (Yerousaghematsi-Jerusalemite). [There were only two or three Jerusalem-born patriarchs because of an edict forbidding Jerusalemites from becoming patriarch. The edict was intended to prevent patronage/nepotism that a local-born patriarch might extend to his Jerusalem family and relatives.] The other patriarchs were Hovhannes Zmurnatsi (Smyrna), Yesayi Talasti, and Haroutiun Yekibdatsi (Egyptian)⁶.

Mostly in Mockery

There was a young jeweler who was smooth on the dance floor. He came to be known as Valentino and later Passa Doble. His brother was called Balek

⁶ Krikorian 2005, 30-48.

(fish) after their last name. Because their father played the oud (“dm-dm” in slang) he was called Balek el-Dmdmji). Kassar (Arabic) meant a person who breaks/drops things because of clumsiness. Ramgavar is an Armenian political party whose members believe in democratic capitalism. Thus, some of its members passed for what was considered middle class in economically-depressed Jerusalem. Thus, a man with big belly was called Ramgavar Por (belly). It meant he was affluent. An Assyrian woman, whose husband was Armenian, was called Sooryanee (Assyrian). One of her sons was called Srya-neeyee Krdink (Assyrian sweat). A boy was called Brisht. It was another nickname with an unknown origin. Khalil is the Arabic version of Hebron, a town south of Jerusalem. Because the residents of the town were considered uncouth two rough-and-tumble Armenians were nicknamed Khaliltsi.

Unrelated to the play or to the student’s character or looks, a teacher bestowed the nickname Hamlet upon one of his students. The teacher was called Paghnikji (sauna-bath worker) because when he raised his voice, one could hear it from blocks away.

Nicknames Originating in Professions

After insulting nicknames, perhaps the most widespread were nicknames connected to professions, trades, and crafts. Unlike the time-honored tradition of converting the trade/nickname into a last name (Carter, Cook, Cooper, Baker, Brewer, Butcher, Weaver, and Wright)⁷, these nicknames were not inherited by their offspring. Sa’atji Karnig was a watchmaker whose name was Karnig. Sayaji Dikran was shoemaker. There were several taxi drivers: Chauffeur Levon, Chauffeur Siragan, and Chauffeur Yervant. There was Uztaz (teacher in Arabic) Sarkis, Uztaz Yeghia, and just plain Uztaz. Zibilji Aroush was a garbage collector. Zibil means garbage in Arabic). Artougji Serop ironed. Ashji means cook in Turkish. There were Ashji Bedros and Ashji Vartan. Baborji fixed mostly Primus stoves. Badanaji Kapo painted houses (Kapo was short for Kapriel and badanajis painted house walls) Svakhji Hovsep was a plasterer. Boxer Hagop had been a boxer. Boyaji Hagop polished shoes. “Chourji” means water-seller: there was a Chourji Artin and two Chourji Haygs-boyj drank.. The second Haig was also known as Sakran (drunk in Arabic) Haig or Gondzogh which

⁷ Powell 2019.

means the same thing. Fsdkhji Hagop sold peanuts. There was also a boy who was called Fsdkh for no apparent reason. Froonji Avedis ran a bakery (Fouron is bakery in Arabic). Ghalaji Haroutune and Ghalaji Waness glazed pots and pans (Wanness is a variation of Hovhannes/John). Katib Garbis was the Patriarchate's secretary. Katib is writer/secretary in Arabic. Ghalamker was an etcher on gold. Hallaj fluffed the tired wool of mattresses usually once a year. Hambal Hagop and Hambal Levon had been porters. Halvaji Vartan sold sweets. Zinvor Garbis was a soldier. Kekji made cakes and Kebabji made kebab. Madzounji Sarkis owned a dairy. Madzoun is yoghurt in Armenian. Oghiji Karnig ran a bar (oghi/arak). Singer Jirair was a salesman at the Singer sewing-machine agency. Photo Elia was a photographer, for many years, owned by a man named Elia/Yeghia. Oudji Haygaz and Oudji Minas played the 'oud Middle Eastern musical instrument. Sylvana was the nickname of a family which manufactured chocolate bars named Sylvana. They made the only locally manufactured chocolate. There were Moukhtar Hanna Nazar (Reeve John; Nazar was abbreviation of Nazarian), Police (policeman) and Volta (electrician) were also descriptive names. Soufiji Ibrahim (Apraham) sold wool. A man who hollered "Osmanli Shakarlee" (Osmanian Sweets) when he hawked sweets was called Osmanli Shakarlee. Pervaz (frame-maker) Vartan didn't make frames. He was a carpenter.

Nickname Abbreviations of Last Names

Nicknames derived from last names also have a long tradition. Paul Gascoigne, the British football star was known as Gazza... President George W. Bush's nickname was Dubya after the initial of his middle name, and the last name Alexander often becomes Xander in England. Alexander has also evolved into Alex, Alec, Lex, Sandy, and Sandi.

In Jerusalem the shift from last name to nickname often meant the elision of the Armenian "ian" suffix. Thus there was Tanash, Abaj, Balek, Chapadar, Menesh, Gazmarar, Glllo, Jrnaz, Kawee (Kahvejian), Kzeer, Kolchak, Mandoss, Mazloom, Sefer, Shkli/Shklig/Shklan, Tahaan, Terjoom, Terzibash, Bourouj, Zarats, Chakr, Koushdoor, Lepej, Matoss, Kaplan, Demir, Del-Del, Ingleez, and Tootoosh. The Chapadarian family had three nicknames: Chapadar; Chapee, and Chap. Kallagozz was a corruption of Karagozian. Kallagozz had a second nickname. Long ago Karageuzian Senior had boasted that he was

“khash Ermeni” meaning solid Armenian in Arabic. Thus the family’s nickname had become Khash Armani.

Complimentary Nicknames with a Twist

There were ironic nicknames about people who had flashy style or carried on as if they lived in the lap of luxury: Conte (Count. He dressed well and was always clean-shaven), Shampanya (Champagne), Millionadaire (millionaire), Kravatli (cravat-wearer), Mandoub (ambassador in Arabic), Hazarnots (thousand-dinar bill), and Lord. Hayr Haygasser was a priest who had a wondering eye. His nickname was Severgasser (sever means ‘he loves’ in Turkish).

First-name Abbreviations

Most people don’t realize that often first names were originally nicknames. Chris is a nickname derived from Christopher, Christine, Christian, and Greta is a nickname derived from Margaret⁸. Racing car driver “Niki” Lauda’s was Andreas Nikolaus. In Jerusalem this meant Asso emerged from Assadoor, Aposh (Apraham), Ashko (Vazken), Koko (Krikor), Bedo (Bedros), Eftig (Yevkineh), Jiro/Jiroug (Jirair), Sako (Sarkis), Hago (Hagop), and Ohig (Ohan), Pennig was Penyamin Torosian. There were two stories as to why Pennig had lost his mind: he had gone mad because he had witnessed the Armenian Genocide or a man whose daughter Pennig loved forbade their marriage after Pennig had rescued her from the clutches of a Turkish bandit. The girl’s wealthy father had promised to Pennig that if he rescued his daughter, Pennig would become his son-in-law. When the man had reneged on his promise, Pennig had gone mad.

Complimentary Nicknames

Occasionally, there were complimentary nicknames: Kach (brave), Kayl Vahan (Wolf Vahan, after a 5th century Armenian military hero), Sako Beg, Kwatlee (strong), George el Rayess (George the chief), Hanoon (tender and caring in Arabic), Hikmat Mihiyar (an Arab general), Scaramouch, Varbed (master), Pasha, Aryouds Mher, and his older brother Tarazan (not Tarzan) who had shiny and slick black hair like that of Lex Barker who played Tarzan in the early ‘50.

⁸ W.bounty.com>baby-names-news-and-trends>nic.

Unknown Origins

There were many nicknames whose pedigree was unknown. Perhaps the nickname had originated in the previous generation and there were no survivors to tell how the nickname came about. Why a man was called Zankag (bell), another Tayarji (pilot), a third Chanakh (china plate) and a fourth Mr. A? There were scores of similar nicknames of unknown pedigree: Abianco, Sinssilato, Shogi, Kawchuk (Rubber), Abu Habib (the father of Habib, although he didn't have a son), Abu Galango, Abu Yango, Jurbano (socks in Arabic), Chapaneh, Costa, Markoosh, Bloot, Bashmig, Ballar, Aba, Brisht, Dnglig, Za'ataroneh, Pantesspanya, Chooklala, Kagool, Garagello, Glleeg, Googy, Bebo, Sefo, Fsdkjih, Tahaan, Hayga, Yoyis, Mbbayed, Tsisti-Kat, Tsim-Tsimo, Zkhmig, Jlkx, Katanasho, Yerem Got, Papar, and Zinguh-Zinguh. Many of these nicknames were derived from Arabic or Turkish. Dbseeg is little molasses in Arabic. Bedah is egg in Arabic. What did Jlkx mean? Lay lagis Turkish for too tall. There was a Middle Eastern bias against tall people: they were supposedly not bright. Laylag Hmayag had fled Soviet Armenia by swimming across the River Arax. An excellent soccer player, he began to lose his mind and in his last years of his life became grave-digger and general laborer at the Armenian Convent where most Armenians lived in rooms and cells that in previous centuries had provided accommodation to pilgrims from Armenia. Unlike modern pilgrims and tourists who stay a few days in the city, in the old days, some Armenian pilgrims stayed in Jerusalem for six months – Christmas to Easter. Hmayag's son was nicknamed Gdouts "Beak" because of the shape of his nose. Dye-Dye (uncle) and Hokees (my soul) were also nicknames. A man whose last name was Keossian had reportedly changed his name to Xanthos and then had been abbreviated to the nickname Kintos.

Miscellaneous

A woman who lived in a wooden barracks was called Varaka Vartoug. Varaka was a corruption of barracks. Ghaymakh is "cream of milk" in Turkish.

A teenage boy was nicknamed Ghaymakh because he loved the cream. Alex Bargir was another unusual nickname. Alex, a bachelor who had too many drinks at a stag party, would do whatever party goers told him to do. One of the orders was "Alex, bargeer" (sleep, Alex in Armenian). He obeyed and lay on the ground (it was an outdoor party). Because he was drunk, he didn't get

up. He slept on the grass. At sunrise, he came to be known as Alex Bargir. During the 1948 War a boy had found live bullets which he had thrown into the fire unaware that they could explode. His nickname became Kapson (caps). A shopkeeper had an unkempt store. His nickname was Pinty Vaness (Messy John).

Ghallas derived from Garabed and Gabbosh from Garo-Garabed. But where did Garrouj and Harouj come from? What were the stories behind those nicknames? I could never figure out the stories behind Keton, Taxi, Utility Vartan, Au Petit Panam, and Heydig Hanna Youhanna. I also had difficulty keeping apart Keton and Kintos.

In the 19th century, when American missionaries had been active in Armenia, they called themselves “Brother”. To Armenian ears it sounded “Biradar”. A person who wore his faith on his wrists and preached “born again” incessantly was tagged Biradar.

There were two further remarkable facts which made Jerusalem Armenian nicknames unique. One was the family whose members had collectively 12 nicknames and the other was the Jerusalem stroke of genius which coined nicknames that were phrases and sentences.

While most families had one or at most two nicknames, there was a family which had at least 10 nicknames. The two main nicknames of the family were Ebbe (midwife) and Topal Hagop (Lame Hagop), the head of the family. Topal Hagop was an enterprising man who had tried various trades to look after his large family's expenses (he had seven children). Thus, he was also known as Tell-Tell Hagop (Angel-hair Hagop because he made the fluffy candy), Chemenji Hagop (chemen is a fenugreek spread which he sold). One of his son's was called Enken and Enken Dbesh. The family was also called Touramji Injill, and while the father was Attar Dootar Matar (“he throws, he catches, and airport” in Turco-Arabic). The nickname was related to an incident in the late '50s when an Armenian clergyman (Bishop Diran Nersoyan) was grabbed by Jordanian soldiers, taken to the airport and exiled because he led a clerical faction opposed to the king's favorite-Bishop Yeghishe Derderian. Attar. Dootar, and Matar referred to the clergyman's arrest (Attar is chased, dootar is grabbed and matar is airport). Hagop was no fan of Bishop Nersoyan. He had two further nicknames: while wiping the dust off the piano at a sports club (assuming there was no one else in the club), he had tinkled a couple of the ivories. But there was someone in the club: he had noticed Hagop's “piano playing.” He tagged him “Chopin”. The nickname was

corrupted to Shbein. But Hagop's ultimate nickname was almost a sentence: "Baykaruh Baykar eh!" ("The struggle is a struggle") because he would refer to his political party's interminable struggles as "Baykaruh Baykar eh!").

In addition to the amplitude of nicknames, what made the Jerusalem nickname tradition unique were the nicknames which were sentences or phrases. Achen-Tsakhen (from the right and the left); Anounuh Gah, Inkuh Cheegah (his name is here but he is not); Boudjen Chee Nerer (the budget doesn't allow); Chooruh Bagh eh (the water is cold); Inchoo Hos Khadzar? (Why did you bite here?) Seruh Gouyr eh (love is blind); Hokisee-Janisee (my soul - in Armenian and Turkish); Jara ma Jara (If it happens or it doesn't); Ag-hem Vor Chhodees (Let me sprinkle salt on you so you do not smell", "Mammeh Youreh?" (Where's mother?), "Mammess Keenah" (my mother would know); "Oor eh Katche?" (Where's the hero?), and "Hey Baron, Dzo Dgha! Tsouguh Ousgits Guh Logha? (Hey Mister, Hey Boy! From where does the fish swim?)

Sometime in the late '50s, an Armenian-American woman visited Jerusalem to stay with her long-lost relatives. She spoke broken Armenian. One day, looking at the poverty and the dull life around her, she commiserated with one of the locals: "Took hoss happy yek?" (Are you happy here?). It became her nickname during her Jerusalem sojourn.

...And Their Neighbors

Armenians of Jerusalem were made up of two communities which lived side by side: Vanketsis (residents of the St. James Convent) and the Kaghakatsis (City Dwellers) whose neighborhood hugged the convent in the east and the north. Vanketsis (more than two-thirds of Jerusalem Armenians) were survivors of the Armenian Genocide and their offspring while Kaghakatsis were Armenians who had lived in Jerusalem for centuries. Because of their long association with Arabs, many of the Kaghakatsis had a better command of Arabic than of Armenian. Kaghakatsis had also coined a resentful nickname for the recent arrivals: "Zwar" (visitor, tourist in Arabic). The Kaghakatsis liked to believe the newcomers would eventually leave thus power would revert to Kaghakatsis. Following the local Arab custom, Kaghakatsis identified each other by "Mn DarcMeen?" ("from the house of" in Arabic). Thus, if their last name was Hagopian, they identified themselves as being from "Mn Dar el Hagopian".

They also coined nicknames some of which are in this article. Because of political conflict and insecure economic conditions, most of the young Kaghakatsis like the Vanketsis began immigrating to the oil-rich Arab countries and later to North America and to Australia. One Kaghakatsi Armenian who lives in Australia says there are more Kaghakatsis in Sydney than there are in Jerusalem. Total Armenian population (Vanketsis, Kaghakatsis, and Armenians who live elsewhere in Jerusalem) is estimated to be about 1,200.

Bibliography

- Jones P. 2015, The Origins of Nine Royal Nicknames, Mental Floss, Aug. 19 (<https://www.mentalfloss.com/article/67226>, 15.07.2020).
- Brett O. 2009, What's in a Name, British Broadcasting Company, Jan. 15.
- Jehl D. 1996, What do you Call an Iraqi? Mostly Abu Ahmad, 1996/12/26 (www.nytimes.com).
- Greenfield A. 2006, A Perfect Red, London, Black Swan, 432 p.
- Krikorian H. 2005, Armenian Patriarchs of Jerusalem, Sherman Oaks, 821 p.
- Powell K. 2019, Nicknames from Professions (www.thoughtco.com, 03.05.2020).

ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐՈՒՍԱՂԵՄՈՒՄ (1940-60-ԱՎԱՆՆԵՐԻ ԿԵՍ)

Ժիրայր Թութունջյան (Կանադա, Տորոնտո)

Ամփոփում

Երուսաղեմի հայ համայնքը երբեք չի ունեցել երկու հազարից ավելի բնակիչ, սակայն հայերը ավելի քան հազար կեղծանուն են հորինել նույն անուններն ունեցող, բայց տարբեր մասնագիտությունների տեր կամ այլևայլ քաղաքներից եկած մարդկանց միմյանցից տարբերելու համար: Մականունների մեծամասնությունը բացասական երանգավորում ուներ: Գրեթե յուրաքանչյուր ընտանիք, բացի ընդհանուր կեղծանունից, ուներ նաև անհատական մականուն: Ուշագրավ փաստ է, որ մի ընտանիքում կար ավելի քան տասը մականուն: Ինչն էր այդ ամենի պատճառը: Երուսաղեմի հայերի՝ բացասական մականուններ ստեղծելու հակվածության ուսումնասիրությունը կարող է պարզել, թե ինչու են մականունները մեծ քանակությամբ եղել, և ինչու են դրանցից շատերն ունեցել բացասական իմաստ:

Բանալի բառեր՝ Երուսաղեմ, հայկական համայնք, մեծամասնություն, մականուններ, ընտանեկան մականուններ, անհատական մականուններ, բացասական մականուններ:

РАСПРОСТРАНЕННОСТЬ ПРОЗВИЩ В АРМЯНСКОМ ИЕРУСАЛИМЕ (1940-Е – СЕРЕДИНА 60-Х ГОДОВ)

Жирайр Тутунджян (Канада, Торонто)

Резюме

Армянская община Иерусалима, население которой никогда не превышало 2000 человек, использовала более тысячи прозвищ с целью различения людей с одинаковыми именами и людей, имевших разные профессии либо приехавших из разных городов. Однако следует отметить, что большинство прозвищ было негативным. Практически каждая семья, помимо общего прозвища, имела также индивидуальные, к примеру, одна из семей имела более 10 прозвищ.

Ключевые слова – Иерусалим, армянская община, большинство, прозвища, семейные прозвища, индивидуальные прозвища, отрицательные прозвища.

THE FLOWERING OF NICKNAMES IN ARMENIAN JERUSALEM (1940s TO THE MID-'60s)

Jirair Tutunjian (Canada, Toronto)

Abstract

The Armenian community of Jerusalem, which never had a population of more than 2000, was responsible for the creation of more than a thousand nicknames. The nicknames were invented to differentiate people who had the same name and people who had different professions or came from different cities.

However, the prevalent tone of the majority of the nicknames was negative. Almost every family had a nickname in addition to individual nicknames. One remarkable family had more than 10 nicknames. Why so many nicknames? Why so many were negative? A study of the propensity of Jerusalem Armenians to invent negative nicknames might discover why there were so many nicknames and why so many were negative.

Key words – Jerusalem, Armenian community, majority, nicknames, family nicknames, individual nicknames, negative nicknames.

САМООБОРОНА ВАНА ГЛАЗАМИ ОЧЕВИДЦЕВ

(Статья «Тридцать дней осады»)

С началом Первой мировой войны положение армян в Османской империи резко ухудшилось. Турецкие войска, к которым присоединились вооруженные курдские банды, под предлогом «неблагонадежности» и неприкрытой симпатии армян к русским, осуществляли их резню и погромы, разоряя армянские села и города. Население Шатаха, Айоц-дзора, Арчеша и других местностей Ванского вилайета прибегло к самообороне. Кульминацией этой борьбы явилась Ванская самооборона (7 апреля – 6 мая 1915 г.).

Накануне войны население Вана составляло более 40 тысяч человек, свыше половины из них – в Айгестане и других кварталах города – были армяне. Однако к апрелю 1915 г. в Ване скопилось более 70 тыс. армян, переселившихся в город из окрестных сел и подвергшихся нападению турок и курдов.

В начале апреля 1915 г. турки организовали осаду Айгестана, отрезав его от других районов города. В этот судьбоносный час представители разных армянских партий [АРФ («Дашнакцутюн»), рамкавары, гнчакисты] консолидировались во имя успешной самообороны. Для руководства самообороной был создан Военный орган армянской самообороны Вана, в состав которого вошли Арам Манукян, Арменак Екарян, Кайцак Аракел и др. Против превосходящих сил противника (12 тыс. солдат регулярных войск, множество разбойничьих банд) ванцы выдвинули всего лишь 1500 бойцов... 6 мая части русской армии и армянских добровольцев вошли в город.

О ванской самообороне опубликовано множество мемуаров участников и очевидцев событий, а также научных исследований. Статья «Тридцать дней осады», напечатанная в тифлисской газете «Кавказское слово» (24.06.1915 г.), автором которой является собственный корреспондент газеты В. А-ян (к сожалению, нам не удалось выяснить его имя и фамилию), посвящена именно этим героическим событиям.

АНУШАВАН ЗАКАРЯН

Доктор филологических наук

ТРИДЦАТЬ ДНЕЙ ОСАДЫ

Только теперь, месяц спустя после занятия Вана русскими войсками, приходят подробные сведения о положении осажденных в городе армян до подхода русских.

Мы постараемся дать в общих чертах историю этого интересного эпизода из борьбы с умирающей Турцией.

Столкновения армян с турками в Ване начались, как известно, 7-го апреля. Ни для армян, ни тем более для турок столкновения эти не явились неожиданностью. Почти с самого начала русско-турецкой войны армяне Ванского вилайета (как и всей Турции) жили под постоянной угрозой резни. В самом Ване все усилия известных армянских деятелей – Врамьяна (члена турецкого парламента), Ишхана и Арама были направлены на предотвращение катастрофы. Путем личных переговоров и сношений с ванскими вали им действительно удалось до апреля месяца предотвратить резню.




Рис. 1. Ванская цитадель

После неудач на русско-турецком фронте и в Дарданеллах озлобление турок против армян стало нарастать.

По всей стране стало намечаться выполнение программы турок – повсеместного погрома армян. В Ване также турецкими властями были получены соответствующие инструкции. 3-го апреля Ишхан, посланный Джевдетом в Шатах для улаживания конфликта между местными армянами и курдами, был по дороге изменнически убит по приказу того же Джевдета. Одновременно с этим был арестован Врамьян и отправлен на лодке

через Ванское озеро в Битлис. Известия эти с быстротой молнии разнеслись по Вану и в Айгестане (армянские кварталы), почуяв беду, стали готовиться к обороне. Ван, как известно, состоит из двух частей – собственный город или центральная часть города, окруженная старыми крепостными стенами.

В северной части города возвышается знаменитая ванская цитадель. Другую часть города составляют сады – Айгестан, где живет основная масса армянского населения.

В центральной части города также есть довольно многолюдный армянский квартал.

И, вот, в Айгестане начали готовиться к защите. Все кварталы этой части города были очень быстро приведены в состояние обороны. Чтобы сократить линию обороны и тем облегчить защиту ее, местами пришлось оставить некоторые улицы – так, армяне очистили юго-восточный угол Айгестана, т.н. Клор-Дар. В других местах, наоборот, приходилось выдвигать линию обороны за черту города. Здесь сотни мужчин, вооруженных кирками и лопатами, рыли глубокие окопы. Огромные срубленные деревья легли поперек улиц и закрыли все входы в Айгестан. Главными же средствами обороны явились дома на окраинах кварталов, быстро превращенные в маленькие форты – в глинобитных и кирпичных стенах были пробиты амбразуры и сотни ружей выглянули из этих отверстий, зорко выслеживая врага.

7-го апреля турецкие аскеры напали на шедших в город армянок. Армяне заступились за своих. В этой первой схватке турки потеряли трех убитыми, армяне обошлись без жертв.

Сигнал был дан, и Джевдет-бей^{*} приказал взять армянские кварталы. Зная по опыту прошлого, что ванцы окажут сопротивление, Джевдет решил сразу сломить это сопротивление и выдвинул против армян артиллерию. Бомбардировкой он думал воздействовать на психику непривычных горожан, взявшихся за оружие. И, действительно, вначале непрерывный рев орудий угнетающе действовал на защитников Айгестана, а в

^{*} Этот гнусный злодей в 1907 году, чтобы вырвать сознание [признание] у одного армянина – Петроса о том, где склады оружия армян, приказал на глазах несчастного отца подковать его 12-летнего сына. С тех пор этот представитель турецкой власти прозван «кузнецом».

особенности на безоружную толпу. Однако впечатление это быстро прошло, т.к. турки стреляли из орудий старого образца шарообразными снарядами и причинить большой ущерб домам, затерянным в глубине обширных садов армянских кварталов, не могли. Насколько защитники Айгестана привыкли к бесцельной трате снарядов турками – показывает следующий случай. Ближе всего сходились позиции противников на главной улице Айгестана – Хач-Похоц, один ряд домов которой занимали армяне, а противоположный – турки. И, вот, когда однажды на позицию армян упал неразорвавшийся снаряд, какой-то шутник поднял его и перебросил через улицу туркам:

– Не разорвался, пришлите его снова!

Так как турки не решались брать армянские позиции атакой, то началась своеобразная «позиционная» борьба. Турки старались разрушить дома, в которых укрепились армяне. Однако поврежденные днем турецкими снарядами стены за ночь быстро чинились армянами. У защитников под рукой была масса кирпича-сырца. Армяне не остались в долгу и, в свою очередь, для того чтобы отодвинуть дальше линию турецкого огня, старались разрушить господствующие над армянскими кварталами турецкие позиции, взрывая их динамитом. Так, на четвертый день осады, устроив подкоп, армяне взорвали «гшлу» (казармы) Амуд аги, в котор[ых] укрепились лучшие турецкие стрелки – черкесы. Казармы эти находятся против северо-восточного угла Айгестана и, благодаря своему расположению, давали возможность туркам держать под обстрелом довольно обширную часть Айгестана. Часть засевших здесь турок погибла во вспыхнувшем после взрыва пожаре, а часть была перебита армянами. Той же участи подверглись постепенно казармы Гаджи Бекира, Топрак Кале, 3-х этажное здание английского консульства и др.

В то время, как вокруг Айгестана шла эта ожесточенная борьба на жизнь или смерть, «Комитет национальной обороны армян» занялся организацией «тыла».

Все невооруженные, не принимавшие непосредственного участия в обороне, все женщины и дети были размещены в центре армянских кварталов, куда не долетали турецкие пули и снаряды.

«Комитет национальной обороны» приступил затем к организации: 1) полиции самообороны; 2) суда; 3) продовольственной комиссии и 4) ко-

митета народного здоровья. На обязанности полицейских, имеющих на рукавах повязки с подписью «полицейский» и вооруженных короткими дубинами, лежала забота поддержания строгого порядка в Айгестане, где собралось до 20-ти тысяч человек. В частности, полиция должна была: 1) не допускать скопления народа на улицах во избежание несчастий, могущих произойти от разрыва турецких снарядов; 2) преследовать и наказывать распространяющих ложные слухи (безразлично благоприятные или неблагоприятные – для осажденных); 3) наказывать за проступки (о преступлениях же производить расследование и представлять суду); 4) принимать меры к устранению разногласий между несколькими семействами, живущими в одном доме.



Рис. 2. Участники ванской самообороны

Заведование лазаретами для раненых было передано «ком. народ. здоровья», «продовольственная комиссия» же была занята распределением имеющихся в городе запасов съестных продуктов. Каждый обязан был «представить излишек съестных припасов продовольственной комиссии», которая затем распределяла [их] между неимущими. В начале осады паек был определен в 3 фун. хлеба, но затем, когда Джевдет погнал к осажденным собранных из окрестностей крестьян, чтобы взять осажденных голодом, то паек этот пришлось сократить, и в последние дни осады хлеба выдавалось 1–1½ фун. на душу.

Защитники Айгестана чувствовали огромную нужду в патронах. Оружия было достаточно, только патроны приходилось страшно экономить. Все приказы «Комитета национальной обороны» заканчивались отныне знаменитой» для ванцев фразой:

– «Берегите патроны»!

Хотя осажденным удалось оборудовать целую мастерскую для выделки бездымного пороха и гильз, все-таки выделять патроны в достаточном количестве не удавалось, и когда русские войска подошли к Вану, то у защитников города были на исходе последние заряды.

На 25-ый день осады из крепостной ограда пробрались в Айгестан 2 гонца (расстояние в один час ходьбы им удалось пройти лишь в течение 2-х ночей), сообщившие, что и в кварталах центральной части города армянам удалось удержаться против орудий Джевдета и полчищ курдов. Это было 2 мая. 4-го числа турки стали снимать осаду и отходить от города. Не зная чему приписать такой оборот дел, часть защитников Айгестана вышли из своих окопов и двинулись к цитадели, чтобы узнать о положении осажденных в центральной части армян. Из предосторожности, на случай возвращения турок, по дороге были разрушены дома, служившие позициями туркам.

Каковы же были радость и изумление айгестанцев, когда они вошли в цитадель, занятую до их прибытия.

Через два дня, 6-го мая, в город вошел авангард русских войск. С цитадели им салютовали орудия, отбитые у турок, а снятый с бывшей турецкой крепости флаг, со знаком полумесяца, склонился к ногам наших солдат.


Теперь жизнь в Ване входит в «нормальную» колею, поскольку это возможно в разрушенном и наполненном голодными беженцами городе.

Базар весь сожжен и потому на улицах за наскоро устроенными прилавками началась торговля. Население быстро освоилось с новыми порядками. Мальчишки, чистильщики сапог на улице на ломаном русском языке выкрикивают вслед прохожему: чисти! После захода солнца жизнь в городе замирает. Улицы не освещаются, и в ночной темноте раздаются лишь шаги патрулей, медленно обходящих спящий город.

В.А-ян.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հովհաննես Թումանյան, Նորահայտ փաստաթղթեր, աշխատասիրությամբ՝ Հ.Կ. Սուքիասյանի, Երևան, «ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ», 2019, 120 էջ:



Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան 150-ամյակի առիթով մեզանում բազմաշերտ ու բազմաձևալ գրականություն տպագրվեց: Չնայած այն հանգամանքին, որ Հովհ. Թումանյանը հայ իրականության մեջ առավել ուսումնասիրված գրողներից է, և նրա գրական ստեղծագործությունների և հանրային գործունեության մասին շատ է գրվել, այնուամենայնիվ, հետազոտություններն այդ առումով շարունակական են: Թումանյանի ազգային, քաղաքական և հասարակական գործունեության վերաբերյալ Նորահայտ փաստաթղթերի ժողովածու է հրապարակվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից: «Մես-

րոպ արք. Աշճեան» մատենաշարով լույս տեսած «Նորահայտ փաստաթղթեր» ժողովածուի կազմողը, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակը պատմագիտության թեկնածու Համո Սուքիասյանն է, խմբագիրը՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը:

Անշուշտ, մեծն Թումանյանի հանդեպ տաժած անսահման սիրո և պաշտամունքի զգացումն է ստիպել երիտասարդ գիտնականին՝ Հ. Սուքիասյանին, իր մասնագիտական գործունեությանը զուգահեռ, զբաղվել նաև թումանյանագիտությամբ և այդ ոլորտում բավական բեղուն արդյունքներ արձանագրել: Նորահայտ փաստաթղթերի այս ժողովածուում ընդգրկված են Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ) պահպանվող մի շարք նյութեր, որոնք վերաբերում են բանաստեղծի հասարակական բազմաշերտ գործունեությանը, ինչպես նաև նրա ծննդյան հիստուն և վաթսուամյակների տոնակատարություններին,

ստեղծագործությունների հետմահու տպագրությանը, տարածմանն ու մասսայականացմանը, արժևորմանը:

Ժամանակագրական առումով դրանք վերաբերում են 1918-1929 թթ.: Վերոնշյալ փաստաթղթերը լրացնում են բանաստեղծի Երկերի լիակատար ժողովածուում (ԵԼԺ) հրատարակված վավերագրերի տեղեկությունները՝ նոր դրվագներ ու մանրամասնություններ բացահայտելով նրա հանրագուտ գործունեության վերաբերյալ:

Փաստաթղթերն ընտրված են Հայաստանի ազգային արխիվի տարբեր ֆոնդերից և հրապարակված են բնագրային տեսքով: Հեղինակը կատարել է անհրաժեշտ կետադրական և ուղղագրական շտկումներ ու ծանոթագրություններ: Հիշատակվել են նաև փաստաթղթերի նախորդ հրատարակությունները (վերջինների առկայության դեպքում):

Սույն ժողովածուն հետաքրքիր փաստեր է ներկայացնում մեծ բանաստեղծի հասարակական բազմաշերտ ու ծավալուն գործունեության վերաբերյալ: Դրանք վկայում են բանաստեղծի 1918-1920 թթ. հայ իրականության տարբեր ոլորտներում ծանրակշիռ դերակատարության մասին:

Հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ նրա բացառիկ զգայուն և սրված պատասխանատվության զգացումը երևում է հանրային տարբեր խորհրդակցություններում ու ժողովներում ունեցած ելույթների ժամանակ, գրավոր կարգադրություններում: Թումանյանի խորին անհանգստություններն ու մտահոգությունները հանրային կյանքի մեծ ու փոքր երևույթների առնչությամբ տեսանելի են յուրաքանչյուր փաստաթղթում: Սակայն այդ ամենի մեջ, իհարկե, զգացվում է բանաստեղծի օրավուր աճող մեծագույն տագնապը երկրի և ժողովրդի վաղվա օրվա հանդեպ: Որևէ հայ անհատի մոտ գուցե դա այդպես անկեղծ ու բնական չի արտահայտվում, ինչպես Թումանյանի դեպքում է: Այսպես, 1918 թ. հունիսի 24-ին կայացած հայոց ազգային խորհրդի նիստում բանաստեղծը ստեղծված իրավիճակի կապակցությամբ նշել է. «Կառավարութիւնը պէտք է երկրում լինի, կտրված է երկիրը: ...Հայերին սեղմել են: Իրավունքով թէ՛ ուժով եք կառավարութիւն կազմելու ...Դրութիւնը լուրջ է, պէտք է գնալ, տէր դառնալ և կառավարել երկիրը: ...Եթե կառավարութիւն լինի, շատ բան այսպես չէր լինի» (էջ 14-15):

Բանաստեղծի և ազգային գործչի առողջ բնազդն ու իմաստնությունը, հեռատեսությունը դրսևորվում են ամեն ինչում:

1919 թ. դեկտեմբերին բռնկվեց հայ-վրացական պատերազմը, որը խորը մտահոգություն պատճառեց բանաստեղծին: Գրքում ներկայացված է հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի (Նախագահ՝ Հովհ. Թումանյան) կազմած փաստաթուղթը՝ ուղղված Հայաստանի Հանրապետու-

թյան կառավարությանը՝ հայ-վրացական պատերազմին վերջ դնելու հարցով: Դրանում ընդգծվում է այն միտքը, որ հարևան ու բարեկամ ժողովուրդների միջև առաջ եկած եղբայրասպան պատերազմը հղի է կործանարար հետևանքներով, չտեսնված ոճիր է երկու ժողովուրդների խաղաղ համակեցության դեմ: Ուստի հարկավոր է բողոքել կատարվող արյունահեղության դեմ, պահանջել անմիջապես դադարեցնել թշնամական գործողությունները, գումարել հայ-վրացական միացյալ համաժողով՝ դրա իրավասությանը հանձնելով նաև մյուս վիճելի հարցերը: Այնուհետև առաջարկվում է «տրամադրել երկու կառավարություններին Խորհրդիս լայն աջակցությունը՝ վերոհիշյալ նպատակներին հասնելու համար, և այս որոշումը յայտնել երկու կառավարություններին, երկու ժողովուրդների ազգային-հասարակական հիմնարկություններին և ամեն կերպ տարածել այդ ժողովուրդների ամենալայն խավերի մեջ» (էջ 37):

Բարեկամ վրաց ժողովրդի հանդեպ բանաստեղծի հարգանքի ու պատկառանքի զգացումը արտահայտվել է նաև այլ առիթներով: Այսպես, 1920 թ. ապրիլի 30-ին Թումանյանի գլխավորած հայրենակցական միությունների կենտրոնական խորհուրդը հրավեր է ուղարկում հայկական մշակութային հաստատություններին՝ մասնակցելու առաջիկայում (մայիսի 7-ին) նախանշված՝ Վրաստանի բանաստեղծության և գրականության ազգային տոնին. «Հայ գրողների վարչությունը եւ Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհուրդը որոշել են մասնակցել այդ տօնակատարութեան՝ հրաւիրելով նաեւ մեր կոլտուրական հաստատութիւններին միանալու իրենց հետ» (էջ 60):

Մի քանի փաստաթղթեր վկայում են Հայաստանի օգնության կոմիտեի հիմնադիր համագումարի և կոմիտեի գործառույթներում Թումանյանի կարևոր դերակատարությունը (էջ 64-75):

Ժողովածուի վերջին բաժինը եզրափակում են այն նյութերն ու վավերագրերը, որոնք վերաբերում են բանաստեղծի 60-ամյա տարեդարձը կազմակերպող և ոգեկոչող հանձնաժողովի աշխատանքներին:

Վերոհիշյալ հանձնաժողովի նիստերի արձանագրություններն ու բազմապիսի այլ նյութեր խոսում են այն մասին, որ Խորհրդային Հայաստանի իշխանությունները պատշաճ կերպով են նախապատրաստվել Ամենայն հայոց բանաստեղծի հոբելյանը արժանավորապես նշելուն (փաստաթղթերում առկա որոշ նրբերանգներ, այնուամենայնիվ, վկայում են, որ անգամ հոբելյանական հանդիսություններում կոմունիստական գաղափարախոսները չեն մոռանում իրենց բնորոշ, հարկ եղած զգուշությունը ցուցաբերել):

Օրինակ, ասվածի ցայտուն ապացույց է ՀԽՍՀ լուսժողկոմատի քաղլուս-գլխավարչության գրությունը Երևանի լուսբաժնին՝ Հովհ. Թումանյանի 60-ամյակի առթիվ քաղլուստեսույնների անելիքների մասին, որում մասնավորապես

նշված է հետևյալը. «Թումանյանը մեր հին գրականության մեջ ամենախոշոր բանաստեղծն է: Նրա տարբերությունը Հ. Պարոնյանից և հայկական նացիոնալիզմի մյուս երգիչներից այն է, որ նա խոշոր չափով իր գրիչն ուղղում է գյուղական ցեղերի դեմ: Իհարկե, այդ չի նշանակում, որ նա ազգայնական չի. Թումանյանը միաժամանակ նացիոնալիստ է: Թումանյանը մեզ համար ընդունելի է այնքանով, որքան որ նա քննադատում է տիրող դասակարգերը: Սակայն Թումանյանի իդեոլոգիան ռեակցիոն է և ուտոպիստական: Այդ բնույթով պիտի մոտենալ Թումանյանին և զեկուցումներ կազմակերպել» (էջ 91):

Ժողովածուում ընդգրկված են ուրիշ այլ հետաքրքիր նյութեր, ինչպես, օրինակ, գրականագետ Նորայր Դաբաղյանի պատրաստած թեզիսները՝ Հովհ. Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքի մասին: Այնտեղ կրկին նկատվում է, որ մեծ բանաստեղծի հանդեպ առկա է պրոլետարական կամ դասակարգային ընդգծված մոտեցումը. «Հովհաննես Թումանյանը, վերոհիշյալ հասարակական-քաղաքական պայմաններում հանդես գալով, ենթակա է լինում բուրժուական նացիոնալիզմի ազդեցությանը, ու իր հասարակական-քաղաքական գործունեությունը ծավալում է այդ գաղափարախոսության ազդեցության տակ:

...Նոյեմբերյան հեղափոխությունից հետո Հովհաննես Թումանյանը հայ մանր բուրժուական ինտելիգենցիայից առաջինն է լինում, որ ընդունում է խորհրդային իշխանությունը, իհարկե, յուրահատուկ մոտեցումով» (էջ 100):


Այսպիսով, «Հովհաննես Թումանյան նորահայտ փաստաթղթեր» արխիվային վավերագրերի ժողովածուն բավականաչափ նորություններ է պարունակում և կարող է օգտակար լինել ոչ միայն թումանյանագիտությամբ զբաղվողների, այլև այդ դարաշրջանի հայ հասարակական, գրական-մշակութային և քաղաքական մտքի ուսումնասիրության համար:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ԲԱՆԱՀԱՎԱՔՉՈՒԹՅՈՒՆ. ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ (1940-2020)



Սվետլանա Վարդանյանը Արևմտյան Հայաստանում.
Սուլուխի կամուրջը և Արածանի գետը

2020 թ. հոկտեմբերի 1-ին երկրային կյանքից հեռացավ բանագետ, բանահավաք, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի երկարամյա աշխատակից Սվետլանա Ավետիսի Վարդանյանը:

Ս. Վարդանյանը ծնվել է 1940 թ. մայիսի 23-ին Բաքվում, մանկավարժների ընտանիքում: Ծնողները Բաքու էին տեղափոխվել Արցախի Հանրապետության շրջկենտրոնից, ծագումով Տումի և Տոլ գյուղերից էին (այն ժամանակ՝ ԼՂԻՄ Հանրապետության շրջան): Սվետլանան հազիվ մեկ տարեկան էր, երբ հայրը մեկնում է ռազմաճակատ և զոհվում Հայրենական մեծ պատերազմում: Այդ տարիներին մայրը՝ Քնարիկ Եղյանը, Սվետլանայի հետ վերադառնում է Արցախ, որտեղ սկսում է աշխատել Հանրապետության միջնակարգ դպրոցում՝ որպես կենսաբանության ուսուցչուհի: Ս. Վարդանյանը 1947-1952 թթ. սովորել է Հանրապետության միջնակարգ դպրոցում, այնուհետև, երբ ընտանիքով տեղափոխվել են

Երևան, ուսումը շարունակել է մայրաքաղաքի թիվ 6 միջնակարգ դպրոցում (1952-1957):

1957-ին Սվետլանա Վարդանյանն ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայկական բաժին, որն ավարտում է 1962-ին. հուլիսի 6-ին պետական քննական հանձնաժողովի որոշմամբ նրան տրվում է «Ֆիլոլոգ - հայոց լեզվի և գրականության դասատու» որակավորում:

Սվետլանա Վարդանյանը 1963 թ. մայիսի 3-ին աշխատանքի է անցնում նորաստեղծ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում, որը հիմնադրվել էր 1959-ին՝ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի հնագիտության բաժնի և ազգագրական խմբի հիման վրա: 1960-ին Գրականության ինստիտուտից Հնագիտության և ազգագրության ինստիտուտ էր տեղափոխվել Հայ բանահյուսության բաժինը՝ կազմելով նորաբաց ինստիտուտի երեք հիմնական ուղղություններից մեկը՝ հնագիտության և ազգագրության հետ մեկտեղ: Ս. Վարդանյանը աշխատանքի է անցնում ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հենց այդ բաժնում, որն այդ ժամանակ կոչվում էր Ժողովրդական բանահյուսության բաժին, և մինչև իր մահն աշխատում է այնտեղ. սկզբում՝ որպես ավագ լաբորանտ (1963-1970), այնուհետև՝ կրտսեր գիտաշխատող (1970-1986), գիտաշխատող (1986-1991) և ավագ գիտաշխատող (1991-2020):

Հայ ժողովրդական բանահյուսության բաժինն ինստիտուտի միակ բանագիտական բաժինն էր այդ ժամանակ, հետագայում՝ 1972 թ. հոկտեմբերի 1-ից կազմավորվում է Բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժինը (Սարգիս Բարդուղիմեոսի Հարությունյանի ղեկավարությամբ), որտեղ աշխատելու համար տեղափոխվում են Ռ.Հ. Գրիգորյանը, Վ.Գ. Սվազյանը, Վ.Շ. Սահակյանը և նրանց հետ նաև Ս. Վարդանյանը՝ սկսած 1973-ից: Այդպիսով, 1973-1991 թթ. նա իր հետազոտական աշխատանքն իրականացրել է Բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժնում, որը 1991-ից վերանվանվեց Բանահյուսության տեսության և պատմության բաժին. Այստեղ Ս. Վարդանյանը զբաղվել է «Թիֆլիսի հայ բանագիտական դպրոցը» թեմայով:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտում աշխատելու տարիներին՝ 1971-1972 թթ., Ս. Վարդանյանը մասնակցել է բանահյուսական արխիվի վերլուծական վավերագրման կոլեկտիվ աշխատանքին, որի մեջ ներգրավված են եղել երկու բանագիտական բաժինների գրեթե բոլոր գիտաշխատողներն ու լաբորանտները: Այնուհետև՝ 1973-1976 թթ., նա ընդգրկված էր հայ ժողովրդական 16 հազար երգ-խաղիկների մոտիվային համաբարբառ և գիտական համահավաք կազմելու կոլեկտիվ աշխատանքում (ղեկավարներ՝

բ.գ.դ. Ի.Գ. Լևին, բ.գ.դ. Ս.Բ. Հարությունյան): Երգ-խաղիկների մոտիվային համաբարբառի հիման վրա կազմվել է մինչև հինգ տարբերակ ունեցող երգերի համահավաք ժողովածու:

1982 թ. մարտի 10-ին Ս. Վարդանյանին շնորհվել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ «բանահյուսություն» մասնագիտությամբ, «Տիգրան Նավասարդյանի կյանքն ու գործը» թեմայով ատենախոսությունը պաշտպանելու համար: Պաշտպանությունը կայացել է 1981 թ. հունիսի 30-ին Թբիլիսիում՝ Վրացական ԽՍՀ Շոթա Ռուսթավելու անվան վրաց գրականության պատմության ինստիտուտում: Ատենախոսը քանակական վերլուծությունների մեթոդով ներկայացրել է Տ. Նավասարդյանի ժողովրդագիտական ժառանգությունը:

Ս. Վարդանյանը դասախոսել է 1990-ականներին Երևանում ստեղծված մի շարք մասնավոր բուհերում. 1994-1998 թթ.՝ Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի բանասիրական ֆակուլտետում, 1997-2008 թթ.՝ Մովսես Խորենացու անվան համալսարանի ռոմանո-գերմանական ֆակուլտետում, 2003-2004 թթ.՝ Ֆիրդուսու համալսարանի արևելագիտության ֆակուլտետում:

Բանահավաք-բանագետի գիտական աշխատանքները երկու խոշոր ուղղությամբ են զարգացել՝ հետազոտական և տեքստաբանական, և երկու դեպքում էլ նա կարևոր ներդրումներ է կատարել հայ բանագիտության մեջ:

Որպես բանագետ-հետազոտողի՝ Ս. Վարդանյանին կարելի է անվանել բանագիտության պատմաբան. նրա հետաքրքրության տեսադաշտում ի սկզբանե եղել են հայ բանագիտության պատմության դեռևս չուսումնասիրված խնդիրները, առանձին բանահավաքների կյանքի և գործի ուսումնասիրությունը՝ սկսած XIX դ. 50-ականներից: Այսպես, նրա երկու մենագրությունները նվիրված են Տիգրան Նավասարդյանի և Միքայել Միանասարյանցի՝ հայ բանագիտության զարգացման մեջ կարևոր ներդրում ունեցած երկու նշանավոր ներկայացուցիչների կյանքի ու գիտական վաստակի ամբողջական ուսումնասիրությանը (Бардоян 1991, Վարդանյան 2002ա):

«Տիգրան Նավասարդյանի ավանդը հայ բանագիտության մեջ» (ռու.) մոտ 50-էջանոց աշխատությունում (Бардоян 1991) Ս. Վարդանյանն արխիվային վավերագրերի և տպագիր աղբյուրների հիման վրա ուսումնասիրել ու գնահատել է բանահավաք-հրատարակիչ, բառարանագիր Տիգրան Նավասարդյանի (1861-1927) կյանքն ու հանրային գործունեությունը, բանագիտական բազմակողմանի և հարուստ ժառանգությունը, հրատարակչական գործունեությունը:

Նավասարդյանի բանագիտական գործունեությունը, սակայն, չէր սահմանափակվում միայն բանահյուսական ստեղծագործությունների գրառմամբ

և հրատարակմամբ: Նա XIX դարավերջի և XX դարասկզբի հայ իրակա-
նության մեջ կազմակերպել է լայնածավալ շարժում՝ ստեղծելով բանահավաք-
ների մի ամբողջ բանակ (տե՛ս Барданын 1991, 15-24), որոնք տարբեր ազգա-
գավառներից բանահյուսական նյութեր են գրառել և ուղարկել Նավասարդ-
յանին: Եվ ահա Ս. Վարդանյանն ամենայն մանրամասնությամբ հետազոտում
ու ներկայացնում է այն բոլոր բանահավաքներին, որոնք աշխատակցել են
Նավասարդյանին, բանասացներին, ինչպես նաև քանակական վերլուծությ-
ամբ ներկայացնում է գրառված ողջ նյութը՝ ըստ ժանրային կազմի և ըստ
գրառման աշխարհագրության (Барданын 1991, 25-41):

Ս. Վարդանյանի ուշադրությունից չի վրիպել նաև հայագետ-բանա-
գետի՝ բարբառագիտության մեջ ունեցած ներդրումը, որի ապացույցն է Տ.
Նավասարդյանցի «Բառգիրք Արարատեան բարբառի» հետազոտությունը
(Տփիսիս, 1903): Վերջինիս մեջ տեղ գտած 5000 ոճերի ու դարձվածքների
հետ բերված են նաև գյուղատնտեսական գործիքների ու դրանց առանձին
մասերի, թռչունների, կենդանիների, բույսերի և ծառ ու ծաղիկների տարբեր
տեսակների բուն ժողովրդական բարբառային բազմատեսակ անուններ,
որոնք բացակայում են գրական լեզվում: Ս. Վարդանյանը միանգամայն ճիշտ
է նկատել, որ Նավասարդյանցն իր բանահյուսական նյութերի հրատարակու-
թյամբ նպաստել է նաև մեր գավառաբարբառների գրառմանը (Барданын
1991, 48-50):

Վերոհիշյալ մենագրությունից մոտ մեկ տասնամյակ անց՝ 2002-ին, Ս.
Վարդանյանը հրատարակում է իր երկրորդ մենագրությունը՝ նվիրված հրա-
պարակախոս, հրատարակիչ և բանահավաք Միքայել Միանսարյանցին
(1830-1880) (Վարդանյան 2002ա): Ս. Վարդանյանը պատմաքննական մո-
տեցմամբ և մասնագետի բանիմացությամբ հանգամանորեն վեր է հանում ու
բնութագրում հանրային, մշակութային գործչի լուսավորական գաղափարնե-
րը, հրատարակչական գործունեությունը, բանագիտական վաստակը, բացա-
հայտում նրա բերած նորություններն ու ավանդը բանահյուսական նյութի
ուսումնասիրման գործում: Մենագրության մեջ Ս. Վարդանյանը, բնականա-
բար, կենտրոնանում է Մ. Միանսարյանցի նշանավոր «Քնար հայկական» ժո-
ղովածուի վերլուծության վրա, ներկայացնում դրա հրատարակման դրդա-
պատճառները, ժողովածուի կառուցվածքը, բնագրերի դասակարգման և մա-
տուցման սկզբունքները (Վարդանյան 2002ա, 47-90): Ժողովածուում ընդ-
գրված բնագրերի մեծ մասը, ինչպես նկատում է աշխատության հեղինակը,
հետագայում, իբրև վստահելի ու արժանահավատ սկզբնաղբյուրներ, մտնում
է գիտական շրջանառության մեջ՝ նպաստելով հայագիտական տարբեր
ոլորտների հետազոտական աշխատանքներին (Վարդանյան 2002ա, 89):

Նախքան Մ. Միանսարյանցին նվիրված մենագրության հրատարակումը Ս. Վարդանյանը նրա գործունեության առանձին ոլորտների վերաբերյալ հրապարակումներ է լույս ընծայել տարբեր գիտական պարբերականներում (Վարդանյան 1995, 1997ա, 1998ա, 1999ա, 2000գ) և պետերբուրգյան «Լավրովյան ընթերցումներ» գիտաժողովի զեկուցումների ժողովածուում (Бардамян 1998): Տիգրան Նավասարդյանի գործունեությանը նույնպես Ս. Վարդանյանը նվիրել է առանձին հրապարակումներ ու զեկուցումներ Հայաստանի գիտական մամուլում և հանրապետական գիտաժողովներում (Վարդանյան 1974, 1976, 1980բ, 2017ա), ինչպես և համամիութենական գիտաժողովում, որն անցկացվել է Երևանում (Бардамян 1978):

Տարբեր տարիներին գրած հոդվածներում, հաղորդումներում ու զեկույցներում Ս. Վարդանյանն անդրադարձել է նաև մի շարք այլ բանագետ-բանահավաքների կյանքին ու գործունեությանը և նրանց գիտական ավանդի քննությանը: Այդ հրապարակումների թվում են Պողոս Մուրադյանի (Վարդանյան 1980ա), Գևորգ Տեր-Աղեքսանդրյանցի (1840-1890) (Վարդանյան 2004բ), Գևորգ Շերենցի (1848-1921) (Վարդանյան 2005, 2006ա), Հովսեփ Օրբելու (1887-1961) (Վարդանյան 2013) մասին գրված հաղորդումներն ու զեկույցը, ինչպես և Երվանդ Լալայանի (1864-1931) բանահյուսական գրառումների վերլուծություններն ըստ առանձին երկրամասերի՝ Զավախք, Վարանդա, Գանձակ, որոնք ամփոփված են երկու հոդվածներում և մեկ հաղորդման մեջ (Վարդանյան 2014ա, 2015բ, 2016):

Առանձին բանագետ-բանահավաքների գործունեությունը ներկայացնող ուսումնասիրություններն առավել լայն համապատկերում են դիտարկվում Ս. Վարդանյանի՝ թիֆլիսահայ բանագիտական մտքի պատմությանը նվիրված հրապարակումներում, որոնցում հեղինակը ներկայացնում է XIX դ. երկրորդ կեսից Թիֆլիսում ձևավորված հայ բանագիտական դպրոցը և նրա ունեցած հսկայական դերը բանահյուսության գրառման, հրատարակման, և ուսումնասիրության աշխատանքները համակարգելու, գիտական որոշակի սկզբունքներով ու մոտեցումներով իրականացնելու գործում (Бардамян 2003, Վարդանյան 2011ա): Երախտաշատ մտավորականների մշակութային ժառանգության հանգամանալից ու բազմակողմանի վերհանումը կարևոր է ոչ միայն նրանց խոշոր վաստակը արժևորելու, այլև հայ բանագիտության պատմությունն ամբողջացնելու առումով:

Բանագիտության պատմությունն ուսումնասիրելուն զուգահեռ՝ Ս. Վարդանյանն ինքն էլ տարբեր տարիների մասնակցել է բանահավաքական արշավախմբերի կամ իր նախաձեռնությամբ գործուղման մեկնել Հայաստանի տարբեր շրջաններ և հիմնականում Արցախ՝ բանահյուսական նյութեր գրառելու:

Այդպիսով, բանագիտության պատմության հարցերից զատ, որոնք, իհարկե, կազմում են Ս. Վարդանյանի գիտական հետազոտությունների գերակշիռ մասը, նա զբաղվել է նաև Հայաստանի առանձին գավառների բանահյուսական ժառանգության հետազոտությամբ: Այս առումով առանձնանում են հատկապես հայրենի Արցախի բանահյուսական ժառանգությանը նվիրված զեկուցումներն ու հրապարակումները, որոնք մեծ մասամբ կատարված են սեփական դաշտային գրառումների հիմքով: Դրանցում քննվում են ամենատարբեր բնույթի խնդիրներ՝ Արցախի բանասացների ու զվարճախոսների, արցախյան ազատամարտի բանահյուսության և տարածաշրջանի բանահյուսական այլևայլ ժանրային դրսևորումների՝ ծիսերգերի, զվարճախոսությունների տեղական առանձնահատկությունների վերաբերյալ (Վարդանյան 1970, 1971, 1992, 1994, 1999թ, 2002թ, 2006գ, 2007ա, 2007բ, 2007գ, 2019): Ուշագրավ է, օրինակ, պատերազմական զվարճախոսությունների քննությունը. ներկայացնելով դրանց հիմնական մոտիվներն ու յուրահատուկ գծերը՝ հեղինակը բարձր է գնահատում դրանց՝ «*ծայրահեղ իրավիճակներում ժողովրդի ոգու անպարտելիությունն ու հարստությունը պահպանող խորհուրդը*» (Վարդանյան 2000թ, 2006գ):

1994-ից ձեռնամուխ լինելով Բաքվից և ժամանակակից Ադրբեջանի տարածքի այլ բնակավայրերից բռնագաղթած հայերի բանահյուսության ուսումնասիրմանը՝ Ս. Վարդանյանը միայն 1994-1999 թթ. գրառել է ութ հարյուր միավոր բանահյուսական և ազգագրական նյութ, որի քննության տարբեր դրվագներ ներկայացրել է հանրապետության գիտական մամուլում և գիտաժողովներում (Վարդանյան 1999թ, 2000ա, 2004ա, 2011թ):

Ինչպես երևում է, Ս. Վարդանյանի բանահավաքչական գործունեության հիմնական թիրախը եղել է հայրենի Արցախի և հատկապես Հաղորդի շրջանի, նաև Բաքվի հայերի բանահյուսական ժառանգությունը, սակայն տարբեր տարիներին և մանավանդ իր գործունեության վերջին երկու տասնամյակներին նա միայնակ կամ գործընկերների հետ միասին ոչ-մեծածավալ նյութեր է հավաքել Հայաստանի տարբեր շրջաններում, որոնք, արխիվային հին նյութերին զուգահեռ, ներկայացրել է (նաև հեղինակակցությամբ) տարբեր գիտաժողովներում: Օրինակ, Երևանում կայացած հանրապետական գիտաժողովում զեկուցել է Էջմիածնի շրջանում հավաքած բանահյուսական նյութերի մասին (Վարդանյան 1987), Գյումրիում Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված հանրապետական նստաշրջանում Շիրակի բանահյուսության վերաբերյալ արխիվային նյութեր է ներկայացրել Էսթեր Խեմչյանի հեղինակակցությամբ (Խեմչյան, Վարդանյան 2007), Հասմիկ Մարգարյանի հեղինակակցությամբ «Հայ ժողովրդական մշակույթ» երկամյա գիտա-

ժողովներում զեկուցել է Արմավիրի մարզի և Արարատի մարզի Վեդու շրջանի, ինչպես և քրդախոս սիրիահայերի բանահյուսական և ազգագրական ավանդույթների մասին (Վարդանյան, Մարգարյան 2010, 2014, 2018):

Մասնագիտական հիմնական հետաքրքրությունների առանցքի շուրջ են ագուցվում նաև Ս. Վարդանյանի՝ բանագիտական տեսական և գործնական հետաքրքրաշարժ խնդիրների վերաբերյալ փոքրածավալ հետազոտությունները, որոնց մասին նա զեկուցել է տարբեր գիտաժողովներում: Այսպես, օրինակ, քննության նյութ է դարձրել քաղաքական գործիչների շուրջ ստեղծված բանահյուսությունը (Վարդանյան 1992), նշանավոր մշակութային անհատների հանդեպ՝ ժողովրդական բանասացների վերաբերմունքն արտահայտող զրույցներն ու հուշապատումները (Վարդանյան 2001): Ուշագրավ է նաև բանահյուսական արխիվային ֆոնդերի ուսումնասիրության խնդիրներին առնչվող զեկուցումը (Վարդանյան 1982), որը Ս. Վարդանյանի գործունեության այս ոլորտի տեսական ամրագրումն է:

Բանագիտական աշխատությունների և բանահյուսական ժողովածուների արժևորման հարցում կարևոր են նաև Ս. Վարդանյանի՝ ժամանակակից բանագետների գիտական վաստակի գնահատմանը նվիրված հաղորդումը (Վարդանյան 2014բ) և գրախոսությունները (տե՛ս մատենագիտության վերջին բաժինը): Բացի այդ, Ս. Վարդանյանը խմբագրել է նաև երկու գիտական մենագրություն (տե՛ս մատենագիտության առաջին բաժինը):

Հետազոտական աշխատանքին զուգահեռ՝ Ս. Վարդանյանն իր կյանքը նվիրել է բանահավաքչությանն ու տեքստաբանական աշխատանքին: Սեփական գրառումներից զատ՝ հսկայական գործ է արել արդեն գրառված բանահյուսական նյութեր դասակարգելու և ժողովածուներ կազմելու ուղղությամբ: Նրա մասնակցությամբ կազմվել և հրատարակվել են մի շարք արժեքավոր բանահյուսական ժողովածուներ, ինչպիսիք են Բաքվի հայերի բանահյուսությանը նվիրված, Ալվարդ Ղազիյանի համահեղինակությամբ պատրաստված ժողովածուն [Ղազիյան, Վարդանյան 2004 (կազմ.)], Էսթեր Խենճյանի հետ գործակցությամբ հրատարակված Հովհաննես Հովսեփյանի «Ղարաղաղահայերի բանահյուսությունը» ժողովածուն, որը լույս է տեսել որպես նույն հեղինակի «Ղարաղաղի հայերը» երկհատորյակի երկրորդ հատոր [Վարդանյան, Խենճյան 2009 (կազմ.)]: 2013-ին Ս.Բ. Հարությունյանի ղեկավարությամբ Բանահյուսության տեսության և պատմության բաժնի հետազոտական խումբը, որի կազմում էր նաև Ս. Վարդանյանը, հրատարակության է պատրաստել Կարսի հայերի բանահյուսական ժառանգության բազմաթիվ արխիվային նմուշներ ամփոփող ժողովածուն [Հարությունյան, Վարդանյան, Խենճյան, Ղռեջյան, Խենճյան 2013 (կազմ.)]:

Այս ուղղությամբ Ս. Վարդանյանի կատարած աշխատանքների մի մասը, սակայն, դեռ անտիպ է: Իրենց հրատարակությանն են սպասում Սարգիս Հարությունյանի, Ռոզա Գրիգորյանի և Վերժինե Սվազյանի գործակցությամբ կազմված «Հայ ժողովրդական խաղիկներ. համահավաք ժողովածու» անտիպ աշխատության առաջին հատորը, ինչպես նաև Ս. Վարդանյանի բանահավաքչական երկարուձիգ տարիների ընթացքում Արցախից կատարած գրառումներն ամբողջացնող ժողովածուն:

Սվետլանա Վարդանյանը գիտության համեստ և ժրաջան մշակ էր: Երբեք չէր խոսում իր կատարած գիտական աշխատանքների մասին, գլուխը կախ զբաղված էր հետազոտական գործով՝ առանց ավելորդ տարփողումների: Իհարկե, միշտ սիրով էր զրուցում բանահյուսության մասին, տարբեր տարիների բանահավաքչական գործուղումներում տեղի ունեցած ուշագրավ իրադարձություններ էր վերհիշում, ոգևորվում և զրուցակցին էլ ոգևորում էր՝ գրառված նոր նմուշներից մեջբերումներ անելով: Առանձնահատուկ հոգածություն էր ցուցաբերում երիտասարդ գիտաշխատողների հանդեպ, քաջալերում էր բանագիտության ուղին բռնած սկսնակներին, աջակցում՝ ինչով կարող էր:

Գործընկերները Ս. Վարդանյանին կհիշեն որպես համեստ, պարտաճանաչ և կյանքի դժվարին ու բազմապիսի բոլոր իրադրություններում միշտ բարեհամբույր անձնավորության, որը վայելում էր շրջապատի հարգանքն ու սերը:

Սվետլանա Վարդանյանի գիտական հրապարակումների ցանկ

Գրքեր (նաև կազմած և խմբագրած)

Варданян С.А. 1991, Вклад Тиграна Навасардяна в армянскую фольклористику, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 18, Երևան, ՀԳԱ հրատ., էջ 5-58:

Վարդանյան Ս.Ա. 2002ա, Միքայել Միանսարյանց (1830-1880). կյանքն ու գործը, Երևան, «Մուլնի», 106 էջ:

Ղազիյան Ա.Ս., Վարդանյան Ս.Ա. 2004 (կազմ.), Բաքվի հայոց բանահյուսությունը (ժողովածու), Երևան, «Զանգակ», 377 էջ:

Վարդանյան Ս.Ա., Խեմչյան Է.Հ. 2009 (կազմ.), Հովսեփյան Հ.Հ., Ղարադաղի հայերը, II, Բանահյուսություն, Երևան, «Գիտություն», 644 էջ:

Վարդանյան Ս.Ա. 2010ա (խմբ.), Մկրտչյան Ս.Ս., Տոներ, Երևան, «Գիտություն», 191 էջ:

Հարությունյան Ս.Բ., Վարդանյան Ս.Ա., Խեմչյան Է.Հ., Ղոնջյան Լ.Խ., Խեմչյան Մ.Հ. 2013 (կազմ.), Կարս. հայոց բանահյուսական մշակույթը, Երևան, «Գիտություն», 752 էջ:

Վարդանյան Ս.Ա. 2015ա (խմբ.), Բազեյան Կ.Ռ., Աղանյան Գ.Թ., Ազգագրական էսքիզներ, Երևան, «Գիտություն», 107 էջ:

Հոդվածներ

- Վարդանյան Ս.Ա. 2007ա, Բանահյուսական նյութերի կենցաղավարումը Շուշիի շրջանում (ըստ 1970 թ. դաշտային նյութերի), Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, ՀՀ ԿԳՆ, ՀՀ ԳԱԱ, ԵՊՀ, ԼՂՀ Մշակույթի և սպորտի նախարարություն, Արցախի պետական համալսարան, Երևան, «Գիտություն», էջ 351-359:
- Խեմյան Է.Հ., Վարդանյան Ս.Ա. 2007, Շիրակի բանահյուսական ժառանգությունը (ըստ ՀԱԻ-ի բանահյուսության արխիվի նյութերի), Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հանրապետական 7-րդ գիտական նստաշրջանի նյութեր, ՀՀ ԳԱԱ ԾՀՀԿ, Գյումրի, էջ 248-253:
- Վարդանյան Ս.Ա. 2010բ, Զանգեզուրի բանահյուսությունը Սերո Խանգադյանի գրառումներում, «Հայ ժողովրդական մշակույթ» XV: Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի 50-ամյակին նվիրված հոդվածների ժողովածու, Երևան, «Գիտություն», էջ 551-559:
- Վարդանյան Ս.Ա. 2011ա, Թիֆլիսահայ բանագիտական մտքի պատմությունից, Պատմաբանասիրական հանդես, N 1 (186), Երևան, էջ 119-133:
- Վարդանյան Ս.Ա. 2014ա, Զավախքի բանահյուսական մշակույթը Երվանդ Լալայանի գրառումներում (ծննդյան 150-ամյակի առթիվ), Պատմաբանասիրական հանդես, N 2 (196), Երևան, էջ 46-54:
- Վարդանյան Ս.Ա. 2016, Գանձակի բանահյուսությունը Երվանդ Լալայանի գրառումներում, Պատմաբանասիրական հանդես, N 1 (201), Երևան, էջ 104-114:

Հաղորդումներ և զեկուցումներ

- Վարդանյան Ս.Ա. 1971, Բանահյուսական նյութեր Լեռնային Ղարաբաղից, Լրաբեր հասարակական գիտությունների, N 8 (344), Երևան, էջ 88-93:
- Վարդանյան Ս.Ա. 1974, Տիգրան Նավասարդյանը՝ բանագետ-բանահավաք, Լրաբեր հասարակական գիտությունների, N 5 (377), Երևան, էջ 42-48:
- Վարդանյան Ս.Ա. 1980ա, Բանահավաք Պողոս Մուրադյան, Պատմաբանասիրական հանդես, N 3 (90), Երևան, էջ 301-303:
- Վարդանյան Ս.Ա. 1997ա, Միքայել Միանսարյանը՝ հրատարակիչ, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2 (595), Երևան, էջ 98-103:
- Վարդանյան Ս.Ա. 1998ա, Միքայել Միանսարյանցի մտորումները հայ երգարվեստի վերաբերյալ, Բանբեր Երևանի համալսարանի, N 1 (94), Երևան, էջ 157-160:
- Վարդանյան Ս.Ա. 1999ա, Միքայել Միանսարյանցի դերը հայ բանագիտության սկզբնավորման գործում, Բանբեր Երևանի համալսարանի, N 3 (99), Երևան, էջ 56-61:
- Վարդանյան Ս.Ա. 2000ա, Այլթնիկ փոխհարաբերությունների դրսևորումները բռնագաղթվածներից գրառած բանահյուսական նյութերում, Հայագիտական հանդես, N 3, Երևան, էջ 114-115:
- Վարդանյան Ս.Ա. 2002բ, Պաշտամունքային տարրերը «Ալելույայի» արցախյան տարբերակներում, Պատմա-բանասիրական հանդես, N 2 (160), Երևան, էջ 148-156:

- Варданян С.А. 2003, Становление и развитие школы фольклористики тифлисских армян. Археология, этнология и фольклористика Кавказа. Материалы международной конференции, Ереван, 17-18 ноября 2003, Институт археологии и этнографии НАН РА, Армянский центр этнологических исследований «Азарашен», Первопрестольный Святой Эчмиадзин, с. 369-372.
- Վարդանյան Ս.Ա. 2004ա, Բաքվից բռնագաղթած հայերի հոգևոր մշակութային ավանդները, «Մովսես Խորենացի» գիտական, պատմաբանասիրական, բնագիտական հանդես, N 4, Երևան, էջ 26-30:
- Վարդանյան Ս.Ա. 2004բ, Գևորգ Տեր-Ալեքսանդրյանց (1840-1890), «Հայ ժողովրդական մշակույթ» XII. հանրապետական գիտաժողովի նյութեր (Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճյանի հիշատակին), ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, Երևան, «Մուլնի», էջ 158-163:
- Վարդանյան Ս.Ա. 2005, Գևորգ Շերենց (1848-1921 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, Երևան, էջ 183-187:
- Վարդանյան Ս.Ա. 2006ա, Գևորգ Շերենցը՝ բանագետ-բանահավաք, «Հայ ժողովրդական մշակույթ» XIII. նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի (նվիրվում է պրոֆեսոր Դերենիկ Վարդումյանի հիշատակին), ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, Երևան, «Գիտություն», էջ 264-268:
- Վարդանյան Ս.Ա. 2006բ, Միջազգային գիտաժողով՝ Լեոնային Ղարաբաղում, «Մովսես Խորենացի» գիտական, պատմաբանասիրական, բնագիտական հանդես, N 1-2, Երևան, էջ 3-7:
- Վարդանյան Ս.Ա. 2007բ, «Տան սուրբ» երկույթի արցախյան դրսևորումները, «Հայ ժողովրդական մշակույթ» XIV. նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, Երևան, «Գիտություն», էջ 311-316:
- Վարդանյան Ս.Ա. 2007գ, Ժողովրդական խոսք ու զրույցի, բառուբանի դրսևորումները արցախյան ազատամարտում, «Մովսես Խորենացի» գիտական, պատմաբանասիրական, բնագիտական հանդես, N 1-2, Երևան, էջ 5-9:
- Վարդանյան Ս.Ա., Մարգարյան Հ.Ս. 2010, Ժողովրդական բառ ու բանի, կյանք ու կենցաղի դրսևորումները Արմավիրի մարզում (ըստ 2007-2009 թթ. դաշտային գործողությունների), «Հայ ժողովրդական մշակույթ» XV: Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի 50-ամյակին նվիրված հոդվածների ժողովածու, Երևան, «Գիտություն», էջ 531-541:
- Վարդանյան Ս.Ա. 2011բ, Գրավոր և բանավոր վավերագրեր՝ հայ-ադրբեջանական հարաբերությունների շուրջ, «Մովսես Խորենացի» գիտական, պատմաբանասիրական, բնագիտական հանդես, N 1-2, Երևան, էջ 71-75:
- Վարդանյան Ս.Ա. 2013, Հովսեփ Օրբելին՝ բանագետ-բանահավաք, Էջմիածին, N 2 (ԿԹ տարի, Բ), Երևան, էջ 102-105:
- Վարդանյան Ս.Ա. 2014բ, Վաստակաշատ բանագետ-ժողովրդագետը (Վերծինե Սվազյանի ծննդյան 80-ամյա հոբելյանի առթիվ), Պատմաբանասիրական հանդես, N 1 (195), Երևան, էջ 283-289:

- Վարդանյան Ս.Ա., Մարգարյան Հ.Ս. 2014, Քրդախոս սիրիահայերի բանահյուսական և ազգագրական ավանդույթները, «Հայ ժողովրդական մշակույթ» XVI: Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում. Դերենիկ Վարդումյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, Երևան, «Գիտություն», էջ 133-141:
- Վարդանյան Ս.Ա. 2015թ, Վարանդայի բանավոր մշակույթը Երվանդ Լալայանի և նրա թղթակից-բանահավաքների գրառումներում, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2 (644), Երևան, էջ 356-367:
- Վարդանյան Ս.Ա. 2017ա, Տիգրան Նավասարդյանի կյանքն ու բանահավաքչական գործունեությունը, էջմիածին, N 2 (ՀԴ տարի, Բ), Երևան, էջ 149-156:
- Վարդանյան Ս.Ա., Մարգարյան Հ.Ս. 2018, Բանահյուսական և ազգագրական նյութերի կենցաղավարումը Արարատի մարզի Վեդու տարածաշրջանում, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ, N 1. «Հայ ժողովրդական մշակույթ» XVII. Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում (Ստեփան Լիսիցյանի ծննդյան 150-ամյակին նվիրված ժողովածու), Երևան, ՀԱԻ հրատ., էջ 484-490:

Ջեկուցման հիմնադրույթներ

- Վարդանյան Ս.Ա. 1970, Լեռնային Ղարաբաղի զվարճախոսներն ու զվարճախոսությունները, Երիտասարդական գիտական նստաշրջան. ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների նստաշրջան՝ նվիրված Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման 50-ամյակին (10-11 դեկտեմբերի 1970 թ.). Աշխատանքի ծրագիրը և զեկուցման թեզիսները (խմբ. Բ.Ն. Առաքելյան), Երևան, էջ 12:
- Վարդանյան Ս.Ա. 1976, Տիգրան Նավասարդյանի բանահավաքչական ժառանգությունը (քանակական վերլուծման փորձ), Թեզիսներ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի 1974-1975 թթ. ազգագրական-բանահյուսական դաշտային աշխատանքներին նվիրված գիտական նստաշրջանի (դեկտեմբերի 23-24), պատասխանատու խմբագիրներ՝ Ս.Բ. Հարությունյան, Ա.Մ. Նազինյան, Դ.Ս. Վարդումյան), Երևան, էջ 19-20:
- Варданян С.А. 1978, Географическая и хроносоциологическая документация фольклорного наследия Тиграна Навасардяна. Всесоюзная сессия, посвященная итогам полевых этнографических и антропологических исследований 1976-1977 гг. Тезисы докладов (ред. В.Н. Басилов, Д.С. Вардумян), 19-22 апреля 1978, Ереван, с. 187-188.
- Վարդանյան Ս.Ա. 1980թ, Տիգրան Նավասարդյանը՝ բառարանագիր, Երիտասարդ գիտնականների IV կոնֆերանս՝ նվիրված Վ.Ի. Լենինի ծննդյան 110-ամյակին (1980 թ. փետրվարի 26-27). Ջեկուցումների թեզիսներ (խմբ. Դ.Ս. Վարդումյան, Լ.Հ. Աբրահամյան), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 26-27:
- Վարդանյան Ս.Ա. 1982, Բանահյուսական արխիվային ֆոնդերի ուսումնասիրության արդի խնդիրները, Գիտական նստաշրջան՝ նվիրված ՍՍՀՄ կազմավորման

- 60-ամյակին. Զեկուցումների թեզիսներ (1982 թ. մայիսի 19-21), խմբ. Ս.Բ. Հարությունյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 29:
- Վարդանյան Ս.Ա. 1987, Ժողովրդական բանահյուսության արդի վիճակը էջմիածնի շրջանում (ըստ 1985 թ. դաշտային նյութերի), Հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված 1984-1985 թթ. ազգագրական և բանագիտական դաշտային հետազոտությունների հանրագումարին. Զեկուցումների թեզիսներ (1987 թ. մայիսի 18-20), խմբ. Դ.Ս. Վարդումյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 93-95:
- Վարդանյան Ս.Ա. 1992, Քաղաքական գործիչները՝ ժողովրդական ստեղծագործող անհատների գնահատմամբ (ըստ Լեոնային Ղարաբաղից գրաված նյութերի), Հայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր (Արցախ. Գիտական նստաշրջան). Զեկուցումների հիմնադրույթներ, նվիրվում է ազգագրագետներ Զավեն Խառատյանի և Արթուր Մկրտչյանի հիշատակին (խմբ. Զ.Վ. Խառատյան, Հ.Լ. Պետրոսյան), ՀՀ Մշակույթի նախարարություն, Հայաստանի ազգային պետական թանգարան, Երևան, էջ 36-38:
- Վարդանյան Ս.Ա. 1994, Ավանդապահության աստիճանը արցախահայության բանահյուսության մեջ, Թեզիսներ Հրաչյա Աճառյանի գիտական գործունեությանը նվիրված միջազգային գիտաժողովի զեկուցումների (առաջաբանը՝ Ա. Խաչատրյանի), ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարան, Գիտությունների միջազգային «Արարատ» ակադեմիա, Երևան, էջ 62:
- Վարդանյան Ս.Ա. 1995, Միքայել Միանսարյանցի «Քնար հայկական» ժողովածուի պատմամշակութային արժեքը, Հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված 1990-1994 թթ. ազգագրական և բանագիտական հետազոտությունների արդյունքներին. Զեկուցումների հիմնադրույթներ (խմբ. Ս.Բ. Հարությունյան, Դ.Ս. Վարդումյան), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, էջ 81:
- Варданян С.А. 1998, Петербургский период деятельности Микаэла Миансарянца, Лавровское (среднеазиатско-кавказские) чтения, 1996-1997 гг. Краткое содержание докладов (ред. В.П. Курылев), Российская академия наук, Музей антропологии и этнографии им. Петра Великого (Кунсткамера), Санкт-Петербург, с. 130-132.
- Վարդանյան Ս.Ա. 1999թ, Արցախյան բանահյուսության նմուշներ՝ մի բանասացի երկացանկում, «Հայ ժողովրդական մշակույթ X». Հանրապետական գիտաժողով, Զեկուցումների հիմնադրույթներ (խմբ. Ս.Բ. Հարությունյան, Դ.Ս. Վարդումյան), նվիրվում է ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հիմնադրման 40-ամյակին, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, էջ 78-80:
- Վարդանյան Ս.Ա. 2000թ, Հումորն ու երգիծանքը սահմանային իրավիճակներում, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հանրապետական IV գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ (խմբ. Ս.Ա. Հայրապետյան), ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, էջ 48-49:
- Վարդանյան Ս.Ա. 2000գ, Աստվածաշնչային մոտիվներով հորինված հոգևոր երգերը Միքայել Միանսարյանցի գնահատմամբ, Գիտական նստաշրջան՝ նվիրված

«Ժողովրդական երաժշտական ստեղծագործության կաբինետի» և «Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի» հիմնադրման 30-ամյակին, 20-23 հունիս, 2000 թ., զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, էջ 31:

Վարդանյան Ս.Ա. 2001, Հայ նշանավոր մարդկանց հուշապատումները բանասացների երկացանկում, «Հայ ժողովրդական մշակույթ XI». Հանրապետական գիտաժողով, Զեկուցումների հիմնադրույթներ (խմբ. Ս.Բ. Հարությունյան, Դ.Ս. Վարդանյան), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, էջ 102-104:

Վարդանյան Ս.Ա. 2006գ, Ժողովրդական բանահյուսության դրսևորումները արցախյան ազատամարտում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան. Միջազգային գիտաժողով. Զեկուցումների հիմնադրույթներ (հունիսի 21-24 2006 թ., Ստեփանակերտ), ԼՂՀ կառավարություն, ՀՀ ԿԳՆ, ԼՂՀ ԿՄՍ նախարարություն, ՀՀ ԳԱԱ, ԵՊՀ, Արցախի պետական համալսարան, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 151-152:

Վարդանյան Ս.Ա. 2019, Արցախում գրառված ծիսական երգերի նմուշներ, Արամ Ղանալանյան -110. Ծրագիր և զեկուցման հիմնադրույթներ (խմբ. Պ.Ս. Ավետիսյան, Տ.Ս. Դալայան). Հանրապետական երկօրյա գիտաժողով՝ նվիրված Արամ Ղանալանյանի ծննդյան 110-ամյակին և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հիմնադրման 60-ամյակին (2019 թ., 21-22 հունիս. Ծաղկաձոր), Երևան, էջ 30:

Գրախոսականներ

Վարդանյան Ս.Ա. 1991 (գրախոս.), Շ.Ա. Гуллакян, Указатель сюжетов армянских волшебных и новеллистических сказок, Ереван, 1990 (Հրաշապատում և նովելիստական հեքիաթների սյուժետային ցանկ), Բանբեր Երևանի համալսարանի, N 1 (73), Երևան, էջ 208-209:

Վարդանյան Ս.Ա. 1996ա (գրախոս.), Վ. Սվազյան, Կիլիկիա. արևմտահայոց բանավոր ավանդությունը, «Պայքար», N 5-6, Երևան, էջ 54-57:

Վարդանյան Ս.Ա. 1997բ (գրախոս.), Վ.Գ. Սվազյան, Կիլիկիա. արևմտահայոց բանավոր ավանդությունը, Երևան, «Գիտություն», 1994, 408 էջ, Մեծ Եղեռն. արևմտահայոց բանավոր վկայություններ, Երևան, «Գիտություն», 1995, 224 էջ, Մեծ Եղեռնը արևմտահայոց հուշապատումներում և թուրքալեզու երգերում, Երևան, «Գիտություն», 1997, 32 էջ, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2 (595), Երևան, էջ 191-193:

Վարդանյան Ս.Ա. 1998բ (գրախոս.), Վ.Գ. Սվազյան (կազմ.), Հայ ժողովրդական հեքիաթներ. Վան-Վասպուրական, հ. 15, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1998, 512 էջ, Լրաբեր հասարակական գիտությունների, N 3 (599), Երևան, էջ 194-195:

Վարդանյան Ս.Ա. 2000դ (գրախոս.), Սասնա ծռեր, հ. Դ (նոր պատումների գրառումը և բնագրի պատրաստումը՝ Սարգիս Հարությունյանի և Արուսյակ Սահակյանի), Երևան, «Գիտություն», 1999, 582 էջ, Պատմաբանասիրական հանդես, N 2 (154), Երևան, էջ 265-267:

- Վարդանյան Ս.Ա. 2002գ (գրախոս.), Վ.Գ. Սվազյան, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, Երևան, «Գիտություն», 500 էջ, Պոլսահայոց բանահյուսությունը, Երևան, «Գիտություն», 592 էջ, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1 (605), Երևան, էջ 206-208:
- Վարդանյան Ս.Ա. 2004գ (գրախոս.), Իշխանուհի Մարիամ Թումանյանի ազգաշահ գործունեությունը. հայ ժողովրդի պարերի գնահատման մի յուրատիպ վկայություն (գրախոսություն՝ Մարիամ Թումանյան, Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները (տեքստի կազմում, առաջաբանի հեղինակ, ծանոթագրություններ՝ Ա.Հ. Բախչինյան), 2003, Գրականության և արվեստի թանգարանի հրատարակչություն, 414 էջ, «Մովսես Խորենացի» գիտական, պատմաբանասիրական, բնագիտական հանդես, N 5-6, Երևան, էջ 66-70:
- Վարդանյան Ս.Ա. 2004դ (գրախոս.), Վերժինե Սվազյան, Հայոց ցեղասպանությունը և պատմական հիշողությունը, «Օրեր» համաեվրոպական անկախ ամսագիր, Պրահա, N 3-4 (29), էջ 40-42:
- Վարդանյան Ս.Ա. 2004ե (գրախոս.), Վ.Գ. Սվազյան, Հայոց ցեղասպանությունը և պատմական հիշողությունը, Երևան, «Գիտություն», 2003, 145 էջ, Պատմաբանասիրական հանդես, N 3 (167), Երևան, էջ 281-283:
- Վարդանյան Ս.Ա. 2006դ (գրախոս.), Л.М. Варданян, Степан Лисициан и истоки армянской этнографии (Ստեփան Լիսիցյանը և հայ ազգագրության ակունքները), Երևան, «Гитутюн», 2005, 424 с., Պատմա-բանասիրական հանդես, N 1 (171), Երևան, էջ 314-317:
- Վարդանյան Ս.Ա. 2008 (գրախոս.), Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ, հ. 24, Երևան, «Գիտություն», 222 էջ, Պատմաբանասիրական հանդես, N 1 (177), Երևան, էջ 280-282:
- Վարդանյան Ս.Ա. 2010գ (գրախոս.), Արթուր Մկրտչյան, Общественный быт армян Нагорного Карабаха (вторая половина XIX – начало XX вв.) (Լեռնային Ղարաբաղի հայերի հասարակական կենցաղը. XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ), Երևան, «Гитутюн», 2010, 168 с., Պատմաբանասիրական հանդես, N 2 (184), Երևան, էջ 266-267:
- Վարդանյան Ս.Ա. 2012 (գրախոս.), Լուսինե Ղոնջյան, Երկվորյակների առասպելը և դրա տարբեր դրսևորումները հայ վիպական ավանդության համակարգում, Երևան, «Գիտություն», 2012, 151 էջ, Պատմաբանասիրական հանդես, N 1 (189), Երևան, էջ 257-259:
- Վարդանյան Ս.Ա. 2017բ (գրախոս.), Արմեն Սարգսյան, Արցախի բանահյուսությունը, Երևան, «Էդիթ Պրինտ», 2015, 748 էջ, Պատմաբանասիրական հանդես, N 1 (204), Երևան, էջ 238-241:

ՏՈՐՔ ԴԱԼԱԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՍՈՑԻՈԼՈԳԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ



Լրացավ անվանի սոցիոլոգ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական ղեկավար, Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի նախագահ, ակադեմիկոս Գևորգ Պողոսյանի 70 տարին:

Գևորգ Արամի Պողոսյանը ծնվել է 1950 թ. Երևանում: 1968 թ. ավարտել է թիվ 34 միջնակարգ դպրոցը, որից հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետ: Համալսարանն ավարտելուց հետո՝ 1975-77 թթ., աշխատել է Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանում, որտեղ զբաղվել է գիտահետազոտական աշխատանքով՝ ընթերցանության սոցիոլոգիայի բնագավառում: 1977 թ. աշխատանքի է անցել Հայաստանի գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի սոցիոլոգիական ուսումնասիրությունների բաժնում՝ որպես կրտսեր գիտաշխատող: 1983 թ. Մոսկվայում ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի սոցիոլոգիական հետազոտությունների ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ նվիրված սոցիոլոգիայի մեթոդաբանության հիմնախնդիրներին: Այդ տարիներին տպագրել է սոցիոլոգիական մեթոդաբանությանը նվիրված երկու հիմնարար մենագրություն (Դ. Позорян. «Метод интервью и достоверность социологической информации», изд. АН, Ереван, 1985 և Գ.Ա. Պողոսյան, Ինֆորմացիայի հավաքման մեթոդ-

ները սոցիոլոգիայում, Երևան, 1987) և գիտական հոդվածներ (Погосян Геворк, «Интервьюер как источник экспертной информации», «Социологические исследования», Москва, 1981, N 4, с. 157-164): Հարցազրույցի մեթոդին նվիրված նրա մի քանի աշխատություններ ընդգրկվել են սոցիոլոգիական հեղինակավոր հանրագիտարաններում («Социологическое исследование. Словарь-справочник», Москва, «Наука», 1991, «Энциклопедический социологический словарь», Москва, «Наука», 1995, «Российская социологическая энциклопедия», Москва, «Наука», 1999, *Սոցիոլոգիա*», ՀՀ Հանրագիտարան, Երևան, 2012):

1985 թ. նշանակվել է ՀԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի գիտական քարտուղար, այնուհետև՝ 1990 թ.՝ սոցիոլոգիական հետազոտությունների բաժնի վարիչ և ապա՝ ինստիտուտի տնօրենի տեղակալ: 1992-1995 թթ. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում հիմնել ու ղեկավարել է նորաստեղծ Սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնը: 1995 թ. միաժամանակ զբաղեցրել է ՀԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի տնօրենի պաշտոնը: 1997 թ. Սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնը միավորվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի հետ և 2003 թ. ՀՀ կառավարության որոշումով վերանվանվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ: 1995-2019 թթ. նա ղեկավարել է նույն ինստիտուտը, իսկ 2019 թ. նշանակվել է ինստիտուտի գիտական ղեկավար: Ջուզահեռաբար, ինստիտուտում և ակադեմիական համակարգում զբաղեցրել է նաև տարբեր հասարակական պաշտոններ՝ ինստիտուտի երիտասարդ գիտնականների միության նախագահ, ինստիտուտի արհեստակցական միության նախագահ, ՀՀ ԳԱԱ արհմիության խորհրդի անդամ, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյի անդամ, ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ:

1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո նրա ղեկավարած սոցիոլոգիական հետազոտությունների բաժինը սկսեց մշակել աղետների սոցիոլոգիան՝ որպես նոր գիտական ուղղություն, որն առաջինն էր և այդ ժամանակ միակը Խորհրդային Միությունում: 1991-1993 թթ. տևական ժամանակով գործուղվել է ԱՄՆ-ի տարբեր համալսարաններ՝ IREX կազմակերպության գիտական փոխանակման ծրագրի շրջանակում, իսկ 1994-1995 թթ. Ֆուլբրայթի հիմնադրամի մրցութային ծրագրով հրավիրվել է աշխատելու ԱՄՆ-ի Դելավերի նահանգի համալսարանում՝ Աղետների ուսումնասիրության կենտրոնում (DRC, University of Delaware, USA): Սպիտակի կործանարար երկրաշարժի հետևանքներին նվիրված՝ նրա ղեկավարած խմբի բազմաթիվ սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփվել և տպագրվել են երկու առանձին մենագրություններում, տասից ավելի գիտական հոդվածներում (հա-

յերեն, ռուսերեն և անգլերեն) և զեկուցվել են Մոնրեալում (Կանադա) 1998 թ. Միջազգային սոցիոլոգիական ասոցիացիայի XIV համաշխարհային կոնգրեսում, ինչպես նաև մի շարք միջազգային գիտաժողովներում՝ Երևանում, Մոսկվայում, Ժնևում, Բուդապեշտում, Տամպերայում, Կոպենհագենում, Ստամբուլում, Բիշքեկում, Թիֆլիսում, Բաքվում և Կիևում (*«Ten Years of Loneliness»*, (Editor G. Pogosian), Yerevan, 2000 (in English, Russian and Armenian), *«An Armenian's Life in Armenia»*, Yerevan, 1996, Gevork Pogosian (Editor), Գ. Պողոսյան, Մարդը աղերի գոյում, «Հայաստանի արդյունաբերություն, շինարարություն և ճարտարապետություն», N 1-2, Երևան, 1990, էջ 19-22 (հայերեն և ռուսերեն), Погосян Геворк, «Потрясение», журнал «Человек», Москва, 1990, N 2, с. 59-67, Погосян Геворк, «Судьба армянина в Армении», журнал «Социологические исследования», Москва, 1994, N 10, с. 150-154, Погосян Геворк, «Социальные последствия природных катастроф», «Социологический журнал», Москва, N 4, 1995, с. 31-35):

1990 թ. հիմնադրել է Հայկական սոցիոլոգիական ասոցիացիան (ASA)՝ որպես ինքնուրույն կազմակերպություն, որը դուրս է եկել նախկին Խորհրդային սոցիոլոգիական ասոցիացիայի կազմից: 1991 թ. Հայկական սոցիոլոգիական ասոցիացիան նախկին Խորհրդային հանրապետությունների թվում առաջիններից մեկն էր, որ ընդունվեց Միջազգային սոցիոլոգիական ասոցիացիայի (ISA) կազմ՝ որպես ազգային անդամ: Իսկ 2006 թ. այն անդամագրվեց նորաստեղծ Եվրոպական սոցիոլոգիական ասոցիացիային (ESA), որի շնորհիվ Հայկական սոցիոլոգիական ասոցիացիան գիտական համագործակցություն հաստատեց և բազմաթիվ հետազոտություններ իրականացրեց խոշոր միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես, օրինակ՝ UNDP, UNHCR, UNESCO, UNISF, USAID, USDS, IOM, NRC, World Bank, Gullap/Baltic Survey, IRI USA, WVS, EVS և այլն:

Ղարաբաղյան հակամարտության ու պատերազմի տարիներին հարյուրհազարավոր հայեր ստիպված եղան լքել հարևան Ադրբեջանի տարածքը և, որպես փախստական, ապաստան փնտրել Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Այդ տարիներին Գ. Պողոսյանի ղեկավարած սոցիոլոգիայի բաժինը խորազնին ուսումնասիրել և բազմաթիվ սոցիոլոգիական հետազոտություններ է իրականացրել՝ նվիրված հայ փախստականների սոցիալական հիմնախնդիրներին: 1995-1998 թթ. ազգային փորձագիտական խմբի կազմում մասնակցել է Ժնևում ՄԱԿ-ի՝ Փախստականների հարցերով բարձրագույն հանձնակատարի (UNHCR) ամենամյա համաժողովների աշխատանքներին: 1996-2000 թթ. Միգրացիայի միջազգային կազմակերպության (IOM) աջակցությամբ Երևանում հիմնել է Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի կազ-

մում փախստականների ու միգրանտների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ռեսուրսային կենտրոն: Կատարված գիտական ուսումնասիրությունների արդյունքները զեկուցվել են բազմաթիվ միջազգային գիտաժողովներում, տպագրվել են մենագրություններում և գիտական ամսագրերում (*Պողոսյան Գ., Ավագյան Գ., Փախստականների սոցիալական աղաքացիական Հայաստանում, Երևան, «Գիտություն», 1998, 54 էջ, Законодательные акты о беженцах Республики Армения (Под ред. Геворка Погосяна), Ереван, 1998, «Ноян Таран», 123 с., Gevork Pogosian, Conditions of Refugees in Armenia, Yerevan, Noyan Taran, 1996, 23 p., Г. Авагян, Г. Погосян, Р. Сейранян, Общее миграционное пространство: роль НПО, Ереван, «Наури», 1996, 24 с., Перспективы решения конфликтов на Кавказе (Социологический опрос). Рук. проекта Геворк Погосян, Ереван, 2001, 32 с., Karakashian M., Poghosyan G. Armenian Migration and a Diaspora: a Way of Life – in the Book. Adler, L., Gielen, U. «World Migration». New York: Greenwood Publishing Group, Inc. 2003, pp. 225-243, G. Pogosian, Ethnic processes and migration in the Caucasus - in the Book «Ethnoregional policy of Armenia and Georgia», Yerevan, 1999, 79-86 pp., Armenian Returnees from Germany. Back to Homeland (Project director G. Poghosyan), Armenian Sociological Association, UNHCR, IOM, Yerevan, 1997, 50 p.):*

Բնակչության տեղաշարժը մշտապես եղել է Գ. Պողոսյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում: Անցած դարի 80-ական թթ. սկսած՝ պարբերաբար սոցիոլոգիական ուսումնասիրություններ է իրականացրել հայ բնակչության արտագաղթի և ընդհանրապես միգրացիոն գործընթացների վերաբերյալ: Սկզբնական շրջանում դրանք վերաբերում էին ներքին միգրացիային կամ, այլ կերպ ասած, հանրապետության գյուղական բնակավայրերից ու փոքր քաղաքներից դեպի մայրաքաղաք Երևան ուղղված բնակչության արտահոսքին: Իսկ հետագայում՝ Խորհրդային Միության փլուզումից հետո, նորանկախ Հայաստանի Հանրապետությունից զանգվածային ու լայնածավալ արտագաղթի երևույթներին: Սոցիոլոգիական հետազոտությունները վկայում էին հանրապետությունից հիմնականում աշխատանք փնտրելու նպատակով պայմանավորված՝ երիտասարդների ու միջին տարիքի մարդկանց լայնածավալ արտահոսքի մասին: Դրա հետևանքով արագ նվազում էր հասարակության այսպես կոչված միջին դասը, և զուգահեռաբար սկիզբ էր առնում բնակչության ծերացման գործընթացը: Լուրջ փոփոխության էր ենթարկվում տարիներ շարունակ կայուն դրական միտումներ ցուցաբերած երկրի ժողովրդագրական դիմագիծը: Այս առումով նրա ուսումնասիրություններն առաջինն էին, որ հստակորեն մատնանշում էին այս արատավոր ու երկրի անվտանգությանը

լուրջ սպառնալիք ներկայացնող երևույթը: 1998 թ. նրա նախաձեռնությամբ կազմվել ու մեծ քանակությամբ տպագրվել են երկու գունավոր քարտեզներ, որոնցից մեկում նշված էր Ադրբեջանից գաղթած հայ փախստականների տեղաբաշխումը Հայաստանի Հանրապետության տարածքում, իսկ մյուս քարտեզում պատկերավոր նշված էին միգրացիոն հոսքերը ՀՀ-ում: Բնակչության արտահոսքի համատեքստում Գ. Պողոսյանն առաջինն ահազանգեց մեր քաղաքացիների անօրինական տեղափոխման ու շահագործման (թրաֆիքինգի) մասին: 1995-2019 թթ. Գ. Պողոսյանի հիմնական գիտական գործունեությունը նվիրված էր Հայաստանում կարևորագույն խնդիրներից մեկի՝ արտագաղթի սոցիոլոգիական ուսումնասիրություններին, որոնք իրենց ընդհանրացումը ստացան բազմաթիվ հոդվածներում և հիմնարար մենագրություններում (*Migration Processes in Armenia*, Ed. G. Poghosyan (Second edition), Yerevan, «Noyan Tapan», 2003, 195 p., Poghosyan G. *Out-Migration from Armenia// «Transboundary Migration in the Post-Soviet Space». Three Comparative Case Studies*. Nikolai Genov, Tessa Savvidis (eds.), Peter Lang, Berlin, 2011, p. 39-77, Պողոսյան Գ.Ա., *Հայ հասարակությունը XXI դարասկզբին*. ՀՀ ԳԱԱ, «Լուսաբաց», 2006, 375 էջ, G. Poghosyan, S. Mkhitarian, A. Darbinyan, Z. Ohanjanyan, A. Davtyan, *Trafficking in Persons. Report of Sociological Survey. ASA/OSCE and US Embassy in Armenia*, Yerevan, 2006, 79 p., G. Poghosyan (Project Director), *Trafficking and Labour Exploitation of Armenian Migrants. Sociological Survey. ASA/OSCE/USA DS*, Yerevan, 2005, 59 p., Погосян Г.А. *Анализ миграционных потоков в Армении - В кн. «Транзитная миграция и транзитные страны: теория, практика и политика регулирования»*, Москва, 2009, с. 196-213, Gevorg Poghosyan. *Armenian Migration*, Yerevan, «Europrint», 2014, 328 p., Г. Погосян, И. Аракелян, В. Осипов, «*Миграция и депопуляция в Армении*», Ереван, НАН РА, «Лумуш», 2017, 200 с.):

Նրա ղեկավարությամբ պատրաստվել ու տպագրվել են ՀՀ-ն ներկայացնող մի քանի գիտական զեկույցներ հեղինակավոր միջազգային կազմակերպությունների համար: Այսպես, օրինակ, 1994-1995 թթ. ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (UNDP) համար ղեկավարել է «Կանանց իրավիճակը Հայաստանում» ազգային զեկույցի սոցիոլոգիական ուսումնասիրության և վերլուծական զեկույցագրի պատրաստման աշխատանքները: Որպես ազգային փորձագետ՝ 1996-1997 թթ. ղեկավարել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «Մարդկային զարգացում-1997» հայաստանյան ազգային զեկույցի մշակումն ու տպագրումը. («*Human Development National Report. Armenia-97*», Yerevan, 1997 (Gevork Poghosian, Editor; in English and Armenian): Ինչպես նաև հրապարակել է մի շարք այլ զեկույցներ (Gevork Poghosian, *Skills for Life in Armenian Schools*, UNI-

CEF, Yerevan, 1996, 59 p., Gevorg Pogosian, *Problem of Pre-School Children Education*, UNICEF, Yerevan, 1997, 87 p., Poghosyan G. (Editor), *Art Education in Armenia: Building Creative Capacities for XXI Century. National Report for UNESCO*, Yerevan, 2010, 80 p.):

2003 թ. առաջինը նորանկախ հանրապետությունում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն սոցիոլոգիայի բնագավառում՝ «Սոցիալական տրանսֆորմացիաների տեսությունն ու գործառնությունը Հայաստանում» խորագրով՝ նվիրված Հայաստանում անցումային շրջանի սոցիալական հիմնախնդիրներին: Անկախ պետականության վերականգնումից հետո հայ հասարակության փոխակերպման գործընթացներին նվիրված երկար տարիների հետազոտություններն իրենց ընդհանրացումը գտան 2004 թ. Երևանում ԵԱՀԿ-ի հետ կազմակերպած միջազգային գիտաժողովում (Погосян Г.А. *Современное армянское общество: социологический анализ. Материалы международной конференции «Армения перед лицом глобальных вызовов»*, ОБСЕ/НАН РА, 27 ноября 2005): 2006 թ. Գ. Պողոսյանը պաշտոնական հրավեր է ստացել ԱՄՆ-ի George Washington University The Elliott School of International Affairs (ք. Վաշինգտոն) կողմից՝ գիտական զեկույց ներկայացնելու Հայաստանի Հանրապետությունում սոցիալ-քաղաքական գործընթացների ու իրավիճակի մասին: Այս հիմնախնդիրն նվիրված նրա վերլուծությունները լուսաբանվել են բազմաթիվ հոդվածներում և հիմնարար մենագրություններում (Погосян Г. *«Армянское общество в трансформации»*, Ереван, 2003, Погосян Г. *«Современное армянское общество: особенности трансформации»*, Москва, «АКАДЭМИЯ», 2005, Պողոսյան Գ., *Հայ հասարակությունը XXI դարասկզբին*, Երևան, 2006, Պողոսյան Գ., *Հարությունյան Մ., Առաքելյան Վ., «Հայաստան. Օլորացած հասարակություն»*, Երևան, 2007, Poghosyan G. *«Armenian Society in Transition»* – 39-th World Congress «Sociology at the Crossroads» of the International Institute of Sociology, Yerevan, 2009, Poghosyan G. *Modernization of Sociology in Post-Soviet Armenia* – In «Facing An Unequal World. Challenges for a Global Sociology», Volume II, Academia Sinica, Taiwan, 2010, p. 126-132, *«Армянский транзит»*. Сборник статей (ред. и автор Г. Погосян), Ереван, 2009, Погосян Г.А. *Эволюция национального самосознания в постсоветских обществах* – В кн. «Национальное самосознание народов стран СНГ и Балтии: роль общих культурных основ», Москва, «Прогресс-Традиция», 2010, Погосян Г.А. *Общество в эпоху перемен: надежды и реалии*. «Вестник Российской Академии наук», май, N 5, т. 82, Москва, 2012, с. 441-450):

Այդ տարիներին նրա կատարած աշխատանքների շնորհիվ հաջողվեց այնքան ընդլայնել ու ամրապնդել մեր համագործակցությունը արտասահման-

յան գիտական կենտրոնների հետ, որ ՀՀ-ն ներգրավվեց ու մասնակից դարձավ մի շարք միջազգային սոցիոլոգիական խոշոր ծրագրերի: Դրանց թվում նախ և առաջ պետք է նշել «Համաշխարհային արժեքների ուսումնասիրությունը» (WVS 2008) և «Եվրոպական արժեքների ուսումնասիրությունը» (EVS 2017) միջազգային ծրագրերին հայ սոցիոլոգների մասնակցությունը: Բազմաթիվ էին նաև Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ այլ երկրների սոցիոլոգիական կենտրոնների հետ համատեղ հետազոտական ծրագրերը: Առանձնակի ուշադրության են արժանի թուրք և ադրբեջանցի գիտնականների հետ իրականացրած՝ իր տեսակի մեջ եզակի ու նախադեպը չունեցող երկու սոցիոլոգիական ուսումնասիրություններ (*Ferhat Kentel, Gevorg Poghosyan. «Armenian-Turkish Mutual Perception and Dialogue», Yerevan, 2006, Potential of Azerbaijani and Armenian Peoples for the Peace-Building and Post-Conflict Cooperation. Sociological Research» (Programme Director – G. Poghosyan), Yerevan, 2003*):

2017-2019 թթ. նրա ղեկավարած սոցիոլոգիական հետազոտությունների բաժինը շահել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀԲՀՀ - 2016», «Միջազգային գիտական համագործակցություն» մրցույթը՝ «Արդի ծայրահեղականության սոցիալ-մշակութային գործոնները և ցուցանիշները. Բելառուսի և Հայաստանի համար ռիսկերի բացահայտում» խորագրով: Համատեղ ծրագրի շրջանակում երկու կողմերը համաձայնեցված մեթոդաբանությամբ սոցիոլոգիական հետազոտություններ են անցկացրել Հայաստանում և Բելառուսում՝ նվիրված ծայրահեղականության սոցիալ-իրավական նախադրյալների, պատճառների և անցանկալի հետևանքների բացահայտմանը: Հետազոտությունների արդյունքները վկայում էին երկու երկրների հասարակություններում աճող բողոքի ու ծայրահեղական տրամադրությունների մասին: Հայաստանում այդ տրամադրությունները հանգուցալուծվեցին 2018 թ., այսպես կոչված, «թավշյա հեղափոխությամբ», իսկ Բելառուսում՝ 2020 թ. նախագահական ընտրություններից հետո սկիզբ առած և մինչ օրս շարունակվող բողոքի զանգվածային շարժումներում: Հայ և բելառուս սոցիոլոգները, փաստորեն, կանխատեսել ու կանխազգուշացրել էին ծայրահեղականության արտահայտման ռիսկերի մասին իրենց հանրության շրջանում: Այս հետազոտական ծրագրի հիմնական արդյունքներն ամփոփվել ու տպագրվել են արտասահմանյան հեղինակավոր ամսագրերում (*Social Sciences (USA), СОТИС (Москва), Альманах социологии (Минск)* և ՀՀ-ում գիտական հոդվածների ու համատեղ մենագրության մեջ (*«Тенденции и риски радикализации общества. На материалах социологического исследования в Армении и Беларуси» (гл. ред. Погосян Г.А.), Ереван, «Европринт», 2019*):

Բազմամյա ու հետևողական, նպատակաուղղված գործունեության շնորհիվ նրան հաջողվեց մեր երկրում հաստատել ու զարգացնել հանրային կարծիքի սոցիոլոգիական հարցումների քաղաքական մշակույթը: Հայկական սոցիոլոգիական ասոցիացիան (ASA), սկսած 1991 թ., պարբերաբար հասարակական կարծիքի ուսումնասիրություններ էր անցկացնում մեր հանրությանը հուզող տարբեր հիմնախնդիրների շուրջ: Հատկապես կարևորվում էին հասարակական կարծիքի հարցումները երկրում ընթացող պառլամենտական և նախագահական ընտրությունների ժամանակ: ASA-ն առաջինը ՀՀ-ում կազմակերպեց և իրականացրեց ընտրությունների օրը, այսպես կոչված, ելքի հարցումներ (Exit Poll): ՀՀ կառավարության, քաղաքական կուսակցությունների և հանրության վստահությունը հարցումների նկատմամբ ամրապնդելու նպատակով Գ. Պողոսյանը նախաձեռնեց դրանց անցկացումը հեղինակավոր միջազգային սոցիոլոգիական կազմակերպությունների հետ համատեղ: Դրանց թվում էին բրիտանական հանրահայտ «POPULUS» կազմակերպությունը, ռուսական «ԼԷССИ», «РОМИР» և «МАСМИ» սոցիոլոգիական կենտրոնները: 2007-2019 թթ. Հայկական սոցիոլոգիական ասոցիացիան պարբերաբար հանրային կարծիքի ուսումնասիրություններ էր իրականացնում միջազգային ճանաչված Gallup/BalticSurvey կազմակերպության հետ համատեղ՝ Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI, USA) նախաձեռնությամբ: Բոլոր հարցումների արդյունքներն ու վերլուծությունները հանգամանորեն ներկայացվել են ՀՀ իշխանություններին, քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, վերլուծական կենտրոններին և լայնորեն լուսաբանվել են հանրապետության լրատվամիջոցներով: Նրա անմիջական նախաձեռնությամբ իրականացված մշտական ասուլիսները, հարցազրույցներն ու հոդվածները մամուլում, ելույթները հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով մեծապես նպաստեցին սոցիոլոգիայի լայն հանրայնացմանն ու մեզանում գիտական, ակադեմիական սոցիոլոգիայի տարածմանը: Գ. Պողոսյանը տեղական և արտասահմանյան մամուլում տպագրված հանրամատչելի հոդվածների և հարցազրույցների մեծ մասը գետեղել է 2016 թ. լույս տեսած մեծածավալ գրքի երկու հատորներում (*Պողոսյան Գ.Ա., «Սոցիոլոգիական դեմոսկոպ. Հայաստանը հասարակական կարծիքի հայելում», Երևան, ՀՀ ԳԱԱ ՓՄԻԻ, «Լիմուշ», 2016, հ. I, 837 էջ, հ. II, 758 էջ*): Հայկական սոցիոլոգիական ասոցիացիան վերջերս երեք համազգային սոցիոլոգիական ուսումնասիրություններ իրականացրեց՝ նվիրված երկրում ընթացող հետհեղափոխական զարգացումներին:

Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի սոցիալ-քաղաքական հետազոտությունների ինստիտուտի հետ բազմամյա գիտական

համագործակցության շրջանակներում 2020 թ. մայիս-հուլիս ամիսներին կազմակերպվեց երկու խոշոր միջազգային գիտաժողով՝ նվիրված Երկրորդ համաշխարհային պատերազմում տարած մեծ հաղթանակի 75-ամյակին և Եվրասիական միության ինտեգրման գործընթացների խնդիրներին ու հեռանկարներին: Գիտաժողովների երկու տասնյակ երկրներից ավելի քան 70 մասնակիցները կորոնավիրուսի համաճարակի պատճառով գիտական զեկուցումները ներկայացրին համացանցի միջոցով՝ օնլայն տարբերակով: Ներկայումս Գ. Պողոսյանի առաջարկով ու ղեկավարությամբ այս երկու ակադեմիական ինստիտուտները համատեղ գիտահետազոտական ծրագիր են ներկայացրել՝ նվիրված Ռուսաստանում ապրող հայության ներկա վիճակի ուսումնասիրությանը, ինչպես նաև հայրենադարձության պոտենցիալ ռեսուրսի բացահայտմանը:

Գ. Պողոսյանը ավելի քան 40 տարիների գիտակազմակերպչական գործունեության ընթացքում աշխատել է ապահովել մեզանում փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավագիտության բնագավառում հիմնարար գիտական ուսումնասիրությունների իրականացումն ու ստացված գիտական արդյունքների օպերատիվ տպագրությունը, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական ուղղությունների ձևավորումն ու զարգացումը, նոր գիտական բաժինների ստեղծումը, ինստիտուտի գիտական կոլեկտիվի ներուժի համախմբումն ու կողմնորոշումը նորանկախ հայրենի պետության առջև ծառացած բազմաթիվ սոցիալ-քաղաքական, ժողովրդագրական ու քաղաքացիաիրավական խնդիրների բացահայտման, վերլուծության և դրանց լուծման եղանակների մշակման խնդիրների շուրջ: Ժամանակակից այս խնդիրներին, ինչպես նաև հայ փիլիսոփայության և իրավական մտքի պատմությանը նվիրված գիտական մշակումները պարբերաբար տպագրվել են ինստիտուտի ամենամյա բազմաթիվ մենագրություններում և գիտական հոդվածներում: 2010 թ. ինստիտուտում արժեքավոր ավանդույթ է ձևավորվել՝ ամեն տարի UNESCO-ի փիլիսոփայության միջազգային օրվան նվիրված գիտաժողով հրավիրել և քննարկման արդյունքները տպագրել գիտական հոդվածների ժողովածուի տեսքով: Նրա ջանքերով և կազմակերպչական հմտությունների դրսևորումով անցած դարի 90-ական թվականների ծանրագույն պայմաններում հաջողվեց ոչ միայն պահել, պահպանել ու կազմաքանդումից փրկել ինստիտուտի պատմամշակութային արժեք ներկայացնող շենքը, այլ նաև ամրացնել այն, ներքին հարդարանքներ և վերանորոգումներ կատարել, բարելավել ու արդիականացնել գիտնականների աշխատանքային և կենցաղային պայմանները, համալրել ինստիտուտի գիտական գրադարանը, թվայնացնել գրադարանի քարտարանը, կարգավորել ու արդիականացնել ընթերցասրահը: Շնորհիվ այս արմատական վերափո-

խումների և լայնածավալ գիտակազմակերպչական գործողությունների՝ ինստիտուտը հասավ զգալի գիտական արդյունքների, լայն ճանաչում նվաճեց մեր հանրության շրջանում և ՀՀ ԳԱԱ համակարգում արժանացավ բարձր գնահատականի: Այդ ամենի շնորհիվ հաջողվեց նաև սոցիոլոգիան ձևավորել մեզանում՝ որպես լուրջ գիտական, ակադեմիական ուղղություն:

Գ. Պողոսյանը երկարամյա գիտական գործունեության ընթացքում տպագրել է 66 գիրք ու մենագրություն և 160 գիտական հոդված՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, լեհերեն, հունգարերեն, ուկրաիներեն և այլ լեզուներով: Մասնակցել է բազմաթիվ խոշոր միջազգային սոցիոլոգիական ծրագրերի՝ որպես ազգային փորձագետ ՀՀ-ից: Հիմնադրված բազմաթիվ միջազգային կապերը նրան հնարավորություն տվեցին հայկական սոցիոլոգիական գիտությունը ներկայացնելու ամենահեղինակավոր գիտական հարթակներում: Այսպես, օրինակ, մասնակցել է միգրացիայի, թրաֆիքինգի, ժողովրդավարության զարգացման և հասարակության փոխակերպման հարցերին նվիրված խոշոր միջազգային ծրագրերին, այդ թվում՝ 6 համաշխարհային սոցիոլոգիական կոնգրեսների և զեկուցումներով հանդես է եկել ավելի քան 70 միջազգային գիտաժողովներում, որոնք տեղի են ունեցել 50 տարբեր երկրներում:

Ակադեմիական համակարգից դուրս նա մշտապես ակտիվորեն զբաղվել է գիտական ու հասարակական աշխատանքով, ընտրվել է բազմաթիվ միջազգային մասնագիտական կազմակերպությունների և միությունների անդամ, այդ թվում՝

- Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի (հիմնադիր-նախագահ), 1991 թ.
- Միջազգային սոցիոլոգիական ասոցիացիայի (ISA), 1992 թ.
- Ազգային ասոցիացիաների խորհրդի (CNA), 1993 թ.
- Բնության և հասարակության հիմնախնդիրների միջազգային ակադեմիայի (IANSP), 1998 թ.
- Ռուսաստանի Դաշնության սոցիոլոգների միության (POC), 1998 թ.
- Միջազգային փիլիսոփայական ակադեմիայի (IPA), 2001 թ.
- ESOMAR Եվրոպական հետազոտությունների ասոցիացիայի, 2004 թ.
- Եվրոպական սոցիոլոգիական ասոցիացիայի (ESA), 2009 թ.
- EVS Եվրոպական արժեքների ուսումնասիրման միջազգային կոնսորցիումի ՀՀ ազգային տնօրեն, 2010 թ.
- Միջազգային սոցիոլոգիական ասոցիացիայի աղետների սոցիոլոգիայի հետազոտական կոմիտեի (ISA RC39) նախագահության անդամ, 2010-2014 թթ.

- Научный совет «Социально-политические проблемы формирования ЕАЭС» при ООН РАН, 2017 թ.
- Евразийский информационно-аналитический консорциум Научного совета РАН, 2018 թ.
- Association for Psychological Science (APS), USA, 2019 թ.
- Armenian Behavioral Science Association (ABSA), USA, 2019 թ.

Բացի այդ, ընտրվել է մի քանի հեղինակավոր գիտական ամսագրերի խմբագրական խորհուրդների անդամ, այդ թվում՝

- «Социологические исследования», 1996 թ. (Москва)
- «Социологический журнал», 2001 թ. (Москва)
- «Вопросы философии», 2015 թ. (Москва)
- «Мониторинг общественного мнения», 2013 թ. (ВЦИОМ, Москва)
- «Социальная политика и социология», РГСУ, 2014 թ. (Москва)
- «Интеллект. Личность. Цивилизация», 2013 թ. (Киев, Украина)
- "Global Sociology", 2014 թ. (India)
- ՀՀ ԳԱԱ «Բանբեր հայագիտության», 2014 թ.
- ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2014 թ.
- «Կանթեդ», 2014 թ.
- "Quarterly Franklin Membership", 2015 թ. (London, Journals Press)
- «СОТИС - Социальные технологии, исследования», 2016 թ. (Москва)
- «Общество: социология, психология», 2017 թ. (Краснодар)
- «Теория и практика общественного развития», 2018 թ.
- Издательский дом «ХОРС», 2019 թ. (Москва):

Գ. Պողոսյանը մշտապես մեծ ուշադրություն է հատկացրել երիտասարդ մասնագետների պատրաստման խնդրին, դասավանդել է ուսանողներին և ասպիրանտներին: 2009-2015 թթ. Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում դասավանդել է «Սոցիոլոգիա» և «Միգրացիոն գործընթացներ» ուսումնական առարկաները: 2001-2005 թթ. նշանակվել է պետական ճարտարագիտական համալսարանի «Արդյունաբերական սոցիոլոգիա» մասնագիտության գծով ավարտական պետական քննական հանձնաժողովի նախագահ, եղել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության, հոգեբանության և իրավաբանական ֆակուլտետների գիտական խորհուրդների անդամ, ինչպես նաև փիլիսոփայության և սոցիոլոգիայի N 013 պաշտպանության մասնագիտացված խորհրդի անդամ: 2008-2010 թթ. ղեկավարել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի քաղաքագիտության և սոցիոլոգիայի N 062 պաշտպանության մասնագիտացված խորհուրդը: Նրա գիտական ղեկավարությամբ

պաշտպանվել են երեք դոկտորական և տասը թեկնածուական ատենախոսություններ: Ներկայումս երկու ասպիրանտների գիտական ղեկավար է:

Ակտիվորեն մասնակցել է հանրապետության հասարակական ու քաղաքական կյանքին: 1992-1994 թթ. եղել է ՀՀ նախագահին կից գիտության և տեխնիկայի հասարակական խորհրդի անդամ, 1996-1998 թթ.՝ ՀՀ վարչապետին կից գիտության ու առաջատար տեխնոլոգիաների խորհրդի անդամ: 1993-1994 թթ. համատեղության կարգով աշխատել է որպես ՀՀ վարչապետի խորհրդական: 1995 թ. ընտրվել է ՀՀ կրթության ու գիտության նախարարությանը կից թեմատիկ ֆինանսավորման փորձագիտական խմբի անդամ, 2004 թ. նշանակվել է հասարակագիտության ու հումանիտար գիտությունների գծով բազային ֆինանսավորման փորձագիտական խմբի նախագահ: 2007-2011 թթ. ՀՀ նախագահին կից «Մարդասիրական արժեքների տարածման համար» ամենամյա մրցանակաբաշխության հանձնաժողովի անդամ էր, 2011-2012 թթ. ընտրվել է այդ հանձնաժողովի նախագահ, իսկ 2018 թ. մինչ այժմ՝ նույն հանձնաժողովի անդամ:

2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2007 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում, 2011 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ, իսկ 2014 թ.՝ ՀՀ ԳԱԱ իսկական անդամ: Նրա գործունեությունը՝ որպես գիտնականի և գիտության կազմակերպչի, բարձր գնահատականի է արժանացել ՀՀ ԳԱԱ նախագահության և Հումանիտար գիտությունների բաժանմունքի կողմից, ինչպես նաև հանրապետության հասարակության և ղեկավարության կողմից, 1982 թ. ՀԳԱ նախագահության կողմից արժանացել է «Գովեստագրի», 2005 թ. ՀՀ Ազգային ժողովի նախագահի կողմից՝ «Շնորհակալագրի», Ամերիկյան կենսագրական ինստիտուտի (ABI) կողմից 1997 թ., 1999 թ. և 2005 թ. ճանաչվել է որպես «Տարվա մարդ», Բրիտանական միջազգային կենսագրական կենտրոնի (IBC) կողմից 2001 թ. արժանացել է «Outstanding Scholars of the 21st Century» կոչմանը, 2008 թ.՝ Ֆրիտյոֆ Նանսենի անվան միջազգային ոսկե մեդալի, 2011 թ. արժանացել է ՀՀ Մովսես Խորենացու անվան շքանշանի, 2019 թ. ՀՀ ԿԳՄՍ գիտության կոմիտեի կողմից ստացել է «Պատվոգիր», 2019 թ.՝ ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից՝ «Վաստակագիր», 2019 թ.՝ Ամերիկյան վարքագծային գիտնականների հոբելյանական մեդալ (ABSA - American Behavioral Scientists Association. Outstanding Achievement Award, Sociology):

Ակադեմիկոս Գևորգ Պողոսյանը ճանաչված ու սիրված գիտնական է ոչ միայն ակադեմիական շրջանակներում, այլ նաև հանրապետությունում և արտասահմանում: Նրա հեղինակավոր կարծիքը սոցիալ-քաղաքական երևույթների և գործընթացների վերաբերյալ տարիներ շարունակ գրավել է

հանրության ուշադրությունը: Նա արդարացիորեն համարվում է գիտական սոցիոլոգիայի զարգացման հիմնադիրը Հայաստանում: Նրան ցանկանում ենք քաջառողջություն և բազում նորանոր հետազոտություններ ու գիտական աշխատություններ՝ նվիրված հայ հասարակության սոցիալական խնդիրներին ու զարգացման միտումներին:

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ նախագահ

ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար

**ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ. ԿՅԱՆՔԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ
(ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսի ծննդյան 60-ամյակի առթիվ)**



Ծննդյան 60-ամյակը բոլորեց ժամանակակից հայ պատմագիտության նշանավոր ներկայացուցիչներից մեկը՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Աղասու Մելքոնյանը:

Ծնվել է 1961 թ. փետրվարի 16-ին Վրացական ԽՍՀ Ախալքալաք քաղաքում՝ մտավորականի ընտանիքում: Հայրը՝ Աղասի Մելքոնյանը, երկար տարիներ հանդիսացել է «Սովետական Վրաստան» թերթի թղթակիցը: 1977 թ. Ա. Մելքոնյանն ավարտել է ծննդավայրի Դ. Դեմիրճյանի անվան թիվ 4 միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1982 թ. գերազանցությամբ ավարտել է համալսարանը, որից հետո ուսումը շարունակել է ԵՊՀ ասպիրանտուրայում (1982-1985 թթ.): 1989 թ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սուրեն Երեմյանի ղեկավարությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին» թեմայով՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2002 թ. ապրիլին նա պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» թեմայով: ՀՀ ԲՈՀ-ի որոշմամբ 2005 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում, 2006 թ. դեկտեմբերի 15-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2014 թ. դեկտեմբերի 27-ին՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1986 թ. հոկտեմբերին աշխատանքի անցնելով Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում՝ Ա. Մելքոնյանը շուրջ մեկուկես տասնամյակի ընթացքում լաբորանտից հասել է տնօրենի (2002 թ.) պատասխանատու պաշտոնին:

Ծննդյան 50 և 60-ամյակների առթիվ Ա. Մելքոնյանի կենսագրության, հանրային ու գիտակազմակերպչական գործունեության մասին լույս են տեսել մի շարք ուշագրավ հրապարակումներ, որոնցում հավուր պատշաճի ներկայացված են նրա անձն ու գործը, ընկերներն ու գործընկերներն իրենց սրտի խոսքն ու մաղթանքներն են ուղղել նրան¹: Վստահաբար, առաջիկայում ևս նորանոր հրապարակումներ կլինեն: Ուստի այստեղ մենք կանդրադառնանք միայն ճանաչված պատմաբանի գիտահետազոտական գործունեությանը, հրատարակած աշխատություններին:

Չափազանց լայն ու ընդգրկուն է ակադեմիկոս Մելքոնյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Փաստացի՝ նա գիտական աշխատանքներ է հրատարակել հին դարերից մինչև արդի ժամանակաշրջանի՝ Հայաստանի պատմության ամենատարբեր խնդիրների վերաբերյալ: Այդուհանդերձ, նրա հետազոտական ունակությունները լավագույնս արտահայտվել են XIX դարի և XX դարի առաջին քառորդի մի շարք առանցքային խնդիրների ուսումնասիրության դեպքում՝ Արևմտյան Հայաստանի պատմական ժողովրդագրության խնդիրներ, հայ-վրացական հարաբերություններ և Զավախքի խնդիր, Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն, հայոց պետականության պատմություն:

Մելքոնյանի հրատարակած առաջին մենագրությունը նրա թեկնածուական ատենախոսության վերամշակված տարբերակն էր, որը 1994 թ. տպա-

¹ Տե՛ս Մելքոնյան Աշոտ 2011, Կենսամատենագիտություն, Երևան, Պատմության ինստիտուտ, էջ 3-7, Ավագյան Բ. 2011, Պատմագիտության նվիրյալը (<< ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանի ծննդյան 50-ամյակի առթիվ), «ՊԲՀ», N 1, էջ 351-354, Կարապետյան Ա.Հ. 2011, Գիտնականի կեսդարյա ուղին, «ԼՀԳ», N 1-2, էջ 421-424, Սարգսյան Վ. 2011, Աշոտ Ա. Մելքոնյան. հայ նվիրյալ պատմաբանը, Մելքոնյան Ա. Ա., Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր, Երևան, էջ 3-6, Կարապետյան Ա. 2013, Խոստովանանք և հաշվետվություն հայրենի երկրի ու ժողովրդի առջև, Մելքոնյան Ա.Ա. 2013, Հայոց պատմության դասերն ու պատգամները, Երևան, էջ 3-10, Զաքարյան Ա. 2016, Պատմաբանը, գիտության կազմակերպիչը, քաղաքացին (<< ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Աղասու Մելքոնյանի ծննդյան 55-ամյակի առթիվ), «ՊԲՀ», N 1, էջ 253-259, Անմնացորդ նվիրում մեր ժողովրդին ու հայրենիքին (ակադեմիկոս Աշոտ Աղասու Մելքոնյանի ծննդյան 60-ամյակի առթիվ) 2021, «Գիտություն», փետրվար, էջ 3, Սարգսյան Ս.Թ. 2021, 60-ամյակ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի, «Ազգ», 26 փետրվարի թիվ 7:

գրել է ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը²: Արևմտյան Հայաստանի կարևորագույն տարածաշրջաններից մեկի՝ Էրզրումի նահանգի 1801-1830 թթ. պատմաժողովրդագրական ուսումնասիրությանը նվիրված սույն մենագրությունը պատմաբանները միանգամից լայն ընդունելության արժանացրին: Մանավանդ որ հեղինակի քննարկած հարցերի շրջանակը միանգամայն նոր էր և կարող էր նախկինում բավարար ուշադրության չարժանացած գիտաճյուղի՝ պատմական ժողովրդագրության թեմատիկայով նոր ուսումնասիրությունների հիմք հանդիսանալ: Նորահայտ աղբյուրների օգտագործմամբ աշխատանքում ներկայացված են նահանգի վարչատարածքային և էթնոժողովրդագրական պատկերը, բնակավայրերի տեղադրությունը, օսմանյան իշխանությունների կողմից հայ բնակչության բնականոն աճի արգելակմանը, պարբերական հալածանքներին, թալանի ու ջարդերի քաղաքականությանը վերաբերող խնդիրները: Ուստի 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում էրզրումցիների շրջանում ևս հույսեր առաջացան, թե օսմանյան տիրապետությունից ազատվելու և Ռուսաստանին միանալու հնարավորություն կստանան: Սակայն 1829 թ. սեպտեմբերի 2-ին ստորագրված Ադրիանուպոլսի պայմանագիրն այդ հույսերն ի դերև հանեց: Այս պայմաններում ռուսական զորքերի գրաված արևմտահայկական տարածքներից մի քանի տասնյակ հազար հայեր Արևելյան Հայաստան տեղափոխվելու որոշում կայացրին: Համակողմանի ուսումնասիրելով արևմտահայերի վերաբնակեցմանն առնչվող խնդիրները՝ Ա. Մելքոնյանը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ վերաբնակիչների թիվը եղել է ոչ թե 85000-90000 (ինչպես ընդունված էր պատմագիտության մեջ), այլ շուրջ 74000 մարդ, որոնց մեջ գերակշիռ մեծամասնություն են կազմել էրզրումցիները: Իրավացի է նա, երբ ընդգծում է, որ, եթե վերաբնակիչների շնորհիվ արևելահայկական բազմաթիվ բնակավայրեր կրկին հայաշունչ դարձան, ապա այս և հետագայի գաղթերի պատճառով Էրզրումի նահանգը (և ոչ միայն) էականորեն զրկվեց իր բնիկ բնակչությունից: Արևմտյան Հայաստանում մեծացավ թուրքերի և քրդերի տեսակարար կշիռը: Աշխատության վերջում առկա՝ Էրզրումի նահանգի բնակավայրերի ցանկերն ու գավառների քարտեզներն էլ ավելի գիտագործնական նշանակություն են տալիս մենագրությանը: Սույն մենագրությունը և Արևմտյան Հայաստանի գավառներին ու բնակավայրերին նվիրված Ա. Մել-

² Մելքոնյան Ա.Ա. 1994, Էրզրում: Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, «Գիտություն», 180 էջ:

քոնյանի շուրջ 30 հոգվածներն արժանացել են «Հայաստան» համահայկական հիմնադրամի գլխավոր մրցանակի:

Ա. Մելքոնյանի աշխատասիրությամբ 1999 թ. հրատարակվեց 1876-1880 թթ. Ախալցխայի քաղաքագլուխ, պատմաբան-հրապարակագիր Հովակիմ (Եղիշե ավագ քահանա) Գեղամյանցի «Կարապետ արքեպիսկոպոս. Կենսագրություն» ուսումնասիրությունը, որը 1876 և 1879 թվականներին երկու մասով տպագրվել էր «Փորձ» ամսագրում³: Սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող սույն աշխատությունը նվիրված է 1808-1830 թթ. Կարինի հայության հոգևոր առաջնորդ, արևմտահայության վերաբնակեցման կազմակերպիչ, իսկ արդեն 1837-1856 թթ. Վրաստանի և Իմերեթի հայոց թեմի առաջնորդ Կարապետ արքեպ. Բագրատունու կյանքին ու գործունեությանը:

Հաջորդիվ Ա. Մելքոնյանը ձեռնամուխ եղավ հայրենի Ջավախքի պատմության համապարփակ ուսումնասիրությանը. խնդիր, որը խորհրդային տարիներին քաղաքական դրդապատճառներով հետազոտողների կողմից քննության չէր ենթարկվել: Այս առումով միանգամայն նոր խոսք էր 1999 թ. հրատարակված «Ջավախք. պատմության ուրվագծեր» մենագրությունը⁴: Այստեղ քննության էին առնվում «Գուգարք» և «Ջավախք» եզրույթների ծագումնաբանության հարցը, հին դարերում, միջնադարում ու նոր շրջանում երկրամասի պատմության խնդիրները: Ցույց է տրվում, որ հարյուրամյակներ շարունակ Ջավախքը բնակեցված է եղել հայերով, և, բնականաբար, բնակչության գործածական լեզուն էլ եղել է հայերենը: Առավել ուշագրավ է օսմանյան և ռուսական գերիշխանության ժամանակահատվածներին վերաբերող շարադրանքը: Այնուհետև հեղինակն առավել մանրամասն անդրադառնում է, իր բնորոշմամբ, «Ջավախքի պատմության ողբերգական էջին», այն է՝ 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո տարածքային վեճերի շուրջ տեղի ունեցած հայ-վրացական քննարկումներին, 1918 թ. Ջավախքի թուրքական ռազմակալման հետևանքներին և, ի վերջո, 1921 թ. կուսակցական որոշումներով երկրամասը Խորհրդային Վրաստանին անցնելու գործընթացին:

Սույն մենագրությունում առաջ քաշված դրույթներն առավել խորացված տեղ գտան 2002 թ. ապրիլին Ա. Մելքոնյանի պաշտպանած դոկտորականատենախոսության մեջ: Արդեն հաջորդ տարի՝ 2003 թ., լույս տեսավ նրա «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» մենագրությամբ:

³ Գեղամյանց Հ. 1999, Կարապետ արքեպիսկոպոս. կենսագրություն, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Մելքոնյանի, Երևան, հրատ. նշված էջ, 112 էջ:

⁴ Մելքոնյան Ա.Ա. 1999, Ջավախք. պատմության ուրվագծեր, Երևան, «Գիտություն», 103 էջ:

յունը⁵, որը պատմաբան ավագ գործընկերների կողմից գնահատվեց իբրև էական ներդրում պատմագիտության բնագավառում: Մենագրությունում համակողմանի քննության են առնված Ջավախքի քաղաքական, ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական ու մշակութային պատմության առանցքային խնդիրները: Նախ ուրվագծորեն ներկայացված են հին և միջին դարերում, ապա օսմանյան տիրապետության ժամանակահատվածում Ջավախքի պատմության խնդիրները: Այնուհետև առավել մանրամասն քննության են առնված Ռուսական կայսրությանը միանալու նախօրյակին երկրամասի վարչատարածքային ու ժողովրդագրական իրավիճակը, Ռուսաստանին միանալու հանգամանքները, 1829-1830 թթ. արևմտահայերի գաղթն ու վերաբնակեցումը, վարչաժողովրդագրական իրավիճակը, ջավախահայերի մասնակցությունն արևմտահայոց ազգային-ազատագրական պայքարին, իսկ շարադրանքի եզրափակիչ հատվածը վերաբերում է Ջավախքի 1917-1923 թթ. պատմության խնդիրներին՝ վարչատարածքային վերաբաժանման հարց, սահմանային խնդիրներ, 1918 թ. թուրքական արշավանքի և ռազմական հետևանքներ, հայ գաղթականության դրություն, Ջավախքի պատկանելության շուրջ հայ-վրացական քննարկումներ և արդեն խորհրդային իշխանության շրջանում երկրամասը վերջնականապես Խորհրդային Վրաստանին միացնելու գործընթաց:

Ա. Մելքոնյանի «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» աշխատությունն արժանացել է «Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» հիմնադրամի դրամաշնորհին և Թեքեյան մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» մրցանակին: Սույն մենագրությունը 2007 թ. հրատարակվել է նաև անգլերենով⁶:

Ջավախքին առնչվող վերոթվարկյալ մենագրությունների լրացմանն է միտված 2005 թ. Ա. Մելքոնյանի հրատարակած «Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից (19-րդ դար – 20-րդ դարի սկիզբ)» մենագրությունը⁷: Գրքում քննության են առնված Ռուսական կայսրությանը միանալուց հետո ինչպես արևելահայկական այլ տարածքներում, Ջավախքի տարածաշրջանում ևս նոր թափ ստացած հոգևոր ու կրթամշակութային

⁵ Մելքոնյան Ա. Ա. 2003, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, «Հանգակ-97», 544 էջ:

⁶ Melkonyan A. 2007, Javakhs in the 19th century and the 1st quarter of the 20th century (A historical research), Yerevan, Institute of History, 256 p.

⁷ Մելքոնյան Ա.Ա. 2005, Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից (19-րդ դար – 20-րդ դարի սկիզբ), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատ., 178 էջ:

կյանքի աշխուժացման հանգամանքները, հայոց եկեղեցիներին կից ծխական, նաև պետական և մասնավոր դպրոցների հիմնադրմանն ու կրթական գործի կազմակերպմանն առնչվող խնդիրները: Առավել ուշագրավ է Ախալցխայի Կարապետյան և Ախալքալաքի Մեսրոպյան երկսեռ դպրոցների գործունեությանը վերաբերող շարադրանքը: Այս տեղեկությունների լրացմանն են միտված գրքում զետեղված շուրջ երեք տասնյակ արժեքավոր փաստաթղթերը:

Զավախքի XIX դարի և XX դարի առաջին քառորդի պատմության խնդիրների վերաբերյալ Ա. Մելքոնյանի շարադրանքը միանգամայն նոր ու թարմ խոսք էր: Նրա մենագրությունները, համոզված ենք, դեռ երկար տասնամյակներ պահանջված կլինեն այդ տարածաշրջանի պատմությամբ հետաքրքրվող հետազոտողների և ընթերցասեր հանրության համար: Այս մենագրությունները կարծես մեկը մյուսի շարունակությունը կամ լրացումը լինեն: Դրանց բոլորին միավորում է այն հանգամանքը, որ վերաբերում են հեղինակի ծննդավայրի՝ Զավախքի և Էրզրումի (որտեղից 1830 թ. տեղափոխվել են նրա նախնիները) տարածաշրջանների պատմության ու մշակույթի խնդիրներին: Դա վկայում է պատմաբանի՝ ծննդավայրին խոր արմատներով կառչած լինելու, «փոքր հայրենիքի» հանդեպ ունեցած պաշտամունքի հասնող սիրո մասին, որն արտացոլվել է նաև իր գիտական նախասիրություններում:

Ա. Մելքոնյանի հաջորդ հետազոտությունը ոչ պատահականորեն վերաբերում է «հայ ժողովրդի ազգային խորհրդանիշ» (իր բնորոշումն է) Արարատ լեռան վերելքների պատմությանը⁸: Համառոտ պատմաաշխարհագրական ակնարկից հետո նա ներկայացնում է մինչև XIX դարի առաջին քառորդը Մասիս-Արարատը հաղթահարելու փորձերը, 1829 թ. սեպտեմբերին Ֆրիդրիխ Պարրոտի ղեկավարած արշավախմբի՝ լեռան գագաթը հասնելու պատմությունը, XIX-XX դարերում այլ արշավախմբերի հաջողված փորձերը և, վերջապես, 2007 թ. օգոստոսի 8-10-ին Արարատի գագաթը բարձրանալու իր և ընկերների պատմությունը, իրենց հույզերն ու ստացած չկրկնվող տպավորությունները: Սույն գիրքը հիմք է հանդիսացել նույնանուն՝ «Արարատ. Հայոց անմահության խորհուրդը» փաստագրական ֆիլմի (2008) պատրաստման համար⁹:

2008 թ. Ա. Մելքոնյանը պրոֆ. Վլադիմիր Ղազախեցյանի հետ համատեղ հրատարակության է պատրաստել «Հայաստանը պետական գաղտնի

⁸ Մելքոնյան Ա.Ա. 2008, Արարատ. Հայոց անմահության խորհուրդը, Երևան, «Տիգրան Մեծ», 95 էջ+26 թերթ ներդիր:

⁹ <https://www.youtube.com/watch?v=FU42FfvuDxs> (02.04.2021):

փաստաթղթերում 1922-1929 թթ.» փաստաթղթերի ժողովածուն¹⁰: Այստեղ ընտրված և վերահրատարակված են մինչև այդ Մոսկվայում տպագրված «Совершенно секретно: Лубянка-Сталину о положении в стране (1922-1934 гг.)» հատորներից Հայաստանին ու հայությանը վերաբերող խորհրդային պետական անվտանգության մարմինների ամենամյա տեսությունները: Դրանք բացառիկ աղբյուր են խորհրդային Հայաստանի և Անդրկովկասի հայության սոցիալ-քաղաքական, հասարակական հարաբերությունները, հասարակություն-պետություն առնչություններն ուսումնասիրելու համար: Իսկ 2010 թ. Ա. Մելքոնյանի առաջաբանով և ծանոթագրություններով հրատարակվել են Հովհաննես Մկրտչյանի անտիպ հուշերը¹¹: Այն Զավախքի 1920-1930-ական թվականների պատմության (հատկապես ստալինյան բռնաճնշումների շրջանի) ճշմարտապատում աղբյուր է:

Վերջին մեկուկես տասնամյակում Ա. Մելքոնյանի գիտական հետազոտությունների առանցքում են Հայոց ցեղասպանության թեմատիկան, ցեղասպանության տարիներին հայության կրած կորուստների ու հատուցման հիմնախնդիրները: Այս թեմատիկայով նրա շարադրած գիտական ու հրապարակախոսական հոդվածների, հարցազրույցների մեջ առաջ քաշված դրույթներն ավելի ամբողջական տեղ են գտել 2019 թ. ՀՀ ԳԱԱ հայագիտության զարգացման հիմնադրամի նախաձեռնությամբ հրատարակության պատրաստված «Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կորուստները և հատուցման կառուցակարգերի մեթոդաբանական հիմքերը» կոլեկտիվ ուսումնասիրությունում¹²:

Գիտական պարբերականների զանազան համարներում ցրված հոդվածներն ի մի բերելն ու առանձին գրքով հանրությանը ներկայացնելը չափազանց օգտակար աշխատանք է, որին հետազոտողները հաճախ են դիմում: Ա. Մելքոնյանի 50-ամյակի առթիվ «Միտք» վերլուծական կենտրոնը

¹⁰ Армения в государственных секретных документах 1922-1929 гг. 2008, сборник документов, составители: А.А. Мелконян, В.Н. Казахеян, Ереван, «Наука», 352 с.

¹¹ Զավախքը Հովհաննես Մկրտչյանի հուշերում 2010, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Մելքոնյանի, կազմող և խմբագիր՝ Լ. Մկրտչյան, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 157 էջ:

¹² Մելքոնյան Ա.Ա., Պողոսյան Գ.Ա., Աղայան Ա.Վ., Մարության Ա.Ց., Քերթմենջյան Դ.Գ., Մելիք-Ադամյան Հ.Հ., Վարդանյան Վ.Դ., Բադալյան Գ.Մ., Հովհաննիսյան Ա.Ռ. 2019, Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կորուստները և հատուցման կառուցակարգերի մեթոդաբանական հիմքերը, Երևան, «Տիր», 608 էջ:

հրատարակեց մինչև այդ պատմաբանի շարադրած հոդվածների ընտրանին¹³: Ժողովածուում տեղ են գտել նախկինում հրատարակված և անտիպ ավելի քան չորս տասնյակ հոդվածներ: Ուշագրավ են նաև Մելքոնյանի մյուս՝ առավել գիտահանրամատչելի հոդվածների ժողովածուները, որոնք նախատեսված են ոչ միայն հայագետ հետազոտողների, այլև ընթերցասեր լայն հանրության համար: 2013 թ. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց հայաստանյան և Սփյուռքի մամուլում Մելքոնյանի հրատարակած հոդվածների և հարցազրույցների, իսկ 2015 թ. «Զանգակ» հրատարակչությունը՝ Հայոց ցեղասպանության թեմայով հրատարակած ու անտիպ գիտական և հրապարակախոսական հոդվածների ու հարցազրույցների սովորաձավալ ժողովածուները¹⁴: Վերջերս լույս տեսավ Ա. Մելքոնյանի հոդվածների չորրորդ ժողովածուն¹⁵, որտեղ ընդգրկված են 2011-2020 թթ. նրա հրատարակած ավելի քան չորս տասնյակ գիտական հոդվածները, գիտաժողովներում ընթերցած զեկուցումները և շուրջ մեկ տասնյակ գրքերի համար գրած առաջաբանները:

Ակադեմիկոս Մելքոնյանը մեծ ավանդ ունի նաև բուհական և դպրոցական դասագրքերի ստեղծման բնագավառում: Դյուրընթեռնելի ու պարզ շարադրանքի շնորհիվ 1998, 1999, 2008 և 2018 թվականներին նրա հեղինակությամբ և համահեղինակությամբ հրատարակված «Հայոց պատմության» ձեռնարկները¹⁶ մեծ պահանջարկ ունեն բուհերի դիմորդների, ուսանողների ու դասավանդողների և ընթերցասերների շրջանում: Նա նաև 2012 թ. ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի տպագրած «Հայոց պատմության» բուհական

¹³ Մելքոնյան Ա.Ա. 2011, Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր, կազմողներ՝ Վ. Սարգսյան, Է. Աբրահամյան, Ի. Սաղաթելյան, Երևան, «Միտք» վերլուծ. կենտրոն, 456 էջ:

¹⁴ Մելքոնյան Ա.Ա. 2013, Հայոց պատմության դասերն ու պատգամները, Երևան, «Գիտություն», 632 էջ, նույնի՝ Ցեղասպանություն և հայրենագրկում. ճանաչումից՝ հատուցում (հոդվածներ և հարցազրույցներ), կազմող՝ Ա. Մուրադյան, Երևան, «Զանգակ» 2015, 440 էջ:

¹⁵ Մելքոնյան Ա.Ա. 2021, Պատմագիտական հետազոտություններ, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 489 էջ:

¹⁶ Մելքոնյան Ա.Ա. 1998, Հայոց պատմություն: Դասախոսությունների ձեռնարկ, Երևան, «Հայագիտակ», 277 էջ, Аветисян Г.А., Даниелян Э.Л., Мелконян А.А. 1999, История Армении с древнейших времен до наших дней, Ереван, «Анкюнакар», 278 с., Դանիելյան Է.Լ., Մելքոնյան Ա.Ա. 2008, Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, «Զանգակ-97», 352 էջ, Մելքոնյան Ա.Ա. 2018, Հայոց պատմության ակնարկներ (հնագույն ժամանակներից մինչև XX դ. վերջը), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 412 էջ:

դասագրքի համահեղինակներից է¹⁷: Մելքոնյանը 2000 թ. հրատարակված «Հայոց պատմության» 5-րդ և 8-րդ դասարանների դասագրքերի, 2001 թ. հրատարակված «Պատմության» 10-րդ դասարանի դասագրքի համահեղինակ է, իսկ 2009 թվականից՝ «Ձանգակ» հրատարակչության կողմից տպագրվող հանրակրթական հիմնական և ավագ դպրոցների «Հայոց պատմության» դասագրքերի համահեղինակ և համախմբագիր:

Վերջին տարիներին Ա. Մելքոնյանը ձեռնամուխ է եղել գիտաքաղաքական կարևորություն ներկայացնող երկու հիմնարար մենագրությունների պատրաստմանը: Մեկը վերաբերում է Հայաստանի պատմական ժողովրդագրության հիմնախնդիրներին, մյուսը՝ Հայոց պետականությունների ամբողջական պատմությանը: Նոր եռանդ, բեղուն գրիչ, ուժ ու ավյուն ենք ցանկանում նրան՝ սույն սպասված աշխատանքները հնարավորինս շուտ պատմաբանների սեղանին դնելու համար:

Բացի վերը նշված մենագրություններից ու աղբյուրագիտական հրատարակություններից, Մելքոնյանը հեղինակել է նաև շուրջ 180 գիտական հոդվածներ, մի քանի հարյուր լրագրային, գիտահանրամատչելի ու հանրագիտարանային հոդվածներ, բազմաթիվ գրքերի համար գրել է առաջաբաններ, տասնյակ գրքերի խմբագիր է, ղեկավարել է մեկ տասնյակից ավելի թեկնածուական ատենախոսություններ, մասնակցել է միջազգային բազմաթիվ գիտաժողովների, դասախոսություններով և ելույթներով հանդես եկել Սփյուռքի հայկական համայնքներում և այլն:

Այս ամենով հանդերձ՝ սխալված չենք լինի, եթե պնդենք, որ Ա. Մելքոնյանի՝ հայրենական պատմագիտությանը մատուցած մեծագույն ծառայություններից մեկը պատմական ժողովրդագրության պատմագիտական դպրոցի ստեղծումն է, այս ուղղվածությամբ երիտասարդ մասնագետների պատրաստումը: Պատահական չէ, որ նա ևս շատ է կարևորում այս հանգամանքը: Իր անհատական օրինակով ակադեմիկոս Մելքոնյանը ցույց է տալիս, որ ամբարած կենսափորձը, գիտելիքներն ու հմտությունները երիտասարդ սերնդին փոխանցելը, սրտացավ խորհուրդներն ու օժանդակությունը յուրաքանչյուր հետազոտող-գիտնականի և անհատի պարտքն ու պարտականությունն են:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանն այն բացառիկ անհատներից է, որի անձի մեջ հաջողությամբ մեկտեղված են հայրենասեր քաղաքացու, հմուտ գիտնականի, սիրված դասախոսի և գիտության փորձառու կազմա-

¹⁷ Հայոց պատմություն, Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Դասագիրք բուհերի համար 2012, պրոֆ. Հ. Սիմոնյանի խմբագրությամբ, Երևան, ԵՊՀ հրատ., 874 էջ:

կերպչի հատկանիշները: Հենց այս ամենով են պայմանավորված նրա հանրաճանաչությունն ու ժողովրդականությունը, ոչ միայն մտերիմների ու գործընկերների, այլև հասարակության ամենատարբեր շերտերի շրջանում վայելած հարգանքն ու հեղինակությունը: Հոբելյանի առթիվ ջերմ մաղթանքներ ուղղելով մեր ուսուցչին և ավագ գործընկերոջը՝ նրանից առաջիկայում սպասում ենք նորանոր արժեքավոր ուսումնասիրություններ, որոնք նոր՝ ավելի բարձր աստիճանի կբարձրացնեն հայկական պատմագիտությունը:

ԿԱՐԵՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ՀԱԿՈԲ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՍԵՂԱ ԴԵՎԵՋՅԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ



Սեղա Դեվեջյանը Լոռի Բերդում, 1992 թ.

Հումանիտար գիտությունների զարգացման հիմնական նախադրյալը եղել և մնում է նվիրումը: Իսկ այնպիսի ոլորտի համար, ինչպիսին հնագիտությունն է, նվիրումն ուղղակի միակ շարժիչ ուժն է, որը, միախառնվելով յուրահատուկ ռոմանտիզմին, այդ մասնագիտությունը դարձնում է կենսակերպ: Նյութապաշտությամբ բնորոշվող մեր դարաշրջանում այսպիսի կենսակերպով ապրելը հեշտ բան չէ: Ավելին, այն հատկապես դժվար է կնոջ համար, որը, բացի գիտական նվիրումից, նաև մայր է և ունի իր գոյության «երկրորդ դաշտը»՝ ընտանիքը: Իսկ ում հաջողվում է այդ երկու դաշտերը համատեղել՝ դասվում է մեծերի շարքին: Այս խոսքերով կարելի է բնորոշել վաստակաշատ հնագետ Սեղա Դեվեջյանին, որի 85-ամյա հոբելյանը լրացավ այս տարի:

Պատմական գիտությունների թեկնածու Սեղա Հրանտի Դեվեջյանը ծնվել է 1936 թ. փետրվարի 9-ին Սիրիայի Հալեպ քաղաքում, Հրանտ Դեվեջյանի ընտանիքում: Վերջինս հայտնի հասարակական և մշակութային գործիչ էր՝ Լիբանանի «Առավոտ» օրաթերթի խմբագիրը, Սիրիայի և Լիբանանի ներգաղթի կոմիտեի նախագահը (1945-1947 թթ.): Ս. Դեվեջյանը դպրոցական տարիները անցկացրել է նախ Բեյրութում, ապա 1947 թ.՝ Խորհրդային Հա-

յաստան տեղափոխվելուց հետո, սովորել է Երևանի Ստեփան Շահումյանի անվան թիվ 1 դպրոցում:

Բարձրագույն կրթությունը ստացել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում 1954-1959 թթ.:

1959-1961 թթ. աշխատել է Հայաստանի պատմության թանգարանում, իսկ 1962 թ. ի վեր աշխատում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում, մասնավորապես վաղ հնագիտության բաժնում՝ որպես ավագ գիտաշխատող:

Թեկնածուական ատենախոսությունը՝ «Տաշիր-Ձորագետը բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններում» թեմայով, պաշտպանել է 1977 թ. ապրիլի 7-ին՝ հայտնի հնագետ Հարություն Մարտիրոսյանի ղեկավարությամբ:

Իր երկարատև մասնագիտական կյանքի ընթացքում Սեդա Դեվեջյանը մասնակցել կամ ղեկավարել է հնագիտական բազմաթիվ պեղումներ Լճաշենում (1958-1960 թթ.), Արգիշտիխիսիլիում (1964-1982 թթ.), Նորաբացում (1979 թ.), Ստեփանավանում (Չեշմանիս, 1980 թ.), Երևանի Շահումյան թաղամասում (1985 թ.), Կուրթանում (2006 թ.), Թեղուտում (2009-2015 թթ.) և այլուր: Սակայն Ս. Դեվեջյանի անվան հետ առաջին հերթին կապվում են Լոռի Բերդի պեղումները (1969-2018 թթ.), որը ոչ միայն հնագույն Հայաստանի, այլև Կովկասի և Առաջավոր Ասիայի կարևոր հուշարձաններից է: Նրա ղեկավարությամբ այստեղ պեղվել են 110-ից ավելի դամբարաններ, ինչպես նաև միջինբրոնզեդարյան բնակավայրը: Դամբարաններից շատերը աչքի են ընկնում իրենց խոշոր չափերով, ճարտարապետական հորինվածքներով և չափազանց հարուստ նյութով: Լոռի Բերդի պեղումները ցույց տվեցին, որ Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան կողմերում՝ Լոռվա չնաշխարհիկ բնության մեջ, հազարամյակներ առաջ, բնակություն է հաստատել մշակութային հարուստ ավանդույթներ ունեցող մի ժողովուրդ, որը երկու հազարամյակի ընթացքում աշխատել, արարել, ծեռք է բերել մեծ հարստություն, հարաբերություններ է ունեցել մոտակա և հեռավոր երկրների հետ, գուցե նաև գերիշխանություն՝ ռազմական և քաղաքական ասպարեզում: Լոռի Բերդի պեղումների շնորհիվ բացվել է հնագիտական մշակութային հինգ դարաշրջան՝ միջին և ուշ բրոնզ, վաղ երկաթ, ուրարտական և հետուրարտական (Ք.ա. մոտ III հազ. վերջ - I հազ. կես), յուրաքանչյուրին բնորոշ ուրույն կացութաձևով: Հնագետի արդյունավետ աշխատանքի շնորհիվ Լոռի Բերդի դամբարանային համալիրներն ու բոլոր շրջափուլերից հայտնաբերված եզակի ցուցանմուշները հայտնի դարձան ամբողջ աշխարհին:

Բազմամյա պեղումները ցույց տվեցին, որ Հայաստանը և մասնավորապես Լոռու ենթագոտին մեծապես սերտաճած են եղել հին Առաջավոր

Ասիայի և Լևանտի մշակութային և առևտրափոխանակային հարաբերություններում: Պարզելու համար այս առնչությունները՝ Ս. Դեվեջյանն իր կյանքի ընթացքում ճանապարհորդել է բազմաթիվ երկրներում և աշխատել այնպիսի թանգարանների հավաքածուներում, ինչպիսին է Լուվրը:

Տասնամյակների բեղմնավոր ուսումնասիրություններն ամփոփված են հեղինակի չորս մենագրություններում և մոտ 50 գիտական հոդվածներում ու հիմնադրոյթներում, որոնցից առաջինը, ի դեպ, տպագրվել է «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի էջերում: Այդ աշխատանքները վերաբերում են բրոնզ-երկաթեդարյան Հայաստանի, մասնավորապես՝ Տաշիր Ձորագետի և Նրա տարածքում գտնվող Լոռի Բերդ հուշարձանի պեղումներից հայտնաբերված հնագիտական նյութի վերլուծությանը:

Ընդ որում, դրանցում ներկայացվում են ոչ միայն պեղումների ընդհանուր արդյունքները, այլ նաև տարբեր խնդիրներին առնչվող հարցեր, որոնց թվում կառանձնացնեինք մետաղագործությունը և ոսկերչությունը, կնիքագործությունը, մշակութային և առևտրատնտեսական փոխառնչությունները, պաշտամունքը, արվեստը, թաղման ծեսը և այլն:

Հարկ ենք համարում նաև նշել, որ, բացի հնագիտական գործունեությունից, Ս. Դեվեջյանը խմբագրել և վերահրատարակել է իր հորեղբոր՝ գրող, մանկավարժ, հայտնի հասարակական-քաղաքական գործիչ Հովհաննես Դեվեջյանի 1970 թ. Բուենոս Այրեսում լույս տեսած ինքնակենսագրական գիրքը (Արմէն Սեւան, «Բանտարկեալի մը յուշերը. տառապանքի տարիներ Գարեգին Նժդեհի հետ», 2008 թ.): Լինելով Գարեգին Նժդեհի հիմնած Լեռնահայաստանի Հանրապետության կառավարության անդամ, ինչպես նաև ավելի ուշ Նժդեհի բանտակիցը Վլադիմիրի և Երևանի բանտերում՝ Հովհաննես Դեվեջյանը արժեքավոր տեղեկություններ է հայտնում Նժդեհի կյանքի վերջին տարիների մասին: Խմբագրելով հուշագրությունը՝ Ս. Դեվեջյանը այն հարստացրել է արժեքավոր ծանոթագրություններով, գրողի գրական ժառանգության վերաբերյալ տվյալներով, քաղաքական բնույթի անտիպ էջերով ու լուսանկարներով:

Հնագիտության ոլորտում և ՀՀ ԳԱԱ համակարգում գիտական մեծ ներդրման համար Ս. Դեվեջյանը տարբեր տարիներին պարգևատրվել է գովեստագրերով և մեդալով: Նրա երկար տարիների անխնայ աշխատանքը 2012 թ. գնահատվել է ՀՀ մշակույթի նախարարության շնորհած Մեսրոպ Մաշտոցի անվան ոսկե մեդալով:

Սեդա Դեվեջյանը պատկանում է հայրենադարձ այն մտավորականների շարքին, որոնք հայագիտությունը մեր հայրենիքում բարձրացրին որակապես նոր մակարդակի: Այդ գործին նա ձեռնամուխ եղավ իր ամուս-

նու՝ անվանի պատմաբան, հայագետ-արևելագետ Արամ Տեր-Ղևոնդյանի հետ՝ թողնելով ոչ միայն մեծ գիտական ժառանգություն, այլև ազնիվ սերունդ:

ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր

ԱՐՄԵՆ ԲՈՐՈՒՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

Սեդա Դեվեջյանի գիտական հրապարակումների ցանկ

Գրքեր

Деведжян С.Г. 1981, Лори Берд, т. I, Ереван, изд. АН Арм. ССР, 85 с.

Դեվեջյան Ս.Հ. 2001, Հնագիտական հետազոտություններ Տաշիր Ձորագետում, Երևան, «Նաիրի», 173 էջ:

Դեվեջյան Ս.Հ. 2006, Լոռի Բերդ, հ. II, Երևան, «Գիտություն», 419 էջ:

Դեվեջյան Ս.Հ., Լոռի Բերդ, հ. III, Երևան (պատրաստման փուլում):

Հոդվածներ

Դեվեջյան Ս.Հ. 1966, Տաշիր Ձորագետի ուշբրոնզեդարյան մի քանի ոսկե և արծաթե իրեր, Լրաբեր հասարակական գիտությունների, N 5, Երևան, էջ 100-109:

Դեվեջյան Ս.Հ. 1968, Տաշիր Ձորագետի ուշբրոնզեդարյան մետաղագործության մի քանի հարցեր, Լրաբեր հասարակական գիտությունների, N 8, Երևան, էջ 72-84:

Դեվեջյան Ս.Հ. 1971, Լոռի Բերդի N 2 դամբարանի ոսկե և արծաթե զարդերը, Պատմաբանասիրական հանդես, N 1, Երևան, էջ 271-275:

Դեվեջյան Ս.Հ. 1971, Հնագիտական նոր հայտնագործություններ Տաշիրում, «Հայրենիքի ծայն», հոկտեմբերի 13, Երևան, էջ 4-5:

Դեվեջյան Ս.Հ. 1972, Լոռի Բերդի N 2 դամբարանը, Պատմաբանասիրական հանդես, N 1, Երևան, էջ 267-274:

Деведжян С.Г. 1974, Лори-Бердский могильник, Советская археология, N 2, Москва, с. 180-193.

Դեվեջյան Ս.Հ. 1976, Լոռի Բերդի ուշբրոնզեդարյան մարտակառքը, Պատմաբանասիրական հանդես, N 1, Երևան, էջ 209-220:

Деведжян С.Г. 1977, Ташир Дзорагет в эпоху бронзы и раннего железа (III-I тыс. до н.э.), Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, Институт археологии и этнографии АН Арм. ССР, с. 1-17.

- Դեվեջյան Ս.Հ. 1982, Եղջերվի պաշտամունքի հետքերը Հին Հայաստանում, Պատմա-բանասիրական հանդես, N 2, Երևան, էջ 140-151:
- Դեվեջյան Ս.Հ. 1982, Լոռի Բերդի պեղումները, «Սովետական Հայաստան» ամսագիր, N 7, Երևան, էջ 30-31:
- Թորոսյան Ռ., Դեվեջյան Ս. 1983, Դարձյալ ժայռապատկերների մասին, «Գրական թերթ», դեկտեմբերի 9, Երևան, էջ 4:
- Դեվեջյան Ս.Հ., Սեյրանյան Վ.Բ. 1984, Սաթե ուլունքների գաղտնիքը, «Հայրենիքի ծայն», մայիսի 14, Երևան, էջ 4:
- Դեվեջյան Ս.Հ. 1986, Լոռի Բերդի քրմի դամբարանը, Պատմաբանասիրական հանդես, N 3, Երևան, էջ 108-124:
- Դեվեջյան Ս.Հ. 1986, Թագակիր իշխանավորի պատկերը Լոռի Բերդի բրոնզեդարյան բնակավայրից, Լրաբեր հասարակական գիտությունների, N 8, Երևան, էջ 75-81:
- Devedjian S.H. 1996, Arménie, Trésors de l'Arménie ancienne (des origines au IV siècle), Nantes, Somogy, p. 90, 91, 116, 126-129, 144-146, 166, 169, 273.
- Դեվեջյան Ս.Հ. 1998, Հայաստանի հին մշակույթը և Լոռի Բերդի պեղումները, «Հայ կեդրոն» ամսագիր, N 3, Բուենոս-Այրես, էջ 12-17:
- Devedjian S.H, Hmayakyan S.G. 2002, Towards Urartian-Egyptian Political and Cultural Interrelations, *Studia Aegyptiaca*, N XVII, Budapest, p. 185-194.
- Դեվեջյան Ս.Հ. 2003, Նորահայտ գլանաձև կնիքներ Հադիճից, Հայաստանի հնագույն մշակույթը, N 3, Տ. Խաչատրյանի 70-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, «Մուլնի», էջ 67-71:
- Դեվեջյան Ս.Հ. 2005, Հայաստան-Առաջավոր Ասիա մշակութային փոխառնչություններ (ըստ Լոռի Բերդի պեղածո իրերի), Հին Հայաստանի մշակույթը, N XIII, Երևան, «Մուլնի», էջ 125-132:
- Деведжян С.Г. 2006, О некоторых артефактах раннего периода поздней бронзы Лори Берда, *Археология Кавказа*, N 1, Тбилиси, Институт археологии, с. 132-148.
- Դեվեջյան Ս.Հ. 2007, Հին Հայաստանի ոսկին (մ.թ.ա. III հազ. – մ.թ. XIV դ.), հեղինակների խումբ, խմբագիր՝ Քալանթարյան Ա., Երևան, «Գիտություն», էջ 77-89, 99-102, 108-120, 128-130, 135-150:
- Դեվեջյան Ս.Հ., Հոբոսյան Ս.Գ. 2008, Դամբարանների պեղումներ Լոռու մարզի Կուրթան գյուղում, Հին Հայաստանի մշակույթը, N XIV, Երևան, «Մուլնի», էջ 113-127:
- Devedjian S. 2009, Stone Stelae in the Burial Ground of Lori Berd, *Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies*, vol. IV/2, Yerevan, p. 146-153, 197-198.
- Devedjian S.H. 2010, Some Urartian Objects from the Tombs of Lori Berd, *Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies*, vol. V/2, Yerevan, p. 76-89, 301-304.
- Devedjian S., Meliksetian K., Kraus S., Pernicka E., Avetissyan P., Petrosyan L. 2011, Metallurgy of Prehistoric Armenia, *Anatolian Metal*, vol. V, Bochum, Bergbau Museum, p. 201-210.
- Деведжян С.Г. 2011, Лори Берд, Чудеса Армении, Ереван, «Арег», с. 14-15.
- Devedjian S.H. 2011, Lori Berd, The Wonders of Armenia, Yerevan, "Areg", p. 24-27.

- Devedjyan S.H. 2012 Bi-Metallic Bronze Decorative Artifacts from Lori Berd Burials, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, vol. VII/1, Yerevan, p. 24-34, 166-168.
- Деведжян С.Г., Худавердян А.Ю., Еганян Л.Г. 2013, Способы обращения с телами умерших в памятниках Ширакаван и Лори Берд (Армения): по данным палеоантропологии, Вестник археологии, антропологии и этнографии, N 4, Тюмень, с. 72-85.
- Деведжян С.Г., Худавердян А.Ю. 2013, Способы обращения с телами умерших в памятниках эпохи железа с территории Армении, Лавровские (Среднеазиатско-кавказские) чтения, Санкт-Петербург, «Кунсткамера», с. 83-87.
- Деведжян С.Г., Худавердян А.Ю., Еганян Л.Г. 2014, Реконструкция особенностей жизнедеятельности населения эпохи железа Армянского нагорья по данным антропологии. Этнос и среда обитания. Сборник статей по этноэкологии, Институт этнологии и антропологии РФ, вып. 4, Москва, «Старый сад», с. 215-232, 349-351.
- Деведжян С.Г., Худавердян А.Ю., Хачатрян А.А., Еганян Л.Г. 2014, Способы обращения с телами умерших в памятниках Лори Берд и Ширакаван (по данным палеоантропологии), Народная культура армян, т. XVI, Ереван, «Гитутюн», с. 273-280.
- Դեվեջյան Ս.Հ., Հոբոսյան Ս.Գ. 2015, Տիեզերական պատկերացումների արտացոլումը Լոռի Բերդի հնագիտական իրերի վրա, Պատմաբանասիրական հանդես, N 3, Երևան, էջ 168-180:
- Devedjyan S., Davtyan R. 2017, Elaborate Harness Buckles from Lori Berd, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, vol. XI/1, Oxford, p. 186-205.
- Դեվեջյան Ս., Դավթյան Բ. 2018, Լոռի Բերդի գեղարվեստական իրերի պաշտամունքային համատեքստը, Ավետիսյան Հ. (խմբ.), Արագածի թիկունքում, Ժողովածու նվիրված Տեվեմակ Խաչատրյանի հիշատակին, Երևան, «Գիտություն», էջ 206-213:
- Devedjyan S., Hobosyan S., Davtyan D. 2018, Post-Urartian Tombs of Lori Berd, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, vol. XI/1, Oxford, p. 109-123.
- Devedjyan S., Hobosyan S. 2018, Excavations at Late Bronze Age Tombs of Lori Berd, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, vol. XII/2, Oxford, p. 27-45.
- Khudaverdyan A., Devedjyan S., Davtyan R. 2019, A Report on a Rare Find of a Woman with Ankylosing spondyliti from Lori Berd Monument (Armenia), Paleopathology Newsletter, N 188, Paleopathology Association, US, p. 26-27.
- Devedjyan S., Davtyan R. 2021, Seals from Lori Berd, Avetisyan P., Bobokhyan A. (ed.), Archaeology of Armenia in Regional Context, Yerevan, IAE Publisher, p. 213-231.

Զեկուցման հիմնադրույթներ

- Դեվեջյան Ս.Հ. 1970, Լոռի Բերդի դամբարանադաշտը, Առաքելյան Բ.Ն. (խմբ.), ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների համագումարի զեկուցումներ, Երևան, ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 1970, էջ 10-12:

տողների նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 24-25:

Деведжян С.Г. 1971, Раскопки погребений у селения Лори Берд, Семенов С.А. (ред.). Тезисы докладов, посвященных итогам полевых археологических исследований в 1970 г. в СССР, Тбилиси, изд. АН Груз. ССР, с. 91-92.

Դեվեջյան Ս.Հ. 1977, Լոռի Բերդի N 15 դամբարանը, Մարտիրոսյան Հ.Ա. (խմբ.), ՀՍՍՀ-ում 1975-1976 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 17-18:

Դեվեջյան Ս.Հ. 1979, Լոռի Բերդի N 21 դամբարանը, Առաքելյան Բ.Ն. (խմբ.), ՀՍՍՀ-ում 1977-1978 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 7:

Դեվեջյան Ս.Հ. 1979, Հայաստանի ուշբրոնզեդարյան ծավալային քանդակը (ըստ Լոռի Բերդի պեղածո նյութերի), Զորյան Լ.Ս., Ղազարյան Մ.Ս. (խմբ.), Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված չորրորդ հանրապետական գիտական կոնֆերանսի զեկուցումների թեզիսներ, Երևան-Սարգարապատ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 192:

Դեվեջյան Ս.Հ., Արեշյան Գ.Ե., Իսրայելյան Հ.Ռ. 1981, Հուշարձանների պեղումներ Նորաբաց և Ներքին Չարբախ գյուղերի միջև, Առաքելյան Բ.Ն. (խմբ.), ՀՍՍՀ-ում 1979-1980 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 25-27:

Դեվեջյան Ս.Հ. 1982, Հին Հայաստանի ոսկերչական արվեստը (ըստ Լոռի Բերդի պեղածո իրերի), Մնացականյան Ս.Ս. (խմբ.), Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական V գիտական կոնֆերանս, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 306-307:

Деведжян С.Г., Геворкян А.Ц. 1982, Прогрессивные процессы в металлообработке Лори Берда (II тыс. - начало I тыс. до н.э.), Аракелян Б.Н., Массон В.М., Ханзадян Э.В. (ред.), Культурный прогресс в эпоху бронзы и раннего железа. Тезисы докладов всесоюзного симпозиума, Ереван, изд. АН Арм. ССР, с. 79-80.

Դեվեջյան Ս.Հ. 1983, Լոռի Բերդի վաղ երկաթեդարյան դամբարանները, Առաքելյան Բ.Ն. (խմբ.), Հայկական ՍՍՀ-ում 1981-1982 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 5-6:

Դեվեջյան Ս.Հ. 1985, Թագակիր իշխանավորի պատկերը Լոռի Բերդի բրոնզեդարյան քնակավայրում, Առաքելյան Բ.Ն. (խմբ.), ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի 1983-1984 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 19-20:

- Դեվեջյան Ս.Հ. 1987, Լոռի Բերդի միջին բրոնզեդարյան բնակավայրը, Առաքելյան Բ.Ն. (խմբ.), Հայկական ՍՍՀ-ում 1985-1986 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 15-17:
- Դեվեջյան Ս.Հ. 1991, Լոռի Բերդի 1989-1990 թթ. պեղումների արդյունքները, Տիրացյան Գ.Ա. (խմբ.), Հայաստանի Հանրապետությունում 1989-1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 38-41:
- Դեվեջյան Ս.Հ. 1996, Քարե պաշտամունքային արձանները Լոռի Բերդի դամբարանադաշտում, Քալանթարյան Ա.Ա., Հարությունյան Ս.Բ. (խմբ.), Հայաստանի Հանրապետությունում 1993-1995 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ՝ Հ.Ա. Մարտիրոսյանի հիշատակին, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., էջ 21-22:
- Դեվեջյան Ս.Հ. 1997, Ոսկե զարդերի հմայական-պաշտամունքային էությունը մ.թ.ա. II-I հազարամյակում (ըստ Լոռի Բերդի նյութերի), Քալանթարյան Ա., Ասատրյան Բ. (խմբ.), Հին Հայաստանի ոսկին, Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., էջ 7-8:
- Դեվեջյան Ս.Հ. 1998, Ուրարտական հուշարձաններից հայտնի կոյաբեզզաձև կնիքների շուրջ, Քալանթարյան Ա., Հմայակյան Ս. (խմբ.), «Էրեբունի-Երևան» հանրապետական գիտական նստաշրջանի հիմնադրույթներ՝ նվիրված Բ.Բ. Պիոտրովսկու հիշատակին, Երևան, «Էրեբունի» արգելոց-թանգարան, էջ 3-4:
- Դեվեջյան Ս.Հ., Ավետիսյան Պ.Ս. 1998, Լոռի Բերդի դամբարանադաշտի 1996-1997 թթ. պեղումների արդյունքները, Քալանթարյան Ա.Ա., Հարությունյան Ս.Բ. (խմբ.), Հին Հայաստանի մշակույթը, N XI, Հանրապետական գիտական նստաշրջան, զեկուցումների հիմնադրույթներ՝ նվիրված պրոֆ. Կարո Ղաֆադարյանի հիշատակին, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 20-21:
- Դեվեջյան Ս.Հ. 2001, Լոռի Բերդի N 79 դամբարանը, Քալանթարյան Ա.Ա., Հարությունյան Ս.Բ. (խմբ.), Հայաստանի հնագույն մշակույթը, Ձեկուցումների հիմնադրույթներ՝ նվիրված Հ. Մարտիրոսյանի հիշատակին, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 39:
- Devedjian S. 2009, Reflections of Uartian and Achaemenid Cultural Elements in the Materials of Lori Berd Tombs, Avetisyan P., Bobokhyan A. (ed.), Archaeology of Armenia in Regional Context, Proceedings of the International Conference dedicated to the 50th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography, Yerevan, IAE Publisher, p. 35-36.

ИЛЬЯ ЭРЕНБУРГ И АРМЕНИЯ
(К 130-летию со дня рождения)

Илья Григорьевич Эренбург (1891-1967) – выдающийся русский писатель, поэт, переводчик, публицист и общественный деятель европейского масштаба. Его многогранное и богатое творческое наследие хорошо известно, изучено литературоведами как в России, так и за ее пределами.

Армения одной из первых ощутила величие духа и силу слова одной из самых знаковых литературно-общественных фигур XX века на российско-европейском горизонте. Первые произведения Эренбурга на армянском языке появились в двадцатые годы. Армянский читатель знаком на родном языке с более чем двумя десятками сочинений писателя, в том числе такими крупными, как романы «Падение Парижа», «Буря», «Девятый вал»...

Непосредственная встреча Ильи Эренбурга с Арменией произошла поздно, в конце пятидесятих годов. Однако писатель гораздо раньше стал проявлять интерес к армянскому народу и его гордой стране. Он был хорошо знаком с известными армянскими писателями, художниками, общественными деятелями. Безусловно, самыми яркими личностями из армян, с которыми судьба свела Эренбурга, были поэт Аветик Исаакян и художник Мартирос Сарьян, эти «незабываемые», по выражению писателя, «величины».

Одна из первых встреч Эренбурга с представителями армянской творческой интеллигенции состоялась в Париже, во время Международного конгресса в защиту культуры, проходившего летом 1935 г. в столице Франции. По воспоминаниям одного из участников этого форума Ваграма Алазана, Эренбург с большим вниманием относился к советской делегации, повсюду сопровождал своих собратьев по перу, оказывал всяческое содействие, проявлял искреннее радушие и гостеприимство. Запомнилось армянскому писателю приглашение Эренбурга в испанский ресторан «Андалузия» в Париже нескольких советских писателей, в том числе и его самого.

Из теплых дружеских встреч в Париже с Ильей Эренбургом, «опекавшим» армянских литераторов на конгрессе, Алазан вынес самые восторженные впечатления, отмечая в нем «товарищеский дух», «скромность», «высокую культуру». Говоря о личном общении с Эренбургом, армянский писатель подмечает, что он относился к своим «национальным» собратьям по перу (в частности, к нему и Галактиону Табидзе) не как «к никому не известным» представителям нацменьшинств, делая некую скидку в общении, а как к «равным писателям равных народов, как к равным товарищам»¹.

В суровые годы войны на поле брани Илья Эренбург встретился еще с одним прославленным армянином – Иваном (Ованесом) Баграмяном. По воспоминаниям военачальника, это было в июле 1942 г. в районе Жиздры, где советские войска под его командованием прорвали мощную оборону фашистов. Однако сопротивление врага было яростное. И в этот критический период на фронте появляется военный корреспондент Эренбург. Он рвался на передовую, чтобы «своими глазами увидеть, как фрицы драпают». Конечно, Баграмян «предоставил» Эренбургу возможность увидеть драпающих фашистов... Полководцу хорошо было знакомо имя талантливого писателя и публициста. Газеты с его статьями, вспоминал Баграмян, являлись в ту пору «лучшим агитационным материалом», зачитывались «до дыр». «Перо Эренбурга воистину было действенное автомата»². Для Баграмяна имя и жизнь Ильи Эренбурга были не только символом высокой бескомпромиссной литературы, но и примером преданного делу мира человека в кровопролитный двадцатый век...

...В сентябре 1959 года, по приглашению Мартироса Сарьяна, Илья Эренбург с супругой впервые посетил Армению. Общение с всемирно известным художником, с другими деятелями культуры не могло не оставить глубокого следа в душе Эренбурга. Армянская земля предстала перед взором писателя во всей своей красе – Севан и Ошакан, Гарни и Гехард, Эчмиадзин и Звартноц, неповторимый Арарат... Восхитил Эренбурга и кладезь мудрости – Матенадаран.

¹ Վահրամ Ալազան 1936, Դիվաններ և որջեր (Տպագրություններ արտասահմանից), Երևան, «Պետհրատ», 64-65:

² Илья Эренбург 1988, Об Армении и армянской культуре, Сб. материалов, Ереван, изд. АН АрмССР, 111-112 (далее цитаты из этой книги приводятся в тексте).

В одном из своих выступлений Эренбург сказал: «Мне обидно, что я увидел Армению впервые уже в конце моей жизни. Впрочем, может быть, и в этом есть хорошая сторона. Говорят, что первая любовь самая сильная, но не самая умная. В конце жизни лучше видишь все, как-то лучше понимаешь, и Армения мне открыла много нового. Я увидел страну с огромными традициями, но эти традиции, это большое прошлое, порой тяжелое, не вяжет народ, а оно дает ему крылья... Меня пленил армянский народ своей мудростью, добротой, вдохновением и вместе с тем сдержанностью, внутренней большой страстностью. Это большой народ. Большой... Я счастлив, что побывал в Армении» (с. 34, 39). Свою любовь и уважение к армянскому народу и его культуре Илья Эренбург неоднократно выражал в выступлениях, статьях, письмах. Известны его статьи о Сарьяне, Чаренце, Галенце, воспоминания и высказывания об Аветике Исаакяне, Наири Зарьяне, Геворке Эмине и др. Деятели культуры Армении способствовали более глубокому восприятию Эренбургом современной армянской действительности, ее материальных и духовных ценностей. Так, Эренбург признавался, что Сарьян помог ему увидеть Армению, ее цветущие сады и раскаленный камень, а Чаренц открыл ему страстное сердце борца, товарища, поэта. В статье «Мертвые остаются молодыми», написанной в 1957 г. к 60-летию Чаренца, Эренбург так характеризовал армянского поэта: «Обожженный солнцем, скромный и пронзительный, дерзкий и нежный, вечно молодой – он и для веков сохранит свою молодость» (с. 33).

Неоднократно писал Эренбург о своем армянском друге Сарьяне. Еще в 1956 г. на выставке произведений художника в Москве писатель был восхищен полотнами Сарьяна и поделился своими впечатлениями в статье «На выставке М. Сарьяна». Другая работа – «Неистовый Сарьян» – была написана к 80-летию живописца и также опубликована в центральной, а затем и в армянской печати. В 1965 г. по просьбе кинорежиссера Лазрта Вагаршяна Илья Эренбург написал дикторский текст к кинофильму «Мартирос Сарьян», отразивший многоплановый портрет армянского Варпета.

Героический облик сынов армянского народа воспет в военной статье 1942 года «Кавказ». В ней – не только клич к народам Кавказа встать грудью на защиту родного края от фашистских орд, но и призна-

ние в любви россиянина к Кавказу: «Любовь русской поэзии к Кавказу – это любовь к свободе. Среди скал и людей Кавказа первые русские романтики учились неистовству. К Кавказу припадали, как к ключу вдохновения, Пушкин и Лермонтов, Маяковский и Тихонов. Кавказ был для них не декорацией, не пейзажем, но школой отваги и непримиримости... Не случайна связь народов Кавказа с русским народом, – любовь к свободе, жажда правды, общая судьба связали их навеки. Нет кавказца, который не считал бы Пушкина своим, и нет русского, который без волнения слушал бы сказания и песни Кавказа. Вся Россия гордится Кавказом, как высотами культуры и как выражением своих сокровенных чувств» (с. 19-20).

Мысли Эренбурга об Армении и армянах, высказанные десятилетиями назад, порою весьма созвучны и нынешнему тревожному времени. Маститый писатель, в частности, писал: «...я понял, что в армянах страстность и непосредственность сочетаются с душевной сдержанностью». Далее Эренбург напоминает о страшной недавней истории, когда по всей Турции уничтожали армян: убивали их в горных ущельях, топили в море, и приходит к выводу: это было первым опытом геноцида. «В наш век национализм повсеместно торжествует, – продолжает писатель. – Однако нужно уметь отличить память об убитых от памяти убийц. Чувства армян мне понятны. Исчезла Западная Армения – изумительные памятники древнего зодчества, традиции – от высоких мастеров раннего средневековья до молодых писателей начала нашего века. Уцелевшие рассеяны по всему свету... Для любого армянина Арарат, который высится над Ереваном, – тень растерзанной Западной Армении» (с. 51-52).

Умудренный жизнью, воспитанный на европейском гуманизме, писатель, лишь на склоне лет «вкусивший» Армении, смог безошибочно определить ценностные ориентиры армянского народа, познать душу и сердце армянина: «Патриотизм армян обострен, подчас он может показаться исступленным, но никто не спутает его с шовинизмом, отрицающим чужую культуру, и никто не назовет его провинциализмом. Кажется, среди армян я не встречал людей, чуждых идее интернационализма... Не будучи злопамятными, они никак не хотят отказаться от памяти, видя в ней прерогативу человека» (с. 53).

Илья Эренбург очень высоко ценил армянское искусство и литературу. Он считал, что армянский глаз веками воспитан на подлинном искусстве, а Армения – край искусства. Писатель ощущает единство армянской истории и культуры: «Армянское искусство сдержанно в своей страстности, оно сродни строгому пейзажу Армении, оно сродни большой и подчас трагической судьбе самого народа. В нем много воли, много мудрости». Эренбург делится в своих воспоминаниях мыслями об армянской литературе. «Я издавна по переводам знал и любил армянскую поэзию, – пишет он, – считая ее большой поэзией всего человечества от ее древнего эпоса до современников моих. Я счастлив, что мне удалось лично знать Исаакяна, большого поэта нашего века... Его переводили на все языки, его любили» (с. 36).

Армения ответила великой любовью великой личности – о жизни и творчестве Ильи Эренбурга, о встречах с ним тепло и сердечно писали многие видные деятели армянской культуры.

Поэт Геворк Эмин подчеркивал: «Эренбург адресует свои произведения всему человечеству, всем простым людям мира, заставляя их задумываться над теми проблемами этого созидającego и разрушающего, доброго и жесткого века, от которых зависят судьба и будущее человечества» (с. 117-118).

Мартiros Сарьян, чье искреннее радушие и гостеприимство испытал на себе русский писатель, писал в статье «Другу Армении»: «Нет такой страны, большой или малой, которая выпала бы из поля зрения Эренбурга, нет такого человека, в той или иной мере олицетворяющего нашу эпоху, который не ожил бы на страницах его книг. Это удивительный писатель, упорно, неустанно ищущий пути и формы единения мысли и воли передовых людей всего земного шара. Это удивительный художник и мыслитель, призванный следить за всеми сложными превращениями самого духа XX столетия, отражать их и обобщать. Ничто и никогда не ускользало от его умного зоркого взгляда».

Сарьян с благодарностью отмечает интерес Эренбурга к армянской земле: «Он увидел и нашу Армению и полюбил ее, маленькую, но, как сказал бы сам Илья, великую духом страну. Он увидел нас, узнал и рассказал о нас всему миру, он понял сердцем все наше долгое трагическое прошлое, он принял с восхищением наше зодчество, музыку, литературу,

живопись и заговорил о нас и с нами, с целым миром так, как может только он, Илья. Спасибо, друг, за то, что ты столько сумел увидеть у нас и почувствовать. Мы будем помнить и любить тебя всегда, потому что цену истинной дружбы знаем хорошо» (с. 108-109).

...Ушли в вечность корифеи армянской культуры XX века – Аветик Исаакян, Мартiros Сарьян, Егише Чаренц и многие другие, кого хорошо знал Илья Григорьевич и кто связывал с нашей многострадальной землей Гражданина Мира. Нет ныне рядом с армянским народом, вновь переживающим судьбоносные времена, мудрого советчика и друга Ильи Эренбурга. Но навсегда в памяти армян слова, сказанные им в преклонении перед библейской страной и великим народным духом: «Воздух Армении придал мне силы...».

РОБЕРТ БАГДАСАРЯН

Доктор филологических наук

Հայերեն նյութերի բաժնի խմբագիրներ՝ **Մելանիա Միքայելյան**
Սեդա Քուփեյլյան
Ռուսերեն նյութերի բաժնի խմբագիր՝ **Գայանե Հարությունյան**

Редакторы армянского отдела – **Меланья Микаелян**
Седя Купелян
Редактор русского отдела – **Гаянэ Арутюнян**

Editors of Armenian part **Melania Mikaelyan**
Seda Kupelyan
Editor of Russian part **Gayane Harutyunyan**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ **Արմինե Պետրոսյանի**
Компьютерный дизайн и пагинация – **Армине Петросян**
Computer design and pagination **Armine Petrosyan**

Հրատ. պատվեր N 1087
Ստորագրված է տպագրության 07.04.2021 թ.:
Տպագրական 21 մամուլ: Տպաքանակը՝ 200:
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ:
Հեռ.՝ 581902:

Подписано к печати 07.04.2021 г.
21 печ. л. Тираж – 200. Типография НАН РА,
Ереван, пр. Маршала Баграмяна 24.
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24г
Тел. 581902

Signed for printing 07.04.2021
21 print. sheets. Printed copies – 200. NAS RA Press,
Yerevan, Marshal Baghramyan av. 24.
Editorial office address: 0019, Yerevan, Marshal Baghramyan av. 24c
Tel. 581902

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://Iraber.sci.am>
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ Iraber@sci.am
Официальный сайт журнала: <http://Iraber.sci.am>
Электронная почта журнала: Iraber@sci.am
Official site of the Journal: <http://Iraber.sci.am>
E.mail of the Journal: Iraber@sci.am